



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՏԱՐՕՆԱՊԱՏՈՒՄ

«Ան որ կը գիտակցի իր պարտականութեան
եւ չի՛ կատարեր գայն, վատ մըն է»:
ԿՈՄՓՈՒԿՒՈՍ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ՏԱՐՕՆԻ ԵՂԵՌՆԻՆ

ՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՅՈՒՇԱԳԻՐՆԵՐՈՒ ՎԿԱՑՈՒԹԵԱՆՑ



Գրեց
ԱՂԱՆ ՏԱՐՕՆԵՑԻ

Տպարան ՏՕՆԻԿԵԱՆ
ՊԵՂՈՒՔ

1966
Սան Ֆրանսիսկո

ՈՒՒՏ ՄԱՄԻԿՈՆԵՒՑ





Հօրեղբորս որդի
ԱԼԵԿՍԱՆ ՊԵՏՐՈՍ ԵՆԿՈՑԵԱՆԻ
Յիշատակին

ՏԱՐՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՄԵԾԱԳՈՅՆ ՀԵՐՈՍ



ՀԱԶԻ ՅԱԿՈԲ ԿՈՏՈՅԵԱՆ
ՄՈՒՇ ՔԱՂԱՔԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ԵՒ ՔԱԶԱՄԱՐՏԻԿ ՆԱՀԱՏԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածութիւն

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հերթում`

Սասունէն Մուշ Գաղափին «Օգնութեան Փութացողներու»

հեփաթին

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Վահան Փափազեանի Սիրագործութիւնները Տարօնի Մէջ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Սասունի Գոյամարտին Ողբերգութիւնը

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԵՐՔՈՒՄ

Սասունէն Մուշ Քաղաքին
«Օգնութեան Փութացողներու»
Հեփաթին

ՔՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



Ե րբ 1954 Ապրիլ 17-էն սկսեալ, Պոսքունի «Պայքար» օրա-
թերթի մէջ հրատարակութեան տուինք 1915-ի Տարօնի Հայութեան
բնաջնջումին ակնատես երեք պատմահիներու (Գասպար Բդէեանի,
Մուշեղ Դուռնեանի եւ Ազնիւ Հլղաթեանի) յուշերը, անոնց իբրեւ
Յառաջարան՝ գրած էինք «Քանի մը խօսք», ուր ամբաստանութեան
աբողին վրայ նստեցուցած էինք՝ այդ եղեռնի ատեն Տարօնի մէջ
գործող Դաշնակցական երկու «պարոն»ները. — Ռուբէն Տէր Մի-
նասեան եւ Վահան Փափագեան, — իբրեւ բուն եւ միակ պատասխա-
նատուները Տարօնի պատմական եւ մարտական հայութեան աննա-
խընթաց ոչնչացումին եւ անփառունակ բնաջնջումին:

Քալիֆօրնիաբնակ Մշեցի մեր հայրենակիցներէն ոմանք, ու-
րոնք կա՛մ դաշնակցական էին եւ կամ դաշնակցականամիտ, մեզ
մեղադրեցին *կուսակցական կողմնակալութեան յանցանքով՝* գիտ-
նալով հանդերձ որ մենք անկախ մտածողութեան տէր անհատ մըն
ենք, հետեւաբար գերծ՝ կուսակցական նեղմիտ նկատումներով,
կա՛մ կուսակցական կողմնակալութեամբ՝ պատմական անձերու եւ
իրողութիւններու մերձեցումը մեղքէն, եւ ի՛նչ որ կ'ըսենք կա՛մ կը
գրենք՝ մեր պատմական Տարօնի փառասանձ պատմութեան հետ
կապ ու առնչութիւն ունեցող անձերու եւ անցքերու մասին, ար-
դիւնք են մեր անկախ մտածողութեանց, անկողմնակալ բնադա-
տութեանց եւ նշմարտախոյզ հետազօտութիւններու:

Անպատճառ կուսակցական ըլլալու պէտք չկայ՝ տեսնելու եւ
մատնանշելու համար գործուած նակատագրական ահաւոր սխալ-
ները անձերու, մանաւանդ պատասխանատու անձերու, որոնք կը
պատկանին այս կամ այն կուսակցական հատուածին: Անոնք որ աչք
ունին՝ տեսնելու կա՛մ տեսնել ուզելու, ականջ ունին՝ լսելու կամ
լսել ուզելու, եւ առողջ դատողութիւն՝ շիտակը սխալէն զանազանե-
լու չափ, այդպիսիներուն համար դժուար չէ՛ նշմարել անձի մը
կա՛մ անձերու, եւ Տարօնի պարագային՝ պատասխանատու անձերու
եւ զեկավար առաջնորդներու լաւ եւ յոռի գործերը, փառաբանել՝
լաւր եւ պարսաւել՝ գէշը:

կուսակցական եպերելի եւ պարսաւելի ունակութիւն է՝ շիտակ ու անհնազանդանքի նկատել ամէն գործ որ իր կուսակցութեան անուամբ եւ կուսակցական ղեկավարի մը կամ կուսակցական գործիչի մը կողմէ կատարուած է. իսկ, ատոր հակառակ, ո՛րքան ալ շիտակ եւ օգտակար ըլլայ այդ կատարուած գործը, խոտելի եւ բռնադատելի նկատուի, երբ գայն կատարողը տարբեր հասանքի կը պատկանի:

Վերոյիշեալ հայրենակիցներէս մասնէ երբ կարդացին «Քանի մը խօսք» ներածականը, մեզի թելադրեցին որ ուղղակի յարաբերութեան մէջ մտնենք յուշագրող Վահան Փափագեանի հետ եւ յայտնուած հարցերու մասին՝ անկէ ուզենք նոր բացատրութիւններ եւ լուսարանութիւններ, որպէսզի այդ նոր մեկնաբանութիւններու լոյսով եւ օժանդակութեամբ՝ դիւրին ըլլայ մեզի համար յանգիլ արդար, անաչառ եւ անկողմնակալ եզրակացութիւններու...:

Թերահաւատութեամբ ընդառաջեցինք եղած թելադրութիւններուն՝ ի մտի ունենալով ա՛յն պարագան որ ի՛նչ պատճառաբանութիւն կամ ինքնարդարացման փաստ որ ունէին Ռուբէն Տէր Մինասեան եւ Վահան Փափագեան՝ իրենց տրամադրութեան տակ, կա՛մ իրենց միտքերուն մէջ, արդէ՛ն իսկ տուած էին իրենց յուշերով, հետեւաբար՝ նոր բացատրութիւն կամ լուսարանութիւն աւերակալել՝ պիտի նշանակէր զուր տեղ «չուր ծեծել», որմէ որեւէ օգուտ կարելի պիտի չըլլար ձեռք բերել:

Ատով հանդերձ, սիրով պատրաստակամութիւն յայտնեցինք յարաբերութեան մէջ մտնելու յուշագրող Վահան Փափագեանի հետ, միակ վերապրող անձնաւորութիւնը, որ Բէյրութ (Լիբանան) կը բնակէր: Իսկ Ռուբէն Տէր Մինասեան մեռած էր 1951 Նոյեմբեր 27-ին, Փարիզի մէջ:

* * *

Մեր տրամադրութեան տակ կը գտնուէին հետեւեալ յուշերը, որոնք կը գրադին Տարօնի ամենավերջին ողբերգութեան պատմութեամբ, եւ մասնաւորապէս 1914-1915 բուսականներուն՝ Տարօնի մէջ պատահած ահաւոր ողբերգութեան առարկայական նկարագրութեամբ:

Այս յուշերէն ցարդ հրատարակուածներն են հետեւեալները.

ա) Ռուբէն Տէր Մինասեանի «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», եօթը հատոր, հրատարակուած 1951-1952-ին, Լոս Անջելըս, Քալիֆորնիա:

բ) Վահան Փափագեանի «Իմ Յուշերը», երեք հատորներով,

որոնցմէ առաջին հատորը հրատարակուած է 1950-ին, Պոսթոն, Բ. հատորը՝ 1952-ին, Բէյրութ, իսկ Գ. հատորը՝ 1957-ին, Գահիրէ:

գ) Բնիկ Մուշ ֆազաբացի Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի «Տարօնը ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը» գրքոյկը, գրի առնուած Սիսակ Նալբանդեանի կողմէ եւ հրատարակուած 1920-ին, Ֆրեզնոյի «Ասպարէզ» թերթի տպարանէն:

դ) Կրկին Մուշ ֆազաբացի ակնյայտնի ազգային անձնաւորութիւններէն՝ Սարգիս եւ Միսակ Բղէեան եղբայրներու ընդարձակ յուշերը՝ «Հաշագատ Պատմութիւն Տարօնոյ», խմբագրութեամբ Ազան Տարօնեցիի:

Այս հատորի մէջ ամփոփուած են նաեւ պատմիկներ Գաւար Բղէեանի եւ Մուշեղ Դուռեանի յուշերը, հրատարակուած 1962-ին, Գահիրէի մէջ, Հայ Ազգային Հիմնադրամի կողմէ:

ե) «Երուանդ Շարաֆեան կը պատմէ Տարօնի Եղեռնը» յուշագրութիւնը՝ խմբագրութեամբ Ազան Տարօնեցիի եւ հրատարակուած 1965-ին, Բէյրութի մէջ:

զ) Դեռ ձեռագիր վիճակի մէջ կը մնայ Մուշ ֆազաբացի Արմաշական մտաւորական Յակոբ Տէր Զաֆարեանի յոյժ գեղեցիկ յուշագրութիւնը, որ 1914-1915 բուսականի դէպքերու առարկայական նկարագրութիւնն ըլլալէն աւելի, պատմական-քննադատական վերլուծում մըն է դէպքերու եւ դէմքերու:

Վերոյիշեալ բոլոր յուշագրութիւնները մանրակրկիտ քննութեան եւ լուրջ ուսումնասիրութեան ենթարկելէ ետք, 1954 Սեպտեմբեր 25 բուսակիր նամակով մը դիմում կատարեցինք յուշագիր Վահան Փափագեանին, որ, ինչպէս յայտնեցինք, Բէյրութ կը բնակի:

Վահան Փափագեան, Տարօնի մէջ, 1914-1915 ողբերգական տարիներուն պատահած դէպքերու մասին կը խօսի իր յուշերու Բ. հատորին մէջ միայն, 274-րդ էջէն սկսեալ մինչեւ 410-րդ էջը, ընդամէնը՝ 136 էջ:

Ինչպէս յայտնի է, Վահան Փափագեան երեսփոխան ընտրուած էր Վանէն՝ քրֆական խորհրդարանի համար, ուր՝ իր պատկանութիւնն էր, Թուրքիոյ այդ աւագանեաց ժողովին ներկայացնել հայ ժողովուրդի բազմապիսի ցաւերը, տառապանքները, բարբ եւ ֆուրդ ազաւաթներէն կրած ամէն տեսակ գրկանքներն ու անարդարութիւնները, եւ անոնց մասին դարման հայցել՝ *իր չզիտցած* բարբերէն լեզուով, յար եւ նման մեր Մուշի անլեզու երեսփոխան Գեղամին...:

Վա՛յ քեզ, հա՛յ ժողովուրդ, որ ֆու կրած ծովածաւալ ցա-

ւերու եւ քաղաքացիական պայտէզներու ամօճումը, եւ ենթարկուած բազմապիսի գուլումներու քեթեւացումը կը սպասես այսպիսի ... *անլեզու երեսփոխաններէ...*

* * *

1914-ի աշնան, վաճառքային երեսփոխան վահան Փափագեան կը գտնուէր իր ընտրական շրջանակը, վան, եւ երբ Թուրքիա պատերազմ յայտարարեց Դաշնակից Պետութեանց դէմ, վանի երեսփոխանը՝ իր ընտրական շրջանակէն փութաց վերադառնալ Պոլիս՝ մամբու վրայ հանդիպելով Մուշ, ուր ստիպուեցաւ մնալ՝ վերահաս ճիւղը մամբաները գոցած ըլլալուն պատճառով:

Ատիկա կը պատահէր 1914-ի Հոկտեմբերի վերջերը:

Մուշի մէջ, երեսփոխան վահան Փափագեան, գահավիժող դէպքերու ստիպողականութեան տակ, կը հարկադրուի գործակցելու Տարօնի Ազգային Առաջնորդարանի հետ, ինչպէս նաեւ իր կուսակցութեան տեղւոյն Լիագոր-Ներկայացուցիչ Ռուբէն Տէր Միմասեանի հետ՝ միասնաբար վարելու Տարօնի ազգային-կուսակցական գործերը՝ ո՛չ-սիրալիր գործակցութեամբ մը:

Երեսփոխան վահան Փափագեան Մուշի շրջանը մնաց համատարած կոտորածներու ամբողջ տեւողութեան, իբր փախստական՝ ապաստանեցաւ Սասուն եւ Քանայ ու Հաւատարիկի լեռները՝ յար եւ նման Ռուբէնին, եւ 1915-ի Սեպտեմբեր ամսոյ (6-ին ալ, երկու «հերոս»ները, իրենց փոքրաթիւ զինեալ խումբով, գաղտնագողի՝ կտրեցին ոռու-քրքական սահմանագիծը եւ անցան Կովկաս, Տարօնի եւ Սասնոյ պատուական հայութիւնը փողոտել տալէն յետոյ...:

Յուշագիր վահան Փափագեան՝ իր յուշերու երկրորդ հատորի 136 էջերը կը յատկացնէ Տարօնի մէջ պատահած աննախընթաց դէպքերու եւ կոտորածներու իբրեւ թէ «նկարագրութեան», նկարագրութիւն մը՝ լեցուն մեծ շփոթութիւններով, դէպքերու եւ դէմքերու անհարազատ ու շատ յանախ ալ՝ խեղաթիւրուած ձեւով ներկայացումներով, չարափոխութիւններով եւ կեղծուած կամ յերիւրուած պատմութիւններով...:

Այս շփոթութիւնները, խեղաթիւրումները եւ կեղծուած պատմութիւնները սրբագրելու, եւ *բուն, իրական* ու *ճշմարիտ* պատմութիւնը վերականգնելու համար, պէտք էր որ յուշագիր երեսփոխանէն՝ նոր բացատրութիւններ կամ լուսարանութիւններ ուղեւորէին կամ պահանջէին, ինչպէս մեզի թելադրած էին մեր Մշեցի հաւատար հայրենակիցները...:

* * *

Մեր այս Քննական Ուսումնասիրութեան ընթացքին, պիտի ներկայացնենք մեր կողմէ գրուած նամակներու պատճենները, յետոյ հրատարակենք վահան Փափագեանի պատասխանները, որով յետոյ ալ՝ պիտի փորձենք բացատրել, ընդարձակօրէն նկարագրել, քննութեանց եւ քննադատութեանց ենթարկել իւրաքանչիւր դէպքը, որու մասին՝ ինք գրած է իր յուշերու մէջ, կամ որու մասին *նոր բացատրութիւններ*(?) տուած է իր նամակներով՝ լայնօրէն օգտագործելով մեր տրամադրութեան տակ գտնուած բոլոր յուշերը, եւ անհրաժեշտ պարագային ալ՝ ընդարձակ ընդօրինակութիւններ ընելով անոնցմէ՝ իբր *խօսուել փաստեր եւ վկայութիւններ*:

Պիտի ջանանք հարազատօրէն եւ առարկայօրէն ներկայացնել իւրաքանչիւր յուշագրողի տեսակետը եւ տուած մեկնութիւնը՝ ամէն մէկ պատահարի, դէպքի ու դէմքի մասին, առանց երբեք անոնց մօտենալու զգացականօրէն, հնարաւոր եղածին չափ...:

Պիտի խնդրենք մեր յարգելի ընթերցողներէն որ մասնաւոր ուշադրութեամբ ընթեռնուն յուշագիր վահան Փափագեանի *սեղմ ու կտրուկ* պատասխանները՝ տեսնելու համար թէ ան ի՛նչպէս կը փորձէ *միշտ խուսափել* տրուած հարցումներուն ուղղակի եւ որոշ պատասխաններ տալէ, եւ թէ ի՛նչպիսի ջանք կը թափէ, նեղ մնացած պարագային, գործուած յանգամանք փաթթելու ուրիշի մը վիզին, կա՛մ ամբաստանելու մեր Տարօնցի յուշագիրները՝ իրենց *չգործած* յանգամանքներուն համար:

Դժբախտաբար, ընդօրինակութիւնը չունինք մեր Առաջին Նամակին, որպէսզի նոյնութեամբ հրատարակէինք հոս, բայց վահան Փափագեանի Առաջին Նամակին բովանդակութենէն շատ դիւրին է հետեւցնել նաեւ բովանդակութիւնը մեր Առաջին Նամակին:

Ահա՛ւասիկ, յուշագիր վահան Փափագեանի Առաջին Նամակին պատճենը.—

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

24 Հոկտ. 1954, Բէյրութ

Յարգելի հայրենակից,

25 Սեպտ. նամակդ առի: Ուրախ եմ անկեղծորէն որ մէկը վերջապէս արձագանգ տուաւ յուշերուս:

Ինչպէս տեսած էք հարկաւ, ես հեղինակի անսխալականութեան եւ ինքնահաւանութեան ախտէ զերծ եմ. իմ Բ. Հատորի վերջը կը տեսնէք այն սխալներու յիշատակութիւնը որ ըրած եմ: Ձեր ընելիք դիտողութիւնները եւ մատնացոյց ընելիք «թուականներու անհեթեթ վրիպումները» եւ «չափ սխալներու մասին անկեղծորէն դժ պիտի ըլլամ: Իմ նպատակս եղած է հնարաւոր ճշգրտութեամբ տալ պատմական դէպքերը, հնարաւոր անաչառութեամբ: Ուրեմն կը սպասեմ Ձեր նկատած թերութիւններու մատնանշումներուն եւ Գ. հատորի վերջաւորութեանը տեղ պիտի տամ, իմ կողմէ եւս ստուգելէ յետոյ:

Կը յիշէք Միսակ Բդէեանի «յուշեր»ու մասին, որ Ձեզմէ միայն կը լսեմ այդ յուշերու մասին (չափ շնորհակալ պիտի ըլլամ, եթէ օրինակ մը զրկէք ինձի):

Իմ Մուշ գտնուած ատեն, ես մէկ կամ երկու անգամ տեսած եմ զայն. անոր տունը — ինչպէս կը յիշէք — երբեք եղած չեմ, պարզ այն պատճառով որ այն ատեն, տեղւոյն մարմնոյն կողմէն պատժուած էր (կարծեմ ինչ որ դրամական խնդիրներով):

Կ'ակնարկէք ինչ որ «հնձան»ի մէջ տեղի ունեցած ժողովի մասին. առաջին անգամ կ'իմանամ թէ նման ժողով տեղի ունեցած է, ուր, իբր թէ, թէ՛ ես եւ թէ՛ Ռուբէնը եւ այլք գտնուած ենք:

Ռուբէնը, Կորիւնի հետ (Գոմսի դէպքէն վերջ) Սասուն եկաւ եւ անկէ վերջ միայն Կորիւնը անգամ մը իջաւ Քան՝ զիս հոն առաջնորդելու, իսկ Ռուբէնը երբեք իջած չէ՛ լեռներէն...:

Բացարձակապէս լուր չունիմ ուրեմն հնձանի մէջ տեղի ունեցած ժողովի մասին:

Հայկ Միրիճանեանի տունի մեր գաղտնի ժողովին ներկայ էին Կոտոյի Հաջին, Լուրյի Տիգրանը, դերձակ Յարօն, եւ իբր տունի տէր, հոն էր Հայկը:

Այս ժողովի ամիսը յիշած եմ զրբիս մէջ. նորէն կարդացէք: Հետեւաբար տեղեկութիւն չունիմ «հնձանի ժողովին» մէջ ի՞նչ երկու տեսակէտներ պարզուած են եղեր:

Մենք Քան ժողով մը ունեցանք, երբ — կոտորածէն վերջ — Լուրյի Տիգրանը եւ այլ կարեւոր ընկերներ — եկած էին մեր քով:

Առ այժմ այսքանով բաւականացէք:

Միբով՝ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Յ. Գ.— Հաւ է որ գրէք օղանաւով. սովորական փոսթը մէկ ամիսէն կը հասնի...:

* * *

Նամակագիր Վահան Փափագեանի այս առաջին նամակէն, ընթերցողը կրնայ շատ դիւրաւ հետեւցնել թէ ի՞նչ նիւթերու մասին գրած էինք իրեն՝ մեր Առաջին Նամակով:

Իրեն գրած էինք որ քուականներու անհեթեթ վրիպումներ եւ շատ սխալ ներկայացումներ կան իր յուշերուն մէջ. իրեն տեղեկութիւն տուած էինք յուշագիր Միսակ Բդէեանի յոյժ կարեւոր յուշերու մասին, Բդէեանի յիշած «հնձաններու ժողով»ի մասին, Ռուբէնի՝ Սասուն ապաստանելէն յետոյ, ծպտեալ՝ քաղաքին եւ դաշտի գիւղերուն տուած գաղտնի այցելութիւններու մասին, եւ այլն:

Վահան Փափագեանի այս Առաջին Նամակին մէջ, ուշադրութեամբ արժանի եւ մեկնաբանութեամբ կարօտ են հետեւեալ կէտերը.—

ա) Իր այն հաւաստումը թէ «իր նպատակը եղած է հնարաւոր ճշգրտութեամբ տալ պատմական դէպքերը՝ հնարաւոր անաչառութեամբ»:

բ) Ան, «առաջին անգամ ըլլալով», մեզմէ կ'իմանայ «հնձանի ժողով»ի մասին, ուր «իբր թէ, թէ՛ ես եւ թէ՛ Ռուբէնը գտնուած ենք», եւ պնդելով թէ «բացարձակապէս լուր չունիմ հնձանի մէջ տեղի ունեցած ժողովի մասին, ուր երկու տեսակէտներ պարզուած են եղեր»:

գ) Իր այն խիստ դրական հաւաստումը թէ «Ռուբէնը Կորիւնի հետ (Գոմսի դէպքէն վերջ) Սասուն ելաւ եւ անկէ վերջ միայն Կորիւնը անգամ մը իջաւ Քան՝ զիս հոն (Սասուն) առաջնորդելու, իսկ Ռուբէնը ԵՐԲԵՔ չէ իջած լեռներէն...» (Ընդգծումները մերն են, Ա. Տ.):

Յուշագիր Վահան Փափագեանի այս հաւաստումներուն ի՞նչ աստիճան միշտ ըլլալը պիտի պարզաբանուի մեր այս ֆննութեանց եւ ֆննադատութեանց ընթացքին, երբ անոր պատմածներուն հակադրեմք մեր բնիկ տարօցի յուշագիրներու ներկայացուցած փաստերը:

* * *

Վահան Փափագեանի այս Առաջին Նամակին ի պատասխան, մենք իրեն փութացուցինք հետեւեալ մեր Երկրորդ Նամակը.—

ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

10 Նոյեմբեր 1954, Սան Ֆրանսիսկո

Յարգելի Տիար Վահան Փափազեան,
Ի Բէյրութ, Լիբանան.

Շնորհակալութեամբ ստացայ Հոկտ. 24 թուակիր Զեր նամակը, որով բարեհաճած էիք պատասխանելու երկու հարցումներու:

Կը գրէք. «Հեղինակի անսխալականութեան եւ ինքնահաւանութեան ախտէն զերծ եմ»: Ըստ այս հաւաստումին, դուք թերեւ խորհած էք որ իմ ըրած ակնարկութիւններս՝ տառական կամ գրաշարական սխալներու մասին են եւ ատոր համար ալ՝ ինձ ցոյց կու տաք որ Գ. Հատորի վերջը մատնանիչ պիտի ընէք այդ սխալները եւ անոնց շիտակ ձեւերը: Մինչդեռ, իմ յիշած սխալները՝ գործունէութեան, առաջնորդութեան, ղեկավարութեան սխալներ էին, որոնց պատճառով՝ այնքան դիւրաւ ընկճել ու անճիտել տուիք մեր հերոսական ժողովուրդը Տարօնի: Այդ պատուական ժողովուրդի ա՛յնքան դիւրաւ փճացումը հետեւանք էր այնտեղի՝ օրուան ղեկավար շրջանակի եւ մասնաւորապէս ոչ-տարօնցի ղեկավարներու անճարակութեան, անհեռատեսութեան եւ մանաւանդ անձնասէր ու իրենց կաշին ազատելու մասին միայն մտահոգուող լիտըրներու ի դործ դրած դաւերուն:

Ինչպէս առաջին նամակովս խոստացեր էի, այսօր պիտի գըրեմ Զեր յուշերու մէջ եղած թուականներու անկանոն եւ ետուառաջ եղած յիշատակութեանց, եւ մասնաւորապէս որոշ թիւ ու թուական չիշուելու մասին:

Նախ սա՛ ըսեմ որ երբ Տարօնցի մըն է Զեր յուշերը կարդացողը (խօսքս Տարօնի հետ կապուած պատմութեան մասին է միշտ), այն տպաւորութեան տակ կը գտնուի որ ձեր պատմած այդ դէպքերը կախուած են միշտ երկնքի ու երկրի միջեւ, հաստատուն կըրուան մը չունին, Տարօնի հողին վրայ կանգնած չեն ձեր յուշերու մէջ գործող անձերը եւ հերոսները. անոնք շատ յաճախ կարծես առասպելական կամ վիպական դէմքեր են, որոնք, ուրուականներու պէս, կ'երթան, կու գան, կը խօսին, կը քննադատեն, կը կուռին ու կը նահատակուին:

Միրիջանեան Հայկի տան մէջ գումարուած ժողովի մասին արդէն գուշակած էի իմ առաջին նամակովս որ հաւանաբար զաղտնի ժողով ըլլալուն համար, անոր մասին յիշատակութիւն չէ՛ եղած

ուրիշ որեւէ մէկէ: Այդ ժողովը գումարուած է 1915-ի Յունիսի երկրորդ կէսէն յետոյ, այն ատեն որ Պրն. Աւետիս (ըստ ձեր պատմութեան՝ Պրն. Մատթէոս. ես զինք կը ճանչնամ Պրն. Աւետիս անունով, որ գրադարանապետ էր եւ իրմէ շատ գիրքեր առած էր կարգալու համար) եկած էր ձեզ Սասուն տանելու:

Այս թուականը միտքերնիդ պահեցէք:

357րդ էջին վրայ կ'ըսէք. «Յունիսի վերջն էր, դեռ բոլորովին չապաքինած ծանր հիւանդութենէս, խումբին հետ ոտքով ինկայ ճամբայ»:

360րդ էջին վրայ կը գրէք. «Ամիսը անցած էր, մինչ մենք այդպէս անիմաստ ու աննպատակ կը թափառէինք լեռներու գագաթները: Գոնէ կրնայինք երբեմն դաշտ իջնել եւ օգտակար ըլլալ ժողովուրդին, յուսահատ այդ օրերուն...»:

Ա՛րդ, Յունիսի վերջէն ամիս մը յետոյ կ'ընէ Յունիսի վերջ. անանկ չէ՞:

Միտքերնիդ պահեցէք այս թուականն ալ:

Յետոյ, 361րդ էջին վրայ կը գրէք. «Ամիսէ մը յետոյ միայն՝ Սասունէն լուր առինք. Կորիւնն էր որ գիշերով մը պզտիկ խումբով եկաւ մեր քով»:

Հիմա՛, Յունիսի վերջէն «ամիս մը յետոյ», այսինքն, 30 օր եթէ աւելցնենք այդ թուականի վրայ, կ'ունենանք Օգոստոս 30 թուականը: Ճի՞շդ է:

Շարունակենք ընթերցումը: Արդէն Միրնկատարի վրայով հասած էք Սասուն եւ (Սեմալ) գիւղի եզրին, խոշոր ծառի մը տակ հաւաքուած՝ Սասունարնակ ընկերներու — Գեղիէգուզանցի Կիրակոսի, Սեմալայ Քիթիպ Մանուկի, ՄՂոյի, Կորիւնի եւ Ռուբէնի — հետ կը խորհրդակցիք (մի՛ մոռնաք թուականը — Օգոստոս 30, ըստ Զեզ), յարձակողական եւ պաշտպանողական ծրագիր եւ գործելակերպ որոշելու մասին: Այդ խորհրդակցութեան ատեն՝ տիրող կարծիքը, որ կը յայտնուի, այն համազումն է որ կառավարութիւնը ՆԱՊ Սասունը պիտի զարնէ, ԱԳԱ քաղաքն ու դաշտը. «Այդ պատճառով ալ որոշած էին որ ամէն ինչ Սասունի համար գործածուի» (էջ 363):

Այս բոլորը ցոյց կու տան թէ այդ խորհրդակցութիւնը տեղի ունեցած է, մէկ կողմէն՝ Օգոստոս 30-ի ատենները (ըստ ձեր ժամանակագրութեան), իսկ միւս կողմանէ ալ՝ Դուրանի, քաղաքի եւ Սասունի կոտորածներէն ալ ԱՌԱՋ:

Կրնա՞ք այս թուականները հաշտեցնել իրարու հետ:

Դաշտը կոտորուել է Վարդավառի Կիրակին, Յունիս 28-ին: Մուշ քաղաքը դիմադրեր ու կուռեր է Յունիս 29 եւ 30-ին, Երկու-

չարթի եւ Երեքչարթի, իսկ Սասունը կուուեր ու ինկեր է Յուլիս 20—23-ի ընթացքին, ինչպէս որ ցոյց կու տան ձեռքիս տակ գրտնուող մէկէ աւելի յուշեր ու աղբիւրներ:

Ահա՛ այս պատճառով էր որ առաջին նամակիս մէջ գրած էի. «Թուականներու անհեթեթ վրիպումներ»: Միա՞լ եմ. կրնայ ըլլալ: Հաճեցէք լուսարանել զիս:

364րդ էջին վրայ կը գրէք. «Այսպէս ծանր մտահոգութիւններով եւ տատանումներով անյաղթելի դժուարութիւններու հանդէպ՝ գրեթէ շարաթ մը անցուցինք (այսինքն, Սեպտեմբերի առաջին շարաթ), երբ Վարդավառի օրը, կէսօրէն առաջ, Կուրտիկ լեռան մեր պահակներէն սուրհանդակ մը եկաւ յայտնելու թէ արշալոյսին թնդանօթի ուժգին որոտ լսած էին...», եւ այլն:

Այդ որոտը Վարդավառի Կիրակին չէ՛ր լսուած, որովհետեւ ատանկ որոտ չկար դեռ: Թնդանօթները սկսած են որոտալ քաղաքին մէջ, Երկուշարթի, Մեռելոցին օրը, Յունիս 29-ի առաւօտուն, երբ Լեւոն Ասլանեան, որ մեր դրացին էր, առաջին անգամ կը կրակէ թուրք ոստիկաններու վրայ:

Ուրիշ կէտ մը: 364րդ էջին վրայ կը գրէք. «Մջօն բերած էր նաեւ ուրիշ լուր ... կառավարական եւ քրտական ուժերը հիւսիսէն (այսինքն՝ Սասունէն Մուշ երկնցող ճամբաներու կողմը) կիսակամարածեւ պաշարած էին Սասունը՝ Խօզմա Կէտուկէն մինչեւ Կոընկու Գէօլը. միայն Կուրտիկի դազաթը եւ մօտիկ շրթաները մեր ձեռքը կը մնային»:

Ի՞նչ ըսել կ'ուզէք այս նախադասութեամբ: Արդեօք Ռուբէնի յիշած «Փրոտոնայ»ի պատմութեան նման բան մըն ալ՝ այս նախադասութեամբ կ'ուզէք յայտնել (Ռուբէնի «Փրոտոնայ»ի մասին կարդալ իր յիշատակներու Զ. հատորի 77-81 էջերը). նաեւ Սասունցի Մուշեղի սխալաշատ, ի՞նչ կ'ըսեմ, ամբողջովին սխալ յուշերը, է. հատորի 72-73 էջերը: Հոս, իբր թէ — ըստ Սասունցի Մուշեղի, — «Ռուբէն գլուխը անցաւ Փեթարայ Մանուկի, Գեղեցուզանցի Յովսէփի ... խումբերուն եւ շարժեցաւ դէպի Մուշ: Խումբերը, շարք մը կռիւներէ վերջ (որո՞ւ հետ) յաջողեցան հասնել մինչեւ Կուրտիկ լեռան Արծուի Քարը, անկից մինչեւ Մուշեղարբը, սակայն անկարելի կ'ըլլայ Մուշ հասնիլ: Պաշարոււմը այնքան խիստ է, գործերն ու աշխրէքները այնքան խիտ շարքերով բռնած են դաշտը, որ Ռուբէն կը ստիպուի վերադառնալ Սասուն»:

Այս տողերուն ո՛չ միայն բառերը, այլեւ ստորակէտերն ու վերջակէտերը սխալ են, բացարձակ սխալ, եթէ ոչ՝ ՍՈՒՏ:

Երանի դուք տայիք ձեր բացատրութիւնը եւ տեսակէտը այս վերի տողերու եւ Ռուբէնի «Փրոտոնայ»ի մասին:

Տրամադրութեանս տակ եղած յուշերը բոլորովին ԱՅԼ կերպով կը ներկայացնեն այս կէտը: Բայց այս մասին կը խոստանամ գրել, երբ լսեմ ձեր բացատրութիւնները:

Միտակ Բդէեանի յուշերը հրատարակուած չեն: Երբ հրատարակուին, Ձեզի կը շրջեմ օրինակ մը:

Այժմ քիչ մըն ալ խօսինք «հնձանի ժողով»ի մասին:

Բդէեան ամբողջ չորս-հինգ ընդարձակ էջեր կը նուիրէ նկարագրութեանը այդ ժողովին, որ տեղի ունեցած է «քաղաքին մօտակայ այգիներուն հնձանները»: Այդ խորհրդակցական ժողովին մէջ, Հաջի Յակոբի եւ իր կարծիքներուն համաձայն էին Կորիւն, Կառնենու Մկրտիչը, Սեմալցի Քիաթիպ Մանուկը, Շահրիկեան Արօն, Մոկաց Քեռի Ղազարը եւ Առինջցի Սահակը: Հակառակ էին Փափագեան, Ռուբէն, Մջօն, Աւետիս, Լեւոն Ասլանեան, Լուրյի Տիգրան եւ «իրենց համակրող Սահմանադրութենէն ասդին շատ մը նորագիր դաշնակցական յեղափոխական ընկերներ»:

Հաջի Յակոբի ներկայացուցած երեք առաջարկներն ալ մերժուած են մեծամասնութեան քուէով՝ անոնց դէմ բերուած փուճ առարկութիւններով, եւ յառաջ քշուած է Ռուբէնի ծանօթ թէզը թէ ամէն ինչ պէտք է կեդրոնանայ Սասունի մէջ, որմէ պիտի դար Տարօնի փրկութիւնը:

Եւ ամենէն վերջ, գրեթէ ամբողջութեամբ, կու տայ Հաջի Յակոբի մարգարէաշունչ ճառը, որմէ յետոյ ժողովը վերջ կը գրտնէ, խումբը Սասուն կը բարձրանայ, իսկ Հաջի Յակոբ եւ Մշեցի տղաքն ալ քաղաք կը վերադառնան:

Ինչպէս կը տեսնուի, թէեւ Բդէեան որոշ կերպով չ'ըսեր թէ ո՞ր հնձանի մէջ էին գումարեր այդ ժողովը, բայց ես ստուգեցի Մշեցի վերապրող եւ յուշագրող Հայրենակիցէ մը որ այդ հնձանը կը պատկանէր վերին Թաղեցի Խոջա Յովսէփ Միքայէլեանին եւ կը գտնուէր Մոկաց Այգիները, Աստղբերդի մօտերը, Առաքելոց վանքի կոնակը գտնուող լեռան Մուշի կողմի երեսին վրայ:

Փակագիծի մէջ ըսեմ որ ձեր «Խոնարհ Հերոսներ»ու շարքին Բ. հատորի մէջ, Հաջի Յակոբի մասին ձեր տուած մէկ տեղեկութիւնը թէ ան «Մշոյ վերին Թաղէն է», սխալ է: Ան Զորոյ Թաղէն է, Բդէեանենց տունէն մէկ քանի քայլ հեռու: Հաջի Յակոբ իրական հերոս էր, ազնուական եւ դիւցազն. ան արժանի էր աւելի լաւ եւ պատշաճ կենսագրականի մը քան ինչ որ դուք գրած էք:

Կը յուսամ որ շուտով եւ ընդարձակօրէն պիտի հաճիք պատասխանել վերը շօշափածա հարցերուն, եւ ես կը խոստանամ յաջորդիւ խօսիլ ա՛յլ նոյնքան կարեւոր խնդիրներու մասին, օրինակ, Լեւոն Ղազիկեանի եւ Գալուստ Գրսէեանի (զոր դուք Գարեգին կը

կոչէ՞ սխալմամբ) մասին: Երկուքն ալ դասընկերներս էին՝ Մուշի Կեղրոնական Վարժարանի մէջ:

Յարգանքներով՝
ԱՂԱՆ Ս. ԵՆԿՈՅԵԱՆ

* * *

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

Վերոյ արտագրեալ մեր ընդարձակ նամակին ի պատասխան, Վահան Փափազեանէն ստացանք խիստ կարգաւոր գրութիւն մը, գոր կը ներկայացնենք իր ռնով եւ հայերէնով:—

Բէյրութ, 18 Նոյ. 1954

Յարգելի պարոն,

Լուսաբանութիւն ուզած էիք, որ տրուեցաւ ձեզի հակիրճ կերպով:

Ձեր վերջին նամակը արդէն բանավէճի հանգամանք ունի («Տարօնցի» եւ «ոչ-Տարօնցի», «լիտըրներու, որոնք իրենց մորթը ազատելու կը խորհին, եւայլն, եւ անձտած (պէտք է կարգալ՝ անձիտած, Ծնթ. Ա. Տ.) եւ Տարօնի ժողովուրդը»): Այս մեղադրական ակտի մասին անիմաստ կը դանձմ Ձեր խորհրդածութիւնները: Միտք չունիմ եւ կարիք չեմ զգար արդարացուցիչ խօսքեր ըսելու Ձեզ, որուն պատիւ չունիմ ճանչնալու:

Թուականներու մասին, ո՛չ սխալ եւ ո՛չ ալ «անհեթեթ» վրիպումներ կան: Եթէ ուշադիր ըլլայիք, պիտի տեսնէիք որ էջ 360-ի եւ 361-ի մէջ յիշուած ամիսը նոյնն է. ոճի խնդիր է պարզապէս ուրեմն խօսքը Յունիսի սկիզբի մասին է:

Այսքան բաւ համարեցէք:

Յարգանքով՝
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

* * *

Այս հակիրճ ու ցասումնալից պատասխանով, յուշագիր Վահան Փափազեան նամբան գրեթէ կը գոցեր մեր առջեւ, բայց մենք կը փափաքէինք որ շարունակուէր մեր այս քղթակցութիւնը՝ տեսնելու համար թէ Վասպուրականի պատուարժան երեսփոխանը միմչեւ ո՞ր պիտի հասցնէր իր ուրացումներն ու հայեայնութիւնները:

Ու իրեն յղեցինք մեր երբորդ նամակը, որ ահաւասիկ:—

ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

1 Դեկտեմբեր 1954, Սան Ֆրանսիսկո

Յարգելի տէր,

Մեծ յուսախարութիւն պատճառեց ինձ՝ Նոյ. 18 թուակիր ձեր կարճ նամակը: Երեւի թէ Տարօն գտնուող ոչ-Տարօնցի լիտըրներու մասին եղած քննադատական ակնարկութիւնը վիրաւորած է ձեզ:

Նախ ա՛ս ըսեմ որ այդ նախադասութիւնը պէտք էր չակերտներու մէջ առնուէր, որովհետեւ զայն առած էի տրամադրութեանս տակ գտնուած յուշերէն մէկէն: Այդ նախադասութիւնը կարգալուէք այս ձեւին տակ:—

«Մինչդեռ իմ յիշած սխալները՝ գործունէութեան, առջնորդութեան, ղեկավարութեան սխալներ են, որոնց պատճառով ալ (հոս կը սկսի չակերտը) «անոնք այնքան դիւրաւ ընկճել ու անճիտել տուին մեր հերոսական ժողովուրդը Տարօնի»: «Այս պատուական ժողովուրդին՝ այնքան դիւրաւ փճացումը հետեւանք էր (այնտեղի) այդ օրուան ղեկավար շրջանակի եւ մասնաւորապէս ոչ-Տարօնցի ղեկավարներու» եւայլն, եւայլն, մինչեւ նոյն նախադասութեան վերջը:

Եւ սա՛ ալ ըսեմ որ այս մեղադրանքներէն շա՛տ աւելի խիստ եւ ամբաստանող արտայայտութիւններ կան դեռ այդ յուշերուն մէջ, որոնցմէ մին, օրինակ, այսպէս կ'ըսէ. «Ամբողջ Տարօնի 125,000 ժողովուրդը զոհել տուին, որպէսզի միայն ու միայն երկու անձեր կարենան իրենց մորթը ազատել», եւայլն:

Խիստ ու դաժան վճիռ...

Բայց, նպատակս ձեզ վշտացնել կամ ամբաստանել չէ՛ր բընաւ՝ սոյն թղթակցութեանս սկսած ատեն, ա՛յլ մի քանի հարցերու մասին յաւելուածական բացատրութիւններ կամ մեկնութիւններ ստանալ ձեզմէ, որպէսզի աւելի հեշտ ըլլար անկողմնակալօրէն մօտենալ յուզուած հարցերուն եւ անոնց մասին կազմել մեր վերջնական համոզումը:

Մի՛ մեղադրէք զիս որ յակամայից կը սպրդեցնեմ բառեր ու միտքեր՝ նամակներու մէջ, որոնք ձեզ դպչելու բնոյթ ունին: Այդպէս է, դժբախտաբար, մեր տարաբախտ երկրի եւ նոյնքան տարաբախտ ժողովուրդի պատմութեան ընթացքը, եւ ո՞ր քարսիրտ հայ մարդն է — ա՛լ չըսենք Տարօնցի — որ երբ կը կարգայ այդ սրտաճրմիկ պատմութիւնները եւ սիրտը չ'արիւնի:

Մի՛ մեղադրէ՛ք զիս, պարոն Փափազեան, որովհետեւ Մշոյ վերին Թաղի մէջ ունէի եղբայր մը՝ իր ընտանիքով եւ զաւակներով, Հօրեղբայրներ եւ Հօրաքոյրեր, եւ մօտաւոր ու հեռաւոր ազգականներ, բոլորն ալ բազմամեծ ընտանիքներով, նաեւ վեց մօրեղբայրներուս տունը՝ Յիսաու զիւղին մէջ, Աւրանի եւ Մատնեկանքի մօտ, 50-60 անդամներէ բաղկացեալ, որոնք բոլորն ալ կը բնակէին մէկ յարկի տակ՝ Հին, նահապետական դրութեամբ, եւ այսօր, ասոնց բոլորէն եւ ո՛չ մէկը գոյութիւն ունի...

Այս կողմերը գտնուող Մշեցի հայրենակիցներս, որոնք տեղեակ են որ հետաքրքրուած եմ Տարօնի վերջին ողբերգութեան պատմութեամբ, եւ այդ ուղղութեամբ ալ՝ յուշեր եւ աղբիւրներ կը հաւաքեմ, զիս կը մեղադրեն (առ հասարակ կա՛մ դաշնակցական են եւ կա՛մ դաշնակցականամիտ) որ ուղղակի ակնաղբիւրին (այսինքն, Ձեզի եւ Ռուբէնին) չեմ դիմեր՝ ստուգելու վիճելի կէտերը եւ խնդիրները:

Ամենուն յայտնի է այն խուսափողական դիրքը, զոր Ռուբէն բռնեց 1915-ի Տարօնի ողբերգութեան պատմութեան հանդէպ. ամէն տեսակ մատալներ գրեց՝ Հին, հայդուկային կեանքէն ու գործունէութենէն, բայց տող մը իսկ չնուիրեց 1915-ին, բացի «Ճըռտոնայի յերիւրածոյ պատմութենէն»:

Այս պարագային, միայն դուք կաք որ կրնաք օգնել ինծի: Եւ Ձեր առաջին նամակով ցոյց տրուած գործակցական ոգին եւ բարեացակամ տրամադրութիւնը մեծ յոյս ներշնչեցին ինձ թէ ձեր գործակցութիւնը պիտի վայելեմ՝ յուզուած խնդիրներու լուսարանութեան համար: Սակայն, երկրորդ կարճ նամակնիդ խորտակեց այդ յոյսս...

Տրուած այս բացատրութիւններէն եւ լուսարանութիւններէն յետոյ, կրնա՞մ արդեօք ակնկալել որ պիտի յօժարիք նորէն տրամադիր ըլլալ ցուցադրելու այն գործակցական ոգին, զոր ցոյց տուիք ձեր առաջին նամակին մէջ:

Սոյն նամակին ձեր տալիք պատասխանէն պիտի հասկցուի այդ բանը: Այդպիսի վարմունքով պիտի ապացուցանէք Ձեր հոգիի մեծութիւնը եւ կարգ մը քննելի ու քննադատելի հարցերու լուսարանութեան՝ ձեր բերած օժանդակութեան բաժինը:

Լաւագոյն յարգանքներով՝

ԱՂԱՆ Ս. ԵՆԿՈՅԵԱՆ

Անիրաժեշտ չեմք համարեր այստեղ յիշել աղբիւրները եւ մատնանշել էջերը այն տողերուն, ուր եղած են այդ ամբաստանութիւններն ու մեղադրանքները՝ ոչ-Տարօնցի ղեկավարներու, մասնաւորապէս Ռուբէնի եւ Վահան Փափազեանի հասցէին:

Մեր այս ֆննական ուսումնասիրութեանց եւ ֆննարկութեանց ընթացքին, երբ մէջբերումներ ընեմք այդ ամբաստանութիւններէն՝ ապացուցանելու համար «պարօն»ներու Տարօնավնաս գործունէութիւնը եւ մեղապարտ արարքները, արդէն իսկ պիտի յիշեմք այդ աղբիւրները՝ իրենց անուններով եւ էջերով:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

Ի պատասխան մեր վերի նամակին, յուշագրող Վահան Փափազեանէն ստացանք հետեւեալ գրութիւնը.—

Բէյրութ, 15 Դեկտ. 1954

Յարգելի Պրն. Ենկոյեան,

Ստացած եմ ձեր Դեկտ. 1 գրութիւնը: Ճիշդ է որ վերոյսման էի ձեր անցեալ նամակի ոճէն եւ մանաւանդ՝ ոգիէն. կարծես նենդ բան մը կար տրուած հարցումներուն մէջ. դուք պրպոյտ մարդ կ'երեւիք. ի՛նչպէս է որ «ուրիշ յուշերէն» առնուած հատուածները չէիք կրցած զանազանել տալ. ինչ եւ է:

Եթէ Ձեզի հետաքրքրող հարցերը որոշակի գրի առնէք (Ընդգրծումները Վահան Փափազեանինն են, Մնթ. Ա. Տ.), ես պատճառ չունիմ չբաւարարելու ձեզի: Ուրեմն, ստուգման կարօտ հարցերը ձեւակերպեցէք եւ զրկեցէք:

Եթէ պիտի մեղադրուիք պատմութեան առջեւ, չիմ Յուշերուն մէջ՝ աւելի քան մեղադրութիւն ես ինքս ըրած եմ ղեկավարութեան եւ իմ մասին:

Բարեւներով՝
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Կ'երեւի թէ մեր նամակներուն մէջ, մեմք «անորոշակի» գրի առած էինք մեզ հետաքրքրող հարցերը, եւ ատոր համար ալ յուշագրող «պարօն» չէ կարողացած հասկնալ մեր ըրած հարցումներուն բնոյթը կամ իմաստը, եւ ըստ այնմ ալ՝ պատասխանել: Դա՛տ լաւ.

յետ այսու մեր գրած նամակներու մէջ պիտի փորձենք գոհացում տալ իր փափաքին, եւ մեզ հետաքրքրող հարցերը «որոշակի» գրի առնենք՝ դիրացնելու համար իր գործը, եւ տեսնենք թէ ինչպիսի բացատրութիւններով եւ մեկնաբանութիւններով պիտի գոհացնէ մեր հարցասիրութիւնը եւ հետաքրքրութիւնը:

ՄԵՐ ԶՈՐՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

Դեկտեմբեր 22, 1954, Սան Ֆրանսիսկո

Յարգելի Տիար Վահան Փափազեան,

Շնորհակալութեամբ ստացայ Դեկտ. 15 թուակիր ձեր նամակը, որով կը յայտնէք որ եթէ զիս հետաքրքրող հարցերը որոշակի գրի առնեմ, պատճառ մը չունիք չբաւարարելու զիս:

Շնորհակալ եմ ձեր այդ պատրաստակամութեան համար:

Արդէն երկու հարցումներ ուղղած էի ձեզի, նոյեմբեր 10 թուակիր նամակովս. կը յիշէք որ գրած էի Սեմալ դիւղի քով ձեր գումարած ժողովի մասին եւ յետոյ կը շարունակէի.—

«364րդ էջին վրայ կը գրէք. «Մջօն բերած էր նաեւ ուրիշ լուր... կառավարական եւ քրդական ուժերը հիւսիսէն կիսա-կամարածեալ պաշարած էին Սասունը՝ Խոզմա կետուկէն մինչեւ Կոբնիկու Կէօլը, միայն Կուրտիկի գաղաթը եւ մօտիկ շղթաները մեր ձեռքը կը մընային»:

Կը հաճէի՞ք ընդարձակ բացատրել այս նախադասութեան իմաստը: Արդեօք Ռուբէնի յիշած «Ճըռտոնայ»ի պատմութեան նման բան մըն ալ այս նախադասութեամբ կ'ուղէք յայտնել (տեսնել Ռուբէնի «Ճըռտոնայ»ի պատմութիւնը՝ իր «Յիշատակներ»ու 2. հատորի 77-81 էջերը, նաեւ Սասունցի Մուշեղի Յուշերը, է. հատոր, 72-73 էջերը):

Այս կէտի մասին կը փափաքէի լսել ձեր բացատրութիւնները:

Ասիկա մէկ:

Անցեալ նամակիս մէջ խոստացեր էի գրել Ղազիկեան Լեւոնի եւ Պրսէեան Գալուստի (ղոր դուք Գարեգին կը կոչէք՝ հաւանաբար սխալմամբ) մասին:

Ձեր տուած պատմութիւնը ամբողջովին տարբեր է նորէն իմ քով գտնուող յուշերու պատմածներէն:

Դուք կ'ըսէք.— «Ժանտարմայի սպաներէն մէկը (որուն անունը միւս աղբիւրները կը յիշեն յականէ անուանէ՝ Մուրադ Բէգ) իր քով առած է եղբեր Լեւոնը իբր քարտուղար — թրջացնելու յոյսով, — եւ երբ օրին մէկը՝ սրիկան փորձեր է բռնաբարել, Լեւոնը

կատղած՝ դանակը մխեր է սպայի փորը՝ եւ հրացանը առնելով՝ Գարեգինի հետ փախեր է» (էջ 392):

Մինչդեռ միւս աղբիւրները կը պատմեն որ Լեւոն եւ Գալուստ երբ Դամբէլի եւ Պիրդիինի ձորէն կ'անցնին եղբեր, հոն Լեւոն գօտեմարտի կը բռնուի քուրդին հետ եւ վար զգետնելով՝ կը սպաննէ զայն եւ հրացանն առնելով՝ Քան կուգան:

Կարեւորը, սակայն, այս՝ զանազան պատումներու այլազան նկարագրութիւնը չէ՛, այլ ան թէ ի՞նչ պատահեցաւ արիւնի եւ կեանքի զնով ձեռք բերուած այդ զէնքին:

Դուք այդ մասին որեւէ յիշատակութիւն չունիք ձեր յուշերուն մէջ: Տէր Եղիշէն, իր յուշերու 121-րդ էջին վրայ, որոշապէս կ'ըսէ որ ինք Լեւոնին կը հարցնէ.

«— Հապա ո՞ւր է հրացանդ, ինչո՞ւ անգէն կը պտտիս»:

Լեւոն, «գրեթէ լալով, կը պատասխանէ որ Փափազեան Մառնիկ գիւղացի Յակոբէն իւր ու մեղր կ'ուտէ, Յակոբի եղբայր Աբդարն ալ իրմէ հրացանը կ'ուզէ: Փափազեան՝ ԲՌՆԻ Լեւոնի ձեռքէն, իր արեան զնով ձեռք բերած հրացանը ԽԼԵԼՈՎ՝ կուտայ Աբգարին»:

Իսկ ուրիշ յուշագիր մը, որ Գալուստի եւ Լեւոնի հետ՝ ձեզի կ'ընկերանար այդ ատենները, եւ ձեր խումբին հետ՝ առաջին անգամ ինք հանդիպեր է Աւրանցի Հերոս Արամին, երբ սա վերաւորւած՝ ինկած էր աւերակ տան մը պատին տակ, ան ալ այսպէս կը պատմէ.—

«Այդ հսկայ քուրդը Մառնիկ գիւղի աղան է եղբեր: Քուրդի եղբայրները՝ Մառնիկի ոէս Յակոբի միջոցաւ կը դիմեն Փափազեանին, որ իրենց եզրօր հրացանն ու դաշոյնը վերադարձնէ իրենց, փոխարէն խոստանալով ուտելիքով օգնել Փափազեանին եւ իր զինւորներուն: Փափազեան՝ հրացանն ու դաշոյնը կ'առնէ Լեւոնէն եւ կը յանձնէ քուրդերուն՝ փոխարէն ստանալով կտոր մը արնոտ հաց...»:

Հակառակ ձեր անձին հանդէպ Լեւոնի եւ Գալուստի ցոյց տուած ամէն տեսակ հոգատարութեան եւ խնամքին՝ ձեր հիւանդութեան ատեն, որոնց մասին կը խօսիք՝ 352-րդ էջին վրայ, դուք չէք կրցած ձեր ազդեցութիւնը պորձածել որ այդ երկու տղաքն ալ ձեր խումբին հետ առնէիք, երբ անոնք վերջին անգամ կը ներկայանան ձեզի, ինչպէս կը պատմէք 397-րդ էջին վրայ՝ պատասխանատու ցոյց տալով Ռուբէնը եւ Մշեցիները: «Լեւոնը եւ Գարեգինը (Գալուստ) նկատեցին այդ չկամութիւնը եւ... դարչանքով... թողուցին մեզի եւ անյայտացան լեռներու մէջ...» («Իմ Յուշերը», Բ., էջ 397):

Իսկ ատկէ առաջ ալ, երբ դեռ Ռուբէնի խումբը չէր եկած Սասունէն եւ Աւրանցի Արամը իր յաւիտենական հանգիստի մէջ դնելէն յետոյ՝ Լեւոնին, Գալուստին եւ իրենց (ու ձեզի) ընկերացող մեր յուշագրողին՝ դուք անձամբ կ'ազդարարէք:

« Դուք այս կողմերը մնացէք, մենք կ'երթանք »:

« Մենք սկսանք լալ, աղաչել ու ըսել:

« Աստուծոյ սիրոյն, մեզի ալ հետերնիդ տարէք, եթէ չկարողացանք քալել, սպաննեցէք ու անցէք »:

« Բայց անկարելի եղաւ: Անոնք սկսան յառաջանալ, մենք ալ իրենց հետեւեցանք: Այդ պահուն, Վահան Փափազեան, Լորոյի Տիգրան եւ Արշակ Պոլէեան քաշեցին իրենց ատրճանակները եւ սպառնացին մեզի:

« Եթէ մեզի հետեւիք, — ըսին, — երեքիդ ալ պիտի ըսպաննենք »:

« Իրենք ձեզեցին դացին: Մենք, երեքս, նստանք եւ կուշտ մը լացինք »:

Այս յայտնութիւններու մասին ի՞նչ է ձեր բացատրութիւնը:

Յաջորդիւ պիտի գրեմ հայրը իր լացող մանկիկը խեղդելու մասին, ինչպէս նաեւ Քանայ մէջ՝ զինուած ու անզէն երիտասարդները իրարմէ զատելու ձեր ջանքերու մասին, երբ այս նամակիս պատասխանը ստանամ:

Բարեւմերով՝
ԱՂԱՆ Ս. ԵՆԿՈՅԵԱՆ

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ԶՈՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

Մեր ընթերցողներու մասնաւոր ուշադրութեան կը փափաքիմք յանձնել Վահան Փափազեանի յայտնաբերած «սուտ խեմք» եւ «սուտ չհասկացող» ընթացքը, եւ մասնաւորապէս անոր այն անվայել ու անարդար որակումները, զոր ամ կը շարտէ մեր Տարօնցի յուշագրողներու հասցէին՝ այնքան շռայլօրէն:

Բայց, նախ մտիկ ընենք իրեն՝ կարդալով իր չորրորդ նամակը, որ ահաւասիկ:—

Իէյրութ, 19 Յունուար 1955

Յարգելի Պրն. Ենկոյեան,
Բաղաբէն բացակայ էի. այդ էր պատճառը պատասխանիս ուշացման:

1.— 364-րդ էջի վրայ, Մջոյի բերած լուրերու մասին կ'ուղէք, որ «ընդարձակ բացատրեմ այդ նախադասութեան իմաստը»: Ի՞նչ ըսել կ'ուզէք, չհասկցայ. այն տեղեկութիւնը որ Մջօն տուաւ, պարզ գրուած է. աւելին ի՞նչ պէտք է ըլլար, ինձմէ հնարելու կամ բանաստեղծելու կարիք չունիմ:

Ռուբէնի յուշերը չունիմ. չհասկցայ ձեր յիշփձ «Ճըռտոնայ» բառին իմաստը:

2.— Դուք, դարձեալ հիմնուելով ձեր քով պտնուող ինչ որ յուշերու վրայ, Լեւոնի հետ պատահած դէպքը ուրիշ պարագաներու կը վերապրէք: Ինչ որ գրած եմ յուշերուս մէջ, իր ատենին, պատմած է ինծի Լեւոնը՝ Գալուստի ներկայութեան:

Իսկ այդ հրացանի պատմութիւնը (իբր թէ Լեւոնի ձեռքէն առնուած) զգուելի առասպել է: Այդ երկու սքանչելի տղաք իմ ամենասիրելի պատանիներէն էին: Հրացան առնելու խնդիր մը կար, բայց բացարձակապէս ոեւէ կապ չունի անոր հետ. ուրիշ տղայ մըն էր, որմէ առնուած է, չեմ յիշեր ինչ պատճառով:

Տէր Եղիշէն անծանօթ չէ ինծի. լաւ նկարագիր չունեցող մէկն էր. անոր վկայութիւնները եւ կիրքով լեցուն անստոյգ գրքքոյկը կարդացած եմ ժամանակին: Մտնիկցի ոեւէ քիւրտ տեսած չեմ եւ ո՛չ ալ իղերով եւ մածուններով ապրած: Ապրիլէն մինչեւ Սեպտեմբեր ամիսը, երբ լեռներն էինք, անդամ մը միայն, երբ Ալեքսան Մովսէսեանը ծանր հիւանդ՝ մեզի հետ քարայրն էր, չեմ գիտեր ինչպէս — մածուն ունէր եւ անկէ քիչ մը տուած է ինծի:

Պժգալի են բամբասանքները թէ իբր թէ գրուուած հրացան մը յանձնած եմ քիւրտի մը՝ «կտոր մը արնոտ հաց» ձեռք բերելու համար: Փախտական եղածս ատեն ո՛չ մէկ քիւրտի երես տեսած չեմ:

Լեւոնի եւ Գալուստի՝ մեզի ընկերացնելու իմ շատ յամառ ճիգերու մասին, յուշերուս մէջ բացատրուած է: Ռուբէնը շրջանի գլխաւոր ղեկավարն էր. վերջին խօսքը անորն էր...:

Ի՞նչ զարչելի յերիւրանքներ, իբր թէ ատրճանակներ քաշած եւ արգիլած ենք անոնց՝ հետեւելու մեզի:

Բաւ համարեցէք այս բացատրութիւնները: Կ'ուզէի գիտնալ «հայրը իր լացող մանկիկը խեղդելու մասին» եւ Քանի մէջ «զինուած եւ անզէն երիտասարդներ իրարմէ զատելու» ձեր պատմութիւնը:

Բարեւմերով՝
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

* * *

Յուշագիր վահան ֓ափազեան «չէ հասկցեր» քէ ի՛նչ է մեր ուզածը, երբ իրմէ խնդրած էինք բացատրել «կիսա-կամարածե պաշարուս»ի պարագան. Ռուբէնի յուշերը «չունի» եղեր եւ խեղճ մարդը նոյնիսկ «չէ հասկցեր» Փըռտոնայ բառին իմաստը...

Բայց, առանց յամենալու այս խեղճ ու կրակ «չհասկցայ», «չունիմ», «աւելին ի՛նչ պիտի ըլլար», «իմմէ հնարելու կամ բանաստեղծելու կարիք չունիմ» եւ այլ կարկտան բացատրութիւններու վրայ, անմիջապէս իրեն փութացուցինք խիստ ընդարձակ մեր հինգերորդ նամակը, որ ահաւասիկ.—

ՄԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

Յունուար 28, 1955, Սան Ֆրանսիսկո

Յարգելի Տիար Վ. Փափազեան,

Այս անգամ բաւական երկար սպասեցի ձեր պատասխանին, որ սովորականէն քիչ մը աւելի ուշացաւ, եւ ուրախ եմ որ վերջապէս ստացայ Յունուար 19 թուակիրը:

ա) Մջոյի բերած լուրի մասին՝ ձեր յուշերու 364-րդ էջի վրայի նկարագրութիւնը եւ ձեր տուած բացատրութիւնը յստակ չեն: Բանաստեղծելու կամ նոր բաներ հնարելու պէտք չկայ՝ յուզած խնդրոյն մասին յաւելուածական ծանօթութիւններ կամ լուսարանութիւններ տալու համար, երբ անոր իմաստը յստակ չէ: Արդեօք, «կառավարական եւ քրդական ուժերը հիւսիսէն կիսա-կամարածե պաշարած են Սասունը» բացատրութեամբ ըսել կ'ուզէ՞ք որ Մուշ քաղաքի եւ դաշտի կոտորածէն առաջ, թուրք կառավարութիւնը զօրք լեցուցած էր Մուշի եւ Սասունի միջեւ գտնուող լեռնայանջերու եւ ձորահովիտներու մէջ եւ Սասունը պաշարած Մուշի կողմի լեռներով, բացի «Կուրտիկի դազաթը եւ մօտիկ շրթանները», որոնք ձեր ձեռքը կը գտնուէին: Այսինքն, պարզ խօսքով, թրքական եւ քրդական ուժերը պաշարած էին Սասունը՝ Առաքելոյ Վանքի եւ Աստղբերդի լեռնաշրթաններէն սկսեալ մինչեւ Արջգլոր լեռան կողերը, ամբողջ Միրնկատարի հիւսիսի ձորահովիտը՝ մէջն ըլլալով Մուշեղաբերդը, եւ այլն:

ձի՛շդ է իմ այս կերպ մեկնութիւնը, արդեօք, ինչ որ կը հասկնամ ձեր նկարագրութենէն:

Ռուբէնի «Փըռտոնայ»ի մասին, հարկաւ հոն կրնաք ձեռք

բերել իր «Յիշատակներ»ու Զ. եւ Է. հատորները եւ իմանալ Ռուբէնի եւ Սասունցի Մուշեղի պատմածները:

բ) Ո՛չ ես եւ ո՛չ ալ իմ տրամադրութեան տակ գտնուող յուշերը ըսած էինք թէ դուք տեսած էք Մասնիկցի քուրդը: Գրած էի. «Քուրդի եղբայրները, Մասնիկի ոչն Յակոբի միջոցաւ կը դիմեն Փափազեանին, որ իրենց եղբոր հրացանն ու դաշոյնը վերադարձնէ իրենց, փոխարէն խոստանալով՝ ուտելիքով օգնել Փափազեանին եւ իր զինուորներուն»:

Ասիկա բնաւ չի՛ նշանակեր թէ դուք տեսած էք քուրդը: Խընդիրը, ուրեմն, քուրդը տեսնելու վրայ չէ՛, ա՛յլ հրացանը Լեւոնի ձեռքէն առնելով՝ քուրդին վերադարձնելն է, եւ այդ մասին ձեր բացատրութիւնը անորոշ ու տարտամ է:

գ) Մինակ Լեւոնի, Գալուստի եւ իրենց ընկերացող մեր պատանի յուշագիրի վրայ չէ՛ որ դուք, երեքդ, ատրճանակ քաշած էք, այլ նաեւ, ուրիշ անգամ, երբ հաւանութիւն տուած էք որ ամբողջ ժողովուրդը իբր քէ հետերնիդ առնէք ու երթաք ուսական բանակը, այդ ժողովուրդին պատուիրած էք որ որոշեալ վայրը հաւաքուի, վա՛ր, եւ հոն ձեզի սպասէ: Երկար սպասուէ յետոյ, երբ դուք կ'ուշանաք եւ ձեր խումբը կը տեսնէ որ նորէն ձեր սիրած ու չսիրած անձերով կը շրջապատուիք, եւ անոնց թիւը երթալով կը մեծնայ, զանոնք ալ, նոյն ձեւով, կը փորձէք համոզել եւ նախկիններուն պտնուած վայրը դրկել, եւ դուք ալ՝ «Ճերմակ եագնայով մը ձեր մօրուքը կապած», ձեր խումբին հետ դէպի Մասնիկ գիւղի կողմը դառնալով, արագօրէն կը սկսիք շարժիլ: «Մենք իր ետեւէն ինկանք: Ան (այսինքն, դուք, Պրն. Վահան Փափազեան), ետ դառնալով՝ իր ձեռքը գտնուած տասնոց ատրճանակով, մի քանի անգամ կրակեց մեր վրայ: Այլեւս համոզուեցանք որ պիտի սպաննեն մեզ, եւ այլեւս իրենց ետեւէն չգացինք»: Երբ ժողովուրդը իմացաւ որ Փափազեան, իր գլուխը առած՝ փախեր է, ո՛չ դիրքերը գացող մնաց եւ ո՛չ ալ՝ պաշտպանող»:

Ասոնք՝ նախորդ նամակիս մէջ յիշուածներուն կրկնութիւնն են դրեթէ, ցոյց տալու համար թէ այդ տխուր պատահարներու մասին կը վկայեն մէկէ աւելի ականատես եւ ականջալուր յուշագիրներ:

Ահա՛ւասիկ ուրիշ վկայութիւն մըն ալ՝ ուրիշ ականատես յուշագիրէ մը.—

«Սասունի անկումէն յետոյ, ամէն մարդ իր գլխու ճարը կը նայէր: Խումբ մը երիտասարդներ կը հետեւէին Փափազեան-Տիգրան խումբին, որ անտառի մը մէջ կանգ առած, կը հրամայէր որ

իրենց հետևողները ետ դառնային: Ասոնք կ'աղերսէին, ոտք-ձեռք կ'իյնային, կու լային: Բայց անօգուտ: Ո՛չ մի զիջում: Ղեկավարները կը դիմեն խստութեան, անարգանքի, ծեծի: Բայց ո՞ր երթային անոնք: Ամենէն շատ աղաչողը եւ ծեծուողը եղաւ Փոթիկեան Կնեաղ, որ յուսահատած՝ կ'երթայ Մուշ եւ անձնատուր կ'ըլլայ եւ իբր դերձակ՝ կ'ապատի, ու դեռ մինչեւ հիմա ողջ է: Մնացեալներէն ո՛չ մին ազատած էր»:

Այս յաւելուածական տեղեկութիւնները տալով՝ կը սպասեմ ձեր բացատրութիւններուն եւ մեկնութիւններուն:

Այժմ պիտի դրեմ այն երկու խնդիրներու մասին, որոնց համար խոստացեր էի գրել՝ Դեկտեմբեր 22, 1954 թուակիր նամակովս:

Ահա՛ւասիկ.—

ա) Հայրը կը խեղդէ իր լացող մանկիկը:

Զեր յուշերու 385րդ էջին վրայ կը գրէք.—

«Լեռնալանջի մը պուրակին մէջ գիշերեցինք այդ գիշերը... մեզ հետ էին 15-20 հոգի՝ կիներ, այրեր եւ մանուկներ՝ 5-10 տարեկան. միայն մէկը հազիւ 5-6 ամսական էր եւ սաստի չէր ենթարկուեր. միւսները սարսափի տակ լուռ էին: Մեր պուրակէն վար, հազիւ քսան քայլի վրայ, ձգուած էր կածան մը, որուն մօտ փոքրիկ աղբիւր մը կը հոսէր: Իրիկուան մթնշաղ էր... երբ գոռում գոչումով վար կու գային խումբ մը մարդիկ — քուրդեր էին... շունչերնիս պահեցինք եւ զսպեցինք երեխաները. քուրդերը կը մօտենային: Այդ միջոցին, երեւի մօր կամ հօր սաստէն վախցած՝ մանկիկը ճիշ մը արձակեց... մենք քար կտրեցանք. վտանգը ակներեւ էր. քուրդերուն խումբը բարեբախտաբար... երեխային ձայնը չէր լսած: Յանկարծ մեր փոքրիկի ձայնը կարծես սուրով կտրեցին. մեռելային լուութիւն տիրեց: Քուրդերը... իրար հրմշտկելով... ջուր կը խմէին... ապա հեռացան: Ազատ շունչ մը առինք: Հայրը խեղդած էր իր լացող մանկիկը: Այս գինով փրկուեցանք մենք...»:

Ասիկա ձեր պատմածն է՝ համառօտուած ձեւով:

Այժմ նայինք թէ ձեր խումբին հետ եղող մեր յուշագիրը ի՞նչպէս կը ներկայացնէ նոյն տխուր տեսարանը: Մտիկ ընենք իրեն.—

«Ինչպէս յիշած եմ նախապէս, ամէն օր տարբեր ուղղութեամբ կ'երթայինք: Օր մը, դեռ չլուսցած, լերան մը գագաթն էինք՝ ծածկուած խիտ անտառներով: Զորի մէջ հրացանաձգութեան ձայներ լսուեցան. իմացանք որ Հաւատորիկի ժողովուրդը գիւղէն փոխա-

ղրուէր էր հոն՝ իրենց գիւղին մէջ ձգելով միայն քանի մը ծերեր ու հիւանդներ: Առաքելոց վանքի զինուորները եւ տեղական քուրդերը չորս կողմէն կը պաշարեն եւ անխնայ կը կոտորեն այդ բազմութիւնը, որու լացն ու կոծը մինչեւ երկինք կը հասնէր:

«Գիւղացի կին մը, իր երկու պղտիկ զաւակներով, հոն էր պահուած, այդ խիտ անտառին մէջ, երբ մեր խումբը հոն հասաւ: Հրացաններու ձայնէն, կիներու եւ երեխաներու լաց ու կոծէն, երեխան սկսաւ բարձրաձայն լալ:

«Փափազեան հրամայեց Պուլէի Արշոյին.

« — Գնա՛ ըսէ, որ այդ երեխայի ձայնը կտրեն, ապա թէ ոչ, ամբողջ ընտանիքը գնդակահարել կու տամ:

«Ու... երեխայի ձայնը կտրեցաւ անմիջապէս: Այլեւս անոր լացի ձայնը չլսեցինք, որովհետեւ մայրը... խեղդեր էր իր լացող մանկիկը...»:

«Փափազեան եւ իր թիկնապահները ոտքէն մինչեւ գլուխ զինուած էին տասը կրականոց մոսիններով եւ մազէրներով, եւ չնայած իրենց խիտ նպաստաւոր դիրքին եւ յարմարութեան, որով կրնային այդ ձորի մէջ հարիւրաւոր թուրք զինուորներ սատկեցնել եւ չթողուլ որ անոնք անարգել կոտորէին այդտեղի անզէն ու անպաշտպան ժողովուրդը, առանց ձայն-ձուն հանելու, կծկուեցան ծառերու թաւուտքներուն մէջ, վախկոտ ու տմարդի մարդոց նման, առանց նոյնիսկ ամօթ զգալու իրենց հրացաններէն...»:

Երկու հակապատկեր նկարագրութիւն՝ միեւնոյն դէպքէն: Ո՞ր մէկն է ճիշդը:

բ) Զինեալ ու անզէն երիտասարդները եւ ժողովուրդը իրարմէ զատելու մասին, ձեր յուշերու մէջ որեւէ յիշատակութիւն չգրտայ: Մոռացո՞ւմ արդեօք:

Վերոյիշեալ յուշագիրը, սակայն, բաւական ընդարձակ կերպով կը նկարագրէ զայն՝ յականէ անուանէ յիշելով անունները եւ անոնց վարմունքը ձեր հանդէպ:

Ահա՛ւասիկ.—

«Երբ արեւը մար մտաւ, սկսանք վեր բարձրանալ՝ խիտ անտառներու մէջէն եւ հասանք Մառնիկ գիւղը, որ ձորի մը մէջ կը գտնուէր՝ չորս կողմէն շրջապատուած անտառներով: Հոն տեսայ հազարաւոր երիտասարդներ՝ քաղաքէն, դաշտէն ու Սասունէն: Բոլորն ալ իրենց հարազատները կը փնտոէին եւ ծանօթները հարց ու փորձ կ'ընէին: Այդ հաւաքոյթը կը նմանէր ամբիկահայերու սարքած դաշտահանդէսներուն: Բոլորն ալ կը խօսակցէին, կը վիճարանէին, կարծիք կը փոխանակէին, ծրագիր կը մշակէին, սակայն

կրնայիր նկատել որ ամենուն ալ դէմքին վրայ անձկութիւն մը, սպասում մը կար. կարծես թէ մէկու մը զալուն կը սպասէին ակընդէտ՝ միշտ այս ու այն կողմը նայելով՝ լարուած ուշադրութեամբ մը:

«Եւ ահա՛, անտառի մէջէն, ծակէ մը, դուրս եկաւ Վահան Փափազեան՝ իր զինեալ թիկնապահներով շրջապատուած:

Ճերկաներէն շատերը բնաւ տեսած չէին Փափազեանը նախապէս, եւ իրարու կը հարցնէին.

« — Ո՞ր մէկն է Փափազեանը:

« — Տօ՛, տղայ՛, այն երկայն մարդն է, որ այծի պէս մօրուք ունի, ա՛ն է Փափազեանը, — կը պատասխանէին:

«Լուռութիւն տիրեց: Ամէն մարդ լուռ ու մունջ կեցած՝ կ'ըսպասէր: Փափազեան պիտի խօսէր. ի՞նչ պիտի ըսէր. ի՞նչ կարգադրութիւններ ըրած էր արդեօք՝ այս հսկայ զանգուածին առօրեայ կարիքներուն մասին, անոր ապահովութեան մասին, անոր ապագայի մասին: Քանայ լեռը ապաստան գտնող աւելի քան 20,000 փախստական հայերը «պարոն»ի շրթունքներէն կ'ակնկալէին լսել յուսատու խօսքեր, որոնք տեսակ մը լուծում տային իրենց կեանքի ու մահուան առեղծուածին:

«Բայց, «պարոն»ի մտասեւեռումը ուրիշ բան էր եւ անոր մասին միայն պիտի խօսէր: Եւ բացաւ իր օրհնած բերանը, ու առանց այլեւայլի յայտարարեց որ ժողովուրդի մէջ գտնուող զինեալ ու անզէն երիտասարդները պիտի զատէ իրարմէ:

«Եւ հրամայեց որ զինեալները մէկ կողմ, ու անզէններն ալ միւս կողմ կանգնին:

«Մօտաւորապէս 4-500 զինեալ ու մարդուած երիտասարդներ կային հող, այդ ժամանակ: Ձինուածներէն անոնք որ ազգական ու բարեկամ ունէին, անոնց ձեռքերէն բռնած՝ չէին ուզեր զատուիլ իրարմէ:

«Փափազեան, կոկորդը պատուելու աստիճան պոռալով, հըրամաններ կ'արձակէր աջ ու ձախ, սակայն չյաջողեցաւ զինեալները բաժնել անզէններէն:

«Լեւոն Աւրանեան, իր ծերուկ հօր եւ երկու պզտիկ եղբայրներուն ձեռքերը բռնած՝ կը սպասէր: Փափազեան անոր առաջարկեց որ զինեալներու կողմը անցնի առանձինն:

«Լեւոն կտրուկ կերպով մերժեց.

« — Ես կը մեռնիմ՝ հօրս եւ երկու եղբայրներուս հետ. ես անոնցմէ չեմ զատուիր, — պատասխանեց, ու բարկացած, անոնց ձեռքէն բռնելով՝ գնաց անտառներու խորերը:

«Փափազեան վերջին փորձ մըն ալ ըրաւ Սասունցիի մը վը-

րայ՝ Մխօ անունով, որ Բերդի թաղեցի թուրք Իտոյին ծառայութիւն կ'ընէր նախապէս:

«Մխօն, իր պզտիկ եղբոր ձեռքէն բռնած՝ կը սպասէր:

«Փափազեան, հրամայողական շեշտով մը, ըսաւ Մխոյին.

« — Թո՛ղ անոր ձեռքը եւ անցի՛ր զինեալներու քով:

« — Տօ՛, ես զբու պապու կողք... — հայհոյեց Մխօն, — դու մեր ամբողջ ժողովուրդը կոտորել տալէն յետոյ, հիմա ալ մէկ հատիկ մնացած եղբա՞յրս ալ կ'ուզես կոտորել տալ, — ըսելով՝ հըրացանը կրակեց Փափազեանի վրայ:

«Ամէն մարդ իրար անցաւ եւ մեծ խառնաշփոթութիւն տիրեց:

«Փափազեան, իր թիկնապահներով, քաշուեցաւ մէջտեղէն եւ կորսնցուց իր հետքը. իսկ հոն հաւաքուած բազմութիւնն ալ տարտըղնուեցաւ անտառներու խորերը՝ անդեկ ու անպաշտպան»:

Կարծեմ թէ շատ երկնցուցի այս նամակը: Վերջացնեմ, ուրեմն, եւ անհամբեր սպասեմ ձեր պատասխանին:

Յաջորդիւ կը խոստանամ գրել Հաջի Յակոբի մէկ առաջարկի մասին, երբ ինքը թրքական թնդանօթները Յրօնք գիւղի կոնակը գտնուող Քոստուրայ լեռները փոխադրող պաշտօնեայ կարգուած էր թուրք կառավարութեան կողմէ:

Նաեւ պիտի գրեմ այն հանդիպումին եւ ձեր խումբին կողմէ եղած սառն ընդունելութեան մասին այն չորս Մշեցի երիտասարդներուն, որոնք օրերով ձեզ փնտրած՝ եւ վերջապէս յաջողեր էին գտնել:

Նայինք թէ այս երկու խնդիրներու մասին՝ ի՞նչ է Ձեր բացատրութիւնը:

Մնամ բարեւներով՝
ԱՂԱՆ Ս. ԵՆԿՈՅԵԱՆ

Յ. Գ. — Տէր Եղիշէի նկարագրի մասին ձեր ըրած անհաճոյ ակնարկութեան վերաբերեալ՝ կը գրեմ ուրիշ յարմար առիթով:

ՆՈՅՆ

* * *

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Ի պատասխան մեր վերոյ արտագրեալ ընդարձակ նամակին, յուշագիր Վահան Փափազեանէն ստացանք իր հիմնգրորդ եւ վերջին

նամակը, որով այլևս իր յարաբերութիւնը կը խզէր մեզի հետ՝ «աւելորդ համարելով» մեր այս թղթակցութիւնը :

Ահա՛ւասիկ այդ նամակը .—

Բէյրութ, 9 Փետրուար 1955

Յարգելի՛ Պրն. Ենկոյեան,

Ստացած եմ ձեր 28 Յունուար նամակը: Ձեր քաղուածները ինծի անյայտ մարդկանց յուշերէն՝ անհեթեթ են եւ չարամիտ. ո՛չ մէկը արդար եւ ստոյգ: Հետաքրքիր է միայն այն տեսակէտէն թէ մարդիկ ո՛րքան թեթեւամտօրէն եւ խղճի հանդարտութեամբ, կրնան աղաւաղել եւ յերիւրել պատմական դէպքերը:

Կարծեմ այլևս բաւական է որքան համբերութեամբ լսեցի ձեր յուշագիրներու ծիծաղելի եւ վրդովեցուցիչ վերագրումները իմ «բարբարոս, անզուժ եւ հարազատներուս դէմ դէնքով կանգնելու» դէպքերու զգուելի, շինծու պատմութիւնները լսելով:

Կը ներէջ որ աւելորդ համարեմ այլևս մեր թղթակցութիւնը:

Յարգանքներով՝

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ինչպէս որոշ կը տեսնուի սոյն նամակէն, յուշագիր վահան փափագեան ունեցած է «վրդովում» ի խիստ տագնապեցուցիչ պահեր՝ կարդալով մեր Տարօնցի յուշագիրներու յայտնութիւնները, որոնք, բնականաբար, նորութիւն չէին իրեն համար, բայց նորութիւններ են իր յուշերու բարեմիտ եւ Տարօնի յոյժ տխրագոյն իրականութեան անտեղեկ ընթերցողներու համար:

Վահան փափագեան, փոխանակ այսֆան ծանր եւ վարկարեկիչ որակումներով «պատուելու» մեր յուշագիրները, շատ լաւ եւ դրակամ գործ կատարած պիտի ըլլար, եթէ ինք քիչ մը զգոյշ ըլլար՝ Տարօնի իր ժամանակամիջոցի պատմութիւնը գրի առած ատեն, եւ անպարարական ձեռնածուքեամբ՝ չփորձէր խեղաթիւրել եւ չարափոխել Տարօնի իրական ու նշմարիտ պատմութիւնը՝ հեֆիաթումակ սուտեր թխմելով անոր մէջ:

Արդէն, համառօտ կերպով, տուիմք մեր յուշագիրներու փաստացի պատմական դրուագներէն մի քանիս: Յաջորդ եւ մեր ալ վերջին նամակով՝ Վահան փափագեանին ներկայացուցիմք 12 ուրիշ կէտեր եւս՝ քաղաւած բնիկ Տարօնցի յուշագիրներու պատմածներէն, որոնք, կը հաւատանք որ, պատմական անժխտելի ու անհերքելի նշմարտութիւններ են:

ՄԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿ

Ա՛յս է, ահա՛, մեր ալ վեցերորդ եւ վերջին ընդարձակ նամակին պատմէնը .—

Մարտ 1, 1955, Սան Ֆրանսիսկո

Յարգելի Տիար Վահան Փափագեան,

Շնորհակալութեամբ ստացայ Փետրուար 9 թուակիր ձեր նամակը, որով այլևս բաւական կը համարէջ «որքան համբերութեամբ» լսեցիք իմ յուշագիրներու «ծիծաղելի եւ վրդովեցուցիչ վերագրումները»:

Համաձայն եմ ձեզ հետ, երբ իմ յուշագիրներու ըրած յայտնութիւնները կը կոչէք «վրդովեցուցիչ», բայց երբե՛ք «ծիծաղելի»:

Յիշեալ որակումներէն զատ, չէիք տատամսած նաեւ այդ յայտնութիւնները կոչելու «անհեթեթ եւ չարամիտ. ո՛չ մէկը արդար եւ ստոյգ»:

Ձեր այդ կերպ որակումով, դժբախտաբար, չեն սրբազրուիր կամ հերքուիր ո՛չ գործուած ահաւոր սխալները եւ ո՛չ ալ՝ մեր յուշագիրներու յայտնաբերած անառարկելիօրէն ճիշդ փաստերը: Ատիկա պիտի ըլլար այն ատեն միայն, երբ փորձէիք հերքել մեր ներկայացուցած փաստացի տուեալները նոյնքան փաստացի պատմական իրողութիւններով՝ վկայուած եւ հաստատուած, ձեզմէ զատ, նաեւ ուրիշ ականատես ու ականջալուր վկաներու կողմէ:

Մեր ամբողջ թղթակցութեանց ընթացքին, ձեզի ներկայացուցի բազմաթիւ դրուագներ, որոնք ո՛չ միայն կը հերքէին դիտումնաւոր խեղաթիւրումներով ծանրաբեռնեալ ձեր յորինած պատմութեան իւրաքանչիւր դրուագը, ա՛յլեւ ուղղակի եւ շեշտակիօրէն կ'ամբաստանէին զձեզ, իբր բուն պատասխանատուն՝ գործուած ամէն մէկ սխալին, եւ կ'ակնկալէի որ դուք ալ, ձեր կարգին, փորձէիք նոր փաստերով եւ յաւելուածական լուսաբանութիւններով՝ աւելի պարզել իւրաքանչիւր դէպքի ներքին ծալքերը եւ արդարացնել ինքզինքնիդ՝ ներկայացնելով ձեր անառարկելի նկատած հակափաստերը:

Դուք չըրիք այդ բանը, որովհետեւ այդ տեսակ հակափաստեր չունէիք, այլ պատէպատ բացատրութիւններով եւ խուսափողական մեկնութիւններով ուղեցիք սքօղել իրականութիւնը եւ «չբմեղացնել զձեզ» եւ նոյնիսկ՝ Յունուար 19 թուակիր ձեր չորրորդ նամակով ալ կը կշտամբէիք զիս՝ ըսելով. «Ինձմէ հնարելու կամ բանաստեղծելու կարիք չունիմ»:

Այդքանը չբաւելէն զատ, կը համարձակէիք ամբաստանելու մեր յուշագիրները՝ իրենց չգործած յանցանքներուն համար, երբ ձեր վերջին նամակով կ'ընէիք հետեւեալ անբարեխիղճ վերագրումը անոնց հասցէին. —

«Ձեր քաղուածները ինծի անյայտ մարդկանց յուշերէն... հետաքրքիր են միայն այն տեսակէտէն թէ մարդիկ ո՛րքան թեթեւամտօրէն եւ խղճի հանդարտութեամբ, կրնան աղաւաղել եւ յերկրել պատմական դէպքերը», արարք մը եւ պատիւ չբերող արարք մը, որով լեւիւնցուն են ձեր յուշերու գոնէ Տարօնի պատմութեան վերաբերող մասին բոլոր էջերը — ամբողջ 136 էջ:

Իբր իմ ալ վերջին նամակս, ասով կը փափաքեմ ձեր ուշադրութեան յանձնել — մինչեւ հիմա յիշուածներէն զատ, — նաեւ հետեւեալ դէպքերն ու արարքները, որոնց մէջ դուք ունեցած էք դործունէութեան — եւ ինչո՞ւ չըսել՝ ձախորդ դործունէութեան — եւ պատասխանատուութեան մեծագոյն բաժինը:

Թուեմ զանոնք մէկ առ մէկ. ահաւասի՛կ. —

1. — 1914 Դեկտեմբեր ամսոյ վերջերը, Ռուբէն եւ դուք, Հաջի Յակոբի միջնորդութեամբ, կը ներկայանաք Աղզային Առաջնորդարանի խառն ժողովին, ուր պարզելով ինքնապաշտպանութեան կարիքը, կը խնդրէք որ ձեզի տրամադրուի գումար մը՝ դէնք գնելու համար: Ժողովականները, մասնաւորապէս Նազարէթ Էֆ. Քէչիչեան, կը փափաքին իմանալ ձեր ծրագրի մասին: Դուք կը մերժէք գոհացնել զանոնք, եւ դրպանելով Բարեգործականի 200 ոսկին ու 150 քիւէ ցորենը, կը մեկնիք դոհ եւ յաղթական:

Ի՞նչ ըրիք այդ դրամը. յատկացուցի՞ք զայն իր նպատակին: Ձեր յուշերու մէջ ո՛չ մի ակնարկութիւն կը գտնենք այդ մասին:

2. — Երբ 1915 Մայիս 5-ին, ռուսերը կը հասնին մինչեւ Բուլանք, Կառավարիչ Սերվէթ Բէյ՝ Հաջի Յակոբին կը յանձնէ՝ երկու թնդանօթներ՝ Ցրօնք գիւղի կոնակը գտնուող Քոստուրայ լեռները փոխադրելու համար, 200 հայ նախկին զինուորներու հետ, հո՛ն նոր ճակատ յարդարելու համար ռուսերուն դէմ:

Այդ ատեն, թուրքերը յուսալքուած էին, կառավարութիւնը ուժ չունէր քաղաքին մէջ. ռազմաճակատին վրայ ալ՝ թուրք բանակը բարոյալքուած ու քայքայուած էր: «Եթէ այս օրերուն պայթէր կռիւը, — կը գրէք ձեր յուշերու 365-րդ էջին վրայ, — կրնամ հաստատապէս ըսել որ Տարօնը փրկուած պիտի լինէր. զօրք զրեթէ չկար, կռիւը պիտի ընդլայնուէր, մերիները լեռներէն կ'իջնէին, քաղաքը կը գրաւէինք եւ կը կապուէինք ռուսական յառաջացող բանակին»:

Հաջի Յակոբ, փոխադրութեան նախորդ իրիկուն, խորհրդակցական ժողովի կը հրաւիրէ զձեզ եւ Ռուբէնը (որ թէեւ փախըտական, բայց քաղաքի մէջ պահոււրած էր): Այս խորհրդակցական ժողովը կը գումարուի Դաշնակցութեան Ակումբին մէջ, Միւսէի Գէորգի տունը, Սուրբ Մարինէ թաղը:

Հո՛ն, Հաջի Յակոբ մանրամասն կը բացատրէ օրուան քաղաքական եւ զինուորական կացութիւնը, ռուսերու մօտենալը, թուրք բանակի քայքայուած վիճակը, քաղաքի թրջութեան յուսահատական հոգեվիճակը, եւ կը թելադրէ որ երբ ինք Ցրօնաց լեռը հասնի, մեր ուժերը, քաղաքի եւ Սասնոյ մէջ՝ միասնաբար յարձակին քաղաքի զինարանին վրայ. «գրաւենք զօրանոցը, կառավարչատունը եւ քաղաքի իշխանութիւնը ձեռքերնիս առնենք»:

Հաջին անտեղիտալիօրէն կը պնդէր.

«— Աստուծոյ սիրոյն, այսօրը մեր օրն է. պէտք է օգտուինք այս բարեդէպ եւ հազուադիւտ պատահութենէն»:

Սակայն, դուք կը մերժէք Հաջի Յակոբի այս առաջարկը՝ «ցնորական» նկատելով զայն:

Ասիկա վէ՞պ է թէ իրականութիւն. ինչո՞ւ համար բառ մը չէք գրած ձեր յուշերու մէջ՝ այդ մասին:

3. — Հակառակ ձեր այն հաւաստումին, զոր ինծի ըրիք՝ ձեր առաջին նամակով, թէ «Ռուբէն, Կորիւնի հետ (Գոմսի դէպքէն վերջ) Սասուն ելաւ եւ անկէ վերջ միայն Կորիւն անդամ մը իջաւ Քան՝ զիս հոն առաջնորդելու, իսկ Ռուբէն ԵՐԲԵՔ իջած չէ լեռնէն», Ռուբէն շատ յաճախ քաղաք եւ դաշտ իջած է գաղտագողի: Եւ ձեր վերոյիշեալ հաւաստումը կը հերքուի նորէն, երբ Ռուբէնը կը տեսնենք Դաշնակցութեան ակումբի ժողովին մէջ, Հաջի Յակոբի հրաւերով գումարուած (վերոյիշեալ 2-րդ կէտին մէջ). ինչպէս նաեւ մեր յուշագիրներէն մէկուն յիշած 1915 Մայիս 29-ի գիշերը, Ռուբէն Մուշ կուգայ քանի մը ընկերներով եւ Տիգրան Գաւառեանի (Լոյոյի Տիգրան) տան մէջ ժողով կը գումարուի, ձեք հրաւերով, խորհրդակցելու համար թէ ի՞նչ կրնաք ընել:

Հոն, բանավէճ մը կը սկսի ձեր եւ Ռուբէնի միջեւ. դուք, իբր բեւ Բիւրոյի անդամ, պնդելով ձեր իրաւունքներուն վրայ, ան ալ պնդելով իր իրաւունքներուն վրայ՝ իբրեւ շրջանի պատասխանատու գործիչ, եւ ժողովը կը ցրուի՝ առանց զիրար հասկնալու: Ռուբէն Սասուն կը բարձրանայ, իսկ դուք ալ՝ Քան լեռը, ուրկէ եկած էիք:

Ասիկա «չարամիտ» յերիւրանք է, չէ՞, եւ ատոր համար ալ մաս չի կազմեր ձեր յուշերուն:

4.— Հաջի Յակոբի կրկնակի դիմումներուն, Յունիսի առաջին կէսին, որոնցմով ձեզի կը թախանձէ որ օգնական փոքրիկ ուժ չրկէք քաղաք, Չաքարիայի պապանձում կը պահէք եւ չէք պատասխաներ իր դիմումներուն, բացի Յունիս 22-ի վերջին նամակը, որով Հաջին՝ իր յուսախարութիւնը յայտնելէն յետոյ, ձեզի կ'իմացնէ իր վերջին որոշումը՝ քաղաքէն դուրս գալու, զայն ձգելով իր սեւ ճակատագիրին, քանի որ թախանձուած պզտիկ օգնութիւնն իսկ զլացած էք զրկելու: Այդ ատեն միայն, դուք կը բարեհաճիք մէկտողնոց պատասխան մը զրկելու իրեն անմիջապէս:

«— Կարող էք դուրս գալ»:

Այս մասին ալ բան մը չէք գրած ձեր «ստուգապատում» յուշերու մէջ:

5.— Այն պահուն, երբ քաղաքը կուրծք կուտար թրքական թնդանօթներու համայնաւեր ուժերուն, դուք՝ Ռուբէնի, Կորիւնի եւ Եօթանասունէ աւելի սպառազէն տղաքներու հետ, կը զբոսնուէիք Միրնկատարի մօտ եւ ականատես ու ականջալուր կ'ըլլայիք քաղաքի ոճրակոծութեան: Օգնութեան փութալու խնդրոյն մէջ՝ անհամաձայնութիւն կը ծագի մէջքերնիդ: Դուք եւ Ռուբէն ԴիՄ կը խօսիք որեւէ օգնութեան եւ կ'անաստէք խեղճ Ուրֆացի Հաջի Կարապետը, որ կ'առաջարկէր օգնութիւն փութացնել:

Այս մասին ալ որեւէ ականարկութիւն չգտայ ձեր յուշերու մէջ:

6.— Յունիս 1-ին, երբ դուք, 30-40 զինեալ տղաներով, Սասունէն կը մեկնիք Հաւատորիկ գիւղը, հոն ապաստանող քաղաքացի մարտիկներէն մէկ քանին հարց կուտան թէ «Սասունէն մինչեւ հոս կ'ըրցած էք գալ, չէ՞րք կրնար արդեօք քաղաքին ալ օգնութեան փութալ»:

Անոնք կը պատասխանեն.

«— Այո՛, Կորիւն, Մջօն, Քիաթիպ Մանուկ ըսին որ պէտք է քաղաքին օգնութեան երթանք. բոլորս ալ պատրաստ էինք յառաջանալու, բայց Փափազեան եւ Ռուբէն ղէմ կեցան, առարկելով թէ «Դուք այդպիսով կը ջլատէք այստեղի ուժերը, եւ ո՛վ որ մեր նախկին որոշումը անտեսելով՝ երթայ, իբրեւ դաւաճան՝ պատասխանատուութեան պիտի ենթարկուի: Թէեւ Կորիւն լսել չէր ուզեր, բայց երբ Մջօն իր զէնքը վար դրաւ, Կորիւնն ալ՝ ստիպեալ լռեց»:

Այս ալ, բնականաբար, «առասպել» է եւ տեղ չունի ձեր յուշերուն մէջ:

7.— Մջոյի «բերած» լուրը թէ «կառավարական եւ քրդական ուժերը հիւսիսէն կիսա-կամարածեւ պաշարած էին Սասունը», միմիայն ձեր գերագրդիտ երեւակայութեան մէջ գոյութիւն ունեցած է:

Այդ կողմերը, — այսինքն, Առաքելոց Վանքի եւ Աստղերդի լեռնալանջերէն սկսեալ մինչեւ Միրնկատար, անկէ ալ մինչեւ Կուրտիկ լեռը եւ Փեթարայ ճամբաները, — որեւէ թուրք կամ քուրդ զինուոր Ձէ ԵՂԱՄ՝ քաղաքի անմիջական չըջապատի բլուրներուն վրայ զետեղուած չորս թնդանօթներէն եւ հազարէն-հազար հինգ հարիւր զինուորներէն գատ: Անանկ որ բացարձակապէս անպարկեշտ սուտ է յայտարարել թէ այդ լեռնալանջերը պաշարուած էին թուրք եւ քուրդ զինուորներով եւ խուժանով. նոյնիսկ «մարդահասակ» խորութեամբ խրամներ եւ երկաթէ թելեր զետեղուած են եղեր, ըստ «Ճըռտոնայ»ի հեղինակի (Ռուբէն) եւ Սասունցի Մուշեղի սուտ ու փուտ պատմութիւններուն. որովհետեւ, բոլորիդ ըսածին համաձայն, եթէ այդ լեռները զինուորներով բռնուած ըլլային, որ առնուազն 50,000-էն մինչեւ 100,000 զինուորներու ներկայութիւն կ'ենթադրէ, մեր մէկ յուշագրողը անկարող պիտի ըլլար, իրեն ընկերացող Եօթանասուն հողինոց խումբի մը հետ, Յունիս 30-ի գիշերը, այդ լեռնալանջերէն վեր բարձրանալ՝ դէպի Սասուն, առանց մէկ հատիկ թուրք կամ քուրդ զինուորի հանդիպելու:

Արդարեւ, ան կը պատմէ որ երբ Հաջի Յակոբի հրամանով՝ յայտնի եղաւ որ ամէն ոք պէտք է իր փախուստի մասին մտածէ, այդ Եօթանասուն հողինոց խումբը կը բռնէ Կրէ Կամուրջի ձորին ճամբան եւ ամբողջ գիշերը ճամբորդելով, արշալոյսին կը հասնի Կուրտիկ լեռան գագաթը, ուր՝ առաջին անգամ ըլլալով, կը հանդիպի հայ պահակներու:

Ըստ մեր յուշագիրի հաւաստումին, ամբողջ ճամբորդութեան ընթացքին, բացի քաղաքին անմիջապէս կից Փոթկանց արտերու բարձունքներուն վրայ դտնուող զինուորներէն, ո՛չ մէկ թուրք կամ քուրդ զինուորի չեն հանդիպած այդ Եօթանասուն անձերը՝ մինչեւ Սասուն:

Ո՛ւր են, ուրեմն, «մարդահասակ խորութեամբ խրամները», «երկաթէ թելերը» եւ «խրամներու մէջ վխտացող» թուրք զինուորները:

Ասիկա ալ, նոյնպէս, «աղաւաղում» մըն է պատմութեան, քանի որ կը հերքէ «Ճըռտոնայ»ի առասպելը, կա՛մ «կիսա-կամարածեւ պաշարում»ի հեքիաթը, չէ՞:

8.— Ի՞նչ էր ձեր տարակարծութիւնը Պզտիկ Արամ Յակոբեանի հետ՝ Քան լեռան 25,000 փախստականներու փրկութեան խնդրոյն մէջ: Դուք միշտ հետամուտ եղած էք «պզտիկ խումբով» մնալու, «որպէսզի չնշարուիք» (Ձեր յուշերը, Բ., էջ 383): Արամ, ռակայն, կը յղանար յանդուգն ծրագիր մը — ամբողջ ժողովուրդը

առնել եւ Քոստուրայ լեռներու վրայով երթալ հասնիլ ոռւսերուն, պաշտպանութեան տակ 500 զինեալ երիտասարդներու :

Դուք կը մերժէք այդ ծրագիրը՝ «իմաստնաբար»? :

Ի վերջոյ, Արամ, իր 80 հոգինոց խումբով, զոր դուք «քանի մը տասնեակ խլեակներ» կը կոչէք (էջք 395-396), անցաւ ոռուսական զինքը, իսկ ձեր խումբը, բոլորն ալ սպառազէն ըլլալով հանդերձ, կը բաղկանար 36 անձերէ միայն, որոնցմէ երեք հոգի ալ զոհ տուիք :

Այս այսպէս ըլլալով հանդերձ, դեռ ալ չէք հաւնիր Արամին եւ ծաղրանքի ենթարկեր էք զայն, ըստ մեր յուշագիրին :

Եւ որ աւելին է, ձեր յուշերու 395-396 էջերուն վրայի նկարագրականով, դուք այն սխալ տպաւորութիւնը կը ջանաք թողուլ որ ձեր «պնդումին վրայ թէ բոլորս մէկանց ճամբայ ելնենք», չընդունուեցաւ (որմէ՞ արդեօք) եւ «մեզմէ խիստ դժգոհ՝ բաժնուեցաւ Փոքր Արամը», այսինքն, դուք իբրեւ թէ կ'ուզէք եղեր որ ամբողջ ժողովուրդը առնէք ու անցնիք ոռուսական զինքը, իսկ Արամ կը հակառակէր :

Մինչդեռ, ատոր ճիշդ հակառակն է ճշմարտութիւնը : Եւ այդ բացարձակ իրողութիւնն է որ կը ջանայ յստակ ընծայել մեր յուշագիրը, որ միշտ ձեր խումբին հետ եղած է եւ Սպայ Միսակի թուրը իր դօտիէն կախուած ունէր միշտ :

Այս ալ, նոյնպէս, «զգուելի» պատմութիւն է, չէ՞ :

9.— Ծիշդ ու ճշմարիտ պատմութիւնն է յայտարարել թէ «Քրդական բազմաթիւ չեթէներ, նախապէս կտրելով գիւղամիջեան յարաբերութիւնները, ԵՐԵՎ ՕՐՈՒԱՆ ՄԷՋ (ընդգծումները մերն են, Ա. Տ.), առանձին առանձին ջարդած, աւրած, կողոպտած անոր ինչքն ու տունը, ու վառած էին ժողովուրդը» (էջ 365) :

Ո՞ր ԵՐԵՎ ՕՐՈՒԱՆ էին ատոնք :

Ա՞յս է «ստուգապատում» պատմութիւննիդ :

Մշոյ Դաշտի հարիւրէ աւելի հայաբնակ գիւղերը կոտորուեցան ՄԷԿ ՕՐՈՒԱՆ մէջ — 1915 Յունիս 28, Վարդավառի Կիրակի օրը :

Ա՞յս է մեր գիտցածը, ինչպէս նաեւ մեր յուշագիրներու պատմածը :

10.— Ուրիշ «ստուգապատում» պատմութիւն մըն ալ՝ ձեր այն հաւաստումն է թէ «Մուշէն ալ լուր չունէինք» (որ ողբերգականի սահմանէն դուրս գալով՝ զաւելտականի կը փոխուի, կարծես) : ՍՈՒՏ է. ո՛չ միայն լուր ունէիք, ա՛յլեւ ամեմախաւաստի եւ մշգրիտ լուրք ունէիք, երբ Յունիս 27-ի Շարաթ գիշեր, քաղաքէն Սասուն փախչելու պատրաստուողներու առաջին խումբը, Կողի

Թաղի դերեղմանատունէն վեր, ընդհարում կ'ունենայ թուրք պահակներու հետ եւ անոնցմէ մէկ մասը — Մուխսի Ֆարհատի Յարօն եւ Հլղաթ ԷՓ.ի տղայ Հրանդը — կը կտրէ թրքական զինքը եւ կ'երթայ Սասուն, իսկ մնացեալները կը վերադառնան քաղաք : Հարկաւ այս նորեկները մանրամասն պատմած կ'ըլլան Հաջի Յակոբի մտադրութեան, պատրաստութեան եւ ծրագիրի մասին, թուրք կառավարութեան յանձնուելու պատրաստուող Առաջնորդարանի տրամադրութեան մասին, իրենց խումբի մեծամասնութեան՝ ետ, քաղաք դառնալու մասին, ինչպէս նաեւ քաղաքի յուսահատական դրութեան մասին : Ասոնք բոլորը՝ դուք ՅՍՏԱԿՕՐԷՆ ԳԻՏՆԱԼՈՎ հանդերձ, դեռ համարձակութիւն եւ յանդգնութիւն կ'ունենաք յայտարարելու եւ ձեր գիրքին մէջ ալ՝ ճերմակի վրայ սեւ տառերով տպելու թէ դուք լուր չունէիք քաղաքէն :

Եւ կը շարունակէք .

«Գիշեր մը, ահա՛, այնտեղէն ալ երեւցան չարագուշակ բանբերները : Խումբ մըն էր՝ յոգնած, պարտասած եւ անհունօրէն վըշտաբեկ : Մեր մօտիկ ընկերներն էին, որոնք Մուշի ժողովուրդին հետ, ՈՒԹ ՕՐԷ աւելի չէին կրցած դիմանալ զօրքի եւ քուրդերու դրոհին ու ուժակոծման, եւ տեղի էին տուած» (էջք 376-377) :

Հաճէիք ըսել թէ (ձեզմէ պատասխան չեմ ակնկալեր այլեւս) ո՞ր տարուան, ո՞ր ամսուան, ո՞ր օրերն էին այդ «ուրթ օրերը» :

Իմ տրամադրութեանս տակ գտնուող յուշերը, բոլորն ալ, կը պատմեն որ 1915 Յունիս 29-ին, Երկուշաբթի առաւօտեան, նախաճաշի ատենները, կոիւր սկսեր է Վերին Թաղեցի Ասլանեան Լեւոնի տունէն : Չորս բլուրներու վրայ գետեղուած չորս թնդանօթները սկսեր են գոռալ եւ ուռմբ տեղացնել երկու հայ թաղերու վըրայ Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերուն, Յունիս 29, 30 եւ Յուլիս 1-ին : Առաջին երկու օրերուն, Մշեցի բուռ մը մարտիկները քաջարար կուրծք տուած են անագորոյն թշնամիին եւ միանգամայն միամտաբար սնուցած այն սին յոյսը թէ Սասուն յապահովի նստած իրենց «պարոն»ները, քերեւս, օգնութեան փութան քաղաքին, եւ ինչպէս Հաջի Յակոբ յայտարարեր է .—

«— Եթէ լաւ մտածեմ (այդ «պարոն»ները), իրենց շահն ալ այդ կը պահանջէ» :

Կազմակերպուած պաշտօնական դիմադրութիւնը տեղի ունեցած է Յունիս 29 եւ 30-ին, Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերուն : Յունիս 30-ի գիշերը, կ'որոշեն լքել քաղաքը իր սեւ ճակատագրին, այլեւս անհնար գտնելով շարունակել դիմադրութիւնը՝ ռազմամթերքի չդոյութեան պատճառով : Իսկ երրորդ օրը, Յուլիս 1-ին, Չորեքշաբթի, անհատական դիմադրութիւնը շարունակուած է Վե-

րին Թաղի մէջ միայն, Չաթոյեան Մուշեղի եւ մի քանի ուրիշ տուներէ. իսկ Չորու Թաղը լռած էր արդէն:

Ա՛րդ, ուրկէ՞ հաննցիք այս ՈՒԹ ՕՐՈՒԱՆ առասպելը, զոր կը ջանաք կլլեցնել ձեր միամիտ ու անտեղեակ ընթերցողներուն՝ իրբեւ «ստոյգ» պատմութիւն:

11.— Այսպիսի «ստոյգ» պատմութիւններով ճոխացած ձեր յուշերու մէջ, դեռ համարձակութիւնը կ'ունենաք մեղադրելու ուրիշներ ալ. մասնաւորապէս ձեր թունալից սլաքները կ'ուղղէք Չորավար Անդրանիկին, որ «չէ փութացեր» օգնութեան (ձեզմէ՞ օրինակ առաւ արդեօք), փրկելու համար երկու «հերոս»ները: Այն Անդրանիկը, որ շատ լաւ կը ճանչնար ձեզի պէս շէֆերու արժէքն ու տարողութիւնը:

Այս խնդրոյն մասին իմ կարծիքս սա՛ է. — Հաւանարար, երբ Անդրանիկ կը լսէ որ դուք — երկու «պարոն»ներդ, — ժողովուրդը անզուխ ու անպաշտպան ձգելով, անոր մարտական ուժերը երկպառակելով ու հեռաւոր Սասունի մէջ կեդրոնացնելով, քաղաքի եւ դաշտի հոծ հայութիւնը անդեկ ու անպէն վիճակի մէջ զննելով՝ մասններ էք Քսաներորդ Դարու բարբարոսներուն ձեռքը, իրբեւ փրկանք՝ ձեր, — երկու շէֆերու — չորացած կաշիներու փրկութեան, այդ նոյն Անդրանիկը ի՞նչ սրտով պիտի ուզէր, գերագոյն գոհողութիւններու գնով, զալ Քան կամ Սասուն:

Եւ եթէ ան յանձն առնէր այդ գերագոյն զոհաբերութիւնը եւ հո՛ն դար, կը հաւատամ որ միայն մէկ բան ընելու պիտի գար... «ի վարձատրութիւն ձեր բարւօք ծառայութեանց», զոր Մշեցի պատուախնդիր եւ վրէժառու մարտիկները պէտք էր որ ընէին եւ չեն ըրած... հակառակ քաղաքի մէջ գտնուած առանձն իրենց տուած որոշումին եւ խոստումին...:

12.— (Մուշէն) «Ազատուած ընկերները, բուն յուզմունքով, զայրոյթով եւ խոր կսկիծով՝ իրենց դառնութիւնը կը թափէին իմ եւ մասնաւորապէս, Սասունի ընկերներու դէմ: Պէտք չէր որ ես Մուշէն հեռանայի, կ'ըսէին» (նոյն, էջ 377):

Անոնք, այդ ազատուած «ընկերները», իրենց զայրոյթն ու դառնութիւնը եթէ թափեր են ձեր գլխուն, — ինչ որ տարակուսելի կը գտնեմ, նկատի ունենալով «պարոն»ներու հանդէպ անոնց ստորկական վարմունքը եւ միամիտ հաւատքը, — այդ բանը անոնք ըրած են ո՛չ թէ անոր համար որ դուք քաղաքէն փախեր, հեռացեր եւ լեռներ ապաստաներ էք, այլ որովհետեւ լսելով համդերձ հայ քաղերը ուրախածոյ թնդամօթներու ձայնը եւ լաւ գիտնալով համդերձ որ քաղաքի մէջ կուռոյ քաջերը ԱՆՄԻՋԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ

պէտք ունէին, սակայն երբեք փոյթ չէք ըրեր օգնութիւն հասցնելու անոնց, եւ առաւել եւս, օգնութեան փութալ ուզողներուն ալ ԱՐԳԵԼՔ ԵՂԱՍԾ է՞Ք:

Այս կէտին մէջ ալ դարձեալ, կը փորձէք չփոթեցնել ու մոլորեցնել ընթերցողը՝ անոր հրամայելով ճշմարտութենէ բոլորովին տարբեր, վերոյիշեալ հեքիաթունակ պատմութիւնը:

Այլեւս պէտք կա՞յ երկարելու այս շարքը: Չեմ գիտեր, ո՞ր մէկի մասին զրեմ եւ ո՞ր մէկ սուտը կամ յերիւրանքը սրբազրեմ. ա՛յնքան շատ են անոնք — այդ դիտումնաւոր սխալները, յերիւրանքները, շինծու պատմութիւնները, չըքմեղանքի ձեւին տակ ներկայացուած մոլորեցուցիչ «խոստովանութիւնները»...:

Ատով հանդերձ, կրկին շնորհակալ եմ ձեզի որ բարեհաճեցաք դոնէ ձեր կարճ, սեղմ նամակներով, ուրացումներով, ամբաստանութիւններով հաստատել իմ այն համոզումը, զոր արտայայտած էի 1954 Ապրիլ 17-ին, Բոստոնի «Պայքար» օրաթերթի միջոցաւ:

Յարգանքներով՝
ԱՂԱՆ Ս. ԵՆԿՈՅԵԱՆ

Յ. Գ.— Ձեր յուշերու Բ. հատորի 341-րդ էջին վրայ կը դրէք Կարնեցի Գեղամ Աստուրեանի մասին. —

«Ինձմէ առաջ — մոռցած եմ պատճառը, — բանտարկուած էր նաեւ էրզրումցի, Սանատարեանէն ելած, մեր շատ յուսատու ընկերներէն Գեղամ Աստուրեանը, որուն ո՛չ մի կերպով չյաջողեցանք ազատել տալ: Վերջ ի վերջոյ, զայն եւս Բաղէշ տարին եւ միւսներու հետ ջարդեցին հոն»:

Եթէ, իրապէս կը փափաքէիք յիշեալի ձերրակալութեան եւ բանտարկութեան իրական պատճառն իմանալ, տրամադիր եմ այդ մասին միայն գոհացնելու ձեզ, եթէ երկտողով մը իմացնէք:

ՆՈՑՆ

Երկրորդ Յ. Գ.— Տէր Եղիշէի նկարագրի մասին, ձեր անձա՛հ եւ անարդար արտայայտութիւնը ո՛չ մէկ ատեն՝ պատիւ չի բերեր ձեր վարկին եւ ո՛չ ալ՝ քաւել կուտայ ձեր անասելի մեղքերն ու յանցանքները:

Տէր Եղիշէ քահանայ Տէր Պարսամեան եղած է գաւառական կիսազրադէտ քահանայ մը, ինչպէս սովորաբար էին քահանաները Թրքահայաստանի այդ խուլ անկիւններուն մէջ: Բայց, ամէն բանէ

առաջ եւ ամէն բանէ աւելի, ան եղած է համարձակախօս ու նշմար-
տախօս անձ մը, եւ չէ՛ քաշուած նոյնիսկ ամենակարող(?) «շէֆ»ե-
րուն եւ «պարոն»ներուն ընդդիմախօսելէ եւ անոնց սխալներուն դէմ
պայքարելէ, յանձն առնելով նոյնիսկ ապտակուել «պարոն» Ռուբէ-
նի կողմէ, երբ, իբր Տարօնի Աղգային Առաջնորդական Փոխանորդ,
ընդդիմացեր է անոր՝ կանգնած իր պարտականութեան վրուխը:

Ռուբէնի այդ վայրենի եւ կոպիտ արարքին պատճառով,
Առաջնորդարանի գումները ամուր մը գոցուեցան անոր առջեւ՝
իբրեւ պատիժ իր անուղղայ եւ անվայել վարմունքին:

ՆՈՅՆ

* * *

Այս նամակներով շօշափուած պատմական իրադուքիւններու
լիակատար պատմութիւնը, քննութիւնն ու քննադատութիւնը պի-
տի ներկայացնենք յաջորդ էջերուն մէջ՝ ըստ յարմարութեան եւ
կարեւորութեան:

ԱՂԱՆ ՏԱՐՕՆԵՑԻ

1 Մայիս 1965

Սան Ֆրանսիսկօ



ՀԵՐՔՈՒՄ

Սասունէն Մուշ Քաղաքին

«Օգնութեան Փութացողներու»

Հեփաթին

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Երբ 1915 Յունիս 29-30-ին, Մուշ ֆաղափացի փոփոխութիւ մարտիկները, ղեկավարութեամբ Տարօնի ժամանակակից պատմութեան *մեծագոյն* հերոս Հաջի Յակոբ Կոտոյեանի, դիւցազնաբար կուրծք կու տային Մուշ ֆաղափը պաշարող թրքական *Պասար Թարուրի* զինուորներուն, հազարաւոր թուրք եւ ֆուրդ *չեթէ*ներուն եւ հայկական թաղերուն տիրապետող բարձրադիր բլուրներու վրայ գետեղուած չորս թնդանօթներու համայնաւեր ոռմբերուն, *այն սին յոյսը կը սնուցանէին* թէ ոչ-շատ հեռու գտնուող Սասունարնակ երկու «պարոն»ները շուտով օգնութիւն պիտի փութացնէին մարտնչող ֆաղափին:

Սակայն ի գո՛ւր: Անձկօրէն ակնկալուած այդ յոյժ ցանկալի օգնութիւնը չեկա՛ւ բնաւ:

Այդ մակատագրական գոյամարտի ողբերգութենէն երեսուն եւ հինգ տարի անցնելէն յետոյ, վերոյիշեալ երկու օտարերկրացի «պարոն»ները, — Ռուրէն Տէր Մինասեան եւ Վահան Փափագեան, — հրապարակը ողողեցին *անհիմն* ու *անիրական*, հետեւաբար ստայօղ ու *չինծու* պատմութիւններով թէ՛ Սասունէն *փութացուած է եղեր* ակրնկալուած օգնութիւնը, սակայն ՀՆԱՐԱԻՈՐ ԶԷ ԵՂԱԾ մօտենալ ֆաղափին՝ *գոռացող թնդանօթներու սպառնալիքին պատճառով*:

Մեր այս ֆննական ուսումնասիրութիւնը, յեցած *բնիկ Տարօնցի* ականատես յուշագիրներու ստուգապատում վկայութեանց եւ տեղագրական-աշխարհագրական տուեալներու *անժխտելի փաստերու վրայ*, կը հերքէ այդ յերիւրուած հեփիաթը, եւ միանգամայն կը դիմակագերծէ վերոյիշեալ երկու թուլամորթ, անարի, ապիկար եւ պարտագանց «պարոն»ները՝ թոյլ չտալով որ պատասխանատուութեան զգացումէ եւ պարտանանաչութեան գիտակցութենէ զուրկ այդ եսապաշտ եւ անձնամոլ ղեկավարները, ու անոնց թութակամիտ մանկաւարիկները, մաս-

նաւորապէս Տարօնի շնաշխարհիկ «պատմագիր» Կարօ Սաւունի, յերկրանքներ հիւսելով, *փորձեն ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ԽԱԲԵԼ ՈՒ ՄՈԼՈՐԵՑՆԵԼ* իրենց միամիտ հետեւորդները՝ առաջնորդուելով այն խարդաւանող եւ անպարկեշտ յառաջադրութեամբ թէ *միմիայն* իրենց ազանդաւոր խելապատակէն ու խարդաւանող գրիչէն արտահոսող առասպելապատում յերկրանքն է «*առարկայական, ճշմարիտ եւ իրական նկարագրութիւնը ժամանակի եւ դէպքերու*» (Վահան Փափագեան, «Իմ Յուշերը», հատոր Բ., էջ 274), իսկ ամէն անոնք որ ասոնց այս ստայօղ պատմութիւններէն *ԲՈԼՈՐՈՎԻՆ ՏԱՐԲԵՐ փաստեր ու իրողութիւններ կը ներկայացնեն*, այդպիսիները «*Ապագայ պատմութիւնն*» է որ «*կ'եղծեն*» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ազան Տարօնեցի]:

Այս յառաջադրութեամբ է որ մենք ձեռնարկեցինք «Տարօնապատում»ի ներկայ քննական ուսումնասիրութեան, նշանաբան ունենալով Կոմփիւլիոսի հետեւեալ խօսքը.

«ԱՆ ՈՐ ԿԸ ԳԻՏԱԿՑԻ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՉԻ ԿԱՏԱՐԵՐ ՉԱՅՆ, ՎԱՏ ՄԸՆ Է»:

Ջանացած ենք ըլլալ առարկայական, բանաւոր եւ անկողմնակալ, — որքան որ մարդկայնօրէն հնարաւոր է, — մեր դատումներու, վերլուծումներու եւ փաստարկութեանց մէջ, անկախ եւ վեր՝ բոլոր հատուածական եւ կուսակցական նկատումներէ, որոնցմէ *զերծ ենք՝* իրրել անկախ մտածողութեան տէր անհատ, *դատափետելով խեղաթիւրումը ու երեւան բերելով բացարձակ ճշմարտութիւնը:*

Ջերմօրէն կը հաւատանք որ մեր յանգած եզրակացութիւնը միշտ է ու արդար, եւ այդ վստահութեամբ ալ՝ մակաւարաց կ'ընդառաջենք ապագայի անաչառ պատմաբանը:

ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ

1.— «Տարօնապատում»ի ներկայ Քննական Ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ Տարօնցի բոլոր յուշագիրներու յուշերուն մէջ գործածուած բոլոր թուականները Հին Տոմարով են: Երբ հարկ տեսնուած է Նոր Տոմարով թուականի մը, այդ տարբերութիւնը նշանակած ենք բացորոշ կերպով, բացառելով Բիւրոյական յուշագիր վահան Փափագեանի հետ մեր ունեցած թղթակցութիւնը՝ 1954-1955-ին, որուն թուականները, բնականաբար, Նոր Տոմարով են:

2.— Այս Քննական Ուսումնասիրութեան ստորէջեայ բոլոր դիտողութիւնները (Footnotes) մերն են:

Գ Լ ՈՒ Խ Ա .

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1908-ի Օսմանեան խարուսիկ Սահմանադրութենէն առաջ, Համիտական բռնակալութեան շրջանին, Տարօն կը գտնուէր Ռուսէն կեղծանունով ծպտուած, Կովկասահայ բախտախնդիր երիտասարդ մը, բուն անունով՝ Մինաս Տէր Մինասեան, իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի լիազօր եւ պատասխանատու ներկայացուցիչ, ունենալով անփառունակ գործունէութիւն մը՝ արատաւորուած եղբայրասպան դրուագով մը:

Թրքական Սահմանադրութիւնը հռչակուելէն յետոյ, ծակամուտ «հերոս»ը կծիկը դրաւ Տարօնէն՝ առանց ետին նայելու: Սակայն, հինգ տարի ետք, 1913-ի վերջերը, այդ փառատենչիկ «պարոնը»(1), «համալսարանական» պատմուճանը ուսերուն, սոնքալով, նորէն վերադարձաւ Տարօն, նոյն պաշտօնով:

Թուրքիա՝ Համաշխարհային Առաջին Պատերազմին մէջ մը խրրճուած ամսուն ալ, 1914-ի Հոկտեմբերին, Մուշ ժամանեց նաեւ Վանի երեսփոխան եւ Դաշնակցութեան Բիւրոյի անդամ Վահան Փափազեան, որ կարճ ժամանակ մը հոն մնալէն յետոյ, իր պաշտօնակից՝ Մուշի Թուրք երեսփոխան Հոջա Իլիասի հետ պիտի վերադառնար իր պաշտօնատեղին, Պոլիս:

Սակայն, վերահաս ձիւնը գոցեց ճամբաները եւ Օսմանեան խորհրդարանի անդամ Վահան Փափազեանն ալ հարկադրուեցաւ

(1) Ռուրէնը եւ Վահան Փափազեանը որակոյ այս «պարոն» բառը միշտ չակերտած ենք՝ «Տարօնապատում»ի ներկայ ուսումնասիրութեան մէջ, որովհետեւ գոյականաբար գործածուած այդ ածականը իր բուն իմաստով չէր որ կը գործածուէր Տարօնի մէջ, երբ ան կ'որակէր Դաշնակցութեան օտարերկրացի ներկայացուցիչները:

Տարօնցիի, մանաւանդ դաշնակցական Տարօնցիի արտասանած «պարոն» բառը կը բովանդակէր վեհութիւնը եւ յարգամեծար իմաստը «վեհափառ» բառին, գոր սովորաբար կը գործածենք Ամեցայն Հայոց Ընդհանրական Հայրապետին համար, ամենալուրջ ակնածամբով ու պատկառամբով:

մնալու Տարօն եւ իր կուսակցական ընկեր Ռուբէնի հետ միասնաբար վարելու Տարօնի ազգային-կուսակցական գործերը՝ ոչ-սիրալիր գործակցութեամբ մը(2) :

* * *

Նորածագ պատերազմը վերակենդանացուցած էր թուրք կառավարութեան հակահայ վաղեմի քաղաքականութիւնը: Բռնագրաւում եւ կողոպուտ նորէն ի պատուի էին՝ Տարօնի մէջ մանաւանդ, այս անգամ օրինական ձեւ ստացած՝ յանուն բանակին եւ հայրենիքի գերագոյն շահերուն:

Թուրք կառավարութիւնը կը գրաւէր ինչ որ ունէր հայ տարրը: Քաղաքին մէջ ան կը պարպէր հայ վաճառականներու, խանութպաններու եւ արհեստաւորներու խանութներն ու տուները, իսկ գիւղերու մէջ ալ՝ կը գրաւէր հայ գիւղացիութեան պատկանող ամէն ինչ — հացահատիկ, ոչխար, եզ, ձի, էջ, բուրդ, հագուստեղէն, կօշիկ, գուլպայ, տրեխ, կաշի, խոտ, վերջապէս մասցու եւ բեռնատար բոլոր անասունները, եւ նոյնիսկ՝ սերմնացու:

Ան կը պահանջէր մարդկային ուժեր — շալակաւորներ, — այդ բռնագրաւում ապրանքները փոխադրելու համար ռազմաճակատ: Եւ շալակաւորներու անհատնում կարաւանները, մէկը միւսին ետեւէն, ճանապարհ կ'իյնային հարիւրներով ու հազարներով՝ անսուաղ, կիսաքաղց, կիսամերկ, բացօթեայ: Այդ մահաբոյր կարաւաններուն մասնակցողը կա'մ տաժանելի մահուամբ մը կը վերջացնէր իր տառապակոծ կեանքը, եւ կա'մ, հազուադիւս բախտաւորութեամբ մը, եթէ ողջ՝ տուն վերադառնար, արդէն իսկ հիւժուած, ծիւրած, հիւանդկախ ու մահամերձ վիճակի մը մատնուած կ'ըլլար:

Անգամ մը այդ տանջալից կարաւանին մաս կազմողը, անոր բազմաբիւր տառապանքները ճաշակելէն յետոյ, դժուար թէ յօժարէր երկրորդ անգամ եւս միանալու այդ մահաբոյր թափօրին:

Ու հետզհետէ կ'աճէր փախստականներու թիւը՝ միշտ ու հանապազ:

(2) Ռուբէնի եւ Վահան Փափագեանի ոչ-սիրալիր փոխ-յարաբերութեանց մասին կարգալ Ռուբէնի «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակներ»ու Ե. հատորի 221-223 եւ 249-254 էջերը, ինչպէս նաեւ Վահան Փափագեանի «Իմ Յուշեր»ու Բ. հատորի 313-314 էջերը:

Քաղաքի եւ գաւառի Հայութիւնը, իր կրած անհատնում զըրկանքներուն, չարչարանքներուն եւ տառապանքներուն հետեւանքով, մատնուած էր ծայր աստիճան յուսահատութեան եւ շուարած: Ան ո'չ միայն տնտեսապէս կը կործանէր, այլ նաեւ Ֆիզիքապէս ալ փրճանալու սպառնալիքին դէմ-յանդիման կը գտնէր ինքզինք:

Եւ այս դժնդակ կացութիւնը, օրէ օր, ա'լ աւելի կը վատթարանար:

Մեր բոլոր յուշագիրները ձեռնհասօրէն ու առարկայօրէն կը նկարագրեն մանրամասն կերպով՝ թուրք կառավարութեան ձեռք առած դաժան միջոցները, որոնցմով ան կը ջանար կողոպտել, եւ Ֆիզիքապէս ու տնտեսապէս՝ բացարձակ անկարող վիճակի մէջ դնել Տարօնի Հայութիւնը, ինչպէս նաեւ այս դժնդակ արարքներուն հակազդելու համար՝ մերագնէից ձեռք առած թոյլ եւ տկար կիսամիջոցները:

Բանիմաց ազգայիններու կողմէ՝ կառավարութեան այս հայահարած ընթացքը կը նկատուէր կա'մ իբրեւ միջոց՝ Հայութիւնը սովամահ ընելու, եւ կա'մ, այդ միջոցով՝ զայն ըմբոստութեան մղելու, որ առիթ պիտի ստեղծէր ընդհանուր ջարդերու:

Եւ Տարօնի Ազգային Առաջնորդարանը հրահանգ հրահանգի վրայ կը տեղացնէր շրջանները եւ կը յանձնարարէր Հայ տարրին՝ ըլլալ համբերատար, ընդառաջ երթալ կառավարութեան բոլոր պահանջներուն, զգուշանալ որեւէ անժամանակ ցոյց սարքելէ կամ անխոհեմ դիմադրութիւն կազմակերպելէ, եւ միանգամայն, գաղտնօրէն կը թելադրէր որ ամէն ոք՝ զէնքի եւ ռազմամթերքի պատրաստութիւն տեսնէր, թերեւս, ո'վ գիտէ, Ռուս բանակը յառաջացած պահուն, երբ թուրք զօրքերը նահանջէին, հաւանաբար քաղաքն ու դաշտը պատերազմի թատերաբեմ դառնային, եւ այդպիսի պարագաներուն ալ, թուրք զօրքը, բնականաբար, տեղացիները կոտորելով՝ նահանջէր:

Ո'չ ոքի մտքէն կ'անցնէր ընդհանուր ջարդ, սակայն կ'ակընկալուէր որ նահանջի ճամբուն վրայ գտնուող բոլոր հայ գիւղերը ոտքի կոխան դառնային:

Գ Լ ՈՒ Խ Բ .

Դ Ե Պ Ք Ե Ի Ը Կ Ը Զ Ա Ր Գ Ա Ն Ա Ն

1914-ի վերջին ամիսներէն սկսեալ մինչեւ 1915-ի առաջին կէսի ժամանակամիջոցը նախընթաց շունեցող, խիստ բացառիկ շրջան մըն է Տարօնի երկարաձիգ պատմութեան մէջ, լեցուն՝ այդ պատմական քաջարի ժողովուրդին խիստ տխրեցուցիչ հոգեվարքի սահմընկեցնող հոնդիւններով, որոնց ծագումին եւ զարգացումին մէջ՝ իրենց պատասխանատուութեան մեծադոյն բաժինն ունեցան նաեւ Տարօնի տարաբախտ Հայութեան դժխեմ ճակատագիրը իրենց ապիկար ձեռքերուն մէջ առնող՝ Դաշնակցութեան Բիւրոյի պատասխանատու ներկայացուցիչը, Ռուբէն Տէր Մինասեան, եւ իր Բիւրոյական-երեսփոխան ընկերը, Վահան Փափազեան:

1914-ի Հոկտեմբերին, Թուրքիա՝ Համաշխարհային Առաջին Պատերազմին միջամուխ ըլլալէն յետոյ, Մուշի Իթթիհադական կառավարիչը, Ռումելիցի հայատեաց Սերվէթ Բէյ, զգուշօրէն եւ փափկանկատօրէն կը զգացնէր իր բարձակից, գաղափարակից եւ դաշնակից կուսակցութեան Մուշի լիազօր-ներկայացուցիչ եւ իր հոգեկցորդ ընկեր Ռուբէնին որ, իբրեւ օտարահպատակ (Ռուսահպատակ), պարտ էր որ անձնադիր ունենար:

Սկիզբները, օրէնքի այս տրամադրութիւնը անոր կը հաղորդուէր, բնականաբար, ընկերական թելադրութեանց ձեւով, մտերմիկ տեսակցութեանց եւ քաղցրաբարբառ խօսակցութեանց ընթացքին. աւելի յետոյ ալ՝ իբրեւ պետական պարտադիր օրէնք:

Ռուբէն, այլեւս, այն սրտակից ու գաղափարակից մտերմը չէ՛ր մոլի Իթթիհադական երիտասարդ կառավարիչին, ինչպէս որ էր նախկին, երանելի՛ օրերուն, որ ատեն իրարու բերանը կը շնչէին: Իրականութեան մէջ, անիկա անբազալի, օտարական հիւր մը կը նկատուէր այլեւս, — եթէ ո՛չ՝ թշնամի, — որուն հեռացումին ա՛յնքան բաղձացող էին իր նախկին բարձակից Իթթիհադական ընկերները:

Եւ այդ պատճառով ալ, Ռուբէն, ի բնէ կասկածամիտ եւ զգուշաւոր մարդ, կիսա-փախստական վիճակի մատնուած էր: Եւ երբ օր մը, Թուրք ոստիկանները կը յայտնուին Դաշնակցութեան Ակումբին դրան առջեւ՝ եռլտաշ Ռուբէնը «հրաւիրելու» կառավարիչին

քով, հո՛ն, ակումբին մէջ ներկայ դտնուող Ռուբէնը կը նախազգայ վտանգը, երեւան չ'ելլեր, եւ այդ վայրկեանէն սկսեալ, փախստական կը դառնայ, ու Համիտական բռնակալութեան շրջանին եղածին պէս, կը սկսի ընդ յատակեայ կեանք մը անցընել, երբեմն քաղաքի մէջ պահուելով, եւ շատ յաճախ ալ՝ դաշտի գիւղերը (Միսակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 326):

Գոմս գիւղի(1) դէպքին ատեն, որ տեղի ունեցաւ 1915 Փետրուար 6-7-ին, Ռուբէն, իր զինեալ հետեւորդներով, հո՛ն կը գտնուէր պատահաբար, սակայն այս պատահական ներկայութիւնն իսկ՝ վերջնական դատակնիքը դրաւ անոր ճակատին վրայ՝ իբրեւ բացարձակապէս անբարեյոյս եւ վնասակար անձ մը, զոր կառավարիչը կը ջանար ձեռք ձգել խորամանկութեամբ եւ շողմեւով, շատ յաճախ իբրեւ միջոց պործածելով նոյն ինքն անոր Բիւրոյական ընկեր Վահան Փափազեանը («Իմ Յուշերը», Բ., էջք 341-2):

Գոմսի դէպքէն յետոյ, Ռուբէն, իր սպառաղէն հետեւորդներով, Սասուն խոյս տուաւ՝ Կորիւնի հետ, եւ այդ օրէն սկսեալ, Հիւսէ ԴՐԱԻ բացայայտօրէն սխալ եւ յայժ ազիտաբեր քաղաքականօրէնքեան մը, այսինքն, ԶԱՆԱՅ ՍԱՍՈՒՆԻ ՄԷՋ ԿԵԴՐՈՆԱՑՆԵԼ Քաղաքի, Դաշտի եւ շրջաններու ԲՈՂՈՐ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ, Զէն-ՔԵՐԸ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԸ ԵՒ ՊԱՐԷՆԸ:

Ատեն մը վերջ, Վահան Փափազեան եւս, նախազգալով անխուսափելի վտանգը, ինքն ալ խոյս տուաւ լեռները՝ յար եւ նման Ռուբէնին, աչքը բաց ձգելով աչքբաց կառավարիչին:

Հիմա որ Իթթիհադական կառավարիչը ձեռքէ հանած էր իր նախկին սրտակից ու բարձակից ընկերները, եւ այլեւս յոյս չունէր թակարդելու զանոնք, զանազան խորամանկ եւ շողմիչ միջոցներով, եւ սրտակից գործակցութեամբ Մուշի Թուրք երեսփոխան Հոջա Իլիասին, շարունակ փորձեր կատարեց համոզելու այդ երկու փախստական «պարոն»ները, եւ մասնաւորապէս Վահան Փափազեանը, — քանի որ Ռուբէնէն վերջնականապէս կտրած էր իր յոյսը, — որ քաղաք վերադառնան:

«Այս ծանր օրերուն, երբ հայրենիքը վտանգի մէջ է, — կը զրէր Մուշի Հոջա մէպուսը՝ իր պաշտօնակից երեսփոխան Վահան Փափազեանին, — պէտք է որ... ձեռք ձեռքի տուած՝ աշխատիք. ամօթ է փախչիլ ու լեռ ելնել՝ աւազակի պէս: ... Վերադարձի՛ր ան-

(1) Գոմս նշանաւոր գիւղ մըն էր Մշոյ Դաշտի մէջ՝ իբրեւ ծննդավայր ակամաւոր հայդուկներու, որոնց մէջ ամենէն յայտնի ու տիրական դէմքն էր Կորիւն (Գոմսայ Իսօն):

միջապէս. մի՛ կասկածիր երբեք. զլիովս կ'երաշխաւորեմ» (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջք 341-342, 359-360, եւ Միսակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 437):

Եւ մանաւանդ, երբ Մուշի արթնամիտ կառավարիչը տեղեկացաւ Թուրքիոյ գործունէութեան եւ պատրաստութեանց մասին՝ Սասունի մէջ, ինքն ալ՝ իր կարգին, կը սկսի հրահրել ու քաջալերել Սասունաբնակ քուրդ աշիրէթները, որ իրենց պարբերական ընդհարումներով գրադած պահեմ մեր լեռնաբնակ «պարոն»ները, անոնց ուշադրութիւնը ԱՅԼ ԿՈՂՄ ԴԱՐՁՆԵԼՈՒ եւ իրենց ռազմաբերքը ՅՈՒՄՊԵՏՍ ՍՊԱՌԵԼ ՏԱԼՈՒ բացայայտ դիտաւորութեամբ, մինչեւ որ թուրք կառավարութիւնը ի վիճակի ԸԼԼԱՐ նոր ուժեր նարելու եւ տեղական չեթէնքը կազմակերպելու, եւ ասոնց բոլորի օժանդակութեամբ ալ՝ յաջորդաբար, քայլ առ քայլ, հաշուեյարդարի ենթարկելու Մշոյ Դաշտի (Դուրան) եւ Մուշ քաղաքի ԱՆՁՕՐ, ԱՆՊԱՇՏՊԱՆ եւ ԱՆԳԼՈՒԻ վիճակի ՄԷՁ ԴՐՈՒԱԾ ՀՈԾ ՀԱՅՈՒԹԻԻՆԸ:

Այս կացութիւնը այսպէս շարունակուեցաւ մինչեւ 1915 Յուլիս ամսուան սկիզբը, այսինքն, մինչեւ Մշոյ Դաշտի եւ Մուշ քաղաքի մեծազանգուած հայութեան ամբողջական եւ կատարեալ բնաջնջումը:

Այս անտուրբ գործին յարդարումէն յետոյ միայն, թուրք կառավարութիւնը իր ուշադրութիւնը դարձուց Սասունի վրայ, զոր հետզհետէ պաշարել տուաւ արեւելքէն, հարաւէն եւ արեւմուտքէն. միայն հիւսիսային կողմը, այսինքն, Ծիրնկատարի ջղանցքները, Կուրտիկ լեռան բարձունքներն ու լեռնալանջերը դեռ բաց կը մնային՝ դէպի Մուշ քաղաքը, ինչպէս նաեւ դէպի Հաւատորիկի եւ Քանայ լեռները, ուր ապաստան գտած էին Դաշտի եւ Քաղաքի կոտորածներէն ճողոպրած մեծազանգուած Հայեր, թիւով 25-30 հազար հոգի, մեծաւ մասամբ՝ անոք ու անպաշտպան կիներ ու երեխաներ:

Կառավարութիւնը, նախապէս իր կազմակերպած թուրք եւ քուրդ չեթէներով, Դուրանի 125-էն աւելի հայաբնակ գիւղերը, ՄԷԿ ՕՐՈՒԱՆ ՄԷՁ (1915 Յուլիս 28, Վարդավառի Կիրակի) ՓՃԱՑՆԵԼԷՆ ՅԵՏՈՅ, իր չորս թնդանօթներով(2) եւ Խասար Թարուրի փոքրաթիւ զինուորներով, — հաղարէն հազար հինգ հարիւր հոգի,

(2) Յուշագիրներէն Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, Յակոբ Տէր Չափարեան եւ Երուանդ Շարաֆեան՝ թնդանօթներու թիւը չորս կը դնեն, իսկ Միսակ Բղէեան եւ Մուշեղ Դուռնեան՝ եօթնի կը բարձրացնեն անոնց թիւը:

որոնք, Վանի նահանջէն յետոյ, Բաղէշի Հայութեան արիւնազանգ կոտորածը սարքած եւ նոյն նպատակով ալ՝ Մուշ բերուած էին, — ու տեղական թուրք եւ քուրդ չեթէներով, օղակի մէջ կ'առնէ Մուշ քաղաքը, ուր դիմադրական կատաղի եւ օրհասական գօտեմարտը կը սկսի Յուլիս 29-ին, Վարդավառի Մեռելոցի Երկուշարթի առաւօտեան, ղեկավարութեամբ Մուշ քաղաքացի ակնյայտնի յեղափոխական ռազմիկ Հաջի Յակոբ Կոտոյեանի:

Հաջի Յակոբ, բնիկ Ձորոյ Թաղեցի, նախկին հայդուկային կռիւներու մէջ թրծուած, անվեհեր յեղափոխական ռազմիկը եւ Անդրանիկի քաջակորով զինակիցը՝ Առաքելոց Վանքի եւ Սասունի



ՀԱՋԻ ԵԱԿՈԲ ԿՈՏՈՅԵԱՆ

1904-ի կռիւներուն մէջ, խիզախօրէն կուրծք կու տայ անագորոյն թնդանօթներու համայնաւեր ռումբերուն, միանգամայն անուցանելով ԱՅՆ ՍԻՆ ՅՈՅԱԸ թէ Սասունաբնակ իր նախկին ընկերները շուտով օգնութեան պիտի փութան մարտնչոյ քաղաքին, եւ՝

«— Տա՛յ Աստուած որ մեր տղաք կարողանան երկար դիմադրել. ա՛յլ գիտէ, ԹԵՐԻԻՍ, Սասնայ մեր ընկերներուն մէջ գտնուին ընկերական ազնիւ սիրտ ունեցողներ եւ փութան մեր օգնութեան», բաղձանք կը յայտնէ Հաջի Յակոբ, եւ կ'աւելցնէ.

«— Եւ եթէ ԼԱԻ ՄՏԱԾԵՆ, իրենց շահն ալ այդ կը պահանջէ» (Միսակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 399) [բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Եւ Մուշ քաղաքացի մեր քաջամարտիկ բուռ մը հերոսները, — թիւով հազիւ հինգ-եօթը հոգի՝ իրբեւ զինավաթ կռուողներ, — գերազանցօրէն անհաւասար եռօրեայ գօտեմարտի ընթացքին, ԱՁ-

Քե՛րնհն ՄԻՇՏ ՅԱՌԱՄ Սասուն տանող ճամբաներուն եւ լեռնալանջերուն, ԱԿՆԻԷՏ ու ԱՆՀԱՄԲԵՐ կը սպասէին Սասունէն ակնկալուած օգնութեան, որ ՊԷՏՔ ԷՐ ԳԱՐ, ՊԱՐՏԱԻՈՐ ԷՐ ԳԱԼՈՒ, եւ որ, սակայն, չեկա՛ւ ու չեկա՛ւ, աւա՛ղ...:

Մեր լեռնաբնակ երկու «պարոն»ները, այս ճակատագրական դոյսամարտի ողբերգութենէն ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ՏԱՐԻ ԱՆՑՆԵԼԷՆ ՅԵՏՈՅ ՄԻԱՅՆ, որ ատեն՝ անոնք կը կարծէին թէ Մուշ քաղաքի հերոսամարտէն սակաւաթիւ վերապրողները, զրեթէ ԲՈԼՈՐՆ ԱԼ, փակած կ'ըլլան աչքերնին եւ յաւիտեանս լռած՝ ԱՌԱՆՑ ՈՐԵԻԷ ՀԵՏՔ ԶԳԵԼՈՒ, յանկարծ մէջտեղ ելան իրենց «Իմ Յուշեր»ով (Վահան Փափազեան) եւ «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակներ»ով (Ռուբէն), մեզի պատմելու համար թէ ԻՆՉՈՒ ԶԵՆ ՅԱԶՈՂԱՄ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՍՑՆԵԼ Մուշ քաղաքի քաջամարտիկ առիւծին եւ իր հերոս կորիւններուն, քաղաքի ճակատագրական դոսեմարտի օրերուն, 1915 Յունիս 29-30-ին:

Վահան Փափազեան այդ պատմութիւնը կու տայ «կիսա-կամարածի պաշարում»ի հեքիաթով, Ռուբէն՝ իր «Փրոտոնայ»ի առասպելով, իսկ Սասունցի Մուշեղ եւ Կարօ Սասունին ալ, պնակալէզօրէն, իրենց այս երկու «պարոն»ներու ՄՏԱՅՕՒ պատմութիւնները թուրակարար կրկնելով:

Ուրեմն, մենք հոս պիտի քննենք.—

ա.— Վահան Փափազեանի «կիսա-կամարածի պաշարումը».

բ.— Ռուբէնի «Փրոտոնայ».

գ.— Սասունցի Մուշեղի եւ

դ.— Կարօ Սասունիի լորձնաշուրթն թութակարանութիւնները:



Գ Լ Ո Ւ Խ Գ .

ՄԻԱԼ ՏԵՍԱԿԷՏ, ՎՆԱՍԱԿԱՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Որքան ատեն որ Մուշ քաղաքի եւ Մուշ Դաշտի (Դուրան) հոծ հայութեան հաշիւը կարգադրուած չէր, Մուշի թուրք կառավարիչը ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԱՆՏԵՍ ԸՐԱՄ ԷՐ Սասունը եւ հոն ապաստան գտած փախստական պարագլուխները, իր նախկին «եղիտաշ»ները:

ՆԱԽ պէտք էր Դուրանի եւ քաղաքի անգլուխ, անգոր ու անպաշտպան ՎԻՃԱԿԻ ՄԷՋ ԴՐՈՒԱՄ հոծ հայութեան հաշուեյարդարն ընել, ԱՊԱ ուղարուութիւն դարձնել դէպի Սասուն, տրամագծօրէն հակառակ մեր «պարոն»ներու խորհածին ու ծրագրածին:

Վահան Փափազեան կը գրէ.—

ա.— «Ռուբէնը յամառօրէն տեսակէտ մը կը պաշտպանէր, որ դժբախտաբար մինչեւ վերջը շարունակեց, առաջնորդուելով անով թէ վտանգի պահուն, Դաշտը չի՛ կրնար պաշտպանուիլ, իսկ Քաղաքը վտանգելի յենարան մը չէ ինքնապաշտպանութեան տեսակէտէն. մեր ուժերը պէտք է կեդրոնացնենք Սասուն եւ հոն կազմակերպենք ինքնապաշտպանութիւնը՝ ապաւինելով լեռներուն եւ յենելով լեռնական մեր ժողովուրդին» («Իմ Յուշեր», Բ., 321):

բ.— «Մերիւնները միշտ կը հաւատացնէին մեզի թէ Սասունի դէմ պիտի ուղղուի ՆԱԽ՝ թուրքերու հարուածը, ուրեմն անոր դիմադրութեան յաջողութենէն կախուած է Դուրանի եւ Քաղաքի փրկուածութիւնը. հետեւաբար, մարտական փորձառու ուժերը եւ ռազմանիւթը ՀՈ՛Ն ՊԷՏՔ ԷՐ ԿԵԴՐՈՆԱՑՆԵԼ» (նոյն, 344):

գ.— «Սասունի ընկերները, ըստ երեւոյթին, կլանուած էին Սասունի պատրաստութեամբ. կեցնականութեան նշան չէին ցոյց տար Դաշտի կազմակերպութեան մասին: Ի՞նչ կը խորհէին. ՄԻԹԷ ԻՐԵՆՑ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՊԷՏԻ ԶԳԷԻՆ դաշտաբնակները, թէ՞ ուրիշ ծրագիրներ ունէին — ինձ անյայտ էր... Քաղաքի ղեկավար ընկերները շատ վշտացած էին եւ գայրացած» (նոյն, 356) [բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Տարօնի ոչ-դաշնակցական առաջնորդող դէմքերը, ներառեալ նաեւ «Քաղաքի ղեկավար ընկերները», որոնք «շատ վշտացած էին

ու զայրացած» Ռուբէնի ինքնագլուխ տուած ՅԱԵՐԺՕՐԷՆ ՍԽԱԼ այս որոշումներէն, եւ առաջին հերթին՝ Տարօնի Առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Խարախանեան եւ Հաջի Յակոբ Կոտոյեան, բնականաբար Չիին ԲԱԺՆԵՐ ամենազիտութեամբ սոնքացող Ռուբէնի այս սխալ տեսակէտը եւ վնասակար գործելակերպը, որոնք կը բխէին երկրի տեղական մասնաշատուկ պայմաններուն, եւ թուրք կառավարութեան ու ժողովուրդի ախտածէտ հոգեբանութեան հիմնովին անձամօք ըլլալու դառն իրողութենէն, եւ մանաւանդ՝ իր անձին անվտանգութիւնը ապահովելու մղձաւանջային մտաեռզուքեմէն:

Սակայն, ի՞նչ կրնային ընել «Քաղաքի ղեկավար ընկերները», կա՛մ Տարօնի Առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Խարախանեանը եւ կա՛մ Հաջի Յակոբ Կոտոյեան: «Համալսարանական» եւ «զինուորական կրթութիւն տեսած» այդ «պարոն»ը շատ յամառ էր, ինքնահաւան, յանձնապաստան, եւ մանաւանդ՝ ԱՆՁՆԱՊԱՇՏ: Որեւէ թելադրութիւն կամ խորհուրդ կը բախէր անոր ԿԱՄԱԿՈՐ ՀԱՄԱՅՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ:

(Հոս միջանկեալ յիշենք որ Հաջի Յակոբ, մէկէ աւելի առիթներով, «պարոն»ներուն ներկայացուցած է խիստ գործնական եւ յոյժ փրկարեք առաջարկներ. մէկը, երբ թուրք կառավարիչը Հաջի Յակոբին կը յանձնէր երկու թնդանօթները՝ Քոստուրայ լեռները փոխադրելու պաշտօնը, այդ պարագային, Հաջի Յակոբ կը թելադրէ «պարոն»ներուն՝ օգտուիլ այս բարեպատե՛հ առիթէն, քաղաքը դրաւել եւ իշխանութիւնը ձեռք անցնել (Այս կէտը մանրամասն բացատրուած է ներկայ ուսումնասիրութեան ԺԹ. Գլուխին մէջ):

(Նոյնպիսի փրկարեք առաջարկ մը Հաջի Յակոբ ներկայացուցած է «Հնձանի ժողով»ի խորհրդակցութեանց ընթացքին: Այս մասին ալ կարդալ այս ուսումնասիրութեան Ի. Գլուխը:

(Այս երկու պարագաներուն ալ, «պարոն»ները վճռականապէս մերժած են Հաջի Յակոբի առաջարկներն ու թելադրութիւնները՝ ամէն բան ձգելով պատահականութեան...):

«ՇԱՏ ԸՆԿՉՈՒԱԾ ԷՐ Սրբազանը(1), — կը գրէ Վահան Փափազեան, — լսելով լեռ ելնողներու այս տեսակէտները. նոյնիսկ

(1) Ներսէս Եպիսկոպոս Խարախանեան, բնիկ Մշոյ Դաշտի Արան գիւղացի, շատ սիրուած ու յարգուած Առաջնորդը Տարօնոյ, քաղաքացիական պայմաններուն, թուրք կառավարութեան անց ու դիւային ծրագիրներուն եւ թրքական ախտածէտ հոգեբանութեան: Կը վախճանի 1915 Ապրիլ 10-ին, թիֆլիսի հիւանդութեան:



ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՐԱԽԱՆԵԱՆ

անկամ մը խնդրեց որ զիշերով անձամբ հո՛ն երթամ եւ համոզեմ որ Դուրանը եւ Քաղաքը ձեռքէ չթողուն» («Իմ Յուշերը», Բ., էջ 345) [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.] :

Ռուբէն, Սասունի մէջ հաւաքել տալով շրջաններու բոլոր կռուող ուժերը, զէնքերը, ռազմամթերքը եւ պարէնը, քաղաքը եւ զովասուն ձորահովիտներու դարաւոր կաղնիներու ստուերախիտ շուքին տակ, կարծես թէ իր «ամառնային արձակուրդը» յորանջելով անցրնելու եւ ԱԿՆԴԷՏ ՍՊԱՍԵԼՈՒ, մինչեւ որ հասնէին ոռոսական փրկարար բանակը եւ հայ կամաւորները, որոնցմէ այնքան հեռու, մեկուսացած մէկ անկիւնը կ'իյնար Սասուն:

Բայց, ինչպէս յիշուեցաւ, թուրք կառավարիչը՝ մեր «պարոն»ներու խորհածին ու ծրագրածին ՏՐԱՄԱԳԾՕՐԷՆ ՀԱԿԱՌԱԿ ԾԱՅՐԷՆ սկսաւ գործի: ՆԱև անէացուց Մշոյ Դաշտի մեծազանգուած հայութիւնը, գլխաւոր կռուանն ու յենարանը Տարօնի եւ Սասնոյ բոլոր յեղափոխական շարժումներուն. ՅԵՏՈՅ, Մուշ քաղաքին վերայ գոռացող չորս թնդանօթներու հարուածներով ալ ջանաց ջլատել Քաղաքի փոքրաթիւ մարտիկներու ուժը, եւ արդէն հասած ենք վահան փափաղեանի «Կիսա-կամարածեալ Պաշարում»ի հեքիաթին, որուն մեկնութիւնը եւ անոր տակ թաքնուած ՄԵԾ ՍՈՒՏԻՆ յերկրածոյ պատմութիւնը պիտի ներկայացնենք եւ քննութեան ենթարկենք, երբ խօսինք Ռուբէնի «Ճըռտոնայ»ի, Սասունցի Մուշեղի եւ Կարօ Սասունիի խեղաթիւրեալ ու խարդախեալ պատմութեանց մասին, աւելի յետոյ (Տեսնել այս ուսումնասիրութեան ԺԳ., ԺԴ., ԺԵ. եւ ԺԶ. Գլուխները):



ԳԼՈՒԽ Դ.

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ


Որստ դժուար է հոս ներկայացնել աշխարհագրական կազմախօսութիւնը այն լեռնային երկրամասին, որ «Կիսակամարածեալ Պաշարում»ի եւ «Ճըռտոնայ»ի պատմութեանց անմիջական թատերավայրը կը հանդիսանայ:

Պիտի ջանանք, զոնէ ընդհանուր գիծերով, նկարագրել այդ երկրամասի տեղագրութիւնը, որպէսզի դիւրին ըլլայ գէթ ճշգրիտ գաղափար մը կազմել տալ վահան փափաղեանի հետամտած նպատակի մասին, Ռուբէնի՝ «Ճըռտոնայ»ով ներկայացուցած մտացածին «արշաւանք»ի մասին, ինչպէս նաեւ Սասունցի Մուշեղի եւ Կարօ Սասունիի թուրքափորէն կրկնած՝ վերոյիշեալ անճշտութեանց մասին:

Մուշ Քաղաքի անմիջապէս արեւելեան կողմը, Մշոյ Դաշտէն սկսեալ, հիւսիսէն հարաւ երկարած գոռոզ Սաչքի Դուրանի դարաւանդէն անդին, դէպի արեւելք, Մոկունք եւ Տէրգեվանք գիւղերէն՝ դէպի հարաւ-արեւմուտք, դարձեալ Մշոյ Դաշտէն սկսելով, յանկարծակի կը բարձրանայ ժայռոտ հսկայ լեռնաշղթայ մը (իր «Հաւատամք» գազաթով, այդպէս կոչուած՝ անկէ, Շեխենց Զորի ճամբով, Առաքելոց վանքը դացող ուխտաւորներէն՝ այդ պատմական սրբավայրը առաջին անգամ նշմարուելուն համար), որուն արեւելեան երեսին վրայ լայնանիստ կը բազմի հնամենի Առաքելոց պատմական վանքը, եւ արեւմտեան երեսին վրայ ալ, նոյնքան պատմական եւ անկէ ա՛լ աւելի հնամենի Աստղբերդ Ամրոցը՝ իր առջեւ հարաւէն հիւսիս, դէպի Մշոյ Դաշտը երկարող հռչակաւոր Շեխենց Զորով:

«Հաւատամք»ի այս ժայռոտ լեռնաշղթան, նոյն ուղղութեամբ երկարած գոռուելով, Մուշ Քաղաքի ճիշտ հարաւային կողմը, խորունկ ձորահոյիտներէ վեր, կը կազմէ Միրնկատարի բարձրակարգ տափարակ բարձունքը՝ իր սեղանածեւ գազաթով: Անկէ ալ, կամարածեւ դարձուածքով մը, նոյն լեռնաշղթան կը թեքի դէպի հիւսիս-արեւմուտք՝ յորինելով Կուրտիկ լեռան գազաթներն ու բարձունքները, եւ Արջղլոր հսկայազանգուած լեռնաբլուրի սեպ ու լեռկ, բայց կոնածեւ ցցուածքը, Մուշ Քաղաքի ճիշդ արեւմտեան կոնակը:

Հաւատամքի այս լեռնաշղթային հիւսիսային-արեւմտեան երեսը, Մոկոնք գիւղի կոնակէն սկսեալ, Ծիրնկատարի եւ Կուրտիկի կիսա-կլոր ծիրով՝ մինչեւ Արջկլոր, կը նայի Մուշ Քաղաքին եւ Մշոյ Դաշտին, իսկ այդ լեռնաշղթայի հարաւային երեսէն ալ կը սկսի Սասուն, որու Շենիկ եւ Սեմալ գիւղերը կ'իյնան Ծիրնկատարի եւ Կուրտիկի բարձունքներու հարաւային քղանցքներուն վրայ եւ ձորահովիտներուն մէջ:



ՄՈՒՇ ՔԱՂԱՔԸ ԵՒ ԿՈՒՐՏԻԿ ԼԵՌՆԸ

Արջկլորէն անդին, այդ լեռնաշղթան կը ստանայ արեւմտեան ուղղութիւն՝ Փեթար գիւղէն սկսեալ, եղբրելով Մշոյ Դաշտի հարաւային-արեւմտեան մասը եւ երկարելով դէպի Սուրբ Յովհաննէսի վանքը եւ անկէ ալ՝ դէպի Մամիկոնեան իշխաններու Ողական պատմական ամրոցը, Մշոյ Դաշտի հարաւ-արեւմտեան անկիւնը, ուրկէ Արածանի գետը (Արեւելեան Եփրատ) բարձրակարկառ լեռներու մէջէն թափանցելով եւ հոչակաւոր «Գուրգուռայ» ջրվէժը գոյացնելով՝ կը հոսի դէպի Բալու եւ Ուարբերդ:

«Հաւատամք»ի գագաթէն եւ Ասողբերդէն մինչեւ Ծիրնկատար, ասկէ ալ մինչեւ Կուրտիկի գագաթները եւ Արջկլոր, այդ լեռնաշղ-

թային հիւսիսային-արեւմտեան երեսը (Մշոյ կողմ) եղած ընդարձակ տարածութիւնը կը կազմէ երկար շարք մը յաջորդական ձորահովիտներու եւ վէտվէտուն դարաբլուրներու, որոնցմէ մէկուն ցցուն դազաթին վրայ կառուցուած է Մամիկոնեան իշխաններու Ամարանոց Մուշեղարերդը (այժմ աւերակ), եւ որոնց պաշտպանութիւնը կամ պաշարումը ա'յնքան ալ դիւրին կամ նուազ զինուորական ուժերով կատարուելիք ռազմական ԳՈՐԾ ՁԷՐ, նա'մանաւանդ՝ պատերազմի այս ամենատաղնապալի շրջանին, երբ թուրք կառավարութիւնը իր ամենայետին գինուորն իսկ զրկած էր ռազմադաշտ՝ իր ՔԱՅՔԱՅՈՒԱԾ ՃԱԿԱՏԸ պաշտպանելու համար ուսական յառաջացող ուժերուն դէմ, որոնք Մուշ Քաղաքէն ութ-տասը ժամ հեռու գտնուող Բուլանքի Լիզ եւ Կոփ գիւղաքաղաքները զբաւած էին, եւ ուսական թնդանօթներու ձայները շատ յստակ կերպով կը լքուէին Մուշ քաղաքին մէջ:



Գ Լ ՈՒ Խ Ե .

«ԿԻՍԱ-ԿԱՄԱՐԱԶԵԻ ՊԱԾԱՐՈՒՄ»

Այս էր, ահա', քաղաքական եւ զինուորական կացութիւնը, երբ կը կարգանք Վահան Փափազեանի «Կիսա-կամարածե Պաշարում»ի պատմութիւնը, ուր բիւրոյական երեսփոխանը կը յայտարարէ .—

«Սասնոյ ղեկավարները կարեւոր էին համարած խորհրդակցութիւն մը ունենալ ինծի հետ եւ, վերջապէս, կ'ուզէին որ ես ալ հոն բարձրանամ եւ մնամ իրենց քով» («Իմ Յուշերը», Բ., էջ 361) :

Ինչպէս կը տեղեկանանք իր յուշերէն, Վահան Փափազեան, Մուշէն փախուստ տալէն յետոյ, փոխանակ Սասուն բարձրանալու եւ ուղղակի Ռուբէնի քով երթալու, ապաստանած էր Քանայ եւ Հաւատորիկի լեռները՝ այն պարզ ու բացայայտ պատճառով որ Դաշնակցութեան Բիւրոյի այս երկու ներկայացուցիչներու փոխ-յարաբերութիւնները ա'յնքան ալ սիրալիր ու մտերմիկ չէին եղած՝ հինէն ի վեր, ինչպէս յայտնած էինք ասկէ առաջ :

Հաւատորիկի լեռները ամիսի մը չափ մնալէն յետոյ միայն, Վահան Փափազեան հրաւէր կը ստանար Ռուբէնէն՝ Սասուն երթալու, եւ Կորիւն, զինեալ խումբով մը, եկած էր՝ զինք առաջնորդելու հո'ն, այդ լեռնաշխարհը, ուր «Սեմալ գիւղի եզրին, խոշոր ծառի մը տակ» (նոյն, էջ 362) հաւաքուած էին Սասունաբնակ ղեկավար ղէմքերը՝ օրուան կացութիւնը քննելու, եւ յարձակողական ու պաշտպանողական ծրագիր ու դործելակերպ որոշելու մասին խորհրդակցելու համար :

Այս խորհրդակցութեան ընթացքին, որու ժամանակամիջոցը կարելի է նկատել 1915 Յունիս ամսոյ 14-21-ի շաբաթը, յիշելէ յետոյ հոն յայտնուած կարծիքներն ու թելադրութիւնները, անոնց մասին հետեւեալ տողերը կը գրէ .—

«Կարիքը ունէին փորձառու մարտիկ-ղեկավարներու եւ մըթերքի: Բայց որովհետեւ համոզուած էին (այս ընդգծումը յուշագիր Վահան Փափազեանինն է, Ծնթ. Ա. Տ.) թէ կառավարութիւնը ՆԱՍ Սասունը պիտի զարնէ, ԱԳԱ Քաղաքն ու Դաշտը, այդ պատճառով ալ որոշած էին որ ամէն ինչ Սասունի համար գործածւի. Դաշտէն կարեւոր ուժեր պէտք էր կանչուէին անմիջապէս, եւ

հնարաւոր եղածին չափ, ռազմական պարէն կեդրոնացուէր» (նոյն, էջ 363) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] . բիւրոյական յուշագիրը կը շարունակէ .—

«Այսպէս, ծանր մտահոգութիւններով ու տատանումներով անյաղթելի դժուարութիւններու հանդէպ՝ դրեթէ շաբաթ մը անցուցինք, երբ Վարդավառի օրը(?), կէսօրէն առաջ, Կուրտիկ լեռան մեր պահակներէն սուրհանդակ մը եկաւ յայտնելու թէ ԱՐՇԱՆՅՍՍԻՆ թնդանօթի ուժգին որոտ լսած էին(1) Սուրբ Կարապետի եւ Վարդոյի կողմերէն: Մեծ էր բոլորի ուրախութիւնը. ուրեմն, ռուսական բանակը մօտեցած է: Հարցումներով ողողեցինք եկողը. քանի՞ հարուած լսած են, շարունակաբար՞ կ'որոտար թէ հատ հատ. որո՞չ էր որ Սուրբ Կարապետի կողմերէն էր, եւայլն, եւայլն:

«Աւելի ստոյգ հասկնալու համար, կարծեմ Մջօն էր մեկնեցաւ Կուրտիկ՝ իր ականցներով լսելու այդ աւետարեք որոտները: Ան վերադարձաւ ուշ գիշեր եւ ըսաւ թէ հատ-հատ կը լսուէին որոտները, բայց չէր կրնար որոշ ըսել, ո՞ր կողմէն է որ կու դային, երբեմն՝ շատ մօտիկէն, երբեմն՝ հեռուէն:

«Մջօն բերած էր նաեւ ուրիշ լուր... կառավարական եւ բըրդակամ ուժերը հիւսիսէն ԿԻՍԱ-ԿԱՄԱՐԱԶԵԻ ՊԱԾԱՐԱԾ էԻՆ ՍԱՍՈՒՆԸ՝ Խոզմա Կետուկէն մինչեւ Կոընկու Գէօլը. միայն Կուրտիկի գագաթը եւ մօտիկ շրջանները մեր ձեռքը կը մնային» (նոյն, էջ 364) [Բոլոր ընդգծումները եւ հարցական նշանը մերն են, Ա. Տ.] :

Այլ խօսքով, Վահան Փափազեան պարզապէս ըսել կ'ուզէ որ բացի «Կուրտիկի գագաթը եւ մօտիկ շրջանները», որոնք իրենց ձեռքը կը գտնուէին դեռ, թրքական եւ քրդական ուժերը գրաւած էին այդ բոլոր ձորահովիտները եւ լեռնալանջերը, ու այդպիսով՝ իրենց կապը եւ յարաբերութիւնը ԱՄԲՈՂՁՈՎԻՆ ԽԶԱԾ Քաղաքին եւ Դաշտին հետ, եւ ահա՛ կը հասնինք յուշագիր Վահան Փափազեանի «միտք բանին»ին, որ է .— միշտ այդ պաշարումին պատճառով ալ, Սասուն գտնուող մեր մարտական ուժերը ԶԿԱՐՈՂԱՑԱՆ

(1) Այս «ուժգին որոտը», կա'մ աւելի միշտ, «ուժգին որոտները» լսուած են ո'չ թէ Վարդավառի օրը, Յունիս 28-ին, Կիրակի, ա'յլ՝ ՅԱԶՈՐԴ ՕՐԸ, Յունիս 29-ին, Վարդավառի Երկուշաբթին, եւ ա'յն ալ՝ ո'չ քէ «արշալոյսին», ա'յլ՝ «առաւօտեան ժամը 9-էն սկսեալ» (Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, «Տարօնի Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջ 50) :

Իսկ Ռուբէնի «կէս օրին» կը դնէ այդ ժամանակը («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», հատոր Զ., էջ 79) :

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԻԿ՝ կեանքի եւ մահու օրհասական պայքար մզող Քաղաքի սակաւաթիւ մարտիկներուն:



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ահա՛ւասիկ, այս միակ նպատակին է որ կը ձգտին Փափազեան եւ Ռուբէն՝ յօրինելով «Կիսա-կամարածեւ պաշարում»ի հեքիաթը եւ «Ճըրտոնայ»ի առասպելը:

1954 Սեպտեմբեր 25-էն սկսեալ, մինչեւ 1955 Մարտ 1, թըղ-

թակցական յարաբերութեան մէջ էինք յուշադիր Վահան Փափազեանի հետ, ինչպէս տեսան մեր ընթերցողները:

Այդ ժամանակամիջոցի ընթացքին, մեր ամէն մէկ նամակով, այս կէտի մասին՝ նոր եւ յաւելուածական բացատրութիւն կամ լուսարանութիւն ուզեցինք իրմէ, եւ միշտ ալ՝ իր պատասխանն եղաւ խուսափողական, հետեւաբար՝ անգոհացուցիչ, տալով, օրինակ, այսպիսի անորոշ եւ տարտամ բացատրութիւն մը.—

«— ԱԻԵԼԻՆ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՐ» (տեսնել Վահան Փափազեանի Չորրորդ նամակը, 1955, Յունուար 19 թուակիր):

Ի վերջոյ, մենք հարկադրուեցանք իրեն տալու մեր հասկցած մեկնութիւնն ու բացատրութիւնը, որ ահաւասիկ.—

«Արդեօք, «կառավարական եւ քրդական ուժերը» հիւսիսէն կիսա-կամարածեւ պաշարած էին Սասունը» բացատրութեամբ ըսել կ'ուզէ՞ք որ Մուշ Քաղաքի եւ Մշոյ Դաշտի հայութեան կոտորածէն առաջ, թուրք կառավարութիւնը զօրք լեցուցած էր Մուշի եւ Սասունի միջեւ գտնուող այդ լեռնայանջերուն վրայ եւ ձորահովիտներուն մէջ, եւ Սասունը պաշարած՝ Մուշի կողմի լեռներով ալ, բացի «Կուրտիկի գաղաթը եւ մօտակայ շղթաները», որոնք ձեր «ձեռքը կը մնային» դեռ» («Իմ Յուշերը», Բ., էջ 364):

«Այսինքն, պարզ խօսքով, թրքական եւ քրդական ուժերը պաշարած էին Սասունը՝ Առաքելոց Վանքի եւ Ասողբերդի լեռնայանջերէն սկսեալ մինչեւ Արջվոր լեռան կողերը, ամբողջ Միրնկատարի հիւսիսային ձորահովիտը, մէջն ըլլալով Մուշեղաբերդը, եւն.:

«Ճի՛շդ է իմ այս կերպ մեկնութիւնը, ինչ որ կը հասկնամ ձեր նկարագրութենէն» (Մեր հինգերորդ նամակը, 1955, Յունուար 28 թուակիր):

Մեր այս հարցումն ալ մնաց առանց պատասխանի, որովհետեւ յուշադիր Փափազեան «աւելորդ համարեց» այլեւս մեր թըղթակցութիւնը:

Մեր ամենավերջին խիստ ընդարձակ նամակով (1955 Մարտ 1 թուակիր), իրեն համառօտակի բացատրեցինք, ի շարս տասն եւ երկու ուրիշ կէտերու, սոյն «կիսա-կամարածեւ պաշարում»ի յեղիւրածոյ պատմութիւնն ալ, եւ ՀԵՐՔԵՏԻՆՔ ԶԱՅՆ՝ վկայութեամբ մեր երիտասարդ յուշագիր՝ Մուշ քաղաքացի երուանդ Շարաֆեանի («Երուանդ Շարաֆեանի վկայութիւնը կարդալ սոյն ուսումնասիրութեան Ի՛՛՛. Գլուխի մէջ):

Այս խնդրոյն մասին աւելի մանրամասնօրէն պիտի խօսինք նորէն, լսելէ յետոյ Ռուբէնի «Ճըրտոնայ»ի առասպելը ու Սասունցի Մուշեղի եւ Կարօ Սասունիի թութակարանութիւնները:

Գ Լ ՈՒ Խ Զ .

«ՓԸՌՏՈՆԱՅ»Ի ՌՈՒԲԵՆԸ

Հարկ կա՞յ, արդեօք, ծանօթացնելու Ռուբէնը :

Անիկա հայկական «Դոն Գիշոթ»ն է :

Այս որակումը ա՛յնքան պատշաճ է և ա՛յնքան բարացուցական է Ռուբէնի համար որ աւելորդ աշխատանք պիտի ըլլար՝ ուրիշ բացատրութիւններով յայտնաբերել անոր նկարագրի ալլազան երանդները :

Կարգացէ՛ք անոր «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», եօթը հատորնոց հեքիաթունակ երկասիրութիւն մը, և զո՛ւք, ինքներդ ալ, պիտի հասնիք նոյն համոզման և պիտի յանգիք նոյն եզրակացութեան :

Փջուռոյց դատարկութիւն մը, որ Կովկասէն զլտորուելով, վասպուրականի վրայով՝ եկաւ հասաւ Մամիկոնեան քաջազուններու դաստակերտը, մեր պատուական Տարօնը, ուր ան, իր խիստ ձախիկ գործունէութեամբ; անխորհուրդ գործելակերպով, տհաս, անհեռատես ու եիՍՏ վնասակար ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ՝ ԶԼԱՏԵՑ ՌԻՓԱՅՔԱՅԵՑ Տարօնի քաջարի հայութեան ինքնապաշտպանութեան և մարտականութեան բոլոր հնարաւորութիւններն ու կարելիութիւնները, և ԱՆԶԷՆ, ԱՆԶՕՐ, ԱՆԳԼՈՒԵ և ԱՆՊԱՇՏՊԱՆ վիճակի ՄԷՁ ԴՆԵԼՈՎ այդ քաջամարտիկ ժողովուրդը, ՄԱՏՆԵՑ ԶԱՅՆ Բասնեբորդ Դարու բարբարոսներու ձեռքը... :

Անիկա արդէն ազգային մեծագոյն ողբերգութիւն մըն էր ինքնին :

Սակայն, ապշահար նայեցէ՛ք հետեւեալ «ողբերգութիւն» ողբերգութեանց»ին... :

«Մէկ անգամ, Հայոց Աստուածը արդար եղաւ դէպի մեզ : Ան ՓՐԿԵՑ ԸՆՏՐԵԼԻՆԵՐՈՒ ԸՆՏՐԵԼԱԳՈՅՆԻՆ՝ Ռուբէնի կեանքը. ինքն ալ ՄԵԾ ՓԵՏԱՅԻ մը և անոնց հրամանատարը, որ, հակառակ իր կամքին, ԶԿՐՑԱԻ ԶՈՂՈՒԻԼ ազատութեան մեհեանին : Կրակէն ու սուրէն ՀՐԱՇՔՈՎ ԱԶԱՏԵՑԱԻ, որպէսզի կարենար մեզի տալ լեզենդական հսկաներու կեանքը» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», հատոր Ա., էջ 13, «Հրատարակիչներու կողմէ») [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Կուսակցական մոլեռանդութեամբ ընդարմացած, բանականութիւննին անհետ կորսնցուցած և ազգային նախանձախնդրութեան զգացումէն ամբողջովին պարպուած այս կուսակցապար «հրատարակիչները» ի՛նչպէս ալ ԼԱ՛ի ԿԸ ՃԱՆՁՆԱՆ ու ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆ ԱՐԺԷՔԸ «ընտրելիներու ընտրելագոյնին», որ կրակէն եւ սուրէն «ՀՐԱՇՔՈՎ» է աղատեր եղեր???...

Այս կուսակցապար հիացողները ինչո՞ւ կը ջանան ֆոդայիկ խիստ դառն իրականութիւնը. ինչո՞ւ գիտակցօրէն և և նեմգամօրէն ԿԸ ՍՏԵՆ. ինչո՞ւ կը սարսափին բացայայտօրէն ըսելու, պատմելու և խոստովանելու ԲԱՅԱՐՁԱԿ և ՄԻԱԿ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, որ է —



ՌՈՒԲԷՆ

Այդ «մեծ փեղային», ԳԱՂՏԱԳՈՂԻ ԵՒ ՎԱՏՕՐԷՆ ԹՈՂԼԻՔԵԼՈՎ «անոնց հրամանատարի» իՐ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆՆ ՌԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, Սասունի ամենավերջին (1915-ի) մեծագոյն ողբերգութեան ԱՄԵՆԱՏԱԳՆԱՊԱԼԻ ՐՈՊԷՒՆ, ԳԱՍԱԼԻՔ ՓԱՆՈՒՍՏՈՎ ՄԸ «փրկեց» իր կաշին, որպէսզի «կարենար մեզի տալ» ուսուցիկ, մեծխօսիկ, սնամէջ, հնարովի և շատ յաճախ ալ՝ ծիծաղելի տեսլապատկերներ «լեզենդական հսկաներուն» (իր յերիւրած սուտ ու շինծու պատմութիւններով՝ շատ յաճախ ԱՐԱՏԱԻՈՐԵԼՈՎ և ԱՆ-

ՊԱՏՈՒՆԼՈՎ այդ անձնագրահարու նուիրական յիշատակը), կուսակցական անափառութեամբ ընդարմացած ու զիճացած ուղեղները ա՛յլ աւելի բքացնելու համար:

Ռուբէն Դարբինեան կը գրէ.—

«Երբ մեր յամառ դիմումներուն վրայ, Ռուբէն (Տէր Մինասեան), վերջապէս սկսաւ զրկել իր յուշերը, «Հ» ամսագրի մէջ տըպւելու համար, պէտք կ'ըլլար ամէն անգամ մղել զայն քաջալերական նամակներով որ փութացնէ շարունակութիւնը: ... Եարունակ կասկածներ կը յայտնէր ԱՆՈՆՑ ԱՐԺԷՔԻ ՄԱՍԻՆ: ... Ուրիշ մէկ նամակի մէջ, Ռուբէն, բաւականին քաջալերուած իր ստացած քաջալերական նամակներէն, կը գրէր ... «Երեւում է որ բաւական ԼԱԻ ԵՍ ՍԱՐՔՈՒՄ քամբած գրութիւններս: ... Ինձ շնորհակալութիւն կը յայտնեն՝ չգիտնալով որ սարքողը դու ես: Ինչ էլ որ լինի, եթէ ԱՅԴ ՀԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐ ՀԱՆՆԵԼԸ ԿԱՐՈՂ Է ԲԱՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՔ ՀԱՅԹԱՅԹԵԼ ՄԵՐ ԵԱՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՍ ԲԱԻԱՐԱՐՈՒԱԾ ԵՄ...» (նոյն, էջ, 26-27) [Բոլոր ընդդիմումները մերն են, Ա. Տ.]:

Այո՛, պէտք էր «այդ հին կապիտալը» դուրս բերել («վեր հանել») յերիւրանքներու անդնդախոր տողակէն («Դրօշակ»էն) եւ «բարոյական հիմք» ծառայեցնել, այսինքն, հին առասպելները վերամշակելով՝ ընդարմացնել «մեր շարքերի» արդէն իսկ մզլոտած ուղեղները, որուն համար՝ ինքզինք «բաւարարուած» կը զգար «ընտրելիներու ընտրելագոյնը»:

Եւ այդ «բաւարարութիւնը» կը ստեղծուէր դաւակերտ դործակցութեամբ երկու կեղծանուն «Ռուբէններու» — մէկը՝ «պատերազմական», իսկ միւսը՝ «արդարագատութեան» նախարար՝ տարաբախտ Հայաստանի Հանրապետութեան:

Ու կը յերիւրուէր հազարաւոր անգամներ յերիւրուած «հին կապիտալ»ի նորագոյն վերծանումը («Վեր հանումը»), որու «արժէքի մասին շարունակ կասկածներ կը յայտնէր» այդ յերիւրանքները վերակերտող («սարքող») նոյնինքն նորագոյն հեղինակը — «Ռուբէն փաշան» (նոյն, էջ 23): Եւ թող ոմանք՝ համեստութեամբ չվերագրեն Ռուբէնի այս խօսքը, որովհետեւ այդ տեսակ ծախու ապրանք չունէր այդ փաշա «պարոն»ը:

Ինչպէ՞ս եղաւ որ այդ «ընտրելիներու ընտրելագոյնը» (Ռուբէն) եւ իր բիւրոյական ընկեր միւս «ընտրելագոյնը» (Վահան Փափազեան) «ԶԿՐՑԱՆ ԶՈՀՈՒԻՆԻ ԼԱՍՏՈՒԹԵԱՆ մեհեանին», այն ալ՝ «հակառակ իրենց կամքին», երբ Տարօնի եւ Սասնոյ աւելի քան 200,000 հայութիւնը, գրեթէ ամբողջութեամբ, ԶՈՀ ԳՆԱՑ այդ երկու «ընտրելագոյններու ազխտալի որոշումներուն եւ վնասակար գործելակերպին»:

* * *

«Բախտը ԱՅՆՊԷՍ ԴԱՍԱԻՈՐՈՒԵՑԱԻ որ գնդակները շատ անցան Ռուբէնի եւ Վ. Փափազեանի ԱԿԱՆՁԻՆ ՏԱԿԷՆ, բայց ԱՆՈՆՔ ԶՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱՆ», կը բարբառէ Տարօնի կուսակցապար «պատմագիրը», Կարօ Սասունի («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 835) [Բոլոր ընդդիմումները մերն են, Ա. Տ.]:

Տարօնի եւ Սասնոյ ամենավերջին ահաւոր եղևնի օրերուն, այս երկու «ընտրելագոյն»ներուն սարքած բոլոր դաւադիր գործունէութեանց ՆԵՐՔԻՆ ԾԱԼՔԵՐՈՒՆ մօտէն տեղեակ եղողը շատ յստակ կերպով ԿՐՆԱՑ ՏԵՍՆԵԼ որ անոնք այնպէս մը դասաւարեցին ԻՐԵՆՑ (երկու անձերու) ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ որ «բախտ» անգամ ԱՆՁՕՐ ԳՏՆՈՒԵՑԱԻ նահատակ հռչակելու գիրեմք:



ՌՈՍՏՈՄ — ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ

Դաշնակցութեան այս երկու պատասխամատու պարագլուխներու ԱՆՆԵՐԵԼԻ ՈՒ ԱՆՔԱԻՆԵԼԻ ՅԱՆՑԱՆՔԸ ան չէ՛ր թէ անոնք ինչո՞ւ ազատեցան, այլ ա՛ն թէ՛ անոնք ԻՆՁՊԷՍ ԱԶԱՏԵՑԱՆ:

«Պատմագիր» Կարօ Սասունի ԵԱՏ ԼԱԻ ԳԻՏԷ այդ «ինչպէս ազատեցան»ի ԻՐԱԿԱՆ ու ՃԵՄԱՐԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ յետին ման-

րամասնութիւններով, իր տրամադրութեան տակ զտնուող ձեռագիր յաշերէն, սակայն ամէն ջանք ի գործ կը դնէ սքօզիլու այդ «ինչպէս ազատեցան» չարազատ ու ճշմարիտ պատմութիւնը՝ նոյն իսկ իր կուսակցութեան չիմնադիրը (Ռոստոմ) անգոսնելու եւ կըշտամբելու գինով, երբ այս վերջինը՝ Ռուբէնին առաջին անգամ հանդիպելուն իսկ, Տարօնէն եւ Սասունէն փախուստ տուող այդ ԴԱՍԱԿԱՆ ԴԱՍԱԼԻՔԻՆ կը հարցնէր ազնուաբար .

«— ԶԿՐՑԱՐ ՀՈՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԻԼ» (նոյն, անդ) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* * *

Սերաստիացի յուշագիր Տեղակալ Մանուկ Աւետեան ալ հետեւեալ կերպով կը ներկայացնէ Ռոստոմի այս կշտամբանքի եւ յանդիմանութեան պարագան .—

«Ռուբէն երբ Իգտիր կը հասնի, իր կուսակցութիւնը՝ իր ազատագրութեան (այսինքն, Տարօնէն եւ Սասունէն՝ դասալիք փախուստ տալուն, Մնթ. Ա. Տ.) ի պատիւ, սեղան մը կը սարքէ, ուր առ հասարակ ներբողական ճառեր կը խօսին իր ընկերները, բացի Ռոստոմը, որ կ'ըսէ .—

«— Ես գաւաթ չեմ կարող պարպել ԴԱՍԱԼԻՔ ՅԵՂԱՓՈՒԵԱԿԱՆԻ ՄԸ ԿԵՆԱՑ, բայց միայն այն ժամանակ, երբ մա իր ժողովուրդին հետ կ'իյնայ : Ռուբէն, ԴՈՒ ԻՆՁՈՒ ԵԿԱՐ. ո՞ւր է ՔՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆՈՒԱԾ Տարօնի եւ Սասունի ժողովուրդը» :

«Այս կարճ հարցումով, Ռոստոմ ըսել կ'ուզէր թէ՛

«— Մեմք քեզի պաշտօն տուեր էիմք որ այդ ժողովուրդի հետ ապրիս, այդ ժողովուրդի հետ մեռնիս . ԻՍԿ ԴՈՒ ԵԿԱՐ՝ ԱՌԱՆՑ ԺՈՂՈՎՈՒՐԻ» :

«Ի վերջոյ, հայ հասարակութեան մէջ, դաւադիր Ռուբէնի հանդէպ արծարծուած գայրոյթը մեղմացնելու համար, կուսակցութիւնը, ԻԲՐ ՊԱՏԻԺ, որոշում տուաւ գայն չէգոփացնելու, ժամանակաւորապէս ուղարկելով Մեղրիի շրջանը (Գողթն Գաւառ)» («Հայ Ազատագրական Ազգային Յուշամատեան եւ Զօրավար Անդրանիկ», էջ 361) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* * *

Ռուբէն Դարբինեան եւս կը գրէ այդ առթիւ .—

«Պէտք կա՞յ խօսելու այն հոգեկան ողբերգութեան մասին, որը ան (Ռուբէն Տէր Մինասեան, Մնթ. Ա. Տ.) ապրեցաւ, երբ Կովկաս ինկաւ՝ իր սակաւաթիւ քաջերով միայն, իր սիրեցեալ Տարօնի

ժողովուրդի եղերական մահէն յետոյ» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Ա., 20) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Մարդ, Դարբինեանի նման, «արդարադատութեան նախարար» ըլլալու է՝ այս տեսակ վրանբաց ՍՈՒՏԵՐ յերիւրել կարեմալու համար, անամօթաբար յայտարարելով որ Հայաստանի Հանրապետութեան Պատերազմական Նախարարուն «հոգեկան ողբերգութիւն» է ապրեր եղեր, ա՛յն ալ՝ «իր սիրեցեալ Տարօնի ժողովուրդին» (Sic !) եղերական մահէն յետոյ :

Եւ Դարբինեան կը շարունակէ .—

«Բարեբախտաբար (ո՞վ չի՛ յիշեր Դարբինեանի այս տխրահոշակ «բարեբախտաբար»ը, Մնթ. Ա. Տ.), հոգեկան այս ծանր տագնապը շատ երկար չտեւեց : Ռուբէն վերագտաւ ինքզինքն եւ նորէն գործի լծուեցաւ . . . » (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ինչպէս տեսան մեր ընթերցողները, «հոգեկան ծանր տագնապը», այսինքն, սուտ-խեմք ձեւանալը չէ՛ր բուն պատճառը որ Ռուբէն ծակամուտ եղած էր ժամանակաւորապէս, կարծենք վեց ամիս . ա՛յլ՝ իր դէմ «արծարծուած գայրոյթ»ին բնական հետեւանք եղող՝ վրէժխնդիր Տարօնցիի մը արդարահատոյց գնդակին ՊԱՏՃԱՌԱԾ ՍԱՐՍԱՓԸ, եւ երբ ամէն ինչ, կողմնակի յարդարումներով՝ իր բռնական հունին մէջ դրուեցաւ, կա՛մ, Դարբինեանի բացատրութեամբ, «իր հոգեկան ծանր տագնապ»ին ՊԱՏՃԱՌԸ ԶՔԱՑԱԻ, դաւադիր եւ դասալիք Ռուբէն դուրս սողոսկեցաւ իր թաքստոցէն եւ «նորէն գործի լծուեցաւ», ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱԼ՝ «փրկելու համար» տարաբախտ Հայաստանի Հանրապետութիւնն ու անոր տառապակոծ Հայութիւնը, զանոնք եւս մատնելով իր նախկին սրտակից ու բարձակից թուրք «եղտաշ»ներու ձեռքը, համաձայն իր բարի սովորութեան . . . :

* * *

Իրա՞ւ է, արդեօք, որ անոնք (Ռուբէն եւ Վահան Փափազեան) «չկրցան» մեռնիլ՝ «հակառակ իրենց կամքին» [Ա.] :

Եթէ իրաւ է, իսկապէս որ հրաշալի «ՀՐԱՇՔ» է :

Մեր այս Գննական Ուսումնասիրութեան Մասն Առաջինի սահմաններէն դուրս կ'իյնայ քննութեան եւ քննադատութեան ենթարկել այդ կէտը :

Պատե՛հ առիթով, կը խոստանանք մասնաւոր ուսումնասիրութեան, քննութեան ու քննադատութեան առարկայ դարձնել այդ

յոյժ կարելուր նիւթն ալ, եւ մեր յարգելի ընթերցողներու հետ միասին՝ արժանի եւ ականատես ըլլալ այդ «հրաշալի» հրաշքին:

Մեր յառաջադրութիւնն է, հոս, ուսումնասիրել եւ քննարկել «ընտրելիներու ընտրելագոյն»ին «Ֆրոտոնայ»ի առասպելը:

Ատիկա ՄԻԱԿ պատմութիւնն է, Ռուբէնի եօթը հատորնոց «Յիշատակներու» մէջ, որ կը վերաբերի Տարօնի եւ Սասնոյ՝ 1914-1915 թուականներու անաւոր ողբերգութեան խիստ սրտաճմլիկ անցքերուն:

Այս «Ֆրոտոնայ»ի պատմութիւնը ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ՝ «Կիսա-կամարածե Պաշարում»ի Դոն-Քիչոթեան տարբերակը:

* * *

[Ա.] «Ի ՀԱՐԿ Է, մտէս չէր անցած ԵՐԲԵՔ կեանքս փրկել», կը զառանցէ յուշագիր Վահան Փափազեան («Իմ Յուշերը», Բ., էջ 359) [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.]:

Ինչո՞ւ համար, արդեօք, այս լեղապատառ հաւաստումը: «Գո՛ղ, սիրտը դո՛ղ», կ'ըսէ ժողովրդական հանրածանօթ առածը:

Ո՞վ պիտի մեղադրէր զիրենք (Ռուբէնը եւ Վահան Փափազեանը), եթէ ջանային փրկել իրենց կեանքը: Ատիկա ինքնապահպանութեան բնատուր բնազդ եւ պահանջ մըն էր եւ երբե՛ք մեղադրելի:

Այդ ջանքը, սակայն, մեղադրելի ու ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ կը դառնայ այն պարագային, երբ՝ ի վնաս ուրիշներու, կը ջանանք փրկել մեր կաշին, ՄԱՆԱԻԱՆԴ՝ այն ուրիշներուն, որոնց «պաշտպանութեան» եւ «փրկութեան» («Իմ Յուշերը», Բ., էջ 368, 370) ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ իրենք ստանձնած էին՝ այնքան կոկոզավիզ սոնքումով մը...:



ԳԼՈՒԽ Է.

ՌՈՒԲԵՆԻ «ՖՐՈՏՈՆԱ»Ն

Հիմա՛ «ընտրելիներու ընտրելագոյն» Ռուբէն «փաշա»ն է, որ Թաթարական Հայերէնով մը, մեզի պիտի պատմէ իր «Ֆրոտոնայ»ն: Երկիւղածութեամբ մտիկ ընենք.—

«Ֆրոտոնայ»ն եկաւ: 1914 թիւն էր: Անծանօթ Իսրօն եկաւ առջեւս բուսաւ կրկին(1):

«— Դու մեզ մեծաւոր, ես քեզ փոքրաւոր. Ֆրոտոնան եկաւ, մըկայ(2) ի՞նչ անեմ:

«— Ի՞նչ պիտի անես, դու ինձմէ լաւ դիտես. քու ժամտուն կը վառես, Սրգի-Սրգի հողուն թո՛ղ խունկ ու մոմ լինի: Ունեցած չունեցածդ պաշար կ'անես: Դու մեր Թոփալ Մանուկի(3) զինուորը կը լինիս: Ինչ որ ան ըսաւ, ինչ որ ան ըրաւ, ան ալ դու կ'անես:

«— Հասկացայ, — ըսաւ ու գնաց:

«Եւ Փեթարայ Մանուկին թիկնապահ եղաւ: Անոր եւ ընկերների հետ ինչե՛ր քաշեց, Աստուած գիտենայ: 1915-ին, Ապրիլէն, ան պահապաններէն էր Կուրտիկի լերան, որ կը պաշտպանէ Սաս-

(1) Մեր ընթերցողներու մասնաւոր ուշադրութեան կը փափաքէիմք յանձնել այս խիստ կարեւոր կէտը որ «Ֆրոտոնայ»ի այս պատմութեան մէջ երեւոյց անձերը՝ Սասունցի այն ազգասէր, հայրենասէր, բարեմիտ, բայց պարզամիտ ազգայիններն են, որոնց մէկ մասը նահատակուեց Ե Սասունի վերջին գոյամարտի ընթացքին, օրինակ, Սեմայցի Քիաթիպ Մանուկ Շառոյեանը, իսկ մնացեալները՝ Ռուբէնի դասալուստեան դաւակից եւ անոր ձեռքին մէջ ալ անարգ գործիք դառնալով, ԼՔԵՐ ԵՆ իրենց հարազատ ժողովուրդը՝ ԻՐ ԳԵՐԱԳՈՅՆ ՎՏԱՆԳԻ ԲՈՊԷՆԵՐՈՒՆ, եւ «ընտրելիներու ընտրելագոյն»ի հետ ալ՝ փախեր, անյայտացեր. օրինակ, Փեթարայ (Թոփայ) Մանուկը, Ախօն, Իսրօն, Սասունցի Մուշեղը, եւն.:

(2) Մըկայ Տարօնական (Մշեցնակ) բառ է եւ կը նշանակէ հիմա, այժմ:

(3) Ասիկա Փեթար գիւղացի Մանուկ Պետոյեանն է, Ռուբէնի գլխաւոր մանկաւիկը:

նոյ ճամբաները եւ ոտքի տակ ունէր Մուշ քաղաքը եւ իր հայրենի փեթարը:

«Ո՛չ միայն փեթարը, ա՛յլ եւ Բրիմոք, Քարձոր, Գոմեր, Հրայրի գիւղը եւ բոլոր անոնք, որոնք չէին հաւատար կառավարութեան եւ Մշոյ Առաջնորդարանի հաւաստիացումներին, քաջուած էին լեռը՝ իրենց ուր ու մուրով(4):

«Երկու Մանուկները(5), որոնք կը հսկէին Կուրտիկի ճակատին, իրենց հրամանին տակ էին առած Շենիկը, Սեմայցիքը, Շատխու կոռուզները, դաշտի երեսէն եկող վեր յիշուած քոչերը՝ իրենց կեդրոն դարձնելով Կուռթըկի Դուքանէ Ձիվկրան եւ Ծիրնկատար սառցապատ գաղաթները: Անոնց շինած քարէ քողըները (ամբուրիւն) [Ա.] կ'երկարէին իրենց դիմաց եղած քուրք բանակի շինած խրամների դիմաց՝ մարդահասակ խորութեամբ եւ երկաթէ քելերով պաշտպանուած մէկ-երկու տեղ, ինչ որ շտեմնուած բան էր այդ ժամանակները եւ Սասունցւոց ահը աւելի այդ թելերէն էր, քան զօրքի հրացանէն եւ թոփերէն: Նորութիւնը կ'ահարեկէր շատերին: Անոնց խրամները, գոյգ շղթաներով, գոտիկի նման, կը տարածուէին Արջգլորիկէն, Մուշեղայ բերդի վրայէն՝ Սաչքա Դուրանը. իսկ Ասողկայ բերդը չէգո՛ք էր կանգնած:

«Այդ թրքական գօտիի մէջ կը գտնուէր Մուշ քաղաքը՝ իր 10-12 հազար հայերով եւ մի քիչ աւելի թուրքերով: Հոն էր կեդրոնը թուրք բանակի եւ իշխանութեան՝ իրենց Սերվէթ եւ Քիազիմ ՓԱՇԱՆՆՐՈՎ [Բ.]: Հոն էր եւ Հայոց Ազգային իշխանութիւնը, միակ առեւտուրի շուկան: Բայց, անոնք, ամենքն ալ, ԲԱԺՆՈՒԱԾ էին ՄԵԶՄԷ ԱՊՐԻԼԷՆ ՍԿՍԱԾ:

«Իրար դէմ կանգնած հայ եւ թուրք զօրքը ի ՍՊԱՌ ՎԵՐԱՑՈՒՑԱԾ էին ԿԱՊԸ ՔԱՂԱՔԻՆ ՀԵՏ: Թէ որ թրքական զօրքն մէկը իր գլուխը ցոյց տար, կը մահանար հայերի պահակներէն: Թէ որ հայերի կողմէ մէկը փորձէր մօտենալ անոնց խրամներին, կ'ընկնէր անոնց զնդացիների կարկուտին տակը եւ կը մահանար: Յոգնեցուցիչ էր այս՝ երկու կողմերի համար. ալ, մանաւանդ որ արդէն ամիսներ կը տեւէր եւ քանի՜ քանի կեանքերի ոչնչացման պատճառ կը դառնար: Յոգնեցուցիչը վախը չէր. յոգնեցուցիչը շարունակ լարուած դիտելն էր, որ ջղեր կը քայքայէր, եւ մարմինն ու հոգին աւերակ կը դարձնէր:

(4) Այսինքն, իրենց ունեցած-չունեցածով:
(5) Մէկը՝ Փեթարցի (Թոփայ) Մանուկ Պետոյեանն է, իսկ միւրը՝ Սեմալ գիւղացի «Քիաթիպ» Մանուկ Շառոյեանը:

«Աւերակ չէր դառնար Իսրոյի ո՛չ մարմինը եւ ոչ ալ հոգին, որին անծանօթ էր յոգնութիւնը:

* * *

«1915-ի Յունիս ամիսն էր: Ձորս կողմէն ահռելի եւ հակասական լուրեր կու գային: Նախ՝ այդ լուրերը կու գային Պուլիֆէն, Պիանքէն, Փսանքէն, ուր կենաց եւ մահու կռիւ կար տարուայ սկզբէն: Յետոյ ալ բոթեր սկսան գալ եւ Մշոյ քաղաքէն ու դաշտէն, որ շնորհիւ Կուռթըկի սպառնալիքին, դեռ կը մնար անվթար:

«Պէտք էր, եթէ հնար էր, Մուշի հակասական լուրերը ՍՏՈՒԳՅԱՆ տեղն ու տեղը: Երեկոյեան Կուռթըկի դիրքերն էինք: Ամենաշառաջացած դիրքը դէպի Մուշ՝ Իսրոյի քողքներն էին, հազիւ չորս քիլոմետր քաղաքէն: Վերջինս, գուրի մէջ ընկած, չէր երեւար Իսրոյի դիրքերէն՝ Արջգլորիկով ծածկուած լինելով: Հազիւ երկու քիլոմետր էր այդ լեռնէն եւ 200 մետր՝ թուրք առաջաւոր խրամներէն:

Մինչ մենք ճնշուած ու վախով կը մօտենայինք Իսրոյի դիրքերին, Իսրոն ուրախ եւ անհոգ կը վազէր մեր առաջ՝ արհամարհելով թուրքերու խրամները, ուրկէ մեղ կը տեսնէին:

«— Ի՞նչ ակնջկըլայ(6) մեզի բերեր էք, — կը հարցնէ:

«— Դու ըսէ մեզի թու ակնջկըլայդ, — կը պատասխանեմ:

«— Վալլահ, ըլլի թէ չըլլի, մեր փրկութեան օրը հասել է: Առաջին օրը, ասկարները շատցուցին մեր դիրքերի առաջ: Մըկայ թիմուած են, հէ՛յ, այն խրամներում, բայց թէ հանդիստ են, փորձ չեն անէ մեր վրայ հիւշում անելու: Էս օր կ'ետրին քոփի ձայներ առանք, շատ խորունկ, կարծես գուրի մէջէն, հեռուն Քոսուրի լեռների կողմերէն: Ես կը մտածեմ թէ ուսներ Բուլանըխներէն առաջ են եկած եւ Մշոյ դաշտ մտած:

«Մեր աչքերը փայլատակեցին. ժպիտներ պատեցին ամէնքին:

«— Դու լսեցի՞ր քոփի ձայները, — հարցումներ տեղացին:

«Ամէնքը յոյսի մէջ կը լողային, միայն Շառո Մանուկը կասկածով գլուխը շարժեց եւ դառնալով Իսրոյին՝ ըսաւ.

«— Ի՞նչ ճար կայ քաղաք իջնելու եւ տեղի վրայ ստուգելու թու ակնջկըլան [Գ.]:

«— Մէկ ճար միայն կայ. հէ՛յ, էն խրամներէն զօրքերը հանել եւ թափել ձորը եւ անոնց հետ խառնուած՝ քաղաք մտնել:

(6) Ակնջկըլայ կը նշանակէ աւետիս, բարի լուր:

«— Լա՛ւ, կ'ըսէ Իսրօն, բայց փամփուշտի պաշար է պէտք տղաների վրայ հազիւ 40-50 փամփուշտ մնացել է: Այս հիւջումին՝ 100-էն աւելի պէտք է որ դուրս հանենք: Անոնց հետեւելու եւ քաղաք մտնելու համար՝ մի բան ալ պէտք է, հանդարտ հանդարտ ըսաւ Փեթարի Մանուկը:

«— Օղորթ(7) է, Մանուկ. 40 Փըշանկով հիւջում չի եղնի: Էսա թուանք քանի՛մ դախխայէն ճոկան կը լինի: Որ էդպէս է, առէ՛ք էդա թուանք, անոր Փըշանքներ, տուէք ինծի 20 խանչալաւորներ, 20 ատրճանակաւորներ. ես կամացուկ կը մտնեմ անոնց խրամներ: Թէ որ փախցուցի, ճամբախը բաց է, դացէ՛ք դէպի Մուշ: Թէ որ մենք մեռանք, էդ ալ ձեր բախտն է:

«Շենրկի Ղազարը եւ Թոփալ Մանուկը ըսին.

«— Խենթ բան է. մենք լը(8) քեզի հետ. օր մը աւելի, օր մը պակաս, տարրեր չէ:

«Շառո Մանուկը եզրակացուց.

«— Խօսքը խօսք է: Ուրեմն, կէս գիշեր անց դուք կը մտնիք խրամները, դուրս կը հանէք, չէք հանէ, բայց հոն կը մնաք՝ մեռած կամ կենդանի: Ես որ ձեր տասնոցների ձայնը լսեցի խրամներէն, Տափի(9) վրայով հովտով կ'իջնեմ քաղքու Ձորու Թաղ: Տեսնեմ ի՞նչ կայ: Թէ որ սող մնացինք, կը վերադառնանք:

«Կէս գիշերին, խրամների մէջ ճատրտուն էր, ինչպէս որ կրակի վրայ աղ լեցնես: Այդ նշան էր որ Իսրօն, Ղազարը, Մանուկը մտած էին արդէն խրամները եւ զօրքը անհաշիւ կը կրակէր:

«Կէս ժամ չանցած, մթութեան միջով մարդիկ, իբր ուրուականներ, առանց կրակելու, կ'իջնէին բարձունքներէն դէպի հովիտ: Շառո Մանուկն էր որ քաղաք կ'իջնէր:

«Ժամը երեքին մօտ, հրացանի ձայները դադրեցան: Այդ նշան էր որ եթէ մեր խրամ մտնողները չէին բնաջնջուած, զօրքը ուրեմն, խուճապի էր մատուցուած եւ կը փախէր:

«Մնացած փոքրիկ ուժերը կը մօտեցնենք խրամներին: Դատարկ են: Իսրօն, ասկարի հրացանը ձեռին, ուրախ կը կանչէ մեզի.

(7) Օղորթ կը նշանակէ շիտակ, ցիշդ, ուզիդ, նշմարիտ:

(8) Լը, շիտակ ձեւը՝ լէ, կը նշանակէ ալ. օրինակ, մեմֆ լէ = մեմֆ ալ:

(9) Տափէ, շիտակ հնչիւնը՝ Տափրբ, 5-10 տուննոց հայ եւ քուրդ բնակչութիւն ունեցող գիւղ մըն էր, անդնդախօս օտրի մը մէջ, քաղաքէն 2-3 մղոն դէպի հարաւ, Կուրտիկի լեռնալանջերուն ստարտը:

«— Փիթցուկներ(10) դացին:

«Ժամը 4-ն էր. լոյսը բացուելու վրայ: Սաստիկ կռուի ձայն կար հովիտի միջին: Այդ վատ նշան էր: Ուրեմն, Շառո Մանուկի առաջն առած էին: Իսրօն կ'ողզէր գնալ կռուի ուղղութեամբ: Բայց ան պէտք էր՝ խրամները պահելու համար: Ղազարն էր որ առաջ անցաւ դէպի քաղաքի ճամբան եւ լուր տուաւ մեզի որ Բերդու Թաղի, Մուշեղայ բերդի, Սաչբու թրքական դիրքերի կրակի տակ ընկած են մերոնք եւ ԱՌԱՋ ԳՆԱԼՈՒ Ո՛Չ ՄԻ ՀՆԱՐ ՁՈՒՆԻՆ եւ որ Մշոյ քաղաքը բոցերի մէջ կը վառի:

«Կէսօրի մօտ էր, երբ Մշոյ մազապուրծները երեւացին: Տափէի ամբողջ ժողովուրդը ԳԵՐԻ ԿԸ ԲԵՐԷԻՆ ՍԱՍՈՒՆՅԻՔ: Շառո Մանուկը յետնապահ եղած էր եւ կռուելով կը բարձրանար դէպի մեզ:

«— Չէ՛, Իսրօ, Ռուսը չկայ, Մուշն ալ չկայ: Որ մենք մեռնինք, Ռուսը կուգայ» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», հատոր 2., էջը 77-81) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Հոս կը վերջանայ Ռուբէնի «Ճըռտոնայ»ի պատմութիւնը:

* * *

[Ա.] Շատ հաւանական է որ այս «քոզըք» բառը «հալըք» դրուած ըլլայ Ռուբէնի ձեռագիրին մէջ, եւ սրբագրողը կամ գրաւարը, սխալմամբ, «քոզըք» կարդացած:

«Հոլըք» Տարօնական բառ է եւ կը նշանակէ՝ առանց շաղախի, քարէ պատերով շինուած եւ ծառի կամ մացառի տերեւապատ ճիւղերով ծածկուած խղիկ, տնակ, առժամեայ բնակարան: Օրինակ. այդպիսի «հոլըք»ներ կը շինուէին այն այգիներու մէջ, որոնք հընձանի կանոնաւոր շէնքեր չունէին:

Այս իմաստով, «հոլըք» կամ «քոզըք» կրնան նկատուիլ հասարակ պահականոց, առժամեայ բնակարան, բայց երբեք՝ «ամբուլիւն»:

* * *

[Բ.] Ասոնցմէ եւ Ո՛Չ ՄԷԿԸ փաշա էր. երկուքն ալ «Բէյ» կը կոչուէին: Ռուբէն «փաշան» իր արժանապատուութեան ԶԷՐ ԿԵՐ-

(10) Փիթցուկ, աւելի շիտակ ձեւը՝ փիցուկ, կը նշանակէ սատկած, մեռած: Առաջ կուգայ փայտանալ բայէն, որուն աներեւոյթը կ'ըլլայ փէտնալ՝ փայտանալ կամ սատկիլ իմաստով: Սասունցին կը հնչէ փիցուկ, իսկ քաղաքացին ու դաշտեցին՝ փէցուկ, որ շիտակ ձեւն է՝ ըստ հնչարանութեան ալ = է օրէնքին:

ՅԸՆԵՐ կոիւ մզել «բէյ»երու դէմ: Իրեն դէմ մրցողները անպատճառ ՊէՏՔ էՐ որ «փաշա» ըլլային՝ ՀԱՄԱՀԱՒԱՍԱՐ իր «փաշա»յութեան աստիճանին: Այդ պատճառով ալ, իր գրիչի մէկ հարուածով, Մուշի հայատեաց կառավարիչը եւ «Պասար Թարուր»ի արիւնարբու հրամանատարը՝ «փաշա» տիտղոսին կ'արժանանան:

Սասունցի Մուշեղ կը պատմէ համանման դրուագ մը.—

Սասունի Փասուր գաւառակի քուրդ աշիրէթապետը, Սիւլէյման աղան, իր մարդոցմէ մին կը զրկէ Սասուն՝ Ռուբէնի հետ բանակցելու համար, «Սակայն, Ռուբէն մերժեց տեսնուիլ զուամի (ծառայ, Ծնթ. Ա. Տ.) մը հետ» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», հատոր 5., էջ 71) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.], իր արժանապատուութեան ԳէՄ ՆԿԱՏԵԼՈՎ բանակցիլ այդ քուրդ ցեղապետի պատգամաբեր զոլամին հետ. ամբարտաւանութիւն մը, որ Սասունի 35,000 հայութեան կեանքը արժեց:

* * *

[Գ.] Սեմալ գիւղացի Քիաթիպ Մանուկ Շառոյեանի նման Սասունցի ակնյայտնի ազգային դէմք մը, որ այնքան քաջածանօթ էր իր ծննդավայրի աշխարհագրական կազմի ամենայնտին մանրամասնութիւններուն եւ Սասունէն Մուշ քաղաքը երկնցող բոլոր ճամբաներուն ու անցքերուն, չէր կրնար այսպիսի յիմարական, եթէ չըսենք տգիտական հարցում մը ուղղել Փեթար գիւղացի Իսրոյին, որ իրմէ շատ աւելի նուազ եւ աւելի սահմանափակ ծանօթութիւններ ունէր Կուրտիկ լեռան բոլոր ճամբաներու եւ լեռնային անցքերու մասին:



Գ Լ ՈՒ Խ Ը .
Ք Ն Ն ՈՒ Թ Ի Ի Ն
ՓԸՌՏՈՆԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

«Ճրտոննայ»ի այս պատմութեամբ, Ռուբէն կը ջանայ գարգացնել հետեւեալ գաղափարները.—

ա.— «1915-ին, Ապրիլ»էն սկսած, Կուրտիկ լեռան «ճակատ»ին վրայ, Սասունցիներու շինած «քողք»ները կ'երկարէին Արջ-գլոր լեռնէն սկսեալ, Կուրտիկի լանջերուն վրայով, մինչեւ Ծիրնկատարի սառցապատ գաղաթները:

բ.— Այդ «քողք»ներու դիմաց կ'երկարաձուլէին «թուրք բանակ»ի շինած «մարդահասակ խորութեամբ խրամները», մէկ-երկու տեղ ալ՝ «երկաթէ թելերով» պաշտպանուած, ինչ որ չտեսնուած բան էր, եւ «Սասունցւոց ահը» աւելի այդ թելերէն էր, քան թուրք զօրքի հրացաններէն ու «թով»երէն:

գ.— Թրքական այդ «խրամները», զոյգ շղթաներով, «գօտիկի նման», կը տարածուէին «Արջգլորիկէն, Մուշեղայ բերդի վրայէն» մինչեւ Սաչքի Դուրան:

«Աստղկայ բերդը չէգո՞ւ էր կանգնած»:

դ.— Իրարու դէմ կանդնած հայ եւ թուրք զիծերը «ԻՍՊԱՌ ՎԵՐԱՑՈՒՑԱԾ ԷՒՆ» կապը եւ յարաբերութիւնը Մուշ քաղաքի եւ Սասունի միջեւ, «ԱՊՐԻԼԷՆ ՍԿՍԱԾ»:

ե.— «Յոգնեցուցիչ էր» այս սպասումը: Յոգնեցուցիչը «վախը չէր», ա՛յլ «չարունակ լարուած դիտելն էր», որ ջիղեր կը քայքայէր եւ մարմինն ու հոգին «աւերակ կը դարձնէր»:

զ.— 1915 Յունիսին, «բոթեր սկսան գալ» ե՛ւ Մուշ քաղաքէն, ե՛ւ Մշոյ Դաշտէն: Պէտք էր «ՍՏՈՒԳԵԼ» այդ հակասական լուրերը՝ տեղւոյն վրայ: Այդ պատճառով ալ, Կուրտիկի դիրքին Սասունցիներու խումբը, կէս գիշերին, կ'աւլէ, կը մաքրէ թրքական «խրամներու» զօրքը եւ «խուճապ»ի մասնելով գայն, կը փախցնէ մինչեւ վար, անդնդախոր ձորահովիտը, ուր մերոնք կ'իյնան «Բերդու Թաղի, Մուշեղայ բերդի, Սաչքու (այսինքն, Սաչքի Դուրանի, Ծնթ. Ա. Տ.) թրքական դիրքերի կրակի տակ» եւ «առաջ գնալու ո՛չ մի հնար չունին»: Հետեւաբար, առանց օգնութիւն հասցնել կարողանալու քաղաքին, որ «բոցերի մէջ կը վառի», իրենք կը հարկադր-

բուին նահանջելու դէպի Սասուն, իրենց հետ «գերի» բերելով «Տափէի ամբողջ ժողովուրդը»:

* * *

Հիմա՛, մի առ մի քննենք վաւերականութիւնը այս կէտերուն, որոնք «Ճըռտոնայ»ի պատմութեան առանցքը կը կազմեն:

ա.— 1915-ի Փետրուար ամսոյ 6-7-ի՝ Գոմսայ դէպքէն(1) յետոյ, Ռուբէն եւ Կորիւն, իրենց զինեալ հետեւորդներով, որոնց մէջ կը գտնուէին նաեւ Մուշ քաղաքացի նշանաւոր հայդուկ Պզտիկ Արամ Յակոբեան, Ալիջան գիւղացի քաջայանդուզն Փեղայի Տիգրան, եւ Աւրան գիւղացի յոյժ պարտաճանաչ հերոս Արամ, ապաստաններ էին Սասուն եւ հոն հաստատելու իրենց տեւական բնակութիւնը, բայց թէ Ռուբէն, ԻՐԱՊԷՍ, հոգ տարա՞ծ էր ամբուսութիւններ շինել տալու՝ ԳՈՆԷ Սասուն տանող գլխաւոր անցքերու մէջ եւ բարձունքներու վրայ, այդ լեռնաշխարհը պաշտպանելու համար արտաքին յարձակումներու դէմ, մեծապէս տարակուսելի է:

Ռուբէն, իր «Ճըռտոնայ»ի պատմութեամբ, կը հաւաստէ որ Սասունցիները «քողբք»ներ շինած էին, որոնք «կ'երկնային իրենց դէմ եղած թուրք բանակի շինած խրամների դիմաց» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 78), սակայն ցաւալի իրականութիւնը ա՛յն եղած է, դժբախտաբար, որ այդ «քողբք»ները ո՛չ այլ ինչ են եղած, եթէ ո՛չ՝ մէկ-երկու պահակներ պատասպարելու չափ տնակներ կամ խզիկներ, ՊԱՐԶ ՊԱՀԱԿԱՆՈՑՆԵՐ, «ամբուսութիւն» ըլլալէ շատ ու շատ հեռու:

Ամբուսիւն կամ խրամ ԶԵՆ ՇԻՆԱԾ, նոյնիսկ, իրենց ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ՅՈՅՍՆ ու ՄԻԱԿ ԱՊԱԻԷՆՆ եղող Անդուկ լեռան շուրջն ու բոլորը, հակառակ՝ իրենց տրամադրութեան տակ գտնուող բազմապար շինարար բազուկներու եւ հինգ ամիսէն աւելի երկա՛ր ժամանակամիջոցի մը (Փետրուար 10-էն սկսեալ մինչեւ Յուլիոս 20, ճիշդ հինգ ամիս եւ տասը օր):

(1) Գոմսայ դէպքի մանրամասն նկարագրութիւնները կարգալ վահան Փափագեանի «Իմ Յուշեր»ու Բ. հատարի մէջ, էջք 337-340, եւ Միսակ Բդեանի «Հարագատ Պատմութիւն Տարօնոյ» յուշամատենի մէջ, էջք 326-330: Հարկ չենք տեսներ հոս յիշել էջերը «պատմագիր» Կարօ Սասունիի եւ խմբագիր «պատմիչ» Սասունցի Մուշեղի տուած Գոմսի դէպքի նկարագրութեանց, որոնք մեծաւ մասամբ յերիւրանքներ են, հետեւաբար ոչ-պատմական:

Հետեւաբար, իրականութեան եւ ճշմարտութեան տրամագծօրէն հակառակ է յայտարարել թէ «Անոնց (Սասունցիներու, Մնթ. Ա. Տ.) շինած քարէ «քողբք»ները կ'երկարէին իրենց դիմաց եղած թուրք բանակի շինած խրամների դիմաց»:

բ.— Ուրիշ ոչ-իրական հաւաստում մըն է նաեւ սա՛ թէ այդ «քողբք»ներու դիմաց կ'երկարաճողուէին «քուրք բանակի շինած խրամները», «մարդահասակ խորութեամբ» եւ «երկաթէ թելերով» պաշտպանուած «մէկ-երկու տեղ», եւ կա՛մ, «ամոնց խրամները, ԶՈՅԳ ՇՂԹԱՆԵՐՈՎ, ԳՕՏԻԿԻ ՆՄԱՆ, կը տարածուէին Արջգութիկէն, Մուշեղայ բերդի վրայէն Սաչֆի Դուրանը», եւ այդ «նորութիւնը», այսինքն, «մարդահասակ խորութեամբ» խրամները եւ մանաւանդ՝ «երկաթէ թելերը» ա՛հ ու սարսափ կ'ազդէին Սասունցիներուն, քան անոնց «հրացաններն ու թոփերը»:

Ճիշտ է որ Տարօնցի յուշագիր մը, Արմաշական մտաւորական Յակոբ Տէր Զաքարեան, կը յիշէ (Յակոբ Տէր Զաքարեանի մեքենագրուած Յուշերը, էջ 156) քանի մը թուրք ոստիկան զինուորներու ներկայութիւնը Դուբանէ Զիվկրան կոչուած վայրին մէջ, Ծիրնկատարի քղանցքներուն վրայ, ուր հաւաքուած էին Ռուբէն, Փափագեան, Կորիւն, եւ այլն, Մուշ քաղաքի կռիւին առաջին օրը, Յունիս 29-ին, Երկուշարթի, այդ բարձունքէն, անկարեկիր սրտով դիտելու քաղաքին ուրակոծուիլը, բայց այդ քանի մը ոստիկան-զինուորները Զիւն որ «մարդահասակ խորութեամբ խրամներ» պիտի փորէին, այն ալ՝ «երկաթէ թելերով» պաշտպանուած մէկ-երկու տեղ, Արջգութ լեռնաբլուրէն սկսեալ, Մուշեղաբերդի վրայով, մինչեւ Սաչքի Դուրան:

գ.— Ասով, ինքնին հերքուած կ'ըլլայ նաեւ «մարդահասակ խորութեամբ խրամներ»ու գոյութիւնը, ա՛յն ալ՝ «զոյգ շղթաներով, գօտիկի նման», այդ շղթանակին մէջ:

Հոս, Ռուբէն կը յայտարարէ թէ Ասողբերդը «չէր քէր կանգնած», այսինքն, Մոկունք գիւղի կոնական ի վեր՝ վերամբարձ տարածուող «Հաւատամք»ի ժայռոտ լեռնաշղթայի այդ շղթանակին մէջ, ո՛չ զօրք կար եւ ո՛չ ալ՝ ամբուսութիւն կամ խրամ:

Գ Լ ՈՒ Խ Թ .

ՄՈՒԾ ՔԱՂԱՔԻ ԵՒ ՍԱՍՈՒՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԽՉՈՒԱԾ ՉԷՐ

դ. — Այսպէս, իրարու դէմ կանգնած հայ եւ թուրք գիծերը, Ապրիլէն ի վեր, ԽԶԱԾ ԷԻՆ կապը եւ յարաբերութիւնը՝ քաղաքին եւ Սասունի միջեւ, կա՛մ Ռուբէնի իւրայատուկ բացատրութեամբ, «իբար դէմ կանգնած հայ եւ թուրք գծերը ի ՍՊԱՌ ՎԵՐԱՑՈՒՑԱԾ ԷԻՆ կապը քաղաքին հետ» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., 78), եւ կա՛մ, «Անոնք, ամէնքն ալ (այսինքն, Մուշ քաղաքը, թուրք կառավարութիւնն ու բանակը, Հայոց Ազգային Առաջնորդարանը, Ծնթ. Ա. Տ.) ԲԱԺՆՈՒԱԾ ԷԻՆ մեզմէ Ապրիլէն սկսած» (նոյն, անգ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Հակառակ Ռուբէնի այս կրկնակ յայտարարութեանց եւ հաստատումներուն, մեծ հարկադրուած ենք յայտարարելու եւ պնդելու որ անոր այս յայտնութիւնները հիմնականապէս ԱՆՃԻՇԴ ԵՆ եւ ո՛չ մէկ կապ ունին իրականութեան, հետեւաբար՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ, ինչ որ պիտի ջանանք ապացուցանել :

Սասունի եւ Մուշ քաղաքի միջեւ կապը եւ յարաբերութիւնը, ըստ սովորականին, բնականօրէն վիճակի մէջ շարունակուած են Ապրիլէն ՎԵՐԱ ԱԼ, մինչեւ Յունիս 25, Հիմզաբթի օր, այսինքն, քաղաքի ինքնապաշտպանողական կռիւը սկսելէն ՀԻՆԳ ՕՐ ԱՌԱՋ, երբ՝ թուրք ոստիկանութիւնը, քաղաքի մէջ, կը կատարէ ձերբակալութիւններ կարգ մը ազգայիններու՝ հետեւեալ պարագաներու տակ .—

Ռուբէն, Սասուն ապաստանելէն ի վեր, — ինչպէս յիշեցինք նախապէս ալ, — ՈՐՈՇԵՐ ԷՐ որ քաղաքէն, դաշտէն եւ բոլոր շրջաններէն՝ ամէն ինչ — պարէն, գէնք, ռազմամթերք եւ կռուող ուժեր — կեդրոնացնաւ Սասունի մէջ, եւ այդ ուղղութեամբ ալ տարած աշխատանքները կը շարունակուէին ԱՆԱՐԳԵԼ ու ԱՆԸՆԻՂԱՏ, գիշեր ու ցերեկ :

Թուրք կառավարութիւնը, որեւէ կերպով, արգելք չէր յարուցաներ Սասունարնակ Ռուբէնի այս կեդրոնացումի աշխատանքին դէմ, կա՛մ՝ անոր գոյութեան բոլորովին անծանօթ ըլլալով — ինչ որ շատ հաւանական չի թուիր՝ նկատի ունենալով այդ խիստ ճար-

պիկ կառավարչի աշայուրջ հսկողութիւնը եւ մշտարթուն գործունէութիւնը, — եւ կա՛մ ՅԱԿԱՄԱՅԻՑ, քոյլատու աչքով կը նայէր անոր այդ կեդրոնացումի աշխատանքին, ա՛յն շատ դիրքաւասկանալի եւ բացայայտ պատճառով որ թուրք կառավարութիւնը, ընդհանրապէս, եւ Մուշի թրքութիւնը, մասնաւորապէս, մեծ ակնածանք կը սնուցանէին Սասունի պատկառազոր անունին եւ անոր շլացուցիչ հմայքին հանդէպ, սկսեալ Սուլթան Համիտի ժամանակներէն :

Եւ օրուան իմաստուն, խոհեմ ու շրջահայեաց կառավարիչը շատ զգոյշ էր, այդպիսի վտանգաւոր խնդիրներ յարուցանելով՝ ՆՈՐ ԴժՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ստեղծելէ, բան մը, զոր դիմակալելու պատրաստ եւ ի վիճակի չէին թուրք կառավարութիւնն ու բանակը, այդ անդ օրերուն :

Սակայն, 1915 Յունիս 25-ին, Հինդաբթի օր, երբ կարգ մը Սասունցի կիներ, քաղաքի շուկայէն՝ իրենց գնումներն ընելէն յետոյ, խումբով կը մեկնէին քաղաքէն, — ինչ որ սովորական ձեւով՝ կ'ընէին շարունակ, ԱՄԷՆ ՕՐ, — թուրք ոստիկանութեան կողմէ ձերբակալուելով՝ հարցաքննութեանց կ'ենթարկուին : Այդ պարզամիտ կիները, առանց անդրադառնալու թէ ինչ կ'անցնի կը դառնայ, անվարան կերպով կուտան անունները ա՛յս վաճառականին, ա՛յն խանութպանին, կա՛մ ազգային անհատին, որոնցմէ ըրած էին իրենց գնումները, եւ կա՛մ, ապրանք առած էին՝ Սասուն փոխադրելու համար :

Այս հարցաքննութիւններէն անմիջապէս յետոյ՝ կը կատարուին ձերբակալութիւններ կարգ մը ազգայիններու, որոնք հինգ օր վերջ, իբրեւ թէ Բաղէչ պիտի դրկուէին՝ Պատերազմական Ատեանի առջեւ դատուելու համար, սակայն քաղաքէն երեք-չորս ժամ հետո, Մուշ-Բաղէչ խճուղիին վրայ գտնուող Խասիլիւ եւ Երըշտէր գիւղերու մարազներու մէջ լեցուելով՝ ՈՂՁ-ՈՂՁ Կ'ԱՅՐԻՆ :

Այս ձերբակալութիւններէն ՎԵՐԱՆ Է որ այլեւս յարաբերութիւնները բոլորովին կը ԽԶՈՒԻՆ քաղաքի եւ Սասունի միջեւ, եւ ո՛չ թէ «Ապրիլէն ի վեր», ինչպէս կը յայտարարէ Ռուբէն :

Բնիկ Տարօնցի մեր յուշագիրները, բոլորն ալ, — Միսակ Բղէեան, Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, Մուշեղ Դուռնեան, — կատարելապէս անդաշնակ են իրարու՝ այս ձերբակալութեանց պատմութիւնը նկարագրած ատեն :

Հիմա՛ ներկայացնենք այդ ակնատես յուշագիրներու վկայութիւնները .—

1. — Այս ձերբակալութեանց ամենէն ընդարձակ եւ մանրամասն նկարագրութիւնը կու տայ մեր գլխաւոր յուշագիր Միսակ Բղէեան, Մուշ քաղաքացի առաջնակարգ վաճառական եւ ազգային ա-

կանաւոր դէմք մը՝ քաջածանօթ իր հանրային գործունէութեամբ :
Մտիկ ընենք իրեն .—

«Սասունցի հուժկու կիներ եւ աղջիկներ, իրենց տղամարդոց, զաւակներուն եւ հոն գտնուող ուժերուն՝ պարէն փոխադրելու եւ ամբարելու համար, շարունակ քաղաք եւ սարատակի գիւղեր կուգային խումբերով, ապրանք կ'առնէին եւ շալակելով՝ տուն կը վերադառնային : Ամիսներէ ի վեր, անոնց այս գործը որեւէ արգելիչ չէր հանդիպած, բայց այս վերջին օրերուն, երբ կառավարիչը Բաղէշ երթալով եւ կուսակալին հետ խորհրդակցելով՝ իր դիւային ծրագիրները եւ հրահանգը առած ու վերադարձած էր, այլեւս սկսած էր արքուն գործունէութեան մը :

«Ոստիկաններու տուած այն լուրին վրայ թէ Սասունցի կիներ, ԱՄԷՆ ՕԲ, ապրանք կը փոխադրեն Սասուն, կ'առավարիչը կը հրահանգէ ոստիկաններուն որ այդ կիները հարցաքննելով՝ իմանան անունները այն վաճառականներուն եւ խանութպաններուն, որոնցմէ կատարուած է գնումը :

«Այսպէս, երեսուն շալակաւորներ կը ձերբակալուին եւ կ'առաջնորդուին պահականոց, ուր անոնք կը յայտնեն որ իրենք այդ ապրանքները գնած են իրենց անձնական դրամով՝ զանազան խանութպաններէ, եւ եղածէն առանց բան մը հասկնալու, կուտան ծանօթներուն անունները :

«Վար դնելով ապրանքները, ազատ կը թողուն այդ կիները, եւ առնուած ցանկին համաձայն, յանկարծակի, խանութներէն եւ թաղերէն կը սկսին հաւաքել հետեւեալ աղգայինները .— Վերին Թաղէն՝ Պետո Օհանի Սողոմոն Էֆէնտին, վաճառական եւ իտարէ ազատը, Մուրատ Աւագեանը (Փալապետ), վաճառական, Չորու Թաղէն՝ Փոթիկեան Հաջի Արշաւիրը, ջաղացի սեփականատէր, Պանամիրեան Հլղաթ եւ Սողոմոն եղբայրները՝ առեւտրականներ, եւ ուրիշ մի քանի անձնաւորութիւններ, եւ բանտ կը տարուին : Բոլորն ալ անմեղ մարդիկ : Ոմանք, իրենց ծանօթ Սասունցի կիներուն՝ իբր ողորմութիւն, ձրի են տուեր, եւ ոմանք ալ՝ մէկ կօտ կորեկ տասը դահեկանի ծախելով, քանի մը դահեկանի շահ ըրած են եղեր :

«Ասոնք, անկեղծօրէն, կը յայտարարեն որ իրենք առեւտուր են ըրած, բայց ոստիկանները կը պնդեն որ հայ առեւտրականները, Սասուն գտնուող ֆեդայիներուն օգնելու մտքով տուեր են, եւ կ'առավարիչի հրամանով, անոնք բանտ կը լեցուին :

«Հաջի Յակոբի տունէն ալ՝ մաս մը հացահատիկ տրուած էր, սակայն Հաջին, խուզարկութեանց եւ ձերբակալութեանց լուրը լսելուն պէս, կծիկ դնելով՝ մեր տունը եկաւ ճիշդ այն վայրկեանին,



ՏԱՐՕՆՅՈՒ ԱԻՒԳ ՅՈՒՇԱԳԻՐ ՄԻՍԱԿ ԲՈՒԵՆԱՆ ԵՐ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԸ
(Նկարուած 1924-ին, Քիֆլիսի մէջ)

երբ ոստիկանները իր տունը երթալով, իր կնոջմէն կը հարցնեն իր մասին: Հաջիի կինը կը պատասխանէ:—

«— Բիւ առաջ ըսաւ որ Բայրախտարենց Հաջի Մուսթաֆայի քով պիտի երթար:

«Ոստիկանները, տունը խուզարկելէն վերջ, կը մեկնին:

«Այդ օրէն սկսեալ, Հաջի Յակոբ, ցերեկ ատեն ալ, չէր ուզեր դուրս ելլել, մեր տունը կը մնար. իսկ մութը կոխելուն՝ երկուքս ալ միասին կ'երթայինք քրոջս տունը գիշերելու:

«Միւս ձերբակալուածները, հինգ օր յետոյ, ճամբայ հանեցին, իրրեւ թէ Բաղէշ պիտի տանէին՝ Պատերազմական Ատեանի առջեւ դատելու համար, բայց քաղաքէն չորս ժամ հեռաւորութեան վրայ, Երըշտէր դիւղի ձորակին մէջ, բոլորն ալ գնդակահարեր են» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 362-363) [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.]:

2.— Յուշագիր Տէր Եղիշէ Քաշանայ Տէր Պարսամեան, Մուշի Վերին Թաղեցի եւ Տարօնի Աղզային Առաջնորդական Փոխանորդ, հետեւեալ կերպով կը ներկայացնէ այդ ձերբակալութեանց խնդիրը:—

«Յունիս 24-ին, Չորոյ Թաղի աւագերէց Տէր Յովհաննէս Քաշանայ Տէր Աստուածատուրեան բանտարկուեցաւ՝ հետեւեալ ամբաստանութեամբ. Չորոյ Թաղի մէջ այդ օր կը մեռնի Պալաչեան Աչիբ անունով երիտասարդ մը, Տէր Յովհաննէսի ծուխերէն, եւ քաշանան կը կատարէ թաղումը:

«Ձինուորական տարիքի մէջ եղողի մը դիակը, առանց կառավարութեան հրամանին՝ թաղելը ոճիր նկատուելով, քաշանան բանտ կը դրուի:

«Այդ քաշանային կ'ընկերացնեն Հայկունի Պաշիկը, Չաթոյեան Սարգիսը, Աւրանեան Անուշը, Աւագենց Մուրադը, եւ այլն, եւ այլն, կարգ մը անձնաւորութիւններ, որոնք մեղադրուած էին Սասուն գտնուող ապստամբներուն՝ ապրանք ղրկած ըլլալու յանցանքով. մինչդեռ իրականութիւնը սա՛ էր որ Սասունցի քանի մը կիներ Մուշ կու գան, ԻնՉՊէՍ ԱՄէն Օր ԵՒ ԱՄէն ԺԱՄ, իրենց համար գնումներ ընելու:

«Օխա մը աղ, մէկ-երկու արշին տեղական կտաւ, 10-20 փարայի դերձան, լուցկի, եւ այլն կը գնեն այդ կիները ու կը վերագառնան: Ծամբան կը ձերբակալուին: Եւ երբ իրենցմէ կը հարցուի թէ ապրանքները որոնցմէ՞ գնած են, այդ կիները ցոյց կուտան խանութպանները, եւ այդպիսով՝ մարդը կը բանտարկուի՝ տասը փարայի լուցկի մը ծախած ըլլալու ոճիրը գործելուն համար, եւ ընկերացուելով Տէր Յովհաննէս Քաշանային, կը ղրկուին Պատգիւղ

եւ Երըշտէր դիւղերը, ուր կը կոտորուին» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը», էջ 46) [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.]:



Տէր Եղիշէ ՔԱՇԱՆԱՅ Տէր ՊԱՐՍԱՄԵԱՆ

3.— Երրորդ յուշագիրը, Մշոյ Սուրբ Մարինէ Թաղեցի, պատանի Մուշեղ Դուռնեան ալ, կը գրէ:—

«Վանի կուսակալ Ջեւեթի եւ իր ընդհանուր հրամանատար Պաշիկ Բէյերը եկան Բաղէշ, ուր գնաց նաեւ Մուշի կառավարիչ Սեր-

վէթ Բէյն ալ: Իրարու հետ խորհրդակցելով, այդ շրջանի Հայու-
թիւնը կոտորելու գործողութեանց մանրամասնութիւնները քննու-
թեան առեր եւ ամէն ինչ կարգի դրեր ու ծրագրեր են՝ Բաղէշի կու-
սակալ Արդիւլ-Պալիք Բէյին հետ:

«Մշոյ կառավարիչը, վերադարձին, աւելի կատաղի էր դար-
ձեր: Նախ Ամէլի Թաքուրին կազմող 500 հայ զինուորները ձապաղ-
ջուրի ճամբով զրկեց եւ կէս-ճամբան՝ կոտորել տուաւ:

«Սասունցի հինգ կիներ, որոնք իրենց ուտելիքի համար՝ շա-
քար, ցորեն, կորեկ շալկած, քաղաքէն դէպի իրենց գիւղերը կը վե-
րադառնային, ոստիկաններու կողմէ կը ձերբակալուին, եւ ասոնց



ԽԱԼԻԼ ՓԱՇԱ

(Էնվէրի հորեղբայրը)

Ջարդարաբ Պիթլիսի, Մուշի
եւ Սզերդի հայերուն:



ՔԵԱՋԻՄ ՓԱՇԱ

(Նոր անունով Էօգալի)

Ջարդարաբ Պիթլիսի, Մուշի
եւ Սզերդի հայերուն:

ցուցմունքին պատճառով ալ՝ 25 երեւելի հայ վաճառականներ կ'ամ-
բաստանուին իբրեւ Սասունցիներուն նիւթական օժանդակութիւն
ընողներ եւ կը ձերբակալուին:

«Այդ վաճառականներու յանցանքը եղած էր Սասունցի կի-
ներուն՝ դերձան, ասեղ եւ այլ առտնին ապրանքներ ծախած ըլլալը:

«Այդ հայերը, Բաղէշի Պատերազմական Ատեանի առջեւ
դատուելու պատրուակով՝ ճամբայ հանուեցան եւ Երըշտէր գիւղին

մէջ գնդակի բռնուեցան» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջը
646-647) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* * *

Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունին եւս կը նկարագրէ
այս ձերբակալութեանց պարագաները՝ յիշելով սխալ թուական եւ
տալով ՍեԱԼ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ մը, ըստ իր բարի սովորութեան. այս-
պէս.—

«Թուրք կառավարութիւնը քանի մը փորձեր կ'ընէ՝ հակազ-
դեցութիւնը չափելու համար: Յունիս 25-ին, Նոր Տոմարով՝ Յու-
լիսի 8-ին, Ուրբաթ օր(1), քանի մը պատահական ձերբակալու-
թիւններ կը կատարէ, իբր թէ ապրանք ծախած են Սասունցի կիներ-
ուն: Կը բանտարկուին Տէր Յովհաննէս Քահանայ Տէր Աստուա-
ծատուրեանը, Ղրազացպան մը(2), արհեստաւոր մը, վաճառական-
ներէն Պաշիկ Հայկունի, Անուշ Աւլանեան, Սարգիս Զաթոյեան,
Աւագենց Մուրադ, ընդամէնը՝ 18 հոգի:

«Մուշի հայութիւնը լռելեայն կը յուզուի, բայց շարժում

(1) Յունիս 25-ը (Նոր Տոմարով՝ Յունիս 8) Ուրբաթ օր, այլ
Հինգշաբթի, որ միշդ ու միշդ կը համապատասխանէ մեր յուշա-
գիրներու յիշած թուականին: Ուրբաթ օրը՝ Յունիս 26 է (Նոր Տո-
մարով՝ Յունիս 9):

Ժամանակագրութիւնը ամենաթոյլ կողմն է «պատմագիր»
Կարօ Սասունիի քով ալ, եւ այդ բանը ան ըրած է կամովին, կա-
տարեալ գիտակցութեամբ՝ շփոթութիւն յառաջ բերելու ՆԵՆԳ գի-
տաւորութեամբ, որովհետեւ ճշմարիտ եւ յստակ ժամանակագրու-
թիւնը ԱՄԵՆԱԿԱՏԱՂԻ թշնամին է բոլոր դաշնակցական յուշա-
գիրներու եւ «պատմագիր»ներու մերկայացուցած ձգտումնաւոր եւ
խեղաթիւրեալ «պատմութեան»:

(2) Ո՛չ թէ «չազացպան մը», այսինքն, հասարակ արհեստա-
ւոր մը, ա՛յլ Ղրազացի սեփականատէր («Հարազատ Պատմութիւն
Տարօնոյ», էջ 363), այսինքն, մեծահարուստ հայ ազգային մը —
Հաջի Արշալիր Փոթիկեան, այդ նշանաւոր գերդաստանի բարեհաւ-
քաւ մահապետը:

չկայ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 889) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Քաղաքին մէջ ի՞նչ շարժում կ'ակնկալէր Սասունցի այս չնաշխարհիկ «պատմադիր»ը, երբ այդպիսի շարժում կազմակերպող եւ ղեկավարող «պարոն»ները, վատաբար, լքեր էին քաղաքը եւ Սասուն ապաստաներ... :

* * *

Կը խորհինք թէ աւելորդ չ'ըլլար որ այս արիւնոտ դրուագը փակենք պատանի յուշագիր Գասպար Բղէեանի խիստ տիրեցնող նկարագրականով, որով ան մեր աչքերուն առջեւ կը պարզէ այս տարաբախտ կալանաւորներու կեանքի ամենավերջին սահմուկեցնող վայրկեանները... :

Գասպար երկրորդ մանչ գաւակն էր մեր աւագ յուշագիր



ԳԱՍՊԱՐ ԲԴԵՅԱՆ

Միսակ Բղէեանին, եւ 1915 Յունիս ամսուան վերջին շաբթուայ ընթացքին կը գտնուէր Պասգիւղ, ուր Բղէեան եղբայրները ունէին հօրենական կալուածներ եւ կերպասեղէնի մեծ վաճառատուն մը :

Գասպար կուտայ ականատեսի իր յուզիչ պատմութիւնը՝ նըկարագրելով Մուշ քաղաքէն ձեզնկապ մեկնող այս տարաբախտ կալանաւոր ազգայիններու կեանքի ամենավերջին խիստ աղետարար վայրկեանները... :

«Քանի մը օր վերջ, Յունիս 29-ին(3), տարածայնութիւն մը կար թէ Մուշի կողմէն՝ հայերու կարաւան մը կու գար : Չար լեզուներ կ'ըսէին թէ Մուշի երեւելի հայերն են եկողները : Սոսկում մը պատեց բոլորիս. ամէն ոք սահմուկած էր. չարաղէտ բան մը կը դարբնուէր, բայց թէ ի՞նչ, ոչ ոք գիտէր :

«Երեկոյեան կողմ, կարաւանը մօտեցաւ գիւղին : Ինչպէս շատ մը գիւղացիներ, ես ալ դուրս ելայ՝ դիտելու կարաւանը : Եւ ի՞նչ տեսնեմ — 350-ի չափ հայեր, թեւերնին իրարու կապուած, շարան շարան կ'անցնէին գիւղի քովէն : Թուխմանուկի քով շինուած գորտոնի (ժանտարմաներու կայան) առջեւ բերին եւ մօտերը գտնուող երեք խոշոր մարագներու մէջ արդելափակեցին :

«Անոնց մէջէն ճանչցայ Անուշ Ասլանեանը, Մուրադ Աւագեանը (Փալապէս), մեծ մասամբ վերին թաղեցիներ : Մի քանի Զորոյ թաղեցիներ ալ կային, ինչպէս նաեւ Տէր Յովհաննէս Քահանան :

«Գորտոնի մէջ, նախապէս, 12 ժանտարմաներ կային, իսկ կարաւանին ալ կ'ընկերանային 15-ի չափ ձիաւոր ժանտարմաներ : Ասոնք, իրենց բերած նամակը յանձնեցին Սլեման Օնպաշիին : Անոր մէջ գրուած էր այդ 350 հայերու մահավճիռը՝ Մշոյ միւթասարիՓի կողմէ :

«Ժամը 11-ին (Ը. թ.), կապուած հայերը լեցուցին մարագներու մէջ, անոնց վրայի հագուստները հանեցին եւ ունեցած դրամներն ալ կողոպտեցին այդ ժանտարմաները :

«Ժամը 2-ի ատենները, թալանի գործողութիւնը լմնցած ըլլալով, Սլեման Օնպաշիի հրամանին վրայ, յիսուն խուրճ չափառ (չորրցած բարակ փայտեր), տասնեւհինգ խուրճ խոտ եւ չորս թիթեղ ալ քարիւղ բերին եւ այդ երեք մարագներու վրայ շարեցին :

«Մենք, բոլորս ալ, տանիքներու վրայ կեցած, կը դիտէինք հեռուէն : Եւ ահա՛, կրակ տուին խոտին, չափառին եւ քարիւղին, ու բոցերը սկսան բարձրանալ դէպի երկինք :

«Կ'երեւէր թէ հայերէն ոմանք, դուռը կտորելով, կամ պա-

(3) Գրաշարական խիստ ցաւալի սխալի մը պատճառով, այս բուականը՝ «Յունիս 27» տպագրուած է Գասպար Բղէեանի յուշերուն մէջ («Հարագատ Պատմութիւն Տարօնայ», էջ 556) :

Նոյն պատճառով, նոյնպիսի ծանրակշիռ սխալ մը գործուած է նոյն յուշամատեանի 386-րդ էջին վրայ, ուր վարդապետի կիրակի օրուան բուականը՝ փոխանակ միշտ կերպով, «Յունիս 28» ըլլալու, «Յունիս 23» տպագրուած է :

տը ծակելով, կը փորձէին փախչիլ, բայց ժանտարմաները, իրենց հրացաններով՝ մարազներու չորս կողմ դիրք բռնած, սկսան անընդհատ հրացանաձգութեան» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջը 556-557) :

* * *

Տարօնցի արժանահաւատ յուշագիրներէն առնուած այս վրկայութիւնները միաբերան կ'ապացուցանեն որ Սասունի եւ Մուշ քաղաքի միջեւ յարաբերութիւնները շարունակուած են ԲՆԱԿԱՆՈՆ ՎԻՃԱԿԻ ՄԷՁ, Ռուբէնի՝ Սասուն ապաստանելէն ՉՈՐՍ ՈՒ ԿԷՍ ԱՄԻՍ ՅԵՏՈՅ ԱԼ, այսինքն, Փետրուար 10-էն սկսեալ մինչեւ Յունիս 25, Հինգշաբթի օր, հակառակ իր այն ԿՐԿՆԱԿԻ յայտարարութեանց եւ հաւաստումներուն թէ «իբար դէմ կանգնած հայ եւ քուրք գծերը ԻՍՊԱՌ ՎԵՐԱՑՈՒՑԱԾ էին ԿԱՊԸ ՔԱՂԱՔԻՆ ՀԵՏ», կա՛մ, «Անոնք, ամէնքն ալ, ԲԱԺՆՈՒԱԾ էին ՄԵՁՄԷ Ապրիլէն սկսած» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», 2., էջ 78) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :



Գ Լ ՈՒ Խ Ժ .

«ԵՕԹԸ ԱՄՍՈՒԱՆ» ԱՌԱՍՊԵԼԸ

Ե.— Միշտ միեւնոյն յանկերզն է, զոր թուփակօրէն կը կըրկենն ու կը յեղյեղեն Ռուբէն, իր խմբապետ «պատմիչ»ը (Սասունցի Մուշեղ) եւ ասոնց կոյր հետեւողութեամբ ալ, գրեթէ բոլոր դաշնակցական թմբկահար գրիչներն ու գրչակները, ներառեալ նաեւ Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունի, թէ ամիսներով («ԵՕԹԸ ԱՄՍ») շարունակ կուէ են մղեր [Ա.] թրքական «խրամներ»ու դէմ եւ «լարուած դիտեր», որ «Չղեր կը քայքայէր եւ մարմինն ու հոգին աւերակ կը դարձնէր» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», 2., էջ 79) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ամիսներով շարունակ «լարուած դիտել»ու կարիք չկար, որովհետեւ Սասուն «ամիսներով» ԱԶԱՏ ԶԳՈՒԱՄ ԷՐ՝ ընելու ինչ որ կ'ուզէր, ինչպէս որ կ'ուզէր : Այդ քանի մը ամիսներու ընթացքին, — Փետրուար ամսուան 10-էն սկսեալ մինչեւ Յունիս ամսուան 19-ը, ճիշդ ու ճիշդ՝ հինգ ամիս եւ մէկ շաբաթ, — Սասուն շա՛տ աւելի ազատ ու անկախ էր՝ քան իրենց գլխաւորած եւ ղեկավարած Հայաստանի Հանրապետութիւնը, եւ Սասունի հայկական ուժերու գըլխաւոր ղեկավարն ու հրամանատարը (Ռուբէն) շատ աւելի ԱԶԱՏ (care free) էր՝ այդ «յոզնեցուցիչ» սպասուածի օրերուն, քան Հայաստանի Հանրապետութեան «Պատերազմական Նախարար» եղած ատեն. սակայն, ամենէն ողբերգականը՝ Տարօնի եւ Սասնոյ խիստ տարաբախտ Հայ Ժողովուրդին համար, «ամիսներով» ազատ ու անկախ եղած այդ երկար ժամանակամիջոցի ընթացքին, ՄԻԱԿ ԲԱՆԸ, որ ըրած է այդ «ընտրելիներու ընտրելագոյնը», ծ՛ճ՝յլ-ծ՛ճ՝յլ յօրանջել եւ ԱԿՆԴԷՏ ՍՊԱՍԵԼ եղած է՝ ուսական փրկարէր բանակին եւ հայ կամաւորական զուեղերուն, որոնք չեկա՛ն ու չերեւցա՛ն, ինչպէս նաեւ ծ՛ճ՝յլ եւ անաշխա՛տ ԺԱՄԱՆԱԿ ՎԱՏՆԵԼ՝ Սասնոյ զովասուն անտառներու եւ տերեւառատ ծառերու ընդարմացնող շուքերուն տակ, կարծես թէ իր «ամառնային արձակուրդը» յօրանջելով անցընելու, առանց նոյնիսկ՝ իր ամենավերջին յոյսն ու փրկութեան միակ ապաւէնը եղող Անդոկ լեռան շուրջն ու բոլորը՝ «ամբուփիւններ» ու «խրամներ» կառուցանել տալու... հետեւած ըլլալով դո՛նէ՛ իր թուրք «մրցակիցներու»... օրինակին?... :

* * *

[Ա.] Սասունցի Մուշեղ եւ ասոր կոյրզկուրան հետեւող՝ Տարօնի դարավերջիկ «պատմագիր» կարօ Սասունի (նոյնպէս Սասունցի), որուն խեղաթիւրեալ «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» հաստատիր հատորը քանի մը տարի առաջ հրատարակ ելաւ, թուեալորէն կը կրկնեն ու կը յեղյեղեն «ԵՕԹԸ ԱՄՍՈՒԱՆ ԿԱՏԱՂԻ ԿՈՒԻՒՆԵՐ» ՆԵՐՈՒ ՀԵՔԻԱԹՐԸ (Տեսնել Ռուբէնի «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները». հատոր է., «Սասունցի խմբապետ Մուշեղի Յուշերը», էջք 51, 65, 74, 75, 79, 82, 84, 86, 91, եւ կարօ Սասունիի «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջք 15, 885, 886, 887, 1009, եւ այլն) :

Ասիկա դերագիր առասպել մըն է, զոր թուեալորէն կը յեղյեղեն բոլոր աղանդաւոր մեծաւորներն ու փոքրաւորները՝ ա՛յն մեղապարտ դիտաւորութեամբ եւ նեմգամիտ նպատակով, ցոյց տալու համար թէ Ռուբէն ԶԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ՝ Տարօնի եւ Սասունի ամնախընթաց ձախողանքին եւ ամբողջական բնաջնջումին, որովհետեւ «Սասունի բոլոր դիրքերն ալ, ԵՕԹԸ ԱՄՍՈՒԱՆ ԿԱՏԱՂԻ ԿՈՒԻՒՆԵՐԻ ԿԵՐՁ, գերագանց ուժի առջեւ, ՍԿԱՄԵ ԷԻՆ ՏԵՂԻ ՏԱԼ» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները» (հատոր է., էջ 79) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ո՛ւր կրնանք սեղմելով տեղաւորել (Squeeze) այս «ԵՕՔԸ ամսուան» ժամանակամիջոցը :

Ռուբէն՝ Սասուն խոյս տուեր է 1915 Փետրուար ամսուան կէսէն առաջ (ըստ կարօ Սասունիի յայտարարութեան, Փետրուար 10-ին. տեսնել «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 772), Գոմսի դէպքէն յետոյ :

Ա՛րդ, Փետրուար ամսուան կէսէն մինչեւ Յուլիս ամսուան կէսը կ'ընէ ՀԻՆԳ ԱՄԻՍ, որու տեւողութեան ընթացքին, քրդական պարբերական յարձակումներ տեղի կ'ունենային Սասունի վրայ՝ թուրք կառավարութեան թելադրութեամբ ու քաջալերանքով, ինչպէս յիշեցինք ասկէ առաջ ալ :

Ասոնք «կատաղի կռիւներ» ԶԵՆ ԵՂԱԾ, այլ Մուշի կառավարչին կողմանէ յղացուած եւ գործադրութեան զրուած դաւադիր միջոց մը՝ Սասունարնակներու ուշադրութիւնը Մուշ քաղաքէն եւ Մշոյ Դաշտէն ՈՒՐԻՇ ԿՈՂՄ դարձնելու, անոնց ուղղամիտքը յումպէտս սպառել տալու եւ յարձակում գործող ընչաքաղց քուրդներու համար ալ՝ իրենց շատ սիրելի կողոպուտ ապահովելու նպատակով սարքուած քրդական արուեստական ընդհարումներ :

Սասունցի նորատեսակ «պատմիչները», այս մալոքեցուցիչ

յայտարարութեամբ՝ այն ՍեԱԼ տպաւորութիւնը կ'ՈՒԶԵՆ ՍՏԵՂ-ԾԵԼ որ այդ «ԳԵՐԱԶԱՆՑ ՈՒԺԵՐՈՒՆ» դիմադրելու շրջանը «ԵՕԹԸ ԱՄԻՍ» տեւած է, ինչ որ բացարձակապէս ա՛յ թէ սխալ, այլ ՍՈՒՏ է :

Թշնամին, այսինքն, թուրք կառավարութիւնը, «ԳԵՐԱԶԱՆՑ ՈՒԺԵՐՈՒՎ», Սասունի դէմ ճակատ յարդարելու իր պատրաստութիւնները լրացուցած է Յուլիս ամսոյ 19-ին, Մուշ քաղաքի անկումէն 19 օր ետք, եւ յաջորդ առտուն կանուխ, ՅՈՒԼԻՍ 20-ին է՛ր ՄԻԱՅՆ որ «գերագանց ուժերով» սկսած են Սասունի «կատաղի կռիւները», որոնց հազիւ երեք ՕՐ ԿՐՑԱԾ են ԴԻՄԱՆԱԼ Սասունցիները եւ Սասունարնակ մեր ուժերը :

Սասունցի Մուշեղ, «Ռուբէնի գլխաւորութեամբ, Սասունի ԵՕՔԸ-նամսայ Հերասամարտ»ի թուականը կը դնէ «1915 Մարտէն-Օգոստոս» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», հատոր է., «Սասունցի Մուշեղի Յուշերը», էջ 65), որ նորէն ԵՕԹԸ ԱՄԻՍ Զ՛ԷՆԵՐ (հասարակ ամսաշաբօն ալ ընել չէր դիտեր, արդեօք, այդ Սասունցի «Պատմիչը») :

Մոլորեցուցիչ նենգ դիտաւորութեամբ է որ ան կ'ընէ այսպիսի սխալ ցուցմունք մը, երբ ՔԱԶ ԳԻՏԷՐ Թէ Յուլիս 22-23-ի գիշերն էր որ Ռուբէն եւ իր 10-15 Սասունցի մանկալիկները (ինքն ալ մէջը ըլլալով), կծիկ դնելով՝ ՅԱՆԿԱՐԾ ԱՆՅԱՑՏԱՑԵՐ են Անդոկ լեռան գագաթէն, հո՛ն, Անդոկի գագաթին վրայ եւ անոր շուրջն ու բոլորը թողալով դեռ օրհասական պայքար մղող մարտիկները եւ սարսափահար ժողովուրդը որ դիմակալէին իրենց դա՛ուն, շա՛տ դաուն ճակատագիրը, եւ իՐԵՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ձեգեՐՈՎ ու ՆԱԽԱ-ԶԵՆՆՈՒԹԵԱՄԲ ԱԼ՝ փորձէին դուրս գալ այդ գառագեղէն եւ ջանային փրկել ի՛նչ որ կրնային, ինչքան որ կրնային... :

Եւ արդէն, բան մըն ալ ԶԿՐՑԱ՛Ն ՓՐԿԵԼ, դժբախտաբար :



ԳԼՈՒԽ ԺԱ.

«ԱՐԾԱՒԱՆՔԸ» ԿԸ ՁԱԽՈՂԻ

Գ.— 1915-ի Յունիս ամիսն էր: Բոթեր սկսան գալ նաեւ Մուշ քաղաքէն եւ Մուշի դաշտէն: «Պէտք էր, եթէ հնար էր, Մուշի հասական լուրերը ստուգել տեղն ու տեղը», կը գրէ Ռուբէն («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 79): Առաջին օրը, «ասկարները» շատուցեալ են եղեր «մեր դիրքերի առաջ... բայց թէ հանգիստ են, փորձ չեն անէ մեր վրայ հիւշում անելու» (նոյն, անդ)(1):

Կէսօրին, «թոփի ձայներ» լսեր են եղեր, «չա՛տ խորունկ, կարծես գուրի մէջէն», կա՛մ, հեռուները գտնուող «Քոստրի (այսինքն՝ Քոստըր, Մնթ. Ա. Տ.) լեռների կողմերէն» (նոյն, անդ):

Եւ Կուրտիկի «դիրքերու մէջ» գտնուող Սասունցի մարտիկները կը լծուին գործի: Կէս գիշերին, թրքական «խրամներ» ու մէջ «ճատրտուն» կար, ինչպէս «կրակի վրայ աղ լեցնես» նկարագեղ բացատրութեամբ (նոյն, էջ 80): Եւ ժամը երեքին, «հրացանի ձայները դադրեցան: Այդ նշան էր որ եթէ մեր խրամ մտնողները չէին բնաջնջուած, զօրքը, ուրեմն, խուճապի էր մատնուած եւ կը փախէր» (նոյն, էջ 81): [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Իսկ ժամը չորսին, երբ արշալոյսը բացուելու վրայ էր, «աստիկ կռուի ձայն կար հովիտի միջին», ուրկէ լուր կու գայ եղեր որ Սասունցիներու այդ արշալուսումը «ընկած» է եղեր «Բերդու Թաղի, Մուշեղայ բերդի, Սաչքու թրքական դիրքերի կրակի տակ» (նոյն, անդ), առանց յստակ ընելու թէ ի՞նչ տեսակ կրակ էր այդ — հրացանի՞ կրակ, գնդացիի՞ կրակ, թէ թնդանօթի կրակ:

Նկատի առնելով անունները այդ յիշուած դիրքերուն, —

(1) Եւ Կարօ Սասունին ալ յերիւրածոյ պատմառ մը հնարած է՝ ցոյց տալու համար թէ ինչո՞ւ այդ «ասկեար»ները «փորձ չեն անէ մեր վրայ հիւշում անելու», որովհետեւ — կը գառանցէ Սասունցի «պատմագիրը», — «Այս գործերը Սասուն մտնելու եւ լայն գործադուրքիւններ կատարելու հրահանգը չունէին» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 958):

«Բերդու Թաղ», «Սաչքու Դուրան», — ուր զետեղուած էին թրքական թնդանօթները, մենք կրնանք կարդալ Ռուբէնի միտքը եւ վըտահօրէն ըսել որ ան թՈՒԻՔ ԹՆԴԱՆՕԹՆԵՐՈՒՆ ԿՄԱՆԱՐԿԷ, երբ կը խօսի «թրքական դիրքերի կրակի» մասին:

Եւ այդ թնդանօթներու «կրակի տակ ընկած» Սասունցիներու արշալուսումը «առաջ գնալու ո՛չ մի հնար չունի» եղեր, եւ հարկադրուած, իբր «յետնապահ», կուրտիկ՝ նահանջներ է եղեր դէպի Կուրտիկ լեռան բարձունքները՝ իրեն հետ բերելով «Տափէի ամբողջ ժողովուրդը» իբրեւ «գերի» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* * *

Արդ, ի՞նչ «հակասական լուրեր» էին, զոր Ռուբէն կ'ուզէր «ստուգել» տեղն ու տեղը, այսինքն, տեղւոյն վրայ, Մուշ քաղաքին մէջ:

Ի՛նք՝ ամենէն հաւաստի եւ ամենէն ճշգրիտ լուրերն Ռուբէն ԱՐԴԷՆ՝ Մուշ քաղաքի մէջ տիրող՝ իրապէս ծայր աստիճան յուսահատական կացութեան մասին, երբ Յունիս 27-ի Շարաթ գիշերը, Հաջի Յակոբի հրամանով եւ կարգադրութեամբ, քաղաքէն դուրս գալու եւ Սասուն բարձրանալու կաղձ ու պատրաստ եղող՝ քաղաքի մէջ թակարդուած, զինեալ ու անզէն երիտասարդութեան առաջին մեկնող խումբը ընդհարում կ'ունենար Կողի Թաղի հայոց գերեզմանոցէն վեր, քաղաքը պաշարող թուրք զինուորներու հետ: Այս առաջին խումբին մեծ մասը կը հարկադրուէր ետ, դէպի քաղաք վերադառնալու, իսկ մէկ պզտիկ մասը՝ առաջնորդութեամբ Մուխսի Փարհատի Յարոյի եւ Հրանդ Հլղաթեանի, պաշարման գիծը ճեղքելով՝ Սասուն կը բարձրանար եւ ՌԻՂՎԱԿԻ Ռուբէնի քով կ'երթար, ձԻՇԴ ՌԻ ձԻՇԴ ԱՅՆ ՊԱՀՈՒՆ, երբ «Սեմալ գիւղի եզրին, խոշոր ծառի մը տակ» (Վահան Փափագեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 362) հաւաքուած էին Ռուբէն, Վահան Փափագեան, Կորիւն, Մջօն, Լւայլն, յարձակողական եւ պաշտպանողական ծրագիր ու գործելակերպ որոշելու համար(2):

(2) Հակառակ որ Վահան Փափագեան, ինք եւս, անձամբ ներկայ եղած է Սեմալ գիւղի այդ խորհրդակցական ժողովին եւ իր ականջներով իսկ լՍԱԾ՝ քաղաքէն դեռ նոր ժամանող վերոյիշեալ

Քաղաքէն փախուստ տուող այս նորեկ երիտասարդները, բընականաբար, «պարոն»ներուն մանրամասնօրէն ՊԱՏՄԱԾ կ'ըլլային թուրք կառավարիչին կողմէ՝ Աղզային Առաջնորդարան զրկուած նոր հրամանագիր-վերջնագիրի մասին, որու տրամադրութեան համաձայն, 15-70 տարեկան քաղաքաբնակ բոլոր տղամարդիկ պէտք էր արձանագրուէին՝ 24 ժամուան ընթացքին, «Ուրֆա զրկուելու համար»։ այդ առիթով՝ Առաջնորդարանի մէջ գումարուած համաժողովրդական խորհրդակցական ժողովի մասին, հոն տեղի ունեցած թեր ու դէմ վիճարանութեանց մասին, թուրք կառավարութեան յանձնուելու յօժարող եւ պատրաստուող Առաջնորդական Տեղապահ Վարդան Վարդապետի եւ անոր հետեւորդներու՝ յանձնուելու տրամադրութեանց մասին, Հաջի Յակոբի եւ Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէկանի՝ այս յանձնուելու տրամադրութեանց դէմ յարուցած առարկութեանց եւ դիմադրութիւն կազմակերպելու հակառաջարկի մասին, Տեղապահ Վարդան Վարդապետի ցոյց տուած դժկամակութեանց մասին, որմէ յետոյ ալ, երիտասարդ ուժերը առնելով Սասուն բարձրանալու՝ Հաջի Յակոբի որոշումի եւ ծրագրի մասին, մեկնող առաջին խումբին՝ քաղաքը պաշարող թուրք զօրքերու հետ ունեցած ընդհարումի, եւ երիտասարդներու մեծամասնութեան՝ ետ, դէպի քաղաք վերադառնալու մասին, ինչպէս նաեւ՝ քաղաքի տագնապակոծ Հայութեան ծայր աստիճան յուսահատական կացութեան մասին, եւ ինչ որ ամենէն կարեւորն է, Սասունէն ակնկալուելիք ԱՆՄԻՋԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝ Հաջի Յակոբի ՍՆՈՒՑԱԾ արդար, բայց ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔՈՎ ՄԹԱԳՆՈՂ ակնկալութեանց մասին (Այս կէտը աւելի մանրամասնօրէն քննարկուած է այս ուսումնասիրութեան ԻԱ. եւ ԻԲ. Գլուխներուն մէջ)։

Այս բոլոր իրողութեանց մասին՝ ԽԻՍ ՀԱԻԱՍՏԻ ՏԵՂԵԿՈՒ-

երիտասարդներու տուած բերանացի տեղեկութիւնները՝ Քաղաքի յոյժ տագնապալի եւ յուսահատական կացութեան մասին, կը յանդրգնի հետեւեալ ցախադասութիւնը սպրդեցնել իր յուշերու մէջ թէ «Մուշէն ալ լուր չունէինք» («Իմ Յուշերը», Բ., էջ 376), կարծես թէ իր այս սուտ յայտարարութեամբ ՎԱԻԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ Ռուբէնի այն՝ նոյնքան սուտ յայտարարութիւնը թէ «պէտք էր, եթէ հնար էր, Մուշի հակասական լուրերը ՍՏՈՒԳԵԼ տեղնուտեղը» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 79), հաւանաբար այն չարանեմօ տրամարանութեամբ թէ թիւ մէկ սուտ, առաւել թիւ երկու սուտ, հաւասար՝ ճշմարտութիւն (Թիւ Մէկ Սուտ + Թիւ Երկու Սուտ = ճշմարտութիւն)։

ԹԻԻՆՆԵՐ՝ ունենալէն յետոյ, նայեցէ՛ք համարձակութեանը այս «ընտրելագոյններու ընտրելագոյն»ին, որ կը յանդգնի յայտարարելու, — բայց մի՛ մոռնաք, այդ տխուր թուականէն 35 տարի անցնելէն յետոյ միայն, — եւ իր «Յիշատակներ»ու մէջ ալ՝ ճերմակին վրայ սեւ տառերով տպել տալու թէ «պէտք էր, եթէ հնար էր, Մուշի հակասական լուրերը ստուգել տեղն ու տեղը» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 79) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]։

Յետոյ, անբնական, հետեւաբար՝ յերիւրածոյ եւ ծիծաղելի է յայտարարել թէ Սասունցի «արշաւող»ներու այդ խումբը, վար, «հովիտի միջին», այսինքն, քաղաքի հարաւակողմը երկնցող անդընդախոր ձորին մէջ, «ընկեր է Բերդու Թաղի, Մուշեղայ Բերդի, Սաչքու (այսինքն՝ Սաչքի Դուրանի, Ծնթ. Ա. Տ.) թրքական դիրքերի կրակի տակ», (նոյն, էջ 81)։

Ի՞նչպէս կարելի է այդ տեսակ ոմբակոծութիւն մը — ա՛յն ալ՝ գիշերուան ընթացքին, երբ թրքական թնդանօթները ՁԻՆ ԳՈՐԾԵՐ, ըստ վկայութեանց Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէկանի («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 397 եւ 407) եւ Երւանդ Շարաֆեանի («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 27), — երբ ցերեկ ատեն ալ, այդ խորունկ ձորին մէջ որեւէ բան ՁԻՐ ՆՇՄԱՐՈՒԵՐ՝ դիրքերէն Բերդի Թաղի եւ նոյնիսկ Սաչքի Դուրանի թնդանօթներուն, որոնք ՄԻԱՑՆ ՔԱՂԱՔԸ կ'ՆԱՅԻՆ ՌՄԲԱԿՈՄԵԼ իրենց խիստ յարմար դիրքերէն եւ ո՛չ թէ այդ ԱՆԴՆԴԱՆՈՐ ՁՈՐԸ, որ դարձադարձիկ բլուրներու ետեւ ծածկուած, անտեսանելի էր թուրք թնդանօթներէն, եւ անհասանելի՝ այդ նոյն թնդանօթներու ուղիներուն, իսկ «Մուշեղաբերդի» վրայ (այս ակնարկութիւնը՝ Ամարանոց Մուշեղաբերդին համար է եւ անոր միայն կը պատշաճի) ԹՆԻԱՆՕԹ ՉԿԱՐ ՁԵՏԵՂՈՒԱԾ։

Իսկ եթէ «Մուշեղաբերդ» ըսելով, Ռուբէն ի մտի ունէր քաղաքի մէջ գտնուող Ձմերանոց Մուշեղաբերդը, զայն արդէն իսկ յիշած էր իր հիմակուան անունով — «Բերդու Թաղ» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 81), որ տեղէն ալ՝ բացարձակապէս ԱՆՀՆԱՐ ԷՐ ՌՄԲԱԿՈՄԵԼ այդ խորունկ ձորը՝ իյնալով ՏԵՍՈՂՈՒԹԵՆԷ ԴՈՒՐՍ եւ ՀԱՍՈՂՈՒԹԵՆԷ ՀՆՌՈՒ, Արջըլոր բրգաբլուրին ետեւ։

Եւ ամենէն պանծալին(?), զոր իբրեւ մեծ յաղթանակ կ'աւետէ Ռուբէն, այն հերոսավայել(?) արարքն է, ըստ որում՝ «արշաւող» Սասունցիներու այս խումբը, իր նահանջի ճամբուն վրայ, «գերի» կը բերէր «Տափէի ամբողջ ժողովուրդը» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]։

Եւ դիտէ՞ք, սիրելի՛ ընթերցողներ, Ռուբէնի այս «Տափէ» կոչածը, Մուշ քաղաքի հարաւային կողմը երկնցող խորունկ ձորին մէջ, հազիւ 5-10 տնուոր, աղքատ ու թշուառ հայ եւ քուրդ բնակչութիւն ունեցող աւան մըն էր՝ Տափքի անունով, քաղաքէն 2-3 մղոն հեռու:

Ահա՛. այս աւանի «ամբողջ ժողովուրդն» էր որ «դերի» բեւրած էին Սասունցի «արշաւողները». «յաղթանակ» մը՝ համա-հաւասար Պանասորեան մե՛նծ յաղթանակին կարգը դասելու...:

* * *

Ամփոփելով, ԴՐԱԿԱՆԱՊԷՍ կը յայտարարենք որ որեւէ ատեն, քրքական իրամային գօտիներ ԳՈՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱԾ ՁԵՆ Կուրտիկի լեռնալանջերու վրայ, եւ ո՛չ ալ՝ ԹՈՒՐԳ ՁԻՆՈՒՈՐՆԵՐ ԳՏՆՈՒԱԾ այդ կողմերը, բացայայտօրէն պարզ այն պատճառով որ թուրք կառավարութիւնը ի վիճակի չէր այդ տեսակ ՊԵՐՃԱՆՔԻ ՄԸ: Անոր ամբողջ եւ միակ մտահոգութիւնը, այդ ԴժՆՒԱԿ ՕՐԵՐՈՒՆ ՄԱՆԱԻԱՆՒ, ուսական արշաւող բանակի յառաջխաղացումը ԿԱՍԵՑՆԵԼՆ ԷՐ, յառաջխաղացք, որուն ալիքները արդէն հասեր էին Մշոյ Դաշտի հիւսիսային-արեւելեան կողմը գտնուող Բոսուրայ լեռները, 8-10 ժամ միայն հեռու Մուշ քաղաքէն:

Դեռ պիտի խօսինք այս խնդրոյն մասին, ներկայացնելէ յետոյ Սասունցի Մուշեղի եւ Կարօ Սասունի լորձնաչուրթն թութակարանութիւնները:



Գ Լ ՈՒ Խ Ժ Բ .

ՍԱՍՈՒՆՑԻ ՄՈՒԹԵՂԻ ՊԱՏՄԱԾՆԵՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Հակառակ մեր բաղձանքին, չեմք կրնար քիչ մը չգրադիլ Սասունցի Մուշեղի տուած «պատմութեամբ» եւ աւելի՛ ուշադրութեամբ՝ միւս Սասունցիի (Կարօ Սասունի) խմբագրած «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» հաստատիր Երկասիրութեամբ, զորս ՆԿԱՏԵԼՈՒ ԶԷ պատմական ԼՈՒՐՁ ԳՈՐԾԵՐ:

Անոնք լեցուն են մեծ շփոթութիւններով, թուական անճշդութիւններով, սխալ կամ յերիւրածոյ տեղեկութիւններով, ափսափոյ ընդհանրացումներով, անճիշդ պատկերացումներով, եւ մանաւանդ ու մասնաւորապէս՝ կամաւոր եւ դիտումնաւոր խեղաթիւրումներով, որոնց մէջ մէկ ընդհանուր ձգտում նշմարելի է — կարմիր թելի մը պէս, — ՋԱՆԱԼ ՍՐԲԱՑՆԵԼ իրենց անտարբ կուռքը, աններելի ու անբաւելի յանցանքներով ծանրաբեռնեալ Ռուբէն «փաշա»ն, եւ զայն ներկայացնել իբրեւ տիպար գիւնուր, անճնազոն զեկավար, կարող առաջնորդ, ժողովուրդը սիրող եւ անոր համար՝ ամէն ինչ, նոյնիսկ իր քանկագին կեանքը ՍԻՐԱՑՕԺԱՐ ՋՈՀԱԲԵՐՈՂ յեղափոխական հրամանատար...:

Սասունցի Մուշեղի պատումին հետեւեալ մէկ քանի կէտերը, հարեւանցի քննարկով մը, ճշդելէ յետոյ, պիտի անցնինք մեր բուն նիւթին, որ է «Կիսա-կամարածեւ պաշարում»ի եւ «Ճըռտոնայ»ի՝ Սասունցի Մուշեղեան եւ Կարօ Սասունիական պատումներու քննութիւնը:

1. — Ռուբէնի «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները» յուշերու է. հատորի 72-րդ էջին վրայ, Սասունցի Մուշեղ կը պատմէ. —

«Մշոյ Դաշտէն (Սասուն) հասնող փախստականները ծանր լուրեր ունէին միշտ: Կացութիւնը այնտեղ ողբերգական էր: ՆԱՀԱՆՋԷՆ ՎԵՐՁ, բոլոր հայկական գիւղերը ՊԱՇԱՐՄԱՆ ՏԱԿ ԱՌՆՈՒԱԾ ԷԻՆ» (Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.):

Պատմական շատ կոպիտ սխալ մըն է այս յայտարարութիւնը՝ կանխակալ նենգ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆ մը արդարացնելու դիտաւորութեամբ եւ ԳԻՏԱԿԻՑ ԶԱՐԱՄՏՈՒԹԵԱՄԲ գործուած:

Այս ծանրակշիռ ամբաստանութիւնը կ'ընենք՝ յենլով հետեւեալ խիստ բացայայտ պատմական փաստերու վրայ :

Պատմական անհերքելի իրողութիւն է որ Մշոյ Դաշտի հարիւր հազարաւոր Հայութիւնը ՀՐԱԿԷՁ ԲՆԱՋՆՁՈՒՄԻ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԻ մէկ օրուան մէջ, — 1915 Յունիս 28-ին, Վարդավառի կիրակի օրուան ընթացքին : Այդ օրէն ՎԵՐՁ դաշտի հայկական բոլոր գիւղերը ամառի էին ու աւերակ, եւ այսքան բան ՇԱՏ ԼԱԻ ԳԻՏԷՐ կամ ՊԷՏՔ ԷՐ ԳԻՏՆԱՐ Սասունցի այս խմբապետ «պատմիչը», որ այդ ատեն Սասուն կը գտնուէր, Ռուբէնի քով :

Ան ՊԷՏՔ ԷՐ նաեւ ԳԻՏՆԱՐ որ ռուսական արուեստական նահանջը, որ ծանօթ է Յուլիսեան Մեծ Նահանջ անունով, կատարուած է Յուլիս 11-18-ի շարքուան ընթացքին, բոլոր ճակատներու վրայ, ինչպէս նաեւ Մշոյ Դաշտէն ալ, որ արդէն հասած էին ռուսական հետախուզիչ յառաջապահները(1), այսինքն, Մշոյ Դաշտի հայութեան բնաջնջումէն 10-15 օր յետոյ :

Սասունցի Մուշեղ, սակայն, կանխակալ նենգ դիտարութեամբ մը, ԿԸ ՓՈՐՁԷ ՇՐՁԵԼ պատմական դէպքերու կարգը՝ արդարացնելու համար իր հետապնդած ՅԵՏԻՆ ՆՊԱՏԱԿԸ, որ էր ցոյց տալ թէ Ռուբէն եւ իր Սասունարնակ Ֆեղայիները ի՞նչպէս պիտի կարողանային, իրենց սահմանափակ ուժերով ու կարելիութիւններով, օգնութեան փութալ «ՊԱՇԱՐՈՒՄԻ ՏԱԿ ԱՌՆՈՒԱԾ» Մշոյ Դաշտի հարիւրաւոր հայաբնակ գիւղերուն, երբ ռուսական բանակները ԱՐԴԷՆ նահանջած էին եւ անոնցմէ ակնկալուած օգնութեան եւ փրկութեան յոյսը յօդս ցնդած էր...

Աններելի սխալ եւ նոյնքան աններելի յանցանք է, ուրեմն, յայտարարել թէ «ՆԱՀԱՆՁԷՆ ՎԵՐՁ, բոլոր հայկական գիւղերը պաշարման տակ առնուած էին» այնպիսի պահու մը, երբ Տարօնի Հայութեան ԵՄՈՅՇ ՄՆԱԳԱՄ ԶԷՐ ՄՆԱՑԱԾ ամբողջ դաշտի լայնատարած սահմաններուն մէջ :

(1) Կարօ Սասունի կը յայտնէ որ ռուսական յառաջապահները, Յուլիս 16-ին, հասեր են Մշոյ Դաշտի Մկրագոմ գիւղը, որ քաղաքէն հարիւ երկու ժամ հեռու կը գտնուէր, Մեղրագետի ափին («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 992) :

Վահան Փափագեան եւս կը նկարագրէ այդ յառաջապահներու՝ Մկրագոմ հասնիլը, գիւղի աւերակ տուներուն մէջ հետախուզութիւններ կատարելը եւ վերադառնալը՝ առանց յիշելու թուակառնը, ըստ իր բարի սովորութեան («Իմ Յուշերը», Բ., էջ 381-382) :

2.— Նոյնքան մեծ եւ աւելի մոլորեցուցիչ սխալ մըն է Սասունցի Մուշեղի այն հաւաստումը թէ «Կոիւներ կային շարք մը գիւղերու մէջ» : Այս կերպով, Սասուն եւ Տարօնի կոիւները ԸՆԴԱՐՁԱԿ ՇՐՁԱՆԱԿ ՄԸ կ'ընդգրկէին (նոյն, անդ) [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.] :

Յուշագիրի չարամտութիւնը եւ մասնաւորապէս ՆԵՆԳԱՄՏՈՒԹԻՒՆԸ իրենց գազաքնակտիւն կը հասնին հոս, երբ այսպիսի մոլորեցուցիչ յայտարարութեամբ մը՝ այդ չքնաղ «պատմիչը» կը փորձէ այն սխալ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՁԳԵԼ ընթերցողին վրայ թէ Դաշտի «չարք մը» գիւղերու մէջ (ընդամէնը՝ ԵՐԵՔ ԳԻՒՂԵՐ — Կառնեն, Ալիջան եւ Աւրան, իսկ մահէն ճողոպրածներու խումբ մըն ալ՝ Սուրբ Կարապետի անտառին մէջ) ցոյց տրուած կատաղի ընդդիմութիւնը (Չարդարար չեթէներուն), եւ Սասունի կոիւները՝ մէկ հասարակաց յայտարարի վրայ էին դրուած. այսինքն, Տարօնի եւ Սասունի կոիւները, ԲՈՒՈՐՆ ԱԼ, հրամանատար Ռուբէնի գիտութեամբ, հաւանութեամբ եւ հրահանգներով տեղի կ'ունենային :

Մինչդեռ, խիստ ցաւալի իրողութիւնը ճիշդ ու ճիշդ հակառակն է ատոր. այսինքն, Ռուբէն՝ Սասուն խոյս տալէն ՅԵՏՈՅ, ո՛չ միայն ԱՄԲՈՂՁՈՎԻՆ մոռացութեան տուաւ դաշտի եւ քաղաքի հայութեան առաջնորդութեան, ղեկավարութեան եւ պաշտպանութեան իր ստանձնած պաշտօնն ու պարտականութիւնը, ԱՅԼԵԻ ԿԱԶՄԱԼՈՒԾԵՑ ԵՒ ՔԱՅՔԱՅԵՑ անոնց ինքնապաշտպանութեան ու դիմադրութեան ԲՈՒՈՐ ՀՆԱՐԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ամէն ինչ՝ Սասուն փոխադրել տալով :

Նոյնիսկ Վահան Փափագեան ԿԸ ՎԿԱՅԷ այդ բացայայտ իրողութեան եւ նշարտութեան, երբ կը գրէ —

ա.— «Անտէր ու անգլուխ էր մնացեր մեր ժողովուրդը : Սասուն բարձրացած ընկերները այլեւս կտրուեցան դաշտէն, թէեւ կրնային հարկաւ հին օրերու պէս՝ իջնել, շրջագայիլ, կազմակերպել եւ ոգի ներշնչել» («Իմ Յուշերը», Բ., էջ 343) :

բ.— «Դաշտի գիւղերը ձգուած էին իրենց ճակատագրին» (նոյն, էջ 359) :

գ.— Գոնէ կրնայինք երբեմն դաշտ իջնել եւ օգտակար ըլլալ ժողովուրդին, յուսահատ այդ օրերուն, ուժ ներշնչելով եւ քիչ թէ շատ կազմակերպելով» (նոյն, էջ 360) :

դ.— «Թշնամին բողբոջ(2) որ դաշտի զինուած ուժերը դուրս հանենք ու կեդրոնանանք Սասնոյ կղզիացած պատիկ տարածութեան

(2) Թշնամին ո՛չ միայն թողուց, այլ նաեւ ՔԱԶԱԼ ԵՐԵՑ :

վրայ, որուն երեք կողմերը քուրդ բնակչութիւնն էր եւ միայն դաշտի կողմը բաց էր մեզ համար. թշնամին ՕԳՏՈՒՆԵԼՈՎ ուրեմն այս պայմաններէն, քնացնցեց ժողովուրդը» (նոյն, էջ 365):

Ե. — (Դաշտի զիւղերու) «Այս դիմադրութիւնները, դժբախտաբար, անջատ էին իրարմէ եւ ո՛չ-միացած ու ամբողջական. Քըշնամին ԱՆՁԱՏՕՐԷՆ ԱԼ ԸՆԿՁՆՑ ԶԱՆՈՆՔ» (նոյն, էջ 378) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Տարօնի դարավերջիկ «պատմագիր» Կարօ Սասունին անգամ Կ'ԸՆԴՈՒՆԻ այս բացայայտ եւ բացարձակ ճշմարտութիւնը, երբ կը գրէ —

«Այսպէս, ԱՆԿԱՆ ԻՐԱՐՄԷ, կոիւներ կը պայթէին Ալիջանի, Աւրանի, Ս. Կարապետի եւ Վարդենիսի շրջաններուն մէջ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 846) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Հարկ կա՞յ, այլեւս, ուրիշ բացատրութեան:



ՍԱՍՈՒՆՑԻ ՄՈՒՇԵՂ

3. — Սասունցի Մուշեղ կը պատմէ. —

«Նոյն օրերուն (այսինքն, Մուշ քաղաքի գոյամարտի օրերուն, Յունիս 29-30-ին, Ծնթ. Ա. Տ.), Սասուն կը հասնի նաեւ յայտնի խմբապետ Մջօն, որ Առաքելոց վանքի մէջ բուռն կոիւներ կ'ունեն-



Առաքելոց վանքը (Հարաւային կողմէ նկարուած)

նայ: Սերվէթի ոստիկանները կը հետապնդեն(3) Մջոյի, Պուլէհան երկու եղբայրներուն՝ Արշակի եւ Պօղոսի խումբերը(4): Կոիւր կ'ըլլայ սաստիկ: Ոստիկանապետը կը սպաննուի եւ խումբերը կը յա-

(3) Ո՛չ միայն «հետապնդում» չէ եղած, այլ նոյնիսկ կառավարիչ Սերվէթ Բէյ, շուարած ու սարսափած Մջոյի ութսուն հոգիանոց սպառազէն խումբի այս անակնկալ պոռթկումէն, քնաւ ՉՓՈՐ-ՉՆՑ գօրք զրկել ու «հետապնդել» այս ապստամբները, եւ մինչեւ անգամ՝ չհամարձակեցաւ մարդ զրկել Առաքելոց վանքը՝ սպաննուած թուրք զինուորներու դիակները ֆազաֆ փոխադրել տալու համար: Մջոյի խումբին՝ վանքէն մեկնելէն ՅԵՏՈՅ միայն, կը հրահանգուի վանքին մօտակայ Արազ գիւղի հայերուն՝ «չեհիտ»ներու դիակները փոխադրել իրենց գիւղը, անկէ ալ՝ ֆազաֆ, ուր կատրած ու գազազած կառավարիչը հայատեաց եւ արիւնոռուշտ դամբանական մը արտասաներ է իր բարեկամ ժամտարմայի սպայ, «չեհիտ» Մեհմէտ Էֆէնդիի դիակին վրայ (այդ մասին կարդալ Մ. Բդեեանի «Հարազատ Պատմութիւն Տարօնայ», էջ 323-324):

(4) Այս նախադասութենէն՝ ընթերցողը այն սպաւորութիւնը կ'ունենայ որ Մջօն եւ «Պուլէհան երկու եղբայրները, Արշակ եւ Պօղոս» ազգականական որեւէ կապ չունէին իրարու հետ, մինչդեռ երեքն ալ — Մջօն, Արշակ եւ Պօղոս, — եղբայրներ էին եւ միասնաբար ապստամբած Առաքելոց վանքը՝ իրենց զինեալ խումբով:

Ղողին ազատի» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», է. 5, էջ 73) [Ռուրը ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Մեր բոլոր յուշագիրները, — մէջն ըլլալով նաեւ Վահան Փափազեան, — Առաքելոց Վանքի դէպքը կը դնեն 1915 Փետրուար ամսոյ մէջ, բացառելով Յուշագիր Միսակ Բդէեանը, որ Առաքելոց Վանքի դէպքը կը դնէ Մարտ ամսուան մէջ :

Պոլէեան Մջօն, իր երկու եղբայրներ Արշակի եւ Պողոսի հետ, ութսուն հոգինոց սպառազէն խումբով մը, Փետրուար 13-ին, կ'ապաստանի Առաքելոց Վանքը, իրրեւ բողոքի ցոյց՝ կառավարելի աշտու ընթացքին դէմ, եւ ՕՐ ՄԸ ՄԻԱՅՆ հոն մնալէն յետոյ, որ ատեն կը սպաննուին ժանտարմայի սպայ (եւ ո՛չ թէ «նստիկանապետ») Մեհմէտ Էֆէնտին եւ քանի մը զինուորներ, Մջօն Սասուն կը բարձրանայ յաջարդ օրը, Փետրուար 14-ին, իր ութսուն հոգինոց խումբին հետ, անսալով Ազգային Առաջնորդարանի թելադրութեան ու խնդրանքին :

Ա՛րդ, ի՞նչպէս կ'ըլլայ որ Փետրուար ամսոյ կէսին տեղի ունեցած դէպքի մը դերակատարները՝ «ՆՈՅՆ ՕՐԵՐՈՒՆ», այսինքն, Յունիս 29-30-ին, Սասուն կ'ը ՀԱՄՆԻՆ՝ Առաքելոց Վանքին մէջ ՄԷԿ ՕՐ ՄԻԱՅՆ մնալէն յետոյ, երբ ամէն մարդ (Սասունցի Մուշեղ՝ ինքն ալ մէջը ըլլալով) գիտէ որ Առաքելոց Վանքէն մինչեւ Սասուն (Մեմալ գիւղը) ՄԷԿ ՕՐԷՆ ԱԻՆԼԻ ՊԱԿԱՍ ժամանակուան նամբայ է միայն :

4.— Բացայայտօրէն ՍԵԱԼ եւ ԱՆԳՈՅ իրողութեան մը նկարագրութիւնն է որ կը կարդանք «պատմիչ» Սասունցի Մուշեղի յուշերուն մէջ՝ ներկայացուած հետեւեալ նախադասութեամբ.—

«Աւրանի Արամը նոյնպէս իր գիւղին մէջ, ՔԱՆԻ ՄԸ ՕՐ ԿԸՌԻՆԵԼԷ ՎԵՐՁ, Աւրանի ժողովուրդը ՀԵՏԸ ԱՌԱԾ՝ կը հասնի Սասուն» (նոյն, անդ) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Յերիւրանքի եւ սխալ ներկայացումի իրր դասական օրինակ կարելի է ծառայեցնել այդ նախադասութիւնը, որու իւրաքանչիւր բառէն բացարձակ ՍՏՈՒԹԻՒՆ կը գարշահոտի :

Որտեալ բացայայտ պատմական իրողութիւն մըն է որ Մշոյ Դաշտի ամբողջ Հայութիւնը արմատական բնաջնջումի ենթարկուեցաւ, ինչպէս նախապէս ալ կրկնած ենք՝ զանազան առիթներով, ՄԷԿ ՕՐՈՒԱՆ ՄԷՁ ՄԻԱՅՆ — 1915 Յունիս 28-ին, Վարդապատի Կիրակի օրուան ընթացքին : Հետեւաբար, Աւրանցի հերոս Արամը «Քամի մը օր» ԶԷ ԿՈՒՌԱԾ՝ իր ծննդավայր գիւղին մէջ :

Յետոյ, Աւրանցի Արամ՝ ՀՈՆ, իր ծննդավայր գիւղին մէջ ԶԷՐ ԳՏՆՈՒՆԵՐ՝ կոտորածի օրը : Այդ պատուական հերոսը, Գոմս



ԱՐԱՆՑԻ ՀԵՐՈՍ ԱՐԱՍ

գիւղի դէպքին ատեն, Փետրուար 6-7-ին, հոն կը գտնուէր եւ դէպքէն անմիջապէս ետք, Ռուբէն-Կորիւն խումբին հետ՝ Սասուն դացեր էր եւ մինչեւ վերջ ալ՝ հոն մնացեր, ինչպէս կը վկայէ նաեւ Կարօ Սասունի («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 954-955) :

Ամենայն հաւանականութեամբ, հերոս Արամ՝ Սասուն բարձրանալէն ետք, բնաւ չէ՛ վերադարձեր իր հայրենի գիւղը, բայց, մեծ վստահութեամբ կրնանք յայտարարել որ այդ պարտաճանաչ հերոսը, Աւրանի կռիւին ատեն՝ գոնէ, ՀՈՆ ԶԷ ԵՂԱԾ եւ չէ՛ զեկավարած իր ծննդավայր գիւղին միօրեայ գոյամարտը :

Մեր Տարօնցի գրեթէ բոլոր յուշագիրները՝ ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ ՀԱՄԱԶԱՅՆ ԵՆ ԻՐԱՐՈՒ, երբ կը նկարագրեն Աւրանի կռիւը՝ յակնուանէ անուանէ յիշելով գայն զեկավարող հերոսներու անունները : Այսպէս.—

ա.— Յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան կը պատմէ.—

«Ուրիշ դիմադրող գիւղ մըն էր Աւրան, Պարոն Հայկի ղեկավարութեամբ, որ նախապէս գիւղէն դուրս բռնել կուտայ դիրքերը. վերջը, ճնշումի տակ, կը մտնեն գիւղը եւ հուսկ յետոյ՝ եկեղեցին, ուր յետոյ կ'այրին» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», էջ 67) :

բ.— Տարօնի աւագ յուշագիր Միսակ Բղէեան կը գրէ.—

«Աւրան գիւղի մէջ, Տէր Վարդանի տղայ հերոս Հայկի ղեկավարութեամբ, գիւղի երիտասարդութիւնը կը կռուի մինչեւ երեկոյեան եւ թշնամիներուն մեծ կորուստներ տալէն վերջ, հազարաւոր խուժանի գրոհին չկրնայով երկար դիմադրել, կը նահատակուի՝ գիւղի 300 տուննոց բնակչութեան հետ» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 436) :

գ.— Մուշ քաղաքացի պատանի յուշագիր Մուշեղ Գուռնեան կը գրէ.—

«Քուրդերը կը շարունակեն այսպէս թալանել եւ սպաննել, մինչեւ որ կը հասնին Կուրավի, Յիսավի, Աւրան եւ Գոմս գիւղերը :

«Աւրանի մէջ կը հանդիպին դիմադրութեան : ...Կառավարիչը՝ քուրդերու օղնութեան կը զրկէ չեթէ պաշը Տիտոյի Ռաշիզը՝ իր հետեւորդներով, որոնք թաղաւորի անունով՝ ամէն տեսակ խոստումներ կը շտապեն. ոմանք՝ ամէլէ թապուրիի մէջ գինուորագրելու եւ ոմանք ալ՝ առժամեայ տեղափոխութեան ենթարկելու խոստումով՝ կը գրաւեն գիւղը եւ ժողովուրդն ալ մօտակայ Մամնեվանքի մէջ լեցնելով՝ կը վառեն» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 653) :

դ.— Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան ալ կը գրէ.—

«Եթէ բացառութիւն համարուի Աւրան գիւղը, ուր Հայկ Տէր Վարդանեանի եւ ճեմարանաւարտ Մակար Պարախանեանի ղեկավարութեամբ՝ խումբ մը կռուողներ, ամբողջ 6-7 ժամ, հրոսակներու հետ ոգորելէ յետոյ, վերջապէս կը պարտուին» (Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջ 148) :

«Պատմագիր» Կարօ Սասունին անգամ կը վկայէ որ Աւրան գիւղի հերոսական դիմադրութեան ղեկավարներն եղած են Հայկ Տէր Վարդանեան եւ Մակար Պարախանեան :

Այս վերջինը եղբորորդին էր Տարօնի ժողովրդանուէր Առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Պարախանեանին եւ Էջմիածնի Գէորգեան ճեմարանէն չրջանաւարտ :

Ահաւասիկ Կարօ Սասունիի վկայութիւնը.—

«Աւրանի քանի մը փորձառու անձեր, ինչպէս Հայկ Վարդանեան եւ... Մակար Պարախանեան եւ խումբ մը կռուողներ դիրք կը բռնէին գիւղի բարձրագոյն եկեղեցիին բակը եւ տանիքները, ուր կը կռուէին ամբողջ օր մը՝ թշնամիի գերազանց ուժերու դէմ : ...Կռուը տեղի կ'ունենար տունէ տուն : Տեղահանուած ժողովուրդը գիւղի եզերքը կը կոտորուէր. մնացեալները իրենց տուներու մէջ կը փակւէին ու կը դիմադրէին... :

«Մարտական ուժերու վերջին կայանը կը մնար եկեղեցին, որ կը տիրապետէր գիւղին : Այստեղ կռուեցան մինչեւ երեկոյեան կողմը եւ երբ վերջին հերոսն ալ ինկաւ, եկեղեցին լռեց՝ աւերակի մը պէս :

«... Հերոսական դիմադրութիւն մը՝ մինչեւ վերջին մարդը» : («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 923-924) :

Այս բոլոր արժանահաւատ վկայութիւնները երեք բան կ'պացուցանեն.—

Ա.— Աւրան գիւղի հերոսական դիմադրութեան ատեն, Աւրանցի Արամ հոն չէր գտնուեր, հետեւաբար՝ ան չէր որ ղեկավարած էր այդ դիմադրութիւնը :

Բ.— Աւրանի հերոսական ժողովուրդը կռուած ու ցաւատակւած է իր հայրենի գիւղին մէջ, որու աւերակներուն տակ ալ թաղւած են իր սրբացած ամիւնները.

Գ.— Աւրան գիւղի կռուը տեւած է Մէկ Օր միայն — Վարդավառի Կիրակի օրը, Յունիս 28, 1915, Մշոյ Դաշտի համատարած կոտորածին օրը :

Հետեւաբար, պարզ առասպել է Սասունցի Մուշեղի տուած պատմութիւնը թէ, — նորէն կրկնենք, — «Աւրանցի Արամ նոյնպէս իր գիւղին մէջ, ՔԱՆԻ ՄԸ ՕՐ կռուելէ վերջ, Աւրանի ժողովուրդը ՀԵՏԸ ԱՌԱԾ, կը հասնի Սասուն» :

Այս քանի մը ճշդումներն ըրինք՝ պարզապէս ցոյց տալու համար Սասունցի Մուշեղի ինչ աստիճանի ստուգապատում եւ արժանահաւատ «պատմիչ» մը ըլլալը :



Գ Լ ՈՒ Խ Ժ Գ .

ՍԱՍՈՒՆՑԻ ՄՈՒԾԵՂ՝ ՌՈՒԲԵՆԸ ԿԸ ՂՐԿԵ ՄՈՒԾ ՔԱՂԱՔԻ «ՕԳՆՈՒԹԵԱՆ»

Սասունցի Մուշեղ կը պատմէ .—

«Ռուբէն երբ իմացաւ Մշոյ կոիւններու մասին, որոշեց օգնութեան հասնիլ, հակառակ բոլորիս թախանձանքին որ ինքը մնայ Սասուն. դուրսը անցաւ Փեթարայ Մանուկի, Գելիէգուզանցի Յովսէփի, Ալեանցի Միսակի եւ Մրդէի խումբերուն(1) եւ շարժուեցաւ դէպի Մուշ: Խումբերը, շարք մը կոիւնքէ վերջ, ՅԱԶՈՂԵՑԱՆ ՀԱՄՆԻԼ մինչեւ Կուրտիկ լերան Արծուի Քարը(2), անկից մինչեւ Մուշեղա-

(1) Մեր ընթերցողները շատ դիւրաւ կրնան նշմարել այն ազնուաբար տարբերութիւնը, որ գոյութիւն ունի Ռուբէնի եւ Սասունցի Մուշեղի ներկայացուցած Սասունցիներու անուանացանկերուն միջեւ, ինչ որ բացայայտ նշան է անոնց ներկայացուցած «պատմութեանց» յերկարածոյ նկարագիրին: Այդ անուանացանկերու մէջ, ԲԼՆԱԻ ԵՐԲԵՔ ԶԵՆՔ ՀԱՆԴԻՊԻՐ քաղաքացի եւ դաշտեցի բազմաթիւ հայդուկներու անուններուն, հակառակ որ այդ երկու վայրերէն՝ բազմաթիւ քաջասիրտ երիտասարդներ կը գտնուէին Սասուն, կազմու պատրաստ, առաջին իսկ պատեհութեամբ՝ օգնութեան փութալու քաղաքի քաջայանդուզն մարտիկներուն. օրինակ, Պալեան երեք եղբայրները (Մշօն, Արշակ եւ Պօզոս), Կորիւն, Պատիկ Արամ Յակոբեան, Մուխսի Ֆարհադի Յարօն եւ Հրանդ Հլղաթեան (այս վերջին երկուքն դեռ նոր էին հասեր հոն՝ քաղաքէն), Ալիջանցի առիծասիրտն Տիգրան, Արանցի հերոս Արամ, եւ ուրիշներ, բոլորն ալ՝ քաջ, հայրենասէր, վրէժավառ, պատրաստ՝ փութալու պայքարող եւ տուայտող քաղաքի օգնութեան...:

(2) Ասիկա այն Կուրտիկ լեռն է, որ՝ ըստ վահան Փափագեանի («Իմ Յուշերը», Բ., էջ 364), եւ Ռուբէնի («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 78) վկայութեանց, կը գտնուէր Սասունաբնակ Փեղայիներու ձեռքը, հետեւաբար, հարկ չկար «ՇԱՐՔ ՄԸ ԿՈՒՆԻՆԵՐԷ ՎԵՐՋ» (նոյն, է., էջ 73) հոն հասնիլ, ա՛յն ալ՝ «ՅԱԶՈՂԵՑԱՆ» հոն հասնիլ, այն տպաւորութիւնը տալով թէ *զերմարդկային ճիգ թափելով* եւ ԿԱՏԱՂԻ ԿՈՒՆԻ ՄՂԵԼՈՎ՝ հո՛ն հասեր են:

«Ստախօսի յիշողութիւնը կարն կ'ըլլայ», կ'ըսէ հայ ժողովրդական առածը:

բերդ, սակայն ԱՆԿԱՐԵԼԻ ԿԸԼԼԱՅ ՄՈՒՇ ՀԱՄՆԻԼ: Պաշարումը այնքան խիստ է, զօրքերն ու աշիրէթները ԱՅՆՔԱՆ ԽԻՏ ՇԱՐՔԵՐՈՎ բռնած են Դաշտը(3), որ Ռուբէն կը ստիպուի վերադառնալ Սասուն («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», է., էջ 72-73) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ինչպէս բացորոշ կերպով կրնան նշմարել մեր ընթերցողները, Ռուբէն եւ իր «պատմիչ» խմբապետը կը հակասեն զիրար:

Ակնբախ հակասութիւն կայ այս «օգնութեան» խնդրոյն մէջ: Այսպէս — Մինչ «Ֆրոտոնայ»ի պատմութեան հեղինակը (Ռուբէն) քաղաքին «օգնութեան» կը փութացնէ Սեմայի «Քիաթիպ» Մանուկ Շառոյեանը եւ իր խումբը, որոնք Կուրտիկի լանջերէն կ'իջնեն վար, մինչեւ խորունկ ձորահովիտը, Ամարանոց Մուշեղաբերդի աւերակներէն մղոններով վար, եւ հոն ալ՝ ենթարկուելով «թրքական դիրքերի կրակին», կը հարկադրուին վերադառնալու ձեռնունայն, իրենց հետ «գերի» բերելով «Տափէի ամրոյժ ժողովուրդը» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 81), անդին՝ Սասունցի խմբապետ «պատմիչ»ը կը հաւաստէ որ «Ռուբէն... դուրս անցաւ... խումբերուն եւ շարժուեցաւ դէպի Մուշ», սակայն հազիւ կը կարողանայ հասնիլ «մինչեւ Մուշեղայ Բերդ», ուրիշ կը հարկադրուի ձեռնունայն վերադառնալու Սասուն՝ առանց երբեք ԻՋՆԵԼ ԿԱՐՈՂԱՆԱԼՈՒ քաղաքի հարաւային կողմը երկարող խորունկ ձորահովիտը, որովհետեւ «պաշարումը այնքան խիստ է» եղեր եւ «զօրքերն ու աշիրէթները այնքան խիտ շարքերով բռնած են» եղեր «ԴԱՇՏԸ»:

Սասունէն դէպի Մամիկոնեան իշխաններու ամարանոց Մուշեղաբերդը իջնողը, անպատճառ եւ անպայման կերպով, ՊԵՏՔ Է ՈՐ ԿՏՐԷ ԱՆՑՆԻ Կուրտիկ լերան հիւսիսային լեռնալանջերը, այսինքն, ԱՅՆ ՄԻՆԻՆՈՑՆ ՎԱՅՐԵՐԸ, ուր, ըստ Ռուբէնի «Ֆրոտոնայ»ի պատմութեան, կ'երկնային Սասունցիներու շինած «քոզրէ»ները, եւ ասոնց դիմաց ալ, երկարաձգուած՝ թրքալերս «մարդահասակ խորութեամբ խրամները», զոյգ շղթաներով՝ «գօտիկի նման», եւ տեղ տեղ ալ՝ պաշտպանուած «երկաթէ թելերով», նորութիւն մը որ կ'ահարեկէր Սասունցիները, եւ հաւանաբար նաեւ մեր Սասուն-

(3) Դաշտը, այսինքն՝ ՄՇՈՑ ԴԱՇՏԸ, ի՞նչ գարծ ունի հոս, երբ Ռուբէն եւ իր Սասունցիներու խումբը՝ քաղաքի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՂՄԸ գտնուող Կուրտիկի լեռնալանջերէն էր որ վար կ'իջնէին, մինչդեռ դաշտը կը գտնուի քաղաքի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԸ եւ որեւէ կերպով ՉԷՐ ԿՐՆԱՐ ԽԱՆԳԱՐԵԼ «արշաւող» Սասունցիներու այդ «օգնութեան» ձեռնարկը...:

ցի խմբապետ «պատմիչը», որ փոխանակ Ռուբէնը եւ իր խումբը իջեցնելու մինչեւ խորունկ ձորախովիտը, զանոնք՝ Մուշեղաբերդէն ԵՏ ԿԸ ՂՐԿԵ Կուրտիկի լանջերն ի վեր՝ դէպի Սասուն, առանց որեւէ կերպով յիշատակութիւնն ընելու այդ լեռնալանջերուն վրայ կառուցուած թրքակերտ «խրամներուն եւ զոյգ «երկաթէ թելեր»ու գոյութեան, եւ անոնց մէջ «վխտացող» թուրք զինուորներու «ներկայութեան» մասին:

Ինչո՞ւ, արդեօք, Սասունցի Մուշեղ քաղ լուսիւն կը պահէ Կուրտիկի ճակատի՝ այս թրքակերտ «խրամներ»ու գոյութեան եւ թուրք զորքերու «ներկայութեան» մասին, երբ կուրծք ուռեցնող հպարտութեամբ եւ առատաձեռն շոյալութեամբ (բոլ քէսէտէն) կ'ընէ հետեւեալ տարտամ եւ հասարակ-տեղիք յայտարարութիւնը.—

«Սուրբ Յովհաննու անտառներէն, Փեթարէն, Կուրտիկ լեռնէն մինչեւ Մուշ քաղաքի ուսը՝ Արջղոր» գտնուող ընդարձակ տարածութիւնները «դիրքերու վերածուած էին» (նոյն, էջ 72), մասնաւոր պարծանքով մը աւելցնելով նաեւ որ «Առաքելոց Վանքի բարձունքները՝ մինչեւ Ծիրնկատար, ուրիշ դիմադրական շղթայ մը կազմուած էր» (նոյն, անդ).... իր տենդավառ երեւակայութեան մէջ....:

Անհեթեթ յայտնութիւն մըն է, նոյնպէս, Սասունցի Մուշեղի այն յայտարարութիւնը թէ Մուշ քաղաքի հիւսիսային կողմը գրտնուող Մուշի դաշտը «բռնուած էր» թուրք զորքերու եւ աշիրէթներու «խիտ շարքերով», որոնց պատճառով ալ՝ Ռուբէն ԶԵ ԿՐՑԵՐ ԵՂԵՐ «օգնութեան հասնիլ» քաղաքին, ու կը հարկադրուի Մուշեղաբերդէն ձեռնուռնայն վերադառնալու Սասուն:

Ճիշդ է որ «զորքերն ու աշիրէթները, «այնքան խիտ շարքերով, ԲՆՆԱՄ էին դաշտը», բայց այդ հանգամանքը, որեւէ կերպով, չէր կրնար ԱՐԳԵԼՔ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ որ Ռուբէն չկարենար իր խումբով իջնել քաղաքի հարաւային կողմը երկնցող ձորահովիտը, որովհետեւ այդ «խիտ շարքերով» թշնամի զորքերը եւ աշիրէթները, ԲՆԱԻ ԵՐԲԵՔ, հնարաւորութիւն չունէին՝ քաղաքի հիւսիսային կողմը գտնուող ԴԱՇՏԵՆ արգելք յարուցանելու Սասունցիներու այդ արշաւախումբի յառաջխաղացքին դէմ, ինչպէս արդէն յիշատակեցինք քիչ վեր:

Ռուբէնի եւ իր խմբապետ «պատմիչ» Սասունցի Մուշեղի պատումներու այս հակասութենէն կը ծագի խիստ բնական հետեւեալ հարցումը.—


— Այս երկու պատմիչներէն ո՞ր մէկն է որ ԿԸ ՍՏԵ:

Մենք կը պատասխանենք.—

— Երկուքն ալ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ ԴԱՏՈՒՄԸ



Մենք արդէն տեսանք թէ Վահան Փափազեան ի՞նչպիսի պարզ ու անսեթեւեթ ձեւով մը ներկայացուց իր հեքիաթը, անպաճոյճ «Կիսա-կամարածեւ Պաշարում» մը, անմեղունակ երկու բառերով ալ՝ դրսեւորուած:

Նոյնպէս տեսանք թէ Ռուբէն ի՞նչպէս մշակեց այդ պարզ դրսեւորումը, եւ իր բազմաբեղուն ու վառ երեւակայութեամբ ալ՝ նոխացնելով ու զարգացնելով, զայն վերածեց «Յըռտոնայ»ի հրաշահիւս հեքիաթին, ըստ որում՝ Սեմալցի Մանուկ Շառոյեանն էր որ Կուրտիկ լեռան բարձունքներէն վար սուրալով, իր խումբով «փութաց» Մուշ քաղաքի «օգնութեան», թէ ի՞նչպէս այդ «արշաւախումբը» ինկեր է «թրքական դիրքերի կրակին տակ», քաղաքի հարաւակողմը երկնցող խորունկ գետածորին մէջ, եւ «առաջ դնալու ո՛չ մի հնար չունի», որով եւ առանց օգնութիւն հասցնել կարենալու քաղաքին մէջ տուայտող դիւցազն մարտիկներուն, իբր «յետնապահ», կուռելով՝ նահանջեր է եղեր դէպի Սասուն, իրեն հետ «զերի» բերելով Տափըզ գիւղի «ամբողջ ժողովուրդը»:

Յետոյ, տեսանք նաեւ թէ ի՞նչպէս Սասունցի Մուշեղ, աւելի հանդիսաւոր եւ պատկառելի նկարագիր տալով այդ առինքնող հեքիաթին, քաղաքի կուռողներուն «օգնութեան» փութացուց, այս անգամ, նոյնիմէն հրամանատարը, Ռուբէն Փաշան, որ «գլուխ անցնելով» Փեթարայ Մանուկի (Սեմալցի Մանուկ Շառոյեանը չհասկնաք՝ «Քիաթիպ» մականուանեալ), Յովսէփի, Եւայլն խումբերուն, «չարժուեցաւ դէպի Մուշ», սակայն «անկարելի կ'ըլլայ» մօտենալ քաղաքին, որովհետեւ «պաշարումը այնքան խիտ է» եղեր, զորքերն ու աշիրէթները «այնքան խիտ շարքերով» բռնած են եղեր «դաշտը» (դաշտը ի՞նչ գործ ունի հոս), որ Ռուբէն «կը ստիպուի» եղեր Մուշեղաբերդէն ձեռնուռնայն վերադառնալու Սասուն....:

Հիմա՛ ալ, մէջտեղ բուսաւ Սասունցի իւրայատուկ ուրիշ «պատմադիր» մը եւս՝ Կարօ Սասունի կոչեցեալ, մեզի հրամցնելով հաստատիր դիրք մը՝ «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» առինքնող տիտղոսով մը, որուն մէջ՝ Տարօնի այս մետասաներորդ ժամու «պատմադիրը», յաւելեալ ու ճոխացեալ պճնազարդումով մը, մեզի

կը ներկայացնէ այս «օղնութեան» դրուագը, շատ յանախ՝ իր փաստերը հիմնելով իր ՎԱՌ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ, քան թէ յենլով քանձրացեալ պատմական տուեալներու:

Հետեւեալը Կարօ Սասունիի տարբերակն է:—

ա.— «Կառավարութիւնը՝ այս հրեք դիրքերը գրաւելով(1) չզոհացաւ: Երկու վաշտ զինուոր քամբայ համեց՝ Կուրտիկի ամբողջ լեռնաշղթան գրաւելու(2): Վաշտ մը տեղաւորուեցաւ Ձորու թաղը, Միացեալ Ընկերութեան Կեդրոնական Վարժարանի մէջ, որ կը հսկէր Ծիրնկատարէն դէպի Մուշ բացուած ձորին:

«Սասուն կեդրոնացած վարիչները՝ Կուրտիկի գրաւումը վերտանգաւոր նկատելով, Կուրտիկի գլխաւոր դադաթները բռնեցին եւ զօրաւոր դիմադրութիւն մը ցոյց տուին: Այդպիսով, ԱՊՐԻԼԻ ՍԿԻՋԲԷՆ կը սկսէր Կուրտիկի դիրքային կռիւը, որ կը տեւէր ՄՕՏ ԵՐԵՒ ԱՄԻՍ: ... Թուրքերը կը ՍՏԻՊՈՒԷԻՆ Կուրտիկի ԲԱՐՁՈՒՆԻՔՆԵՐԻՆ ՁԵՌՔ ՔԱՇԵԼ և կը տեղաւորուէին ՀԻԻՍԻՍԱՅԻՆ ԼԱՆՁԵՐՈՒՆ ՎՐԱՅ: Այս զօրքերը Սասուն մտնելու եւ լայն գործողութիւններ կատարելու հրահանգը չունէին: Ուստի, խրամատներ փորեցին եւ ամրացան խրամատներու մէջ: ... Կուրտիկի կռիւներու ընդհանուր վարիչը Սասունցի Մանուկն էր, Փեթար դիւղէն: ... Անոր հետըն էին Փեթարի հին Ֆեղայիները՝ Ախօն, Իսրօն, Կիրակոս...» Եւայլն («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 958) [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.]:

բ.— Այն պահուն, երբ Սասունարնակ «պարոնները եւ Սասունի իշխանները՝ «Սեմալ դիւղի եղրին, խոշոր ծառի մը տակ» (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 362) նստած կը խորհրդակցէին՝ յարձակողական եւ պաշտպանողական ծրագիր եւ գործելակերպ որոշելու համար, «Կուրտիկի հայ պահակները լուր կը զրկեմ զինուորական մարմինին թէ քնդանօթներու ձայն կը լսուի Մշոյ Դաշտէն» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 968): Համե-

(1) Գումսի եւ Առաքելոց վանքի դէպքերէն յետոյ, քուրք կառավարութիւնը՝ գրաւելով Ս. Կարապետի, Ս. Յովհաննէսի եւ Առաքելոց վանքերը, զօրք լեցուցած էր անոնց մէջ, գարունէն ի վեր:

(2) Թէ՛ վահան Փափազեան, թէ՛ Ռուբէն եւ թէ՛ Սասունցի Մուշեղ որեւէ յիշատակութիւն չունին Կուրտիկի լեռնաշղթան վրայ «տեղաւորուած» քրքական այս ուժերու քանակի մասին: Կարօ Սասունիէն է որ, առաջին անգամ ըլլալով, կը տեղեկանանք թէ այդ զօրքերու քանակը «երկու վաշտ» է եղեր: Ան չ'ըսեր կամ ցոյց չի՛ տար թէ ո՛ր ազգիւրէն առած է իր այդ տեղեկութիւնը:

մատել Վահան Փափազեանի «Իմ Յուշերը», Բ., էջ 364-ի հետ [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.]:

դ.— Սանդավառութեան եւ մտավախութեան խառն զգացումներ կը յաջորդեն իրարու՝ այս լուրը իմացածին պէս: «Ոմանք կ'ոգեւորուին այն յոյսով թէ ուսական բանակը մտած է Մշոյ դաշտը. ոմանք ալ կը մտահոգուին Մուշով: Կարգադրութիւն մը կ'ըլլայ Կուրտիկի պահակախումբին՝ շեշտակի հարուածով թշնամիին դիրքերը մտնել եւ եթէ կարելի է, գերիներ վերցնել՝ զինուորական կացութիւնը ճշդելու համար: Փեթարցի հին Ֆեղայիներէն Իսրօն կը ստանձնէ այդ պարտականութիւնը եւ քրքական քանակի յառաջապահ դիրքը կը գրաւէ՝ ուղղակի նետուելով թշնամիի դիրքին մէջ: Խումբը ԴԱՇՈՅՆՆԵՐՈՎ կը ՄԵՆԱՄԱՐՏԻ քրքական պահակախումբին հետ եւ անոր ՀԱՇԻԻԸ կը ՄԱՔՐԷ: Գրաւուած ԴԻՐՔԷՆ ԱՐԴԷՆ ՅԱՅՏՆԻ ԿՐԼԼԱՅ Թէ Քնդանօթները Մուշի վրայ կը գործէին» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 968) [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.]:

դ.— «Այս գործողութեան ժամանակ, արդէն դաշտէն երկու հոգի կը հասնին Սեմալ գիւղը եւ կը յայտնեն թէ ամբողջ Մշոյ Դաշտը կՈՏՈՐԱԾԻ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ Է. Մուշն ալ կը դիմադրէ ՁՈՐՈՒԹԱՂԻ ՄԷՋ ՄԻԱՅՆ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.]:

ե.— «Այս շջմեցնող իրականութեան առջեւ, խումբերը կը շարժին դէպի Կուրտիկ եւ Ծիրնկատար՝ օգնութեան հասնելու համար Մուշ քաղաքի կառուցներուն: ԴՈՒՐՍԷՆ ԵԿԱԾ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ՝ Ռուբէնի գլխաւորութեամբ, իսկ Սասունցի ուժերը՝ Սեմալցի Մանուկի (Քիաթիպ), Գելիէզուզանցի Կիրակոսի, Շենիկցի Ձորոյի եւ Ղազարի ղեկավարութեամբ՝ կը շարժին դէպի Մուշ: Սակայն, Մշոյ Ձորի վերին բարձունքները, ԾԻՐՆԿԱՏԱՐԻ ՄՕՏԵՐԸ, փախստական Մշեցիներու կը հանդիպին եւ կը ստուգեն որ ՄՈՒՇ ՔԱՂԱՔԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ՎԵՐՁԱՑԱԾ Է Եւ Հայ թաղերը մոխիրի վերածուած են» (նոյն, անդ) [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.]:



Գ Լ ՈՒ Խ Ժ Ե .

Ք Ն Ն ՈՒ Թ Ի Ի Ն
Կ Ա Ր Օ Ս Ա Ս ՈՒ Ն Ի Դ Ա Տ ՈՒ Մ Ի Ն

Քննենք Կարօ Սասունիի այս տարբերակն ալ՝ կէտ առ կէտ .—

ա .— Եթէ թուրք կառավարութիւնը «երկու վաշտ» զինուոր զրկած է «Կուրտիկի ամբողջ լեռնաշղթան գրաւելու» եւ «Այդպիսով, Ապրիլի սկիզբէն ԿԼ ՍԿՄԵՐ Կուրտիկի դիրքային կռիւը», որ «ձօտ երեք ամիս տեւած է», այսինքն, Ապրիլ, Մայիս եւ Յունիս, ուրեմն, Սասունի եւ Մուշ քաղաքի միջեւ կապը եւ յարաբերութիւնը ՊԷՏՔ ԷՐ որ ԵԶՈՒԱԾ ԸԼԼԱՅԻՆ ԱՊՐԻԼ ԱՄՍՈՅ ՍԿԻԶՐԷՆ ՍԿՍԵԱԼ, որովհետեւ Շենիկ, Սեմալ եւ Գեյլիէզուզան գիւղերէն դէպի Մուշ քաղաքը երկնցող գլխաւոր, միշտ գործածական եւ ամենակարճ ճամբան Կ'ԱՆՏՆԷՐ Կուրտիկ լեռան ԱՅԴ ԳՐԱՒՈՒԱԾ ԼԵՌՆԱԼԱՆՋԵՐԷՆ ՈՒ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԷՆ:

Բայց, քանի որ այդ կապը եւ յարաբերութիւնը, ՇԱՏ ԲՆԱԿԱՆՈՆ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ, շարունակուած են այդ երկու կէտերուն (Սասունի եւ Մուշ քաղաքի) միջեւ՝ ԱՊՐԻԼԷՆ ՎԵՐՋ ԱԼ, մինչեւ Յունիս ամսոյ 25, Հիմզաքթի օր, այսինքն, քաղաքի կռիւը սկսելէն ԵՐԵՔ օր առաջ, որ ատեն քաղաքի մէջ կատարուած էին ձերբակալութիւնները Սասունցի կիներու եւ ասոնց ցուցմունքին հետեւանքով ալ՝ քաղաքացի կարգ մը առեւտրական ազգայիններու, ինչպէս ապացուցինք ասկէ առաջ (Տեսնել Գլուխ Թ.), ուրեմն, այդ «երկու վաշտերու» ներկայութիւնը՝ Կուրտիկի լեռնալանջերուն վրայ, պարզապէս ֆնաքեր անուջիկ հեքիաք մը կ'ըլլայ՝ Կարօ Սասունիի եւ իր մտայնութիւնն ունեցողներու համար:

Իսկ Կեզրոնական Վարժարանի մէջ տեղաւորուած մէկ վաշտ զինուորներու մասին պիտի խօսինք յաջորդ գլուխին մէջ (տեսնել Գլուխ ԺԶ.):

բ .— Կուրտիկի դիրքերու հայ պահակները ՊԷՏՔ ՉՈՒՆԷԻՆ լուր զրկելու Սեմալ գիւղը գտնուող «պարոն»ներուն կամ զինուորական մարմինին՝ անոնց իմացնելու համար թէ «Թնդանօթներու ձայն կը լսուի Մշոյ Դաշտէն»(1):

(1) Վ. Փափագեան ալ կը յիշէ այսպիսի յերիւրամբ մը («Իմ Յուշերը», Բ., էջ 364):

Այդ Թնդանօթներու ձայները անյնքան ՅՍՏԱԿ ԿԵՐՊՈՎ ԿԸ ԼՍՈՒԷԻՆ, կա՛մ պէտք էր ԼՍՈՒԷԻՆ Սեմալ գիւղի մէջ ալ, եթէ Թնդանօթի ձայն լսելու ՏՐԱՄԱԴԻՐ ականջներ կային հան:

Որեւէ Տարօնցի կամ Սասունցի կրնայ վկայել՝ որ Քնդանօթի որսորդ շատ յստակ կերպով՝ ԼՍԵԼԻ Կ'ԸԼԼԱՅ այդ երկու վայրերու միջեւ, ինչպէս որ 1904-ի Սասունի կռիւին ատեն, մենք ալ, Մուշ քաղաքին մէջ, շատ որոշ եւ յստակ կերպով կը լսէինք Սասունի Շէնիկ, Սեմալ եւ Գեյլիէզուզան գիւղերու վրայ գոռացող Թրքական Թնդանօթներու որսորդ: Ես ինքս ալ, շատ լաւ կը յիշեմ որ շատ յստակօրէն կը լսէի այդ որսորդ, երբ դեռ փոքր տղայ մըն էի:

գ .— Որպէսզի ստուգեն թէ գոռացող Թնդանօթը ուսուակա՞ն թէ Թրքական է, կ'որոշուի «շեշտակի հարուածով» մտնել «Թրքական դիրքերը» եւ զօրքը գերի բռնելով՝ անկէ ստուգել զինուորական կացութիւնը: Փեթարցի Իսրօն կը ստանձնէ այդ պարտականութիւնը եւ կը գրաւէ «Թրքական բանակի յառաջապահ դիրքը»: Իր խումբը՝ «դաշոյններով» կը մենամարտի թուրք պահակախումբին հետ եւ անոր հաշիւը կը մաքրէ, ու «գրաւուած դիրքէն արդէն յայտնի կ'ըլլայ որ ԹՆԴԱՆՕԹՆԵՐԸ ՄՈՒՇԻ ՎՐԱՅ ԿԸ ԳՈՐԾԷԻՆ»:

Տարօրինակ է, չէ՞:

Բացատրենք:

Կարօ Սասունի կը պատմէ որ Սասունի ուժերը կը հարկադրեն Քրքական զօրքերուն որ «ՉԵՆՔ ՔԱՇԵՆ» ԿՈՒՐՏԻԿԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԷՆ եւ տեղաւորուին աւելի վար, «ՀԻԻՍԻՍԱՅԻՆ ԼԱՆՋԵՐՈՒ ՎՐԱՅ», ուր անոնք «խրամներ» կը փորեն եւ անոնց մէջ ալ կը տեղաւորուին:

Բնականաբար, այս «հիւսիսային լանջերէն» ՇԱ՛Տ ԱԻԵԼԻ ԲԱՐՁՐԱԴԻՐ ԴԻՐՔԵՐ ԷԻՆ (եւ Ե՛Ն ԱԼ) Կուրտիկի բարձունքները, զոր Սասունաբնակ ուժերը գրաւեր էին, եւ ուրկէ ՇԱՏ ԱԻԵԼԻ ՅՍՏԱԿ ԿԵՐՊՈՎ ԿՐՆԱՅԻՆ դիտել ու տեսնել թէ՛ Մուշի դաշտը եւ թէ՛ Մուշ քաղաքի վրայ գոռացող չորս Թնդանօթներէն գոնէ երեք հատը (Մաչքի Դուրանի, Բրուտներու Թաղի ու Թերեւս ալ՝ Բերդի Թաղի Թնդանօթները), քան թուրքերը՝ զագաթի բարձրադիր դիրքերէն ՇԱՏ ԱԻԵԼԻ ՎԱՐ գտնուող իրենց «լանջային խրամներէն»:

Ատով հանդերձ, Կարօ Սասունի, առանց վարանելու, կը յայտարարէ որ թուրքերու լանջային դիրքը ՉԵՆՔ ԱՆՏԸՆԵԼԷՆ ՅԵՏՈՅ ՄԻԱՅՆ «յայտնի կ'ըլլայ որ Թնդանօթները Մուշի վրայ կը գործէին» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 968) [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.]:

դ .— Մինչ Սասունցի ուժերը «կը գրաւէին» Թրքական «դիրքերը», դաշտէն երկու գուժկաններ կը հասնին Սեմալ գիւղը եւ «կը

ՄԻՐՆԱԿԱՆՍԱՐ ԵՒ ԿՈՒՐՏԻԿ ԼՈՒՆԵՐԸ



յայտնեն թէ ամբողջ Մշոյ դաշտը կոտորածի ենթարկուած է» եւ «Մուշն ալ կը դիմադրէ Ձորու Թաղի մէջ միայն» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Եթէ երեք օր առաջ կատարուած Մշոյ Դաշտի համատարած կոտորածի մասին ԴեՆԻ ԼՈՒՐ ԶՈՒՆԷՒՆ մեր «պարոն»ները, մինչեւ այդ չարագուշակ գուժկաններու ժամանումը [Ա], այսինքն, մինչեւ Յունիս 30, Երեքշաբթի օր, որ ատեն Ձորու Թաղը ՄԻԱՅՆ կը դիմադրէր ԴեՆԻ, պէտք էր, սակայն, ԳԻՏՏԱԾ ԸԼԼԱՅԻՆ ԳՈՆԷ Մուշ քաղաքի գոյամարտի մասին, որովհետեւ թրքական չորս թընդանօթները, ԵՐԿՈՒ ՕՐԷ Ի ՎԵՐ, անընդհատ կը ուժակոծէին հայկական քաղերն ու քաղկոքով մարտնչողներու դիրքերը, եւ այդ չորս թընդանօթներու որոտը, ՇԱՏ ՅՍՏԱԿ ԿԸ ՀԱՄՆԷՐ «պարոն»ներու ԱԿԱՆՁԸ՝ Սեմալ գիւղի մէջ ալ :

Ե.— «Այս շմեցնող իրականութեան առջեւ», այսինքն, չարագուշակ գուժկաններու բերած այս խիստ տխուր լուրը ԼՍԵԼԷՆ ՅԵՏՈՅ ՄԻԱՅՆ, խումբերը «կը շարժին» դէպի Կուրտիկ եւ Ծիրնկատար՝ «օգնութեան հասնելու համար Մուշ քաղաքի կոռուղներուն» : Դուրսէն եկած մարտիկները՝ (2) Ռուբէնի գլխաւորութեամբ, եւ բնիկ Սասունցի ուժերը՝ Սասունցի խմբապետներու առաջնորդութեամբ, «կը շարժին դէպի Մուշ», սակայն, իրենց ճամբուն վրայ, «Մշոյ Ձորին վերին բարձունքները, Ծիրնկատարի մօտերը», կը հանդիպին «փախստական Մշեցիներու» (3), որոնցմէ կ'իմանան ստոյգ եւ շարադէտ լուրը թէ «Քաղաքի հերոսամարտը վերջացած է եւ Հայ թաղերը մոխրի վերածուած են» (նոյն, էջք 968-969) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Եթէ ճիշդ ընդունինք Կարօ Սասունիի տուած այս տեղեկութիւնը, Սասունահրեակ «պարոն»ները, ուրեմն, ԱՄԲՈՂՁ ԵՐԿՈՒ ՕՐ՝ լսելէ ՅԵՏՈՅ քաղաքին վրայ գոռացող չորս թընդանօթներու անընդհատ որոտը, ՀԱՆԳԻՍՏՆԻՆ ԱՆԳԱՄ ՁԵՆ ԽԱՆԳԱՐԱԾ այդ երկու օրերու

(2) Առաջին անգամ ըլլալով, Կարօ Սասունին է որ յիշատակութիւն ունի այս «դուրսէն եկած մարտիկ»ներու մասին, որոնք ո՛չ այլ ոք են, եթէ ոչ՝ քաղաքացի եւ դաշտեցի, այսինքն՝ ոչ-Սասունցի հայդուկներ, եւ որոնցմէ ոմանց տուած արժանահաւատ վկայութեանց մասին պիտի խօսինք աւելի յետոյ (Տեսնել Գլուխ ԻԸ.) :

(3) Մենք պատեհութիւն պիտի ունենանք, աւելի յետոյ, լսելու այս «փախստական Մշեցիներէն» միոյն ակամատեսի վկայութիւնը, բայց ո՛չ Կարօ Սասունիի ներկայացուցած կամ նկարագրած պարագաներուն տակ (Տեսնել Գլուխ ԻԷ.) :

ընթացքին, եւ ՄԻԱՅՆ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ, Յուլիս մէկին, Չորեքշաբթի առաւօտեան, — ԵՐԲ ԱՐԴԷՆ քաղաքի կուռզները ՏԵՂԻ ՏՈՒԱԾ ԷԻՆ, պաշտօնական եւ կազմակերպուած դիմադրութիւնը վերջ ԳԸ-ՏԱԾ, եւ զինեալ ու անզէն երիտասարդութեան մեծագոյն մասը՝ լեռներ ապաստանելու տենդոտ աճապարանքի մէջ էր, — սկսած են «շարժիլ», որու միակ արդիւնքը եղած է «Միրնկատարի մօտերը» հանդիպիլ այդ «փախստական Մշեցիներուն», անոնցմէ իմանալով դա՛ն, շա՛տ դառն լուրեր՝ քաղաքի տարաբախտ Հայութեան սեւ ճակատագիրի մասին...

Ըստ Կարօ Սասունիի պատումին, ուրեմն, Սասունցի խմբապետներու խումբերը ՉԵՆ ԻԶԱԾ ՎԱՐ, քաղաքի հարաւային կողմը երկնցոյ խորունկ ձորահովիտը, եւ հոն՝ ՉԵ՛Ն ԵՆԹԱՐԿՈՒԱԾ «Քրքական դիրքերի կրակին», ինչպէս կը հաւատէ Ռուբէն՝ իր «Ճըռտոնայ»ի պատմութեան մէջ, եւ կա՛մ՝ Ռուբէնի գլխաւորած այդ խումբերը ՉԵՆ ԻԶԱԾ ՄԻՆՉԵԻ ՄՈՒՇԵՂԱԲԵՐԴԸ եւ հո՛ն ալ՝ ՉԵՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ «գաշտի գօրքի եւ աշիրէքներու կրակին», ինչպէս կը պատմէ Սասունցի Մուշեղ՝ իր լորճնաշուրթն թութակաբանութեան մէջ:

* * *

Հիմա՛, մենք հարկադրուած ենք, բարեփոխուած ձեւով, նորէն կրկնելու մեր դաժան հարցումը, զոր անգամ մը ըրած էինք՝ Ռուբէնի «Ճըռտոնայ»ի եւ Սասունցի Մուշեղի պատումին առնչութեամբ.

— Այս վերջին երկուքէն, կա՛մ, աւելի ճիշդ՝ երեքէն, եւ ա՛լ աւելի ճիշդ, չորսէն՝ ո՞ր մէկն է որ ԿԸ ՍՏԷ:

Մեր դրական եւ բացարձակ պատասխանն է.

— ԲՈՂՈՐՆ ԱԼ:

Բա՛յց, դեռ չվերջացուցինք:

* * *

[Ա.] Գարագայ մը, որ յստակօրէն եւ բացայայտօրէն ցոյց կուտայ թէ՛

ա. — Մեր «պարոնները ի՛նչ աստիճան ԿՏՐՈՒԱԾ էին Տարօնի Հայութեան առօրեայ կեանքէն, եւ ո՞րքան անհազորք ու անտեղեակ՝ քաղաքի եւ դաշտի մէջ տիրող դժոխային կացութեան ու պայմաններուն:

բ. — Թուրք կառավարութիւնը ո՞րպիսի մարտիկութեամբ, կանխագզուութեամբ, զգուշաւորութեամբ եւ գաղտնածածուկ կերպով ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ է՛ր Մշոյ Դաշտի հարիւր հազարաւոր Հայութեան բնաջնջումի հրէշային գործը որ մարտական փառաւոր անցեալ ունեցող այս մեծագանգուած եւ հո՞ծ Հայութեան անէացումը կը կատարուէր լռիկ, մնջիկ, շա՛տ յաճախ ալ՝ առանց նոյնիսկ մէկ հատիկ գնդակ արձակուելու:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

ԿՈՒՐՏԻԿԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԷՆ «ԿԸ ՀՍԿԵՆ» ԵՂԵՐ ՔԱՂԱՔԻՆ ՎՐԱՅ

Երկու յայտնութիւններ եւս կ'ընէ Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունի.

ա. — «Մուշ քաղաքը պաշարուած էր ամէն կողմէ: Կուրտիկի լանջերուն վրայ դիրք գրաւող զինուորները Ո՞Չ ՄԻԱՅՆ ԿԸ ԿԸՈՒՆԷԻՆ ՍԱՍՆՈՑ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԷՄ, ա՛յլ եւ լեքան բարձունքներէն ԿԸ ՀՍԿԷԻՆ ՔԱՂԱՔԻՆ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 845):

բ. — «Վաշտ մը տեղաւորուեցաւ Չորու Թաղը, Միացեալ Ընկերութեան Կեդրոնական Վարժարանին մէջ, ՈՐ ԿԸ ՀՍԿԷՐ Միրքնկատարէն դէպի Մուշ բացուած ձորին» (նոյն, էջ 958) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Այս երկու պարբերութեանց ընդգծեալ մասերու յայտնութիւններն ալ ՍՈՒՏ եւ ՍԽԱԼ են: Սուտ՝ առաջին պարագային, սրխալ՝ երկրորդ պարագային:

«Պատմագիր» Կարօ Սասունի բնաւ երբեք ՊԻՏԻ ՉՀԱՄԱՐՁԱԿԷՐ ընելու այս տեսակ վՐԱՆ-ԲԱՅ սուտ ու սխալ բաներ ըսել չէր իր բուն նպատակը, ինչ որ շատ յստակ կերպով կը տեսնենք իր հաստատօր երկասիրութեան մէջ, մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը, եւ եթէ ինք լրջօրէն, հմտօրէն, անկեղծօրէն եւ մանաւանդ, իրական ու ճշմարիտ պատմարանի մը անկողմնակալութեամբ եւ անշահախորհրութեամբ՝ ուսումնասիրած, վերլուծած ու ներկայացուցած ըլլար իր պատմելիք նիւթը, ինչպէս, օրինակ, այս պարագային, հետեւեալ չորս կարեւոր կէտերը.—

1. — Մուշ քաղաքի հայ եւ թուրք թաղերու, եւ քաղաքը շրջապատող բլուրներու եւ բարձունքներու աշխարհագրական դիրքերը եւ անոնց առնչութիւնը միմիանց հետ.

2. — Կուրտիկի լանջերուն վրայ «տեղաւորուած երկու վաշտ զօրքի», ինչպէս նաեւ Կեդրոնական Վարժարանի մէջ զետեղուած մէկ վաշտ զինուորներու բարոյական կորովը.

3. — Միրնկատարի եւ Կուրտիկի բարձունքներուն առնչութիւնը քաղաքի հայ թաղերուն հետ:

4.— Այդ բարձունքներէն դէպի քաղաք բացուած ձորին մըզ-
գրիտ տեղագրութիւնը :

Ապաւինելով իր կուսակցազար սոփեստութեան, — հաւանա-
բար կարծելով թէ իր պատկանած կուսակցութեան բեմէն է որ կը
բարբառէ, — ամէն տեսակ, խելիք-մտքէ դուրս, մոլորեցուցիչ մա-
մարտակութիւններով, կարօ Սասունի կը փորձէ ընդարմացնել իր
ընթերցողի առողջ դատողութիւնը, — եւ այս տխուր վարքագիծը,
դժբախտարար, անընդմիջարար կը շարունակուի իր յօրինած «պատ-
մութեան» մէջ, սկիզբէն մինչեւ վերջ, — ջանալով անոր կլիցցնել,
իր նենգամիտ ու խարդաւանող սոփեստութիւններուն հետ, որոնք՝
ուղղամիտ, անաչառ, անկողմնակալ եւ անկաչառ պատմարանի մը
վայել յատկանիշներ չեն, նաեւ իր անսահման, եւ ի պահանջել հար-
կին ալ, դիտաւորեալ տգիտութիւնը (նայելով թէ պարագաներու
համաձայն, ի՞նչ պոյնով պիտի ուզէ ներկել իր մանածը) վերոյիշ-
եալ չորս կէտերու մասին, զորս կը փափաքինք մանրամասն քննու-
թեան առարկայ դարձնել հոս :

1.— Հակառակ որ կարօ Սասունի քանի մը տարի ապրած է
Մուշ քաղաքին մէջ՝ Մխիթարեան Վարժարանին աշակերտած ատեն,
ԶՈՒՆԻ անհրաժեշտ ու ճշգրիտ ծանօթութիւն՝ քաղաքի հայ եւ թուրք
թաղերու, քաղաքը շրջապատող բլուրներու եւ բարձունքներու աշ-
խարհագրական դիրքերու, ինչպէս նաեւ անոնց՝ իրարու հանդէպ
ունեցած առնչութեանց մասին: Այդ պատճառով ալ, իրականու-
թեան ՏՐԱՄԱԳԾՕՐԻՆ ՀԱԿԱՌԱԿ, հիմնովիմ սխալ տեղեկութիւններ
կուտայ՝ զանոնք նկարագրած ատեն:

Այսպէս.

ա.— Իր խմբագրած «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» մեծա-
ծաւալ (Մշեցնակ բառով՝ «փուռնիկ») երկասիրութեան մէջ, կարօ
Սասունի հետեւեալ կերպով կը նկարագրէ մեր անուշիկ ծննդավայր
Վերին Թաղը.—

«Վերին Թաղը լեռնակամ(?) Թաղ մըն էր: Տուները ԱՄՓԻ-
ԹԱՏՐՈՆԻ ՊԷՍ ՇԻՆՈՒԱԾ ԷԻՆ, ՈՒՍ ՈՒՍԻ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՎ» (նոյն,
էջ 347) [Բոլոր ընդգծումները եւ հարցական նշանը մերն են, Ա. Տ.] :

Վերին Թաղի աշխարհագրական դիրքն ու կազմը այս ձևով
նկարագրող եւ ներկայացնող «պատմագիրը» բացայայտ կերպով կը
ցուցադրէ իր ԽՈՐ ՏԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ քաղաքի հայ եւ թուրք թաղե-
րու մասին՝ ընդհանրապէս, եւ Վերին Թաղի մասին՝ մասնաւորա-
պէս:

Հարցուցէ՛ք Մուշ քաղաքացի որեւէ պատահական անհատի,
եւ ան, առանց վարանելու, ձեզի պիտի պատասխանէ.—

«— Վերին Թաղը շինուած է հարթ եւ տափարակ վայրի մը

մէջ, չորս կողմերէն շրջապատուած պտղատու ծառաստաններով,
ուռի եւ բարտի ծառերով, մշտահոս աղբիւրներով եւ առուակնե-
րով» («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 21)
[Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ան նոյնպէս պիտի ըսէ որ «Զորու Թաղը, իր անուան համա-
ձայն, խոր ձոր մըն է՝ ինկած Մուշի գետակի երկու եզերքներուն
վրայ»: Նաեւ պիտի աւելցնէ որ «Ս. Մարինէ Թաղը, դէպի հիւսիս
շարունակութիւնն է Զորու Թաղին, նոյնպէս կառուցուած նոյն գե-
տակի երկու բարձրագիւր կողերուն վրայ» (նոյն, էջ 29) :

Կարօ Սասունի, նմանապէս, իրարու հետ կը շփոթէ թրքա-
բնակ Բերդի Թաղը (Ղալա Մահլէսի) եւ Գայլերու Թաղը (Ղուրթ
Մահլէսի) [«Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջը 113 եւ 346] : Ան
կը միացնէ կամ կը նոյնացնէ ԻՐԱՐՄԷ ԲՈՂՈՐՈՎԻՆ անցատ ու ի-
րարմէ ԲՈՂՈՐՈՎԻՆ ՏԱՐԲԵՐ՝ թրքական այդ երկու թաղերը եւ ա-
նոնց կուտայ քմածիմ եւ սխալ մեկնութիւն մը: Բերդի Թաղը Մա-
միկոնեան իշխաններու ձմերանոց բերդն էր՝ կառուցուած բարձրա-
սլաց բլուրի մը վրայ, Արջգլորի արեւելեան զառիթափին ստորոտը,
բարձունք մը որ կատարելապէս կը տիրապետէ Մուշ քաղաքի հայ եւ
թուրք բոլոր թաղերուն եւ հանդիպակաց Սաչքի Դուրանի երկարա-
ձիգ դարբլուրի տարածքին վրայ, եւ զուտ թրքաբնակ է:

Իսկ Գայլերու Թաղն ալ կը տարածուի Բերդի Թաղի արեւել-
եան զառիթափն ի վար, Վերին Թաղէն դէպի շուկան երկարող ճամ-
բուն երկու կողմերը, եւ ամբողջովին բնակուած կատաղի ու վայ-
րազ թուրքերէ, որոնց նախահայրերը իսլամացած նախկին հայեր
էին՝ Գայլ Վահան Մամիկոնեանի սերունդէն:

բ.— Մուշ քաղաքը արեւելքէն, հարաւէն եւ արեւմուտքէն
շրջապատող բլուրներու եւ բարձունքներու աշխարհագրական դիր-
քերու եւ անոնց՝ իրարու հանդէպ ունեցած առնչութեանց մասին,
Կարօ Սասունիի անտեղեակութիւնը կը հասնի բացարձակ տգիտու-
թեան, երբ ան կ'ընէ բացայայտօրէն սխալ այսպիսի յայտարարու-
թիւններ՝

- 1.— Սաչքի Դուրանի աշխարհագրական դիրքին,
- 2.— Արջգլորի ստորոտը գետեղուած թնդանօթին, եւ
- 3.— Բերդի Թաղի եւ Սաչքի Դուրանի բարձունքներու առըն-
չութեանց մասին:

Քննենք այս կէտերն ալ՝ մէկ առ մէկ:

1.— ՍԱՉՔԻ ԴՈՒՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԻՆ.— «Կողի
Թաղէն եւ Մոկուսի բարձունքէն մինչեւ Աստղերդ ՏԱՐԱԾՈՒՈՂ(?)
Սաչքի Դուրանը զինուորակամ շփայի տակ առնուած էր», կը զրէ

բաղման մասով (?) «պատմագիր» Կարո Սասունի (նոյն, էջ 889) [Բոլոր ընդգծումները եւ հարցական նշանը մերն են, Ա. Տ.] :

Ըստ Կարո Սասունիի այս չքնադ բացատրութեան, կը տեսնենք որ Սաչքի Դուրանը՝ Կողի Թաղէն եւ ՄԱՆԱԻԱՆԻ՝ Մոկուսի բարձուցէն կը ՏԱՐԱԾՈՒԻ մինչեւ Աստղբերդ (?), ինչ որ բացարձակապէս Սեւակ նկարագրութիւն եւ Սեւակ յայտարարութիւն է :

Մեր յարգելի ընթերցողները կրնան ստուգել Սաչքի Դուրանի դիրքը՝ ուշադրութեամբ կարդալով անոր ձՇԳԻՏ նկարագրութիւնը՝ այս ուսումնասիրութեան «Տեղագրութիւն» բաժնին մէջ, Գլուխ Դ. :

Սաչքի Դուրանի երկարածիդ դարաբլուրը եւ Հաւատամքի հսկայազանգուած ու ժայռոտ լեռնաշղթան, որուն ստորին մասը՝ Մոկուսը գիւղի վերեւ, կը կազմէ «Մոկուսի բարձունքը», ըստ Կարո Սասունիի բացատրութեան, երկուքն ալ՝ Մչոյ Դաշտի երկու տարբեր կէտերէ (Սաչքի Դուրանը՝ ձրտու Քարեր կոչուած վայրէն, որ քաղաքի հիւսիս-արեւելեան ծայրամասն է, իսկ Հաւատամքի լեռնաշղթան ալ՝ Մոկուսը եւ Տէրգեվանք գիւղերէն) կ'երկարաձգուին դէպի Միրնկատար, յորինելով սրանկիւն խոր ձորահոսովի մը՝ Շեխենց Ձոր անունով, որու արեւելեան եւ արեւմտեան երկու կողերուն վրայ սփռուած էին առհասարակ քաղաքի հայութեան պատկանող այգիները, եւ որուն արեւելեան մէկ ժայռոտ լանջին վրայ՝ բարձրորէն թառած է Աստղբերդ պատմական ամրոցը, Հաւատամքի բարձրասլաց գագաթի հայեացքին տակ :

Ճիշտ է որ Սաչքի Դուրանը «զինուորական շղթայի տակ առնուած էր» Յունիս ամսոյ վերջին շարթուան ընթացքին, սակայն բացարձակապէս Սեւակ է յայտարարել թէ «Կողի Թաղէն եւ Մոկուսի բարձուցէն ՄԻՆՁԵԻ ԱՍՏՂԲԵՐԴ ՏԱՐԱԾՈՒՈՂ ՍԱՉՔԻ ԴՈՒՐԱՆԸ զինուորական շղթայի տակ առնուած էր», տալով ԱՅՆ Սեւակ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ թէ՛ :

ա. — Սաչքի Դուրանը՝ Կողի Թաղէն (եւ մանաւանդ՝ «Մոկուսի բարձուցէն») ԿԵՐԿԱՐԱՉԳՈՒԻ մինչեւ Աստղբերդ Ամրոցը, եւ

բ. — «Մոկուսի բարձունքէն մինչեւ Աստղբերդ» եղած ընդարձակ տարածութիւնն ալ «զինուորական շղթայի տակ առնուած էր» :

Այս երկու յայտարարութիւններն ալ բացարձակապէս Սեւակ ՆՆ, որովհետեւ Սաչքի Դուրանը, որ Շեխենց Ձորի արեւմտեան կողմը կ'իյնայ, Կողի Թաղէն եւ մանաւանդ «Մոկուսի բարձուցէն», ՉԵՐԿԱՐԱՉԳՈՒԻ մինչեւ «Աստղբերդ ամրոցը», այլ ընդհակառակը, ան (այսինքն, Սաչքի Դուրանը) թէ՛ Մոկուսի բարձունքէն եւ

թէ՛ Աստղբերդէն, որոնք ալ՝ Շեխենց Ձորի արեւելեան կողմը կ'իյնան, բաժնուած է այդ նոյն լայնատարած եւ խորունկ Շեխենց Ձորով :

Իսկ «Մոկուսի բարձունքէն մինչեւ Աստղբերդ» եղած ընդարձակ տարածութիւնն ալ՝ «զինուորական շղթայի տակ» ԱՌՆՈՒԱԾ ՁԵ՛Ր, ըստ վկայութեան նոյնիսկ իր կուռքը եղող Ռուբէնի, որ կը յայտարարէ. —

«Իսկ Աստղկայ բերդը ՁԵՁՈՒՔ ԷՐ ԿԱՆԳՆԱԾ» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», 2., էջ 78) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Եւ ասիկա, բարեբախտաբար, հազուագիտութեան ձԻՇՏ յայտարարութիւն է Ռուբէնի յուշերուն մէջ :

2. — ԱՐՋԳՂՈՐԻ ՍՏՈՐՈՏԸ ԶԵՏԵՂՈՒԱԾ ԹՆԻԱՆՕԹԻՆ ԴԻՐՔԸ. — Կարո Սասունի, նմանապէս, սխալ յայտարարութիւն կ'ընէ, երբ կը գրէ. —

«Արջղորի ԿՈՂԻՆ ՎՐԱՅ, նոյնպէս, թնդանօթ զետեղուած էր՝ թէ՛ քաղաքի եւ թէ՛ ԿԱՌՆԵՆ ԳԻԻՂԻ ԿՈՂՄԸ հարուածելու համար» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 889) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ճիշտ է որ Արջղորի ՍՏՈՐՈՏԸ (եւ ո՛չ թէ «կողին վրայ»)(1), Հաջի Նազիրի (Մուշի թուրք երեսփոխան Հոջա Իլխասի հօրեղբոր) բարձրադիր հնձանի քով, Վերին Թաղի ճիւղ կոնակը, զետեղուած էր թնդանօթ մը, այդ հայաթաղին վրայ կատարելապէս իշխող դիրքով մը, ՇԱՏ ԴԻԻՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՉԴՈՒՕՐԷՆ ոմրակոծելու համար Վերին Թաղը, որ բաց կը տարածուէր, այդ բարձրադիր հնձանի հայեացքին եւ հոն զետեղուած թնդանօթի անմիջական սպառնալիքին տակ, եւ ԴԻԻՐԱՆՈՑ ԹԻՐԱՆ՝ անոր ումբերուն :

Սակայն, այդ միւսնոյն թնդանօթի ումբերու հասոգութեան եւ քնդանօթաձիգներու տեսողութեան սահմանէն ԴՈՒՐՍ ԿԻՑՆԱՐ

(1) Արջղորի հսկայազանգուած լեռնաբլուրի արեւելեան եւ հարաւային կողերը այն աստիճան սեպածե կազմ ունէին որ որեւէ ժամանակ՝ արածող կենդանի նշմարուած չէր անոր այդ երկու կողերուն վրայ, ո՛չ իսկ աղուէս. որ կրնայ մագցիլ որեւէ սեպ լեռնակողերէ վեր : Արդէն, այդ լեռնաբլուրի անունն իսկ կը բացատրէ իր սեպածե կազմը — Արջղոր, այսինքն, եթէ արջ մը փորձէ արածիլ անոր արեւելեան ու հարաւային կողերուն վրայ, քաւալցոր կը սայթափ վար, դէպի անդնդախոր ձորը :

Կառնեն գիւղը, որովհետեւ այդ թնդանօթի դիրքին եւ Կառնեն գիւղի միջեւ վերԱՄԲԱՐՁ ԿԸ ՅՑՈՒԷՐ Հայ եւ թուրք բոլոր թաղերուն տիրապետող Բերդի Թաղի բարձունքը, որու աջ կողմը (հարաւ) կ'իյնար Արջգլորի թնդանօթը (վերին Թաղի կռնակը), իսկ ձախ կողմն ալ (հիւսիս)՝ Կառնեն գիւղը, բաց եւ տափարակ դաշտավայրի մը մէջ:

Կարօ Սասունիի սխալը հոն է, կը կարծենք, որ ան, հաւանարար, Արջգլորի թնդանօթը ԿԸ ՇՓՈԹԷ Բրուտներու Թաղը գետնաբաժան քնդանօթին հետ, եւ այս վերջին թնդանօթն էր որ, իր խիստ յարմար դիրքէն, ի վիճակի էր ՌՄԲԱԿՈՄԵԼՈՒ, մէկ կողմէն՝ Կառնեն գիւղը, իսկ ՄիհիՍ ԿՈՂՄԵՆ ԱԼ՝ Ձարու Թաղի (եւ ո՛չ թէ վերին Թաղի) մեր մարտիկներու դիրքերը, եւ որուն թնդանօթածիզ գինուորը դիտապատ սատկեցաւ Մշեցի քաջարի կռուող, լաւ նշանառու Սամուէլ Սպանդարեանի ղեկակով՝ քաղաքի կռիւին առաջին օրուան ընթացքին («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 397):

3.— ԲԵՐԴԻ ԹԱՂԻ ԵՒ ՍԱԶՔԻ ԴՈՒՐԱՆԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒ ԱՌՆՁՈՒԹԻՒՆԸ.— «Պատմագիր» Կարօ Սասունի՝ խիստ ապշեցուցիչ, բացարձակապէս անգործնական եւ ռազմագիտօրէն սխալ միտքեր կ'արտայայտէ, երբ կը գրէ հետեւեալ տողերը.—

«Մուշ քաղաքը ինքնապաշտպանութեան կրնար դիմել միայն այն ժամանակ, երբ գորաւոր կերպով գրաւած ըլլար Սաչի Դուրանի ամրոցը տարածքը եւ մարտական ուժերով դիրքը գրաւած ըլլար Կողու Թաղի բարձրադիր տուներու մէջ: Ատկէ զատ, հայերու ձեռքը պէտք էր մնային ՁՈՐԸ եւ դէպի Սասուն տանող ԼԱՆՁԵՐԸ, ինչ որ ժամանակին հնարաւոր եղած չէր» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 910) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.](2):

Կարօ Սասունի այսպիսի անհիմն, անգործնական եւ մանաւանդ՝ ՏԳԻՏԱԿԱՆ գաղափարներ պիտի չարտայայտէր՝ վերի ընդ-

(2) Ըստ երեւոյթիմ, մեծատաղանդ գինուորականի մը ռազմագիտական խիստ չքնաղ ծրագիր մըն է որ կը յղանայ Տարօնի ռազմագէտ(?) «պատմագիրը». դժբախտաբար, սակայն, ինք հ'ոն, Մուշ քաղաքի մէջ չէ'ր գտնուեր՝ այդ նգնաժամային օրերուն, որպէսզի քաղաքի գոյամարտը առ ի չգոյէ կազմակերպող եւ ղեկավարող Հաջի Յակոբին «թելադրէր» իր ռազմագէտ խելապատակի այդ համեմարեղ(?) արտադրութիւնը՝ ի փրկութիւն Տարօնի համայն հայութեան...:

դժուած տողերով, եթէ ինք գոնէ տարրական ծանօթութիւն ունեցած ըլլար Բերդի Թաղի բարձունքին եւ Սաչի Դուրանի «ամրոցը տարածքի» ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌՆՁՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ:

Ինչպէս յայտնած ենք ասկէ առաջ ալ, Բերդի Թաղի բարձունքը, իր բարձրահայեաց դիրքով, ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ ԿԸ ՏԻՐԱՊԵՏԷՐ Մուշ քաղաքի հայ եւ թուրք բոլոր թաղերուն, ինչպէս նաեւ հանդիպակաց (արեւելեան) կողմը գտնուող Սաչի Դուրանի «ամրոցը տարածքին», հետեւաբար նաեւ «Կողու Թաղի բարձրադիր տուներուն» ալ վրայ, որոնք՝ իր թնդանօթի հարուածներուն ամենէն դիւրախոց քիրախնները պիտի գտնուային եւ կրնային քար ու քանդ ըլլալ ԱՆՄԻՋԱՊԷՍ, նոյնիսկ կռիւը սկսելուն պէս, մէկ-երկու ժամուան ընթացքին, դեռ կէսօր չեղած:

Իսկ ձորին եւ «դէպի Սասուն տանող լանջերուն»՝ թուրքերու ձեռք գտնուելը լրջօրէն ուշադրութեան անուելիք կարեւոր ազդակ մը ԶԷՐ, երբ նկատի ունենանք այդ վայրերը գտնուող թրքօ-բուրգ գինուորներու բարոյական կորովը, որու մասին պիտի խօսինք հիմա:

2.— Կարօ Սասունի քնաւ երբեք ՊԻՏԻ ՉՓՈՐՁԷՐ քննութեան առարկայ դարձնել այս գլուխի սկիզբը յիշուած երկու սուտ ու սխալ յայտարարութեանց առաջին կէտը, այսինքն, «Կուրտիկի լանջերուն վրայ դիրքը գրաւող գինուորները ո՛չ միայն կը կռուէին Սասունը ուժերուն դէմ, ա՛յլ իւր լերան բարձունքներէն ԿԸ ՀՍԿԷՆ քաղաքին», եթէ ինք, կատարեալ լրջութեամբ, ուշադրութիւն դարձուցած ըլլար Կուրտիկի «լանջային խրամներուն» մէջ «տեղաւորուած երկու վաշտ զօրք»ի, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարժարանի մէջ զետեղուած մէկ վաշտ գինուորներու բարոյական կորովին վրայ, որովհետեւ Կուրտիկի լանջերուն վրայ «տեղաւորուած երկու վաշտ զօրք» ո՛չ յարմարութիւն եւ ո՛չ ալ կարողութիւն ունէր ՄԻԱՆԳԱՄԱՑՆ կատարելու՝ Սասունցի «պատմագիր»ի կողմէ իրեն վերԱԳՐՈՒԱԾ այդ գոյգ պարտականութիւնները, այսինքն, մէկ կողմէն՝ կռիւ մղել Սասունի ահեղագոր եւ սարսափազդու ուժերուն դէմ, իսկ միւս կողմէ ալ, Կուրտիկ լերան այդ հեռաւոր բարձունքներէն՝ «հսկել քաղաքին»:

ՊԵՏՔ ԶԷ ԵՐԲԵՔ ՄՏԱՀԱՆ ԸՆԵԼ այն յոյժ կարեւոր պարագան որ ո՛չ միայն Կուրտիկի «խրամներուն» մէջ «տեղաւորուած» զօրքը, այլ նաեւ Մուշ քաղաքը պաշարող գինուորները, ներառեալ նաեւ Կեդրոնական Վարժարանի մէկ վաշտը, եւ առհասարակ՝ քաղաքի համայն թրքութիւնը, ԲՈԼՈՐՆ ԱԼ, ԲՈԼՈՐՆ ԱԼ, կ'ապրէին Սասունի անուան ՀՄԱՅՔԻՆ եւ հոն քնակող ԱՀԵՂԱԶՕՐ ֆեդայիներու վերԱԳՐԵԱԼ առասպելական ուժին ՊԱՏՃԱՌԱԾ ՍԱՐՍԱՓԻՆ ԱԶԳԵՑՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ:

Քաղաքի քաջարի կռուողներու առաջին օրուան խիստ յայտնա դիմադրութեան հետեւանալով, Մուշի հանուր թրքութիւնը — կառավարութիւն, զօրք եւ ժողովուրդ — ահաբեկած էր ԱՅՆ ՄՏԱԾՈՒՄԷՆ թէ Սասունի ֆեդայիները, նոյն օրն իսկ, օգնութեան պիտի փութային քաղաքին, եւ միանալով հոն օրհասական կռիւ մղող քաջայանդուզն հերոսներուն, յարձակում պիտի գործէին իրենց վրայ, եւ շատեր՝ ԱՐԴԷՆ ԻՍԿ քաղաքէն խոյս տալու կազմ ու պատրաստ վիճակի մէջ, ԱՀՈՂ ՌԻ ԴՈՂՈՎ ՀԱՄԱԿՈՒԱԾ, հեռադիտակներով կը խուզարկէին Սասուն տանող ճամբաներն ու լեռնալանջերը՝ մեծ անձկութեամբ:

Ծանրօրէն ճնշող հոգեբանական ա՛լ աւելի մտայլ եւ բարոյալիք մթնոլորտի մը մէջ կ'ապրէր Կուրտիկի լանջերու «զօրքն» ալ, որ ԱՆՄԻՋԱԿԱՆ սպառնալիքին տակ կը գտնուէր Սասունի ահեղազօր ֆեդայիներուն:

Ա՛յդ իսկ պատճառով, երբ Փեթարցի Իսրօն եւ իր խումբը (ըստ Ռուբէնի եւ Կարօ Սասունիի պատումներուն), «ԴԱՇՈՅՆՆԵՐՈՎ» յարձակում կը գործէին անոնց վրայ, անո՛նք, այդ սարսափահար զինուորները, իրենց արդիական զէնքերով եւ ռազմական ամբողջ կարելիութիւններով, իրենց «խրամներով» եւ խրամային «երկաթէ թելերով», հալ ու մաշ կը ԶՔԱՆԱՅԻՆ:

Հետեւաբար, այսպիսի քայքայուած հոգեվիճակ եւ բարոյական կորով ունեցող ԱՅԴ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԶԷԻՆ որ կարող եւ ի վիճակի պիտի ըլլային՝ ՄԷԿ ԿՈՂՄԷՆ կռիւ մղելու Սասնոյ ահեղազօր եւ սարսափազդու ուժերուն դէմ, իսկ ՄԻԻՍ ԿՈՂՄԷՆ ԱԼ, Կուրտիկի հեռաւոր լեռնալանջերէն՝ «հսկելու» քաղաքին ալ վրայ:

3.— Այդպիսի «եսկզուրիւն» մը ԱՆԿԱՐԵԼԻ եւ ԱՆՀՆԱՐ ԷՐ՝ աշխարհագրական երկու շատ կարեւոր պատճառներով ալ.

ա.— Որովհետեւ Կուրտիկի եւ Ծիրնկատարի լանջերէն ԱՄԲՈՂՁՈՎԻՆ ՏԵՍԱՆԵԼԻ ԶԷԻՆ քաղաքի հայկական թաղերը, որոնք կ'իյնային կա՛մ դարձադարձի բլուրներու, Արջկորի հսկայ եւ սեպ ցցուածքին ԵՏԵԻ, եւ կա՛մ, ԵՈՐՈՒՆԿ ԳԵՏԱՁՈՐԻՆ ՄԷՋ:

բ.— Որովհետեւ խիստ դժուար պիտի ըլլար, եթէ չըսենք՝ ԱՆԿԱՐԵԼԻ, որ Կուրտիկի լանջերուն վրայ դիրք գրաւող «երկու վաշտ զօրքը» կարողանար իրարմէ զանազանի քաղաքը պաշարող զինուորները՝ Սասունէն օգնութեան փութացող ֆեդայիներէն, այդքան հեռաւորութեան վրայ, եթէ ասոնք օգնութեան փութային յարմարագոյն մանապարհով եւ յարմարագոյն ժամանակի ընթացքին, որ բնականաբար՝ գիշեր պիտի ըլլար, երբ թրքական թնդանօթները չէին գործեր, ըստ վկայութեանց Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեանի («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 397 եւ

407) եւ Երուանդ Շարաֆեանի («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռներ», էջ 27):

4.— ԾԻՐՆԿԱՏԱՐԻ ԵՒ ԿՈՒՐՏԻԿԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԷՆ ԴԵՊԻՔՈՒՔ ԲԱՑՈՒԱԾ ԶՈՐԻՆ ՃՇԳՐԻՏ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ.— Նոյն առարկութիւնը ճիշդ է նաեւ այն մէկ վաշտ զինուորներու համար ալ, զետեղուած Կեդրոնական Վարժարանի մէջ, որ «ԿԸ ՀՍԿԵՐ Ծիրնկատարէն դէպի Մուշ բացուած ձորին» (Կարօ Սասունի, «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 958) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.]:

Նախ ճշտենք «Ծիրնկատարէն դէպի Մուշ բացուող ձոր»ին խնդիրը:

Միմակ Ծիրնկատարէն ԶԷ որ կը սկսի դէպի Մուշ քաղաքը բացուող ձորը, որ երեք ջրահոսանքներ կ'ընդունի. — աջ կողմէն, կեդրոնէն եւ ձախ կողմէն:

Աջ կողմի ճիւղը իր ծագումը կ'առնէ Արջկորի եւ Կուրտիկի միջեւ գտնուող լեռնալանջերէն եւ ձորահովիտէն, որ ծանօթ է Արնգուր անունով:

Կեդրոնի ճիւղին մէջ կը հոսին Կուրտիկի հիւսիսային լանջերու ջուրերը եւ Տափըք գիւղին քով կը միանան Արնգուրի ճիւղին ու միասնաբար կը հոսին մինչեւ Աւզնոցայ ճիւղ կոչուած վայրը, ուր իրենց կը միանայ Ծիրնկատարի լանջերէն հոսող եւ Ամարանոց Մուշեղաբերդի արեւելեան կողմ քերող երրորդ (ձախ կողմի) ճիւղն ալ, այսպիսով կազմելով Մուշի գետակը, որ խորունկ ձորին մէջէն հոսելով, Կրէ Կամուրջը անցնելէն յետոյ, Քուրդ Բակոյի տան բարձունքի հայեացքին տակ, կը մտնէ Զորու Թաղը, ապա՝ Սուրբ Մարինէ Թաղը եւ անկէ ալ կը կտրէ կ'անցնի Քոթանենց եւ Տաշոյի թրքական թաղերը ու կը մտնէ Մշոյ Դաշար՝ հո՛ն պարպուելով Մեղրազետի մէջ:



ԳԼՈՒԽ ԺԷ.

ՍԱՍՈՒՆԵՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԹԱԼ ՌԻԶՈՂՆԵՐՈՒ ԱՊԱՀՈՎ ՃԱՄԲԱՆ

Հիմա քննենք այն ճամբաները, որոնցմով բանաւոր եւ հնարաւոր պիտի ըլլար Սասունարանի ուժերուն՝ մօտենալ քաղաքին եւ օգնութեան հասնիլ այնտեղի մարտնչող ու մոռնող Առիւծին (Հաջի Յակոբին) եւ իր փոքրաթիւ կորիւններուն:

Կեդրոնական Վարժարանի եւ ասոր կից՝ Շէկ Աւետարան (Ս. Աստուածածին) Եկեղեցւոյ(1) բարձունքէն դէպի հարաւ, Սասունի ուղղութեամբ նայողը, առաջին իսկ առիթով, պիտի տեսնէ, ո՛չ շատ հեռու, իր դիմացը գտնուող քուրդ Բակոյի տան բարձունքը, թրքական դերեզմանոցի հարաւային ծայրը (Գոռերու թաղամասը), եւ այդ ուղղութեամբ՝ իր հայեացքը քիչ մը աւելի վեր բարձրացնելով, իր աչքերուն առջեւ կը պարզուին Կուրտիկի լանջերուն մէկ մասը եւ մասամբ նաեւ Ծիրնկատարի տափարակ գագաթը եւ լանջամասը, որոնք միասնաբար կը յօրինեն լայնածիր տարածութիւն մը՝ սկսելով Արնդուբէն, եւ Կուրտիկի ծիրով՝ կը հասնին Ծիրնկատարի սեղանաձեւ գագաթին առջեւ տարածուած լայնափեռիկ դարաւանդը:

Կեդրոնական Վարժարանի բարձունքէն դիտողը՝ միայն մէկ սահմանափակ շերտը կը տեսնէ այդ լայնածիր տարածութեան, բաղադատաբար սահմանափակ հորիզոնով մը, որ աջ կողմէն կ'եզերուի Արջկլորի հսկայազանդուած եւ ցցուն լեռնաբլուրով, իսկ ձախ կողմէն ալ՝ սրածայր Պուլոզ Քարի բարձրասլաց ցցուածքով, որ Սաչքի Դուրանի ամենաբարձր եւ ժայռոտ գագաթն է:

(1) Վերին Թաղի Ս. Յարութիւն եւ Զորոյ Թաղի Ս. Աստուածածին եկեղեցիները աւելի ծանօթ էին իրենց հրաշագործ Աւետարաններու անուններով. այսպէս, Վերին Թաղի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ հրաշագործ Աւետարանի անունն էր Սեւ Աւետարան, եւ եկեղեցին ալ կը մանչցուէր այդ անունով. իսկ Զորոյ Թաղի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հրաշագործ Աւետարանի անունն էր Շէկ Աւետարան, եւ եկեղեցին ալ աւելի ծանօթ էր այդ անունով:

Կեդրոնական Վարժարանէն տեսանելի այդ սահմանափակ հորիզոնի սահմաններէն դուրս, աջ ու ձախ կողմերը, Դեմի ԿԱ՛Ն ընդարձակ տարածութիւններ, — աջ կողմը՝ Արնդուբի հովիտը, ձախ կողմն ալ՝ Ծիրնկատարի առջեւ բացուած լայնափեռիկ դարաւանդը՝ տարածուած մինչեւ Առաքելոց Վանքի կոնակի լեռնալանջերը:

Սասունէն օգնութեան փութացողները եթէ փորձէին վար իջնել Կուրտիկի լանջերէն, կա՛մ Արնդուբի հովիտէն, եւ Աւզընոցայ ձիւղէն վար՝ յառաջանային դէպի քաղաք, — ինչպէս որ կը պատմէ Ռուբէն՝ իր «Ճըռտոնայ»ի պատմութեան մէջ, — անելի պիտի մատնուէին, որովհետեւ հազիւ կրէ կամուրջը անցած, պիտի նըշմարուէին Քուրդ Բակոյի տան բարձունքի ոստիկանատան պահականոցէն, եւ կա՛մ՝ Փոթկանց արտերու զօրքերէն, եւ ենթարկուէին անոնց գնդացիներու եւ հրացաններու կրակներու տեղատարափին, եւ ո՛չ թէ այդ խորունկ ձորին մէջ՝ իյնային «Բերդու Թաղի, Մուշեղայ Բերդի եւ Սաչքու թրքական ղիբքերի կրակին», այսինքն, թրքական թնդանօթներու հարուածներուն տակ, ինչպէս կը յայտարարէ Ռուբէն («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 81), տղիտաբար կա՛մ նենգամտօրէն. աւելի նենգամտօրէն, քան տղիտաբար...:

Ամենէն տրամաբանական եւ ազահով ճամբան, այդ պարագային, անտարակոյս պիտի ըլլար՝ Ծիրնկատարի առջեւի դարաւանդէն վար իջնել մինչեւ Պուլոզ Քարի թիկունքը եւ ԱՅԴՏԵՂԷՆ ՍՊԱՌՆԱԼ Պուլոզ Քարի (Սաչքի Դուրանի) թնդանօթին, եւ ՅԱՆԿԱՐԾԱԿԻ ՅԱՐՁԱԿՈՒՄՈՎ՝ ահաբեկել եւ ԱՆՁՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՐԿԱԴՐԵԼ արդէն իսկ սարսափահար այդ թնդանօթածիզները:

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻԻ ԶԱՓ ՆԵՆԳԱՄԻՏ, ԲԱՅՑ Ո՛Չ ԱՆՈՐ ԶԱՓ ԱՆՄԻՏ. — Թուրք զինուորական իշխանութիւնը, որ կ'առաջնորդուէր գերմանական փորձառու սպաներու ցուցմունքներով եւ թելադրութեամբ [Ա.], թէեւ Կարօ Սասունիի չափ նենգամիտ, բայց անոր չափ անմիտ չէր որ Կեդրոնական Վարժարանի բարձունքը զրաւէր այդպիսի անգործնական, եթէ չըսենք՝ յիմարական նպատակի մը համար, եւ բոլորովին ԱՆՏԵՍ ԸՆԷՐ Քուրդ Բակոյի տան բարձունքը, որ իրապէս ու ճշմարտապէս ամենայարմար վայրն էր՝ «հսկելու Ծիրնկատարէն դէպի քաղաք բացուած ձորին» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 958):

Եթէ թուրք զինուորական իշխանութեան մտահոգութեան ՄԻԱԿ ԱՌԱՐԿԱՆ ըլլար ԱՅԴ ԶԵԻՈՎ ԱՐԳԻԼԵԼ Սասունէն գալիք որեւէ օգնութիւն, ամենատրամաբանական կանխազգուշական միջոցը պիտի ըլլար գրաւել Քուրդ Բակոյի տան բարձունքը, փոխանակ Կեդրոնական Վարժարանի բարձունքին:

Համիտական բռնակալութեան շրջանին արդէն, Սասունի 1904ի սպստամբուժեան ատեն եւ անկէ յետոյ ալ, մինչեւ Թրքական Սահմանադրութիւնը, Վերին Թաղի ոստիկանատունը հաստատուած էր Քուրդ Բակոյի տան բարձունքին վրայ գտնուող Խոջա Յովսէփ Միքայէլեանի տան մէջ, Քուրդ Բակոյի տան պատկից, որ ԻՐԱՊԷՍ ու ՃՇՄԱՐՏԱՊԷՍ ԿԸ ՀՍԿԷՐ Ծիրնկատարի եւ Կուրտիկի լանջերէն ղէպի քաղաք երկնցող այդ խորունկ գետածորի բացուածքին վրայ:

ԵՐԿՈՒ ՇԱՏ ԼՈՒՐՁ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԷՄ-ՅԱՆԻՒՄԱՆ.— Թուրք կառավարութիւնը, Տարօնի մէջ, երկու ՇԱՏ ԼՈՒՐՁ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ղէմ-յանդիման կը գտնէր ինքզինք, պատերազմի ամենէն տաղնապալից այդ օրերուն, — ՄՈՒՇ ՔԱՂԱՔԸ եւ ՍԱՍՈՒՆ:

Իրարու հետ սերտօրէն լծորդուած այս երկու սրբացեալ եւ նուիրական դարձած անուններու արտաբերումն իսկ՝ անհուն սարսափով եւ սարսուռով կը թրթռացնէր Տարօնի թրքութեան դողահար սիրտերը:

Ի՞նչ պիտի ըլլար հետեւանքը, եթէ Մուշ քաղաքն ալ դառնար ուրիշ Վան մը՝ իր կոնակն ունենալով թուրքերու աչքին ԱՄԵՀԻ եւ ԱՀԵՂԱԶՕՐ ՆԿԱՏՈՒԱԾ Սասունը, եթէ ան (Մուշ քաղաքը), աւելի կանուխէն, Կեդրոնական Վարժարանի բարձունքը դեռ չգրաւուած (Վանի ապստամբութենէն քսան օր առաջ), պարզէր ապստամբութեան դրօշը, որուն համար՝ մէկէ աւելի ինքնամատոյց եւ իրերա-յաջորդ նպաստաւոր առիթներ ներկայացած էին արդէն. օրինակ, Ալիջան գիւղի ղէպը՝ 1914 Նոյեմբեր 25-ին, Յրօնք գիւղի ղէպը՝ 1915 Յունուար 25-ին, Գոմս գիւղի ղէպը՝ Փետրուար 6-7-ին, եւ Առաքելոց Վանքի ղէպը՝ Փետրուար 14-15-ին:

Մուշ քաղաքը կրնար տիպար ծառայել Վանին՝ աւելի բազմաշատ արդիւնքներով, եթէ Տարօնի այդ ատենուան երկու ղեկավար «պարոնները ունենային իրենց պատասխանատուութեան ԽՈՐ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ, ՀԱՒԱՏԱՐԻՄ ՄՆԱՅԻՆ իրենց կոչումին եւ ստանձնած պարտականութեանց, եւ ՎՃՌԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ԱՌՆԵՒԻՆ՝ համաձայն օրուան հրամայական պահանջներուն, բայց...:

Այս գահավիժող իրերայաջորդ ղէպերուն հակազդելու եւ քաղաքի հաւանական ապստամբութեան ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԶԷՁՈՔԱՑՆԵԼՈՒ, կա՛մ գոնէ՝ ՆՈՒԱԶԱԳՈՅՆԻՆ ԻՋԵՑՆԵԼՈՒ դիտաւորութեամբ էր որ Թուրք կառավարութիւնը ձեռք դրած էր Կեդրոնական Վարժարանի բարձունքին վրայ:

Եւ այս գրաւումը, բնականաբար, արդիւնք էր չափուած, կշռուած, մեծ խնամքով կանխամտածուած եւ շատ խելացիօրէն ալ գործադրուած զինուորական հաշիւներու:

Կեդրոնական Վարժարանի բարձունքին գրաւումով, որ տեղի ունեցաւ Մարտ 19-ին, Աւագ Հինգշաբթի օր (Տեսնել «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 331), Վանի փառաւոր ապստամբութենէն քսան օր առաջ, — ինչպէս յիշուեցաւ, — Թուրք զինուորական իշխանութիւնը ձեռք կը բերէր ռազմագիտական ԵՐԿՈՒ անմիջական եւ անփոխարինելի առաւելութիւններ, որոնք էին ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ այդ գրաւումին:—

1.— Խզել կա՛մ դժուարացնել կապը եւ յարաբերութիւնը Վերին եւ Զորոյ թաղերուն միջեւ:

2.— Անմիջական հսկողութիւն հաստատել Զորոյ եւ Սուրբ Մարինէ թաղերուն վրայ:

Կեդրոնական Վարժարանի բարձունքը, որ միանգամայն կը հսկէր Վերին Թաղէն ղէպի Զորոյ Թաղը երկնցող բոլոր նամբանբուն եւ անցքերուն ալ վրայ, արեւմտեան կողմէն սեպածեւ կը խրէր Զորոյ Թաղի կռակը եւ կատարելապէս կը տիրապետէր նաեւ Մշոյ գետակի երկու կողերն ի վեր, ամփիթատրոնաձեւ բարձրացող Զորոյ եւ Սուրբ Մարինէ հայաթաղերու բոլոր տուններուն ալ:

Կեդրոնական Վարժարանի հարաւային կողմը, գետակի երկու եզերքներուն վրայ, մինչեւ Փոթիկեաններու ջրաղացն ու տունները, իսկ հիւսիսային կողմն ալ՝ մասամբ Գայլերու թաղով եղբուրող Զորոյ Թաղի եւ ասոր շարունակութիւնն եղող Մարինէ Թաղի ամփիթատրոնաձեւ շինուած տունները, նոյն գետակի երկու բարձրադիր կողերուն վրայ, դիրախոց թիրախներ էին Կեդրոնական Վարժարանի բարձունքին:

Ահա՛ւաւիկ, այս անփոխարինելի առաւելութիւններուն տիրանալու համար էր որ Թուրք զինուորական իշխանութիւնը ձեռք դրած էր ռազմագիտական խիստ մեծ արժէք ներկայացնող Կեդրոնական Վարժարանի այդ բարձունքին վրայ, եւ ո՛չ թէ «Ծիրնկատարէն ղէպի Մուշ բացուած ձորին հսկելու համար», ինչպէս կը յայտարարէ «պատմագիր» Կարօ Սասունի:

Թէեւ յետոյ, քաղաքի կռիւին առաջին օրուան ընթացքին՝ մանաւանդ, բացայայտ եղաւ որ Կեդրոնական Վարժարանի մէջ տեղաւորուած Թուրք զօրքը ի վիճակի չեղաւ արդարացնելու իր վրայ դրուած յոյսերը, որովհետեւ հակադարձաբար ինկած էր Վերին եւ Զորոյ թաղերու հայ մարտիկներու երկու կրակներուն միջեւ ու ամբողջովի՛ն դատապարտուած անդամալուծութեան:

Կեդրոնական Վարժարանի բարձունքին ռազմագիտական կարեւորութեան ու արժէքին ՀԱՍՈՒ եւ ԳԻՏԱԿԻՑ ԷԻՆ նաեւ Ազգային Առաջնորդարանը եւ մանաւանդ՝ Հաջի Յակոբ. ա՛յդ իսկ պատճա-

ուով ալ, անոնք փորձեր քրին ԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅԴ ԳՐԱՒՈՒՄԸ, առարկելով թէ Առաջնորդարանի չէնքը խախտւում ըլլալուն համար, իրենք ԱՐԳԻԼԵՆ ԻՍԿ ԾՐԱԳՐԱԾ ԷԻՆ հոն փոխադրել Ազգային Առաջնորդարանը: Սակայն, անոնց առարկութեանց կարեւորութիւն տուող չեղաւ (Տեսնել Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը, էջ 114):

ՔԱՂԱՔԻ ԱՊՍՏԱՄԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԱԶԱԳՈՅՆԻ ԻՋԵՑՈՒԱԾ — Կեդրոնական Վարժարանի բարձունքին տիրանալով, թուրք զինուորական իշխանութիւնը ՆՈՒԱԶԱԳՈՅՆԻ ԿԻՋԵՑՆԷՐ Մուշ քաղաքի ապստամբութեան կամ դիմադրութեան հաւանականութիւնը, եթէ միայն ՀՆԱՐԱՒՈՐ կամ ԿԱՐԵԼԻ ԸԼԼԱՐ ԱՐԳԻԼԵԼ Սասունի ընծայելիք օժանդակութիւնը, որ կրնար ՀՐԱՇՔՆԵՐ ԳՈՐԾԵԼ, եթէ գար...:

Այդ բարձունքի գրաւումէն աւելի քան երեք ամիս ետք, եւ քաղաքի կռիւը սկսելէն երեք օր առաջ էր միայն, — Յունիս 26-ին, Ուրբաթ օր, — որ թուրք կառավարութիւնը պարպել տուած էր նաեւ Քուրդ Բակոյի տան կոնակը գտնուող Գոռերու թաղամասի (Վերին Թաղ) բոլոր հայերու տունները, — Յակոբ Պալեանի տունէն սկսեալ, Կթունի Մխոյի, Գաղանճեան Հլղաթի, Դաւթթոյնց եւ այդ շարքին վրայ գտնուող բոլոր հայերու տունները, մինչեւ Զըքոյի ջրաղացը(2), ինչպէս նաեւ Սուրբ Մարինէ Թաղի կողի թաղամասի բոլոր հայերու տունները, օրինակ, Իսրայէլ Դուռնեանի, Համազասպ Տէր Յովհաննէսեանի, Գաւառեաններու, Զոյոյի Գասպարի եւ այլ ազգայիններու տունները, եւ զօրք լեցուցած անոնց մէջ:

Այս նոր գրաւումներով, հայ թաղերու շուրջ քաշուած զինուորական շղթան ա'լ աւելի պրկուեցաւ ու ամրացաւ: Սակայն, Դեմի ԿԱՐ ու ԿԸ ՄՆԱՐ Սասունի սարսափեցնող սպառնալիքը, որ արճիճի ծանրութեամբ կը ճնշէր բոլոր թուրքերու դողահար սիրտերուն վրայ:

Թուրք կառավարութիւնը եւ զինուորական իշխանութիւնը ԱՆԿԱՐՈՂ եւ ԱՆՁՕՐ ԿԸ ԳՏՆԷԻՆ ԻՆՔՁԻՆՔՆԻՆ՝ Սասունի կարծեց-

(2) Թուրք կառավարութիւնը՝ այս քաղամասը գրաւած էր նմանապէս 1904-ի Սասունի ապստամբութեան ատեն ալ, անոր վերայ աւելցնելով նաեւ Վերին Թաղի արեւմտեան ծայրամասին մէջ, Արջվարի անմիջական ստորուոր գտնուող Փալամազի, Ասատուր Ասլանեանի, Սահակ Կակոյեանի եւ Ենկոյեաններու տունները եւ զօրանցի վերածած:

եալ ԱՀԵՂ ՈՒԺԵՐՈՒՆ հանդէպ, այդ տաղնապալից օրերուն: Անոնց զգացած այդ ապիկարութեան եւ անդօրութեան յայտարար նշանը այն հրահանգն էր, զոր անոնք տուած էին քաղաքը պաշարող զօրքին եւ տեղացի թուրք ազգաբնակչութեան թէ քաղաքի մէջ կռիւը սկսելէն ետք, ՍԱՍՈՒՆԷՆ՝ ՖԵՒԱՅԻՆԵՐԸ ԵՐԵՒՅԱԾԻՆ ՊԷՍ, բոլորն ալ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԼՔԵՆ իրենց դիրքերն ու տունները, եւ ՓՈՒԹՈՎ ՆԱՀԱՆՁԵՆ ԳԻՆՂԻ եւ Քարբերդի ուղղութեամբ...:

[Ա.] Յունիս 28-ին, Վարդապետի Կիրակի օրը, երբ մէկ կողմէն, Մշոյ Դաշտի ամրոցը հայութիւնը արեան ծովերու մէջ կը լողար, քաղաքի մէջն ալ, թուրք զինուորական իշխանութիւնը թնդանօթներ կը զետեղէր քաղաքին տիրապետող բարձունքներուն վրայ, Գերման սպաններու առաջնորդութեամբ, ցուցմունքներով եւ խորհուրդով:

Այդ մասին խօսած ատեն, մեր աւագ յուշագիր Միսակ Բդէ-եան կը գրէ հետեւեալ տողերը.—

«Այդ միջոցին տեսանք որ Գերման սպայ մը եւ թուրք սպայ մը, հեծեալ, մեր բնակած տան պատուհանի առջեւէն՝ դետը անցնելով, ձիարշաւ բարձրացան դէպի մեր դիմացի բլուրը, որ քաղաքի արեւելեան կողմը կ'իյնայ, եւ Պոլէեան Մշոյի եւ իր հօրեղբայրներու տուններուն առջեւ կանգ առին:

«Մենք կը տեսնէինք պատուհանէն:

«Իրենց շարժումներէն հասկցանք որ թնդանօթ զետեղել կ'ուզէին այդ տեղերն ալ, բայց, ըստ երեւոյթին, անյարմար դատելով, կրկին հեծան իրենց ձիերը եւ սրընթաց՝ եկած ճամբաներով անցան գացին, քանի որ Բերդի Թաղը զետեղուած թնդանօթները կրնային ուժրակոծել այդ կողմերը», («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 388):



Գ Լ ՈՒՒ Ժ Ը .

«ԹԵՐԵՒՍ ՀԱՋԻ ՅԱԿՈՒՔ ԶԵՐ ՀԱՒԱՏԱՐ...»

Վերոյիշեալ սուտ ու սխալ երկու յայտարարութիւններէն զատ, «պատմագիր» Կարօ Սասունի կ'ընէ խիստ ծանրակշիռ, յայժ անվայել եւ ծայրայեղօրէն վարկաբեկիչ ուրիշ յայտնութիւն մը եւս .—

«Հաջի Յակոբ Կոտոյեան, որպէս Հին Ֆեղայի, շատ լաւ գիտէր թէ ԱՆՅՈՅՍ նախատարտ մըն էր որ կը մղէին: Բայց ժողովուրդի տրամադրութիւնը բարձր պահելու համար, ամէն հնարքի կը դիմէր... Շատ յաճախ կը կրկնէր, որպէս քաջալերութիւն .

«— Տղա՛ք, լա՛ւ կուուեցէ՛ք, քիչ մըն ալ դիմացէ՛ք. Սասունէն մեզի օգնութիւն պիտի հասնի:

«Կոնի այդ ծանր պահերուն, բոլորն ալ կը յուսադրուէին եւ կը դիմանային: ԹԵՐԵՒՍ ՀԱՋԻՆ ԷՐ ՄԻԱԿԸ ՈՐ ԻՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԶԵՐ ՀԱՒԱՏԱՐ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 902) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Կը տեսնէք շնական համարակազմութիւնը այս կուսակցազար «պատմագիր»ի խեղ խորհելակերպին եւ չարախինդ մտածումին, սիրելի՛ ընթերցողներ. չար խորհուրդ եւ նեղ մտածում, զոր կը յայտնարեիք այս հաշմուղեղ Սասունցի «պատմագիր»ը, Կարօ Սասունի կոչեցեալ, որ յանդգնութիւնը կ'ունենայ ո՛չ միայն այլ ու ձախ մուր քսելու [Ա.], այլեւ մասնատրապէս ԱՐԱՏԱԻՈՐԵԼՈՒ ՓԱՌԱՊԱՆՆԵ ԱՆՈՒՆԸ ԵՒ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՄԱՔՈՒՐ ՅԻՇԱՏԱԿԸ ԱՆԲԻԾ ՀԵՐՈՍԻ ՄԸ, վաւերական, ճշմարիտ եւ համագայիմ չափանիշով՝ ԻՐԱՊԵՍ ՈՒ ՃՇՄԱՐՏԱՊԵՍ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ՄԵՍ ՀԵՐՈՍԻ ՄԸ, — ՀԱՋԻ ՅԱԿՈՒՔ ԿՈՏՈՅԵԱՆԻՆ, — անոր վերագրելով խարբայական անհարազատ միտքեր ու գաղափարներ թէ «ԹԵՐԵՒՍ ՀԱՋԻՆ ԷՐ ՄԻԱԿԸ, որ իր յայտարարութեան ԶԵՐ ՀԱՒԱՏԱՐ», (Կարօ Սասունի, նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Տեսնե՛նք թէ ի՞նչ էր բացարձակ իրականութիւնը. ի՞նչ էին Հաջի Յակոբի հաւատքն ու համոզումը, ինչպէս նաեւ անկեղծ բաղձանքը, որոնք ԶինՔ ՄՂԵՑԻՆ Մուշ քաղաքի գերագնացօրէն անհաւատար ԱՅԴ ԳՈՅԱՄԱՐՏԸ ԱՌ Ի ԶԳՈՅԷ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՒ ՂԵՎԱՎԱՐԵԼՈՒ ՆՈՒԻՐԱԿԱՆ ԿՈԶՈՒՄԻՆ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ:

Մեր ընկ Տարօնցի բոլոր յուշագիրները, եւ մասնաւորապէս Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեան, որ իր ամբողջ կեանքի ընթացքին, մանկութեան օրերէն սկսեալ՝ խաղընկեր, դասընկեր, կուսակցական ընկեր, բարեկամ, գաղափարակից, դործակից, եւ 1908-1915-ի շրջանի ամբողջ տեսողութեան ալ, Տարօնի Ազգային Առաջնորդարանի շրջանակին մէջ՝ պաշտօնակից եղած է Հաջի Յակոբին, — իրենց յուշերուն մէջ կ'արձանագրեն բազմաթիւ ու այլազան դրուագներ, որոնց մէջ, արեւի պէս ԼՈՒՍԱՊԱՅԾԱՌՕՐԷՆ ԿԸ ՓԱՅԼԻՆ Հաջի Յակոբի անվիճելի հայրենասիրութիւնը, անբիծ ազգասիրութիւնը, անկեղծ նուիրումութիւնը, առողջ դատողութիւնը, անշահախնդիր բնաւորութիւնը, պատրաստակամ գոհաբերութիւնը, խորաքափանց հեռատեսութիւնը, ռազմական անվիճելի հանճարը եւ կարող ղեկավարի իր բազմապիսի շնորհները:

Յիշե՛նք քանի մը դրուագներ:

* * *

[Ա.] Կարօ Սասունիի ատելավառ եւ թունալից սխալը ուղղուած է մանաւանդ եւ մասնաւորապէս՝ մեր Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեանի դէմ, որ, ըստ իր յայտարարութեան, «Ծանր սայթաքումով մը», 1904-1905-ի շրջանին, իւրացուցեր է եղեր ամենակուլ կուսակցութեան «հազար հնչուն ոսկիի գումարը», որ «այդ մէկ անգամը այդքան առատութեամբ ղրկուած էր, նկատի առնելով Սասունի ապստամբական դէպքերը» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 624) :

Եւ իբրեւ «լուսարանութիւն», Կարօ Սասունի կը բացատրէ որ Օսմանեան Մահմանադրութեան «առաջին օրերուն», Բղէեան «խոստովաներ է» եղեր իր արարքը, որուն համար՝ «կուսակցութիւնը վաճառքի հանեց անոր տունը», այսինքն՝ բռնագրաւեց եւ 250 ոսկի շորթեց. «Մէկ մասն ալ՝ դրամով առաւ», այսինքն՝ կանխիկ շորթեց, իսկ մնացեալ «500 ոսկին ալ կորսուեցաւ» (նոյն, անդ) :

Աւա՛ղ, աւա՛ղ, ի՞նչպէս կ'ըլլայ որ հայ հարուստներու արիւնքը ծծող այդ վամպիր կուսակցութիւնը հանդուրժեր է եղեր որ Միսակ Բղէեան մը «խլացնէ» իր «հազար հնչուն ոսկիի գումարը», որուն «500 ոսկին ալ անհետ կորսուեր է» եղեր... :

Հաւատացի՞ք այս սրբապիղծ մեծ սուտին եւ գազրելի գրպարտութեան:

Յուշագիր Միսակ Բղէեան, իր յուշերու մէջ, մանրամասնօրէն կը բացատրէ այս «ծանր սայթաքում»ի պարագան եւ ցոյց կու-

տայ, 1904-ին, այսինքն, Սասունի ապստամբութիւնը ՍԿՍԵԼԷՆ Ա-
ՌԱՁ, և. ո՛չ թէ «1904-1905-ին», այսինքն, Սասունի ապստամբու-
թենէն ՎԵՐՁ, Թիֆլիսէն՝ Պոլսոյ վրայով Մուշ զրկուած 6,000 բուր-
լի գումարին՝ ի՛նչ կերպով ծախսուած կա՛մ կուսակցութեան նպա-
տակներուն համար գործածուած ըլլալը, որուն «ընկալագիրները
փճացած ըլլալով, չէի կրցած ներկայացնել» («Հարազատ Պատմու-
թիւն Տարօնոյ», էջ 264) հաշուապահանջ նորելուի շէֆ-երուն և շէ-
ֆիկներուն, Թրքական Սահմանադրութեան այն լա՛յն օրերուն, որ ա-
տեն Կարմիր Սուլթանի արիւնոռչտ բռնակալութիւնը փոխարինող
հազարամէկ նորարոյս կուսակցական սուլթանիկներ ողողած էին հը-
րապարակը և ժառանգած արիւնազանդ միապետի իշխանութիւնը՝
Տարօնի մէջ հաստատելով իրենց կուսակցական դիկտատուրան, ո՛չ
նուազ բռնապետական, ո՛չ նուազ անհանդուրժելի և ո՛չ նուազ կե-
ղեքիչ՝ քան Կարմիր Բորենիի անարգ լուծը...:

Յուշագիր Միսակ Բղէեանի անմիճ հանդէպ սնուցուած այս
ատելափառ թնամանքը ծագում առած և յորդօրէն սնուցուած է
ոխակալ, քիմախնդիր և գրպարտիչ Ռուբէնէն, որ իր յիշատակնե-
րուն մէջ, քունալից գրիչով մը, կը կրկնէ վերոյիշեալ զրպարտու-
թիւնը՝ աւելի մշակելով և ծաղկեցնելով գայն, յուշագիր Տարօն-
ցիին վարկը, հմայքը և ազգային անխոնջ գործունէութեան արժէքը
նսեմացնելու տխրեղծ նպատակով...:

Հետաքրքրական է գիտնալ թէ ուրկէ՞ կը ծորի Ռուբէնի և
Կարօ Սասունիի այդ թունալից ժահրը:

Մենք երկու պատճառներու կը վերագրենք այս երկու շարա-
խօս, զրպարտիչ և զրարան անձերու խիստ անվայել ու տմարդի
«Սեւացրէք»եան զրպարտութիւնները:

ա.— 1915-ի Օգոստոս ամսոյ սկիզբը, Տարօնի և Սասնոյ
ամբողջական և կատարեալ բնաջնջումէն ետք, երբ յուշագիր Մի-
սակ Բղէեան՝ Տարօնէն խոյս կուտայ Կովկաս, Մուշ քաղաքացի
հայդուկ Պլտիկ Արամ Յակոբեանի ութսուն հոգինոց խումբին հետ,
հո՛ն, Կովկասի մէջ, Միսակ Բղէեան՝ ընդարձակ զեկոյցով մը, Ռոս-
տոմի կը պարզէ Ռուբէնի և Վահան Փափազեանի ապիկար և ձա-
խորդ զեկավարութիւնը, անոնց անհեռատես ու վնասակար որոշում-
ները, անձնապաշտ ու սխալ գործելակերպը, որոնց պատճառով ալ՝
Տարօնի և Սասնոյ աղատասէր և մարտական հայութիւնը, շատ
Դիտրոիստներ ԵՊՄԲ ենթադրուեցաւ ամբողջական և կատարեալ բնա-
ջնջումի. և կը խնդրէ որ պարտն ու պատշաճը տնօրինուի յիշեալ
երկու «պարոն»ներու մասին, որոնք, նոյնպէս, Կովկաս խոյս տուեր
էին՝ Տարօնը և Սասունը բնաջնջ ընել տալէն յետոյ:

Ռոստոմ իր հաւանութիւնն ու համամտութիւնը կը յայտնէ
ներկայացուած բոլոր փաստերուն, և կը խոստանայ պարտն ու
պատշաճը տնօրինել տալ՝ պատերազմը վերջանալէն ետք:

Այս պարագան ՇԱՏ ԼԱԻ ԳԻՏԷԻՆ թէ՛ Ռուբէն և թէ՛ անոր
պնակալէզ մանկլաւիկը, Կարօ Սասունի, որ հո՛ն, Կովկաս, կը գըտ-
նուէր այդ ժամանակ:

Ահա՛, իսկական պատմաբը՝ Ռուբէնի ատելավառ քշնաման-
քին և չարամիտ բամբասանքին, ա՛յն Ռուբէնին, որ Օսմանեան
Սահմանադրութեան առաջին օրերուն, ծակամուտ թաքստոցէն դուրս
գալէն ետք, իր եղբայրասպան արատաւոր մէկ արարքը մոռցնել
տալու փութկոտութեամբ, ՀՐԱՊԱՐԱԿԸ ՈՂՈՂԵՑ Միսակ Բղէեանի
«զեղծարարութեան» զրպարտչական բամբասանքներով, որոնց զո՛հ
գնաց, դժբախտարար, նաև հանգուցեալ Զօրավար Սմբատը, և
զոր՝ Ռուբէն ի վերջոյ նոխացնելով ու զարգացնելով, իր «Հայ Յե-
ղափոխականի Մը Յիշատակներ»ու էջերը զարդարեց թունալից յե-
րիւրանքներով և անարդար վերագրումներով (Տեսնել Ռուբէնի յի-
շատակներու հատոր Դ., էջ 109-110, 115, 117, հատոր Ե., էջ
78-82, հատոր Զ., էջ 47-48, և այլն):

Ռուբէն նոյնպիսի չարամիտ, չարախօս և վարկաբեկիչ աղ-
նարկութիւններ ունի Տարօնցի յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր
Պարսամեանի (հատոր Զ., էջ 47-48), Արմաշական յուշագիր Յա-
կոբ Տէր Զաքարեանի (հատոր Ե., էջ 33-34-35-36, հատոր Զ., էջ
47-48), և Հրանդ Հլղաթեանի (հատոր Ե., էջ 36-37) մասին, ո-
րոնցմէ առաջին երկուքը, իրենց յուշերու մէջ՝ Ռուբէնը և Վահան
Փափազեանը ամբաստանած են՝ իբրև Տարօնի և Սասնոյ Հայու-
թեան բնաջնջումի միակ և բուն պատասխանատուները, իսկ վեր-
ջինը, Հրանդ Հլղաթեան ալ, Կովկաս անցնելէն յետոյ, տեղեկագիր
մը պատրաստած էր՝ Բիւրոյին ներկայացնելու համար, սակայն
կողմնակի ճնշումներու տակ տեղի տուած, ինչպէս կը կարդանք
Միսակ Բղէեանի յուշերուն մէջ («Հարազատ Պատմութիւն Տարօ-
նոյ», էջ 485):

բ.— Միսակ Բղէեանի նկատմամբ՝ Կարօ Սասունիի սնուցած
ատելութիւնը երկծալ է.

Մէկը, իր կուռքն եղող Ռուբէնի հանդէպ՝ իր յաւէտ երախ-
տաւորեալի ստրկական հաւատարմութեան տուրքը հատուցանելն
էր՝ ՓՈՐՁԵԼՈՎ խեղաթիւրել ու խաթարել Տարօնի և Սասնոյ իրա-
կան ու գնմարիտ պատմութիւնը, ի փոխարէն՝

1.— Ալեքսանդրապոլի նահանգապետութեան պաշտօնն ու
պատիւը, իբրև կաշառք, ԻՐԾՆ ՇՆՈՐՀՈՒՆԵԼՈՒՆ.

2. — Կուսակցութեան դանձարանէն իր անսուաղ որկորը հոսող կրօններուն, արտասահման փախուստ տալէն յետոյ :

Միւսը, Միսակ Բղէեանի ընդարձակ յուշերը, մեր խորհուրդով ու թելադրութեամբ, իրեն եւ իր կուսակցամով գործակիցներուն տրամադրելու դժկամակութիւնն էր, որովհետեւ թէ՛ Միսակ Բղէեանի կրտսեր եղբայրը, այժմ հանգուցեալ Խոսրով Բղէեան, եւ թէ՛ մենք, ո՛չ հաւատք եւ ո՛չ ալ վստահութիւն ունէինք այդ անբարեյոյս անձերու անկեղծ ազգասիրութեան, ողջախոհ դատողութեան, անկաշառ անաչառութեան, ուղղազատ անկողմնակալութեան եւ մանաւանդ՝ տարրական ուղղամտութեան վրայ, իրեւ «պատմագիր», եւ Միսակ Բղէեանի թանկարժէք յուշերն ալ պիտի մատնուէին այն տարաբախտ ֆակատագրին, որուն ենթարկուեցան Մուշ քաղաքացի, հայրենասէր Արմաշական մտաւորական Յակոբ Տէր Զաքարեանի յուշերը, որոնք դժբախտութիւնն ունեցած էին իյնալու այդ անբարեխիղճ «պատմագիր»ի զիջատիչ ճանկերուն մէջ :

Սասունցի «պատմագիր»ի նիւ Եորջաբնակ տիտղոսաւոր գործակիցը ծանօթ էր Միսակ Բղէեանի յուշերու բովանդակութեան եւ մանաւանդ՝ ԲՆՈՅԹԻՆ, որ էր լոյս-աշխարհ բերել, մերկացնել ու անարգանքի սիւնին դամել այդ երկու անձարակ, ապիկար, անարի, անպարտաճանաչ եւ պարտազանց «պարոն»ներու անձնապաշտ ու խիստ վնասակար ղեկավարութիւնն ու աղէտաբեր գործելակերպը՝ Տարօնի եւ Սասնոյ մէջ :

Եւ Կարօ Սասունի, Միսակ Բղէեանի յայտնաբերած այս պատմական բացայայտ ճշմարտութիւնները եւ անոր յուշերու վարկն ու պատմական արժէքը, ի յառաջագունէ, նուազեցնելու տխրեղծ կանխամտածումով է որ կ'ընէ վերոյիշեալ «սեւացրէքեան» անխիղճ, անճիշտ, անվայել, անհիմն ու անարդար վերագրումները՝ Միսակ Բղէեանի ԱնՁԻՆ հանդէպ :

Այս ստապատում «Ծանր Սայթաքում»ի առնչութեամբ, այսօր քան ըսենք որ Բղէեան եղբայրները՝ Տարօնի մէջ ճանչցուած էին իրր մեծահարուստ նահապետական գերդաստաններէն մին՝ իրենց հարստութիւնը ժառանգած ըլլալով իրենց հորմէն եւ մեծ հորմէն :

Եւ Միսակ Բղէեան, իր կուսակցական գործունէութեան պատճառով, 1894-1908-ի շրջանին, տասն եւ չորս տարիներու ընթացքին՝ տասն եւ չորս անգամ ձերբակալուած ու բանտարկուած էր, եւ իւրաքանչիւր անգամին ալ, իր հորեմական ժառանգութիւնը ԳՈՐԾԱԾԵՐ Է՝ կաշառելու համար Մուշի եւ Բաղէչի հայ եւ թուրք կաշառակեր պաշտօնեաները, այդ կերպով սպառելով այդ անհատնում հարստութիւնը, եւ երբ 1908-ի Մարտ 15-ին, 14-րդ եւ վերջին

անգամ ըլլալով՝ կը ձերբակալուէր, իր յուշերու մէջ՝ հետեւեալ տողերը կը գրէր իր նիւթական կացութեան մասին. —

«Արդէն ունեցած բանտարկութիւններէս, նիւթականս ամբողջովին վրայ տուած էի : Առեւտրական գործերս բոլորովին քայքայուած դրութեան մատնուած էին, թէեւ Պոլիսէն, եղբայրս Սարգիսի ղրկած մաս մը ապրանքով՝ հաղիւ կարելի կը լինէր փոքրիկ զաւակներս ապրեցնել, բայց ամէն տարի տեղի ունեցած բանտարկութիւններու պատճառով, այդ առեւտրական գործս ալ ընդհատման կը դատապարտուէր, որով՝ եթէ այս դատապարտութեանս միջոցին, ըստ առաջնոյն, կաշառք տալով՝ ազատութիւնս ձեռք բերելու հնարաւորութիւնն ալ ըլլար, անշուշտ պիտի չկարողանայի դրամ ձգել, հետեւաբար, որոշած էի համակերպիլ ճակատագրիս, բանտի խոնաւ մէկ անկիւնը կծկուիլ եւ սպասել դատապարտութեանս ելքին ու վճիռին» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջը 251-252) :

Ուրիշ յոյժ կարեւոր կէտ մը եւս, որ արժանի է մասնաւոր նկատառութեան :

Եթէ «պատմագիր» Կարօ Սասունի ձԻՇՏ ԿՐՆԻՈՒՆԻ Տարօնցի հերոս, հանգուցեալ Զօրավար Սմբատի յայտարարութիւնը՝ Միսակ Բղէեանի «զեղծարարութեան» մասին, ինչո՞ւ համար, ՍՈՒՏ ու ԾԻՆԾՈՒ իմաստակութիւններով ԿԸ ԶԱՆԱՅ ՀԵՐՔԵԼ նոյն Զօրավար Սմբատի փաստացի եւ ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ ձԻՇՏ մէկ ուրիշ վկայութիւնը՝ Գէորգ Զավուչի սպանութեան առնչութեամբ, իր կուռք Ռուբէնի հղբայրասպան ՄԵՂՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, գործածելով «երկու չափ, երկու կշիռ»ի իր անսուրբ եւ դատապարտելի մեթոտը (Այս նիւթի մասին՝ կարգալ Կարօ Սասունիի «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջը 699-701, ինչպէս նաեւ հանգուցեալ գրագէտ Մկրտիչ Երեցանցի կողմէ գրի առնուած «Զօրավար Սմբատի Յուշերը», էջը 316-326) :



ԳԼՈՒԽ ԺԹ.

ՀԱՋԻ ՅԱԿՈՒԲ ԿԸ ԹԵԼԱԴՐԷ
ԳՐԱԻԵԼ ՄՈՒԹ ՔԱՂԱՔԸ

1.— Մայիս ամսոյ սկիզբները, ոռւսական բանակը գրաւելով Բուլանըքի Կոփ եւ Լիզ գիւղաքաղաքները, յառաջացեր էր մինչեւ Քոստուրայ լեռները, Բուլանըքի գաւառը Մշոյ Դաշտէն բաժնող լեռկ լեռնաշղթան, որ Մուշ քաղաքէն հազիւ ութ ժամուան հեռաւորութիւն ունէր, Մշոյ Դաշտի հիւսիս-արեւելեան սահմանին վրայ, Տրօնք գիւղի կոնակը:

Անկանոն նահանջով շարունակաբար ընկրկող թրքական բանակը ամբողջովին կազմալուծուած եւ բարոյալքուած վիճակի մատնուած էր. քուրդ կամաւորները, որոնք սկիզբէն ի վեր՝ ի սրտէ կոռուղներ եղած չէին, թշնամիի գերազանց ուժերու զօրեղ ճնշումին տակ, խուճապահար կը լքէին ռազմաճակատը եւ անկանոն նահանջով մը կը լեցուէին Մշոյ Դաշտը՝ գէշ օրինակ դառնալով արդէն իսկ բարոյալքուած թուրք զօրքին ալ:

Քաղաքի թուրք ազգաբնակչութիւնը, զինուորական իշխանութիւնն ու կառավարութիւնը ծայր աստիճան յուսալքուած վիճակի մատնուած էին ու շուարած:

Մեր յուշագիրները հարազատօրէն կը նկարագրեն այն խիստ յուսահատական կացութիւնը, որ կը տիրէր քաղաքին մէջ՝ փետրուար, Մարտ, Ապրիլ ամիսներու ընթացքին՝ մինչեւ Մայիսի սկիզբը, իբր արդիւնք ոռւսական այդ յամրաքայլ, բայց շարունակական յառաջխաղացքին:

Վահան Փափազեան կը գրէ.—

«Շուկայէն կ'անցնէի, — բացարձակ ամայի. երբեմն այս ու այն անկիւնէն երկչոտ դէմքեր կ'երեւնային, որոնք կը փութային աննշմարելի անհետանալ: Փողոցներու երկայնքին՝ ժամանակին զինուորական համազգեստ եղած ցնցոտիներով՝ տասնեակ մը դիակներ ինկած էին ցեխերու մէջ, կա'մ հողի գոյն ստացած կմախքներ, որոնք մահուան հոնդիւններ կ'արձակէին. բորոտ ու զազրելի շուներու խումբեր դիակները այս ու այն կողմ կը քաշէին: Տեսայ երկու շուներ, որոնք դեռ կենդանի զինուորի մը կողորդը կը պատուէին. զարհուրելի էր...» («Իմ Յուշերը», Բ., էջ 350):

Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեան ալ հետեւեալ կերպով կը նկարագրէ այդ տխուր կացութիւնը.—

«Շատ մը Արար զինուորներ կծկուած կամ պառկած կը տեսնէինք շուկայի մէջ, թաղերու փողոցներու անկիւնները, ուր վայրկեանէ վայրկեան կը սպասէին մահուան: Թրքական բարձրաստիճան պաշտօնեաները, — քաղաքային կամ զինուորական, — իրենց անցուդարձի միջոցին, անտարբեր նայուածքներ կը նետէին այդ տարաբախտներու վրայ ու կը հեռանային: Օրերով, այդպիսի մահացածները կը մնային հոն՝ լքուած վիճակի մէջ» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 325):

Համատարած յուսալքումի եւ յուսահատութեան մէջ ապրող տեղական թրքութիւնը, անճրկած, իր ապահովութիւնն ու փրկութիւնը կ'որոնէր տեղացի հայերու հետ բարեկամական սերտ յարաբերութիւն եւ համաձայնութիւն հաստատելուն մէջ, փոխանակ յանձնուելու գաղթականի անստոյգ ճակատագրի քմայքներուն:

Այդ պատճառով ալ, Մայիսի սկիզբները, քաղաքի բոլոր թուրքերը դիմում կը կատարեն իրենց բարեկամ հայերուն եւ անոնց հետ փոխադարձ օգնութեան եւ պաշտպանութեան առաջարկն ու խոստումը կ'ընեն՝ պայմանով որ ոռուսերու ժամանումէն առաջ, երբ թուրք կառավարութեան ու բանակի կողմէ որեւէ վտանգի իրենց բարեկամ հայերը՝ այդպիսի վտանգներու դէմ: Ատոր փոխարէն ալ, հայերը կը խոստանային, ոռուսական բանակի ժամանումի միջոցին եւ անկէ յետոյ ալ, ամէն կերպ պաշտպանութիւն ստանձնել անոնց հանդէպ (Տեսնել «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 345-346), («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 13). («Յակօր Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջ 118):

Մուշի թուրք կառավարիչ Սերվէթ Բէյը, որ իր ընտանիքը եւ կառավարական բոլոր տոմարները զրկած էր Ռարբերդ կամ Տիգրանակերտ, դեռ կը շարունակէր իր երկերեսանի քաղաքականութիւնը՝ հայերու հանդէպ, մէկ կողմէն շոյելով եւ շողմելով մարտնչներու եւ քնքարներու հայ ղեկավարութիւնը, իսկ միւս կողմէ ալ՝ կանխազգուշական լուրջ միջոցներ ձեռք առնելով, որպէսզի չըլլայ թէ Սասունաբնակ ապստամբները, որոնց կարծեցեալ զօրութեան անհղութենէն կը սարսափէր, իրենց փութկոտ եւ անժամանակ շարժումներով՝ խանդարէին կառավարութեան զգուշաւոր քայլերը ու մշակած դիւային ծրագիրը, մինչեւ որ կարողանար կազմակերպել տեղական թուրք եւ քուրդ չեթէները եւ ուրիշ վայրերէ ալ՝ նոր զօրք ճարէր:

Կառավարիչի շրթունքներէն հոսող շողմիչ բառերն ու կեղ-

ծիբով չպարուած վարուելակերպը, որոնք շատ յաճախ իբրեւ բարեացակամ վերաբերում կը նկատուէին մերիններէն՝ այդ տազնապալից օրերուն մանաւանդ, իրապէ՞ս բարեացակամ վերաբերում էին՝ նման այն հի՛ն, երանելի՛ օրերուն ցոյց տրուած եղբայրակից, սրտակից, եւ պէ՛տք է շեշտել, նաեւ գաղափարակի՛ց բարեացակամութեան, թէ՞ պարզ շպար կամ դիմակ էին, զոր Ռումելիցի այդ երիտասարդ կառավարիչը յոյժ խորամանկօրէն կ'անցընէր իր դժնէատեսիլ դէմքին վրայ՝ ջանալով խաբել ու մոլորեցնել մեր յաւէտ միամիտ, եթէ չըսենք մանկամիտ ղեկավարները, որոնք միշտ տրամադրուած էին ամէն ինչ ի բարին մեկնելու, եթէ նոյնիսկ՝ պարզ տրամաբանութիւնը եւ ցարդ տեղի ունեցած խիստ տխուր դէպքերու յաջորդական դառն փորձերը ատոր հակառակը ապացուցանէին:

Այս յոյժ տազնապալից օրերուն իսկ, կառավարիչ Սերվէթ Բէյ, որ բնաւ յոգնիլ չէր գիտեր, Բաղէշէն վերադարձին, ուր յաճախակի այցելութիւններ կուտար հայատեաց կուսակալ Արդիւլ Քալիք Բէյին եւ նորանոր հրահանգներով կը վերադառնար, դեռ կը շարունակէր խաղալ իր երկերեսանի քաղաքականութիւնը, — մէկ կողմէն, գաղտնածածուկ կերպով, տեղական թուրք եւ քուրդ չեթէները կազմակերպել, իսկ միւս կողմէն ալ՝ թէ՛ օգտագործել հայերու պատրաստակամ ծառայութիւնը իրենց հայրենիքին եւ անոր «փառապա՛նծ» բանակին, եւ թէ՛ միանգամայն՝ այդ խաբէական միջոցներով մոլորեցնել ու քնացնել մերաղնեայ միամիտ առաջնորդները:

Եւ Հաջի Յակոբին կը յանձնէ քաղաքը գտնուող երկու թընդանօթներու փոխադրութեան դործը՝ դէպի Յրօնք գիւղի կոնակը գտնուող Քոսուրայ լեռները, ուր թուրք զինուորական իշխանութիւնը կը ջանար նոր ճակատ յարդարել՝ ուսական յառաջացող բանակին դէմ:

Մուշ քաղաքը վերածուած էր զինուորական փոխադրութեան կեդրոնի մը, ուր դուրսէն բերուած նորակոչիկ թուրք եւ քուրդ զինուորներ, կարճ ու հապճեպ մարզանքէ մը ետք՝ կը փութացուէին ռազմաճակատ, առանց նոյնիսկ բաւարար թիւով զօրք պահելու քաղաքի մէջ՝ ի պահանջել հարկին, տեղական պէտքերուն գործածուելու համար:

Այս էր պատճառը որ երբ Պուլէի Մջօն, իր ութսուն հոգինոց սպառազէն խումբով, կ'ապաստանէր Առաքելոց Վանքը, Փետրուար 14-ին, իբր բողոքի ցոյց՝ կառավարիչի աչքառու ընթացքին դէմ, եւ վանքի պարիսպներուն տակ կը փոխէր կառավարիչին շատ սիրելի ժանտարմայի սպայ Մեհմէդ Էֆ.ի եւ ուրիշ քանի մը ժանտարմա-

ներու դիակները, «Ան (այսինքն, կառավարիչը, Մնթ. Ա. Տ.), մեռելի տժգունութեամբ՝ սմբած, գլուխը կորսնցուցած, թեւս մըտնելով տարաւ փողոց եւ Գրեթէ ԱՂԱԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԽՆԴԻՆԵՑ Ժամ առաջ հեռացնել տալ Մջօն վանքէն» (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջք 342-343) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.], (Ա.):

Եւ կը շարունակէ Բիւրոյական յուշագիրը.—

«Եթէ այս օրերուն պայթէր կոիւր, կրնամ ՀԱՍՍԱՏԱՊԷՍ ըսել որ Տարօնը ՓՐԿՈՒԱՄ ՊԻՏԻ ԼԻՆԷՐ. զօրք գրեթէ չկար. կոիւր պիտի ընդլայնուէր, մերիմները լեռներէն կ'իջնէին, քաղաքը կը գրաւէինք եւ կը կապուէինք ռուսական յառաջացող բանակին (նոյն, էջ 356) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Եւ Հաջի Յակոբի փափաքածն ու թելադրածն ալ՝ միշտ ու միշտ այդ էր, այսինքն, օգտագործել այդ խիստ բարեղէպ պատեհութիւնը, երբ կառավարիչը իրեն կը յանձնէր քաղաքի երկու թընդանօթներու փոխադրութեան գործը:

Հաջի Յակոբ փութաց օգտագործել այս խիստ բացառիկ առիթը՝ «պարոն»ներուն թելադրելով իր ծրագիրը, որ էր քաղաքը գրաւել, տէր դառնալ կացութեան եւ «կապուիլ ռուսական յառաջացող բանակին», գործածելով Վահան Փափազեանի բացատրութիւնը:

Տարօնցի յուշագիր երուանդ Շարաֆեան կը գրէ.—

«Ռուբէն Տէր Մինասեան, թէեւ փախստական էր եւ պահուրտած, բայց քաղաք կը գտնուէր այդ ատեն, իսկ Վահան Փափազեան դեռ ազատ համարձակ կը պտտէր:

«Փոխադրութեան նախորդ երեկոյեան, Հաջի Յակոբ Կոտոյեանի հրահրով, Վահան Փափազեան եւ ուրիշ կուսակցական ընկերներ խորհրդակցական ժողով մը գումարեցին Դաշնակցութեան Ակումբին մէջ, որ կը գտնուէր Միսէի Գէորգի տունը, Սուրբ Մարինէ թաղը:

«Հաջի Յակոբ ներկաներուն կը բացատրէ օրուան քաղաքական եւ զինուորական կացութիւնը թէ՛ ռուսական բանակը շատ մօտ է եւ շուրջ մէկ օրուան ճանապարհ հեռու կը գտնուի Մշոյ Դաշտէն, թէ՛ թրքական բանակը եւ տեղական թուրք ուժերը զբաղած են թշնամիի յառաջխաղացքը կասեցնելու գործով՝ ռազմաճակատին վրայ, թէ՛ քաղաքի մէջ թուրքերը բնաւ ուժ չունէին:

«Նոյնպէս, անոնց կը յայտնէ որ երկու թնդանօթները փոխադրող պաշտօնեաներէն մէկն ալ ինքն է եւ իրեն ընկերացող խումբ մը հայ տղաներ, բոլորն ալ թուրք բանակի մէջ մարդուած երիտասարդներ, եւ երբ իրենք՝ Յրօնք գիւղի կոնակը գտնուող Քոսուրայ լեռները հասնին, պիտի սկսին թշնամին հարուածել կոնակէն:

«— Իսկ դուք ալ հոս, քաղաքի մէջ, անմիջապէս կը յարձակիք կառավարական ղինարանի վրայ, կը գրաւէք զայն, իշխանութիւնը ձեռքերնիդ կ'առնէք եւ կը տիրանաք քաղաքին, ուր Խիանքի կողմերէն բերուած անմարդ ու անկազմակերպ փոքրաթիւ ուժ մը կը գտնուի, եւ ի վիճակի պիտի չըլլայ լուրջ դիմադրութիւն ցոյց տալու:

«Աստուծոյ հաւաքուած մեր Ֆեդայիներն ալ վար կուզան եւ միանալով քաղաքի հայ ուժերուն, ամբողջ շրջանի իշխանութիւնը ձեռքերնիս կ'առնենք:

«Հաջի Յակոբ անտեղիտալիօրէն կը պնդէր իր ըսածներուն վրայ, թէ՛

«— Աստուծոյ սիրոյն, այսօրը մերն օրն է, պէտք է օգտուինք այս հազուադիւտ պատեհութենէն եւ դործադրենք մեր այս փրկարար ծրագիրը:

«Վահան Փափաղեան, սակայն կտրականապէս կը մերժէ Հաջի Յակոբի այս առաջարկը:

«Անոր առարկութիւնը սա՛ էր.—

«— Վանը ապստամբած է, այո՛, բայց ի՞նչ պիտի ըլլայ վերջաւորութիւնը, չենք դիտեր: Յետոյ, ռուսական բանակը շատ յաջող կերպով կը յառաջանայ. մենք պէտք է շատ անտարբեր ցոյց տանք ինքզինքնիս, կառավարութեան դէմ որեւէ ցոյց չկազմակերպենք: Արդէն ռուս զինուորները շուտով կը գրաւեն դաշտն ու քաղաքը, եւ ժողովուրդը կը փրկուի»:

«Այսպէս, ժողովը կը մերժէ Հաջի Յակոբի առաջարկը եւ ամէն բան պատահականութեան ձգելով՝ կը ցրուի» («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջը 13-14):

Երուանդ Շարաֆեանի այս արժանահաւատ վկայութենէն ետք, հիմա ներկայացնենք նաեւ Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեանի պատումը:

Ուշադրութեամբ մտիկ ընենք իրեն.—

«Մայիսը կը սկսի քիչ մը ժպիտով, որուն իսկոյն կը յաջորդէ մոռայլը՝ ծանր ու ճնշող: Ռուսական բանակի յառաջխաղացումը կը սկսի եւ Մայիս 5-ին, անոր ալիքները կը հասնին մինչեւ Բուլանք: Կ'իյնայ Վան... Յուսահատութիւնը կ'ծանրանայ թուրք կառավարութեան եւ ազգաբնակչութեան վրայ, որ լեղապատառ՝ բարեկամներ ու ապաստաններ կը փնտռէ հայութեան մօտ: Խուճապ է: Սերվէթ Բէյի եւ բոլոր պաշտօնեաներու ընտանիքները կը հեռանան քաղաքէն դէպի Սարբերդ, Տիգրանակերտ: Կը պարպուի կառավարական շէնքը տոմարներէն եւ արխիւներէն:

«Բայց, Սերվէթ Բէյ խոհեմ է եւ տոկուն: Վերջին ճիգեր կը

թափէ մէկ կողմէն քայքայուած ճակատը վերյարդարելու, եւ միւս կողմէն ալ՝ քնքոյշ ժպիտով մը հայերու սիրտը սիրաշահելու...:

«Չկայ փոխադրութեան միջոց, չկայ անմիջական ռեւէ օգնութիւն, եւ Սերվէթ Բէյ, հրաշալի ճկունութեամբ (կարծես միանգամ ընդ միշտ հասկցած՝ Յեղափոխութեան ուղն ու ծուծը), իր այդ տաղանապալի ժամանակին իսկ, օգտագործել կ'ուզէ հայութիւնը, հենց իր հակառակորդ Յեղափոխութիւնը, եւ երկու թնդանօթ յանձնելով, Հաջի Յակոբ Կոտոյեանի ղեկավարութեամբ՝ 200 աշխատաւորներու, դէպի Փրոնտ ճամբայ կը հանէ:

«Չուր տեղ Հաջի Յակոբ, մեկնելէ առաջ, կը յայտնէ Փափաղեանին որ ժամանակն է սկսելու. ինքը պատրաստ է երկու թընդանօթները (կառավարութեան վերջին յոյսը) փախցնելու:

«Յիմարի խորհուրդը կ'ընդունուի առաջարկը, եւ Հաջի Յակոբ, համոզուած մարդ, Տրօնք գիւղի մէջ կը ցրէ բոլոր բռնակիրները, բողոքաթուղթ մը կը ներկայացնէ երկու անտուն եւ անմեղ երիտասարդներու վրայ՝ իբր գրգռիչներ:

«... Եւ այս՝ մէկ կողմէն տաղանապալի եւ միւս կողմէն փրկարար եւ յուսալի ժամանակամիջոցը կը տեւէ մինչեւ Մայիս 15, մինչեւ որ կողմնակի զօրաշարժեր մէկ թեւէն միւսը՝ կը յաջողին առաջն առնել եւ կասեցնել եկող թշնամին» («Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջը 118-119):

Ու քիչ վարէն ալ կը յաւելու.

«Ո՛ր էր այդ բոլորի միջոցին՝ Հայ Յեղափոխութիւնը: Ինչո՞ւ չփորձեց դառնալ դրութեան տէրը: Այս անգամ ի՞նչ խորհեցաւ, ի՞նչ մտածեց: Թեթեւ շարժում մը՝ եւ ամէն ինչ վերջացած էր: Ո՛ր մնաց իր հրաշքը. ինչո՞ւ չերկնեց հայ հրաշալի մանուկը. ինչի՞ սպասեց:

«Ազգաբնակչութիւնը տխուր, սրտաբեկ եւ խուճապի մատնուած. Վանի հրաշալի օրինակը մէջտեղ. ռուսական բանակը միայն ինն ժամ հեռու, իսկ միջոցը բռնուած միայն թափթըփուած 1,500-ի մօտ անկանոն զօրքերով ու Հաջի Մուսայի ղեկավարութեամբ խմբակ մը կամաւորներով...:

«Մէկ ներկայացուցիչը՝ Տարօնի բոլոր աչքառու ուժերու հետ մէկտեղ ծալապատիկ նստած Սասունի լեռնաշուքերը, ամբարտաւան սոնքումով մը՝ սպասեց որ ամէն ինչ իր ոտքը երթայ, իսկ միւս պետը՝ քաղաքի մէջ կծկուած, գաղտագողի լուրեր հաւաքեց... Արդեօք, ըստ սովորութեան, պատրաստ տղայի հա՞յր ըլլալ կ'ուզէին» (նոյն, էջը 119-120):

Կարդացէ՛ք անխռով սրտով, եթէ կրնաք, Տարօնցի մեր յուշագիրներու վերոյիշեալ տիրագրու տողերը, եւ մի՛ ողբաք, դարձ-

եալ՝ եթէ կրնաք, որ Հաջի Յակոբի յստակատես, խորաթափանց եւ օրուան յուսահատական կացութեան ճշգրիտ ըմբռնումէն ծնունդ առնող իր փրկարեր ծրագիրը եւ թելադրութիւնները անտես ըրած են դեղեկոտ ու անհեռատես բիւրոյական երեսփոխան Վահան Փափաղեանը եւ «Համալսարանական» պատմութեանով սոնքացող՝ մեծամիտ ու ինքնահաւան Ռուբէն «փաշա»ն:

* * *

[Ա.] Իբր յաւելուածական լուսարանութիւն, ի դէպ կը նկատենք Հոս արտագրել յուշագիր Վահան Փափաղեանի մէկ ուրիշ վճարակալութիւնն ալ, որով ան կը ջանայ բացատրել թէ Մուշի թուրք կառավարիչը ինչ աստիճան յուսալքուած ու անբերկած էր որ ԶԵՐ ՀԱՄԱՐՁԱԿԵՐ գիմֆ ձերբակալել կառավարչատան իր պաշտօնատեսնեակին մէջ անգամ, իրեն հետ առանձինն եղած ատեն, վախճալով «իմ հետեւորդներուս» «ՍՏՈՒԵՐՆԵՐԻՆ»...:

«Երկու թէ երեք օր յետոյ, — կը գրէ բիւրոյական յուշագիրը, — իրիկուան կողմը, երբ մթնշաղին փակուած էին բոլոր պետական հիմնարկութիւնները, Առաջնորդարան եկաւ միւթէսարիՓի հետ պտտող ոստիկանը. «ՄիւթէսարիՓ Բէյը կը խնդրէ ձեզ շնորհ բերել սերայ», յարգանքով դարձաւ ան ինծի: Ոստիկանը վերադարձնել ուզեցի՝ ըսելով թէ քիչ մը վերջ կու գամ: «Ոչինչ, վարը կը սպասեմ», պատասխանեց եւ իջաւ...:

«Սրբազանը, գոյնը նետած՝ յուզմունքէն կը դողար. տարակուսանքի մէջ էինք. ի՞նչ կ'ուզէ, ինչո՞ւ այսպէս ալ, այն ալ սերայի մէջ... ինչո՞ւ ոստիկանը ուզեց ուզեկցիլ: Բնագործէն դաւադրութիւն մը պատրաստուած կ'ենթադրէինք: Ատրճանակ կը կրէի միշտ. երթալէ առաջ փոխադրեցի վերարկուիս ալ գրպանը: Սրբազանը ըսաւ թէ անմիջապէս լուր պիտի տայ տղայոց՝ սերայի մօտերը գտնուելու:

«Ոստիկանը լռելեայն սկսաւ հետեւիլ ինծի:

«Փողոցները մուկ ու մռայլ, իսկ կառավարչատունը բոլորովին ամայի էր, միայն վերի յարկի անկիւնի սենեակէն աղօտ լոյս մը կ'երեւէր. այդ սենեակը մտայ: ՄիւթէսարիՓը շինծու քաղաքավարութեամբ եւ ջղային շարժումով մը ձեռքս սեղմեց եւ հրաւիրեց նստելու պատուհանի դիմացի կողմը: Եւ նախընտրեցի պատուհանի առջեւը նստիլ եւ զայն թողուլ լոյսին դիմաց՝ կարենալ դիտելու անոր դիմադիժը եւ մանաւանդ՝ շարժումները: Զիդերս շատ լարուած էին:

«ՄիւթէսարիՓը նստած չէր. անընդհատ, կարճ տարածութեան մէջէն, քովէս կ'երթար կուզար, կցկտուր բաներ մը կ'ըսէր, եւ յանկարծ առջեւս կը ցցուէր՝ ձեռքը ետին տանելով: «Ի՞նչ ունի», կը մտածէի ես եւ յանկարծ, այդ միջոցին էր որ սերայի դրան առջեւի կանթեղի ճառագայթով նկատեցի անոր ատրճանակի կոթը՝ ետեւի դրպանին մէջ: Կայծակի արագութեամբ ձախ կողմս իրեն դարձուցի եւ ատրճանակս դրպանիս մէջ պատրաստեցի: Միտքս տենդագին արագութեամբ կ'աշխատէր. միեւնոյն ատեն, հակառակ դպումիս, անընական բարձր ձայն մը եկաւ ներսէս. ընդհատելով իրեն պոռացի. «Ձեմ հասկնար ձեր ինծի կանչելուն նպատակը. նրստեցէ՛ք ու այնպէս խօսեցէ՛ք. չեմ ըմբռնիր ի՞նչ ըսել կ'ուզէք»:

«Պահ մը քարացաւ. ձեռքը օդին մէջ կախուած մնաց ու լռելեայն դիմացս նստեցաւ: Ինձմէ անկախ, ջղաձորէն ատրճանակս կ'իսովին հանած էի գրպանէս. նկատած էր. բաւական մը լուռ մնալէ վերջ, դպումած կիրքով մը, հեւիհեւ ու միշտ կցկտուր խօսեցաւ Սասուն փախչողներու մասին: Ըսաւ թէ անոնք քայքայեցին այս երկրի խաղաղութիւնը, որ ազդեցութիւնս պէտք էր որ գործ դնէի վերադարձնելու, թէ՛ վերէն կտրուկ հրամաններ կը ստանայ՝ ծայրայեղ միջոցներու դիմելու, սակայն ինքը կ'ուզէ սպառել բոլոր խաղաղ միջոցները:

«Պատասխանեցի թէ այլեւս ազդեցութիւնս կորսնցուցած եմ, քանի որ ո՛չ մէկ խոստումս չկրցայ իրագործել, իսկ իմ խոստումներս հիմնուած էին միւթէսարիՓի հաւատարմութեան վրայ: Ըսի թէ անձնապէս որքան կրնամ օգտակար լինել իրենց, տրամադրելի եմ, բայց ո՛չ մէկ պատասխանատուութիւն կ'ուզեմ ստանձնել ոեւէ մէկու համար...:

«Պատուհանէն դուրս նայելով՝ աւելցուցի.

«— Ձեմ ուզեր ձեզի այլեւս ձանձրոյթ պատճառել. իմ հետեւորդներս դուրսը ինծի կը սպասեն»:

«Նայեցաւ դուրսը լապտերի լոյսին մէջ երեւցող քանի մը ստուերներուն եւ ինծի հետ մինչեւ սենեակին դուռը գալով՝ կանգնեցաւ: Ելայ դուրս եւ իսկոյն դուռը ետեւէս ծածկեցի: Իրապէս կ'ուզէր անձա՞մբ սպաննել ինձ թէ ոչ ձերբակալել եւ զրկել սպաննելու — կը դժուարանամ ըսել...» («Իմ Յուշերը», Բ., էջ 348-350) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ԳԼՈՒԽ Ի.

ՀՆՁԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

2.— Համաշխարհային Առաջին Պատերազմին միջամուխ ըլլալէն յետոյ, Թուրքիոյ հակահայ դիւալային ծրագիրին աստիճանական դործունէութեան իբր հետեւանք, կազմակերպուած թալանի եւ մասնակի ջարդերու լուրերը սկսած էին ողողել Տարօնի Ազգային Առաջնորդարանը:

Այս մասնակի ջարդերը հետզհետէ սկսան համատարած բնոյթ ստանալ:

Ընդհանուր բնաջնջումի ուրուականը կը սաւառնէր Տարօնի երկնակամարին վրայ ալ: Եւ Տարօնի Ազգային Առաջնորդարանի մէջ, ամէն օր, ժողովներ կը գումարուէին՝ հետզհետէ ծանրացող կացութեան մասին խորհրդակցելու, կառավարութեան անհրաժեշտ դիմումներ կատարելու, ինչպէս նաեւ՝ տեղահանութեանց ու ջարդերու մասին մանրամասն տեղեկագիրներ ղրկելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին, հայ կամաւորներուն եւ ուսական բանակին:

Բաղէշի հայութեան կոտորածէն յետոյ, որ տեղի ունեցած է Յունիս ամսոյ առաջին շաբթուան ընթացքին, դեռ անձեռնմխելի եւ անվնաս կը մնային Մուշ քաղաքը, Մշոյ Դաշտը եւ Սասուն, որոնց հետ, ուշ կամ կանուխ, դործ պիտի ունենար Թուրք կառավարութիւնը: Եւ եթէ մինչեւ այդ ատեն, այդ վայրերը դեռ զերծ կը մնային համատարած աղէտէն, այդ պարագան վերագրելու է այն բացառիկ հանգամանքին որ Տարօն եւ Սասուն միջնաբերդ կը նկատուէին հայկական յեղափոխութեան, եւ երկար ատեն տաղտուկ պատճառած Թուրք կառավարութեան, որ կը խորհէր թէ յեղափոխութեան այդ օրրանը լուրջ գլխացաւնք պիտի պատճառէր իրեն, մանաւանդ թրքական բանակի ընկրկումի եւ պարտութեան այս նեղ օրերուն:

Այդ պատճառով ալ, Տարօնի եւ Սասնոյ հայութեան հաշուեյարդարի խիստ մտահոգիչ գործը թողուած էր ամենավերջին յարմար վայրկեանին:

Այս վերահաս աղէտի սպառնալիքը բացորոշ կերպով զգացող քանի մը սրտցաւ ազգայիններ, քաղաքէն ու դաշտէն, իրարու քով գալով, գաղտնի խորհրդակցական ժողովներ կը սարգէին, անել կա-



ԿԱՌՆԵՆԻ ՄԿՐՏԻՉ

ցութեան մասին կարծիք կը փոխանակէին, ծրագիրներ կը մշակէին եւ փրկութեան միջոց մը կ'որոնէին: Իրենց այս խորհրդակցութեանց տեղեակ կը պահէին նաեւ Տարօնի Յեղափոխութեան երկու պատասխանատու ղեկավար զպարոնները, — Ռուբէն Տէր Մինասեանը եւ Վահան Փափագեանը, որոնք, ինչպէս յիշուեցաւ նախապէս, խոյս տուած էին Սասուն եւ հո'ն հաստատած իրենց տեւական բնակութիւնը:

Այժմ, նորէն պատեհութիւն տանք մեր Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեանին, որ հանգամանօրէն եւ մանրամասնօրէն մեզի ներկայացնէ շարունակութիւնը այս պատմական դրուագին.—

«Քանի որ մեր կարեւոր ընկերներու մեծ մասը՝ այդ պահուն, իրրեւ փախստական, Սասուն ապաստանած էր, ստիպուած էինք քաղաք մնացող ընկերներու կարծեաց ամփոփումը՝ վեր (Սասուն) ղրկելու. անոնք ալ՝ իրենց կարծիքը մեզի կը հաղորդէին, բայց դիւրով զիրար չկարողանալով համոզել, որոշուեցաւ իրենցմէ մարդիկ հրաւիրել քաղաքին մօտակայ այգիներու հնձանները, ուր մեզմէ ալ ընկերներ երթալով՝ տաք վիճարանական ժողովներ ունեցանք[Ա.]:

«Ժողովներու մէջ, Կոտոյեան Հաջի Յակոբի եւ իմ տեսա-

կէտներուն համամիտ էին Պրն. Կորիւն, Կառնենու Պրն. Մկրտիչը, Սեմալցի Մանուկը, Արօ Շահրիկեան, Մոկաց Քեռի Ղաղարը եւ Առինչ գիւղացի Պրն. Սահակը. իսկ հակառակ էին Պրն. Վ. Փափաղեան, Ռուբէն, Պոլէի Մջօն, Աւետիս, Լեւոն Ասլանեան, Տիգրան Լոլոյեան եւ իրենց համակրող, Սահմանադրութենէն ասդին շատ մը նորագիր Դաշնակցական յեղափոխական ընկերներ:

«Մեզի դադափարակից ընկերներու ստորագրութեամբ, Կորիւնի եւ Հաջի Յակոբի բանագնացութեամբ, ներկայացուած էին հետեւեալ երեք առաջարկները.—

«ա.— Քանի որ թրքական ամբողջ վիճուորական ուժը ռազմաբեմը կը գտնուի, եւ քաղաքին ու դաշտին մէջ քիչ թիւով ժամտարմաներ ու չեթէներ կան, փոխանակ սպասելու որ կառավարիչը զօրք բերել տալով՝ ջարդել տայ մեր ժողովուրդը, մեզի աւելի ձեռնտու է Սասուն հաւաքուած զէնքի եւ ռազմամթերքի կէսը՝ մեր գինեալ տղաներով դաշտ փոխադրել, հրահանգել մեր տղաներուն որ բոլոր հայ գիւղերու մէջ գտնուած թուրք պաշտօնէութիւնը եւ հեծեալ ոստիկանութիւնը, միեւնոյն օր, գիշեր ատեն, ջարդեն անխնայօրէն եւ անոնց զէնքերը յափշտակեն, որով հազարէն աւելի կանոնաւոր զէնք ձեռք անցընելէն զատ, այդքան ալ մեր ապագայ դահիճներէն ազատած կ'ըլլանք. հետեւեալ օրը, քաղաքէն ինչ պաշտօնեաներ որ հայ գիւղերը կ'երթան, զանոնք ալ իսկոյն սպաննել եւ չթողուլ որ քաղաք վերադառնան: Երկրորդ գիշերն ալ, դաշտի բոլոր ուժերը դէպի քաղաք յառաջացնելով, քաղաքի պատրաստ երիտասարդութեան հետ՝ իսկոյն յարձակիլ զօրանոցներու վրայ՝ զանոնք յանկարծակիի բերելով եւ քաղաքն ալ պաշարելով, անձնատուութեան ստիպել թշնամին, որ շատ չնչին ուժ ունէր քաղաքի մէջ, այդ պահուն:

«Այսպիսով, առանց այլեւայլի, քաղաքը կը գրաւենք՝ նոյն գիշերուան մէջ եւ կացութեան տէր կը դառնանք, ու կարող կ'ըլլանք նոյնիսկ տարի մը պայքար մղելու, երբ այդքան զինամթերք ու պարէն կ'ունենանք մեր տրամադրութեան ներքեւ: Եւ քանի որ ռուս բանակն ալ մեզմէ 8-10 ժամ հեռաւորութեան վրայ կը գրտնուի, կը յաջողինք կոնակէն զարնել թուրք բանակը եւ մեր ժողովուրդը ազատելով՝ կ'անցնինք ռուսական բանակը, կամ թէ ռուսերը կուզան կը գտնեն մեզ»:

«բ.— Զինեալ երիտասարդութիւնը, մեր փորձառու ընկերներու ղեկավարութեան տակ, խումբերու բաժնել եւ դաշտի մէջ, մէկ քանի տեղեր, պարտիզանակամ կռիւներ ստեղծել, զարնել թուրք պաշտօնեաներուն, չեթէներուն: Քանի որ կառավարութիւնը այդ պահուն ուժ չունի որ ուղածն ընէ, պիտի ստիպուի ունեցածովը գո-

հանալ եւ զանոնք գործածել մեզի դէմ: Կտրել բոլոր հեռագրական թելերը եւ հրաման տալ ժողովուրդին որ ի վիճակի եղողները, այդ նոյն գիշերն իսկ, հաւաքուին Ցրօնաց, Ապըլպուհարայ, Հացկայ Զորերը: Իսկ Զիւլուրայ շրջանի ժողովուրդը ամբողջութեամբ հաւաքուի Վարդենիս գիւղին մէջ: Սասունի ժողովուրդն ալ, նոյն ծրագիրին համաձայն, Արդաց Զորով վար գալով՝ յառաջանայ իրեն համար որոշուած շրջանը, ինչպէս նաեւ քաղաքէն եկող ժողովուրդը:

«Մինչեւ յաջորդ առաւօտ, ամբողջ շրջանի հայութիւնը հաւաքուած կ'ըլլայ որոշուած կիրճերու եւ Վարդենիս գիւղին մէջ, եւ բոլորն ալ՝ ճամբանին շարունակելով եւ հանդիպած քուրդ գիւղերու ժողովուրդը բնաջնջելով եւ անոնց պատրաստ ուտելիքները վերցընելով՝ կը հասնինք թրքական բանակի կոնակը, որ տեղաւորուած է Բուլանքի Լիզ, Յատկոն, Ոսնչոր գիւղերու մէջ: Իսկ Վերին Բուլանքի շրջանը՝ դատարկուած, չէզոք գօտի է:

«Մեր զինեալ ուժերու մէկ մասին միջոցաւ զբաղեցնել թուրք բանակը, որ ատեն ժողովուրդը պատեհութիւն կ'ունենայ դիւրութեամբ անցնելու գիծը, եւ արձակուած հրացաններու ձայնէն՝ ռուսերը կարծելով թէ թշնամին յարձակումի կը պատրաստուի, անպատճառ պիտի յառաջանան, եւ մեր ժողովուրդին հանդիպելով՝ փրկուած պիտի համարուինք:

«Վարդենիսի շրջանի մէջ հաւաքուածներն ալ՝ այդ գծով կրնան վեց ժամէն հասնիլ Տափավանք, ուր ռուսական բանակները դիրք բռնած կը սպասեն՝ նեմութի մեր կողմի փեշերուն վրայ»:

«գ.— Դաշտի ամբողջ ժողովուրդը, իր պարէնով, հաւաքել տալ Սասնոյ լեռներու սարատակի հայ գիւղերու մէջ, եւ մեր տրամադրութեան տակ գտնուող ուժերով յարձակիլ թշնամիին վրայ, ջարդել, ջարդուիլ. նոյն բանը ընելու է նոյնպէս քաղաքը, մինչեւ որ կա'մ յաղթական դուրս կուզանք եւ կա'մ եթէ մեռնինք ալ, գոնէ պատիւով մեռնինք» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 349-351):

Հաջի Յակոբի այս երեք փրկաբեր առաջարկներուն՝ նայինք թէ ի՞նչ պատասխան տուած են Տարօնի Յեղափոխութեան ղեկավար «պարոնները: Շարունակենք մտիկ ընել նոյն յուշագիրին.—

«Մեզի ընդդիմադիր հոսանքին պատկանող ընկերները, ղեկավարութեամբ աւելի Վահան Փափաղեանի եւ Ռուբէնի, անընդունելի եւ անգործադրելի համարեցին մեր բանաձեւած այս երեք առաջարկներն ալ: Առաջին կէտին դէմ առարկելով թէ դժուարութեամբ պիտի յաջողինք քաղաքը գրաւել իր զօրանոցներով: Երկրորդ կէտին դէմ առարկելով թէ մօտ հարիւր հազարնոց ժողովուրդ մը ի՞նչպէս մտիկ պիտի ընէ մեզի, միեւնոյն օրուան մէջ ճամբայ իյ-

նայ, որ կարողանանք Սասունի, քաղաքի եւ դաշտի հայ բնակչու-
թիւնը փրկել: Թո՛ղ որ Օսմանեան բանակին կը հանդիպինք եւ ա-
նոնց թնդանօթները ջարդուփշուր կրնան ընել բոլորիս: Իսկ երբորդ
կէտի դէմ ալ կ'առարկեն թէ մեզի մեծ ուժեր հարկաւոր են, որ-
պէսզի կարենանք պաշտպանել Որդը Աղաջ գիւղէն մինչեւ Ալվառինչ
գիւղը երկարող գիծը:

«Ատոնց փոխարէն, անոնք կ'առաջարկեն իրենց ծանօթ թէ-
զը, որ էր»:

«— Քանի որ Սասնոյ բոլոր գիւղերուն մէջ թէ՛ պարէնի եւ թէ՛
ոսգմանիւթի բաւական մթերք կեդրոնացուցեր ենք, պէ՛տք է եւ ո՛ր-
չափ կարելի է, շո՛ւտ, ի՛նչ զէնք ու ոսգմամթերք որ դեռ ունինք
քաղաքին եւ դաշտի գիւղերուն մէջ, բոլոր մարտական տղաները
գինելով՝ Սասուն բարձրացնենք, եւ քանի որ բռնակալութեան ժա-
մանակին իսկ՝ թուրք կառավարութիւնը միշտ Սասնոյ վրայ կեդ-
րոնացուցած էր իր ուշադրութիւնը, եւ հիմա՛ ալ երբ տեսնէ որ մեր
ամբողջ ուժը Սասունի մէջ կեդրոնացած է, եւ աւելի՛ Սասունի
ժողովուրդէն կրնայ գալ վտանգը, կրնայ կտրուկ միջոցներու դի-
մել: Եւ ինչպէս կը տեսնէք, արդէն շատոնց ի վեր, Գալուտրիկի շըր-
ջանի մէջ կոռիւնք ստեղծելով՝ կառավարութիւնը այդ կողմի վրայ
կը զբաղեցնէ հայ ժողովուրդը, եւ գիտենք որ մօտ ատենէն նոր
ուժեր բերել տալով՝ աւելի Սասնոյ վրայ պիտի յարձակի: Որքան
ատեն որ Սասուն կանգուն է եւ Անդոկ լեռը չէ գրաւուած, մեմք՝
ԻԲՐԵԻ ԱՄՈՒՐ ԲԵՐԻ, ԿԱՆԳՆԱԾ ԵՆՔ դաշտի եւ քաղաքի կողմին:
Մինչեւ որ մեր ուժերը չըլատեն, ձեզի ոչինչ չեն ընք, քանի որ
դուք զէնքով չէք ընդգիմանար իրենց, եւ մանաւանդ՝ պաշարի փո-
խադրութեան համար ալ, ձեզի պէտք պիտի ունենան, ձեզի չեն ո-
չընչացներ: Ամէն վտանգ աւելի՛ Սասնոյ է որ կը սպառնայ. պէտք է
բոլոր ուժերը հո՛ն հաւաքենք եւ գործող դիմադրութիւն կազմակեր-
պենք: Նախկին հայդուկային կոռիւնքուն, հարիւր կանոնաւոր զէնք
չունեցած ատեննիս, օրերով, շաբաթներով կը կոռէինք. հիմա երեք
հազարէն աւելի կանոնաւոր զէնք ունինք եւ կրնանք շատ երկար դի-
մադրել: Արդէն կոռիւր շատ չտեսած, ոռուսերը կուզան եւ բոլորս ալ
փրկուած կ'ըլլանք. թէեւ անշուշտ, աւելի Սասնոյ մէջ մասնակի
ջարդեր տեղի պիտի ունենան, քանի որ կոռիւր թատերաբեմը հոն
պիտի ըլլայ»:

«Եւ կ'առաջարկուի որ այս երկու տեսակէտներն ալ քուէի
դրուին:

«Բայց Հաջի Յակոբ ձայն առնելով՝ կ'ըսէ.—

«— Ինչպէս որ դուք իմ առաջարկներուս դէմ խօսելով՝ գործ-
նական չգտաք զանոնք, թո՛ղ տուէք որ ե՛ս ալ իմ առաջարկութիւններս

ներկայացնեմ ձեր այդ առաջարկին դէմ», եւ կը սկսի խօսիլ հետեւ-
եալը.—

«— Ախր՛ր, այս պահուս, մարդ կոյր կամ խուլ ըլլալու է որ
չտեսնէ ու չսէ թուրքի այժմուս հայաջինջ քաղաքականութիւնը: Ա-
հա՛, հեռաւոր եւ մօտակայ շրջաններու ամբողջ հայութիւնը, ինչ-
պէս որ բոլորս ալ լսեր ենք ու գիտենք, առանց Օսմանեան կառավա-
րութեան եւ իր զօրքին դէմ որեւէ կերպով ըմբոստացած ըլլալու,
բոլորն ալ սուրի քաշուած են: Ամենամօտ Բաղէչ քաղաքի սրածու-
թիւնը լսած ենք:

«Ի՞նչ ըսել կ'ուզուի պատճառաբանելով թէ Սասունը չընացըն-
ջած, դաշտի եւ քաղաքի հայութիւնը չեն փնացներ:

«Ընդհակառակը, մենք կ'ըսենք»:

«— Թուրքերը՝ վատ, ստորին արարածներ են. անոնք նախ
իրենց չդիմադրողները կը ջարդեն. երբ բաւարար ուժ ունենան, կը
յարձակին մեզ նման հայդուկներու վրայ ալ, եթէ ուժ չունենան,
կը լռեն:

«Դուք կ'աշխատիք դաշտի ու քաղաքի մէջ մնացած ութսուն
հազար հայութիւնը, — մեծ մասամբ՝ կին, աղջիկ, տղայ, — ան-
պաշտպան ձգել եւ Սասուն հաւաքուած երեսուն հազար ժողովուր-
դը փրկել: Թէեւ ատոնց կեանքն ալ իմինէս աւելի թանկագին կը
համարեմ, բայց բոլորի փրկութիւնն ալ նկատի առնելու է, եթէ ո՛չ,
ես եւ իմ ընկերները այն համոզմունքին պիտի գանք որ դուք, —
ՄԻ ՔԱՆԻ ԱՆՁԻՐԻ, — ո՛չ թէ ազգի կամ Սասնոյ ժողովուրդի շահն
է որ նկատի ունիք, ա՛յլ աւելի՛ ՅԵՏԻՆ ՄՏՔՈՎ է որ կը գործէք:
Դաշտը եւ քաղաքը սուրի տալէ յետոյ, Սասունցիներու արեան
գնով ալ՝ Ձե՛ր — մի քանիներու, — ԿԵԱՆՔԸ ՊԻՏԻ ԶԱՆԱՔ ՓՐԿՆԵ՛լ:
Որքան կըցան կռուիլ այդ ապառաժներու մէջ, լա՛ւ, դուք
հոն էք, իսկ երբ չկարողանան դիմանալ, — եւ այժմէն ալ կ'ըսենք
որ ՊԻՏԻ ԶԱՆԱՔ ԱՆԱՆ ԵՐԿԱՐ ԴԻՄԱՆԱԼ, քանի որ ձեր հաւաքած
պարէնը մէկ ամիս իսկ պիտի չբաւէ երեսուն հազար անձերու, —
այն ատեն՝ անօթի ժողովուրդը ստիպուած՝ անձնատուր պիտի ըլ-
լայ, եւ ԴՈՒՔ ԱԼ, ձեր հետ առած մի քանի զինեալ տղաներ, ՊԻՏԻ
ՓՈՐՁԵՔ ԱՆՏԵՒԼ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ:

«Ահա՛, մեր ըսածը ա՛յդ է. հիմա կրնաք մեր երկու հոսանք-
ներու առաջարկները քուէի դնել»:

«Հաջի Յակոբի այս առաջարկութեանց առանց պատասխանե-
լու, ձայներու մեծամասնութեամբ կ'ընդունուի Փափագեանի եւ իր
համախոհներու բանաձեւը թէ պէտք է միայն Սասունը ուժեղացնել
եւ հո՛ն դիմադրութիւն կազմակերպել:

«Այդքան բան արդէն կը գուշակուէր, քանի որ իրենց շուրջն

ու բոլորը հաւաքել տուած էին այնպիսի մարդիկ, որոնց՝ իրենց պէս օտարականները (առանց տեղեակ ըլլալու մեր երկրի հանգամանքներուն), շարունակ իրենց ձայնը լսելի ընել կուտային:

«Ու այլևս, ժողովները վերջ կը գտնեն, խումբը Սասուն կը բարձրանայ, իսկ Հաջի Յակոբ եւ Մշեցի տղաքն ալ քաղաք կը վերադառնան:

«Այդ օրէն սկսեալ, աւելի եռանդուն կերպով աշխատանք կը կատարուի թէ՛ գիւղերէն եւ թէ՛ քաղաքէն՝ գէնքեր ձեռք բերելու, պարէն հաւաքելու եւ գաղտնի փոխադրելու Սասուն, ՔԱՂԱՔՆ ՈՒ ԴԱՇՏԸ ԱՆՊԱՇՏՊԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՏՆԵԼՈՎ» (նոյն, էջ 351-353) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Հետագային, գեռ եւս առիթ պիտի ունենանք հանգամանօրէն քննելու հետեւանքները՝ քուէարկութեամբ որդեգրուած այս խիստ ձախակեր արշուձիմ եւ ազէտարեր գործելակերպին:

Հաջի Յակոբի ներկայացուցած վերոյիշեալ երեք փրկարար առաջարկները եւ մանաւանդ՝ մարգարէական շունչով ըրած գուշակութիւնը, զոր ընդգծելով՝ կրկին անգամ կ'ընդօրինակենք հոս, — մեր ուշիմ ընթերցողներու մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձնելու ջանադրութեամբ, — թէ՛

«Դո՛ւք, ՄԻ ՔԱՆԻ ԱՆՁԵՐԴ, ո՛չ թէ ազգի կամ Սասունի ժողովուրդի շահն է որ նկատի ունիք, ա՛յլ ԱԻՆԼԻ ՅԵՏԻՆ ՄՏՔՈՎ է որ կը ԳՈՐԾԷՔ: Դաշտը եւ քաղաքը սուրի տալէ յետոյ, Սասունցիներու արեան գնով ալ՝ ՁԵՐ — ՄԻ ՔԱՆԻՆԵՐՈՒ — ԿԵԱՆՔԸ ՊԻՏԻ ԶԱՆԱՔ ՓՐԿԵԼ: Որքան կրցան կուրիլ այդ ապառաժներու մէջ, լա՛ւ, դուք հոն էք, իսկ երբ չկարողանան դիմանալ, — եւ այժմէն ալ կ'ըսենք որ ՊԻՏԻ ԶԿԱՐՈՂԱՆԱՆ ԵՐԿԱՐ ԴԻՄԱՆԱԼ, — ա՛յն տեն, անօթի ժողովուրդը ստիպեալ՝ անձնատուր պիտի ըլլայ, եւ ԴՈՒՔ ԱԼ, հետեքնիդ առած մի քանի զինեալ տղաներ, ՊԻՏԻ ՓՈՐՁԷՔ ԱՆՑՆԻԼ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ», իր ըսածներու ճշտութեան եւ ճշմարտութեան չհաւատացող մարդու խօսքեր են, թէ ո՛չ, նենգամիտ «պարոն»ներու յետին, խարդաւանող մտադրութիւններն ու խորհուրդները լոյս-արեւին բերող եւ անոնց ճակատները՝ պարտազանցութեան ու դասալուքեան ամօթալի կնիքով խարանող ճշմարտափայլ խօսքեր...:

Ո՞վ կարող է կասկածի նշոյլ մ'իսկ ունենալ իր սրտին խորը՝ Հաջի Յակոբի անկեղծութեան, նուիրուածութեան, իրատեսութեան, ռազմական անվիճելի հանճարի, եւ մասնաւորապէս՝ խորաթափանց հեռատեսութեան մասին, երբ անաչառ ոգիով մը վերլուծուած են թարկէ անոր վերոյիշեալ առարկութիւններն ու փաստարկութիւնները...:

* * *

[Ա.] Այս բանակցութեանց ակնարկելով է որ Տարօնցի յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան կը գրէ. —

«Այդ օրերուն, կառավարութեան հետապնդումին վրայ, Վահան Փափաղեան, որ Մուշ կը գտնուէր, Սասուն կը փախչի, եւ տեղի կ'ունենան կարգ մը բանակցութիւններ՝ Սասնոյ եւ Մշոյ միջեւ, որոնցմէ ինք, Տէր Եղիշէ տեղեկութիւններ չ'ունենար՝ իր հիւանդութեան պատճառաւ»:

Եւ կը շարունակէ. —

«Այդ բանակցութիւնները խիստ հետաքրքրական են եւ պատասխանատուութիւններ ճշտող: Ափսոս որ մինչեւ հիմա կարելի չեղաւ գաղտնիքը կորզել կողմերէն որեւէ մէկէն, որոնք երբ հրատարակուին, պիտի հասկցուի թէ որո՞նք են (եղած) պատճառները Մամիկոնեան Տան առիւծասիրտ կորիւններու բնաջնջումին» (Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, «Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջ 43):



Գ Լ ՈՒ Խ Ի Ա .

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՏԱՐՕՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ

3.— 1915 Յունիս 26-ին, Ուրբաթ օր(1), Մուշի կառավարիչ Սերվէթ Բէյ, մզկիթէն վերադարձին, վերջնագիրի իմաստով հրամանագիր մը կը շրկէ Տարօնի Ազգային Առաջնորդարանը՝ Տեղապահ Վարդան Վարդապետին եւ Քաղաքական Ժողովին ուղղուած, 24 ժամուան ժամանակամիջոց մը տալով որ 15-էն մինչեւ 70 տարեկան(2) բոլոր տղամարդիկ արձանագրուին այդ 24 ժամուան ընթացքին եւ շուտով ճամբայ իյնան դէպի Ուրֆա, ուր պիտի մնան մինչեւ պատերազմի վախճանը, իսկ կիներն ու երեխաները պիտի մնան տեղերնին:


Հրամանագիրը բերող ոստիկանները պատասխանի կը սպասեն՝ Առաջնորդարանի դրան առջեւ:

Բոլոր յարանուանութեանց առաջնորդներ, ազգային ակընյայտնի անձնաւորութիւններ եւ բազմահազար ժողովուրդ խոնուած

(1) Յուշագիր Տ. Նիշիէ Քիւնյ. Տէր Պարսամեան՝ կառավարիչի հրամանագիրի հաղորդումի օրը կը դնէ «Յունիս 25», որ Հինգշաբթի է («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը»), մինչդեռ յուշագիր Միսակ Բդէեան բացորոշ կերպով կը յիշէ թէ՛ ամսաթիւը («Յունիս 26») եւ թէ՛ օրուան անունը («Ուրբաթ օր, կառավարիչը մզկիթէն վերադառնալէն ետք») («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 376):

(2) Յուշագիր Միսակ Բդէեան կ'ըսէ «15-էն 70 տարեկան» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 377), իսկ Տ. Նիշիէ Քիւնյ. Տէր Պարսամեան այդ թիւը կը դնէ «7-70 տարեկան» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը», էջ 47): Յակոբ Տէր Զաքարեան կ'ըսէ. «Այսօր մինչեւ ժամը 9-ը, քաղաքի բոլոր արուները, 12-էն վեր, պէտք է կառավարչական դուռը մերկայ ըլլան՝ Ուրֆա երթալու համար» (Յակոբ Տէր Զաքարեանի Ձեռագիր Յուշերը, էջ 138):

են Առաջնորդարանի դահլիճին մէջ՝ խորհրդակցելու: Կ'որոշուի որ Առաջնորդական Տեղապահ Վարդան Վարդապետի ղլխաւորութեամբ՝ յանձնախումբ մը դիմում կատարէ կառավարիչին, որ երեք օրուան ժամանակամիջոց մը շնորհէ, որպէսզի հնարաւոր ըլլայ դիմումներ կատարել հարկ եղած տեղերը — Սուլթանին, Նախարարաց Խորհուրդին, տեղական թուրք աղաւաթին, եւ այլն:



Ս. Կարապետի վանահայր
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆ

Ժողովրդական որոշումով, Վարդան Վարդապետին կ'ընկերանան քաղաքի հանրաժանութ ազգայիններէն Նազարէթ Քեչիչեան, Մարտիրոս Սահակեան, Յովհաննէս Քենտէրեան եւ Խաչիկ Հայկունի: Թէեւ կ'առաջարկուի որ Հաջի Յակոբ եւ մեր աւագ յուշագիր Միսակ Բդէեան եւս միանան այդ յանձնախումբին, բայց անոնք կը մերժեն:

Յանձնախումբը ժամէ մը կը վերադառնայ Առաջնորդարան, ուր խոնուած ժողովուրդը անհամբեր կը սպասէ բարի լուրի մը, բայց կառավարիչի պատասխանը կ'ըլլայ կարճ ու կտրուկ.

«— Որեւէ դիմում, հեռագիր, եւ այլն, արդիւրեւած է. ժողո-

վուրդը, վաղուրնէ սկսեալ, պէտք է գայ արձանագրուի» (Միսակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 378) [Ա.] :

Կառավարիչի այս վճռական եւ ժխտական պատասխանը ստանալէն յետոյ, Հարց կը դրուի .

«— Երթալ յանձնուի՞լ թէ մնալ քաղաք եւ դիմադրութիւն կազմակերպել» :

Թեր ու դէմ վիճարանութենէն յայտնի կ'ըլլայ որ Առաջնորդական Տեղապահ Վարդան Վարդապետը, կղերական դասը, պահպանողական ակնյայտնի ազդայիններ, եւ նոյնիսկ՝ յեղափոխական-դաշնակցական ֆանչցուած աչքառու դէմքերէն շատերը պատրաստակամութիւն ցոյց կուտան հնազանդելու կառավարիչի հրամանին :

Այդ ատեն է որ մէջտեղ կուգան Հաջի Յակոբ եւ Միսակ Բղէեան, եւ կ'արտայայտեն հետեւեալ միտքերը .—

«— Դուք ի՞նչպէս կը հաւատաք որ մինչեւ Ուրֆա ողջ տանեն զձեզ : Անգամ մը շուրջներնիդ նայեցէք եւ Առաջնորդարան եկած տեղեկագիրները եւ մազապուրծ ազատուած մարդոց տուած զեկոյցները կարդացէք : Մինչեւ հիմա ի՞նչ պատահած է Կարինի, Տըրապիզոնի, Սվազի, Խարբերդի վիլայէթներու մէջ, մութ է մեզի բայց ո՞ւր է Վանի, Բաղէշի, Ներքին Բուլանըքի, Վարդոյի, Տիգրանակերտի շրջաններու հայ հասարակութիւնը . չէ՞ որ, առնուած տեղեկութեանց համաձայն, բոլորն ալ՝ իրենց շրջաններէն դուրս չելած՝ շարդուած են, իսկ մեզ, — քաղաքին, դաշտին եւ Սասունին, — բնաւ երբեք մերոզամիտ աչքով պիտի չնային, քանի որ երեսուն տարիներէ ի վեր, Մշոյ գաւառն է եղած որրանը յեղափոխութեան եւ ազատութեան : Անօգուտ է միամիտ ձեռացնել ինքզինքնիս : Բռլորս ալ, մեր կիներով ու զաւակներով, պիտի ենթարկուինք մոյմ ֆակատագիրին, ինչ ֆակատագիրի որ ենթարկուեր են մեր տարաբախտ եղբայրներն ու բոյրերը, որոնք մեր մօտ ու հեռու շրջաններու մէջ կը գտնուէին :

«Ա՛րդ, փոխանակ ծունկի գալու որ վատ դահիճը իր հարուածները իջեցնէ մեր գլխուն եւ անպատիւ մեռնինք, նախապատիւ կը համարենք որ ո՛չ ոք հեռանայ իր տունէն, ամէն մարդ աշխատի կատարել իր պարտականութիւնը՝ ըլլայ դէնքով, ատրճանակով, սուրով, երկաթով եւ ինչով որ կարեմայ իր վրէժը լուծել եւ իրքեւ մարդ՝ մեռնիլ :

«ՄԵՆՔ ՊԵՏԻ ԶՅԱՆՁՆՈՒԻՆՔ : Գիտենք ու կը զգանք որ մեր քաղաքի երիտասարդութիւնը անպատրաստ է . չունի բաւական զէնք, ու հին, փորձուած ղեկավարներ, որոնք մեծամասնութեամբ՝ Սասուն են բարձրացեր . բայց, ի՞նչ գիտնանք, ԹԵՐԵՒՍ, անոնք ալ, մեզ բազմաթիւ, ՄԵՁԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԹԱՆ :

«Սա՛ ալ ըսենք որ ամէն մարդ ազատ է . բոլորիս առջեւ ալ՝ կեանքի ու մահու հարցը դրուած է, ԱԻԵԼԻ՝ ՄԱՀՈՒ :

«Մեզի համակարծիք եղողները կրնան հետեւիլ մեզի, իսկ չեղողները թո՛ղ երթան յանձնուին . տա՛ Աստուած որ անոնք ողջ-առողջ հասնին իրենց երթալիք տեղը» :

«Մենք մեծ յոյս դրած էինք Վարդան Վարդապետի վրայ, որովհետեւ երեսուն տարիներէ ի վեր, ան՝ յեղափոխութեան դործին զարկ տուողներէն եղած էր . ամէն մէկ զաղտնի խորհրդակցութեան, տեղորոշում, ազդային շահերը պաշտպանելու, բոլոր նահատակուած եւ ողջ մնացած յեղափոխական ընկերներուն դործակից, համակիր եւ ջերմ պաշտպան եղած էր մինչեւ հիմա, սակայն, այս բոպէիս, բոլորովին այլափոխուած, կեթրծես հրէշ դարձած, իր կոչումին բոլորովին անհամապատասխան կացութեան մէջ դնելով ինքզինք, յայտարարեց .—

«— Ըմբոստանա՛լ, դիմադրե՛լ օգուտ չունի՛ . ժողովուրդիս կը հրամայեմ որ երթայ յանձնուի . եթէ իրենցմէ ոմանք մասամբ վտանդի ենթարկուին, դոնէ քաղաքի մէջ մնացած կիներն ու երեխաները անվնաս կը մնան [Բ.] :

«— Բա՛յց, Հա՛յր Սուրբ, — կ'առարկենք, — դուք ալ լաւ գիտէք որ վերոյիշեալ շրջանները բնա՛ւ երբեք ըմբոստութիւն, դիմադրութիւն ցոյց տուած չեն . Բաղէշի ժողովուրդը, որ ի ընէ վերնասէր, յեղափոխական չէ՛ եղած, եւ Սահմանադրութեան շրջանին ալ՝ նորէն նոյն անտարբեր ժողովուրդը մնաց մինչեւ վերջին վայրկեանը, ինչո՞ւ դերձ մնաց կոտորածէն, ինչո՞ւ չիւնայուեցաւ անոնց կիներուն եւ երեխաներուն :

«Իր պատասխանն եղաւ .

«— Այլեւս երկարել չեմ ուզեր, ինչպէս որ դուք ըսիք, ես ալ կ'ըսեմ .— Ամէն մարդ ազատ է . ուզողը թո՛ղ մնայ ու դիմադրէ, չուզողը թող ինձ հետ գայ : Ես վաղն իսկ կ'երթամ կ'արձանագրուիմ» :

«Հող գտնուող հասարակութիւնն ալ յայտարարեց .

«— Քանի որ մեր յեղափոխական Հայր Սուրբը կ'երթայ կ'արձանագրուի, մեմք ալ իրեն կ'ընկերանանք :

«Ու ժողովը փակուելով, ամէն մարդ մտահոգուած՝ տուն վերադարձաւ» (նոյն, էջք 378-380) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] [Գ.] :

Հաջի Յակոբի արտայայտած այս առողջ, իրատես, օգտակար եւ փրկարար գաղափարները ԽԱԲԵՐԱՅԱԿԱՆ ԷԻՆ արդեօք եւ կ'արտասանուէին իր ըսածներուն ԶԱԻԱՏԱՑՈՂ ՇՐԹՈՒՆՔՆԵՐԻ :

* * *

[Ա.] Ստոյգ եւ վաւերական պատմութիւն չի թուիր «պատմադիր» Կարօ Սասունիի այն յայտարարութիւնը թէ «կառավարիչը կը հրաւիրէ Վարդան Վարդապետը եւ 28 աչքառու հայեր՝ կառավարչատունը» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 889), եւ յիշելէ յետոյ կարգ մը ակնյայտնի ազդայիններու անունները, օրինակ, Յակոբ Տէր Զաքարեան, Համազասպ Տէր Յարութիւնեան, Արշակ Իգիթեան, Մամիկոն Պետրոսեան, որոնք, մեծ հաւանականութեամբ, թէեւ ներկայ եղած են Առաջնորդարանի վերոյիշեալ խորհրդակցական ժողովին, բայց ընտրուած յանձնախումբին մաս չեն կազմած, Կարօ Սասունի կը շարունակէ տալ անունները «աչքառու» Փեղայիներու ալ՝ Հաջի Յակոբի անունին առընթեր, որպիսիք էին՝ դերձակ Արօ, Մուխի Փարհադի Արօն [ո՛չ թէ Արօ (Արիստակէս), այլ Յարօ (Յարութիւն, Ծնթ. Ա. Տ.)], նոյնիսկ անունները Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանին եւ «քանի մը քահանաներու», բայց մանաւանդ՝ «Ալեքսան Մովսէսեանի» եւ «այլ երեւելիներու»:

Մենք տեսանք արդէն թէ քանի հոգի էին կառավարիչին գացողները, — Վարդան Վարդապետը եւ իր չորս ընկերակիցները, եւ ո՛չ թէ «28 աչքառու հայեր», ըստ վկայութեան՝ այդ խորհրդակցական ժողովին ներկայ եղող եւ վիճարանութեան մասնակցող յուշագիր Միսակ Բղէեանի ճշմարտապատում յուշերուն:

Յանուն պատմական անաչառութեան, կը յայտարարենք որ Կարօ Սասունիի ներկայացուցած վերոյիշեալ անուանացանկը յերիւրանգ է, արդիւնք՝ ցենց դիտաւորութիւններու եւ մոլորեցուցիչ դատումներու, որոնք խիստ յատկանշօրէն կը տիրապետեն Կարօ Սասունիի «պատմագիրք»ին մէջ, մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը:

Յուշագիր Միսակ Բղէեանի տուած անուանացանկը կը ներկայացնէ անունները ականաւոր անձերու եւ առաջնակարգ դիրք եւ կարեւորութիւն ունեցող ազգային անհատներու, որոնց խօսքը եւ կարծիքը, բնականոն ժամանակներու ընթացքին, մեծ կշիռ եւ ազդեցութիւն ունէին ո՛չ միայն Ազգային Առաջնորդարանի ընթացիկ կեանքի մէջ, ա՛յլ նաեւ կառավարական շրջանակներու մէջ ալ, ի բաց առեալ դաշնակ նեղմիտ, մեծամուլ եւ այլամերժ ղեկավարութեան փոքր ու ինքնամփոփ Բլիքը, որ խորհրդաւորութեան անթափանց քօղով մը շղարչուած, կ'արհամարհէր ամէն ինչ՝ իրմէ դուրս:

Մոլեռանդ Իթթիհատական թուրք կառավարի՛չն էր որ կոյր ատելութեան եւ անդուսպ թշնամանքի այդ դերագոյն բոպէին, արժէք ու կարեւորութիւն պիտի տար հասարակ անհատներու խումբի մը դիմումին՝ ա՛յն միակ պատճառով որ այդ խումբին մաս կը կազ-

մէին նաեւ քանի մը երիտասարդ հայդուկներ, իր նախկին բարձակից, գաղափարակից եւ գործակից «եռլտաչ»ներու մոլեռանդ հետեւորդներ, որոնք քաջ կուուող, բարեմիտ եւ ազդասէր երիտասարդներ էին միայն, ուրիշ ոչինչ:

Ասոնցմէ զատ, ըստ Կարօ Սասունիի պատումին, այդ «28 աչքառու հայերու» խումբին մաս կը կազմէին եղեր նաեւ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան եւ մանաւանդ՝ Ալեքսան Մովսէսեան:

Ո՛րքան լաւ պիտի ըլլար որ այս Սասունցի «պատմադիրը» Քիջ ՄԸ ԱԻՆԵԼԻ ԼԱԻ ՍԵՐՏԱԾ ԸԼԼԱՐ իր յօրինած պատմութիւնը, որպէսզի այս տեսակ անհեթեթ եւ թիւր յայտարարութիւններ չընէր — եթէ իր բուն նպատակը այդ տեսակ թիւր «պատմութիւններ» թխմել չէր: Այդ պարագային, հանգիստ պիտի ձգէր ՀԻԻԱՆԻ Տէր Եղիշէ Քահանայ, որ իր տան մէջ «ՆՍՏԱԾ», «ԶԷ՛ ՊԱՏԱՍԵԱՆԱԾ ԿՈՉԻՆ» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», էջ 48) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Նոյնպէս, բնաւ պիտի չփորձէր խանդարել հանդիստը բազմազարդ Ալեքսան Մովսէսեանին, որ դեղին ոսկիները կը շնորհէր եւ իրարու վրայ դիզելէն զատ, ուրիշ ո՛չ մէկ բանով կը հետաքրքրուէր, կա՛մ՝ ո՛չ մէկ ուրիշ բանի կարեւորութիւն եւ արժէք կուտար...:

* * *

[Բ.] Տաղնապի այս ահաւոր օրերուն, շրջաններէն բազմահար հայ ընտանիքներ փոխադրուած էին քաղաք՝ իրրեւ ամենէն ապահով վայր:

Թուրք կառավարութիւնը բնա՛ւ երբեք արգելք չէր յարուցաներ հայութեան այս կեղբոնացումին դէմ՝ սննդեղէնի տազնապ յառաջացնելու չարամիտ դիտաւորութեամբ:

Տեղական ազգային իշխանութիւնները գործի լծուած էին՝ պատասպարելու համար այս նորեկ ազգայինները, բնակարան եւ սընունդ հայթայթելով անոնց:

Թուրք եւ հայ յարաբերութեանց այս ամենափափուկ օրերուն, Ազգային Առաջնորդարանը դիմում կը կատարէ կառավարիչին, որ օժանդակութիւն ըլլայ քաղաք թափուած մօտ 10,000 այս եկուորներուն: Եւ Առաջնորդական Տեղապահ Վարդան Վարդապետը, իր հետ առնելով Նազարէթ Քեչիչեանը եւ մեր աւագ յուշագիր Միսակ Բղէեանը, կը ներկայանայ կառավարիչ Սերվէթ Բէյին:

Այդ պահուն, ասոր քով կը գտնուի եղեր նաեւ Մուշի թուրք երեսփոխան Հոջա Իլիաս, Դաշնակցութեան եւ Վարդան Վարդապետ-

տի բացառիկ ջանքերով եւ հայ քուէներով ՄԻՇՏ երեսփոխան ընտրել տրուած՝ այս կէս-թուրք կէս-հայ (մայրը հայուհի մըն էր՝ Սուլուխ գիւղացի) անբաժին հրէշը, որ կը բանայ իր թունալից բերանը եւ կ'արտասանէ հետեւեալ ժահրոտ խօսքերը.—

«— Վարդա՛ն Վարդապետ, գիտես որ զքեզ շատ կը սիրեմ, բայց քու ազդիզ ըրածին չափն անցաւ: Ահա՛ Վանայ դէպքը, ուր ապստամբները քաղաքը մեզմէ առնելով՝ ոռսերուն կը յանձնեն. ահա՛ մեր շրջանի հայ Ֆեղայիները՝ Սմբատ, Փոթիկեան Աշոտ, որոնք իրենց խումբերով կը կռուին մեր ուժերուն դէմ, եւ նոյնիսկ՝ հօրեղբայրս Հաջի Մուսան սպաննողները հայերն են եղեր: Ի՞նչպէս կարելի է մոռնալ մեզի եւ մանաւանդ ինծի հասած այս հարուածը, եւ դեռ եկած էք եւ մեզմէ ողորմութի՛ւն ալ կ'ուզէք ձեր դաւանան ազգի բեկորներուն համար: Ձեր բռնած այս ընթացքով, դեռ շատ որբեր պիտի ունենայ ձեր ազգը: Ասկէ ետք եղած ոմրագործութեանց առաջին ալ չե՛նք կրնար եւ ՊԻՏԻ ԶՈՒԶԵՆՔ ԱԼ ԱՌՆԵԼ, քանի որ ձեր վատութիւնը մէջտեղն է:

«Ահա՛, Փափազեանի եւ Ռուբէնի փախչիլը եւ Սասուն երթալը. ինչո՛ւ, մենք կո՞յր ենք, չե՞նք դիտեր թէ անոնք ի՛նչ շարժումներ կ'ընեն հոն: Բայց վստահ եղէք որ Ձեզ ԲՈԼՈՐԴ ԱԼ ՄԷՁՏԵՂԷՆ ԶՄԱՔՐԱԾ, մենք մէջտեղէն չեմք վերնար:

«Հիմա՛ դացէ՛ք որ երեսնիզ անգամ մըն ալ չտեսնեմ» (Միսակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 360-361) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Զարմանալին, այս հրէշածին թուրք երեսփոխանի արտասանած բացայայտ սպառնալիքը ԶԷՐ, ա՛յլ Հայոց «մտերիմ բարեկամ»ի ժահրոտ բերանէն արտահոսող վերոյիշեալ ատելափառ եւ ոճրաբոյր խօսքերը եւ սպառնալիքը՝ ի՞ր ՍԵՓԱԿԱՆ ԱԿԱՆՁՆԵՐՈՎ ԼՍՈՂ Վարդան Վարդապետի ԴԵՌԵՒՍ ՍՆՈՒՑԱԾ այն կոյր ու միամիտ վըստահութիւնն էր, որուն պատճառով ալ՝ ինք անդամալուծութեան եւ ճախողութեան մատնեց Հաջի Յակոբի քափած բոլոր ջանքերը, ու քաղաքի Հայութեան մեծագոյն տոկոսը ի՞ր ԵՏԵԻԷՆ ՔԱՐՇ ՏԱԼՈՎ՝ առաջնորդուեցաւ մինչեւ մօտակայ Սոխոզում եւ Ալիզըռնան գիւղերու մարազները, հո՛ն ողջակէզ դառնալու համար՝ իբրեւ վարձատրութիւն իր թուրք բարերարեալի «երախտազիտութեան»... :

[Գ.] Ազգային Առաջնորդարանի այս խորհրդակցական ժողովին մէջ տիրող իրական կացութեան ո՛չ միայն ԼՐԻԻ ու ՀԱՐԱԶԱՏ

ՊԱՏԿԵՐԸ ԶԻ ՏԱՐ Կարօ Սասունի, այլեւ ԳԼԽԻՎԱՅԻ ԿԸ ՇՐՁԷ պատմական իրողութիւնները, երբ կը դրէ հետեւեալ ՀՆԱՐՈՎԻ ՏՈՂԵՐԸ.—

«Ճգնաժամային այդ վայրկեանին, Առաջնորդարանը եւ Հ. Յ. Դաշնակցութեան Մուշ քաղաքի վարիչները իՐԱՐՄԷ ԿԸ ԲԱԺՆՈՒԷԻՆ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 891), որովհետեւ «ԹԷ՛ Առաջնորդարանը եւ ՔԷ՛ յեղափոխական զեկապարները ՆՈՅՆԱՆՄԱՆ ՏԵՍԱԿԷՏՆԵՐ ԶՈՒՆԷԻՆ» (նոյն, էջ 830) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

(Այս մէջբերումները ետ ու առաջ ձեւով կ'ըլլան ա՛յն պարզ պատճառով որ Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունի միեւնոյն պատմութիւնը ՏԱՐԱՆԶԱՏԱԾ է իՐԱՐՄԷ առանձին գլուխներով, — մէկը՝ իբրեւ «Եղեռնապատում», իսկ միւսը՝ «Հերոսապատում», որոնք, սակայն, միապապազ շարայարութիւնն են միեւնոյնն ճիւղին, Ծնթ. Ա. Տ.) :

Կարօ Սասունիի այս վարկապարզի յայտարարութիւնները ԲԱՑԱՐԶԱԿԱՊԷՍ ՍԵԱԼ ԵՆ՝ մէկէ աւելի պատճառներով.—

Այս «բաժանումը» ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ կա՛մ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ԲԸՆՈՅԹ ԶՈՒՆԷՐ ԲՆԱԻ, որովհետեւ՝

ա.— Կառավարութեան յանձնուելու մասին «միեւնոյն տեսակետը» ՈՒՆԷԻՆ թէ՛ Առաջնորդական Տեղապահ Վարդան Վարդապետը եւ թէ՛ Նազարէթ Քեչիչեան եւ իր համախոհները՝ ներառեալ կղերական դասը, որոնք միասնաբար կ'անձնաւորէին ու կը ներկայացնէին Տարօնի Ազգային Առաջնորդարանը:

Նազարէթ Քեչիչեան՝ պահպանողական ակնյայտնի ազգային մըն էր, ծանրախոհ, զգուշաւոր, լուրջ եւ զարգացած դէմք մը:

Ո՞վ էր, սակայն, Վարդան Վարդապետը:

Ան ալ, — ինչպէս ամէն Տարօնցի գիտէ, — համրածամօք դաշնակցական զեկապար դէմք մըն էր, հիմաւուրց, պատկառելի յեղափոխական անձնաւորութիւն մը՝ սիրուած ու յարգուած ամենքէն անխոր, Դուրան-բարձրաւանդակի (Մուշ-Սասուն) Կեղրոնական Կոմիտէի պատկառազու անդամը, «Դաշնակցութեան պատասխանատու դէմքերէն», ըստ վկայութեան նոյն ինքն Կարօ Սասունիի («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 955), իր կուսակցութեան կռուքը, եւ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ՝ քուրք կառավարութեան յանձնուելու տեսակետին ալ ՀԵՂԻՆԱԿԸ, ԶԱՏԱԳՈՎԸ, ԶԵՐՄ ՊԱՇՏՊԱՆԸ եւ ի՞ր ՕՐԻՆԱԿՈՎ ԱԼ ԳՈՐԾԱԳՐՈՂԸ՝ համախոհութեամբ Նազարէթ Քեչիչեանի եւ անոր կողմնակիցներուն:

բ.— Առաջնորդարանի այդ միեւնոյն խորհրդակցական ժողովին ներկայ էին նաեւ Մուշ քաղաքացի ԱԿՆՅԱՅՏՆԻ դաշնակցա-

կան ՂԵԿԱՎԱՐ ԴԵՄՔԵՐ ԱԼ, որպիսիք էին Համազասպ Տէր Յովհաննէսեան, Արշակ Մուխսի Իգիթեան, իր եղբայրը՝ Խաչմանուկ, ճեմարանական ուսուցիչ Արշակ Միրիջանեան, Եղիազար Տըռչոյեան, Եւայլն, որոնք, բոլորն ալ, ՆՈՅՆՊԷՍ ՀԱՄԱԿԱՐԾԻՔ ԷԻՆ Վարդան Վարդապետի եւ Նազարէթ Քեչիշեանի յանձնուելու տեսակէտին, եւ անոնց հետ ալ՝ գացին յանձնուեցան:

Աւելցնենք նաեւ որ այս կուսակցական ազգայինները, իբրեւ մտաւորական եւ դործօն տարրեր, դիրք եւ ազդեցութիւն ունէին Ազգային Առաջնորդարանի շրջանակին մէջ ալ:

Գ. — «Հ Յ. Դաշնակցութեան Մուշ քաղաքի վարիչները» եւ «Յեղափոխական ղեկավարները»՝ օդային, անբովանդակ եւ սնամէջ խօսքեր էին՝ ԱՅԴ ԱՐՀԱԻՐԱԼԻՑ ՕՐԵՐՈՒՆ, որովհետեւ Դաշնակցութեան Դուրան-Բարձրաւանդակ (Մուշ-Սասուն) Կենտրոնական Կոմիտէի «վարիչ տարրը» (գործածելով Կարօ Սասունիի բառերը, տեսնել «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 956) — Ռուբէն, Կորիւն, Մջօն, — փախեր, Սասուն ապաստաններ էին՝ Փետրուարէն ի վեր, իսկ քաղաք մնացած աչքառու եւ դիրքի տէր մէկէ աւելի դաշնակցական անձնավորութիւններ ալ (Համազասպ Տէր Յովհաննէսեան, Արշակ Մուխսի Իգիթեան, Արշակ Միրիջանեան, Եղիազար Տըռչոյեան, Եւայլն) ՀԱՄԱՄԻՏ ԷԻՆ Վարդան Վարդապետի եւ Նազարէթ Քեչիշեանի յանձնուելու տեսակէտին (այդ ատեն, Դուրան-Բարձրաւանդակի Կենտրոնական Կոմիտէի անդամներն էին՝ Վարդան Վարդապետը, Կորիւն, Մջօն, Կառնենցի Մկրտիչը, Սեմալ գիւղացի Մանուկ Շառոյեանը, Լեւոն Ասլանեան եւ Տիգրան Լոլոյեան: Ռուբէն ալ՝ Դաշնակցութեան Բիւրոյի լիազօր-ներկայացուցիչն էր Տարօնի մէջ):

Իսկ իբրեւ Դաշնակցութեան «քաղաքի վարիչներ» եւ «յեղափոխական ղեկավարներ» ներկայացուցուած քանի մը երրորդական եւ չորրորդական դիրք եւ կարեւորութիւն ունեցող մարտական երիտասարդներ, որոնց անունները կը շարժ Կարօ Սասունի, հաւանաբար՝ ո՛չ ներկայ եղած են Առաջնորդարանի վերոյիշեալ խորհրդակցական ժողովին, ո՛չ այդ հաստատութեան գործերէն կը հասկընային, ո՛չ այդ շրջանակով կը հետաքրքրուէին, եւ ո՛չ ալ՝ հասողութիւն եւ հասկացողութիւն ունէին ըմբռնելու թէ ի՞նչ կ'անցնէր կը դառնար աշխարհի այդ ետ-ինկած եւ անկէ ամբողջովին մեկուսացած անկիւնին (Մուշ քաղաք) մէջ, այդ ճգնաժամային օրերուն...:

Բացարձակապէս սխալ է, ուրեմն, այդ «բաժանումը» ներկայացնել իԲՐԵԻ ՀԵՏԵԻԱՆՔ Դաշնակցութեան դիրքաւորումին՝ ԸՆԴԴԵՄ յանձնուելու տեսակէտին, իսկ ամենամեծ չարաշահութիւնն է Հաջի Յակոբի անունն ալ ՆԵՐՄՈՒԾԵԼ այդ շրջանակին մէջ՝

ԻԲՐԵԻ ՄԵԿԸ այդ «վարիչներէն» կա՛մ «յեղափոխական ղեկավարներ»էն, եթէ այդպիսի բաներ դոյութիւն ունէին քաղաքին մէջ, այդ ա՛հաւոր օրերուն:

Կառավարութեան հրամանին չենթարկուելու եւ դիմադրութիւն կազմակերպելու ԳԱՂԱՓԱՐՆ ՅՂԱՅՈՂԸ եւ այդ իմաստով ալ՝ առաջարկ ներկայացնողը, — ինչպէս տեսան մեր ընթերցողները, — ԱՆՀԱՏԱԲԱՐ եղած է Հաջի Յակոբ (իր բարեկամ, մանկութեան ընկեր, գաղափարակից եւ գործակից Միսակ Բղէեանի հետ), որ որեւէ պաշտօնական կապ ու առնչութիւն ՉՈՒՆԷՐ Դաշնակցութեան տեղական՝ անունով միայն գոյութիւն ունեցող մարմինին հետ:

Հաջի Յակոբ, Սահմանադրութեան 4-5 տարիներու ընթացքին, իր հաշիւը ՄԱՔՐԱԾ ԷՐ ԱՐԴԷՆ՝ լայն օրերու պոռոտախօս եւ զրարան «պարոն»ներու եւ անոնց մանկլաւիկներու հետ եւ ՄԵԿՈՒՍԱՑԱԾ Կ'ԱՊՐԷՐ՝ զբաղելով մեղուարածութեամբ, եւ ազգային պաշտօններ վարելով՝ Ազգային Առաջնորդարանի շրջանակին մէջ:

Պատերազմի նեղ ու շփոթ օրերուն միայն, Վահան Փափազեան, — լեռները փախուստ տալէն առաջ, — փորձեր է մօտենալ Հաջի Յակոբին եւ օգտագործել անոր բազմապիսի կարողութիւնները եւ հարուստ փորձառութիւնը, ըստ վկայութեան նոյնինքն Բիւրոյական յուշագիրին («Իմ Յուշերը», Բ., էջ 355):

Այս պայմաններու մէջ կը գտնուէր Հաջի Յակոբ, երբ ինք եւ մեր աւագ յուշագիր Միսակ Բղէեան գրաւոր հրաւեր կը ստանային Առաջնորդական Տեղապահ Վարդան Վարդապետէն՝ մասնակցելու համար վերոյիշեալ խորհրդակցական ժողովին («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 377): Եւ Հաջի Յակոբ կ'ընդառաջէր իրեն եղած հրաւերին ու ներկայ կ'ըլլար հա՛մ իԲՐԵԻ ԱՆՀԱՏ, եւ իր թելադրութիւններն ու վերոյիշեալ առաջարկը կը ներկայացնէր՝ իբրեւ այդպիսին:

Հետեւաբար, ՊԻՂԾ ԶԱՐԱՇԱՀՈՒԹԻՒՆ Է, — նորէն կը կրկնենք, — Հաջի Յակոբի առաջարկը համայնացնելով՝ ԱՆՈՐ ՎԱՐԿԸ ՏԱՐԱԾԵԼ ՆԱԵԻ «մարտական ուժերուն» ալ վրայ, Հաջի Յակոբի ԱՆՈՒՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՇԱՐԵԼՈՎ այդ մարտական երիտասարդներուն անուններն ալ, որոնք, իբրեւ թէ «ԿԸ ՊՆԴԵՆ»? հղեր «դիմադրութեան տեսակէտին վրայ» (Կարօ Սասունի, «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 891) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Գ Լ ՈՒ Խ Ի Բ .

ՔԱՂԱՔԵՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՓՈՐՁԸ

ԿԸ ԶԱԽՈՂԻ

4.— Առաջնորդական Տեղապահ Վարդան Վարդապետի՝ վերոյիշեալ մերժողական կտրուկ պատասխանէն յետոյ, քաղաքի հայուքինը մատնուեցաւ շուարանքի եւ յուսահատութեան: Ծակատագրական այս անորոշ կացութեան բացայայտ պատճառը հանդիսացաւ Վարդան Վարդապետի ո՛չ-իրաւախոհական եւ ո՛չ-զործակցական ոգին, զոր պէտք չէր իրեն թոյլատրէր իր յեղափոխական-դաշնակցական ղեկավար բացառիկ դէմք մը ըլլալու իրողութիւնը, եւ որուն պատճառով, սակայն, համաձայնութեան եւ գործակցութեան որեւէ հնարաւորութիւն անկարելի դարձաւ երկու տարակարծիք հոսանքներու միջեւ:

Ու Հաջի Յակոբ, ինքզինք լքուած զգալով Ազգային Առաջնորդարանի նման համազգային բնոյթ ունեցող մեծ հաստատութեան մը, պատուաւոր փրկութեան ուրիշ ելք մը կը փնտռէր:

Ծիշտ էր որ քաղաքի մէջ կային բաւարար թիւով երիտասարդներ, որոնք ինքզինքնին սիրայօժար տրամադրելու պատրաստ էին Հաջի Յակոբի հրամանին ու հրահանգներուն, սակայն անոնց մեծամասնութիւնը անվարժ էր զէնքի գործածութեան: Ատկէ զատ, բաւական քանակութեամբ զէնք եւ ռազմամթերք չունէին՝ բոլորին բաշխուելու համար, որովհետեւ Ռուսիոյ սխալ ու վնասակար որոշումին իբր հետեւանք, քաղաքի եւ դաշտի բոլոր կոուտղ ուժերը, զէնքերը, ռազմամթերքը, ինչպէս նաեւ պարէնը փոխադրուած էին Սասուն:

Հաջի Յակոբ շատ լաւ գիտէր որ քաղաքի հարուստ հայ տուներու մէջ, պահանջը բաւարարելու չափ զէնքեր եւ ռազմամթերք կը գտնուէին դեռ, սակայն քանի որ այդ ազգայինները, ամենայն հաւանականութեամբ, պիտի հետեւէին Տեղապահ Վարդան Վարդապետի խորհուրդին ու քայլերուն, հետեւաբար տրամաբանական էր ենթադրել որ անոնք նախապատիւ պիտի համարէին փնացնել իրենց գէնքերը, քան դանոնք տրամադրել դիմադրութեան կողմնակիցներուն, եւ կը խորհէին որ իրենց մեկնումէն յետոյ, եթէ քաղաքի մէջ

որեւէ անախորժ դէպք չպատահի, իրենց կիներն ու երեխաները անվնաս ու ապահով պիտի մնային իրենց տուներուն մէջ:

Այս բոլոր հաւանականութիւններն ու կարելիութիւնները նըկատի առնելէ ետք, Հաջի Յակոբի եւ մեր աւագ յուշագիր Միսակ Բղէեանի ըրած նախահաշիւին համաձայն, կը տեսնուի որ իրենց համակրող երիտասարդներէն միմիայն երեսուն անձեր զէնք ունէին:

Սակայն, այսքան սահմանափակ թիւով մարտիկները ի՞նչպէս պիտի կարողանային դէմ դնել թշնամիի չորս թնդանօթներուն, կանոնաւոր բանակին, թրքօ-քուրդ չեթէներուն եւ վայրագ խուժանին, եւ յաջողութիւն ձեռք բերել:

Բայց ի՞նչ ընէին. ուրիշ ճար չկար: Օրը տարածամած էր արդէն եւ որոշումի մը յանգելու էին:

Եւ Հաջի Յակոբ կ'որոշէ — իբրեւ երկու շաբաթ փոքրագոյն, — զինեալ ու անզէն բոլոր տրամադրելի երիտասարդ ուժերը առնել ու Սասուն բարձրանալ՝ քաղաքը լքելով իր սեւ ճակատագիրին:

Երեք հայ թաղերու երիտասարդութիւնը սիրով ընդառաջ կ'երթայ Հաջի Յակոբի այս առաջարկին, եւ երբ յաջորդ օրը, Յունիս 27-ին, Շարաթ օրուան կէս դիշերին, Սասուն մեկնելու կազմ ու պատրաստ, զինեալ ու անզէն երիտասարդներու առաջին խումբը, որ հարիւր անձերէ կը բաղկանար, Կողի թաղի բլուրն ի վեր կը բարձրանար՝ դէպի Սաչքի Դուրանի բարձունքը, հո՛ն, հայոց զերեզմանոցին մօտերը, կոուի կը բռնուի քաղաքը պաշարող թուրք ջոկատի մը հետ, որ դեռ նոր տեղաւորուած էր հոն:

Այս առաջին մեկնող խումբէն քանի մը երիտասարդներ, օրինակ, Մուղսի Ֆարհադի Յարօն, Հղլաթեան Հրանտ, եւ այլն, կը յաջողին ճեղքել պաշարման դիժը ու կ'անցնին-կ'երթան ուղղակի Սասուն (Սեմալ գիւղը), իսկ մեծամասնութիւնը, որ առհասարակ անփորձ երիտասարդներէ կը բաղկանար, կը վերադառնայ քաղաք՝ այդ վայրի մէջ լքելէ ետք իրենց չալկած ռազմամթերքն ու պարէնը, զոր յետոյ՝ Հաջի Յակոբ վար բերել կու տայ(1):

Մեկնելու պատրաստ երիտասարդներու երկրորդ խումբը,

(1) Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զափարեան կը յիշէ անուանները այն երկու երիտասարդ մարտիկներուն, որոնք վար բերին այդ լուսած իրեզնէները, — Արմենակ Մարտեան, որ հիմա Երեւան կը բնակի, եւ Տիրան Հլղաթեան (Ծիրօ), որ վերջը նահատակուած է հոյի կռիւներու ընթացքին (Յակոբ Տէր Զափարեանի Ձեռագիր Յուշերը, էջ 138):

զլխաւորութեամբ Հաջի Յակոբին, արդէն իսկ Մուշի գետակը անցնելու վրայ էր, երբ լսուեցան հրացանաձգութիւններու ձայները՝ կողի թաղէն: Հաջին անմիջապէս կը հրամայէ որ այդ երիտասարդները վերադառնան իրենց սենեակները:

Մուշի թուրք կառավարիչը, որ գիտէր թէ քաղաքի հայ երիտասարդ ուժերն են որ կը փորձէին դուրս գալ քաղաքէն, մունետիկներու միջոցաւ անմիջապէս յայտարարել կու տայ քաղաքի հայ եւ թուրք թաղերու բնակչութեան.

«— Ժողովուրդ, մի՛ վախնաք, երկու խումբ գիշերապահ զինուորներ, մութին մէջ գիրար չճանչնալով, իրարու վրայ կրակ բացած են սխալմամբ»:

Այս տեսակ ստապատում յայտարարութեամբ մը, ան կը փորձէր դառն իրողութիւնը գաղտնի պահել թուրք ժողովուրդէն, մինչդեռ քաղաքի հայութիւնը շատ լաւ գիտէր թէ ի՛նչ կը նշանակէր այդ հրացանաձգութիւնը:

Այս նոր կացութեան դէմ-յանդիման, Հաջի Յակոբ կ'որոշէ որ այդ ձախողած փորձը կրկնէ յաջորդ օրը, Յունիս 30-ին, Վարդավաթի Կիրակի գիշերը, ուրիշ ճամբայով մը — Մուշի գետակն ի վեր, դէպի Ամարանոց Մուշեղաբերդի ուղղութեամբ եւ Կուրտիկ լեռան լանջերն ի վեր:

Այդ օրը, սակայն, միւս հայաթաղերէն կը հաղորդուի Հաջի Յակոբին թէ հայերէն շատերը կառավարչատունը կ'երթան արձանագրուելու, սակայն գրեթէ բոլորն ալ վար կը դրուին, թէ՛ Վերին եւ Սուրբ Մարինէ թաղերուն մէջ, ռազմագիտական կարեւոր դիրք ունեցող բոլոր տուններն ու թաղամասերը կը պարպուին հայերէն եւ անոնց մէջ թրքական զօրք կը տեղաւորուի, եւ թէ՛ թընդանօթներ կը ղետեղուին հայ թաղերուն տիրապետող բարձրագիւր բլուրներու եւ բարձունքներու վրայ:

Այս տեղեկութիւնները բացայայտ կերպով ցոյց կուտային թուրք կառավարութեան մտադրութիւնը կամ դիտաւորութիւնը թէ անհրաժեշտ պարագային, պիտի ուժակոծել տայ հայկական թաղերը...:

Այս կարգադրութիւններուն տեղեկանալէն յետոյ, Հաջի Յակոբ կը լէ՛ք քաղաքէն դուրս գալու երկրորդ փորձին ծրագիրը եւ կ'որոշէ իր հետեւորդներով մնալ քաղաք եւ դիմադրութիւն կազմակերպել:

«Այդ պահուն, — կը գրէ յուշագիր Միսակ Բդէեան, — միւսակ Հաջին էր քաղաքի մէջ՝ իբր փորձառու ռազմագէտ մարտիկ: Բոլոր զինեալ տղաքը կատարեալ վստահութիւն ունէին անոր վրայ եւ այս անել կացութենէն պատուով դուրս գալու համար, բոլորի

աչքերը անոր էին յառած, ու իր տուած հրահանգները տառապէս կը յարգէին ու կը գործադրէին:

«Հաջին սնապարծ չէր. իր վրայ առած այս ահաւոր եւ ծանր լուծին պատասխանատուութիւնը լաւ կ'ըմբռնէր: Երէկուան դէպքին ատեն, երբ անփորձ երիտասարդներուն՝ իրենց գէնքերն ու շալակները լքելով փախչիլը լսած էր, Հաջին սրտնեղելով՝ կ'ըսէր.

«— Ատոնցմով է որ ես վրէժս պիտի լուծեմ թշնամիէն, — եւ կը շարունակէր.

«— Մենք կը կռուինք մինչեւ մեր վերջին փամփուշտը. եթէ Սասուն գտնուող մեր «պարոն»ները, մեր ճգնաժամը տեսնելով՝ մեզի օգնութեան փութան, ԱՐԴԷՆ ՓՐԿՈՒԱՍԿ ԿՐԼԼԱՆՔ, մեր յաղթանակը կատարեալ կ'ըլլայ, եթէ ո՛չ, կրկին անգամ, մենք մեր պարտականութիւնը կատարած կ'ըլլանք. թող անոնք ալ՝ պատմութեան առջեւ հաշիւ տան» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 389) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] [Ա.]:

Հաջի Յակոբի արտայայտած այս գաղափարները եւ պատրաստակամ զոհաբերութեան այս սրտարուխ ինքնամատուցումը՝ անկե՞ղծ համոզումի խօսքեր ու արարքներ են, թէ ո՛չ՝ ուրիշները խաբելու համար, մեքենայօրէն արտասանուած բանդագուշանքներ...:

* * *

[Ա.] Հաջի Յակոբի այս ինքնավստահ եւ լաւատես արտայայտութենէն ետք, նորէն վարկպարագի վերագրում կը թուի մեզի՝ Կարօ Սասունիի այն պնդումը թէ «Հաջի Յակոբ, որպէս հին Փեղայի, շատ լաւ գիտէր թէ ԱՆՅՈՅՍ փակատամարտ (ըստ երեւոյթին, Կարօ Սասունի չի կրնար ըմբռնել տարբերութիւնը «կռիւ» եւ «ճակատամարտ» բառերուն, Ծնթ. Ա. Տ.) մրն էր որ կը մղէին» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 902) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Նախ, Հաջի Յակոբի արտասանած այն խօսքը թէ «Մենք կը կռուինք մինչեւ մեր վերջին փամփուշտը» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 389) բացայայտօրէն ցոյց կուտայ Հաջի Յակոբի անյողող կամքը եւ անդառնալի որոշումը թէ ինք մեռնելու վտակաւորութեամբ էր որ կը կռուէր ու կը կռուեցնէր իր երիտասարդ կուրիւնները:

Երկրորդ. Հաջի Յակոբի յոյսն ու հաւատքը թէ «եթէ Սասուն գտնուող մեր «պարոն»ները օգնութեան փութան մեզի, ԱՐԴԷՆ ՓՐԿՈՒԱՍԿ ԿՐԼԼԱՆՔ, մեր յաղթանակը ԿԱՏԱՐԵԱԼ ԿՐԼԼԱՅ», ան-

րովանդակ խօսքեր պիտի չմնային, այլ երջանկաբեր իրակամութեան պիտի վերածուէին, եթէ, արդար տարակուսանքով արտասանուած այդ «եթէ»ն ՉՄԹԱԳՆԵՐ ու ՁԽՈՒՈՎԷՐ անկեղծ ու անմար սիրով իր ազգն ու հայրենիքը սիրող այս մեծ Հայու եւ մեծ Տարօնցիի հոգին, եւ այդ մթազնումն ու հոգեկան խռովքը ծագում կ'առնէին այն յոյժ ցաւատանց իրողութեանն որ ԻՆՔ ՇԱՏ ԼԱԻ ԿԸ ՃԱՆՁՆԱՐ Սասուն ապաստան գտած այդ երկու «պարոն»ներու «ազգասիրութեան» եւ «զոհարերութեան» չափն ու իսկութիւնը:

Եւ արդար տարակուսանքով լեցուն իր յոյսը ան արտայայտած էր շատ զօրաւոր շեշտ ունեցող «ԹԵՐԵՒՍ»ով մը.

«— Ո՛վ գիտէ, ԹԵՐԵՒՍ, Սասնոյ մեր ընկերներու մէջ զտունին ընկերական ազնիւ սիրտ ունեցողներ եւ փութան մեր օգնութեան» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]: (Տեսնել նաեւ այս ուսումնասիրութեան Գլուխ Բ. եւ Գլուխ ԻԳ., Իբրուազներ 5 եւ 6), իր յոյսը գնելով Սասուն գտնուող մեր Տարօնցի հայդուկներուն վրայ միայն, եթէ ասոնք կարենային, — գոնէ վայրկեան մը, — ինքզինքնին ձերբազատել իրենց եսամոլ ու անձնապաշտ «պարոն»ներու խաթարիչ ազդեցութենէն...:

Իսկ եթէ, հակառակ պարագային, բնիկ Տարօնցի մեր այդ հայդուկները չկարողանային մէկ կողմ շարտել զիրենք գերող այդ կաշկանդիչ շղթաները եւ օղնութեան չփութային քաղաքի մէջ գոյութեան ահեղ պայքարով տուայտող մեր հարազատներուն, — ինչպէս որ ալ եղաւ, — ա՛յն ատեն, «կրկին անգամ, մեմք մեր պարտականութիւնը կատարած կ'ըլլամք. ԹՈ՛Ղ ԱՆՈՆՔ ԱԼ (այդ «պարոն»ները, Ծնթ. Ա. Տ.) պատմութեան առջեւ ՀԱՇԻԻ ՏԱՆ», կ'եզրակացնէր Հաջի Յակոբ (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ահա՛, «պատմութեան առջեւ հաշիւ տալ»ու այս անաղբ մըզձաւանջն ու սարսափն էին որ ՄՂԵՑԻՆ այդ երկու պարտազանց ու յանցադործ «պարոն»ները՝ յօրինելու «կիսա-կամարածեւ Պաշարում»ի հեքիաթը եւ «Ֆրոտոնայ»ի առասպելը, որոնցմով անոնք ջանացին ցերմակերես ցերկայանալ պատմութեան առջեւ՝ փորձելով ուրանալ իրենց անասելի ու անքաւելի մեղքերն ու յանցանքները...:

ԳԼՈՒԽ ԻԳ.

ԱՅԼ ԴՐՈՒԱԳՆԵՐ

5.— Մուշ քաղաքի կռիւին առաջին օրուան (Յունիս 29), Երկուշաբթի) երեկոյեան, ընթրիքէն յետոյ, երբ մեր քաջամարտիկ երիտասարդները կը սկսին մաքրել իրենց հրացանները, Հաջի Յակոբ ալ, իր դիրքի սենեակին մէջ նստած, պատռոն դաշը խաչածեւ կուրծքին անցուցած, մոսինն ալ քովի պատին կռթնեցուցած, ուրախ-գուարք, թէյ կը խմէր եւ մեր յուշագիր Միսակ Բդէեանին կ'ըսէր.—

«— Սահմանադրութեան այս վեց տարիներուն, երբ զէնքս վար դրած էի եւ անձնական մտահոգութիւններով կը տապալկուէի, շարունակ վատառողջ կը զգայի եւ ծերացած մարդու կը նմանէի, բայց այսօր, երբ բախտը նորէն ինծի ժպտելով, մոսինս ձեռքս առի եւ առտուրնէ մինչեւ հիմա գացող-եկող գնդակներու հետ կը զուարճանամ, կը զգամ որ 21 տարեկան երիտասարդի մը կը նմանիմ: Մինակ, տա՛ր Աստուած որ մեր տղաքը կարենային աւելի երկար դիմանալ. ո՞վ գիտէ, ԹԵՐԵՒՍ, Սասնոյ մեր ընկերներու մէջ ԳՏՆՈՒԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԱԶՆԻԻ ՍԻՐՏ ՈՒՆԵՑՈՂՆԵՐ եւ փութան մեր օգնութեան, եւ եթէ ԼԱԻ ՄՏԱՄԵՆ, իրենց շահն ալ այդ կը պահանջէ» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 399) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Կա՞յ, արդեօք, ընկերական ազնիւ սիրտ ունեցող որեւէ ապնուասիրտ հայ, որ տարակուսի այս մէջբերուած պարբերութեան բոլոր ընդգծեալ մասերու արտայայտած գաղափարներու անկեղծութեան եւ ճշմարտութեան, բացի Կարօ Սասունիի տիպի մարդոցմէ...:

* * *

6.— Մուշի Վերին Թաղի կռուողներու ղեկավար Լեւոն Աւանեան, կռիւի առաջին օրը, կանուխէն, իր թաղը ձգած՝ անցեր է Ձորու Թաղը, ուր Հաջի Յակոբին կը բացատրէ իր փախուստին պատճառները:

Հաջի Յակոբ կը ջղայնանայ եւ կ'ըսէ:—

«— Գիտեմ որ դուք անձնագոհ տղաք էք եւ կրնայիք ձեր վըտանդուած դիրքերէն անցնիլ ուրիշ դիրք մը եւ թաղիդ դիմադրութիւնը յառաջ տանիլ, քանի որ ձեր թաղի տուներու պատերն ալ ծակուած ըլլալով, իրարու հետ յարաբերութեան մէջ էիք:

«Այդ ըրածնիդ շատ սուղի պիտի նստի մեր վրայ, բայց ինչ որ է, մինչեւ մեր վերջին ՇՈՒՆՁԸ ԿՌՈՒՆԵԼՈՒ եւ պատուով ՄԵՌՆԵՆԼՈՒ ԵՆՔ:

«Յանցանքը ձեզի չեմ վերագրեր. կը զգամ թէ առաջին անգամն է որ ահեղ կռիւի մը կը մասնակցիք. յանցաւորները ՍԱՍՈՒՆ ԳՏՆՈՒՈՂՆԵՐՆ ԵՆ, որ դեռ օգնութեան ՉՀԱՍԱՆ, թէւ յոյսս ԲՈՂՈՐՈՎԻՆ ԿՏՐԱՄ ՉԵՄ ԱՆՈՆՑՄԷ» (նոյն, էջ 403) [Բոլոր ընդգծածումները մերն են, Ա. Տ.]:

Այս ընդգծուած տողերը՝ իր ըսածներուն ՉՀԱՒԱՏԱՑՈՂ մարդու շունչով եւ զգացումով արտաբերուած խօսքեր են, «պատմագիր» Սասունի:

1915		ՅՈՒՆԻՍ			1915	
Կիրակի	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուրբաթ	Շաբաթ
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

1915, ՅՈՒՆԻՍ ԱՄՍՈՒԱՆ ՕՐԱՑՈՑՑԸ

* * *

7.— Իսկ քաղաքի կռիւին երկրորդ օրուան (Յունիս 30, Երեքշաբթի) երեկոյեան գումարուած Զինուորական Սորհուրդի խորհրդակցութեանց ընթացքին, Հաջի Յակոբի զայրալից արտայայտութեանց մասին պիտի խօսինք աւելի ետք (տեսնել Գլուխ ԻԶ.):

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԹՈՒՐԲ ԶԻՆՈՒՈՐԻ ՈՐԱԿԸ ԻՐԵՒԻ ԿՌՈՒՈՂ ՈՒԺ

Տարօնի ժամանակակից պատմութեան ՄԵՇԱԳՈՅՆ ՀԵՐՈՍ Հաջի Յակոբի երեսին՝ այս ժպիրի անարգանքը, անպատկառօրէն, շարտելէն յետոյ, կը շարունակէ Տարօնի անարժան «պատմագիրը»:

«Հո՛ն, Կուրտիկի վրայ, կռիւ կար, եւ թրքական զօրքը բոլոր անցքերը բռնած էր: Մէկ վայրկեանի մէջ ԿՐՆԱՅԻՆ ԹՆԴԱՆՕԹՆԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ԴԷՊԻ ԼԵՌՆԵՐԸ ԵՒ ԶԼԱՏԵԼ ԱՄԷՆ ԱՐՇԱԻԱՆՔ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 902) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Այս պարբերութեամբ, Կարօ Սասունիի արտայայտած գաղափարները թէւ ֆշմարտանման կ'երեւին այս ճերմակ թուղթին վրայ, սակայն իրականութեան ու ճշմարտութեան տրամագծօրէն հակասեալ միտքեր ու գաղափարներ են, զոր Տարօնի նենգամիտ «պատմագիրը» կը ջանայ կլլեցնել իր բարեմիտ, բայց Տարօնի իրականութեան եւ Կուրտիկի լեռնալանջերու՝ քաղաքի հետ ունեցած առնչութեանց բոլորովին անձանօթ իր ընթերցողներուն:

Մուշ քաղաքին վրայ գոռացող չորս թնդանօթներու թնդանօթածիզ գինուորները ԿՐՆԱՅԻՆ ԱՐԴԵՕՔ, «մէկ վայրկեանի մէջ», թնդանօթները դարձնել դէպի լեռները եւ «ջլատել ամէն արշաւանք»:

Տեսնենք:

Կուրտիկի «կռիւներու» եւ առհասարակ, Տարօնի միւս բոլոր կռիւներու եւ դէպքերու մասին խօսած ատեննին, մեր Սասունարնակ «պարոնները» եւ անոնց Սասունցի թուրքական «պատմիչն» ու «պատմագիրը», Սասունցի Մուշեղ եւ Կարօ Սասունի, դիտումնաւոր կերպով, ՄՈՒԱՑՈՒԹԵԱՆ ԿՈՒՏԱՆ յոյժ կարեւոր պարագայ մը եւ յանդուրախութեամբ կ'ունենան այս տեսակ վրանբաց ՍՈՒՏԵՐ ԱՌԱՋ ՔՇԵԼ՝ իբրեւ բացարձակ ֆշմարտութիւն:

Այդ յոյժ կարեւոր պարագան՝ թուրք զինուորի ՈՐԱԿՆ Է:

Զինուորական ի՞նչ արժէք կը ներկայացնէին, այդ օրերուն ամիսափոյ հաւաքուած, գրեթէ զինուորական կանոնաւոր մարզանքի երես չտեսած, եւ նոյնիսկ, առանց զինուորական համագրեստի՝ պարտականութեան կանչուած այդ թրքօքուրդ տղաները:

Հետաքրքրական եւ միանգամայն՝ շահեկան է իմանալ մեր առաջ յուշագիր Միսակ Բղէեանի յայտնութիւններն ու վկայութիւնները՝ այդ նոյն թրքո-քուրդ զինուորներու մասին:

Մուշ քաղաքի կռիւին առաջին օրուան երեկոյեան, հրացանածղութեան դադարումէն ետք, մեր քաջակորով մարտիկներու եռուզեռ գործունէութեան մասին խօսած ատեն, այսպէս կ'արտայայտուի ազանատես յուշագիրը.—

ա.— «Այդ օրը, մեր տղաք ԱնԱնԿ ՇՓՈԹՈՒԹԵԱՆ ԿԸ ՄԱՏՆԷԻՆ բոլոր թնդանօթածիգները, որ անոնք շարունակ կը տեղափոխէին թնդանօթները. անոնց արձակած ռումբերէն եւ Ո՛Ձ ՄԵՎԸ ԻՐ ՆՊԱՏԱԿԻՆ ԿԸ ՀԱՄՆԷՐ, միայն բարտի ծառերու երկար ճիւղերու մէջէն անցնելով, մեր դիմացի բլուրին ստորոտը(1) փոշի կը հանէր եւ ծառերու ճիւղերը կոտորտելով՝ վար կը թափէր: Պոլէեան Մջոյի տունները, ուր ո՛չ կռուող կար եւ ո՛չ ալ բնակութիւն, կը ոմբակոծւէին շարունակ, ԵՐԵՒԻ՝ քնդանօթածիգները վարժեցնելու համար, եւ հարիւրաւոր ռումբեր տեղացնելով՝ ՀԱԶԻԻ Թէ կարողացան պատին մէկ կողմը ՔԻՉ ՄԸ ՓԼՑՆԵԼ» (Միսակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 397) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

բ.— Մեր տուններու դիմաց, հարաւային կողմը, Վերին Թաղի թրքական գոտերու (գերեզմանոց) գերեզմանաքարերու ետեւ պահուցած զօրքերը հաղարաւոր հրացաններու համազարկերով, կարկուտի նման զնդակներ կը տեղացնէին մեր պատուհաններուն վրայ՝ առանց իրենց նպատակին հասնելու: Անոնք կը կարծէին թէ իրենց նման տղայական դիրքեր պատրաստած էինք մենք ալ, մինչդեռ մենք առջեւի կողմէն քար շարած էինք, քարերուն ետեւն ալ՝ հողով լեցուն սնտուկներ դրած էինք, անանկ որ իրենց զնդակները, քարը ճեղքել-անցնելէն ետք, կը խրէին հողին մէջ եւ ներսի մարդոց վնաս չէին հասցներ, թէեւ շուններուն մէջ՝ ճարպիկ նշանառուներ ալ պակաս չէին» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

գ.— «Այդ օրը, քուրքերը հարիւրաւոր դիակներ ունեցան, իսկ մեզմէ եւ ո՛չ մէկը վնասուեցաւ՝ միմյեւ երեկոյեան մութը, որ ատեն թուրքերու թնդանօթներն ու հրացանները լուցին՝ մենք ալ՝

(1) Բղէեանեանց տան հանդիպակաց բլուրի մէկ ապառաժուտ լանջի վրայ (Պայա-Բաշը կոչուած) կը գտնուէին առ հասարակ Պոլէեան բազմամիւզ մեծ գերդաստանին պատկանող ազգայիններու տունները:

իրենց օրինակին հետեւեցանք» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

դ.— «Այդ օրը, մեր Կեղրոնական Վարժարանն ու եկեղեցին լեցուած զօրքերն ալ բոլորովին ձեռնքափ մնացին: Մեր եւ Վերին Թաղերէն տեղացող զնդակներու պատճառով, ո՛չ մէկ զինուոր կարողացաւ դուրս գալ, իսկ դպրոցի պատուհաններուն առջեւ, անհագորէն, դիրք պատրաստած չըլլալուն, ՁէԻՆ ՀԱՄԱՐՁԱԿԵՐ ՆՈՅՆԻՍԿ մօտեմալ պատուհաններուն՝ ՍԱՐՍԱՓԵԼՈՎ մեր գնդակներէն» (նոյն, էջ 398) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ե.— «Այդ գիշերը, աւելի երկչուտ, վատ քուրքերը ԿԸ ԿԱՍԿԱՄԵԻՆ որ մեմք յարակուս պիտի գործէինք իրենց վրայ, քան թէ իրենք՝ մեր վրայ» (նոյն, էջ 399) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

զ.— «Մեզ մտահոգողը քնդանօթներն էին, եթէ ոչ՝ ֆուրքերը անվարժ էին, հետեւաբար՝ ԱՆԱՐԺԷՔ ԿՈՒՈՒՈՂՆԵՐ» (նոյն, էջ 402) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* * *

Արդէն, բաւական ընդարձակ կերպով եւ հանդամանօրէն բացատրեցինք՝ նախորդ էջերուն մէջ՝

1.— Իսկական արժէքն ու տարողութիւնը «Կուրտիկի կռիւներուն»:

2.— «Բոլոր անցքերը բռնուած ըլլալուն առասպելը:

3.— Թրքո-քուրդ զինուորներու որակական եւ բարոյական կորովի իսկական արժէքը՝ իբրեւ կռուող:

Նիւթական եւ բարոյական այս խիստ կարեւոր զինուորական յատկանիշներէն ԲՈՂՈՐՈՎԻՆ ԶՈՒՐԿ այդ թրքո-քուրդ զինուորներէն՝ բանաւոր եւ հնարաւոր ՁէՐ ԱԿՆԿԱԼԵԼ, — ինչպէս Կարօ Սասունի կ'ակնկալէ, — որ անոնք, այդ թրքո-քուրդ անմարդ ու կորովագուրկ զինուորները, որոնք չէին գիտեր նոյնիսկ թէ ինչո՞ւ համար էր որ կը կռուէին եւ որո՞ւ համար էր որ պիտի զոհարեւէին իրենց երիտասարդ կեանքերը, — «մէկ վայրկեանի մէջ» ԿԱՐԵՆԱՅԻՆ թնդանօթները «դարձնել» դէպի լեռները եւ «ջլատել» Սասունէն Մուշ քաղաքին օգնութեան փութացողներու այդ ՄԵՄԱՊԷՍ ԱՐԱԳԱՇԱՐԺ եւ ՅՈՒԹ ԼՊՐԾՈՒՆ ԹԻՐԱԵԼ, երբ այդ միեւնոյն թընդանօթածիգ զինուորները, հարիւրաւոր ռումբեր վատնելով՝ «ՀԱԶԻԻ ԿԱՐՈՂԱՑԱԾ ԷԻՆ» անշարժ թիրախի մը, այսինքն, Պոլէի Մջո-

յի լճուած տան պատին «Մէկ կողմը ՔիՉ ՄԸ ՓԼՑՆԵԼ» (նոյն, էջ 397), մէկ կողմ թողելով այլեւս այն խիստ կԱՐԵԻՈՐ ՊԱՐԱԳԱՆ թէ աշխարհագրական տուեալներով ալ՝ ԱՆԿԱՐԵԼԻ ԵՒ ԱՆՀՆԱՐ ԷՐ որ այդ թնդանօթածիղները, իրենց գտնուած դիրքերէն, կարեւորապէս թնդանօթները ԴԱՐՁՆԵԼ «դէպի լեռները եւ ջրատել ամէն արշաւանք» (Կարօ Սասունի, «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 902), նամանաւանդ՝ այդ ճղնածամային օրերուն, երբ «Քիաֆիր Մոսկոֆ»ի սարսափեցնող շուքը հիւսիսէն երկնցեր էր մինչեւ Քասաւրայ լեռները. եւ անոնց թնդանօթներու որոտը՝ անորակելի սարսափի եւ ահարեկումի մատնած՝ Տարօնի համայն թրքութեան լեղապատառ սրտերը... :

Հետեւաբար, աւելորդ քաջքուք է, — չգործածելու համար աւելի ծանր որակում մը, — երբ Կարօ Սասունի կը յայտարարէ. —

ա. — «Կուրտիկի լանջերուն վրայ դիրք գրաւող զինուորները ո՛չ միայն կը կռուէին Սասնոյ ուժերուն դէմ, այլ եւ լեռան բարձունքներէն կը հսկէին քաղաքին» (նոյն, էջ 845) :

բ. — «Հո՛ն, Կուրտիկի վրայ, կռիւ կար, եւ քրքական զօրքը բոլոր անցքերը բռնած էր: Մէկ վայրկեանի մէջ ԿՐՆԱՑԻՆ թնդանօթները դարձնել դէպի լեռները եւ ջրատել ամէն արշաւանք» (նոյն, էջ 902) :

գ. — Վաշտ մը տեղաւորուեցաւ Զորու Թաղը, Միացեալ Ընկերութեան Կեդրոնական Վարժարանի մէջ, որ ԿԸ ՀՍԿԷՐ Ծիրնկատարէն դէպի Մուշ բացուած ձորին» (նոյն, էջ 958) [Բոլոր ընդգրծումները մերն են, Ա. Տ.] :

Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունին, սակայն, ԿԱՏԱՐԵԱԼ գիտակցութեամբ, դիտումնաւոր կերպով, յետին մտքով եւ ննգամբար կ'ընէ այս սուտ ու սխալ, հետեւաբար՝ ՄՈԼՈՐԵՑՆՈՂ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ պարզապէս ցոյց տալու համար, իբրեւ թէ, ԱՅՆ ԱՆՑԱՂԹԵԼԻ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, որոնց պատճառով ալ՝ Սասունարնակ «պարոնները «ԶԿԱՐՈՂԱՑԱՆ» օգնութիւն հասցընել Մուշ քաղաքի հերոսամարտի առիւծասիրտ եւ առիւծամուռնչ ղեկավար Հաջի Յակոբին եւ անոր քաջակորով կորիւններուն... :



ԳԼՈՒԽ ԻԵ.

ՄԵՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ



Երբ «Կիսա-կամարածեւ պաշարում»ի մասին բացատրութիւն կ'ուզէինք յուշագիր Վահան Փափաղեանին՝ մեր երկրորդ նամակով (10 Նոյեմբեր 1954 թուակիր), իրեն կը հարցնէինք. —

«Ի՞նչ ըսել կ'ուզէք այդ նախադասութեամբ: Արդեօք Ռուբէնի յիշած «Ճրտտոնայ»ի պատմութեան նման բան մ'ըն ալ՝ այս նախադասութեամբ կ'ուզէք յայտնել. նաեւ Սասունցի Մուշեղի սխալաշատ, ի՞նչ կ'ըսեմ, ամբողջովին սխալ յուշերը:

«Հո՛ս, իբր թէ, — ըստ Սասունցի Մուշեղի պատմածին, — «Ռուբէն գլուխ անցաւ Փեթարայ Մանուկի, Գելիէգուղանցի Յովսէփի... խումբերուն եւ շարժուեցաւ դէպի Մուշ: Սումբերը, շարք մը կռիւներէ վերջ (որո՞ւ հետ), յաջողեցան հասնել մինչեւ Կուրտիկ լեռան Արծուի Քարը, անկից մինչեւ Մուշեղաբերդը, սակայն անկարելի կ'ըլլայ Մուշ հասնել: Պաշարումը ա՛յնքան խիստ է, զօրքերն ու աշիրէթները այնքան խիտ շարքերով բռնած են դաշտը, որ Ռուբէն կը ստիպուի վերադառնալ Սասուն»:

«Այս տողերուն ո՛չ միայն բռները, այլե՛ւ ստորակէտերն ու վերջակէտերը սխալ են, բացարձակ սխալ, եթէ ոչ՝ ՍՈՒՏ»:

Յուշագիր Վահան Փափաղեանին՝ մեր գրած ամենավերջին խիստ ընդարձակ նամակով ալ (1 Մարտ 1955 թուակիր), բացատրութիւն տուած էինք 12 տարբեր կէտերու մասին, եօթներորդ կէտն ըլլալով այս «Կիսա-կամարածեւ պաշարում»ը, որուն՝ մեր տուած մեկնութիւնը կը պատշաճի նաեւ Ռուբէնի «Ճրտտոնայ»ին, Սասունցի Մուշեղի եւ Կարօ Սասունի լորձնաշուրթն թութակաբանութեանց:

Այս էր ահա մեր մեկնութիւնը. —

«Այդ կողմերը, — այսինքն, Առաքելոց Վանքի եւ Աստղբերդի(1) լեռնալանջերէն սկսեալ մինչեւ Ծիրնկատար, անկէ ալ մինչեւ»

(1) Աստղբերդի համար, «Ճրտտոնայ»ի հեղինակ Ռուբէն հետեւեալ վկայութիւնը կուտայ. — «Իսկ Աստղկայ բերդը չէզոք էր կանգնած» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 78), այսինքն, այդ շրջանը ո՛չ «ամբացուած» էր եւ ո՛չ ալ՝ «հսկողութեամբ տակ առնուած» քրքական ուժերու կողմէ:

Կուրտիկ լեռը եւ Փեթարայ ճամբաները, որեւէ թուրք կամ քուրդ զինուոր չէ ԵՂԱԾ՝ քաղաքի անմիջական շրջապատի բլուրներու վրայ գետեղուած չարս քնդանօթներէն եւ հազարէն հազար հինգ հարիւր զինուորներէն զատ: Անանկ որ բացարձակապէս ԱՆՊԱՐ-ԿԵՇՏ ՍՈՒՏ է յայտարարել թէ այդ լեռնալանջերը պաշարուած էին թուրք եւ քուրդ զինուորներով եւ խուժանով: Նոյնիսկ «մարդահասակ խորութեամբ խրամներ» եւ «երկաթէ թելեր» դետեղուած են եղեր, ըստ «Ճրուտոնայ»ի հեղինակին (Ռուբէն) սուտ ու փուտ պատմութեան, որովհետեւ՝ բոլորիդ ըսածին համաձայն, եթէ այդ լեռները զինուորներով բռնուած ըլլային, որ առնուազն 50,000-էն մինչեւ 100,000 զինուորներու ներկայութիւն կ'ենթադրէ, մեր մէկ յուշագիրը ԱՆԿԱՐՈՂ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ, իրեն ընկերացոյ Խօթանասուն հոգինոց խումբին հետ, Յունիս 30-ի դիշերը, այդ լեռնալանջերէն վեր փախչիլ դէպի Սասուն, ԱՌԱՆՑ ՄԷԿ ՀԱՏԻԿ քուրք կամ քուրդ զինուորի հանդիպելու:

«Արդարեւ, ան կը պատմէ թէ երբ Հաջի Յակոբի հրամանով, յայտնի եղաւ որ ամէն ոք պէտք է իր փախուստի մասին մտածէ, այդ Խօթանասուն հոգինոց խումբը կը բռնէ Կրէ Կամուրջի ձորին ճամբան եւ ամբողջ դիշեր ճամբորդելով, արշալոյսին՝ կը հասնի Կուրտիկ լեռան դադաթը, ուր, առաջին անգամ ըլլալով, ԿԸ ՀԱՆԴԻՊԻ հայ պահակներու:

«Ըստ մեր յուշագիրի հաւաստումին, ամբողջ ճամբորդութեան ընթացքին, բացի քաղաքին ԱՆՄԻՋԱՊԷՍ ԿԻՑ Փոթկանց արտերու բարձունքներուն վրայ Կանուոյ զինուորներէն, ո՛չ մէկ քուրք կամ քուրդ զինուորի ՀԱՆԴԻՊԱԾ ՉԵՆ այդ Խօթանասուն անձերը՝ մինչեւ Սասուն(2):

«Ո՛ւր են, հապա, մարդահասակ խորութեամբ խրամները», «երկաթէ թելերը» եւ «խրամներու մէջ վխտացող» թուրք զինուորները:

«Ասիկա՛ ալ, նոյնպէս, «աղաւաղում» մըն է պատմութեան, քանի որ կը հերքէ «Ճրուտոնայ»ի առասպելը, կա՛մ «Կիսա-կամարածեւ պաշարում»ի հեքիաթը, չէ՞»:

(2) Այս վկայութեան լրիւ պատմութիւնը կարդալ այս ուսումնասիրութեան իջ. Գլուխին մէջ:

ԳԼՈՒԽ ԻԶ.
ՄՈՒԾ ՔԱՂԱՔԻ
ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Հո՛ւս, միջանկեալ կերպով, անհրաժեշտ եւ խիստ հրահանգիչ կը նկատենք մեր ազնիւ ընթերցողներուն ներկայացնել 1915 Յունիս 30-ին, Երեջարթի երեկոյեան, Մուշ քաղաքի մէջ, դոյութեան գերադոյն պայքարով տուալտող՝ Տարօնցի քաջակորով մարտիկներու Զինուորական Խորհուրդին կատարած ամենավերջին խորհրդակցութիւնը, փոխանակած կարծիքները եւ տուած որոշումը:

Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բոլէեան, խիստ հետաքրքրական մանրամասնութիւններով, որոնք յատկանշական առաւելութեամբ մը կ'օժտեն իր ստուգապատում եւ թանկարժէք յուշերը, կը նկարագրէ այս վերջին խորհրդակցական ժողովը:

Ուշադրութեամբ մտիկ ընենք իրեն.—

«Այլեւս մութը կոխած ըլլալով, թնդանօթներու որոտը եւ հրացաններու ձայները կանդ առին: Մեր համեստ ուժերով՝ ի վիճակի չենք գիշերային յարձակումներ գործելու եւ ահաբեկելու վատ թշնամին, որով մենք ալ, պարտաւորուած, զէնքերնիս վար կը դրնենք եւ իր (Հաջի Յակոբի) դիրքէն մեր տունը կը վերադառնանք, իր գլուխը կապուած վիճակին մէջ(1):

«Ովքելից ըմպելիք գործածելու սովորութիւն չունէր բնաւ, հրայց, — ըսաւ, — շատ յոգնած եմ», եւ երկու գաւաթ քոնիաք խմեց:

«Առանձին էինք:

«Մեր խօսակցութեան նիւթը՝ վազուամ գիմադրութիւնն էր:

«Հաջին ուխտած էր շարունակել կռիւր մինչեւ վերջ, խնդիր էր թէ բաւական պատռոն ունէի՞նք: Այս երկու օրուան ընթացքին, բաւական պատռոն գործածուեցաւ, ի՞նչքան ալ ունէինք դեռ պահեստի, չէինք դիտեր:

(1) Յունիս 30-ին, Երեջարթի, կէսօրի ատենները, Հաջի Յակոբ քեթեւ կերպով վիրաւորուած էր գլուխէն եւ կը նեղուէր դժուարաշնչութեան:

«Որոշուեցաւ դիրքերէն հրաւիրել խմբապետները եւ անոնց հետ խորհրդակցել վաղուան ընելիքի մասին եւ ստուգել պահեստի պատուոնի քանակը:



ՅԱԿՈՒՔ ՏԵՐ ԶԱՔԱՐԵԱՆ

Մշոյ քաղաքի Քաղ. Ժողովի ամենավերջին Ատենապետ՝ եւ ինքնապաշտպանութեան զեկավարներէն մէկը:

«Այս խորհրդակցութեան ներկայ էին.—

- «1.— Արօ Շահրիկեան,
- «2.— Արմենակ Մարտէեան,
- «3.— Աշոտ Փոթիկեան,
- «4.— Տիգրան Լոլոյեան,
- «5.— Յակոբ Տէր Զաքարեան,
- «6.— Ալեքսան Գուրոյեան,
- «7.— Նազար Կորնչոյեան,
- «8.— Սամուէլ Սպանդարեան,
- «9.— Լեւոն Ասլանեան,
- «10.— Սարգիս Անդրէասեան:

«Հաջին նախ կը հրամայէ որ դիրքերու մէջ ԽԻՍՏ ՀՍԿՈՂՈՒԹԻԻՆ ԿԱՏԱՐՈՒԻ, որպէսզի չըլլայ թէ թշնամի մը որեւէ գծի վնաս պատճառէ՝ տուններ վառելով կամ ուրիշ կերպով:

«Յետոյ, Հաջին հարց կուտայ.

«— Ի՞նչ պիտի ըլլայ վաղուան մեր ընելիքը, մեր ուժերը ո՞ր գծի վրայ աւելի կեդրոնացնենք: Հիմակունէ՛ յայտնեցէք ձեր թելադրութիւնները, որպէսզի ըստ այնմ ընենք մեր կարգադրութիւնները՝ գիշերուան ընթացքին:

«Տղաք, բոլորն ալ, միահամուռ կը պատասխանեն.

«— Կռիւի յարմար դիրքեր որոշելու խնդիրը ձեզի կը պատկանի. դուք աւելի փորձառու եւ կարող էք. ո՛ր որ ցայց տաք, մենք հո՛ն կ'երթանք ու կը կուտինք:

«Հաջին կը հարցնէ.

«— Ձեր տրամադրութեան տակ պատրաստ ո՞րքան պատուոն ունիք՝ ձեր զինուորներուն բաշխելու համար:

«— Ինչ որ Բղէեաննց տունէն մեզի բաշխուած էր, գրեթէ ամբողջութեամբ գործածուած է եւ շատ մը տղոց քով հազիւ թէ 5-10 պատուոն մնացեր է:

«Հաջին հրաման կ'ընէ որ պատուոններու տոպրակները բացւին ու համրուին: Կը տեսնուի որ վեց հազար պատուոն մնացեր է միայն: Ըսել է թէ երկու օրուան մէջ, պատրաստ եղած երեսուն հազար պատուոնէն՝ քսան եւ չորս հազար հատ սպառու է, միջին հաշուով՝ վաթսուն կողոզներէն (անհատապէս իրենց անձնական զէնք ունեցողներէն զատ) իւրաքանչիւրը՝ օրական երկու հարիւր պատուոն սպառած է, ու հիմա՝ պատրաստ եղած քանակը վեց հազար պատուոն է միայն, որ մէկ օրուան կռիւի համար՝ իւրաքանչիւր զինուորին՝ հարիւր հատ կ'իյնայ, մինչդեռ առաջին երկու օրերուն՝ երկու հարիւրական պատուոն գործածուած էր:

«Այս քանակը ստուգելէն ետք, Հաջի Յակոբ հարց կուտայ.

«— Այլեւս ուրիշ տեղ պահեստ չունի՞ք:

«— Եթէ ունենայինք, ա՛լ ո՞ր օրուան համար պիտի պահէինք: Ինչ որ ունինք, մէջտեղն է: Թէեւ կառավարութեան անձնատուր եղող հայերու տուններուն մէջ կարելի է քիչ մը աւելի գտնուի, բայց քանի որ այդ մարդիկը մէջտեղ չկան, անոնց վրայ յոյս դնել աւելորդ է:

«Այն ատեն, Հաջին հարց կուտայ.

«— Այս պատուոնի քանակով, մենք վաղը մինչեւ կէսօր պիտի կրնանք դիմադրել, անկէ յետոյ ի՞նչ պիտի ընէք, երբ պատուոնը հատնի:

«— Մեզմէ ամէն մէկին քով տասնական պատուոն պահեստի

ունենանք եւ դժի մը վրայ յարձակում գործենք, ով որ ողջ մնայ եւ կրնայ ազատիլ, քո՛ղ Սասուն բարձրամայ եւ միանայ այնտեղի ընկերներուն [Ա.] :

«Հաջի Յակոբ .

«— Ըսել է թէ ա՛յդ է ձեր կարծիքը, ու Դեմ ԴՈՒՔ ՍԱՍՈՒՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆ ԱԼ ԿԸ ՅԻՇԷՔ . ա՛յն ընկերներուն, որոնք երկու օրէ ի վեր ԿԸ ԼՍԵՆ գոռացոյ թնդանօթներու որոտը, որ թերեւս Բուլանը (Կոփ) հասեր է եւ ոռւս բանակը իմացեր է (տասն եւ հինգ ժամուան հեռաւորութիւն մեղմէ), եւ այդ Շենիկ-Սեմալ գտնուողները ԳԻՏԵՆ որ քուրքերը ուղղակի յարձակեալ են մեր վըրայ եւ կը տեսնեն որ կնոջ պէս չէ որ կը մեռնինք, մանաւանդ գիտեն որ քաղաքի մէջ մնացող Հաջին եւ իր (ձեզ նման) քաջարի ընկերները՝ իրենց արիւնը անանկ աժան չեն ծախեր թշնամիին : Այսօր բան գիտնալով մէկտեղ, Փափազեան եւ Ռուբէն ԹՈՅԼ ԶԵՆ ՏԱՐ որ մեր ցեղակից, սրտակից Կորիւն, Մջօն մեզ օգնութեան փութան՝ իրենց խումբերով : Եթէ ողջ մնամ եւ զանոնք տեսնեմ, ԱՌԱՋԻՆ ԳՆԿԱԿՍ ԱՆՈՆՑ ԵՐԿՈՒՔԻ ՍՐՏԻՆ ՄԷՁ ՊԻՏԻ ՄԵՆՄ :

«Այն ատեն, տղաքը կը հարցնեն .

«— Հապա ի՞նչ է ձեր կարծիքը :

«— Դուք գիտէք, — կ'ըսէ Հաջին :

«— Քանի որ մեր պատուը վաղուան պիտի չբաւէ, եւ հաստատ համագումար էք որ ԱՅՍ ԳԻՇԵՐ կամ ՎԱՂԸ, ՅԵՐԵԿ ԱՏԵՆ, ՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ԶՀԱՍՆԻՆ ՄԵՁԻ(2), լաւ է որ հիմակուրնէ մը տածենք քաղաքէն դուրս գալու մասին : Ի՛նչ որ ալ ըլլայ, գիշեր ատեն, զօրքերու շրթան պատուը-անցնելով՝ ազատուելու յոյս կայ, իսկ վաղը, կէսօրէն յետոյ, առանց պատուոնի, բոլորս ալ կը փճանանք տեղւոյն վրայ :

«Հաջի Յակոբ .

«— Այո՛, ես ալ ձեզի պէս համոզուած եմ, բայց՝ իրրեւ հին ծառայող մը, ինձի ԹՈՅԼ ԶԵՄ ՏԱՐ այդ տեսակ առաջարկ բերելու [Բ.] : Իմ տարիքը յիտունը կ'անցնի . դուք աւելի երիտասարդ էք, ՁեզՄՈՎ աւելի կը մտաւեցնուիմ, որովհետեւ եթէ ազատիք, նորէն ազգին օգտակար կ'ըլլաք եւ այս արիւնարբու ազգէն մեր վրէժը կը լուծէք :

«Բոլոր տղաքն ալ իրենց հաւանութիւնը կը յայտնեն որ ԱՅԴ

(2) Յուսահատական այս մտաւանդորդ վայրկեանին իսկ՝ դեռ կը սնուցանեն այդ ՍԻՆ ՅՈՅՍՆ ՈՒ ՄԻԱՄԻՏ ՀԱՒԱՏՔԸ՝ Սասունէն գալիք օգնութեան մասին :

ԳԻՇԵՐԻՆ ԻՍԿ, երիտասարդութիւնը դուրս գայ քաղաքէն» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 407-409) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Քաղաքէն փախուստ տալու որոշումը կայանալէն յետոյ, Հաջի Յակոբ կը հրամայէ որ բոլոր զինեալ ու անզէն երիտասարդները, ժամ առաջ, դուրս գան քաղաքէն, մեկնումի մամբաները եւ երթալիք վայրը (Քանայ լեռը) ցոյց տալով անոնց [Գ.] :

Այդ վայրկեանէն սկսեալ, ամէն ոք իր անձի փրկութեամբ միայն մտաւեցնուած էր, ԲԱՅԻ Հաջի Յակոբը, որ ՄՆԱՑ ՔԱՂԱՔ եւ յաջորդ օրը, Յուլիս 1-ին, Չորեքշաբթի առաւօտեան՝ շատ կանուխէն, շարունակեց կոչիւր «միմչեւ վերջին փամփուշտը» (Տեսնել այս ուսումնասիրութեան Գլուխ ԻԲ.), եւ ՀՈՆ ԱԼ ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱԻ՝ դիւցազնի փառապանձ դափնեպսակը մակատին . . . :

Չենք ուզեր, եւ սիրտ ալ չունինք, այլեւս շարունակել այդ վայրկեանէն ետք պատահած սահմակեցուցիչ դէպքերու նկարագրութիւնը թէ ի՛նչ պատահեցաւ քաղաքի ամբողջ քսան հազար հայութեան — այր, կին, տղայ, աղջիկ, երեխայ . . . Ի՛նչպէս եղաւ անոնց բոլորի եղբրական վախճանը . . . Ի՛նչքան դառն եղաւ անոնց բոլորի սե՛ւ ճակատագիրը . . . Ի՛նչքան աղիխարչ . . . Ի՛նչքան սիրտ բզբտող . . . :

* * *

[Ա.] Ինչպէս բացորոշ կերպով կը տեսնուի, քաղաքը լքելու եւ լեռները ապաստանելու որոշումը ՀԵՏԵԻԱՆՔ ԷՐ պատուոնի պակասին . հետեւաբար, բացարձակ սուտ է կարօ Սասունիի այն յայտարարութիւնը թէ «Իիրքերու մեծ մասը խորտակուած էր եւ դիմադրութեան որեւէ ամուր կէտ մնացած չէր» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 906) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Կարօ Սասունիի այս ԱՆՀԻՄՆ ու ԱՆՃԻՇՏ յայտարարութիւնը ինքնին ԿԸ ՀԵՐՔՈՒԻ Հաջի Յակոբի այն հարցումով, զոր ան կ'ուղղէ խորհրդակցութեան մասնակցող խմբապետներուն .

«— Ի՞նչ պիտի ըլլայ ՎԱՂՈՒԱՆ ՄԵՐ ԸՆՆԼԻՔԸ, մեր ուժերը Ո՞ր ԳԾԻ ՎՐԱՅ կեդրոնացնենք, հիմակուրնէ յայտնեցէ՛ք ձեր թելադրութիւնները, որպէսզի ԸՍՏ ԱՅՆՄ ԸՆՆԻՔ մեր ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ գիշերուան ընթացքին» :

Հաջի Յակոբի այս հարցումին՝ բոլոր խմբապետներուն միաձայն տուած պատասխանն ալ, կրկին անգամ, ՀԵՐՔՈՒՄ ՄԸՆ է Կարօ Սասունիի այդ սխալ եւ ֆիլածոյ յայտարարութեան .

«— Կռիւի յարմար դիրքեր սրոշելու խնդիրը ձեզի կը պատկանի... Ո՛ր՛ ո՛ր ՅՈՅՅ ՏԱՔ, մե՞նք ՀՈՆ Կ՛ԵՐԹԱՆՔ ԿԸ ԿՈՌԻԻՆՔ»:

Եթէ, — ըստ «պատմագիր» Կարօ Սասունիի ներկայացուցածին, — «Դիրքերու մեծ մասը խորտակուած ըլլար եւ «դիմադրութեան որեւէ յարմար կէտ մնացած չըլլար», ո՛չ Հաջի Յակոբ եւ ո՛չ ալ իր խմբապետները այդ տեսակ հարց ու պատասխանի պէտք պիտի ունենային...:

* * *

[Բ.] Ո՛րքան բախտաւոր պիտի ըլլար Տարօնի եւ Սասնոյ հայութիւնը, եթէ Սասունաբնակ երկու «պարոն»ներն ալ ունենային, փշրանք մը գոնէ, Հաջի Յակոբի այս յայժմ նախանձի պատուախնդրութեանէն...:

* * *

[Գ.] Տարօնի աւագ յուշագիր Միսակ Բդէեան, որ ամէն վայրկեան՝ Հաջի Յակոբի հետ եղած է այս երկօրեայ հերոսամարտի ընթացքին, շատ հարազատօրէն եւ նշգրիտ կերպով կը ներկայացնէ Հաջի Յակոբի ջերմ փափաքը եւ կամքը՝ զինեալ ու անզէն երիտասարդներու շուտափայթ մեկնումի մասին, հետեւաբար՝ անհիմն ենթադրութիւն է Կարօ Սասունիի այն յայտարարութիւնը թէ «ԸՍՏ ԵՐԵՒՅԹԻՆ, Հաջին համամիտ գտնուած էր միւս մարտիկներու մեկնումին, նոյն իսկ անգէն երիտասարդութեան եւ պատանիներու փախուստին, փոքր յոյսով մը թէ անոնցմէ ոմանք կրնան փրկուիլ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 906) [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.]:

Տարօնցի պատանի յուշագիր Երուանդ Շարաֆեան եւս, որ նոյնպէս Բդէեանենց տունը կը գտնուէր եւ լսած՝ Հաջի Յակոբի բացատրական տեղեկութիւններն ու փափաքը՝ երիտասարդներու շուտափոյթ մեկնումի մասին, հետեւեալ կերպով կը ներկայացնէ Հաջի Յակոբի բաղձանքն ու թելադրութիւնները.—


«Տղա՛ք, իմ սիրելիներս, ես շատ լաւ գիտեմ եւ կատարելապէս վստահ եմ որ դուք, բոլորդ ալ, հիանալի կռուողներ էք, քաջ ու անձնազոհ: Մեր դիրքերը յարմար են եւ կրնանք երկար ատեն դէմ դնել անարդ թշնամիին թնդանօթներուն, բայց մեր ունեցած փամփուշտը սպառելու վրայ է, իւրաքանչիւրի քով հազիւ 15-20 փամ-

փուշտ կայ: Եթէ վաղն ալ շարունակենք կռուը, հազիւ թէ մինչեւ կէսօր պիտի կրնանք դիմադրել: Անկէ յետոյ ի՞նչ պիտի ընենք առանց փամփուշտի: Անձնատո՞ւր պիտի ըլլանք. ատիկա մեզի վայել գործ չէ: Սասունէն ակնկալուած օգնութիւնը չեկաւ մեզի. անոնք յուսախար ըրին բոլորիս:

«Այս պայմաններուն մէջ, անկարելի է շարունակել դիմադրութիւնը, ուրեմն կ'արտօնեմ զձեզ որ ձեր փրկութեան մասին խորհիք հիմակուրնէ սկսեալ: Ձեր քով գտնուած այդ 15-20 փամփուշտները գործածեցէք ձեր փրկութեան համար:

«Փախուստի երկու ճամբաներ ցոյց կուտամ ձեզի: Առաջինը՝ գետակի միջով դէպի վար, Տաշոյենց Կամուրջը եւ անկէ ալ՝ դաշտի ճանապարհով դէպի Քան լեռը: Երկրորդը՝ գետակի միջով դէպի վեր, Կրէ Կամուրջը եւ անկէ ալ՝ Սասուն:

«Ասոնք են ձեր փրկութեան երկու ճամբաները» («Երուանդ Շարաֆեան Կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 32):



ԳԼՈՒԽ ԻԷ.

ԵՐՈՒԱՆԴ ԾԱՐԱՓԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Քաղաքէն փախուստ տուողներուն մէջ կը գտնուէր նաև Վերին Թաղեցի պատանի մը, Երուանդ Շարաֆեան, 14 տարեկան, Շարաֆեան հանրաժանօթ գերդաստանի արժանաւոր շտաբիչը, որ



ՏԵՐ ԵՂԻՇԷ ՔԷՆՑ. ՏԵՐ ՊԱՐՍԱՄԵԱՆ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ ԾԱՐԱՓԵԱՆ

զրի առնել տուած է իր յուշերը՝ խիստ կարեւոր եւ ստուգապատում վաւերագիր մը՝ վերակառուցանելու համար Տարօնի Յշմարիտ եւ անխարդախ պատմութիւնը՝ ամէն տեսակ խաթարիչ փորձերու դէմ, որոնք ի գործ կը դրուին արհեստով խեղաթիւրիչներու կողմէ, ի-

րենց մեղապարտ եւ յանցագործ «պարոն»ները սրբացնելու անսուրբ նպատակով...

Տեսնենք թէ յուշապատում Երուանդ Շարաֆեան ինչպէս կը ներկայացնէ քաղաքէն իր փախուստը դէպի Սասուն՝ եօթանասուն հոգինոց խումբի մը հետ, եւ ի՞նչպէս կը նկարագրէ իր ճամբորդութիւնը այն միեւնոյն կուրտիկ լեռան լանջերէն եւ բարձունքներէն վեր, ուր, ըստ Վահան Փափաղեանի, Ռուբէնի, Սասունցի Մուշեղի եւ Կարօ Սասունիի պատումներուն, թրջական զօրքերը եւ թրջօքուրդ չեթէական ուժերը, իրրեւ թէ, ողողած էին այդ լեռնալանջերն ու ձորահովիտները՝ ՄԻՆՉԵԻ ՆՈՅՆԻՍԿ ԱՅԳ ՆՈՅՆ ԳԻՇԵՐՆ ԱԼ, սակայն, զարմանալի՛ հրաշքով մը, ԱՆՆԵՐԵԻՈՅԹ ու ԱՆՏԵՍԱՆՆԵԼԻ ԴԱՐՁԱԾ քաղաքէն փախուստ տուող այս եօթանասուն հոգինոց խումբի աչքերուն...

Ուշադրութեամբ մտիկ ընենք իրեն.—

«Ես ալ Բդէեանենց տունը կը գտնուէի այդ ատեն, երբ այլևս յայտնի եղաւ որ ամէն մարդ իր գլուխի ճարը կը նայէր: Ոոյս տուողներու մեծագոյն մասը բռնեց Հաջի Յակոբի ցոյց տուած առաջին ճամբան, եւ գետն ի վար, ջուրի հոսանքին հետ սահելով եւ Սուրբ Մարինէ Թաղին մէջէն անցնելէն յետոյ, պիտի կտրէր—անցնէր նաև թրջարնակ թաղերը՝ Տաշոյի կամուրջը հասնելու համար:

«Այս ճամբով փախչողները, գրեթէ մեծամասնութեամբ, անվնաս հասեր են Քանայ լեռը՝ շնորհիւ Քոթանենց մեծ գերդաստանի ցոյց տուած դիւրութեան եւ օժանդակութեան:

«Այս Քոթանենց գերդաստանի (Պապիլէ) նահապետն էր հայասէր Ճաֆար աղան, եւ 1895-ի կոտորածին՝ նոյն մարդը եւ նոյն գերդաստանը պտտճառ դարձեր էին որ Մուշի մէջ ջարդ չպատահէր:

«Նոյն բանն ըրին նաև 1915-ի այս ողբերգական օրերուն: Երբ մեծ թիւով հայեր կ'անցնէին անոնց պատուհաններու առջևէն, անոնք կը պոռային.

«— Մի՛ վախնաք, չենք կրակեր ձեր վրայ, անցէ՛ք:

«Այդպիսով, այս ճամբայով փախուստ տուող բազմաթիւ երիտասարդներ անվնաս անցան գացին Քան լեռը, անկէ ալ՝ Սասուն:

«Փախչողներէն ոմանք ալ, որոնց մէջ կը գտնուէի ես ալ, Բդէեանենց տունի առջև՝ ինքզինքնիս նետեցինք Մուշի դետակին մէջ՝ բռնելով Հաջի Յակոբի ցոյց տուած երկրորդ ճամբան, եւ ուղղուեցանք դէպի Կրէ Կամուրջի կողմը, գետի հոսանքն ի վեր, դէպի Սասուն:

«Իսկ փախչողներէն ուրիշ մաս մըն ալ բարձրացեր է Սուրբ Մարինէի Կողի թաղամասի հայոց գերեզմանոցէն վեր, եւ կտրելով

թրջական զինուորներու շղթան, անցեր է Մոկուեք գիւղի կողմը եւ անկէ ալ՝ կա՛մ Հաւատորիկ գիւղը եւ կա՛մ Քանայ լեռը(1) :

«... Ինչպէս վերը յիշուեցաւ, մեր խումբը բռնեց Կրէ Կամուրջի ուղղութիւնը, գետի հոսանքն ի վեր : Դեռ կամուրջը չհասած, նշմարուեցանք թուրք զինուորներէն, որոնք տեղաւորուած էին Փոթկանց տուներու մէջ կամ Փոթկանց արտերու բարձունքներու վրայ, եւ այդ բարձունքներէն՝ անոնք սկսան հրացանի եւ գնդացիքի գնդակներ տեղացնել մեր վրայ :

«Մեզ հետ փախչողներէն հարիւրաւոր անձեր սպաննուելով՝ զետամոյն եղան :

«Այլեւս անհնար էր, կարծես, այդ գծով փախչիլ : Հետեւաբար, փոխեցինք մեր ճամբան, բարձրացանք ջաղացներու առունները եւ փորերնուս վրայ սողալով՝ յաջողեցանք հասնիլ Աւզընոցայ ձիւղ(2) կոչուած վայրը, հեռու թուրք զինուորներու տեսողութենէն եւ անոնց մահաբեր գնդակներու հասողութենէն :

«Հիմա, մեր խումբը կը բաղկանար եօթանասուն անձերէ, որոնցմէ միայն վեց կամ եօթը անձեր զինուած էին : Ղեկավարներն էին Մշեցի յայտնի կոռուղ Սամուէլ Սպանդարեան եւ իր ընկերը, վրացի Ալեքսանը :

«Մեր այս խումբին մէջ ամենէն պզտիկը ես էի, հազիւ տասն- եւ չորս տարեկան :

(1) Այս նամբայով փախեր են նաեւ մեր Տարօնցի միւս յուշագիրներէն Միսակ Բդէեան եւ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսաւեան, եւ հաւանաբար նաեւ Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զափաբեան եւ պատանի Մուշեղ Դուռնեան :

(2) Այս Աւզընոցայ ձիւղ կոչուած վայրը այն խորունկ ձորա- հովիտն է, ուր իրարու կը միանան Արջգլուրի, Կուրտիկի եւ Միրնկատարի լանջերէն հոսող վտակները՝ կազմելով Մշոյ գետակը, եւ ուր, ըստ Թուրքի «Ֆըռտոնայ»ի պատմութեան, իբրեւ թէ, իջեր է քաղաքին «օգնութեան փութացող» Սասունցիներու արշաւախումբը, եւ հո՛ն ալ, իբրեւ թէ, ենթարկուեր «քրքական դիրքերի կրակին», որուն պատճառով ալ՝ «հարկադրուեր է» եղեր «նահանջելու» դէպի Սասուն՝ իրեն հետ «գերի» բերելով «Տափէի ամբողջ ժողովաւորը» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 81) :

«Շարունակեցինք մեր ճամբան դէպի Սասուն, Կուրտիկ լեռան լանջերն ի վեր : Առաւօտեան մթնշաղին, հանդիպեցանք Սասունցի պահակներուն՝ Շենիկ եւ Սեմալ գիւղերու վերեւ : Ասոնք, կարծես, որեւէ տեղեկութիւն չունէին քաղաքի կռիւի մասին :

«Քիչ մը նստանք՝ հանգչելու համար : Արեւը ծագեցաւ եւ մեր թրջած հազուստները սկսան չորնալ :

«Սեմալ գիւղէն դուրս, տափարակ դաշտագետնի մը մէջ, քանի մը հարիւր հոգի զինավարժութիւն կ'ընէին. ասոնք՝ Ռուբէնի եւ Վահան Փափազեանի զինուորներն էին :

«Երբ որ մեզ տեսան այս վիճակին մէջ, դարմացան եւ սկսան լալ : Անոնք կու լային, մենք կու լայինք : Մեր յուսահատական երեւոյթէն, անոնք կրցան դուշակել թէ ինչ պատահած է թէ՛ մեզի եւ թէ՛ քաղաքին... :

«Ամէն ոք՝ իր ընտանիքի, իր ազգականներու, բարեկամներու մասին տեղեկութիւն կ'ուզէր մեզմէ, բայց ո՞վ կրնար ճշգրիտ տեղեկութիւններ տալ քաղաքի մէջ մնացողներու կամ միւս փախչողներու մասին :

«Հօրեղբորս որդին՝ Գզտիկ Արամ Յակոբեանն ալ հոն էր. երբ զիս տեսաւ այս վիճակի մէջ, դրկեց, համբուրեց եւ սկսաւ լալ : Յետոյ տարաւ տուն մը, ուր չորցուցի հազուստներս :

«Հոն տեսայ Կորիւնը, Գուէի Մջօն, իր եղբայրները Արշակն ու Գօղոսը :

«Կէսօրէն ետք, Արամ եկաւ, նորէն համբուրեց զիս եւ Կորիւնի ու Մջոյի խնամքին յանձնելով՝ մեկնեցաւ, ըսելով թէ Վահան Փափազեանի հետ տեղ մը պիտի երթար եւ շուտով պիտի վերադառնար :

«Վերջէն իմացայ որ Վահան Փափազեան, տասնեւհինգ լաւ զինուած, հին եւ փորձառու հայրուկներով՝ անցեր է Քանայ լեռը, ուր մնաց մինչեւ որ իր խումբով՝ անցաւ Կովկաս» («Երուանդ Շարաֆեան Կը Պատմէ Տարօնի Եղեռներ», էջք 33-36) :

Երուանդ Շարաֆեանի այս ակնատեսի վկայութիւնը ԽԻՍՏ ԲԱՑԱՑԱՑ Կ'ԸՆԾԱՑԷ որ իրեն ընկերացող եօթանասուն հոգինոց խումբը, ամբողջ գիշերուան ընթացքին, մագլցելով ձի՛ՇՏ ու ձի՛ՇՏ ԱՅՆ ՄԻԵԻՆՈՅՆ ՃԱՄԲԱՆԵՐԷՆ, ԶՈՐԵՐԷՆ եւ ԼԵՈՒԱԼԱՆՁԵՐԷՆ ՎԵՐ՝ դէպի Կուրտիկ լեռան բարձունքները, որտեղերէն իրբեւ թէ ՎԱՐ ԻՋԱՄ ԷԻՆ Սասունցի «արշաւող»ներու խումբերը՝ առաջնորդութեամբ Սեմալցի «Քիւթիւլ» Մանուկ Շառոյեանի (ըստ Ռուբէնի «Ֆըռտոնայ»ի պատմութիւն), եւ կա՛մ՝ ղեկավարութեամբ Ռուբէնի

(ըստ Սասունցի Մուշեղի պատումին)(3), եւ ո՛չ թէ միայն Մէկ ՀԱՏԻԿ թուրք զինուորի Ձէ ՀԱՆԴԻՊԱԾ, ա՛յլ նոյնիսկ՝ Ո՛ջ ՌՔԻ — զինուոր կամ հասարակ անհատ՝ հայ, թուրք կամ քուրդ:

Կարելի կամ հնարաւոր է, արդեօք, ԱՅՍ ՏԵՍԱԿ ԱՄԱՅՈՒԹԻԻՆ ԱԿՆԿԱԼԵԼ այդ լեռնալանջերու վրայ կա՛մ ձորահովիտներու մէջ՝ Սասունարձակ հայկական ուժերու «արշաւանք»էն ԴԵՌ ՆՈՅՆ-ԻՍԿ ՔՍԱՆԵՒԶՈՐՍ ԺԱՄ ԶԱՆՑԱԾ, եթէ լուրջ կամ միշտ ընդունիմք Ռուբէնի նկարագրած «ՄԱՐԴԱՀԱՍԱԿ ԽՐԱՄՆԵՐ»ու, «ԶՈՅԳ ԳՕ-ՏԻ»ներու եւ «ԵՐԿԱԹԷ ԹԵԼԵՐ»ու գոյութիւնը, եւ անոնց մէջ ալ «վխտացոյ» թուրք զինուորներու ներկայութիւնը...:



(3) Կարօ Սասունի տարբեր ճամբայով «ԿԸ ՇԱՐԺԵՑՆԷ» այդ երկու խումբերը: Մէկը, «Դաշտէն եկող մարտիկներ»ու խումբը, Ռուբէնի ղեկավարութեամբ, իսկ միւսը, «Սասունցի ուժերը», Սեմայցի Մանուկ Շառոյեանի (Փեթարցի Մանուկը չհասկնամ՝ «քոփալ» մականուանեալ) եւ այլ Սասունցի խմբապետներու առաջնորդութեամբ, որոնք, սակայն, «փախստական Մշեցիներու» կը համդիպին շուտով, «Մշոյ Չորին վերին բարձունքներուն վրայ, Միրընկատարի մօտերը» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 968) [Բնլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը .

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԹԱԼԸ «ԴԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆ» Է ԵՂԵՐ



Երուանդ Շարաֆեանի այս խիստ վաւերական եւ յոյժ արժանահաւատ ականատեսի վկայութենէն զատ, տա՛նք նայել վկայութիւնը այն «լաւ զինուած, հին եւ փորձառու հայդուկներուն» («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 36), զորս Կարօ Սասունի կը կոչէ «չուրսէն եկած մարտիկներ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 968), եւ որոնց մէկ մասը՝ Վահան Փափազեանի հետ, Սասունէն մեկնեցաւ Հաւատորիկ գիւղը եւ Քանայ լեռը, ընկերակցութեամբ Պարտիկ Արամ Յակոբեանի, միշտ ու միշտ այն միեւնոյն օրը, Յուլիս մէկին, Չորեքշաբթի առաւօտեան, երբ քաղաքէն փախուստ տուող այդ եօթանասուն հոգիւնց խումբը դեռ նոր էր ժամաներ Սեմալ գիւղը:

Վահան Փափազեանի այս սպառազէն խումբը գացեր է Հաւատորիկ գիւղացիներու ամարանոց վրանները, որոնք «տասը վայրկեան հեռու» կը գտնուէին Հաւատորիկ գիւղէն, Մովսսար լեռան կանաչաւէտ լանջերու վրայ («Միսակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 418):

Այդ նոյն օրուան առաւօտեան արշալոյսին ալ, Հաւատորիկ գիւղը ապաստաներ էր Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեանի եւս, խիստ յոգնատանջ փախուստէ եւ տառապալից ճամբորդութենէ մը ետք:

Հաւատորիկ զուտ հայաբնակ գիւղ մըն էր՝ ծուարած Մովսսար լեռան արեւելեան լանջերուն վրայ, բարձրահայեաց դիրքով, ուրկէ վար կը տարածուէր Մշոյ ընդարձակ, գեղեցիկ եւ խիստ բարեբեր դաշտը, այժմ համայնական գերեզման դարձած իր դարաւոր եւ հարազատ զաւակներու մոխրացած անիւններուն...:

Բարեբախտաբար, Հաւատորիկ գիւղի հայութիւնը դեռ գերծ էր մնացած հայաջինջ մոլորիկ կլափէն, աւելի յետոյ սակայն՝ դիւրաւ կեր դառնալու համար քրդական նենգ «բարեկամութեան» դաւերուն:

Հիմա, կրկին անգամ, պատեհութիւն տանք Տարօնցի աւագ յուշադիր Միսակ Բղէկանին, որ մեզի պատմէ՝ ինչ որ իրեն հաղորդեր են Վահան Փափաղեանի հետ, Սասունէն՝ Հաւատորիկ գիւղը ժամանող հայդուկները, այս «օղնութեան» խնդրոյն առնչութեամբ:



ԿՈՐԻԻՆ

Ուշադրութեամբ մտիկ ընենք իրեն.—

«Յուլիս չորսին, կ'իմանամ որ Վահան Փափաղեան, քառասուն զինեալ տղաներով, Սասունէն եկած է եւ կը գտնուի մեր ընտանեկան վայրէն տասը վայրկեան հեռու:

«Կը փութանք հոն:

«Բոլորն ալ մեզի ծանօթ քաղաքացի եւ դաշտեցի հայ երիտասարդներ են: Կը համբուրուինք: Գոհ կ'երեւին մեր այս քանի մը անձերու ողջ մնալէն: Թերեւս Փափաղեան գոհ չմնաց:

«Բոլոր ծանօթ զինեալ տղանքն ալ բարոյապէս կ'ապտակեմ թէ չիմչո՞ւ մեզի օգնութեան չփութացիք: Երբ Սասունէն մինչեւ հոս, ԱՌԱՆՑ քշնամի ԶՕՐՔԵՐՈՒ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ՝ ԿՐՑԱԾ ԷՔ ԳԱԼ, միթէ դժուար պիտի ըլլար, մեզի օգնութեան փութալով՝ դալ, թշնամիին վրայ յարձակիլ եւ անոնց թնդանօթները գրաւել:»

«Բոլորին ալ պատասխանը միեւնոյնն էր.—

«— Այո՛, տղաքը մեծամասնութեամբ կ'ը ֓ԱՓԱՔԷԻՆ ՕԳՆՈՒ—



ՄՋՕ (ՄԿՐՏԻՉ ՊՈԼԷԱՆ)

ԹԵԱՆ ՓՈՒԹԱԼ: Մեզ համոզած էին թէ դաշտի գիւղերուն եւ քաղաքի վրայ յարձակում պիտի չըլլայ, սակայն երբ քաղաքի վրայ արձակուած ԹԵԴԱՆՕԹՆԵՐՈՒ ԶԱՅՆԵՐԸ ԼՍԵՑԻՆՔ, ԿՈՐԻՆ, ՄՂՕՆ, Սեմալայ Մանուկ Շառոյեանը ըսին որ ՊԵՏՔ է քաղաքին օգնութեան ՓՈՒԹԱՆՔ: Բոլորս ալ համամիտ գտնուելով, ՀԱԶԱՐԷՆ ԱԻՆԼԻ քաղաքացի եւ դաշտեցի զինեալ երիտասարդներ՝ կազմ ու պարաստ էինք յառաջանալու, բայց Փափաղեան եւ Ռուբէն ԴԷՄ ԿԵՑԱՆ, ըսելով թէ՛

«— Դուք ջլատել կ'ուզէք այստեղի ուժերը: Դալուորիկի ճակատին վրայ արդէն կռիւի մէջ ենք(1) եթէ այսքան զինեալ տղաք ալ

(1) Կ'ակնարկուի քրդական այն պարբերական յարձակումներուն, որոնց մասին խօսած ենք ասկէ առաջ:

Հո՛ն երթաք, այն ժամանակ ուժերնիս երեք մասի բաժնուելով, ա՛լ աւելի վտանգաւոր դուրսեան կը մտնուիմք: ՄԵՆՔ ՀԱՄԱԶԱՅՆ ԶԵՆՔ ԶԵՐ ԵՐԹԱԼՈՒՆ: Զեր այդ քայլը պատասխանատուութեան լուրջ խնդիր կը յարուցանէ, քանի որ մենք նախապէս որոշած ենք միմիայն Սասունը պաշտպանել, ըստ այնմ ա՛լ պէտք է որ այդ որոշումը դործադրուի մինչեւ վերջ, եւ ով որ փափաքի, — մեր այս միութիւնը քանդելու դիմով — յառաջ շարժիլ, ԴԱԻԱՃԱՆ ՀԱՄԱՐՈՒ ԵՆԵԼՈՎ, մեծ պատասխանատուութեան պիտի ենթարկուի»:

«Թէեւ կորիւն լսել չէր ուզեր, բայց երբ տեսաւ որ Մջօն իր գէնքը վար դրաւ, իմքն ալ՝ ՍՏԻՊԵԱԼ լռեց:

«Ահա՛, ԱՍՈՆՔ ԵՂԱՆ ՊԱՏՃԱՌԸ որ չկարողացամք օգնութեամբ հասնիլ ձեզի» («Հարապատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 418-419) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] [Ա.]:

Ռուբէնի նման եսամոլ, ինքնահաւան, անարի եւ պարտազանց «պարոն» մը կրնար ամէն տեսակ խենթ ու խելառ որոշումներ տալ եւ զանոնք պարտադրել իր ստորադաս հայդուկներուն, որոնք պարտաւոր էին «ԿՈՒՐՈՐԷՆ ԵՆԹԱՐԿՈՒ ԵԼՈՒ» (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 311) յաճախ հիՍՏ վնասակար եւ նոյնիսկ ԱՂԷՏԱՐԵՐ՝ այդ որոշումներուն, ԱՌԱՆՑ ԵՐԲԵՔ նկատի առնել կարեւորու այդպիսի ծանրակշիռ որոշում տուողին կարողութիւնը, ձեռնհասութիւնը, անշահախնդրութիւնը, եւ մանաւանդ՝ այսպիսի նակատագրական ազդեալի որոշում տալու դրդապատճառը...:

Այսպիսի տխուր մտայնութեան մը ամենապերճախօս ապացայցն է վերի օրինակը:

Ենթադրեցէք որ Միրնկատարի եւ Կուրտիկի լեռնալանջերէն քանի մը մղոն վար, Մուշ քաղաքին մէջ, քնդանօթներու բռնուած են եւ ի սպառ բնաջնջուելու եւ փնամալու ԱնեՆՈՒՍԱՓԵԼԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻՆ ՏԱԿ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ՝ հող, Միրնկատարի եւ Կուրտիկի լանջերուն վրայ դռնուող մեր անձնազոհ հայդուկներու հայրերն ու մայրերը, ջոյրերն ու եղբայրները, կիներն ու զաւակները, եւ այդ հայդուկները, գիտակ ու պիտանախ այդ սրտակեղէք իրողութեամբ, ԱՆՀԱՄԲԵՐ ու ԱՆԶԿԱԼԻՑ՝ կը սպասեն անոնց ԱՆՄԻԶԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԹԱԼՈՒ ԱԶԻԱՆՇԱՆԻՆ ու ՀՐԱՄԱՆԻՆ, եւ ահա՛, մեր հովկալ ու անձնապաշտ «պարոն»ները, — Ռուբէն Տէր Մինասեան եւ Վահան Փափազեան, — դրդուած միայն ու միմիայն՝ ԻՐԵՆՑ ԱՆԶԵՐՈՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՄՏԱՀՈՒԹԵԱՆԵՆ, ԿՄԱՐԳԻԼԵՆ ԶԱՆՈՆՔ՝ այդպիսի նուիրական քայլ մը առնելէ, անոնց աչքին առջեւ շողացնելով «ԴԱԻԱՃԱՆ» յոյժ

զգուելի բառին ամօքանքն ու նախատիմքը, որոնցմէ ա՛յնքան ԿԸ ՆՈՐՇԷԻՆ ու ԿԸ ՍԱՐՍԱՓԷԻՆ մեր Տարօնցի հայդուկները...:

Բայց, — եւ այս է ամենէն ողբերգական կէտը՝ Տարօնի հայդուկային տարեգրութեանց մէջ, — եթէ անոնք, Տարօնցի այդ հայդուկները, ՔԶԻԿ ՄԸ դատողութիւն գործածէին, եւ իրենց սեփական կարծիքը արտայայտելու համար ա՛լ՝ ՔԶԻԿ ՄԸ համարձակութիւն ունենային, ա՛յն ատեն, ո՛հ, ա՛յն ատեն, անոնք կարող պիտի ըլլային ԻՍԿԱԿԱՆ ԴԱԻԱՃԱՆԻ ԱՆԱՐԳ ՊԱՍՏՈՒՃԱՆԸ ՀԱԳՅԸՆԵԼՈՒ այդ եսապաշտ, անձնամոլ եւ պարտազանց երկու «պարոն»ներուն, որոնք, ՍՊԱՌՆԱԼԻՔՈՎ՝ արգելք կը յարուցանէին, որպէսզի մեր արեւակից, սրտակից եւ ցաւակից հայդուկները ՕԳՆՈՒԹԵԱՆ ԶՓՈՒԹԱՅԻՆ իրենց կոտորուող հարազատներուն...:

* * *

Այլեւս, պարզ եղաւ, չէ՞, սիրելի՛ ընթերցող, իմաստը «Կիսակամարածեւ Պաշարում»ի հեքիաթին եւ «Ճրտտոնայ»ի առասպելին, ինչպէս նաեւ յստակ ընծայուեցաւ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ այդ երկու պարտազանց «պարոն»ներուն, որոնք, անորակելի անպարտութեամբ մը, ՅԱՆԳԻՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՈՒՆԵՑԱՆ պատմութիւնն անգամ ծառայեցնելու իրենց քայլերուն...:

Յաջողած են, արդեօք, իրենց այդ ապերասան ճիշդերուն մէջ՝ Պատմութիւնը պիտի տայ իր վերջնական վճիռը...:

* * *

[Ա.] Սասունէն Մուշ քաղաքին օդնութիւն չփութացուելուն առթիւ, Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան ալ կ'ընէ հետեւեալ խիստ յատկանշական յայտնութիւնն ու խորհրդածութիւնները.—

«Աւելի՛ քստմնելին, այն բոպէին, յորում քաղաքի բոլոր մը քաջերը կուրծք տալով իրենց վրայ լարուած չորս թնդանօթներուն, Քիազիմ Բէյի հասար թապուրիներուն, Թոփալիներուն եւ իրենց համախոհներուն, կ'ողորէին, Փափազեան, Ռուբէն եւ Կորիւն, եթանասունէ աւելի քաղաքացի, դաշտեցի, Փեթարցի եւ Սասունցի զինուորներով, կը գտնուին եղեր քաղաքէն դէպի հարաւ, երկու ժամ հեռու, Միրնկատարի զրանցները, Տիւքան Զիֆիրան ըսուած

տեղը, դէմերնին ունենալով 20-30 ոստիկաններ, եւ ականատես՝ ամբողջ ումբակոծութեան:

«Մինչ Փեթարցիներու խումբը կուրտիկի դիրքերը կը գրաւէ, խմբապետներու մէջ կը սկսի աշտարակաշինութիւնը:

«— Պէտք է օգնութեան երթալ», կ'ըսէ մէկը:

«— Լուր պէտք է ղրկել Սասուն՝ Մկրտչին որ գայ», կ'ըսէ միւսը:

«— Սասունցիները կ'ուզե՞ն, չե՞ն ուզեր», կ'ըսէ ուրիշ մը:

«Խիստ յատկանշական են Ռուբէնի խօսքերը:

«— Երբանք ալ՝ անօգուտ է. ո՛չինչ կարող եմք ընել. մեր ամենալաւ դործը պիտի ըլլայ ամբանալ եւ ամբացնել Սասունը եւ դիմադրել... մինչեւ ռուսական բանակին գալը»:

«Յատկանշական է նաեւ, նոյն օրը, Փափազեանի դիրքը, որ, կ'երեւի եղածին հետեւանքը ըմբռնելով, բայց իր բնական վարանոտութեամբ, ոչինչ ընելու անձեռնմուխ, ոտքի կ'ելլէ եւ ներկաներուն ուղղելով իր խօսքը՝ կ'ըսէ:

«— Ո՛վ ձեր մէջէն կ'ուզէ, թո՛ղ ինձ հետեւի» անորոշ (անոր սիրած ձեւը) հրաւէրը:

«Երեսունեւեօթը հոգի մը ոտքի կ'ելլեն, զորոնք վերցնելով կը խոստանայ... դէպի Հաւատորիկ. իսկ միացեալները կը բարձրանան Սասուն՝ առանց հրացան մ'իսկ փորձի համար բանալու՝ իրենց քթի տակ գտնուող Թնդանօթի վրայ, որ անդադրում որոտում մով մը փուլ կու տար տունները անհաւասար գօտեմարտի մէջ գլուխուղ իրենց ընկերներու եւ իրենց սիրած ու պաշտպանած ժողովուրդի վրայ:

«Ի՞նչպէս որակել այդ գիտակցութի՞ւն թէ անձնասիրութիւն. ո՞վ է մեղաւորը այդ պարագային, յանցապարտը, անարգ դատապարտելին. մեղուարոյժ Հաջի՞ն (Ուրֆացի հին յեղափոդական մը, որ Տարօնի մէջ կը զբաղէր մեղուարուծութեամբ), որ այդ ատեն կ'ըսէ:

«— Ի սէր Աստուծոյ, ա՛լ ինչի՞ կը սպասէք. քաղաքն է որ կը ումբակոծեն»,

«Թէ՞ Ռուբէնը, որ կը պապանծեցնէ զայն՝ ըսելով:

«— Հա՛, հա՛, հա՛, մեծ համարում ունիք ձեր վրայ»:

«Փափազեանը, որ անորոշութենէ դուրս ելած չէ:

«Կորի՞ւնը, որու համար կուուրիլը միշտ խնդալ եղած է եւ այդ բոլորին չէ՛ ուզած մեռնիլ:

«Վարդա՞նը եւ Մկրտի՞չը, որոնք այդ ատեն հեռու են եղած:

«Սասունցիները, որոնք Սասունէն եւ Անդոկէն դուրս՝ աշխարհ չունէին:

«Թէ՞ Դաշտեցի եւ քաղաքացի հայդուկները, որոնց բոլորի սիրուն քոյրերն ու ևղբայրները, գորովադութ հայրերն ու մայրերը, քաղցրիկ ազգակիցներն ու բարեկամները՝ հո՛ն, վա՛րը, մահուան չարաշուք հնհնուքով կը տուայտէին:

«Ըստ իս, ամբողջը, բովանդակ կազմը, իր ներքին փտախտով, պոռոտարանութեամբ ու եսապաշտութեամբ...:

«Ինչո՞ւ համար, ուրեմն, այդ զանցառութիւնը. եթէ ոչ ընդհանուր պարտականութեան, դէթ ինքնապաշտպանութեան տեսակէտից:

«Զարհուրելի անկում հոգեկան բարձրութեան, անչքմեղանքի ստրկացում պարտականութեան գիտակցութեան» (Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջք 156-157) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:



Գ Լ ՈՒ Խ Ի Թ .

ԻՆՉ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ԱՐԴԻՒՆՔԸ

Ի՞նչ պիտի ըլլար արդիւնքը, արդեօք, Մուշ քաղաքի մէջ, քանի մը օր եւս երկարաձգուած դիմադրութեամբ:

Ի՞նչ պիտի պատահէր, եթէ Սասունէն ակնկալուած օգնութիւնը ԳԱՐ, եւ գար՝ ՃԻՇՏ ԱՏԵՆԻՆ — քաղաքի կռիւին առաջին ցերեկուան կամ գոնէ գիշերուան ընթացքին, որ ատեն՝ քաղաքի համայն հայութիւնը եւ քաջամարտիկ կռուողները, ակնդէտ ու անձկալից, հայեացքներն յառած էին Կուրտիկի լեռնալանջերուն եւ Սասուն երկնցող ճամբաներուն, վայրկեանէ վայրկեան՝ անոր ժամանակը երազելով փրկարեք օգնութիւն, որուն խոստումը տուած էին անոնք, Սասունաբնակ «պարոն»ները, դաշտի եւ քաղաքի մարտական ուժերը, զէնքերը, ռազմամթերքը եւ պարէնը Սասուն փոխադրել տուած ատեններն:

Ի՞նչ պիտի ըլլար արդիւնքը, եթէ փոխանակ «Կիսա-կամարածեւ Պաշարում»ի եւ «Ճրոտոնայ»ի նման սուտ ու փուտ պատմութիւններ յերկրելու, այդ երկու «պարոն»ները փորձէին ԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ, ԴՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՍՑՆԵԼ քաղաքի մէջ մեռնելու վճռականութեամբ, օրհասական կռիւ մղող բուռ մը քաջերուն:

Ի՞նչ պիտի ըլլար արդիւնքը, եթէ ԳՈ՛ՆԷ ԹՈՅԼ ՏԱՅԻՆ Սասուն գտնուող քաղաքացի եւ դաշտեցի մեր վրէժավառ հայդուկներուն, որ Միրնկատարի եւ Կուրտիկի բարձունքներէն եւ լեռնալանջերէն վար սուրային, զէպի քաղաք, եւ կռակէն հարուածէին թրքական թնդանօթները, լեզապատառ փայցնէին արդէն իսկ անպատում սարսափով համակուած թնդանօթաձիգները, եւ շուարանքի մատնէին քաղաքը պաշարող, բարոյալքուած թրքօ-քուրդ զինուորները:

Այդ պարագային, քաղաքի գոյամարտը այնքան յաջող կերպով մղող բուռ մը քաջերը, օգնութեան փութացողներու նիւթական, բայց մանաւանդ՝ բարոյական օժանդակութեամբ, ԿԱՐՈՂ եւ Ի ՎԻՃԱԿԻ պիտի ըլլային փախուստի մատնելու քաղաքի խուճապահար թրքութիւնը, — կառավարութիւն, զօրք, ժողովուրդ, — որ լեզապատառ անձկութեամբ, հեռադիտակներով կը հետախուզէր

Սասունի ճամբաներն ու Կուրտիկի լեռնալանջերը, վայրկեանէ վայրկեան՝ այդ կողմերէն ակնկալելով ընդունիլ ԱՆԲԱՂՁԱԼԻ ԱՅՑԵ-ԼՈՒԹԻՒՆԸ՝ իրենց յուսահատ եւ դողահար սիրտերը անպատում սարսուռով ու սարսափով լեցնող Սասունաբնակ Ֆեդայիներուն, երբ մանաւանդ, իրենց կռակէն ալ, «Քիաֆիթ Մոսկոֆ»ի յառաջապահները արդէն իսկ մօտեցած էին Մշոյ դաշտին սահմաններուն...:

Եթէ այդ խոստացուած եւ անձկօրէն ակնկալուած օգնութիւնն ու օժանդակութիւնը գային քաղաքի կռիւին առաջին կամ առնուազն, գոնէ ԵՐԿՐՈՐԴ ՑԵՐԵԿՈՒԱՆ կամ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ, «Արդէն փրկուած կ'ըլլանք, յաղթանակնիս կատարեալ կ'ըլլայ», կը մարդարէանար Տարօնի պանծալի հերոս Հաջի Յակոբը, որովհետեւ ՀՆԱՐԱԻՈՐ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՐ երկու-երեք օրուան դիմադրութիւնը ԵՐԿՐԱԶԳԵԼ առնուազն ՄԷԿ-ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹ ԵԻՍ, այսինքն, գոնէ մինչեւ Յուլիս 10-15, որ ատեն ռուսական յառաջապահները ԱՐԴԷՆ ՀԱՍԱԾ ԷԻՆ Մշոյ դաշտը, Մեղրագետի ափին վրայ գտնուող Մկրագոմ գիւղը(1), քաղաքէն հազիւ երկու ժամ հեռու:

Այս բախտաւոր եւ բարեբաստիկ պարագային,

1.— Թրքական բարոյալքուած ու քայքայուած բանակը, եւ թրքօ-քուրդ խուճապահար ազգաբնակչութիւնը, լեզապատառ, խոյս պիտի տային քաղաքէն ու դաշտէն:

2.— Բնաջնջումէ, բայց մանաւանդ՝ ՈՂՁԱԿԻԶՈՒՄԷ ԶԵՐԾ ՊԻՏԻ ՄՆԱՑԻՆ ո՛չ միայն քաղաքի քան հազար հայութիւնը, եւ Քանայ ու Հաւատորիկի լեռները ապաստան գտած քանեւհիմգ-երեսուն հազար փախստականները, ա՛յլ նաեւ՝ Սասուն գտնուող բնիկ եւ եկուոր, ամբողջ երեսուն-երեսունեւհիմգ հազարոց հայութիւնը:

Այս բոլորն ալ ՀՆԱՐԱԻՈՐ ԷՐ, բայց ՉԷ ԻՐԱԿԱՆԱՑԱԾ, զբժբախտարար, որովհետեւ Սասունաբնակ մեր երկու «պարոն»ները՝

ա.— ԶՈՒՆԵՑԱՆ իրենց ստանձնած պաշտօնին, պարտականութեամբ, բայց մանաւանդ՝ պատասխանատուութեամբ ԽՈՐ ԳԻՏԱԿ-ՑՈՒԹԻՒՆԸ, որ զիրենք մղէր վճռական յանդուգն քայլերու եւ գերազոյն գոհաբերութեամբ, Հաջի Յակոբի օրինակով:

բ.— Քաղաքական եւ զինուորական կացութիւնը ԸՄԲՈՒՆԵ-

(1) Ըստ Կարօ Սասունիի, ռուսական յառաջապահները Մկրագոմ գիւղը կը հասնին Յուլիս 16-ին («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 992):

ՅԻՆ ԵՆ ԿՇՈՒԵՑԻՆ ՏԻՅԻՆ ՈՒ ՏԻՄԻՅԻՆ՝ ԻՐԵՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԵՆ ԻՐԵՆՑ մտքի փրկութեան չափանիշով .

դ. — Բնա՛ւ երբեք ՉՈՒՋԵՑԻՆ ՀԱՍԿՆԱԼ ԵՆ ԸՄԲՈՒՆԵԼ որ Սասունի մարտունակութեան ամենագլխաւոր յենարանն եղող Մշոյ Դաշտի հայութեան բնաջնջումէն յետոյ, եթէ կորսնցնէին Մուշ քաղաքի յենարանն ալ, ա՛յն ատեն՝ Սասունի բարձրաբերձ լեռնալանջերու եւ անդնդախոր ձորահովիտներու մէջ ծուարած մարտական ուժերու եւ խճողուած բազմահազար ժողովուրդի փրկութիւնն ալ, աւելի քան երբեք, ԽՆԴԻՐԱԿԱՆ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ, ինչպէս որ եղաւ ալ . . . :

Եւ այսպէս, Տարօնի ու Սասնոյ պատմական եւ մարտական, բայց խիստ տարաբախտ հայութեան դժխեմ ճակատագիրը իրենց ապիկար ձեռքերուն մէջ առնող մեր եսամոլ ու պարտազանց երկու «պարոն»ները, Տարօնի եւ Սասնոյ զարհուրելի եղեռնէն երեսուն եւ հինգ տարի յետոյ, անասելի աճաբարարութեամբ մը, եւ անորակելի սառնասրտութեամբ ալ, ՋԱՆԱՑԻՆ ԼՈՒԱԼ իրենց կայէնական արիւնքաքախ ձեռքերը՝ Տարօնի եւ Սասնոյ անմեղ հայութեան բոսորագոյն արիւնով . . . :

ՎԵՐՋ ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆԻ

ՏԱՐՕՆԱՊԱՏՈՒՄ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Վահան Փափագեանի
Սխրագործութիւնները
Տարօնի Մէջ



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Կը տարակուսիմք հաւատալու ազգային մեծ նահատակ, ողբացեալ Գրիգոր Զոհրաբի *բերանը դրուած* հետեւեալ խօսքերուն, գոր, իբրեւ թէ այդ ակամաւոր Հայը ըսած ըլլայ Բիրոյական երեսփոխան Վահան Փափագեանին, 1914-ի աշնան, որ ատեն այս «մէլ-պուս» ազգայինը կը պատրաստուէր Պալսէն, Կովկասի վրայով, Վան վերադառնալու, թէ՛ — «Լա՛ւ է ու ազնիւ՛՛ երթալ ժողովրդին քով, *իր ծանր օրերուն*: Յեղափոխութիւնը եթէ ուրիշ արժանիք իսկ չունենայ, բաւ է որ *իր անդամները այսպէս կը դաստիարակէ — ԳԻՏՆԱԼ ԱՆՁԸ ՏԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ*» (Վահան Փափագեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 281) [Բալոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Բիրոյական յուշագիրը, այսիմաստ բազմաթիւ բացատրութիւններով եւ չմեղաբանութիւններով, ամէն ջանք ի գործ կը դնէ իր յուշերուն մէջ, *մեզի հաւատացնելու* թէ ի՛նչպէս ին՛ք ԱԼ, իբրեւ անդամ նոյն յեղափոխութեան, ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍ ԳՏՆՈՒԱԾ է *դիտակցօրէն* եւ *անձնուէրօրէն ՁՈՀԱՐԵՐԵԼՈՒ* իր *Թանկագին կեանքը՝* հայ ժողովուրդի համար, *ԵՐԲ ՀԱՐԿԸ ՊԱՀԱՆՁԱԾ* է :

Այս գաղափարը եւ այս մտասեւեռումը *տիրապետող են* վասպուրականի երեսփոխանի յուշերուն մէջ, մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը :

Մենք քննութեան պիտի ենթարկենք այս յուշագիր Բիրոյականի՝ 1914-1915 ողբերգական տարիներու գործունէութիւնը Տարօնի մէջ միայն, ուր *հազարաւոր անդամներ*, բայտը կամ նակատագիրը *պատեհութիւն ընծայեցին իրեն*, եւ շատ յաճախ ալ՝ *ՊԱՐՏԱԴՐԵՑԻՆ ՁԻՆՔ* որ յայտնաբերէ այդ գերագոյն գոհաբերութիւնը, բայց տեսնենք թէ ան ո՞րքան *յօժար* կամ *պատրաստակամ* գտնուած է՝ այդ դժնդակ օրերուն, ընդառաջելու Զոհրաբի արտայայտած վերոյիշեալ գաղափարին — «*ԳԻՏՆԱԼ ԱՆՁԸ ՏԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ*», — երբ *բազմաթիւ* եւ *բազմազան առիթներ ներկայացած էին*, կա՛մ պարագաները *ՇԱՏ ՅԱՃԱՆ ԱԼ ԿԸ ՊԱՐՏԱԴՐԻՆ* :

Վահան Փափագեանի այս պատրաստակամ գոհաբերութեան արարքները պէտք է որ ապացուցուին ու վաւերացուին ո՛չ թէ իր *ինքնազովական խօսքերով* եւ *յերիւրածոյ պատմութիւններով ՄԻԱՅՆ*, ա՛յլ նաեւ՝ *իրեն հետ ապրող, իրեն հետ գործող* եւ *ՁԻՆՔ ՇԱՏ*

ԼԱԻ ՃԱՆՉՑՈՂ Տարօնցի ականատես յուշագիրներու վկայութիւններով ալ:

Այս Քննական Ուսումնասիրութեամբ, մենք պիտի ջանանք ցոյց տալ, — այդ նոյն Տարօնցի յուշագիրներու *անժխտելի* վկայութիւններով եւ *անհերքելի* փաստերով, — թէ Վահան Փափագեան **Չէ՛ եղև ՍՅՆ ԱՆՁՆԱԶՈՂ ՂԵԿԱՎԱՐԸ**, ինչպէս որ կը ջանայ ցոյց տալ թէ *եղած է. չէ՛ ԸՐԱՄ այն զոհարերական զործերը*, ինչպէս որ կը նկրտի ապացուցանելու թէ *ըրած է. ա՛յլ, ընդհակառակը, կատարած է ԲԱԶՄԱԹԻԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ*, — վնասակար, եպերելի ու դատապարտելի, — որոնց մասին կա՛մ *յանցապարտ լուծիւն մը կը պահէ*, եւ կա՛մ, երբ հարեւանցիօրէն կը յիշէ այդ յանցագործ եւ մեղապարտ արարքները, — միշտ գունաւորուած եւ չարափոխուած ձեւով, ի հարկէ, — *կը փորձէ* գանձնափաթեթել վիզին իր մեղսակցին կա՛մ մեղսակիցներուն, որոնք լուծ են յաւիտեանս:

Այսպէս, մեզի ուղղած իր նամակներէն միոյն մէջ անգամ, յուշագիր Փափագեան ինքնարդարացումի մեղապարտ փորձ մը կ'ընէր՝ մեր կողմէ մատնանշուած յանցանք մը փաթեթել փորձելով իր ընկեր ու գործակից Ռուբէնի վիզին, երբ մեր Տարօնցի յուշագիրները, բոլորն ալ, միաբերան, *զինք եւս նո՛յնքան պատասխանատու եւ նո՛յնքան յանցապարտ կը նկատեն՝* այդ աններելի ու անբաւելի արարքին համար:

Մենք պիտի ջանանք մեր ուշիմ ընթերցողներուն ներկայացնել Վահան Փափագեանի այդ տխուր արարքներուն, ազտաբեր գործունէութեան եւ ապիկար ղեկավարութեան փաստերը միայն, թողելով որ իրենք հանեն իրենց արդար եզրակացութիւնը:

Յեցած Տարօնցի ականատես ու արժանահաւատ այդ միեւնոյն յուշագիրներու վկայութեանց վրայ, անվիճելի եւ անհերքելի փաստերով պիտի ջանանք ապացուցանել Տարօնցի Յեղափոխութեան(1) այս երկու լիազօր ներկայացուցիչներու — Ռուբէն Տէր Միմասեանի եւ Վահան Փափագեանի — գործած *ազգավնաս*, բայց մանաւանդ՝

(1) *Տարօնցի մէջ, հայ ազատագրական շարժումը կը ճանչցուէր «Յեղափոխութիւն» անունով: Հո՛ն՝ Հնչակ, Դաշնակ անուանակոչումները անձանօթ էին եւ խոտելի: Աղզին ազատագրութեան համար աշխատող ազգայինները, բոլորն ալ, ի՛նչ անունով ալ յորջորջուէին, «Յեղափոխական» պիտակով մկրտուած էին (Տեսնել «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ» յուշամատենը, էջ 67 եւ 471):*

ՏԱՐՕՆԱՎՆԱՍ տխուր արարքները, որոնց մերկացումը ո՛չ *«անհեթեթ»* է եւ ո՛չ ալ *«չարամիտ»*, ա՛յլ, ընդհակառակը, *«արդար»* է եւ *«ստոյգ»* (գործածելով յուշագիր Վահան Փափագեանի բառերը) [Տեսնել մեզի ուղղած՝ 9 Փետրուար 1955 թուակիր՝ իր Հինգերորդ նամակը]:

Մեր ջերմագին բաղձանքն է Տարօնցի եւ Սասնոյ ֆաջակարով եւ մարտական հայութեան արմատական բնաջնջումին (բայց մանաւանդ՝ ողջակիզումին) պատասխանատու այս երկու օտարերկրացի «պարոն»ներուն տալ ինչ որ *իրենց արդար իրաւունքն է* — դրական կամ ժխտական, — եւ *ինչին որ արժանի կացուցած են ինքզինքնին՝ ԻՐԵՆՑ ԿԱՏԱՐԱՄ ԳՈՐԾԵՐՈՎ*, նոյնպէս դրական կա՛մ ժխտական:

Ո՛չ աւելի, ո՛չ պակաս. նախընտրելի է՝ աւելի, քան պակաս:

24 Ապրիլ 1965,

Սան Տրանսիսկո



Գ Լ ՈՒ Խ Ա .

Ա Ն Կ Ի Մ Ն Կ Ա Ի Ա Ս Տ ՈՒ Մ Ն Ե Ր

Ինչպէս «Տարօնապատում»-ի Մասն Առաջինի մէջ բացատրուած է, Դաշնակցութեան Բիւրոյի անդամ եւ Վանի երեսփոխան Վահան Փափազեան, 1914-ի Հոկտեմբերին, Թուրքիա՝ Համաշխարհային Առաջին Պատերազմին մէջ մխրճուած ամսուն, Վասպուրականէն Մուշ կը ժամանէր, ուր, կարճ ժամանակի մը համար, գործակցելէ յետոյ տեղական ազգային եւ կուսակցական ղեկավարներու հետ, Պոլիս պիտի վերադառնար՝ իր պաշտօնակից Մուշի Թուրք երեսփոխան Հոջա Իլիասի հետ, հո՛ն, Թրքական խորհրդարանի մէջ, իր չզիտցած քուրքերէն լեզուով [Ա.], «պաշտպանելու» համար անի-րաւուած Հայութեան արդար, բայց միշտ ոտնակոխուած բազմա-պիսի իրաւունքները, յար եւ նման Մուշի անլեզու երեսփոխան Գե-ղամին [Բ.] :

Սակայն, վերահաս ձիւնը գոցեց ճամբաները եւ բիւրոյական երեսփոխանը հարկադրուեցաւ մնալու Տարօն եւ շարունակելու իր գործակցութիւնը Տարօնի Ազգային Առաջնորդարանի հետ, ինչպէս նաեւ միասնաբար վարելու Տարօնի ազգային-կուսակցական գործերը՝ իր կուսակցութեան Տարօնի լիազօր-ներկայացուցիչ Ռուբէն Տէր Մինասեանի հետ, ո՛չ-սիրալիր գործակցութեամբ մը(1) :

Այս երկու «պարոն»ները, սակայն, մէկը միւսին ետեւէն, ԹՈՂԻՔԵԼՈՎ իրենց պաշտօնն ու պարտականութիւնը, ԱՆՊԱՏԱՍ-ԽԱՆԱՏՈՒ ԴԱՍԱԼԻՔՆԵՐՈՒ ՆՄԱՆ, խոյս տուին լեռները, — Ռու-բէն փախաւ Մասուն՝ 1915 Փետրուարի կէսէն առաջ, իսկ Փափազ-եան ալ, Թիֆլիսի երկարատեւ հիւանդութենէն հազիւ ապաքինած, Մայիսի երկրորդ կէսին, չուեց Հաւատորկի լեռները, ուր երկուքն ալ, ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՄՈՌԱՑՈՒԹԵԱՆ ՏՈՒԻՆ Մուշ քաղաքի եւ Մշոյ դաշտի հոծ Հայութեան առաջնորդութեան, ղեկավարութեան եւ

(1) Ռուբէնի եւ Փափազեանի ոչ-սիրալիր յարաբերութեանց մասին կարդալ Ռուբէնի «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Ե., էջք 221-223, 249-254, ինչպէս նաեւ Վահան Փափազեանի «Իմ Յուշերը», Բ., էջք 313-314 :

ինքնապաշտպանութեան ԻՐԵՆՑ ՍՏԱՆՁՆԱԾ հանդիսաւոր պարտա- կանութիւններն ու պատասխանատուութիւնը :

Մշոյ դաշտի, Մուշ քաղաքի եւ Սասունի իրերայաջորդ կո- տորածներէն յետոյ, դեռ ժամանակ մըն ալ, անոնք պահուրտած մնացին Սասունի, Հաւատորիկի եւ Քանայ լեռներուն մէջ, ուր այլեւս կեանքը եւ ապրուստը սկսած էին անհանդուրժելի դառնալ՝ նոյնիսկ իրենց համար ալ, եւ յայտարարեցին ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ԿՏՐԵ- ԼՈՎ Ռուսական բանակի եւ Հայ կամաւորներու շուտափոյթ ժամա- նումէն, փոքրաթիւ խումբով մը, Սեպտեմբերի առաջին շաբթուան ընթացքին, կտրեցին Ռուս-Քրքական ռազմազինքը եւ խոյս տուին Կովկաս, իրենց ետեւը թողլէնով վերապրող ռազմահազար փախստա- կան բեկորներ՝ անոք, անպաշտպան եւ սովալլուկ վիճակի մէջ, ենթակայ թուրք եւ քուրդ վայրագ չեթէներու պարբերական կա- տաղի յարձակումներուն, մոլեռանդ խուժանի անազորոյն անգթու- թեանց եւ մոլեզին խժովութիւններու :

* * *

Տարօնի 1915-ի ահաւոր ողբերգութենէն 35-37 տարիներ անց- նելէն յետոյ, Դաշնակցութեան այս երկու դասալիք պարագլուխ- ները, արտասահմանի մէջ, հրատարակեցին իրենց ընդարձակ յուշերը :

Ռուբէնի «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները» կը բաղ- կանան եօթը հատորներէ, որոնք կը խօսին Համիտական բռնակալու- թեան շրջանի, Օսմանեան Սահմանադրութեան սկզբնական օրերու եւ այլ շրջաններու մասին, բայց Ո՛Չ ՄԷ՛Կ ՏՈՂ՝ 1914-1915-ի Հայա- ցիմջ եղեռնի մասին, բացառելով «Ֆրոտոնայ»ի կարճառօտ եւ յե- ռիւրածոյ պատմութիւնը, որու քննական ուսումնասիրութիւնը մենք ներկայացուցինք «Տարօնապատում»ի Մասն Առաջինի մէջ :

Վահան Փափազեան ալ, նմանապէս, երեք հատորներով հրա- տարակեց իր «Իմ Յուշերը», ուր բիւրոյական երեսփոխանը կը յայ- տարարէ որ ահաւոր աղէտի թուականէն երեսունեւեօթը տարիներ անցնելէն յետոյ, ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԱԾ ԿԸ ՆԿԱՏԷ «քօղը բարձրացնե- լու ահռելի դէպքերու վրայէն, մանաւանդ Տարօնի Աշխարհի, որու մասին քիչ է գրուած կամ ԱՂԱԻԱՂՈՒԱԾ Է ՅԱՃԱԽ» («Իմ Յուշերը», Բ., էջ 274) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Այսինքն, Բիւրոյական յուշագիրը պարզապէս ըսել կ'ուզէ թէ Տարօնի կոտորածներու մասին շատ քիչ բան գրուած է մինչեւ հիմա, եւ ինչ որ գրուած է, ան ալ՝ սուտ ու փուտ պատմութիւն է... :

Եւ այդ պատճառով ալ, «իբրեւ ակամատես եւ դերակատար»,

ան որոշած է վերջապէս տալ «առարկայական», «նշմարիտ» եւ «ի- րական», հետեւաբար ՀԱՐԱԶԱՏ ու ԱՆԽԱՐԴԱԽ պատմութիւնը Տարօնի յոյժ ահռելի եւ սրտակեղէք դէպքերուն, որոնք տեղի ու- նեցած են 1914-1915-ի Հայկական մեծ եղեռնի տարիներուն, Տա- րօնի մէջ իր բնակութեան տեւողութեան :

«Իբրեւ ակամատես եւ դերակատար, ըստ ամենայնի, ՊԻՏԻ ԶԱՆԱՄ ՏԱԼ առարկայական, նշմարիտ եւ իրական նկարագրութիւ- նը ժամանակի եւ դէպքերու» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Այսքանով ալ դեռ չի՛ բաւականանար յուշագիր «պարոն»ը, որովհետեւ կը հաւաստէ որ յանդգնութիւն եւ անաչառութիւն պիտի ունենայ ատկէ աւելին յայտնարեցելու... —

«Պիտի չխուսափիմ ձաղկելու աղէտալի սխալներն ու թերու- թիւնները մեր՝ ամէնգիս» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Եւ իր յուշերու բարեմիտ ընթերցողը, — ինչպէս, օրինակ, մենք, — մեծ դարմանքով՝ կանգ կ'առնէ վայրկեան մը, եւ նոյնիսկ հիացած՝ յուշագիր Վահան Փափազեանի այս արտասովոր եւ յան- դուգն նշմարաւսիրութեան եւ նշմարախօսութեան վրայ, հա՛րց կու տայ... —

— Ինչո՞ւ համար են, արդեօք, յուշագիր «պարոն»ի այս խի- գախ նշմարախօսութիւնն ու պատրաստակամ խոստովանութիւնը :

Շա՛տ պարզ, շա՛տ դիւրըմբռնելի են Բիւրոյական երեսփոխա- նի այս արտաքոյ կարգի յախուռն կեցուածքին դրդապատճառն ու նախանախնդրութիւնը՝ «Ճշմարտութեան» հանդէպ, որովհետեւ կը բարբառէ ան... —

«— Ո՛չ ոք իրաւունք ունի ԱՊԱԳԱՅ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ ԵՂՄԵ- ԼՈՒ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] [Գ.] :

Այսպիսի գերազնիւ յառաջադրութիւններով, յուշագիր երես- փոխանը կը ջանայ մեզ եւս համոզել եւ վստահեցնել որ իր ներկա- յացուցած պատմութիւնը ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ՝ ԲԱՅԱՐԶԱԿ ԵՒ ՄԻԱԿ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ :

Վահան Փափազեանի այս հաւաստումները, ԴԺԲԱԽՏԱԲԱՐ, ԶԵՆ ԱՐԴԱՐԱՆԱՐ ԲՆԱԻ, երբ Տարօնի խիստ տխրազու դէպքե- րուն՝ իրենց գործօն մասնակցութիւնը բերող՝ մէկէ աւելի ակամա- տես, լուստեղեակ եւ արժանահաւատ Տարօնցի յուշագիրներու պա- տումները ուշադրութեամբ ՍԵՐՏԵԼԷ յետոյ, կը կարգանք նաեւ իր «Իմ Յուշերը», որ ատեն, ՇԱՏ ՅՍՏԱԿՈՐԷՆ ԿԸ ՏԵՍՆԵՆՔ այն ահա- ւոր ու նակատագրական սխալները, սարճուած դաւերն ու դաւադ- րութիւնները, կամաւոր եւ գիտակից պարտագնդութիւնները, զոր

գործած են Բիւրոյի անդամ Վահան Փափազեանը եւ նոյն Բիւրոյի պատասխանատու ներկայացուցիչ Ռուբէն Տէր Մինասեանը, միասնաբար կամ առանձինն, եւ որոնց մասին, այնքան խորհրդաւոր կերպով, չարաշուք լուսփիւն մը կը պահեն այդ երկու «պարոն»ները, հաւանաբար «ԱՊԱԳԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԶԵՂԾԵԼՈՒ» մտաւեղութեամբ !!!

Վահան Փափազեան մեծ ջանք կը քափէ, իր յուշերուն մէջ, մեզ հաւատացնելու համար որ՝ ինք ՏՐԱՄԱԳԾՕՐԷՆ ՀԱՎԱՌԱԿ ԵՂԱԾ է Ռուբէնի որդեգրած եւ ի գործ դրած սխալ ֆազաֆականութեան եւ վնասակար գործելակերպին: Ռուբէն էր որ 1915-ի Փետրուար ամսոյ կէսերուն, Սասուն ապաստանելէն յետոյ, ՈՐՈՇԵՑ եւ ԿԱՐԳԱԴՐԵՑ(2) որ շրջաններու բոլոր կռուող ուժերը եւ զենքերը, ամբողջ ռազմամթերքը եւ պարէնը ԿԵԴՐՈՆԱՆԱՆ ՍԱՍՈՒՆԻ ՄԷՋ, ա՛յնքան հեռու ոռւսական ռազմաճակատէն, որ կարծես թէ Տարօնի փրկութիւնը պիտի դար հարաւէն, Տիգրանակերտի կողմէն, քան թէ հիւսիսէն յառաջացող ոռւսական բանակէն եւ Հայ կամաւորներէն:

Ըստ Վահան Փափազեանի պատումին, Ռուբէն էր որ յղացեր, մինչեւ վերջ՝ ՅԱՄԱՌՕՐԷՆ ՊԱՇՏՊԱՆԵՐ եւ անշեղօրէն ալ՝ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ է ԴՐԵՐ ԱՅՆ ՍԵԱԼ ՏԵՍԱԿԷՏԸ եւ ՎՆԱՍԱԲԵՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ թէ՛:

«Վտանգի պահուն, դաշտը չի՛ կրնար պաշտպանուիլ, իսկ քաղաքը վստահելի յենարան մը չէ՛ ինքնապաշտպանութեան տեսակէտէն. մեր ուժերը պէտք է կեդրոնացնենք Սասուն եւ հոն կազմակերպենք ինքնապաշտպանութիւնը՝ ապաւինելով լեռներուն եւ յենելով լեռնական մեր ժողովուրդին» («Իմ Յուշերը», Բ., էջ 321) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Նոյնպէս, յուշագիր Փափազեան կը հաւատէ. —

«Մերինները (այսինքն՝ Ռուբէն եւ Սասունարնակ իր արբանեակները, Ծնթ. Ա. Տ.) միշտ կը հաւատացնէին մեզի թէ Սասունի դէմ պիտի ուղղուի ՆԱՍ՝ թուրքերու հարուածը, ուրեմն՝ անոր դիմադրութեան յաջողութենէն կախուած է Դուրանի եւ քաղաքի փրկութիւնը, հետեւաբար, մարտական փորձառու ուժերը եւ ռազմամթերքը հոն պէտք էր կեդրոնացնել» (նոյն, էջ 344) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

«Տարօնապատում»ի այս Գննական Ուսումնասիրութեան Մասն Առաջինի մէջ (Թնդանօթներու փոխադրութիւնը Հաջի Յակոբին յանձնուելու առիթով (Գլուխ ԺԹ.), ինչպէս նաեւ «Հնձանի խոր-

(2) «Բիւրոյի ներկայացուցիչը ՏԷՐՆ ԷՐ ՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՂԸ ԲՈՂՈՐ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ», կը հաւաստէ Վ. Փափազեան («Իմ Յուշերը», Բ., էջ 312) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

հրդակցական ժողովի» մէջ (Գլուխ Ի.), մենք բացայայտօրէն ՈՐՈՇ եւ ՅՍՏԱԿ ընծայեցինք Վահան Փափազեանի բռնած դիրքը՝ Ռուբէնի որդեգրած այդ սխալ քաղաքականութեան եւ վնասակար գործելակերպին հանդէպ: Այդ երկու պարագաներուն ալ, Վահան Փափազեան ա՛յ միայն գաղափարակից կը ներկայացուի այդպիսի աղէտաբեր տեսակէտի մը, այլեւ նոյնիսկ՝ այդ տեսակ առաջարկի մը ՀԵՂԻՆԱԿԸ :



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ 1953-ին

Հետեւաբար, մէկէ աւելի անգամներ՝ իր ըրած այն հաւատումները թէ ինք տրամագծօրէն ՀԱՎԱՌԱԿ ԵՂԱԾ է Ռուբէնի որդեգրած այդ սխալ ֆազաֆականութեան, սխալ տեսակետներուն եւ սխալ որոշումներուն, ՉԵՆ ԱՐԴԱՐԱՆԱՐ ԲՆԱԻ: Իր խօսքին եւ իր գործին միջեւ եղած այս ակնբախ հակասութիւնը ինքնին ԿԸ ՀԵՐՔԷՆ նաեւ իր այն միւս հաւաստումը, զոր մեղի ըրած էր՝ իր Առաջին նամակով (24 Հոկտեմբեր 1954 թուակիր) թէ իր «նպատակն եղած է ՀՆԱՐԱՒՈՐ ՃՇԿՐՏՈՒԹԵԱՄԲ ՏԱԼ պատմական դէպքերը՝ հնարաւոր անաչառութեամբ» [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Բացայայտօրէն աչք ծակող այս հակասութիւնը տեսնելու համար, կը թելադրենք մեր յարգելի ընթերցողներուն որ «Տարօնապատում»ի այս Գննական Ուսումնասիրութիւնը եւ անոր մատնանշած բոլոր աղբիւրները ուղադրութեամբ եւ մտադրութեամբ սերտ-

լէ յետոյ, նորէն եւ կրկին անգամ, նո՛յնքան եւ աւելի մե՛ծ ուշադրութեամբ՝ ընթեռնուն Վահան Փափաղեանի «Իմ Յուշերը»ու Երկրորդ Հատորի դոնէ Տարօնի պատմութեան վերաբերեալ մասը, էջ 274-էն սկսեալ մինչեւ էջ 410, ընդամէնը՝ 136 էջ:

Այսքան սահմանափակ էջերու մէջ, բիւրոյական յուշագիրը ամփոփած է ԻԲԲԵԻ Թէ «նկարագրութիւնը»(?) Տարօնի ահաւոր եղեռնին, Տարօնի պատմական եւ մարտական Հայութեան աննախընթաց մարտիրոսացումին եւ հերոսական քանի մը պոռթկումներու, «նկարագրութիւն» մը, որ ամբողջութեամբ ԼԵՑՈՒՆ է մեծ շփոթութիւններով, ղէպքերու եւ ղէմքերու անհարագատ ներկայացումներով, սխալ կամ միակողմանի տեղեկութիւններով, խիստ յաճախ ալ՝ ԴԻՏՈՒՄՆԱԻՈՐ Եւ ԿԱՄԱԻՈՐ խեղաթիւրումներով, իրականութեան եւ ճշմարտութեան հակառակ պատկերացումներով, չարափոխութիւններով, չարախօսութիւններով, զրաբանութիւններով, կեղծուած կամ յերիւրուած պատմութիւններով...:



ՍՏԵՓԱՆ ԿՈՒՐՏԻԿԵԱՆ — 1927-ին

* * *

[Ա.] Վասպուրականի երեսփոխանը կը գրէ.
«Մեր եւ քրիստոնեայ միւս երեսփոխաններու դժբախտութիւնը

պետական լեզուի ԱՆԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՐ. այդ պատճառով՝ լուռ ու մունջ ունկնդիրի դերի մէջ էինք, առանց նոյնիսկ հասկնալու մուշաներու արարախառն եւ «գիտուն»ներու խօսած տաղտկալի ճառերու բովանդակութիւնը: Հայերու մէջ փայլուն Թրքագէտ հոետորը Զոհրաբն էր եւ խօսելու կարողութենէ ո՛չ զուրկ Հայաջեանը. միւս-



ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱԲ

ները իրենց լուացքը կրնային շուրէն հանել՝ կոպիտ եւ թերի թուրքերէնով: ԱՄՆԵՆ ԽԵՂՃԸ ԵՍ ԷՒ մասամբ՝ Գարօն. ան խորհրդարանէն դուրս գնել կրնար հասկցնել ինքզինք: Մտածեցի եւ որոշեցի աշակերտի դերի մէջ մտնել եւ թուրքերէն դասեր առնել: Յայտնի Ստեփան Կուրտիկեանն էր իմ ուսուցիչը՝ վարպետ Թուրքերէնի, Արաբերէնի եւ Պարսկերէնի» («Իմ Յուշերը», Բ., էջ 91)
[Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Վեց տարի աշակերտած ըլլալով բարեյիշատակ եւ տաղան-
դաւոր լեզուազէտ ուսուցչիս, Ստեփան Կուրտիկեանի, եւ շատ մօտէն
ճանչնալով անոր խիստ բժախնդի բնաւորութիւնն ու ազգասիրա-
կան խոր զգացումները, կրնանք երեւակայել թէ ո՛ր պիտի տառա-
պակոծ սրտով եւ խիստ դառն խորհուրդներով, թուրքերէն լեզուն



ԳԵՂԱՄ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

պիտի սորվեցնէր իր մօրուսաւոր աշակերտին, որպէսզի ԱՆ Ի ՎԻ-
ՃԱԿԻ ԸԼԼԱՐ մէկ-երկու թուրքերէն բառեր իրարու քով բերելով,
թրքական այս արիսպագոսին առջեւ պարզելու իր ներկայացուցած
Վասպուրականի Հայութեան հազար ու մէկ բողոքներն ու կրած ա-
նիրաւութիւնները եւ դարման հայցելու... իր այդ կիսատ-պոատ
թուրքերէնով...:

* * *

[Բ.] Արեւմտահայ անմահ երգիծարան Երուանդ Օտեան,
1914-ին, Պոլսոյ «Վերջին Լուր» օրաթերթի իր «Երեկոյեան Տոմսեր»
սիւնակին մէջ, վաւերացի ձեւով կը նկարագրէր թէ ի՛նչպէս Մուշի
երեսփոխան Գեղամ, որ բնաւ Փրանսերէն չէր գիտեր, միշտ կ'ընդ-
միջէ ու կ'ընդհատէ եղեր Ֆրանսայի ներկայացուցիչին խօսակցու-
թիւնը՝ իր անդադար արտասանած «Մուշ» բառով, անոր ուշադրու-
թիւնը իր ծննդավայրին վրայ հրաւիրելու գիտաւորութեամբ, Հայ-
կական Բարենորոգումներու բանակցութեանց ընթացքին, որ ատեն
Ֆրանսայի բանագնացը կը հարկադրուի ընդհատելու իր խօսքը, եւ
իր պոստուն հայեացքը Գեղամին ուղղելով՝ հարցնելու Փրանսերէն... —

«— Mais quelle mouche le picque?» («Բայց ի՞նչ ճանճ է որ
կը խայթէ զայն»): Մուշ բառը Փրանսերէն կը նշանակէ ֆանֆ:

* * *

[Գ.] Ըստ երեւոյթին, Բիւրոյական յուշագիրը երբե՛ք չի
մտահոգուիր ՄՕՏԱԻՈՐ ԱՆՑԵԱԼԻ պատմութեան «եղծում»ով: Իր
մտահոգութեան միակ առարկան՝ «ապագայ պատմութիւնն» է, զոր
ո՛չ ոք իրաւունք ունի «եղծելու»:


Մենք անկեղծօրէն կը թելադրենք դաշնակցական բոլոր յու-
շագիրներուն եւ «պատմագիր»ներուն, որ անկեղծութիւնն ու ազ-
նուութիւնը, բայց մանաւանդ՝ ՔԱԶՈՒԹԻԻՆՆ ունենան գրի առնելու
մօտաւոր անցեալի իրենց ազդեցութիւնը գործունէութեան պատմու-
թիւնը՝ այնպէս, ինչպէս որ ԱՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵՐ Է, առանց գունա-
ւորումի եւ առանց «եղծում»ի:

Գալիք սերունդներու անկողմնակալ պատմարանները ամերա-
ծեշտ հոգը կը տանին «Ապագայ պատմութեան»:

Այդ մասին թո՛ղ անհոգ ըլլան իրենք:

Գ Լ ՈՒ Խ Բ. Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Վաճան Փափազեանի ներկայացուցած Տարօնի պատմութեան բաժինին մէջ, — եւ նոյն համեմատութեամբ ալ՝ իր յուշերու մնացեալ մասերուն մէջ, — առաջին ակնբախ քերութիւնը, որ անմիջապէս՝ ընթերցողի — եւ մանաւանդ՝ ուսումնասիրող ընթերցողի — ուշադրութիւնը կը գրաւէ, սխալ ժամանակագրութիւնն է, կա՛մ, աւելի ճիշտ, ՈՒՂԻՂ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՐՁԱԿ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ:



ՊԱՏՄԱՀԱՅՐ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Պատմութիւն մը չի՛ կրնար վաւերական կամ ճշմարիտ նկատուիլ՝ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, այսինքն, առանց թիւի ու թուականի:

Այս բացարձակ ճշմարտութիւնը կ'ընդունէր եւ կը յայտարարէր մեր բազմերախտ Պատմահայր Մովսէս Խորենացին ալ, — Տա-

րօնի մեծագոյն հանճարներէն մին, — ասկէ 1500 տարիներ առաջ, երբ իր տիեզերահոշակ պատմական երկասիրութեան մէջ կը գրէր.—

«Ո՛չ է պատմութիւն ճշմարիտ, առանց ժամանակագրութեան» («Պատմութիւն Հայոց», Բ., 2Բ.) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Այս յոյժ կարեւոր պատմա-գիտական աղբակը, խիստ ցաւազինօրէն, անտես առնուած է Վաճան Փափազեանի յուշերուն մէջ:

Եւ երբ, այս կամաւոր եւ դիտումնաւոր ԱՆՏԵՍՈՒՄԻ մասին, մենք դիտողութիւն կ'ընէինք իրեն, ցասկոտ ու յանդիմանական շեշտով մը, յուշագիր Փափազեան կը պատասխանէր մեզի.—

«Թուականներու մասին՝ ո՛չ սխալ եւ ո՛չ ալ «անհեթեթ» վրիպումներ կան» (18 Նոյեմբեր 1954 թուակիր՝ իր երկրորդ նամակը) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.], որով մենք ՀԱՐԿԱԴՐՈՒԹՅԱՆՔ մէկէ աւելի օրինակներ բերելու իր յուշերէն՝ ապացուցանելու համար մեր դիտողութեանց ճշտութիւնը, իր սխալ թուականներու եւ մասնաւորապէս՝ որոշ եւ քիչ թուականներ ԶԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Այստեղ կը փափաքինք մեր յարգելի ընթերցողներուն ալ ներկայացնել այդ փաստարկութիւնները, որոնցմէ ոմանց մասին գրած էինք արդէն իրեն՝ յուշագիր «պարօն»ին:

ա.— 10 Նոյեմբեր 1954 թուակիր մեր երկրորդ նամակով կը գրէինք իրեն.—

«Միրիջանեան Հայկի տան մէջ գումարուած ժողովի մասին («Իմ Յուշերը», Բ., էջ 355) արդէն գուշակած էի՝ իմ Առաջին Նամակիս մէջ որ հաւանաբար գաղտնի ժողով ըլլալուն համար, անոր մասին որեւէ յիշատակութիւն չէ՛ եղած միւս յուշագիրներէն: Այդ ժողովը գումարուած է 1915 Յունիսի երկրորդ կէսէն յետոյ (ըստ ձեր պատումին), որ ատեն Պրն. Մատթէոս (այս կովկասահայ պատուական ազգայինը Մուշի մէջ կը ճանչցուէր Պրն. Աւետիս անունով), Սասունէն քաղաք եկած էր՝ ձեզ լեռը տանելու:

«Այս թուականը միտքերնիդ պահեցէ՛ք:

«357րդ էջին վրայ կը գրէք. «Յունիսի վերջն էր, դեռ բոլորովին չապաքինած հիւանդութենէս, խումբին հետ ոտքով ճամբայ ինկայ»:

«360րդ էջին վրայ ալ կը գրէք. «Ամիսը անցած էր, մինչ մենք այդպէս անիմաստ ու աննպատակ կը թափառէինք լեռներու գագաթները»:

«Ա՛րդ, Յունիսի վերջէն ամիս մը ետք, կ'ընէ Յունիսի վերջը, անանկ չէ՞»:

«Միտքերնիդ պահեցէք այս թուականն ալ :

«Յետոյ, 361րդ էջին վրայ կը գրէք. «Ամիս մը յետոյ միայն՝ Սասունէն լուր առինք. Կորիւնն էր որ դիշեր մը պղտրիկ խումբով եկաւ մեր քով» :

«Հիմա՛, Յուլիսի վերջէն «ամիս մը յետոյ», այսինքն 30 օր եթէ աւելցնենք այդ թուականի վրայ, կ'ունենանք Օգոստոս 30 թուականը :

«Ճի՞շտ է :

«Շարունակե՛նք ընթերցումը :

«Ծովասարի վրայով արդէն հասած էք Սասուն եւ (Սեմալ) գիւղի եզրին, խոշոր ծառի մը տակ հաւաքուած Սասունարնակ ընկերներու — Գեղիէգուղանցի Կիրակոսի, Սեմալայ Գիւթիկ Մանուկի, Մըլոյի, Կորիւնի, Ռուբէնի — հետ կը խորհրդակցիք (մի՛ մոռալի, Մըլոյի, Կորիւնի, Ռուբէնի — հետ կը խորհրդակցիք (մի՛ մոռալի, նաք թուականը — Օգոստոս 30, ըստ ձեր ժամանակագրութեան), յարձակողական եւ պաշտպանողական ծրագիր եւ գործելակերպ որոշելու մասին: Այդ խորհրդակցութեանց ընթացքին, տիրող կարծիքը այն համոզումն է որ «կառավարութիւնը ՆԱԽ Սասունը պիտի զարնէ, ԱՊԱ՝ քաղաքն ու դաշտը. այդ պատճառով ալ՝ որոշած էին որ ամէն ինչ Սասունի համար գործածուի» («Իմ Յուշերը», Բ., էջ 363) :

«Այս բոլորը ցոյց կու տան թէ այդ խորհրդակցական ժողովը տեղի ունեցած է՝ մէկ կողմէն, Օգոստոս 30-ի ատենները (ըստ ձեր ժամանակագրութեան), իսկ միւս կողմէ ալ՝ Դուրանի, Մուշ քաղաքի եւ Սասունի կռիւներէն ալ առաջ :

«Կրնա՞ք այն թուականները ՀԱՇՏԵՑՆԵԼ իրարու հետ :

«Դաշտը կոտորուեր է Վարդավառի Կիրակին, Յունիս 28-ին : Մուշ քաղաքը դիմադրեր ու կռուեր է Յունիս 29-30-ին, Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերուն. իսկ Սասուն ալ կռուեր ու ինկեր է Յուլիս 20-22-ի ընթացքին, ինչպէս ցոյց կու տան ձեռքիս տակ գտնուող մէկէ աւելի յուշեր եւ աղբիւրներ :

« Ահա՛, այս պատճառով էր որ Առաջին Նամակիս մէջ գրած էի. — «Թուականներու ԱՆՀԵԹԵԹ՝ ՎՐԻՊՈՒՄՆԵՐԻ» :

«Միսա՞լ եմ. կրնա՛յ ըլլալ : Հաճեցէք լուսարանել զիս :

«Յետոյ, 364րդ էջին վրայ կը շարունակէք. — «Այսպէս ծանր մտահոգութիւններով եւ տատանումներով՝ անյաղթելի դժուարութիւններու հանդէպ գրեթէ շաքաթ մը անցուցինք (այսինքն, Սեպտեմբերի առաջին շաբաթը), երբ Վարդավառի օրը, կէսօրէն առաջ, Կուրտիկի լեռան մեր պահակներէն սուրհանդակ մը եկաւ յայտնե-

լու(1) թէ թնդանօթներու ուժգին որոտ լսած էին(2)... եւ այլն :

«Այդ որոտը Վարդավառի Կիրակին 25-ի որ լսուած էր, որովհետեւ ատանկ որոտ չկար դեռ : Թնդանօթները սկսած են գոռալ քաղաքի վրայ, Վարդավառի ԵՐԿՈՒՇԱԲԹԻ առաւօտեան ժամը իննի ատենները, Մեռելոցի օրը, Յունիս 29-ին, երբ Լեւոն Ասլանեան, որ մեր դրացին էր, առաջին անգամ կը կրակէ թուրք ոստիկաններու վրայ» :

Ինչպէս որոշ կը տեսնուի այս երկար եւ քիչ մը մանուածապատ բացատրութիւններէն, մեծ շփոթութիւններ եւ վրիպումներ կան յուշագիր Վահան Փափազեանի այս պատմութեան մէջ՝ ժամանակագրական տեսակետով ալ, եւ այդ շփոթութիւններն ու վրիպումները ԴԵՆԻ կը շարունակուին յուշագիր բերրոյականի գանկին մէջ, նոյնիսկ մինչեւ հիմա ալ [Ա.] :

բ. — Տարօնի ժողովրդասէր Առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Խարախանեանի՝ թիֆլիսի համաճարակ հիւանդութենէն վարակուելու եւ մահուան պարագաներու մասին խօսած ատեն, յուշագիր Փափազեան կը գրէ. —

«Իր դուռը եւ սեղանը ամէնքի առջեւ բաց էին եւ մասամբ այդ բանի պատճառով՝ վարակումը շատ դիւրին էր : Իր ննջարանը, որ եւ սեղանատուն էր միաժամանակ, ոչիչներու բոյն էր դարձած — խումբերով կը շրջէին անկողնին եւ սեղանին վրայ... : Ու ՕՐ ՄԸ ինկաւ անկողնին. վարակուած էր... : Միրտը շատ թոյլ էր, տարիքը վաթսունը անց, չկրցաւ տոկալ եւ ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐԸ մեռաւ : Սուգը պատեց Տարօնի Աշխարհը» («Իմ Յուշերը», Բ., էջ 351) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ո՞ր ամսուան ո՞ր օրն էր այս «ՕՐ ՄԸ» անորոշ թուականը, որ ատեն Տարօնի շատ սիրուած Առաջնորդը ինկած էր մահուան անկողինը եւ «ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ»-ն ալ՝ վախճանած :

(1) Պետք չկար «սուրհանդակ»էն իմանալու այդ թնդանօթի «ուժգին որոտի մասին» : Իրենք, Սեմալ գիւղի մէջ ալ, շատ յստակ կերպով ԿՐՆԱՅԻՆ ԼՍԵԼ քաղաքի վրայ գոռացող թնդանօթներու որոտը : Այս մասին մանրամասնօրէն խօսած ենք արդէն «Տարօնապատում»ի Մասն Առաջինի մէջ (տեսնել Գլուխ ԺԵ.) :

(2) Ո՛չ թէ «արշալոյսին», այլ «առաւօտեան ժամը իննէն» ըսկըսեալ (Տէր Նիզիշ Գահանայ Տէր Պարսամեան, «Տարօնը ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը», էջ 50) : Իսկ Ռուբէն կը գրէ. — «Էսօր կէսօրին, թոփի ձայներ առանք, շատ խորունկ, կարծես գուրի մէջէն» («Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Զ., էջ 79) :

Տարօնի Ազգային Առաջնորդարանի նախկին փոխանորդ, յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի յուշերէն՝ շատ որոշ եւ յստակ կերպով գիտեմք որ Պարսամեան Սրբազանը հիւանդացեր է «Ապրիլ 2-ին» եւ «ԵՕԹԸ ՕՐ ՎԵՐՁ, Ապրիլ 9-էն 10 ԼՈՒՍ-ՆԱԼՈՒ ԳԻՇԵՐԸ կը վախճանի» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Ջարգը», էջ 41) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]

Այս թուականը կը ստուգուի Մուշէն՝ Պոլսոյ Ազգային Պատրիարքարանը ղրկուած հեռագրով ալ, որ կը կրէ «10 Ապրիլ 1915» թուականը՝ գուժելով Տարօնի շատ սիրուած ու յարգուած Առաջնորդի անակնկալ ու անժամանակ կորուստը:

Ահաւասիկ այդ հեռագիրին բովանդակութիւնը, զոր բարեհաճեցաւ մեզի ղրկել թրքահայոց Պատրիարք Հանգուցեալ Գարեգին Արքեպիսկոպոս Պաշտուրեան:

«Գալով Պարսամեան Սրբազանի մահուան պարագային, ան տեղի ունեցած է 1915 Ապրիլ 10ին՝ թիֆլիսի հետեւանքով, ինչպէս ցոյց կու տայ հեռագիրը: Թաղուած է Ս. Կարապետ վանքին մէջ»:

Շատ որոշ կը տեսնուի որ Վահան Փափազեանի անորոշ «օր մը»ն, որ ատեն Տարօնի Առաջնորդը հիւանդ ինկած էր մահուան անկողինը, յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի ցոյց տուած «Ապրիլ 2»ն է եղեր, եւ «ութերորդ օր»ն ալ՝ կրկին անգամ, նոյն հոգեւորական յուշագիրին յիշած «Ապրիլ 10» թուականը:

Պարսամեան Սրբազանի մահուան յոյժ տխուր լուրը տալէն յետոյ, յուշագիր Փափազեան կը շարունակէ.—

«Մահուան վերջին վայրկեաններուն՝ ՀՈՆ ԶԵԻ. ես ալ վարակուած էի անկէ եւ ՆՈՅՆ ՕՐԸ անկողին ինկայ՝ Զոյնոյ Գասպարի սենեակին մէջ: Անկողնի մէջէն էր որ լսեցի եկեղեցիներու զանգակներու տխուր ղօղանջը, մեծ հովիւին մահուան բօթը: Առաջնորդարանը, ձորի միւս կողմը, ճիշտ դիմացս էր, յենուեցայ բարձին ու նայեցայ թափօրին...» («Իմ Յուշերը», Բ., էջ 351) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Այս վերջին պարբերութենէն, բացայայտ կ'ըլլայ որ Վահան Փափազեան ալ վարակուած էր թիֆլիսի համաճարակէն եւ «նոյն օրը», այսինքն, Պարսամեան Սրբազանի մահուան օրը, Ապրիլ 10-ին, ինկած անկողինը:

Այսքան բացայայտ ըլլալով հանդերձ՝ Պարսամեան Սրբազանի մահուան եւ իր հիւանդութեան թուականը, — Ապրիլ 10, — մեծ զարմանքով կը կարգանք հիւանդ յուշագիրին հետեւեալ առած-զական տողերը, զոր կ'ընդգծենք.—

«Ապրիլի կեսերուն էր որ հիւանդացայ, ամիս մը ԿԱՐԾԵՄ

բոլորովին զգայազիրկ վիճակի մէջ էի» (նոյն, անդ), եւ յետոյ կը շարունակէ.—

«Յուլիսի ՎԵՐՁՆ ԷՐ, դեռ բոլորովին չապաքինած ծանր հիւանդութենէս, խումբին հետ ոտքով ինկայ ճամբայ» դէպի Հաւատորիկի լեռները (նոյն, էջ 357):

Այս վերջին պարագան պիտի քննենք իր կարգին (Տեսնել այս ուսումնասիրութեան Գլուխ Գ.ի 7-րդ կէտի «Դիտողութիւնը»):

Ատոնք են տիրական զիծը եւ յատկանիշը Բիւրոյական երեսփոխան Վահան Փափազեանի ժամանակագրութեան — անորոշութիւն, տարտամութիւն եւ եմփադրութիւն:

Բայց շարունակենք տալ քանի մը օրինակներ եւս:

դ.— «Օգոստոսի մէջ էր, կարծեմ»ի պարագան՝ ընդարձակօրէն եւ մանրամասն կերպով պիտի ներկայացնենք, երբ քննութեան ենթարկենք Անդրանիկի հանդէպ՝ Վահան Փափազեանի սնուցած «դառնութեան» պատճառը եւ անոր յարակից բոլոր պարագաները (Տեսնել այս Ուսումնասիրութեան Մասն Երկրորդի Դ., Ե., Զ., Է., Ը., Թ., Ժ., ԺԱ. եւ ԺԲ. Գլուխները):

դ.— Յուշագիր Վահան Փափազեան կը գրէ.—

«Կառավարական ուժերը եւ քրդական աշխրէթները հետզհետէ կը սեղմէին իրենց պաշարման օղակը Սասունի շուրջ: Գրեթէ ամիսէ մը ի վեր՝ մեր յարաբերութիւնը ԸՆԴՀԱՏՈՒԱԾ ԷՐ հոն եզոզներուն հետ: Մտահոգ էիմք» (նոյն, էջ 371) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Տարօնցի արժանահաւատ յուշագիրներէն (տեսնել «Տարօնապատում»ի Մասն Առաջինի Իէ. եւ ԻԸ. Գլուխները) կը տեղեկանանք որ Վահան Փափազեան, Յուլիս Մէկին, խումբ մը սպառազէն երիտասարդ հայուկներով, որոնց մէջ կը գտնուէր նաեւ Մուշ քաղաքացի յայտնի յեղափոխական մարտիկ Պզտիկ Արամ Յակոբեանը, Սասունէն վերադարձեր է դէպի Հաւատորիկի եւ Քանայ լեռները՝ այդ վայրերու մէջ ապաստան գտած 25-30 հազար յուսահատ փախըստականներու «պաշտպանութեան» եւ «պահպանութեան» նպատակով (նոյն, էջ 366), եւ նոյն օրուան երեկոյեան ալ՝ հասեր է Հաւատորիկ զիւղի ամբարանոց վրանները, Մովսսար լեռան կանաչաւէտ լանջերուն վրայ:

Այս Յուլիս Մէկէն «ԳՐԵԹԷ ԱՄԻՍԷ ՄԸ Ի ՎԵՐ» կ'ընէ Օգոստոս Մէկ, որ ատեն՝ «դիտակովս» ժամերով կը գննէի մեր ետեւի լեռները... ՕՐ ՄԸ նշմարեցի մեզմէ շատ վերը բարձրացող դազաթի քովէն շարունակաբար յառաջացող շարքը մարդկանց, որոնցմէ ստուար խումբ մը տեղաւորուեցաւ հոն: ... Մեզ խիստ մտահոգեց մանաւանդ՝ մեր դիրքերուն տիրապետող բարձր դազաթի խումբը—

րու երեւումը. երկու նպատակ կրնային ունենալ — կտրել մեր յարաբերութեան գծերը, կա՛մ յարձակիլ Հաւատորիկի լեռներու մէջ եղող Հայերու վրայ: Այս հաւաքական վտանգին հանդէպ՝ զօրեղ խումբ մը կազմուեցաւ ամենէն փորձառու եւ անվեհեր մեր մարտիկներէն, որոնց յանձնարարուած էր գիշերով անցնիլ Սասունի այդ նամբան բռնող քշնամիին քիկունքը եւ յանկարծակիի բերելով՝ ջարդել ու հաստատուիլ հոն: Յաջողութեան պարագային, մեր քիկունքը ապահովուած կ'ըլլար եւ Սասունի նամբան ալ բաց՝ մեր առջեւ» (նոյն, էջք 371-372) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Այս զինուորական շարժումները տեղի կ'ունենային, — ըստ Վահան Փափազեանի պատմածին — Սասունի վերջին զոյամարտին նախընթաց մէկ-երկու օրերու ընթացքին:

Կարելի՞ է այդ:

Տարօնցի գլխաւոր յուշագիրներ Միսակ Բղէեանի, Յակոբ Տէր Զաքարեանի եւ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի վկայութիւններէն մենք որոշապէս գիտենք որ թրքական այս զինուորական նախապատրաստական շարժումները տեղի կ'ունենային Յուլիս 18-19-ի օրերուն, Առաքելոց վանքի մէջ բնակող թուրք զինուորներու կողմէ՝ աւանակներու կոնակներով թնդանօթներ փոխադրելով Սասուն, Ծիրնկատարի լեռնային նեղ ու զիկզակ ճամբաներով. իսկ Սասունի վրայ՝ թրքական կանոնաւոր բանակի յարձակումը սկսած է Յուլիս 20-ին, առաւօտեան շատ կանուխէն, եւ ամէն քան վերջացած՝ Յուլիս 22-23-ի ԳԻՇԵՐԸ՝ Դաշնակցութեան Բիւրոյի լիազօրներկայացուցիչ եւ Սասունի հայկական ուժերու ղեկարգոյն հրամանատար Ռուբէնի զաղտագողի եւ դասալիք փախուստով ու անյայտացումով...:

Ի՞նչպէս կարելի է, ուրեմն, Օգոստոսի սկիզբները (ըստ Վահան Փափազեանի ժամանակագրութեան) նշմարել շարքը «յառաջացող մարդկանց», որոնք կը ջանային գոցել Սասունի այդ կողմի անցքն ալ, որպէսզի «սեղմէին իրենց պաշարման օղակը Սասունի շուրջ» (նոյն, անդ) այնպիսի պահու մը, որ ատեն ԱՐԴԷՆ Սասուն ՊԱՐՏՈՒԱԾ ԷՐ՝ աւելի քան ՄԷԿ ՇԱԲԱԹ ԱՌԱՋ (Յուլիս 22-ին), Սասունի հայկական ուժերու հրամանատարը, Ռուբէն, իր 10-15 Սասունցի մանկլաւիկներով՝ խափանած, եւ բնիկ Սասունցի ու Սասուն ապաստան գտած 30-35 հազարէն աւելի տազնապակոծ Հայութիւնը մատնուած թրքական վայրագ զինուորներու եւ քուրդ կատաղի խուժանի խուժուժ մոլեգնութեանց...:

Այս մասին աւելի հանդամանօրէն եւ մանրակրկիտ կերպով պիտի խօսինք, երբ պատեհութիւն ունենանք քննարկելու Սասունի

վերջին զոյամարտի զարհուրելի ողբերգութեան յոյժ սրտակեղէք դրուագը, որ «Տարօնապատում»ի այս քննական ուսումնասիրութեան Մասն Երկրորդը պիտի կազմէ:

* * *

[Ա.] Յուշագիր Վահան Փափազեան, իր երրորդ նամակով (18 Նոյեմբեր 1954 թուակիր) կը պատասխանէ —

«Թուականներու մասին՝ ո՛չ սխալ եւ ո՛չ ալ «անհեթեթ» վրիպումներ կան: Եթէ ուշագիր ըլլայիք, պիտի տեսնէիք որ էջ 360-ի եւ 361-ի մէջ յիշուած ամիսը նոյնն է. ոճի խնդիր է պարզապէս. ուրեմն խօսքը ՅՈՒՆԻՍԻ ՍԿԻՋԲԻ ՄԱՍԻՆ է» [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Շա՛տ լաւ. առարկութեան սիրոյն, ընդունինք թէ «պարզապէս ոճի խնդիր» ըլլալուն պատճառով, ճիշտ է եղեր իր ցուցմունքը:

Այդ պարագային, փոխանակ մինչեւ Աեպտեմբերի առաջին շաբաթը երթալու, ամիս մը պակսեցնենք այդ հաշիւէն, եւ նորէն կը տեսնենք որ Օգոստոսի առաջին շաբաթուան ընթացքին էր որ կը լսեն Սասունի վրայ գոռացող թնդանօթներու որոտը, ինչ որ նոյնքան անհեթեթ յայտարարութիւն եւ ժամանակավրէպ սխալ մըն է:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ.— Վահան Փափազեան, իր այդ նամակին մէջ (Նոյեմբեր 18 թուակիր), փոփոխութեան ենթարկեր է «Յունիսի վերջ»ի ժամանակը, երբ այդ նամակով կը յայտարարէ —

«Ուրեմն, խօսքը Յունիսի ՍԿԻՋԲԻ ՄԱՍԻՆ է, մինչդեռ իր յուշերու մէջ՝ միշտ «Յունիսի վերջ» նշանակած է («Իմ Յուշերը», Բ., էջ 357):



Գ Լ ՈՒ Խ Գ .

Ք Ն Ն ՈՒ Թ Ի Ի Ն
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն
Մ Ե Կ Ք Ա Ն Ի ՈՒ Ր Ի Ծ Կ Ե Տ Ե Ր ՈՒ Ե Ի Ս

Ե. — Բիւրոյական յուշագիր Վահան Փափազեան կը գրէ .—

«Նոյն օրը, երբ մենք ցաք-ցրիւ կը նահանջէինք դէպի Քան լերան դազաթները, Սասունի յարձակումը սկսած էր» («Իմ Յուշերը», Բ., էջ 376) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Վերոյիշեալ Տարօնցի յուշագիրներէն գիտենք որ այս «նոյն օրը», երբ տեղի ունեցան այս «ցաք-ցրիւ» նահանջը եւ զայն նախորդող կռիւը, Յուլիս ամսուան ՏԱՍՆԵԻԻՆՆԵՐՈՐԴ ՕՐՆ ԷՐ : Փափազեան կը յիշէ դէպքը՝ առանց յիշելու թուականը, եւ կը շարունակէ .—

Սասունի վրայ գոռացող «թնդանօթներու որսորդ ՇԱՏ ՈՐՈՇ ԿԸ ՀԱՍՆԷՐ ՄԵԶԻ, որ շարունակուեցաւ ԵՐԿԱՐ ԱՏԵՆ, մեր՝ Քան եղած միջոցին» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ո՞րքան երկար էր այս «երկար ատեն»ը :

Յուշագիր Վահան Փափազեանի այս երկու կարճ բառերուն անմիջապէս յաջորդող «Մեր՝ Քան եղած միջոցին» ՇՓՈԹԵՑՆՈՂ, բայց մանաւանդ ՄՈՂՈՐԵՑՆՈՂ բացատրութեան՝ մենք իրաւունք կու տանք մեզի հետեւցնելու թէ ինք լսած է այդ որսորդ «երկար ատեն», «Մեր՝ ՔԱՆ ԵՂԱԾ ՄԻԶՈՑԻՆ», այսինքն, որքան ատեն ինք կը գտնուէր Քան լեռը :

Բնիկ Տարօնցի յուշագիրներէն մենք արդէն տեղեկացանք որ Վահան Փափազեան, Յուլիս Մէկին, Սասունէն վերադառնալէն ետք, Հաւատորիկի եւ Քանայ լեռները մնացեր է մինչեւ Սեպտեմբեր վեց, այսինքն, Յուլիս եւ Օգոստոս ամիսները եւ Սեպտեմբերէն ալ՝ վեց օր, որ ատեն, ինք եւ Ռուբէն, 32 կամ 36 հոգիներ սպառազէն խումբով մը, զաղտազողի, չուեցին Կովկաս :

Ուրեմն, վերոյիշեալ «երկար ատեն»ը կը նշանակէ՞, արդեօք, Յուլիս 20-էն, որ ատեն՝ Թրքական Թնդանօթները սկսած են գոռալ Սասունի վրայ, — մինչեւ Սեպտեմբեր 6 :

Հարկաւ Ո՞՞ջ :

Սասունի վրայ՝ Թրքական բանակի յարձակումը սկսած է

ՅՈՒԼԻՍ 20-ին եւ Թնդանօթները սկսած են գոռալ այդ օրուան առաւօտեան շատ կանուխէն, եւ ամէն բան ՎԵՐՋ ԳՏԱԾ Յուլիս 22-23-ի ԳԻՇԵՐԸ :

Հետեւաբար, Վահան Փափազեանի «երկար ատեն» երկու կարճ բառերու տակ ծածկուած է միայն ու միայն ԵՐԵՎ ՕՐՈՒԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻԶՈՑ ՄԸ, իսկ «Մեր՝ Քան գտնուած միջոցին» բացատրութիւնն ալ՝ անիմաստ գրաբանութիւն է պարզապէս :

Կ. — Ան, նոյնպէս, ունի երկրորդ «երկար ատեն» բացատրութիւն մը եւս, երբ կը գրէ հետեւեալ տողերը .—

«ԵՐԿԱՐ ԱՏԵՆ, ո՛չ մէկ լուր ունէինք Սասունի կռիւներէն եւ անոնց հետեւանքներէն : Թնդանօթի ձայները ԴԱՐՄԱԾ ԷՒՆ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Անհուն եւ անսահման ժամանակի ո՞րչափ մասը պէտք է հասկընանք յուշագիր «պարոն»ի այս երկրորդ «երկար ատեն» երկու բառերով ալ : Մենք չենք կրնար կարգալ Բիւրոյական երեսփոխանի միտքը, որպէսզի որոշապէս ըսենք թէ անսկիզբ եւ անվախճան ժամանակի ո՞րչափ մասը ան ունէր ի մտի՝ այդ նախադասութեան վերոյիշեալ երկու կարճ բառերը գրի առած ատեն . — մէ՞կ օր, երկո՞ւ օր . մէ՞կ շաբաթ, երկո՞ւ շաբաթ . մէ՞կ ամիս, երկո՞ւ ամիս . մէ՞կ տարի, երկո՞ւ տարի . մէ՞կ դար, երկո՞ւ դար . . . :

Բարեբախտաբար, մեր հայրենակից նոյն յուշագիրները, հոս ալ, օգնութեան կը հասնին մեզի եւ բացորոշ կերպով յստակ կ'ընծայեն այդ կէտն ալ :

Մեր աւագ յուշագիր Միսակ Բոչեան, որ նոյնպէս Քան լեռը կը դռնուէր այդ ատեն, Վահան Փափազեանի քով, կը գրէ .—

«Սասնոյ լեռներէն, Ծովասարի միւս կողմէն, սկսաւ լսուիլ Թնդանօթի որոտը : Բոլորս ալ հասկցանք որ Թուրք եւ Հայ վերջին մենամարտը սկսած է : Այլեւս ուրիշ մտածմունք չունէինք : Ոմանք յուսալից էին մեր տղոց յաղթութեան, ոմանք ալ՝ յոռետես . իսկ ես ա՛լ աւելի յոռետես էի՝ գիտնալով այնտեղի պարէնի պակասութիւնը՝ այդքան փախստական ժողովուրդին համար ու անկարելի կը համարէի մերիններուն երկար դիմանալը, թէեւ մերինները ունէին երեք հազարէն աւելի կանոնաւոր զէնք եւ այդքան ալ՝ անկանոն զէնքեր :

«ԵՐԵՎ ՕՐ ՎԵՐՋ, Թնդանօթներու որոտը դադարեցաւ :

«Այդ դադարը թէ՛ լաւ եւ թէ՛ գէշ նշան էր : Երկուքէն ո՞ր մէկն էր, այսինքն, մերո՞նք ջարդեցին, փախցուցին Թշնամին, թէ ո՛չ՝ Թշնամին յաջողեց է քանդել հայ կտրիճ մարտիկներու արծուերոյնը :

«Զէինք կրնար գիտնալ եւ մեծ տարակուսանքի մէջ էինք :

երբ ՉՈՐՐՈՐԻ ՕՐԸ, Սասունէն երեք Սասունցի սուրհանգակներ եկան՝ Ռուբէնէն ՆԱՄԱԿ ԲԵՐԵԼՈՎ Փափազեանին» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 442-443) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ուրիշ յուշագիր մը, Մուշ քաղաքացի պատանի Մուշեղ Դուռնեան, որ նոյնպէս Քան լեռը կը գտնուէր այդ ատեն, կը գրէ.—

«Յուլիս 24-ին, նոր փախստականներ կը հասնէին Սասնոյ լեռներէն՝ քան չազար Սասունցիներու մահազոյժը բերելով» (նոյն, էջ 656) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] [Ա.] :

Այս երկու ակնատես յուշագիրներու արժանահաւատ վկայութեանց համաձայն, կը տեսնենք որ Վահան Փափազեանի վերոյիշեալ «ԵՐԿԱՐ ԱՏԵՆ» երկու կարճ բառերու ժամանակամիջոցը... ՄԵԿ ՕՐ Է ԵՂԵՐ ՄԻԱՅՆ... :

է.— Երբ Ռուբէն եւ Վահան Փափազեան, յոյսերնին վերջնականապէս կտրելով ոռուական բանակի եւ Հայ կամաւորներու շուտափոյթ ժամանումէն, վերջնականապէս ԿՈՐՈՇԵՆ ԼՔԵԼ Տարօնի աշխարհը եւ Տարօնցի անտէր, անպաշտպան եւ սովալլուկ բազմահազար փախստականները՝ իրենց սեւ ճակատագիրին, ու 36 հոգինոց խումբով մը(1), կծիկնին կը դնեն դէպի ոռուական բանակը, Վահան Փափազեան, — համաձայն իր բարի սովորութեան, — ԶԻՅԵՆՆԵՐ նոյնիսկ թուականը՝ իրենց համար խիստ ցակատագրական եւ յոյժ կարեւոր այդ ԲԱՆՏՈՐՈՇ ՕՐՈՒԱՆ, յորում ձեռնարկեցին իրենց «հերոսական» փախուստին, այլ կը գրէ.—

«Պէտք էր օր առաջ մեկնել. այլեւս անհնար էր այդ պայմաններու մէջ մնալ. նոյնիսկ միջոց չունէինք սպասելու որ լուսինը վեր-

(1) Յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան կ'ըսէ որ անոնց խումբը կը բաղկանար 33 անձերէ եւ մեկնումի օրն ալ՝ Սեպտեմբեր 6-ի երեկոն («Տարօնոյ ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», էջ 124) : Միսակ Բդէեանի պատմածին համաձայն, այդ խումբը կը բաղկանար 32 անձերէ («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 478) :

Կարօ Սասունի՝ Սեպտեմբեր 8-ին ցամաքը կը դնէ այդ խումբը, որուն թիւը կու տայ 33 («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 997), առնելով Տէր Եղիշէի յուշերէն :

Դասալիք «պարոն»ներու այս փախստական խումբը՝ ցամաքն երեք գոհեր տալէն ետք, կը հասնի ոռուական բանակը : Այս երեք գոհերու պատմութիւնը պիտի տանք աւելի յետոյ :

Ջանայ(2) . գիշերները կէս-ցերեկ էին՝ շնորհիւ խիստ պարզկայ լուսնի լոյսին : Վճռեցինք եւ ԻՐԻԿՈՒՆ ՄԸ, երբ դեռ նոր արեւը անհետացաւ լեռնաշղթային ետեւ, կարգի ձգուած մեր 36 հոգինոց խումբը արագ սկսաւ իջնել լեռն ի վար...» («Իմ Յուշերը», Բ., էջ 396) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

Կրկնակ եւ երրեակ դասալիք հրամանատարի(3) եւ բիւրոյական երեսփոխանի այս փախստական խումբը, երկար թափառումներէ յետոյ, կը հասնի ամայի գիւղ մը, Մանազկերտի շրջանին մէջ :

«Ուղարկեցինք գիւղը, — կը գրէ դասալիք յուշագիրը, — բակի մը մէջ խոշոր կրակ մը վառուած էր ու անպահ կաթսայ մը կ'ետար վրան. ճաշ էր. մեր կերակուրը պատրաստ էր... ՀԻՆԻ ԱՄԻՍԷ Ի ՎԵՐ տաք կերակուրի երես չէինք տեսած» (նոյն, էջ 408) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Հո՛ս, այս մէջբերումի մէջ, ամենէն կարեւոր կէտը՝ մեզի համար, «ՀԻՆԻ ԱՄԻՍ»ի խնդիրն է :

Դարձեալ նոյն հարցումը .

— Ուրկէ՞ է հաներ դասալիքներու պարագլուխ մեր փախստական յուշագիրը՝ այս «հինգ ամիս»ի հաշիւը :

Ըստ իր յուշերուն, Փափազեան՝ Մուշ քաղաքէն դէպի Հաւատորիկի լեռները խոյս տուած է «Յունիսի վերջը», որ ատեն «դեռ բոլորովին չապաքինած ծանր հիւանդութենէս, խումբին հետ ոտքով ինկայ ճամբայ» (նոյն, էջ 357) :

Առարկութեան սիրոյն, ըսենք թէ փախուստի այդ օրէն սկսեալ, դեռ նոր ապաքինած յուշագիրը «տաք կերակուրի երես տեսած չէր» (թէ եւ Հաւատորիկ եւ Մառնիկ հայ գիւղերը բնակած ատեն, այդ լեռնական ասպնջական ժողովուրդը ԴԵՄԻ Կ՝ԱՊՐԷՐ իր նահապետական քնականոն կեանքը, եւ «պարոն» Վահան Փափազեան ալ, ամէն օր եւ օրական երեք անգամ, ԿԸ ՎԱՅԵԼԷՐ այդ հիւրընկալ ժողովուրդի Տարօնցիական սրտաց հիւրասիրութիւնը եւ օրական երեք

(2) Լուսնի 10-րդ օրն էր այդ գիշերը, ըստ Պուլտայ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին 1915 տարւոյն օրացոյցին :

(3) Ռուբէն, Տարօնի մէջ իր գործունէութեան ընթացքին (1914-1915), ԵՐԵՎ ԱՆԳԱՄ դասալիք փախուստի դիմած է. ա) երբ քաղաքն ու դաշտը անգլուխ եւ անպաշտպան վիճակի մէջ դնելէն ետք՝ խոյս տուաւ Սասուն. բ) երբ Սասունի գոյամարտի ամենատագնապալի բոլորէին՝ անհետ կորսուեցաւ, իր 10-15 Սասունցի մանկաւարկներու հետ. գ) երբ Վահան Փափազեանի հետ, 32 կամ 36 հոգինոց խումբով մը՝ փախուստ տուաւ դէպի ոռուական բանակը :

անգամ, «տաք ճաշ» կ'ունենար), եւ հիմա է որ, «հինգ ամիսէ ի վեր»՝ առաջին անգամ ըլլալով, «տաք կերակուրի ահագին կաթսային» երեսը կը տեսնէր, Մանազկերտի այդ լքեալ գիւղին մէջ:

Այս ճաշագիւտը կը պատահի 1915 թուականի Սեպտեմբեր ամսուան, ըսինք, կէսի ընթացքին:

Ա՛րդ, «Յունիսի վերջ»էն մինչեւ Սեպտեմբեր 15, կ'ընէ երկուֆուկէս ամիս: Ուրկէ՞, ուրեմն, Վահան Փափազեան հաներ է այս «հինգ ամիս»ի հաշիւը:

Ուստի, իրաւունք չունի՞նք յայտարարելու եւ պնդելու թէ յուշագիր Վահան Փափազեան բացարձակապէս ԶՈՒՐԿ է նշմարիտ ժամանակագրութեան:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ.— Մենք կը խորհինք, սակայն, որ Վահան Փափազեանի այս «հինգ ամիս»ի հաշիւը ՔԻՉ ՄԸ կը մտնեայ իրականութեան, երբ մենք ալ, մեր կարգին, ընենք այսպիսի հաշիւ մը՝ մեր գիտցած ձեւով.—

Վերոյիշեալ Սեպտեմբեր ամիսը խարիսխ ընդունելով, երբ դէպի ետ երթանք, կը տեսնենք որ հինգերորդ ամիսը կը հանդիպի Մայիսին: Կը հաւատանք որ այս Մայիս ամսուան ընթացքին էր որ Վահան Փափազեան, «դեռ բոլորովին չապաքինած ծանր հիւանդութենէս» (նոյն, էջ 357), փախեր է Հաւատորիկ գիւղը եւ ո՛չ թէ «Յունիսի վերջը»:

Մեր այս ենթադրութիւնը հաստատող ապացոյցը կը հայթայթէ Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան, երբ կը խօսի երկու «պարոն»ներու (Ռուբէնի եւ Վ. Փափազեանի) ամենավերջին հանդիպումի մասին՝ Մուշ քաղաքի մէջ, Մայիս ամսուան վերջերը, որ ատեն անոնց միջեւ արդէն իսկ գոյութիւն ունեցող ՍԱՌՆ ՓՈՒՆ-ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ եւ ԱՆՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ (որոնք աւելի անձնական պատճառներէ ծագում առած էին քան թէ սկզբունքային տարակարծութիւններէ) խիստ թանձրացեալ ձեւ կ'առնեն՝ իրաւասութեանց նշտումին պատճառով (առաջին «պարոն»ը՝ ամենագոր Բիւրոյի լիազօր-ներկայացուցիչն էր Տարօնի մէջ, իսկ երկրորդ «պարոն»ն ալ՝ նոյն Բիւրոյի պատուակալ անդամը), եւ առանց զիրար հասկնալու, կա՛մ համաձայնութեան եւ գործակցութեան եզր մը գտնելու, երկուքն ալ կ'ը ԼՔԵՆ քաղաքն ու դաշտը իրենց սեւ ճակատագիրին, ու կը բարձրանան ամենափրկիչ սարերը Սասունական...:

Իրբեւ եզրակացութիւն, ուրեմն, կրնանք վստահօրէն յայտարարել որ բիւրոյական յուշագիրը՝ Մուշ քաղաքէն խոյս տուեր եւ լեռները անպատաներ է ո՛չ թէ «Յունիսի վերջ»ը, ա՛յլ, ամենէն ուշ, Մայիս ամսոյ երկրորդ կէսի ընթացքին, եւ արդէն՝ իր երկրորդ

նամակի վերջաւորութեան մէջ (18 Նոյեմբեր 1954 թուակիր), որոշապէս կը գրէ.—

«Ուրեմն խօսքը Յունիսի ՍկիՋԲԻ մասին է» [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Իսկ Չորրորդ նամակով ալ (9 Յունուար 1955 թուակիր) կը գրէ.— «ԱՊՐԻԼԷՆ մինչեւ Սեպտեմբեր ամիսը, երբ լեռներն էինք», եւ այլն [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ապրիլ ամիսը չի՛ կրնար խնդրոյ առարկայ ըլլալ հոս, որովհետեւ այդ ամսուան երկրորդ կէսի ընթացքին, ինք «ծանր հիւանդութեամբ» գամուած էր անկողնին՝ «բոլորովին զգայազիրկ վիճակի մէջ» («Իմ Յուշերը», Բ., էջ 351) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Շատ որոշ եւ յստակ կը տեսնուի որ յուշագիր Վահան Փափազեան՝ շփոթութեան եւ հակասութեան մէջ է ԴԵՌ: Իր յուշերուն մէջ կը յայտարարէ.— «Յունիսի ՎԵՐՋՆ» էր որ փախեր է լեռները (նոյն, էջ 357). յետոյ, 18 Նոյեմբեր 1954 թուակիր իր երկրորդ նամակով կը յայտնէ որ «եթէ ուշագիր ըլլայիք, պիտի տեսնէիք որ էջ 360-ի եւ 361-ի մէջ յիշուած ամիսը նոյնն է... ուրեմն՝ խօսքը Յունիսի ՍկիՋԲԻ մասին է», իսկ 19 Յունուար 1955 թուակիր իր Չորրորդ նամակով ալ կ'ընէ հետեւեալ անհեթեթ ու հակասական յայտարարութիւնը — «ԱՊՐԻԼԷՆ ՄԻՆՉԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐ ամիսը, երբ լեռներն էինք»:

Երբ այս տարբեր տարբեր թուականներու պորձածութեան եւ հակասական յայտարարութիւններու մասին դիտողութիւն կ'ընէինք իրեն, բարկացոտ եւ յանդիմանական շեշտով մը կը պատասխանէր մեզի.—

«Թուականներու մասին ո՛չ սխալ եւ ո՛չ ալ «անհեթեթ» վրիպումներ կան» (18 Նոյեմբեր 1954 թուակիր՝ բիւրոյական յուշագրի երկրորդ նամակը):

Թո՛ղ մեր յարգելի ընթերցողները արձակեն իրենց արդար վճիռը:

* * *

Տարօնի չնաչխարհիկ «պատմագիր» Կարօ Սասունին անգամ կը վկայէ Մայիս ամսուան ի նպատակ, երբ կը գրէ.—

«Երբ Վ. Փափազեան կ'ազատի իր հիւանդութենէն եւ կազդուրման շրջանի մէջ կը մտնէ, Սասունէն կը պահանջեն որ լեռ բարձրանայ: Սասունէն Մատթէոսը կը զրկուի Մուշ, որպէսզի Վ. Փափազեանը լեռ տանի»:

«Մայիս 15-25-ին, Մատթէոսը Մուշ կու գայ, խորհրդակցութիւններ կ'ունենան Միրիջանեան Հայկի տունը... (4) :

«Յաջորդ օրը, Վ. Փափագեան, Մատթէոսի եւ խումբ մը հին Ֆեդայիներու հետ կը բարձրանար Հաւատորիկի եւ Մառնիկի շրջանները, Քանայ սարը» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 829-830) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

* * *

[Ա.] Պատմական ճշմարտութեան բացարձակ խեղաթիւրում եւ չարափոխութիւն է, երբ բիւրոյական յուշագիրը կը գրէ վերոյիշեալ խորհրդաւանող նախադասութիւնը, այսինքն,

«ԵՐԿԱՐ ԱՏԵՆ Ո՛Չ ՄԷԿ ԼՈՒՐ ՈՒՆԷԻՆՔ Սասունի կոիւնքէն եւ անոնց հետեւանքներէն: Թնդանօթի ձայները դադրած էին» («Իմ Յուշերը», Բ., էջ 376), եւ կը շարունակէ .

«Այսպէս անորոշութեան եւ մտահոգութեան Տեոնի ԵՐԿԱՐ ՕՐԵՐԷՆ ՄԷԿՈՒՆ ՄԷՁ, լուր հասաւ մեզի որ Աւրանցի մեր հին հայդուկ Արամը, հաւանաբար Սասունի անկումէն վերջ, դէպի Քան գալու ատեն, զարնուած է լեռնաշղթայի մը լանջին բնակող քուրդ գիւղացիներու կողմէ: ԵՆԹԱԴՐԵՑԻՆՔ որ ուրեմն մերիները պարտուած են, քանի որ Արամի պէս մէկը ՁԷՐ ԿՐՆԱՐ ԼՔԵԼ ԴԻՐՔԵՐԸ եւ միայնակ հեռանալ: Ուրեմն, ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵԱԼ ԷՐ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ինչպէս մեր յարգելի ընթերցողները շատ յստակ կերպով կը տեսնեն, մեր երկու ակամատես յուշագիրներու (Միսակ Բոգեանի եւ Մուշեղ Դուռնեանի) վերոյիշեալ վկայութիւններէն, Սասունի անկումին յաջորդող ԱՌԱՋԻՆ ՕՐԷՆ ԻՍԿ (Յուլիս 23-ին), Սասունցի երեք սուրհանդակներ՝ Ռուբէնէն ՆԱՄԱԿ ԲԵՐԱԾ ԷԻՆ Փափագեանի մ ԳՈՒԺԵԼՈՎ Սասունի աննախընթաց ձախողանքի խիստ տխուր լուրը (Միսակ Բոգեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 443), եւ կա՛մ, Յուլիս 24-ին, Սասունի անկումին ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ, նոր փախստականներ կը հասնէին Սասնոյ լեռներէն՝ քամ հազար Սասունցիներու մահագոյժը բերելով (Մուշեղ Դուռնեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 656) :

(4) Յուշագիր վահան Փափագեան՝ այս խորհրդակցական ժողովի օրը կը գրէ «Յուշիսի երկրորդ կէսի» ընթացքին, երբ «ես նոյն օրը խնդրած էի Կոտայի Հաջիէն գալ խորհրդակցելու՝ դաշտի եւ քաղաքի ինքնապաշտպանութեան կազմակերպութեան մասին: Հայկ Միրիջանեանի տունը հաւաքուեցանք», եւայլն («Իմ Յուշերը», Բ., էջ 355) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

Սասունի աննախընթաց փլուզումին յաջորդող մէկ-երկու օրերու ընթացքին, իրարու ետեւէն՝ Քան լեռը կը հասնէին Սասունի սպանդէն ազատուած մարտիկները եւ կոտորածէն ճողոպրած փախուստականները :

«Ինչպէս էր Սասունը, — կը գրէ Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Չաքարեան, — եւ իրարու ետեւէն կը հասնէին տղամաթաթախ, քնատ, քաղցած ու յոգնարեկ ազատուածներու շարանները երիտասարդի, պատանիի, կիներու, որոնք յուսահատ կը թափառէին թփուտներու շուքերը, աղերսագին եւ յուսահատ նայելով իրենց շուրջը» (Յակոբ Տէր Չաքարեանի Ձեռագիր Յուշերը, էջ 189) :

Այս բացարձակ ճշմարտութիւնը կ'ընդունի եւ կը յայտարարէ Կարօ Սասունին անդամ, երբ կը գրէ .—

«Սասունի անկումէն ՄԷԿ-ԵՐԿՈՒ ՕՐ ԵՏՔ, Մշեցի, Սասունցի եւ դաշտեցի բազմաքիւ մարտիկներ, ժողովրդական զանգուածներով(?) Քանայ լեռներն եկան» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 994) [Բոլոր ընդգծումները եւ հարցական նշանը մերն են, Ա. Տ.] :

Այս բոլոր վկայութեանց լոյսին տակ, կը տեսնենք որ Սասունի կոիւնքի յաջորդող ՄԷԿ-ԵՐԿՈՒ ՕՐԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ, Վահան Փափագեանի շուրջն ու բոլորը ՈՂՈՂՈՒԱԾ ԷԻՆ Սասունի սպանդէն գերծած փախստականներով, — մարտիկ թէ ժողովուրդ, — որոնց տուած բերանացի գեկոյցներէն եւ պատմածներէն՝ բիւրոյական յուշագիրը ՇԱՏ ՀԱԻԱՍՏԻՕՐԷՆ կը տեղեկանար Սասունի ողբերգական ձախողանքի սրտակեղէք, բայց իրական ու ճշմարիտ պատմութեան ԱՄԵՆԱՑԵՏԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ :

Հետեւաբար, թնդանօթներու որոտը դադրելէն յետոյ, ՀԱՐԿ ԶԿԱՐ «անորոշութեան եւ մտահոգութեան տխուր ԵՐԿԱՐ ՕՐԵՐ» սպասել՝ ստուգելու համար Սասունի ձախողանքին մորմոքեցուցիչ լուրը, հիմնուելով ԵՆԹԱԴՐԵՑԻՆՔ վՐԱՑ եւ Աւրանցի հերոս Արամի՝ մահացու կերպով վիրաւորուելու պարագայով միայն ՀԵՏԵԻՑԵԼ Թէ «Սասունի պարտութիւնը կատարեալ էր», քանի որ «Արամի պէս մէկը չէր կրնար լինի ԴԻՐՔԵՐԸ եւ միայնակ հեռանալ» («Իմ Յուշերը», Բ., էջ 376) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] . սակայն այդ յանցանքը ներքին էր հրամանատար Ռուբէնի համար, որ լէէր «ղեկավարի եւ հրամանատարի» իր պաշտօնն ու պարտականութիւնը, եւ զասալքօրէն խոյս տար՝ առանց յանցաւոր իսկ նկատուելու... կա՛մ նոյնիսկ, առանց այդ պարտազանցութեան յիշատակութիւնն ընելու... :

Ահաւասիկ ուրիշ պերճախօս ապացոյց մը եւս՝ Վահան Փափագեանի «առարկայական», «ճշմարիտ» եւ «իրական» նկարագրութեան («Իմ Յուշերը», Բ., էջ 274) :

Փ Լ ՈՒ Խ Դ.

ՔԱՆԱՅ ԼԵՐԱՆ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ (ԸՍՏ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՊԱՏՈՒՄԻՆ)

Մշոյ դաշտի եւ Մուշ քաղաքի համատարած կոտորածներէն վերծածներու մեծաստուար թիւ մը ապաստանած էր Հաւատորիկի եւ Քանայ լեռները, որոնք կը գտնուին Մշոյ դաշտի կեղրոնական մասի հարաւային կողմը՝ ծածկուած թանձրախիտ անտառներով:

Բոլոր յուշագիրներն ալ, — վահան Փափագեան, Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, Միսակ Բղէեան, Յակոբ Տէր Զաքարեան, — այդ լեռները ապաստան գտած հայ փախստականներու քանակը կը զնեն 20-30.000 հոգի, մեծաւ մասամբ անոք ու անպաշտպան կիներ ու երեխաներ:

Դաշտի եւ քաղաքի կոտորածներու նախընթաց շաբթուն, վահան Փափագեան, որ քաղաքէն փախուստ տալէն ի վեր՝ կը բնակէր Հաւատորիկ եւ Մառնիկ հայաբնակ զիւղերը, Ռուբէնի կողմէն Սասուն հրաւիրուած էր, Սասունաբնակ ընկերներու հետ՝ յարձակողական եւ պաշտպանողական ծրագիր եւ գործելակերպ որոշելու մասին խորհրդակցելու համար: Եւ հո՛ն (Սասուն) գտնուած ատեն, որ մը, ԻԲՐԵԻ ԹԵ՛, «գուժկան»էն կը տեղեկանայ դաշտի եւ քաղաքի կոտորածներու, ինչպէս նաեւ՝ Հաւատորիկի եւ Քանայ լեռները ապաստան գտած վերոյիշեալ փախստականներու մասին:

«Ռուսական բանակի մերձեցումը, — կը զրէ՛ վահան Փափագեան, — ետանդ ու կորով ներշնչեց ամենուն: Նախայարձակ ըլլալու տեսակէտը կ'ընդհանրանար եւ հաւանաբար գործադրութեան եւս զրուէր, եթէ անակնկալ ու չարաշուք լուր մը չգար տակն ու վրայ ընելու բոլոր հաշիւները:

«Քանի մը օր անցած էր. կիսախելագարի մը երեսոյթով, կիսամերկ ու գրեթէ կիսամեռ՝ մեզ մօտ հասաւ ԳՈՒԺԿԱՆՆԸ: Մօտեցաւ, կ'ընցաւ գետնին ու անմարդկային ոռնոցով զոռաց.

«— Ի՞նչ էք նստեր. Դուրանը զըմէն կոտորան, Հայութիւն չմնաց...»(1):

(1) Այս տեսակ Մշեցնակ Հայերէն գոյութիւն չունի: Եթէ այդ բոթը վահան Փափագեանին հազորդոգ գուժկանը բնիկ Տարօն-

«Քարացանք: Եւ հեկեկանքէն ցնցուելով՝ պատմեց մանրամասնութիւնները: Քրդական բաղմաթիւ չեթէներ, նախապէս կտրելով զիւղամիջեան յարաբերութիւնները, երեք օրուան մէջ, առանձին-առանձին ջարդած, աւրած, կողոպտած անոր ինչքն ու տունը, ու վառած ժողովուրդը:

«... Լսած էր նաեւ որ քաղաքի Հայոց թաղերը թնդանօթի են բռնած ու ժողովուրդը ջարդած են: Իր ըսելով, լեռներն են փախած աւելի քան 20,000 հոգի: Կուրտիկէն լսուած որոտը այս է եղած, ուրեմն...» («Իմ Յուշերը», Բ., էջ 364-365) [Բոլոր ընդդիմումները մերն են, Ա. Տ.] (2):

Եւ բիւրոյական «պարոն»ը, այս բոթաբեր լուրերը լսելուն պէս, կ'որոշէ անմիջապէս վերադառնալ Հաւատորիկի եւ Քանայ լեռները՝ «պաշտպանելու» եւ «պահպանելու» համար «մահէ ազատուած բեկորները» (նոյն, էջ 366) [Ընդդիմումը մերն է, Ա. Տ.]:

Եւ ահա՛, իր վերադարձի ճամբուն վրայ, կը հասնի կէտի մը, «ուրկէ կ'երեւար մնացորդը մեր տարաբախտ ժողովրդին: ... Կը վխտային անոնք՝ բոյներնին քանդուած ահաբեկ մեղուններու նման...: Սխալ չէր գուժկանի ըսածը՝ քսան հազարէ ոչ-պակաս պէտք է որ ըլլային» (նոյն, էջ 367-368):

Եւ կը շարունակէ աւելի վարէն.—

«Երկու կենսական մտահոգութիւններ ունէինք այդ օրերուն. ռուսական բանակին — աւելի շուտ, մեր կամաւորական գունդերուն — լուր հասցնել, խնդրելով որ գիշերով մը անոնց ձիաւորները իջնան դաշտ (ուր այդ ատեն ռուսական բանակի առջեւէն փախած քուրդ եւ չերքէզ մուհաճիրներ էին թափուած), ու մեմք, անոնց պաշտպանութեան տակ՝ անցնէին սահմանը: ... Երկրորդ մեր մտահոգութիւնը՝ ժողովրդի սնունդն էր եւ ինքնապաշտպանութիւնը» (նոյն, էջ 370) [Բոլոր ընդդիմումները մերն են, Ա. Տ.]:

ցի մըն էր, ան այդ նախադասութիւնը արտասանած ըլլալու էր հետեւեալ բառերով.—

«— Ի՞նչ ի՛ք նստի. Դուրան յըմէն կոտորուաւ. Հայութեմ չմնաց...»:

(2) Շա՛տ գարմանալի կը թուի յուշագիր Փափագեանի պահած ին՛ր լուսթիւնը քաղաքի վրայ երեք օր գոռացող չորս թնդանօթներու որոտի մասին, որ շատ յստակ կերպով կ'ը լՍՈՒԻՒՐ կամ ՊԷՏԲԻՐ լՍՈՒԻՒՐ Սեմալ գիւղի մէջ ալ, սակայն բիրոյական յուշագիրը, ԴԻՏՈՒՄՆԱԻՈՐ ԼՈՒՈՒԹԵԱՄԲ ՄԸ, կը փորձէ ԱՆԳԻՏԱՆԱԼ ԶԱՅՆ, եւ միայն «գուժկան»էն է որ իբրեւ թէ կ'իմանայ եղբր անոր մասին...:

Այլ խօսքով, Վահան Փափազեան՝ իր վտիտ ու նկուն ուսերուն վրայ առած էր Հաւատորիկի եւ Քանայ լեռներու մէջ ապաստան դասած այս 20-30,000 սարսափահար եւ սովալլուկ փախստականներու հոգատարութեան, ինքնապաշտպանութեան եւ փրկութեան ամբողջ պատասխանատուութիւնը:

Հո՛ս հարց կը ծագի:

— Վահան Փափազեան, ի՞նչ աստիճան քարեխցնութեամբ, նուիրումութեամբ եւ ՄԱՆԱԻԱՆԻ՝ ԱՆՇԱՀԱԽՆԻՐՈՒԹԵԱՄԲ կատարեց իր ստանձնած այս նուիրական պարտականութիւնները:

Քիչ մը յամենանք այս կարեւոր կէտերուն վրայ եւ փորձենք քրքրել անոնց ներքին ծալքերը:

Բայց, նախ տեսնենք թէ բիւրոյական յուշագիրը ի՞նչպէս կը ներկայացնէ այդ դէպքերը եւ ո՞րքան հարազատ է անոր ներկայացուցած պատմութիւնը:

Առանց նախապաշարել փորձելու մեր ընթերցողները, յայտարարենք որ Վահան Փափազեանի այս պատմութիւնը կը սկսի «կարծեմ»ով՝ յիշելով ՍեԱԼ ամսու ամուսն եւ յօրինելով ՀԱՄՕՐԷՆ ՍեԱԼ հետեւեալ պատմութիւնը, զոր կ'արտագրենք ամբողջութեամբ:—

«Օգոստոսի մէջ էր, ԿԱՐԾԵՄ, երբ օր մը Քանի լեռներու մէջ երեւցան յանկարծ Վարդենիս գիւղի(3) մեր կարեւոր ընկերներէն Մարտիրոսը եւ Յարութիւնը(4): Ըսին թէ եկած են խորհուրդ

(3) Վարդենիս մեծ եւ բարգաւաճ հայագիւղ մըն էր՝ Մշոյ դաշտի արեւելեան մասին մէջ, որ ծանօթ է Չիուր անունով:

(4) Մարտիրոսը վարդենիսցի չէր, այլ Բուլանքի հոշկեալտի գիւղացի, եւ Յարութիւն վարժապետի հետ միասին կը գտնուէր Քան լեռը, ուր եկած էին անոնք՝ կուսակցական գործերով եւ վերահաս կատարածներու պատմառով ալ՝ հոն մնացած:

Ըստ Միսակ Բէքեանի խիստ հաւաստի պատմութեան, վարդենիսցի Յարութիւն վարժապետը գլխաւորեք է երկրորդ սուրհանդակներու խումբը՝ երկու ընկերներով եւ մեկներ՝ դէպի իր հայրենի վարդենիս գիւղը, իսկ Բուլանքցի Մարտիրոս վարժապետն ալ գլխաւորեք է երրորդ սուրհանդակներու խումբը, որ կը բաղկանար տասը անձերէ, եւ Բուլանքի մամբով ալ՝ մեկներ է դէպի ուսական բանակը:

Քանայ լեռներէն դէպի ուսական բանակը զրկուած երեք խումբ սուրհանդակներու լրիւ ու ամբողջական պատմութիւնը կու տանք մեր այս ուսումնասիրութեան Ծ. , Զ. եւ Է. Գլուխներուն մէջ:

առնելու Վարդենիսի շամփուրներու (մեծ տարածութեամբ եղեգնածածք ճահիճ մը) մէջ ապաստանած ժողովրդի փրկութեան մասին: Կ'ուզէին իմանալ թէ պէ՞տք է որ Քան գան եւ մեզի միանան, թէ՞ փորձեն անցնիլ դէպի ուսական բանակը, որ իրենց ըսելով, հեռու պիտի չըլլար իրենցմէ:

«Ի հարկ է, խորհուրդ չտուինք անցնիլ քառասուն քիլոմետր մուհաջիրներու շրջաններու մէջէն՝ Քան հասնելու համար, քանի որ մեր վիճակը շատ աւելի ծանր էր. քիլադրեցիմք իրենց որ փորձեն նախ կապուիլ ուսական բանակին հետ, ապա, անոնց պաշտպանութեան տակ՝ ժողովուրդը փոխադրել անոնց կողմը:

«Շապիկէս կտոր մը պատուեցի եւ անոր վրայ նամակ մը պատրաստեցի ուսական բանակի յառաջապահ հայ կամաւորական գումդերուն ուղղուած. կ'աղերսէի ժամ առաջ քանի մը հարիւրեակ ձիւոր ուժեր զրկեն զոնէ մինչեւ Մեղրագետ՝ նախապէս խորոյկներու միջոցով մեզի նշան տալով: Այդ պարագային, մեր պաշտպանութեան տակ, լեռներէն կ'իջեցնէինք ցրուած ժողովուրդը եւ մուհաջիրներու մէջէն, ի հարկ է զոհերով, կրնայինք հասնիլ մեր կամաւորներուն:

«Վարդենիսցի երկու ընկերներն ալ, գիշերուան մութին մէջ, անհետացան... մեր փրկութեան յոյսերու թելը իրենց հետ տանելով:

«Այնուհետեւ, երկա՛ր-երկա՛ր օրեր, արշալոյսէն մինչեւ վերջալոյս, դիտակը աչքերուս՝ հանդիպակաց լեռնաշրջաններուն ուղղած, մէկ նշանի մը կը սպասէի... Օր մը միայն, հագիւ արշալոյսը բացուած՝ նշմարեցի նեմութի վարի լանջերէն՝ Ախլաթի կողմէն, դէպի դաշտ կ'իջնէին փոշիի ամպեր ահագին. ուսական զօ՛րքն էր արդեօք: Հոգեկան աննկարագրելի ուրախութեան, սպասումի եւ յուսահատութիւններու շատ վայրկեաններ ապրեցանք: Բայց երբ իջած էին լեռներէն, կրցանք հաստատել որ անոնք ուսական բանակի առջեւէն հալածական ֆուրդեր եւ չերէֆզներ էին՝ իրենց սայլերով եւ հոտերով, որոնք ՍԱՐՍԱՓԱՀԱՐ ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ կը լեցունէին Մշոյ դաշտը:

«Այդ ալ կը մխիթարէր եւ յոյս կը ներշնչէր մեզի. կը խորհէինք թէ ուսական բանակը, ուրեմն, հեռու չէ՛ Ախլաթէն, եւ մեր սուրհանդակները կրնան հասնիլ կամաւորներուն: Այս քաղցր յոյսերով ապրեցանք շաբթ մը օրեր եւս: Մեր յոյսը աւելի թափ առաւ, երբ դիտեցինք Գրգուս լեռան կրճէին՝ ծուխի ահագին քուլաներ. նախ կարծեցինք տեսնել պայմանական բոցեր, բայց շատ տարածուն եւ մեծ էին անոնք. գիւղ մըն էր որ կ'այրէր:

«Շատ յետոյ, երբ կովկաս հասած էինք, հոն հասկցանք որ Վարդենիսի ժողովուրդը, մեր հինաւուրց Փեղայի Հասրաթի առաջ-

նորդութեամբ, եղէպնուտներէն ելեր եւ անվտանգ հասեր էր ուսական բանակը: ԱՆԴՐԱՆԻԿՆ Է ԸՆԴՈՒՆԵՐ ԶԻՐԵՆՔ, ԿԱՐԴԱՑԵՐ ԷՐ ՄԵՐ ՆԱՄԱԿԸ ԵՒ ԼՍԵՐ ՄԵՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ՝ ԱՆՈՆՑ ԲԵՐԱՆԱՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: Բայց նոյն օրը, ուսական հրամանատարութենէն նահանգի հրաման ստանալով, շատ պարագաներու մէջ ըմբոստ Անդրանիկը ՀԱՐԿ ՀԱՄԱՐԱԾ Է ԵՂԵՐ ԵՆՔԱՐԿԱԿԻ ՍՊԱՅԱԿՈՅԻ ՀՐԱՄԱՆԻՆ ԵՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆԱԿԱՆՑԱԾ Է: Մինչեւ այսօր ալ ԴԱՌՆՈՒԹԵԱՄԲ կը խորհիմ Անդրանիկի այդ «կարգապահութեան» վրայ: Հարցուցի իրեն օր մը այդ մասին: Ռազմագէտի հեղինակաւոր դիրքով մը՝ ինծի դիտողութիւնն ըրաւ թէ՛ ես չեմ հասկնար դիտողական շարժումներէ. ի՞նչպէս կրնար ինքը մինակը մնալ այդքան ներքը՝ թշնամիի երկրին մէջ, երբ ամբողջ բանակը կը նահանջէր...:

«Մուհաջիրներու ահաբեկ փախուստէն քանի մը օր վերջ, նոյն լեռնաշղթաներէն նոր փոշիի ամպեր բարձրացան — դէպի դաշտ կ'իջնէր մեծ խումբ մը ձիաւորներու: Անոնց զգուշաւոր եւ հովհարի ձեւով բացուած՝ դանդաղ յառաջացումէն եւ հագուստի ընդհանուր երեւոյթէն դատելով, գրեթէ վստահ էիմք թէ ուսական հետախոյզ խումբ մըն էր ատիկա: Լարուած ու տենդագին՝ քայլ առ քայլ կը հետեւէի դիտակողմ անոնց ընթացքին: Եկան հասան Մկրագոմի ծայրի տուններուն եւ մտան աւեր այդ գիւղը. մօտ կէս ժամ աւերակէ աւերակ մտան Ելան, ապա խմբուեցան, Ելան գիւղէն եւ դարձեալ նոյն քամրով վերադարձան ու անհետացան դանդաղօրէն լեռներու մէջ... ՓՇՐԵԼՈՎ մեր բոլոր յայտերն ու սպասելիքները: Խորտակուած հողիով՝ հաշտուեցանք այլեւս անխուսափելի մահուան հետ» (նոյն, էջք 380-382) [Բոլոր ընդդժուումները մերն են, Ա. Տ.]:

Բիւրոյական յուշագրի այս պատումին մէջ, ուշագիւր ստուգութեան եւ խնամոտ սրբագրութեան կարօտ են հետեւեալ կէտերը.—

- ա.— «Օգոստոս» ամսուան խնդիրը.
- բ.— Յարութիւն վարժապետի՝ Քան լեռը դալու պարագան.
- գ.— Քուրդ եւ չերքէզ մուհաջիրներու դաղթաշարժի ժամանակամիջոցը.
- դ.— Շապիկի կտորին վրայ գրուած նամակին առեղծուածը.
- ե.— Ռուսական հետախոյզներու մինչեւ Մկրագոմ հայպիւղը հասնելու հարցը.
- զ.— Անդրանիկի հանդէպ՝ Վահան Փափագեանի սնուցած «դառնութեան» պատճառը:

Գ Լ Ո Ւ Ն Ե .

Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն
Վ Ա Հ Ա Ն Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն Ի Պ Ա Տ Ո Ւ Մ Ի Ն

Այժմ, հարեւանցի ակնարկով մը, քննենք յուշապատում Վահան Փափագեանի վերոյիշեալ կէտերը մէկ առ մէկ:

ա.— «Օգոստոս» ամիսը չի՛ կրնար խնդրոյ առաքիլայ ըլլալ հոս, քանի որ վերոյիշեալ արտագրութեան մէջ նկարագրուած բոլոր դէպքերը ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՆ 1915 թուականի ՅՈՒԼԻՍ ԱՄՍՈՒԱՆ ԿԷՍԻ ԸՆԹԱՑՔԻՆ (Յուլիս 12-18):

Ռուսական յոյժ ազդեալի նահանգը, որ ծանօթ է ՅՈՒԼԻՍԵԱՆ ՄԵՍ ՆԱՀԱՆՁ անունով, կատարուած է վերոյիշեալ շարժումն ընթացքին, եւ բնականաբար, Վարդենիսցի Յարութիւն վարժապետի՝ Քան լեռնէն մեկնումը, իր հայրենի Վարդենիս գիւղը անվնաս հասնելը, հոն՝ աւերակ ու ամառի դիւղին մէջ փնտրուող կատարելը, յետոյ Զիւրաջ Շամփին մէջ ապաստանողները փնտրել-գտնելը, յաջորդ օրն ալ՝ ուսական հետախոյզներուն հանդիպելը, եւ յետոյ, Շամփին մէջ ապաստանողներու հետ միասին՝ ուսական բանակին միանալը, — այս բոլոր դործողութիւնները կատարուած են ուսական այդ նահանջէն անմիջապէս առաջ, մէկ-երկու օրերու ընթացքին:

Հետեւաբար, Վահան Փափագեանի «Օգոստոսի մէջ էր կարծեմ»ը ՍԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Է ԵՒ պէտք է ըլլայ «Յուլիսի մէջ էր» առանց «կարծեմ»ի:

բ.— Սիւլայ է, նոյնպէս, Յարութիւն վարժապետին վերագրել առաքելութիւն մը՝ այդպիսի ՅԻՄԱՐԱԿԱՆ «խորհուրդ առնելու» համար, քառասուն քիլոմէթր խիստ վտանգաւոր ճամբայ մը կտրելով՝ Վարդենիս գիւղէն պալ մինչեւ Հաւատորիկի եւ Քանայ լեռները, այնպիսի պահու մը, երբ Մշոյ դաշտին մէջ կը վիտային հազարաւոր թուրք ժանտատեսիլ ժանտարմաներ, արիւնարբու չեթէներ եւ քուրդ ընչաքաղց աւարառուներ:

Անոնք, Վարդենիսցի «մեր կարեւոր ընկերներէն» Յարութիւն վարժապետը եւ իր երկու ընկերները, դաշտի կտտորածէն ԱՌԱՋ, — ըստ վկայութեան Տարօնցի Արմաշական յուշագրի Յակոբ Տէր Զաքարեանի պատումին, (էջ 163), — Քան լեռը եկած էին կուսակցա-

կան զործերով, և Թունիս 28-ի՝ Մշոյ դաշտի անակնկալ և և համա-
տարած աղէտին պատճառով ալ՝ ՍՏԻՊՈՒԱԾ ԷԻՆ ՄՆԱԼՈՒ ՀՈՆ,
Քան լեռը: Եւ երբ, դաշտի ու քաղաքի կոտորածներէն աւելի քան
չարաթ մը ետք, ստամանեցիկ երկրորդ սուրհանդակի պաշտօնը,
Քանայ լեռնէն մեկնած ատեն, անոմ ԲՆԱԻ ԵՐԲԵԲ ԶԷԻՆ ԳԻՏԵՐ
Թէ Ի՞նչ էր իրական կացութիւնը իրենց հայրենի գիւղին մէջ, այդ
համատարած աղէտէն յետոյ [Ա.] :

Այս մասին աւելի հանգամանորէն պիտի խօսինք նորէն (Տես-
նել Գլուխներ Զ. և է.) :

դ. — Վահան Փափաղեանի ժամանակագրութիւնը շատ շփոթ,
անորոշ և անստոյգ է, ինչպէս ուրիշ պարագաներու, նոյնպէս և և
մանաւանդ՝ քուրդ և շերքէց մուհաջիրներու զաղթաշարժը նկա-
րագրած ատեն, որովհետեւ «երկա՛ր—երկա՛ր օրեր, արշալոյսէն
մինչեւ վերջալոյս, դիտակը աչքերուս... մէկ նշանի մը կը սպասէի»
նախադասութիւնը («Իմ Յուշերը», Բ., էջ 380-381), որեւէ կեր-
պով, յստակ և որոշ գաղափար չի՛ տար ո՛չ ժամանակի տեւողու-
թեան և ո՛չ ալ՝ ճիշտ թուականի մասին :

Քիչ վար, մենք պիտի տանք իրական, հարազատ ու լրիւ նը-
կարագրութիւնը այդ մուհաջիրներու զաղթաշարժին, որ ԱՐԴԵՆ
ԻՐ ԼՐՈՒՄԻՆ ՀԱՍԱԾ ԷՐ, երբ Յարութիւն՝ վարժապետի երեք հոգի-
նոց խումբը, Քանայ լեռնէն ճամբայ կ'իյնար դէպի իր հայրենի
գիւղը, Վարդենիս :

դ. — Նոյնպէս, ցոյց պիտի տանք, իր իսկ (Վահան Փափաղ-
եանի) «կարեւոր» ընկերոջ, այսինքն, Յարութիւն վարժապետի վը-
կայութեամբ, թէ «չապիկի կտորին վրայ, Փափաղեանի գրած նա-
մակը՝ Անդրանիկ ԶԷ՝ ՍՏԱՑԵՐ, ԶԷ՝ ԿԱՐԴԱՑԵՐ և և Ո՛Չ ԱԼ ԼՍԵՐ
«մեր վիճակի մասին՝ անոնց բերանացի պատմութիւնը» ՆԱՀԱՆՁԷՆ
ԱՌԱՋ (Այս կէտը մանրամասնորէն քննարկուած է այս ուսումնա-
սիրութեան Մասն Բ. Է. Գլուխին մէջ) :

ե. — Երբ ռուսական բանակի առջեւէն հարածական Քուրդեր
և Զերքէզներ, «սարսափահար արապութեամբ» խոյս կու տային
դէպի Մշոյ Դաշտի արեւմտեան կողմը, այդ լայնատարած դաշտի
արեւելեան մասին մէջ գոյացած պարապութեան(1) ՕԳՏՈՒԵԼՈՒ և և

(1) Այս պարապութիւնը տեւած է ԵՐԿՈՒ ՕՐ, ըստ վկայու-
թեան ականատես և արժանահատ յուշագիր Միսակ Բդէեանի
(«Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 429) : Կարօ Սասունի երեք
օր կը դնէ այդ ժամանակամիջոցը («Պատմութիւն Տարօնի Աշխարհի»
էջ 992) :

լեռները ապաստանած ԲՈԼՈՐ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԸ առնելով՝ դէպի
ռուսական բանակը անցնիլ—երթալու համաժողովրդական բազմակն
ու քելադրութիւնները, ՆՈՅՆԻՍԿ Զինուորական հարիւրդի որո-
շումն ալ՝ ՅԱՄԱՌՕՐԷՆ ԱՆՏԵՍԵԼՈՎ [Բ.], Վահան Փափաղեան «կը
մխիթարուէր» իր դիտակով դիտելով «ռուսական հետախոյզ խում-
բը, որ «եկու հասաւ Մկրագոմի ծայրի տուններուն, մտաւ աւեր
այդ գիւղը, մօտ կէս ժամ աւերակէ աւերակ մտաւ հլաւ, ապա
խմբուեցաւ, ևլաւ գիւղէն և դարձեալ նոյն ճամբով վերադարձաւ
ու անհետացաւ դանդաղօրէն լեռներու մէջ... փշրելով մեր բոլոր
ընդգծումները մերն են, Ա. Տ. » :

Եւ գիտէ՞ք, սիրելի՛ ընթերցողներ, այդ Մկրագոմ գիւղը,
Մշոյ Դաշտի կեդրոնական մասին մէջ, Մեղրագետի ափին վրայ,
միայն ու միայն ԵՐԿՈՒ ԺԱՄԷՆ ԱԻԵԼԻ ՊԱԿԱՍ ատենուան հեռաու-
րութիւն ունէր Մուշ քաղաքէն, և և՛ աւելի պակաս ժամանակուան
հեռաւորութիւն՝ իրենց գտնուած Քանայ լեռնալանջերէն. խիստ
հազուադիւրս և բարեղէպ պատեհութիւն, որմէ ԶԵՆ ԿՐՑԱԾ ՕԳ-
ՏՈՒԻԼ Քանայ լեռան այդ 20-30 հազար թշուառ փախստականները՝
Վահան Փափաղեանի ՅԱՄԱՌ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ... :

Այս մասին և ևս, ընդարձակօրէն պիտի խօսինք նորէն, յաջորդ
Գլուխին մէջ (Գլուխ Զ.) :

* * *

[Ա.] Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունի, անտեսելով իր
տրամադրութեան տակ գտնուող Արմաշական յուշագիր Յակոբ Տէր
Զաքարեանի յուշերու տուած ճշմարիտ բացատրութիւններն ու տը-
րամաբանական մեկնաբանութիւնները, ԹՈՒԹԱԿՕՐԷՆ ԿԸ ԿՐԿՆԷ
Վահան Փափաղեանի յերիւրած պատմութիւնը՝ ՅՕՐԻՆԵԼՈՎ հետեւ-
եալ ծիծաղելի և ո՛չ-պատմական տողերը. Զխուրայ Դամփի մէջ
ապաստանողներու մասին.—

«Նոյնիսկ այդ ճգնաժամին մէջ, սիրտ կ'ընեն քանի մը սուր-
հանդակներ զրկելու Քանայ սարը՝ գիտնալու համար թէ Սասունի
գիմադրութիւնը Ի՞նչ վիճակի մէջ է և և թէ ազատուած ղեկավար
ընկերները Ի՞նչ քելադրութիւններ ունին ընելիք» («Պատմութիւն
Տարօնի Աշխարհի», էջ 927) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Մարմինի կէտով ջրային ճախճախուտի մէջ թաղուած Վար-
դենիսցի այդ տառապակոծ փախստականները, որոնց գլուխին վրայ
կը սաւառնէր անխուսափելի մահուան ուրուականը՝ դամոկլեան

սուրբ պէս, ուրիշ անմիջական մտահոգութիւն չունէի՞ն արդեօք որ այդ տազնապալի կացութեան մէջ իսկ, հետաքրքրուէի՞ն «Սասունի դիմադրութեան» խնդրով (որ այդ ատեն ՍԿՍԱԾ ԶԷՐ ԴԵՌ) եւ ուզէի՞ն գիտնալ թէ «ազատուած ղեկավար ընկերները ի՞նչ թելադրութիւններ ունէին ընկիւմ» (նոյն, անդ) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Եթէ իրենք, «մինչեւ գօտեկապը ջուրերու մէջ» մխրճուած այս տարաբախտ տառապելները, դժբախտութիւնն ունենային իմանալու կամ ստանալու «ազատուած ղեկավար ընկերներու» թելադրութիւնները եւ ականջ կախէին այդ թելադրութեանց, ԻՐԵՆՔ ԱԼ ԳԵՐԱԳՈՅՆ ԴժԲԱԽՏՈՒՄԻՆԸ պիտի ունեցային՝ ԲԱԽՏԱԿԻՑ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՅՆ ԴժԻՅԻՄ ԲԱԿԱՏԱԳԻՐԻՆ, որուն ենթարկուեցան Հաւատորիկի եւ Քանայ լեռներու 20-30 հազար տարաբախտ բեկորները . . . :

Ո՛րքան բախտաւոր եղան անոնք, Չխուրայ Շամփին այդ ճախճախուտներու տառապակոծ կեանքին դատապարտուած այդ ողորմելիները՝ իրենց այդ ճգնաժամային անտանելի եւ անհանդուրժելի պայմաններուն մէջ անգամ, որ ԲԱԿԱՏԱԳԻՐԻՆ ՊԱՏԵՆՆՈՒԹԻՒՆ ԶՏՈՒԱԻ ԻՐԵՆՔ՝ ստանալու «ղեկավար ընկերով» (Վահան Փափազեանի) ՅԱՄԱՌ ՄԵՐԺՈՒՄԸ, եւ փրկութիւննին գտան՝ առանց անոր «թելադրութեան» կամ «հաւանութեան» . . . :

* * *

[Բ.] Վահան Փափազեանի կամակոր յամառութեան մասին կը վկայէ նաեւ Համբարձում Տէրտէրեան՝ իր «Շանթի Պատուիրակութիւնը» յօդուածին մէջ («Հայրենիք» ամսագիր, Մայիս, 1954), ուր ան կը պատմէ որ Հ. Հ. Վարչապետ Բժ. Բ. Օհանջանեան անոր կ'իմացնէ որ ինք ալ անգամ նշանակուած է երեք հոգիէ բաղկացեալ պատուիրակութեան մը, որ Մոսկուա պիտի երթար՝ բանակցելու համար թուրք պատուիրակութեան եւ Մոսկուայի կառավարութեան հետ :

Այդ առիթով, Տէրտէրեան՝ հետեւեալ յատկանշական գաղափարները կ'արտայայտէ Վահան Փափազեանի մասին. —

«Զեմ պիտե՞ր ինչո՞ւ, անձնական իմ սակաւ հանդիպումների ընթացքին, Ընկ. Վ. Փափազեանի մասին կազմել էի այն համոզումը որ նա իր կարծիքների եւ տեսակէտների վրայ յամառօրէն պնդող է, ներող չէ եւ անհրաժեշտ ձկուցութիւնը չունի» [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Գ Լ ՈՒ Խ Զ .

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐՈՒ ԱՌԱՔՈՒՄԸ ԵՒ ՍՈՒՀԱԶԻՐՆԵՐՈՒ ԳԱՂԹԱԾԱՐԺԸ

Մուշ քաղաքի անկումին օրը, Յուլիս 1-ին, Չորեքշաբթի, արշալոյսէն առաջ, քաղաքի զինեալ ու անզէն երիտասարդներու մեծագոյն մասը, Տարօնի անզուգական հերոս Հաջի Յակոբի հրամանին ու հրահանգին համաձայն, ապաստանած էր Հաւատորիկի եւ Քանայ լեռները, ուր, նոյն օրն իսկ, Սասունէն վերադարձած էր Վահան Փափազեան եւս՝ 30-40 սպառազէն երիտասարդներով, այդ վայրերու մէջ ապաստան դառած փախստականներու «պաշտպանութեան» եւ «ապահովութեան» համար, ինչպէս տեսանք :

Ռուսական բանակի եւ Հայ կամաւորական գունդերու ժամանումին՝ տասնօրեայ անհատուած եւ սրտմաշուք սպասուածք մը ետք, Յուլիս տասնին, համաժողովրդական բաղձանքով, զինուորական խորհուրդի թելադրութեամբ եւ Վահան Փափազեանի ալ հաւանութեամբ, կը գումարուի ժողովրդական առաջնորդներու խորհրդակցական ժողով մը, ուր միաձայնութեամբ կ'որոշուի սուրհանդակներ զրկել ռուսական բանակը եւ իրենց դժնդակ վիճակը տեղեկագրելով՝ շուտափոյթ օգնութիւն հայցել. եթէ ռուս բանակը իր տեղէն չի՛ շարժիր, դոնէ Անդրանիկ, իր կամաւորներով, յառաջ անցնի եւ զայ՝ քաղաքացի եւ դաշտացի այս ստուարաթիւ բեկորները եւ Սասունի 35 հազարնոց Հայութիւնը փրկէ :

Սուրհանդակներու առաջին առաքելութիւնը կը վստահուի Կովկասահայ Մատթէոսին, որ Մուշի մէջ գրադարանապետ էր եւ կը ճանչցուէր Պրն. Աւետիս անունով, եւ որու մասին մեծ գովեստով կը խօսին գրեթէ բոլոր յուշագիրներն ալ, իրրեւ արդիւ եւ անձնազոհ մարդ, ու դերազանցօրէն ազգասէր եւ պարտաճանաչ հայ :

Աւետիս, իր հետ առնելով տասը զինեալ երիտասարդներ, ճամբայ կ'իյնայ դէպի ռուսական բանակը, սակայն, դժբախտաբար, Քոստուրայ լեռներու մէջ, Խըճըխ քրտարնակ գիւղի մօտերը, կը հանդիպի զինեալ քուրդերու, որոնց հետ անհաւասար կռիւի կը բռնուի ու ամբողջ խումբը կը նահատակուի :

Յաջորդ օրը, Յուլիս 11-ին, լեռներու ծերպերէն ու դազաթ-

ներէն, մեր լեռնաբնակները կը նշմարեն որ Մշոյ Դաշտը, որ ամալի էր Յունիս 28-ի՝ Դաշտի համատարած կոտորածէն ի վեր, ԼԵՑՈՒԱԾ է մարդկային անհամար բազմութեամբ մը, որ արեւելքէն դէպի արեւմուտք խոյս կու տայ՝ «տեղագին անապարանով մը» (Միսակ Բդէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 428), կամ՝ Վահան Փափազեանի որակումով, «սարսափահար արագութեամբ» («Իմ Յուշերը», Բ., էջ 381) :



ՊՐՆ. ԱԻԵՏԻՍ՝ ՌՈՍՏՈՄԻ ԼԵՑ ՄԻԱՍԻՆ

Հիմա՛, պատեհութիւն տա՛նք Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բդէեանին, որ մանրամասնօրէն եւ հանգամանօրէն մեզի ներկայացնէ թուրք եւ քուրդ մուհաջիրներու այս ալիծուփ եւ լեղապատառ փախուստի իրական ու հարագատ՝ իր ականատեսի պատմութիւնը.—

«Հետեւեալ օրը (Յունիս 11-ին, Ծնթ. Ա. Տ.), կը տեսնենք որ ամբողջ դաշտը լեցուած է մեծ բազմութեամբ մը. մարդիկ, իրենց ընտանիքներով, սայլերով, կենդանիներու հօտերով, բոլորն ալ՝

Ձխուրայ եւ Քոսուրայ լեռներու կողմերէն գալով, դէպի Մուշ քաղաքի կողմը կը յառաջանան՝ տենդագին աճապարանքով մը :

«Դիտակներով կը գննենք եւ կը համոզուինք որ անոնք թուրքեր եւ քուրդեր են, եւ կը խորհինք որ անպատճառ արտաքոյ կարգի պատճառ մը ունին՝ այդ զանգուածային տեղաշարժին համար, կը մտածենք որ անպատճառ թշնամի զօրքին առջեւէն է որ խոյս կու տան :

«Այս գաղթաշարժը այսպէս շարունակուեցաւ անընդհատ՝ Ն-ՐԵՔ ՕՐ, գիշեր ու ցերեկ : Դաշտի հայ գիւղերու մէջ, ուր նախապէս ճրագ չէինք նշմարեր բնաւ, այս երեք օրերու ընթացքին, ամբողջ գիւղերու տունները լեցուած են մուհաջիրներով, կամ՝ դաշտի մէջ վրաններ լարեր են, եւ ամբողջ դաշտը՝ տօնախմբութեան հանդիսաւոր օրերու նման, լոյսերու մէջ կը լողար :

«Երեք օր յետոյ, բոլորն ալ քաշուած, գացած էին Խըզըլաղաջի կողմով՝ Գինջ եւ Ճապաղջուր անցնելու համար :

«Համակ դաշտը նորէն ամայացեր էր եւ որեւէ կենդանի շունչ չէր նշմարուեր :

«Այլեւս, բոլորս ալ համոզուեցանք որ ոռուսական բանակը, խոր ֆունկն արթննալով, վերջապէս սկսեր է յամբարայլ յառաջանալ դէպի Մուշ : Եւ մենք ակնդէտ կը սպասէինք խաղախներու երեւնալուն :

«Բայց, երկու օր կ'անցնի եւ ո՛չ ոք կ'երեւնայ :

«Քմբապետ Արօ Շահրիկեան, որ Հաջի Յակոբի հին դինակիցներէն ըլլալով, քաղաքի մէջ՝ Հաջի Յակոբի եւ իմ խորհրդակցութեանց միշտ կը մասնակցէր, ու հին, փորձուած, թրծուած, անձնազոհ երիտասարդ մըն էր, շատ հեզ ու մեղմ բնաւորութեամբ, բայց կռիւի մէջ մտած պահուն՝ յանդուգն եւ անվախ կը դառնար, ա՛ն ալ, ինծի պէս կը խորհէր որ այս թուրք եւ քուրդ փախստականները, անպատճառ, ոռուսերու առջեւէն է որ կը փախչէին դէպի արեւմուտք, եւ համոզուած էր որ ոռուսական բանակը սկսած էր յառաջանալ Ախլաթի եւ Բուլանքի ճակատներուն վրայ, որոնք հազիւ 12 ժամուան հեռաւորութիւն ունէին Մշոյ Դաշտէն :

«Բայց, երկու օր կ'անցնի եւ անոնք չեն երեւնար :

«Երկուքս ալ սկսանք մտմտալ՝ խորհելով որ թերեւս անակընկալ խոչընդոտ մը պատճառ եղած ըլլալու է անոնց չերեւնալուն :

«Սակայն, այս առիթէն պէտք է օգտուինք. պէտք է որ միւս ընկերներն ալ ՀԱՄՈՋԵՆՔԻ եւ ամբողջ փախստականները հետերմիս առած՝ ԱՆՑԻՆՔԻ-ԵՐԹԱՆՔԻ ոռուսական բանակը :

«Արօն՝ մեր այս կարծիքը յայտնեց Փափազեանին, որ ըսեր է թէ պէտք է զինուորական ժողով գումարէ՝ այդ թելադրութիւնը



ՄՈՒՇ ՔԱՂԱՔԱՑԻ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

քննելու համար: Շատերը իրենց համամտութիւնը յայտնեցին այդ առաջարկին, սակայն Փափաղեան ԸՆԴԴԻՄԱՑԱԻ [Ա.], ըսելով թէ՛

«Առաջին. դեռ չորս օր է որ Պրն. Աւետիս, իր խումբով զըրկուած է ուսական բանակը, որ եթէ մօտ ըլլար, պէտք էր որ Աւետիս մինչեւ հիմա վերադարձած ըլլար:

«Երկրորդ. առանց Սասունի ուժերու եւ Ռուբէնի հաւանութիւնն առնելու, այս տեսակ ծանր պատասխանատուութիւն ՉՈՒՋԵՐ ՍՏԱՆՁՆԵԼ: Եթէ անցնիլ, երթալ պէտք ըլլայ, պէտք է որ Սասունի 30,000 ժողովուրդը եւ կողող ուժերը հոս գան, անկէ յետոյ՝ միասին կ'անցնինք-կ'երթանք: Ձեր այս պահանջը այսօր իսկ պիտի հաղորդեմ Ռուբէնին [Բ.]:

«Ասկէ դատ, քանի որ պարոն Աւետիս ուշացաւ, կրնանք ուրիշ խումբ մը զրկել, զոնէ ուսերուն ո՛ւր ըլլալը իմանայ եւ մեզի հաղորդէ: Այն ատեն, եթէ յարմար դատենք, կրնանք անցնիլ-երթալ»:

«Թէեւ մենք ալ, սկզբունքով, դէմ չէինք այդ առարկութեանց, բայց դիտել տուինք որ այդ բաներն ընելը քաւական երկար ժամանակ կ'առնէ ու ԹԵՐԵԻՍ այդ ատեն՝ ուսերը ԵՏ ՔԱՇՈՒԱՍ ԿՐԼԼԱՆ, եւ մեմք պիտի չկարողանանք հասնիլ անոնց, եւ այդպիսով՝ ա՛լ աւելի պիտի տուժնմք:

«Իայց Փափաղեան ՅԱՄԱՌՕՐԷՆ ՊՆԴԵՑ իր ըսածներուն վրայ եւ մեր օտարասէր տղաքն ալ համամիտ գտնուեցան իրեն, եւ որոշուեցաւ նորէն մարդ զրկել ուսական բանակ:

«Նոյ Նահապետը, իր տապանէն՝ առաջին ազուաւ բաց թողելով, երբ տեսաւ որ ան չվերադարձաւ, ստիպուած՝ երկրորդ մը բաց թողուց, ի վերջոյ՝ երրորդ մըն ալ:

«Փափաղեան ա՛լ այդ օրինակին հետեւելով, պարոն Աւետիսի վերադարձէն յուսահատ, երկրորդ խումբ մը ճամբայ հանեց: Վարդենիացի Յարութիւն Վարժապետը յանձն առաւ երկու ընկերներով երթալ, եւ Երեկոյեան՝ ճամբայ ինկաւ դէպի իր հայրենի գիւղը, Վարդենիս, մեր տեղէն ութ ժամուան հեռաւորութիւն մը, եւ մենք՝ ԵՐԵՎԱՆ ՕՐ սպասեցինք անոր վերադարձին, ի զո՛ւր:

«Այդ խումբին մեկնելէն երեք օր յետոյ, աստու մը, կը տեսնենք որ Մշոյ Դաշար նորէն լեցուած է մարդոցով, սայլերով, կենդանիներով եւ ոչխարի հօտերով, որոնք կը վերադառնան դէպի Բուլանքի, Զխուրի, Բաղէշի կողմերը եւ դաշտի քուրդ գիւղերու մէջ,



ՏԱՐՕՆԻ ԾԵԱՎՈՒ ԳԻՒՂԱՑԻ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

— Թիւ, Բլաթուխ, Յորկնոց, Պարտիկ, ևւ այլն, — ճրագները նորէն սկսան վառիլ՝ զիչեր ատեն:

«Այդ ատեն, Փափաղեան ալ, փախտականներուս հետ մէկտեղ, սկսաւ մտմտալ՝ առանց բառ մը արտասանելու: Անշուշտ, իր խիղճը զինք կը ՏԱՆՁԷՐ ՆԵՐՍԷՆ որ նորէն, ԻՐ ՅԱՄԱՌՈՒԹԵԱՄԲ, պատճառ դարձաւ 25,000 հայութեան փճացման [Գ.]:

«Փափաղեան կ'որոշէ երրորդ սուրհանդակ մըն ալ ճամբայ հանել՝ գոնէ ստուգելու համար այս վերջին իրադարձութիւնները և հասկնալու համար թէ ոուսական բանակը մինչև ո՞ւր նահանջած է:

«Այս անգամ յանձն կ'առնեն Բուլանըքցի Վարժապետ Մարտիրոսը և Գասպար Չափուշը, որոնք՝ ութ ընկերներով ճամբայ կ'իյնան՝ երեկոյեան մութին, Հացիկ զիւղի ձորով: Ասոնք Բուլանըքցի ըլլալուն, ծանօթ էին ճամբաներուն, բայց նորէն՝ առանց լուրի մնացինք, և մեր բոլոր յոյսերը օդի մէջ ցնդեցան» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 428-430) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Տարօնցի Աւագ յուշագիր Միսակ Բղէեանի յուշերէն եղած այս ընդարձակ արտագրումները ինքնայայտ կերպով ՅՈՅՑ ԿՈՒ ՏԱՆ այն ակնբախ տարբերութիւններն ու հակասութիւնները, որոնք գոյութիւն ունին այդ երկու յուշագիրներու ներկայացուցած պատմական իրողութեանց միջև:

Մենք, հոս, պիտի չյամենամք մատնացոյց ընելու այդ տարբերութիւններն ու հակասութիւնները, քանի որ մեր ուշիմ ընթերցողները շատ դիւրութեամբ կրնան իրարմէ կանազանել առաջին յուշագիրին (Վահան Փափաղեանի) ներկայացուցած «պատմութեան» յերկրածոյ նկարագիրը, իսկ երկրորդին ալ՝ իրական, նշմարիտ և հարազատ պատմութեան արտացոլումը՝ Միսակ Բղէեանի այնքան պարզ, անսեթեւեթ և ընական նկարագրութեան մէջ:

Մեզի համար, սակայն, այս ընդարձակ արտագրութեան մէջ, ումենէն կարեւոր կէտը, հոս, Վարդենիսցի Յարութիւն Վարժապետի առաքելութիւնն է, — Երկրորդ Սուրհանդակներու Պոմբը:

Ի՞նչ եղած է սուրհանդակներու այս երկրորդ խումբին ճակատագիրը. Յարութիւն Վարժապետը և իր երկու ընկերները ապահով հասե՞ր են իրենց հայրենի զիւղը — Վարդենիս, — և կատարե՞ր են իրենց ստանձնած պարտականութիւնը:

* * *

[Ա.] Յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան կը գրէ այս առթիւ.

«Ժողովրդական բաղձանքին վրայ, տեղի կ'ունենայ մեծ ժո-

ղով մը, որուն կը նախազահէ Վահան Փափաղեան», և որուն կը մասնակցէին՝ իրմէ զատ, նաև Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան, Ալիջան զիւղի զիւղապետ Յարութիւն Սարուխանեան և ուրիշներ, ու կը շարունակէ.—

«Երկար և բուռն վիճաբանութենէ մը վերջ, ննչոզ մեծամասնութեամբ կ'որոշուի քանի մը զիչերուան մէջ, ժողովուրդը խումբ խումբ անցընել Չխուրայ կողմով՝ ոուսական բանակը, ու իրենց որոշումը անմիջապէս հաղորդել Սասուն:

«Անյայտ մնացած պատճառներով, Փափաղեան, — որովհետև տրուած որոշումը իՐ ՓԱՓԱՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԷՐ, — կը յայտարարէ որ մինչև Սասունէն պատասխան ստանալը, ինք գուտ զինուորական ժողով պիտի գումարէ և այս ժողովին որոշումները պիտի հաղորդէ ժողովրդեան» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջք 69-70), և քիչ վարէն ալ կը շարունակէ.—

«Կամայականութեան ըսենք թէ տարբեր մտայնութեան երեսէն, վարիչ խմբակը ԿԱՐԳԻԼԷ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ իՐ ԳԼԵՈՒԻ ՃԱՐԸ ՆԱՅԻԼ — Չխուր երթալով ազատիլ, մինչդեռ ո՛չ ոուս բանակը կու գայ և ո՛չ այլ ինչ, և պատճառ կը դառնան որ այդ հաւաքուած բազմութիւնն ալ կեր երթայ թուրք եաթաղանին» (նոյն, էջ 71) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Իսկ պատանի յուշագիր Մուշեղ Դուռնեան ալ՝ հետեւեալ տեղեկութիւնները կու տայ.—

«Ռուսերու մերձաւորութեան պատճառով, թուրք և քուրդ բազմութիւններ՝ Մշոյ դաշտի արեւելեան կողմէն կը նահանջէին դէպի արեւմուտք, Մուշ քաղաքի կողմը: Թէե՛ի ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹ ԷՐ որ մենք ալ դէպի Չխուր յառաջանալով՝ միանայինք անոնց, բայց Վահան Փափաղեան ԱՐԳԵԼՔ ԵՂԱԻ, քանի որ Սասուն ապաստանած Ռուբէնէն՝ լուրերու կը սպասէր և կը ԿԱՐԾԷՐ թէ ոուսերը ԴՆՈՒ ՊԻՏԻ ՅԱՌԱՋԱՆԱՅԻՆ մինչև Մուշ, և իրենք՝ ԱԻՆԼԻ ԴԻԻՐՈՒԹԵԱՄԲ պիտի կրնային ազատիլ» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 655) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* * *

[Բ.] Յուշագիր Վահան Փափաղեանի վերոյիշեալ խօսքերէն կարելի է հետեւցնել որ ինք, Վահան Փափաղեան, որոշ յանձնառութիւններ ստանձնած էր Ռուբէնի հանդէպ՝ Սասունէն դէպի Հաւատորիկ և Քան վերադառնալէն առաջ: Եւ, անտարակոյս, այդ ըլլալու էր պատճառ որ ան միշտ կ'ընդդիմանար թէ՛ համաժողովը-

դական բուն բազմամբին եւ թէ՛, նոյնիսկ, Զինուորական Խորհուրդի որոշումին ալ:

Վահան Փափազեանի այն առարկութիւնը թէ «Առանց Սասունի ուժերու եւ Թուրքի հաւանութիւնն առնելու, Ինժ ՏՐԱՄԱԴԻՐ ԶԷՐ ԱՅՒ ՏԵՍԱԿ «Ծանր պատասխանատուութիւն» ստանձնելու, ՅԱՅ-ՏԱՐԱՐ ՆՇԱՆ է այդպիսի յանձնառութեան մը:

Երբ Վահան Փափազեան կը գրէր թէ «երկու կենսական մտահոգութիւններ ունէինք այդ օրերուն (Սասունէն՝ Հաւատորիկի եւ Քանայ լեռները վերադարձին ատեն, Ծնթ. Ա. Տ.), ուսական բանակին — աւելի շուտ՝ մեր կամաւորական գունդերուն — լուր հասցընել, ինդրելով որ գիշերով մը անոնց ձիւորները իջնան դաշտ... ու մենք, անոնց պաշտպանութեան տակ՝ անցնէինք սահմանը: Երկրորդ մեր մտահոգութիւնը՝ ժողովուրդի սնունդն էր եւ ինքնապաշտպանութիւնը» (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 370), այս երկու պարտականութեանց ստանձնումը ինքնապաշտպանութիւնն էր (հետեւեցնելով Թուրքի հետ իր ունեցած ամենավերջին խօսակցութենէն՝ Սասունէն դէպի Հաւատորիկ լեռները վերադառնալէն առաջ), թէ ո՛չ, ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ ՄԸ Թուրքի հանդէպ:

Քանայ լեռներու մէջ կայացած համաժողովրդական եւ Զինուորական Խորհուրդի խորհրդակցութեանց ընթացքին, Վահան Փափազեանի ըրած յայտարարութիւնը եւ յարուցած առարկութիւնը թէ «Առանց Սասունի ուժերուն եւ Թուրքի հաւանութիւնն առնելու, Ինժ ՏՐԱՄԱԴԻՐ ԶԷՐ այդ տեսակ «ծանր պատասխանատուութիւն» ստանձնելու, ենթադրել կու տան որ ինք, Վահան Փափազեան, ո՛չ թէ այդ լեռներու մէջ ծուարած փախստական բազմութեանց օգտակար ըլլալու նուիրական պարտականութեամբ ու նպատակով էր որ հոն վերադարձած էր, ԱՅԼ՝ Թուրքի հանդէպ իր ստանձնած յանձնառութիւնը Ի ԳՈՐԾ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Սասունցի Մուշեղ կը պարզաբանէ այդ կէտը, երբ կը գրէ հետեւեալ խիստ յատկանշական տողերը, որոնք շատ պարզ կ'ընծայեն այդ կէտը.—

«Այնտեղ (Քանայ լեռը, Ծնթ. Ա. Տ.) ժամանակ մը վերջ կը լաւանայ (Վահան Փափազեան) եւ կ'անցնի Սասուն՝ Թուրքի մօտ: Այս հանդիպումին, ԿՈՐՈՇՈՒԻ ԿՈՄՍԻՆ ՔԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ, որ պէսզի հնարաւոր ըլլայ ԿԱՊ ՍՏԵՂԾԵԼ յառաջացող ուսերուն հետ» (Թուրքի, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Հատոր Է., «Խմբապետ Սասունցի Մուշեղի Յուշերը», էջ 74) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Սասունցի Մուշեղի այս յոյժ տրամաբանական յայտնութիւնը կը հերքէ ճշտութիւնը եւ հարազատութիւնը Վահան Փափազեանի

այն յայտարարութեան, զոր հանդիսաւոր կերպով կ'ընէր թէ ինք Սասունէն՝ Հաւատորիկի եւ Քանայ լեռները վերադարձած էր աւելի՛ ազգասիրական, աւելի՛ նուիրական եւ մանաւանդ՝ աւելի՛ անանձնական ու աւելի՛ անշահախնդրական նպատակի մը ծառայելու համար, որ էր «պաշտպանել» ու «պահպանել» այդ լեռներու 20-30 հազար անձար փախստականները, մինչդեռ իր աղբարիկ խմբապետ յուշագիրը՝ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՏԱՐԲԵՐ առաջելութիւն կը վերստին իր վերադարձին:

Հետեւաբար, ամբողջովին ԿԵՂԾ ԵՆ ԵՂԵՐ Վահան Փափազեանի՝ իրեն վերագրած այն գոհաբերական գագուտները եւ Սասունէն «անվերադարձ» մեկնած ատեն, բաժանումի վերջին վայրկեանին ալ, Թուրքի հետ ունեցած «մեռնելու» խօսքերը, երբ կը գրէ.—

«Երբ ես եւ Թուրքի, ծառին տակ, մեր վիշտն ու տրտմութիւնը կ'ապրէինք, լուռ նայեցայ իրեն եւ վնասական ձայնով ըսի թէ վար՝ ժողովուրդին քով պիտի երթամ... Ինչ ընելու, ես ալ չեմ գիտեր, բայց անկարելի է այլեւս մնալ այսպէս հոս:

«Թուրքի, արցունքոտ աչքերով, երկար նայեցաւ ինձի ու շնչաց:

«— Երեւի մեռնի՛ր կ'ուզես, Կ'ԵՐԹԱՍ ՄԵՆՆԵԼՈ՞Ւ:»:

«— Զգիտեմ, — ըսի, — բայց ՊԵՏԻ է ՈՐ ԵՐԹԱՍ:»:

«Երբ սեւ գիշերը կ'իջնար Ծենիկ-Սեմալի հովիտին մէջ, քանի մը զինուորներու հետ միասին, դանդաղ ու մտահոգ՝ բռնեցինք անվերադարձ այդ ճամբան» («Իմ Յուշերը», Բ., էջ 366-367) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

[Գ.] Պատմական իրողութեանց ամենավատքաբ տեսակի ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄ մըն է, երբ Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունի, շնական համարձակութեամբ մը, ԱՆՏԵՍԵԼՈՎ իր տրամադրութեան տակ գտնուած Տարօնցի Արմաշական Յակոբ Տէր Զաքարեանի ձեռագիր յուշերու մերկայացուցած պատմական ճշմարիտ փաստերը, կ'ընէ հետեւեալ անճիշտ, անարդար եւ յերիւրածոյ վերագրումները, զոր կ'ընդգծենք ստորեւ.—

«Երկու 13-ին, երբ կամաւորական գունդերը եւ Սորսի վրայով առաջացող ուս զօրամասերը Դատուանի շրջանը կը գրաւեն, Թուրքերը կը դատարկեն (իրբեւ թէ՛ «կը պարպեն» ըսել կ'ուզէ, Ծնթ. Ա. Տ.) Նեմրութի, Գրգուռի եւ Մշոյ Դաշտի արեւելեան մա-

սերը: Քուրդերը խուճապահար կը հեռանան Վարդենիսի, Ղարսի եւ Խասգիւղի շրջաններէն:

«Մառնիկի լեռնալանջերուն վրայ նստած ժողովուրդը կը տեսնէ այդ երեւոյթը եւ Ձի ՇԱՐԺԻՐ ԻՐ ՏԵՂԷՆ: Վահան Փափազեան կը յայտնէ որ ցերեկները կը նշմարէին անհաշիւ բազմութիւնը, որ էր անասուններով կը տեղափոխուէր Սուրբ Կարապետի շրջանը: Գիշերները աւելի բացայայտ նշաններ կը նշմարեն. Մշոյ դաշտի արեւելեան մասը, այսինքն, Քանայ սարի ստորոտը տարածուած մասը կատարեալ խաւար է, մինչդեռ Սուլուխէն անդին, դէպի Ս. Կարապետ՝ բազմահազար խարոյկներ կը վառին: Կը գիտակցին քէ քրքապան Գահանց մըն է, բայց ՈՐԵԻԷ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹԵԱՆ ՁԵՆ ԴԻՄԵՐ: Յուլիս 16-ին, ցերեկով, Վահան Փափազեան կը նշմարէ Ռուս կողակներու ձիաւոր հետախոյզ շոկատը, որ կ'առաջանայ մինչեւ Մկրագոմ եւ նորէն ետ կը դառնայ: ԵՐԵՔ ՕՐ, թուրքերն ու քուրդերը քաշուած են Մշոյ դաշտէն, ԵՐԵՔ ՕՐ ԱՂ՝ դաշտի արեւելեան մասերը դատարկ մնացած են, ՍԱԿԱՅՆ Ո՛Ձ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ, Ո՛Ձ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ եւ Ո՛Ձ ԱՂ՝ ԲՆԱԶԴԻՆ ԿԱՌՁԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՏԵՂԷՆ ՁԵՆ ՇԱՐԺԱԾ եւ ՕԳՏՈՒԱԾ ԱՅՍ ՊԱՏԵՀՈՒԹԵՆԷՆ»:

«... ՇՇՄԱԾՈՒԹԻՒՆ ՄԸ, ԱՆՅՈՒՍՈՒԹԻՒՆ ՄԸ, որ ԿԱՄԱԶՐԿՈՒԹԵԱՆ ՀԱԻԱՍԱՐ ԷՐ, ՏԻՐԱԾ ԷՐ ԲՈՂՈՐԻՆ»:

«... Քան ապաստանողները, Յուլիս 15-20-ին ստեղծուած պատեհութեան ՉԿՐՑԱՆ ՕԳՏՈՒԻԼ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 991-992) [Բոլոր տեսակի ընդդժուումները մերն են, Ա. Տ.]:

Մարդ ամենազազիր արարած ըլլալու է, որպէսզի գիջանի այս աստիճան լՐԲԵՆԻ ՇՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ցուցադրելու՝ յայտնօրէն ջանալով խեղաթիւրել եւ խարդախել Տարօնի Հարազատ պատմութիւնը, գրելով մեր կողմէ ընդդժեալ վերի տողերը, երբ ինք, Տարօնի Աշխարհի մետասաներորդ ժամու «պատմադիրը», Կարօ Սասունի կողեցեալ, մեզմէ ՇԱՏ ԱԻՆԼԻ ԼԱԻ ԳԻՏԷՐ Քանայ լեռներու միջ տիրող իրական կացութեան հարազատ ու ճշմարիտ պատմութիւնը՝ իր տրամադրութեան տակ գտնուող — նորէն կը կրկնենք, — Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեանի ձեռագիր արժանախաւատ յուշերէն, ուր ինք, իր կուրնալիք աչքերով, կը կարդար իր աւագ ընկերոջ, բիրոյսական յուշագիրի խաղցած Ա՛ՅՆՔԱՆ ՏԵՆՈՒՐ եւ Տարօնալմաս դերի մասին, զոր շատ յստակ ընծայել տուինք՝ ուրիշ նոյնքան արժանահաւատ եւ ակնատես Տարօնցի յուշագիր Միսակ Բղէեանի յուշերէն եղած ընդարձակ արտագրումով ալ...:

Ի տես Քանայ լեռներու մէջ տիրող այս յոյժ սրտածմլիկ կացութեան, Կարօ Սասունի, ԿԵՂԾ ԶԱՐՄԱՆՔՈՎ ՄԸ, կը բացազանչէ —

«Տխուր, շա՛տ տխուր իրականութիւն է այս... Մարդկային

հոգիի ԱՅՆՊԻՍԻ ՓԼՈՒԶՈՒՄ ՄԸՆ է որ առողջ տրամաբանութեամբ չի բացատրուիր» (նոյն, էջ 994) [Բոլոր ընդդժուումները մերն են, Ա. Տ.]:

Տարօնի Հարազատ ու ճշմարիտ պատմութիւնը այսպիսի խեղաթիւրուած եւ խաթարուած ձեւով ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԷ ՅԵՏՈՑ, Սասունցի կուսակցազար «պատմադիր»-ի՝ շնակափորէն ցուցադրած այս «ԶԱՐՄԱՆՔՆ» է որ իրական գարմանք կը պատճառէ ո՛չ միայն «պատմութիւնը ուսումնասիրողին», այլեւ նոյնիսկ, հասարակ ընթերցողին ալ, որոնք շատ յստակօրէն կը տեսնեն Կարօ Սասունիի խարդաւանգներ եւ պատմական ճշմարտութիւնները ծամածոյնու եւ սխալ ներկայացնելու իՐ ԱՆՊԱՐԿԵՇՏ ԿԵՐՊԵՐԸ, խուսափիլ ջանալով ՏԱԼԷ անուր ԱՅՆ ՄԻԱԿ ԱՆՁԻՆ, իր բիրոյսական աւագ ընկերոջ — Վահան Փափազեանին (գոնէ մենք տանք անոր անունը), որ ԶԱԽՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ «իւր բնազդին կառչած» այդ տառապակոծ ժողովուրդի փրկութեան եւ ազատութեան Համար թափուած բոլոր անկեղծ ու սրտցաւ ջանքերը՝ իր «կամակոր յամառութեամբ»...:



ԳԼՈՒԽ Է.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեան, որ Օգոստոս 2-ին, միացած էր Մուշ քաղաքացի յայտնի Հայդուկ Պատիկ Արամ Յակոբեանի ութսուն հոգինոց խումբին եւ կովկաս անցած, Թիֆլիսի մէջ, օր մը, պատահարար դէմ-յանդիման կու գայ Վարդենիսցի Յարութիւն Վարժապետին եւ Բուլանքցի Մարտիրոս Վարժապետին, որոնք գլխաւորած էին Երկրորդ եւ Երրորդ Սուրհանդակներու խումբերը, եւ սպաննուած կը կարծուէին՝ իրենց առաքելութեանց ճամբուն վրայ:

Սակայն, մեծ կ'ըլլայ զարմանքը յուշագիր Միսակ Բղէեանի, երբ անակնկալ կերպով իր դիմաց կը գտնէ երկու վարժապետ սուրհանդակները, Թիֆլիսի մէկ փողոցին մէջ:

Կրկին անգամ, պատեհութիւն տանք մեր ստուգապատում յուշագիրին, որ մեզի ներկայացնէ Վարդենիսցի Յարութիւն Վարժապետէն յաճոյսը.—

«Թիֆլիսի Երեւանսկի Պողոտային վրայ ման գալուս, յանկարծ կը հանդիպիմ Վարդենիսցի Յարութիւն Վարժապետին եւ Խոչկեալտեցի (Բուլանք) Մարտիրոս Վարժապետին: Խենթեանալս կու գայ, երբ այդ երկուքն ալ կը տեսնեմ ողջ-առողջ:

«Անշուշտ, ընթերցողը կը յիշէ որ այդ երկուքն ալ մեզ հետ էին՝ Հաւատորիկի լեռները եղած ատեննիս, ուրկէ՝ Փափագեանի յանձնարարութեամբ, երեք անգամ սուրհանդակներ ղրկուեցան դէպի ոռւսական բանակը. առաջին, Պարոն Աւետիսի խումբը՝ տասը տղաներով, երկրորդ, Յարութիւն Վարժապետը՝ երկու ընկերներով. երրորդ, Պարոն Մարտիրոս՝ ինը ընկերներով, որոնք տարբեր տարբեր ուղղութեամբ, տարբեր ժամանակներու մէջ, ճամբու դըրուեցան, եւ անոնցմէ ո՛չ ոք վերադարձաւ, անանկ որ կը կարծէինք թէ անոնք, բոլորն ալ, սպաննուած էին:

«Այդ պատճառով ալ, ուրախութիւնս եւ հետաքրքրութիւնս մեծ եղան, երբ երկու տարբեր ուղղութեամբ մեկնող երկու ընկերները ողջ կը տեսնեմ: Իրենց հետ, մօտակայ սրճարան մը երթալով, կը խնդրեմ որ ամէն մէկը պատմէ իր գլխէն անցած-դարձածները, խոստանալով որ ես ալ պատմեմ իմ գլխէն անցածները, եթէ տրամադիր ըլլան լսելու:

«Ասիկա է Վարդենիսցի Յարութիւն Վարժապետի պատմածը.—

«— Ձեր քովէն դատուած գիշեր, առանց որեւէ միջադէպի բռնուելու, հասայ մեր գիւղը (Վարդենիս), ուր՝ տուներու մէջ որեւէ մարդ չկրցայ գտնել. փողոցները, տուները լեցուած էին բազմաթիւ դիակներով: Անօթի էի. մեր տան մէջ բնաւ բան չգտայ ուտելու. դրացիներու տուները պտտելով՝ ալիւր գտայ, խմոր շաղցի եւ հաց եփեցի մեզի համար: ԽՈՐՀԵՑԱՅ որ մօտակայ շամփը երթամ, ՀԱԻԱՆԱՐԱՐ հոն ապաստանողներ ըլլան, եւ յիրաւի, հոն կը գտնենք մեր գիւղի, Արտօնք, Ղարս, Մուշաղչէն գիւղերու բնակչութեան մեծամասնութիւնը, մօտ երեք հազար անձեր — այր, կին ու երեխայ [Ա.]:

«Պարոն Հարաթ Թիֆլիսէ բռնուած՝ հիւանդ վիճակի մէջ կը գտնեմ: Մեր առաքելութեան նպատակը կը բացատրեմ եւ կը փափաքիմ գիտնալ թէ ոռւսական բանակը ո՞ւր կը գտնուի: Ինծի կը պատմեն որ ոռուս զօրքերը մեզմէ վեց ժամ հեռու կը գտնուին, Տափալանքի կողմը: Կ'որոշենք առտուն հոն երթալ, եւ Մուշի ու Սասունի մասին տեղեկութիւններ տալով, անոնց օգնութիւնը հայցել:

«Յաջորդ առաւօտ, կը ծրագրենք երթալ աւերակ ջաղացներու մէջ անցընել ցերեկը, եւ երեկոյեան ալ ջանանք անցնիլ այն կողմ:

«Շամփէն դուրս կու գանք մի քանի ընկերներով. հեռուէն կը նշմարենք խումբ մը ձիաւորներ, որոնք դէպի մեր կողմը կու գան: Կարծելով թէ Մուսա Բէգի չեթէներն են, իսկոյն կը փորձենք պահուրթիլ, բայց անոնք մեզ տեսնելով, քառասմբակ դէպի մեր կողմը կու գան. կը ճանչնանք զանոնք — ոռուսական խաղախներ էին:

«Իսկոյն, ամբողջ ժողովուրդով, անոնց ընդ առաջ կ'երթանք: Անոնց մէջ կովկասահայեր ալ կային:

«Մեր ուրախութիւնը չափ ու սահման չունէր:

«Մենք կը կարծէինք որ ոռուսական բանակն ալ իրենց ետեւէն կու գար: Սկսանք անոնց պատմել քաղաքի եւ դաշտի ջարդերու մասին. ըսինք թէ Սասունի եւ Հաւատորիկի լեռները՝ յիսուն-վաթսուն հազար փախստականներ կը գտնուին՝ վերջին ծայր յուսահատական վիճակի մէջ եւ ձեզի կը սպասեն:

«Անոնք յայտնեցին որ իրենք հետազօտիչ խումբեր են. այս կողմերն եկած են թշնամի ուժեր փնտռելու եւ լրտեսելու: Երեկոյեան պիտի վերադառնան բանակատեղին: Բանակը ե՞րբ պիտի սկսի յառաջանալ, չէին գիտեր: Եւ մեզի թելադրեցին որ եթէ ջուրդերու յարձակումներէն կը կասկածինք, կրնանք երթալ բանակին քով, որ մեր տեղէն չորս ժամ հեռու կը գտնուէր:

«Ու իրենք, մեր քով երկու ժամ հանգստանալէն յետոյ, ան-

ցան Արտօնաց, Ոարսայ, Ալիզըլընայ, Թիլի, Ազաղբուրի շրջաններու հետազոտութեան:

«Իսկ Շամփի մէջ գտնուող ամբողջ ժողովուրդը ուղղունցաւ դէպի ոռոսական բանակը, առանց որեւէ բուրք կամ ֆուրդ գորփի հանդիպելու:

«Երբ ոռուները մեզ տեսան, սիրալիբ ընդունելութիւն մը ցոյց տուին եւ յանձնարարեցին որ բանակատեղիէն քիչ հեռու գտնուող դատարկ գիւղեր երթանք տեղաւորուինք»:

«— Հապա՛, — հարցուցի, — քու առաքելութիւնդ ի՞նչ էր. զքեզ ի՞նչ բանի համար զրկեցինք. այդքան բան տեսնելէ յետոյ, ինչո՞ւ չվերադարձար՝ մեզի լուր տալու, եւ պատճառ դարձար այդ հազարաւոր անմեղ զոհերուն:

«— Նախ որ ես ալ կը յուսայի, — պատասխանեց, — թէ Ռուս բանակը պիտի շարունակէր յառաջանալ. նահանջը բնաւ չանցաւ մտքէս. երկրորդ, որ շատ յոգնած էի, չկրցայ վերադառնալ: Ուրիշ որու որ աղաչեցի, ո՛չ ոք յանձն առաւ, եւ հետեւեալ օրն իսկ, նահանջը սկսաւ, եւ մենք ալ, բանակին առջեւէն ու ետեւէն երթալով, անցանք Կովկաս» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 473-475) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ուշադիր ընթերցողը շատ դիւրաւ կրնայ նշմարել թէ ո՛րքան հեշտ պիտի ըլլար Քանայ եւ Հաւատորիկի լեռնալանջերուն վրայ ծուարած այս մեծագանգուած փախստականներու փրկութեան եւ ազատութեան գործը, եթէ անոնք դժբախտութիւնը չունեցային իրենց զեկավար ու առաջնորդ ունենալու Վահան Փափազեանի նման յամառ, կամակոր եւ միշտ անձնական հաշիւներով կամ նկատումներով առաջնորդուող «պարոն» մը:

Ո՛րքան երջանիկ պիտի ըլլային իրենք, Քանայ եւ Հաւատորիկի լեռնաբնակ քսան եւ հինգէն մինչեւ երեսուն հազար թշուառ այս փախստականները՝ իրենց ծայրայեղօրէն անմխիթար, անտավարակ եւ սովալլուկ վիճակին մէջ ԱՆԳԱՄ, եթէ «պարոն» Վահան Փափազեան շարունակէր մնալ Սասուն, հո՛ն՝ «վայելելով» իր ընկեր Ռուբէնի «սիրալիբ» ընկերակցութիւնը, եւ բնաւ-երբեք չհետաքրքրուէր իրենց «պաշտպանութեան» ու «պահպանութեան» խնդրով:

Այդ բարեբաւտիկ պարագային, «իր բնագոյն կառչած» ժողովուրդը (գործածելով Կարօ Սասունիի այդ բացատրութիւնը, տեսնել «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 992) Ի ՎԻՃԱԿԻ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԻՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ՝ ԻՐ ԻՍԿ ՁԵՌՔՈՎ, եւ իր ծոցէն ծնած խոնարհ եւ ՅԻՐԱԻԻ ՍՐՏՑԱԻ զեկավարներու խորհուրդով ու առաջնորդութեամբ ալ՝ անցնէր-երթար դէպի ոռոսական բանակը,

դէպի փրկութի՛ւն, դէպի ազատութի՛ւն, յար եւ նման Վարդենիսցի Յարութիւն Վարժապետի խումբին...:

* * *

[Ա.] Կարօ Սասունի, Տարօնի հարազատ պատմութեան այս ծաղրածու «պատմագիրը», ծիծաղելի ըլլալու աստիճան՝ ոչ-պատմական, ուռուցիկ ու յերիւրածոյ պատմութիւններ կը ՀԻԻՍԷ Վարդենիսցիներու «պատրաստութեանց» եւ «մղած կոխումներու»(?) մասին, ուր «շարաքներ», «երկու շարաք», «ամիս մը ամբողջ», «տասը-տասնեւհինգ օր» բացատրութիւնները ամանագին վաճառքի հանած է՝ ՍՈՒՏԻ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ, երբ կը զրէ —

«Կոտորածէն ՇԱԲԱԹՆԵՐ ԱՌԱՋ, ժողովուրդի պաշարը եւ անհրաժեշտ իրերը գիշերով փոխադրեցին (ինք հոն էր հաւանաբար եւ իր սեփական աչքերով կը տեսնէր այդ փոխադրութեան գործողութիւնը, երբ այդ բայը կը գործածէ անցեալ կատարեալ ժամանակով, Ծնթ. Ա. Տ.) Շամփի մէջ եւ քանի մը կզգեակներու վրայ զետեղեցին: Հո՛ն փոխադրեցին Վարդենիսի, Արտօնքի, Ղարսի եւ այլ գիւղերու բնակիչները...:

«Կոռուող ուժերը եւ գիւղերու տղամարդիկ ցերեկները շամփի մէջ կ'անցնէին իրենց օրերը, մինչեւ գտնեկապը ջուրերու մէջ: Եղէզներու անտառը զիրենք կը ծածկէր... միայն գիշերները զուրս կու գային ջուրերէն, կը հանդիպէին իրենց գիւղերը, նորէն պաշար կը փոխադրէին ջրային այդ թաքստոցը: Գիւղերու մէջ կը մնային միայն պառուները, քանի մը ծերուկներ եւ երեխաները պահող տարիքոտ կիներ:

«Ամիս մը ամբողջ, այս ձեւի ինքնապաշտպանութեամբ կըրցած էին խուսափիլ վտանգներէ...:

«Երբ Յուլիս 8-ին, ամէն կողմ, օդը, ջարդի ձեռնարկեցին, Վարդենիսի եւ շրջակայ քանի մը գիւղերու բնակչութիւնը փոխադրուած էր շամփերուն (քանի՞ շամփեր կային արդեօք, Ծնթ. Ա. Տ.) մէջ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջք 925-926) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

«Վարդենիսի եւ շրջակայ գիւղերու այս ինքնապաշտպանութեան կռիւները տեւեցին տասնեւհինգ օր...:

«Տասը-տասնեւհինգ օր անընդհատ կռիւ մղելէն ետք, կը բացուի արշալոյս մը, երբ Քուրդերն ու թուրքերը լեղապատառ կը փախչին այդ շրջաններէն...» (նոյն, էջք 927-928) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Եթէ Կարօ Սասունիի այս բոլոր պատմածները իրականութիւն ըլլալին, սուրհանդակ Յարութիւն Վարժապետը ծանօթ ու գիտակ պիտի ըլլար անոնց, սակայն մենք այդպիսի «պատրաստութեանց» եւ «մղած կռիւներու» գոյութիւնը հաստատող որեւէ ակնարկութիւն մ'իսկ ՉԵՆՔ ԳՏՆԵՐ անոր պատմածներուն մէջ, ա՛յլ ընդհակառակը, երբ ինք իր հայրենի Վարդենիս գիւղը կը հասնի, ՀՈ՛՛՛՛՛ն «բազմաթիւ դիակներ» ԿԸ ԳՏՆԷ. «ԽՈՐՀԵՑԱՅ որ մօտակայ շամփը երթամ, ՀԱԻԱՆԱԲԱՐ հո՛՛ն ապաստանողներ ըլլան», կ'ըսէ, եւ «ՅԻՐԱԻԻ», կ'աւելցնէ մեծ զարմանքով, «հոն կը գտնեմք... բնակչութեան մեծամասնութիւնը»:

Յարութիւն Վարժապետի տուած այս կերպ բացատրութիւնը ինքնին կը բաւէ քննելու համար Կարօ Սասունիի կերտած Սպանիական դղեակի խախուտ հիմերը...:

Ինչպէս բոլոր դաշնակ յուշագիրները, նոյնպէս նաեւ Սասունցի այս շքնաղ «պատմագիրը», Կարօ Սասունի կոչեցեալ, իրենց տրամադրութեան տակ ունին անհուն եւ անսահման ժամանակէն ՄԵՏԱՔԱՆԱԿ ՄԹԵՐՔ ՄԸ, զոր ԱՌԱՏԱԶԵՆՆՕՐԷՆ ԿԸ ԳՈՐԾԱԾԵՆ ԸՍՏ ԿԱՄՍ:

Այսպէս. յուշագիր Վահան Փափագեան «ԵՐԵՔ ՕՐ»-ուան ժամանակամիջոց մը կը շնորհէ Մշոյ դաշտի հարիւր քսանեւէնդէն աւելի հայագիւղերու ջարդարարներուն («Իմ Յուշերը», Բ., էջ 365), երբ Ասիական բարբարոսութիւնը այդ անարգ գործը գլուխ հանած էր ՄԷԿ ՕՐՈՒԱՆ մէջ միայն — 1915 Յունիս 28-ին, Վարդավառի Կիրակի օրը: Իսկ Մուշ քաղաքի եօթեայ գոյամարտի ժամանակամիջոցը կ'երկարուէ «ՈՒԹ ՕՐ» (նոյն, էջ 377):

Սասունցի Մուշեղ, նոյնպէս, «ՈՒԹ ՕՐ»-ուան շնորհը կ'ընէ Մուշ քաղաքին (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», է., էջ 72):


Իսկ Սասունցի Մուշեղ եւ Կարօ Սասունի, երկուքն ալ, միաբերան, ԵՕԹԸ ԱՄՍՈՒԱՆ «ԿԱՏԱՂԻ ԿՈՒԻՆԵՐՈՒ» երկարածից շքրջան մը կը ՁՕՆԵՆ Սասունի եօթեայ գոյամարտին (նոյն, էջ 51, 65, 74, 75, 79, 82, 84, 91, եւ «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 15, 885, 886, 887, եւ 1009):

Վարդենիսի շրջանին մէջ, տասնեւիսգորեայ կռիւ ԶԷ՛ ՄԸՂ-ՈՒԱԾ, որքան որ կրնանք հասկնալ Յարութիւն Վարժապետի պատումէն, եւ որքան որ մեզի ծանօթ է դաշտի գիւղերու ԿՈՏՈՐԱԾԻ ԲՆՈՅԹԸ. ա՛յլ կոտորածէն ևնոյրածներն ու գերծածներն են միայն որ ապաստաներ են Զխուրայ Շամփը, յար եւ նման Հաւատորիկի եւ Քանայ, ինչպէս նաեւ Սուրբ Կարապետ վանքի անտառ-

ներն ապաստանածներուն, մինչեւ որ բացառիկ բախտաւորութիւնն ունեցեր են միանալու ոռուական բանակին:

Կարօ Սասունիի վերոյիշեալ «Յուլիս 8»-ը՝ իբրեւ Մշոյ դաշտի համատարած կոտորածի օր, սխալ թուական է: «Պատմագիրը» շփոթութիւն ստեղծելու նենգ դիտաւորութեամբ է որ խառն ի խուռն կը գործածէ թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Տոմարները՝ առանց յստակօրէն յիշելու այդ զանազանութիւնը:

Այս «Յուլիս 8»-ը՝ Նոր Տոմար է, որ կը համապատասխանէ, Հին Տոմարով, Յունիս 25-ին, Հինդաբթի օրուան, մինչդեռ դաշտի համատարած կոտորածի թուականն է, Հին Տոմարով, Յունիս 28, Վարդավառի Կիրակի օրը, Նոր Տոմարով կ'ըլլայ Յուլիս 11:



ԳԼՈՒԽ Ը.

ԱՆԴՐԱՆԻԿ ՁԷ՛ ՍՏԱՑԵՐ ԵՒ ՁԷ՛ ԿԱՐԴԱՑԵՐ
ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Արժանահաւատ Միսակ Բդէեանի յուշերէն առնուած այս ընդարձակ մէջբերումը, շատ յստակ կերպով եւ հանգամանօրէն կը նշտորոշէ Վահան Փափազեանի պատասխանատուութեան եւ յանցապարտութեան աստիճանը՝ Հաւատորիկի եւ Քանայ լեռները ապաստանած 25-30 հազար փախստական խլեակներու ԱնՀԱՐԿԻ փնտրումի եւ բնաջնջումի յայժ Խպերելի ու դատապարտելի արարքին մէջ:

Սակայն, Վահան Փափազեան շատ ճարպիկ մարդ է, կատարեալ լարախաղաց մը, իր մեղքերն ու յանցանքները պարտկելու կամ ուրիշներու վիզին փաթթելու անպարարակամ արուեստին մէջ:

Այսպէս, օրինակ.—

ա.— Մշոյ դաշտի մեծագանգուած Հայութիւնը հրակէզ բնաջնջումով կ'անէանայ, կա՛մ, Մուշ քաղաքի քսան հազարնոց Հայ ժողովուրդը կե՞ր կը դառնայ քաղաքին վրայ գոռացող չորս թնդանօթներու համայնաւեր ուռմբերուն, ինք որեւէ մաս ու բաժին չունի այդ ողբերգութեան պատասխանատուութեան մէջ, որովհետեւ, կ'առարկէ:—

«Ռուբէն յամառօրէն տեսակէտ մը կը պաշտպանէր, որ դժբախտարար մինչեւ վերջը շարունակեց, առաջնորդուելով անով թէ վտանգի պահուն, դաշտը չի կրնար պաշտպանուիլ, իսկ քաղաքը վստահելի յենարան մը չէ՛ ինքնապաշտպանութեան տեսակէտէն» (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 321), դաշտի եւ քաղաքի Հայութեան բնաջնջումի միակ պատասխանատուն ներկայացնելով Ռուբէնը:

բ.— Հաւատորիկի եւ Քանայ լեռները ապաստանած 25-30 հազար փախստականները պէ՞տք է առաջնորդել դէպի Մուշ քաղաքը դանդաղօրէն յառաջացող ոռուսական բանակը:

«— Ի՛նք չ'ուզեր այդ տեսակ ծանր պատասխանատուութիւն ստանձնել՝ առանց Սատունի ուժերու եւ Ռուբէնի հաւանութիւնն առնելու» (Միսակ Բդէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 429) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

գ.— Ռուբէն-Փափազեան 36 հոգինոց սպառազէն խումբը երբ կովկաս խոյս տալու իր գաղտնի պատրաստութիւնները կը տես-

նէր՝ Սեպտեմբեր ամսոյ սկիզբները, պատանի հերոս Լեւոն Ղազիկեան եւ Գալուստ Պրսէեան կը ներկայանան «պարոն»ներուն եւ կը խնդրեն որ զիրենք ալ առնեն իրենց խումբին հետ, սակայն այդ տարաբախտ պատանիները կը հանդիպին մեր քարսիբոս «պարոն»ներու վճռականապէս կտրուկ մերժումին: Այդ մասին՝ մեղի տուած «բացատրութեան» մէջ, Վահան Փափազեան կը գրէ:—

«Լեւոնի եւ Գալուստի՝ մեզի ընկերացնելու իմ շատ յամառնիգներու մասին՝ յուշերուս մէջ բացատրուած է. Ռուբէնը շրջանի գլխաւոր ղեկավարն էր, ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔԸ ԱՆՈՐՆ ԷՐ» (Վահան Փափազեանի Չորրորդ նամակը, 19 Յունուար 1955 թուակիր) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.], պատասխանատուութիւնը նախ քան փաթթելով Ռուբէնի վիզին (Այս կէտը մանրամասն քննութեան ենթարկած ենք «Տարօնապատում»ի Մասն Երկրորդի ԺԵ. Գլուխին մէջ):

Հիմա՛ ալ, Հաւատորիկի եւ Քանայ լեռներու բազմահազար փախստականներու փրկութեան խնդրոյն առնչութեամբ, Վահան Փափազեան գտեր է ուրիշ անձ մը, որուն վիզին կը քանայ փաթթել ամբողջ պատասխանատուութիւնը այդ լեռնաբնակներու անհարկի փնտրումին եւ ոչնչացումին:

Անդրանիկն է եղբր այդ անձը.

Վահան Փափազեան իր «չապիկէն կտոր մը» պատուեր եւ անոր վրայ «նամակ մը պատրաստեր» է եղբր՝ ուղղուած ոռուսական բանակի յառաջապահ Հայ կամաւորական գունդերուն, անոնցմէ ժամ առաջ օգնութիւն աղերսելով:

«Անդրանիկն է ընդունեք զիրենք, կարդացեք է մեր նամակը եւ լսեք մեր վիճակի մասին՝ անոնց բերանացի պատմութիւնը», կը հաւատոյն Բիւրոյական յուշագիրը, դրական զօրաւոր շեշտով մը, «Բայց, — կը շարունակէ, — նոյն օրը, ոռուսական հրամանատարութեան նահանջի հրաման ստանալով, շատ պարագաներու մէջ ըմբոստ Անդրանիկը հարկ համարած է եղբր ենթարկուիլ սպայակոյտի հրամանին եւ անմիջապէս նահանջած է» («Իմ Յուշերը», Բ., էջ 381) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ժի՛շտ է, արդեօք, որ Անդրանիկ ստացեր ու կարդացեր է Վահան Փափազեանի վերոյիշեալ նամակը եւ այդքան քարսիբոս անտարբերութիւն ցոյց տուեր՝ կամաւորներուն ուղղուած այդ սրտագին կոչին եւ աղերսագին հրաւերին հանդէպ:

Ինչո՞ւ համար, Անդրանիկ այդ աստիճան սառնասիրտ անտարբերութիւն է ցոյց տուեր իր ազգակիցներուն, մանաւանդ Տարօնցի եւ Սատունցի ազգակիցներուն համդէպ, զոր անմար սիրով եւ հոգեւէն կը սիրէր ու կը պաշտէր, եւ սակայն, անոնց ամենատաղ-

նապալի մէկ վայրկեանին, այդ նոյն Անդրանիկը ԿԸ ԶԼԱՆԱՐ օգնութեան փութալ՝ այդ պաշտեցեալ ժողովուրդի տառապակոծ բեկորներուն, ինչպէս կը ջանայ ցոյց տալ Բիւրոյական յուշագիր Վահան Փափազեանը [Ա.] :

Սակայն, ա՛յլ առակ լուարուք :

Դաշնակցական ուրիշ գրիչ մը, — հետագային՝ Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունի, — որ ըստ բաւականի տեղեակ կ'երեւի կամաւորական գործունէութեան, կը գրէ հետեւեալ խիստ յատկանշական տողերը. —

«Ամենէն մտահոգիչը զինուորական կացութիւնն էր : Յառաջ-խաղացումը կ'ուշանար, մինչդեռ Սասունէն եւ Մուշէն ստացուած լուրերը ցոյց կու տային որ Տարօնի մէջ հրդեհը բռնկուած էր : Դեւտյեան, միշտ այդ օրերուն, ՍՏԱՅԱՄ ԷՐ շորի կտորի վրայ գրուած ծածկագիր նամակ մը Փափազեանէն եւ Ռուբէնէն» (Կարօ Սասունի, «Տաճկահայաստանը Ռուսական Տիրապետութեան Տակ», էջ 78) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Հիմա՛, հարց կը ծագի .

— Ո՞ր մէկի խօսքին պէտք է հաւատք ընծայեմք . յուշագիր Վահան Փափազեանի՞ն, թէ՞ «պատմագիր» Կարօ Սասունիին :

Այդ առեղծուածը թո՛ղ իրենք — երկու ընկերները — լուծեն իրենց միջեւ, իսկ մենք՝ նոյն ինքն այդ նամակը տանող սուրհանդակին (Վարդենիսցի Յարութիւն Վարժապետի) յայտարարութեմէն կը տեղեկանանք որ Անդրանիկ ԶԷ ՍՏԱՅԵՐ եւ ԶԷ՛ ԿԱՐԴԱՅԵՐ Վահան Փափազեանի վերոյիշեալ նամակը, եւ Ո՛ջ ԱԼ ԼՍԵՐ՝ նամակը տանողներու քերամացի բացատրութիւնները՝ ՆԱՀԱՆՁԻՆ ԱՌԱՋ, ինչպէս որ Վարդենիսցի Յարութիւն Վարժապետը յայտարարած է մեր աւագ յուշագիր Միսակ Բղէեանին, Թիֆլիսի վերոյիշեալ տեսակցութեան ընթացքին, որ ատեն՝ յուշագիր Միսակ Բղէեան կը հարցնէ Յարութիւն Վարժապետին. —

«— Պարոն Անդրանիկը եւ իր բանակը չտեսա՞ք, — հարցուցի :

«= Ո՛չ, — ըսաւ, — Անոնք Դատուանի կողմէն էին . ԱՅԴ ԱՏԵՆ ԶՏԵՍԱՅ, սակայն, մտաւնդէն վերջ, երբ կամաւորներն ալ կը նահանջէին, ՏԵՍԱՅ եւ ՊԷՏՔ ԵՂԱՄՆ ԸՍԻ, բայց ի՞նչ կրնային ընել, երբ ցարիզը արդէն կանխամտածութեամբ, Հայերու վերջին մնացորդն ալ փճացնելու քաղաքականութեան հետամուտ էր» («Հարգատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 475) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Վարդենիսցի Յարութիւն Վարժապետի այս պատասխանը ըստանալէն ետք, յուշագիր Միսակ Բղէեան կը շարունակէ. —

«Ընթերցողը աւելի լաւ պէտք է յիշէ որ ցարիզմէն ԱԻՆԼԻ

ՎԱՏ ԸՆԹԱՑՔ ՈՒՆԵՑԱԻ Փափազեան : Երբ թուրքերն ու քուրդերը, Մշոյ դաշտին մէջ, դէպի արեւմուտք կը նահանջէին, — արդէն Յարութիւն Վարժապետը այդ օր զրկուեցաւ, — այդ ատեն եթէ Փափազեան թոյլ տար մեր այնտեղի ժողովուրդին որ ճամբայ իյնար, ԲՈՒՈՐՆ ԱԼ, Վարդենիսցիներու նման, ԱԶԱՏՈՒԱՄ ԿՐԼԼԱՅԻՆ :

«Զըբաւ այդ բանը եւ գոհել տուաւ այդ անմեղ ժողովուրդը :

«Թէեւ Յարութիւն Վարժապետն ալ նոյնքան մեծ եւ անքաւելի յանցանք գործած էր, — եւ այդ բանը իր երեսին ըսի, — բայց ան, իրբեւ հասարակ անհատ մը, չունէր այն պատասխանատուութեան յանձնառութիւնը, ԻՆՉ ՈՐ ՈՒՆԷՐ ՄԵՐ «ՊԱՐՈՆ» ՓԱՓԱՋԵԱՆԸ» (նոյն, էջ 475-476) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Այլեւս պէտք կա՞յ որեւէ բացատրութեան :

* * *

[Ա.] Վարդգէս Ահարոնեան, որ այդ ատեն՝ Անդրանիկի քարտուղարն էր եւ անոր գունդին կ'ընկերանար, հետեւեալ յուզիչ տողերով կը նկարագրէ Անդրանիկի հոգեկան խռովքն ու տառապանքը, զոր Ազգային Հերոսը կը զգար Սասունցիներու եւ Տարօնցիներու հանդէպ, Դատուանի մէջ՝ անհարկի եւ պարտադրեալ սպասումի օրերէն ետք, ՆՈՅՆՔԱՆ ԱՆՀԱՐԿԻ ԵՒ ՊԱՐՏԱԴՐԵԱԼ ՆԱՀԱՆՁԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱԼ :

«Պարզ էր որ Անդրանիկի հոգին տառապում էր — կը գրէ Վարդգէս Ահարոնեան, — իր սիրած վայրերին, Մշոյ դաշտին եւ Սասունին, եւ իր սիրած Սասունցիներին եւ Մշեցիներին գրեթէ հասած լինելուց յետոյ, գլխիկոր վերադառնալը ԽՈՐ ԽՈՑԵԼ ԷՐ ՆՐԱ ՍԻՐՏԸ եւ նա հանդիստ չունէր» («Անդրանիկ», էջ 36) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Նոյնպէս. —

«Հետագային, ուրիշ առիթներով էլ, ես տեսայ թէ ո՛րքան խոր կերպով էր կապուած Անդրանիկը՝ Հայաստանի այդ վայրերի ժողովուրդին, մանաւանդ Սասունցիներին, որոնց հետ ապրել ու պայքարել էր, ուրախացել ու տրտմել էր» (նոյն, անդ) :

Նմանապէս. —

«Նա ասում էր .

«— Ի՞նչ եղաւ, ո՛ւր գնաց Մշոյ դաշտի հարիւր հազարաւոր ժողովուրդը . ի՞նչ եղան, ո՛ւր գացին Սասունցիք : Մի՞թէ ամէնքը մեռան, մի՞թէ ոչ ոք չմնաց Մշոյ դաշտի եւ Սասնոյ մէջ... կու գամ, կ'անցնիմ աչքերուս առջեւէն մեծ ու պզտիկ, այր ու կին, ծեր ու

երիտասարդ... հազարներով, հազարներով... ու չեմ կրնար բը-
նանալ... Ի՞նչ եղաւ Կոտոյի Հաջին, Ի՞նչ եղաւ Վարդան Վարդա-
պետը...» (նոյն, էջ 59):

Դարձեալ.

«Ապա՛, մի կարճ պահ լռելուց յետոյ, ցատումով դարձաւ դէպի
ականածութեամբ իրեն ունկնդրող ղինակիցները.

«— Ա՛հ, է՛ս պիտի ըլլայի ձեր վերին հրամանատարը, է՛ս:
Պիտի ձգէի որ ասանկ հանդիստ քնանայի՞ք հոս: Օր ու գիշեր քա-
լեցնէի պիտի, մինչեւ որ հասնէինք Մշոյ Դաշտ, Առաքելոց Վանք,
մինչեւ որ ելլէինք Սասուն ու Դալուորիկ:

«Բայց, հիմա ես Ի՞նչ կրնամ ընել... Ես ուրիշի հրամանին
ենթակայ, իմ ձեռք ու ոտք կապած...

«Յօսում էր, խօսում, քափում էր ՍՐՏԻ ԴԱՌՆՈՒԹԻՒՆՆ ռ
ԿՍԿԻԾԸ, որ բոլորիս էր, եւ իրար ետեւից վառում էր ծխիկները,
որոնց ծուխը է՛լ աւելի աղօտացնում էր հազիւ պլպլացող մոմերի
արդէն իսկ աղօտ լոյսը:

«Մշեցի Սմբատը, որի սիրտը անտարակոյս խոցոտում էին
Անդրանիկի խօսքերը, այնուամենայնիւ աշխատում էր հանդարտեց-
նել իր աւագ ընկերոջը» (նոյն, էջք 59-60) [Բոլոր ընդդժումները
մերն են, Ա. Տ.]:



Գ Լ ՈՒ Խ Թ .

ՄԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻ, ԴՐՈՅԻ, ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻԻ, ՎԱՐԴԳԵՍ ԱՅԱՐՈՆԵԱՆԻ ԵՒ ԱՐՄԵՆԱԿ ԵՎԱՐԵԱՆԻ ՀԱԿԱՍԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայ կամաւորական գունդերուն՝ Տարօնին օգնութեան փու-
թալու խնդրոյն առնչութեամբ, իրարու հակասական եւ նոյնիսկ զի-
րար հերքող պատմութիւններ կը հրամցնեն մեզի՝ Դաշնակցական,



ՍԱՀԱԿ ԶԹՉԵԱՆ

Նախկին Դաշնակցական եւ ոչ-դաշնակցական ակնյայտնի անձնաւորութիւններ, որոնք, իբրեւ թէ, ամենահաւաստի տեղեկութիւններ ունէին կամաւորական այս օգնութեան խնդրոյն ներքին ծախքու մասին:

Հարեանցի քննութեան ենթարկենք անոնց ներկայացուցած պատմութեանց տարրերակները:—

ա.— Ամենէն հետաքրքրական եւ մանրամասն տեղեկութիւնը կու տայ Ամերիկահայ հանրաժողով մտաւորական, հանդուցեալ Սահակ Զթչեան, որ հանգամանօրէն քննութեան կ'ենթարկէ Ռուբէնի եւ Վահան Փափաղեանի պատասխանատուութեանց հարցը՝ Տարօնի եւ Սասնոյ Հայութեան ամբողջական բնաջնջումի խիստ տխուր դործին մէջ:



ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ ԵՒ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

Տալէ յետոյ Անդրանիկի կարծիքը Տարօնի եւ Սասնոյ կոտորածներուն մեծապէս պատասխանատու վերոյիշեալ երկու «պարոն»ներու մասին, որոնց ճակատները Անդրանիկ կը խարանէ յանցապարտութեան եւ դասալուծութեան մրուրոտ կնիքով, Սահակ Զթչեան կը ներկայացնէ նաեւ տեսակէտը Սիմոն Վրացեանի (Տանձեան), որ, իր կարգին, կամաւորական գունդերուն՝ Տարօնին օգնութեան չփութալուն ՄԻԱԿ եւ գլխաւոր պատասխանատուն կը նկատէ Անդրանիկը:

Ահա՛ ի՛նչ որ Սիմոն Վրացեան ըսած է Սահակ Զթչեանին:—

«Մենք, Դաշնակցութեան Բիւրոյի երեք անդամներս, — ես ինքս, բժիշկ Բարալեանը եւ Աղբալեանը (կարծեմ) անցանք Տահակահայաստանը, հանդիպեցանք Վանը, եւ յետոյ՝ Վանի Ծովի հարաւային ափով գնացինք Տարօնի Ծամիրամը (Թուխ գետի մօտ), եւ ունեցանք կամաւորական խմբապետական ժողով: Այնտեղ էին Անդրանիկը, Վարդանը, Համաղասպը, Քեռին (կամ խմբապետը)՝ իրենց մօտ 3,500 լաւ զինուած կամաւորներով:

«Ժողովի վերջին օրերում (1915 Յուլիս 13-14), մենք իմացանք որ նահանջ կայ: Ծակատի ընդհանուր հրամանատար Շարփանսիէն հրամայել է Գեներալ Տրուխինին նահանջել:

«Տրուխին, — պատմում է Տանձեանը, — որ մի Սիբերական կողակ գեներալ էր, խիստ բարի եւ առաջինի Քրիստոնեայ մէկը, որ ամէն անգամին, երբ խողխողուած Հայ կնոջ կամ երեխայի դիակ էր տեսնում, խաչ էր հանում երեսին, կանչեց մեզ եւ ասաց:

«— Հրաման է եկել որ նահանջեմ եւ ես պարտաւոր եմ հետեւելու վերին հրամանին, բայց մեղքանում եմ ձեր ժողովրդին: Ես, — ասում է Տրուխինը, — աչքերս կը փակեմ, ձեզ կը տամ երկու ստոնեակ (հարիւրեակ) կողակ (հեծեալ) եւ չորս լեռնային թընդանօթ: Մուշը այստեղից երեք ժամուայ ճանապարհ է, ձեր կամաւորներով միացէ՛ք կողակներին, իջէ՛ք դաշտը եւ ձեր ժողովրդին հետերնիդ առած, շարժուեցէ՛ք դէպի Մանազկերտ եւ միացէ՛ք մեր բանակին:

«Ապա, — շարունակում է Տանձեանը, — մենք, Բիւրոյականներս, գիշերը ժողով ունեցանք՝ խմբապետների հետ միասին եւ որոշեցինք, Անդրանիկի էլ համաձայնութեամբ, որ միւս օրը, Հայ կամաւորական բանակը, իր 3,500 կամաւորներով եւ 200 կողակներով, շարժուի դէպի Մուշ եւ Տարօնի դաշտի ժողովրդին իր առաջ ձգած, Ախլաթի վրայով շարժուի դէպի Մանազկերտ, դէպի Իզդիր:

«Մենք, — շարունակում է Տանձեանը, — գիշերով դարձանք դէպի Վան՝ հաստատ համոզուած լինելով որ Հայ կամաւորները, կողակների հետ կը մտնեն Տարօն եւ ժողովրդին իրենց առջեւ ձգած՝ կ'անցնին Կովկաս:

«Իզդիրում, — շարունակում է Վրացեանը, — մենք հանդիպեցինք կամաւորներին եւ յետոյ Երեւանում ունեցանք կամաւորական խմբապետների խառն ժողով, ուր յայտնուեց որ առաւօտեան Անդրանիկ ՄԵՐԺԵԼ է ԵՆԹԱՐԿՈՒԵԼ խմբապետական ժողովի որոշման՝ ասելով որ իմն հրաման է եկել նահանջելու եւ ԵՍ ՊԱՐՏԱԻՈՐ ԵՄ նահանջելու, եւ իր քառասուն հեծեալներով՝ Վանի Ծովի հիւսիսային ափով մեկնել է Իզդիր»:

«— Բայց ինչո՞ւ միւս խմբապետները, — հարց եմ տալիս ես, — չեն ենթարկուել ձեր որոշման, մանաւանդ որ Անդրանիկի մեկնելուց յետոյ, Սմբատը եւ իր Տարօնցիները պատրաստ էին իրենց հայրենիքը ազատելու :

«— Դե՛հ, — ասում է Տանձեանը, — երբ Անդրանիկը հեռանում է, խմբապետական որոշումն ալ չեղեալ է համարում եւ բոլորը ենթարկուում են ընդհանուր հրամանին եւ նահանջում» (Սահակ Չթչեան, «Տարօնական» երկու յօդուածներ, «Պայքար» օրաթերթ, 2թչեան, «Տարօնական» երկու յօդուածներ, «Պայքար» օրաթերթ, 17-18 Դեկտեմբեր 1952) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :



ԴՐՕ

բ.— Սահակ Չթչեան, դոհացում չգտնելով Սիմոն Վրացեանի վերոյիշեալ բացատրութիւններէն, կը փորձէ Վարդգէս Ահարոնեանի միջոցաւ, շօշափել Դրոյի կարծիքը՝ այդ խնդրոյն մասին :

Ահարոնեան հետեւեալը կը տեղեկացնէ Չթչեանին.—

«— Դրօն ասաց որ Անդրանիկն առաւօտեան ասում է իրեն, Դրոյին .

«— Շա՛ն որդի, դու քո հեծելազօրքով, մէկ-երկու ժամ առաջ կը հասնես Մուշ եւ կ'առեսս որ ես ազատեցի Տարօնը, իսկ ՄԵՆՔ ԿԸ ՄՆԱՆՔ ԱՆՆՇԱՆ, եւ թողնում ու հեռանում է...» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

դ.— Այս հարցի կապակցութեամբ, Կարօ Սասունին ալ կը գրէ.—

«Պատմութեան առջեւ պիտի չկարողանան արդարանալ անոնք որ Նեմրութի եւ Սիփանի ստորոտներէն նահանջեցին, տեսնելով հեռուն՝ Մշոյ դաշտը եւ Սասունը կրակի մէջ : Կամաւորական դուռդերը կազմուած էին գերազանցապէս ազատագրական նպատակով : Անոնք կրնային ՉՀՆԱԶԱՆԻԻԼ ուսական հրամանին եւ ներխուժել Մշոյ դաշտը : Մեր չորս գունդերը բաւական ոյժ կը ներկայացնէին : Բոլորի ղեկավարներն ալ հին Փեղայիներ էին . զինուորներու մեծագոյն մասը պարտիզանական կռիւի ընդունակ, նման անկանոն քայլով մը ՊԻՏԻ ԿՐՆԱՅԻՆ Տարօնի ժողովուրդն ԱԶԱՏԵԼ եւ իրենց հետ ՓՈՒՍԱԴԻՆԵԼ դէպի ետ :

«Ինձի ծանօթ է որ Դատուանի մէջ, վճռական այդ վայրկեանին, վերայիշեալ խնդիրը քննութեան նիւթ դարձած է Դրոյի եւ Անդրանիկի կողմէ : Դրօն առաջարկած է երկու գունդով չնահանջել, այլ ներխուժել եւ միանալ Մշոյ եւ Սասնոյ կուսակցներուն : Սակայն, Անդրանիկ ընդդիմացեր է՝ ըսելով որ ԻՆՔ ՍՏԻՊՈՒԱԾ է ԵՆԹԱՐԿՈՒՆԵԼ զինուորական կարգապահութեան [Ա.] :

«Ո՛վ որ առաջարկած ըլլայ եւ ո՛վ ալ որ մերժած, միեւնոյն է. գործը — յեղափոխական գերազոյն պարտականութիւնը, — չիրագործուեցաւ, եւ ատոր համար ե՛ւ Դրօն, ե՛ւ Անդրանիկը, ե՛ւ միւսները յանցաւոր կը մնան Տարօնի նահատակուած ժողովուրդին առջեւ» («Տաճկա-Հայաստանը Ռուսական Տիրապետութեան Տակ», էջը 88-89) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Մեղադրանքներու եւ գրպարաութիւններու այս թոհուրհին մէջ, ամենէն ուշադրաւ եւ արդար խոստովանութիւնը կը թուի ըլլալ նորէն Վարդգէս Ահարոնեանի հետեւեալ յայտնութիւնը.—

«Մինչեւ գրեթէ Մշոյ Դաշտը հասած Ռուսական բանակի այս ամակնկալ նահանգը շատ ծանր էր ազդել մեր կամաւորական գնդերի հրամանատարութեան վրայ : Ամենից աւելի ՀՈԳԵՊԷՍ ԽՈՐՏԱԿՈՒԱԾ էՐ Անդրանիկը, որ յոյս էր ունեցել թէ ուսական արշաւը պիտի շարունակուի մինչեւ Մուշ, եւ հնարաւոր պիտի լինի օգնութեան հասնել Սասուն ապաստանած մի քանի տասնեակ հազար Սասունցիներին եւ Մշեցիներին : Յուսախար եւ զագագած, Անդրանիկը իր գնդի հրամանատարութիւնը յանձնել էր իր օգնական, հայրուկային

կոիւնների հինաւորաց զինակից Մշեցի Սմբատին, իսկ ինքը, մի խումբ ձիաւորներով, շտապել էր անցնել Կովկաս» («Անդրանիկ», էջ 33) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* * *

Մենք մեր անհատական կարծիքը պիտի յայտնենք քիչ յետոյ (տեսնել Գլուխ ԺԲ.), երբ քննութեան ենթարկենք Վահան Փափաղեանի «դառնութեան» պարագան, թէ ինչո՞ւ համար Անդրանիկ «մերժել է ենթարկուել խմբապետական ժողովի որոշման», միակ պատճառը ցոյց տալով (ըստ Սիմոն Վրացեանի պատումին) թէ «Ինձ հրաման է եկել նահանջելու եւ ես պարտաւոր եմ նահանջելու» :

Իսկ ի՞նչ կը վերաբերի Դրոյի այն սնուտի յայտարարութեան, զոր, իբրեւ թէ, Անդրանիկ ըսած ըլլայ իրեն, Դրոյին, թէ՛

«— Ծան որդի, դու քո հեծելազօրքով, մէկ-երկու ժամ առաջ կը հասնես Մուշ եւ կ'ասես որ ես ազատեցի Տարօնը, իսկ մեք կը մնանք ԱննՇԱն» (Ընդգծումները մերն են, Ա. Տ.) աւելի քան ԾԻ՝ԾԱՂԵԼԻ է եւ արդիւնք՝ նենդամիտ չարախօսութեան :

Աւելի քան երկու շաբաթ է ի վեր՝ աւերակ եւ իր բնիկ Հայութենէն թափուր Տարօնը դրուելով չէ՛ր որ Անդրանիկ պիտի համբաւուէր ու անմահանար :

ԿԱՐԵԻՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ.— Կամաւորներու՝ Տարօնի եւ Սասնոյ օգնութեան փութալու խնդրոյն մէջ, լուսաբանութեան կարօտ ուրիշ կարեւոր կէտ մըն ալ սա՛ է որ Տարօնի համայն Հայութիւնը ԱՐԴԵՆ ԻՍԿ հրակէզ բնաջնջումի ենթարկուած էր՝ կամաւորներու վերոյիշեալ օգնութեան փորձերէն ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹ ԱՌԱՋ — Մշոյ դաշտը՝ Յունիս 28-ին, Վարդավառի կիրակի օրուան ընթացքին, իսկ Մուշ քաղաքն ալ՝ Յունիս 29-30 եւ Յունիս 1-ին, Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերուն :

ՍեԱԼ է, ուրեմն, յայտարարել որ եթէ կամաւորական բանակը, իր 3,500 կամաւորներով, 200 կողակներով եւ չորս լեռնային թնդանօթներով, «չարժուէր դէպի Մուշ», ԿՐՆԱՐ «Տարօնի դաշտի ժողովրդին իր առաջ ձգած, Ախլաթի վրայով, շարժուել դէպի Մանազկերտ, դէպի Իգդիր» (Վրացեան) :

Այդ կամաւորները, շա՛տ շա՛տ, հազիւ թէ կարող պիտի ըլլային փրկելու Հաւատարիկի եւ Քանայ լեռներու փախստականները ՄԻԱՅՆ, իսկ Սասունի 35,000 Հայութեան փրկութիւնը՝ մեծապէս տարակուսելի . . . :

* * *

[Ա.] Հոս կը փափաքինք մանրամասն քննութեան առարկայ դարձնել թէ Ռուս Զինուորական Վերին Հրամանատարութեան ցախանջի հրամանը ՊԱՐՏԱԻՒՐ է՞ր նաեւ Հայ Կամաւորական զուգորդուն ալ, թէ ո՛չ :

Գրեթէ բոլոր դաշնակցական պարագլուխներու եւ յուշագիրներու յայտարարութիւնները, ըստ երեւոյթին, կը հաստատեն այդ պարագան, այսինքն, Հայ Կամաւորական զուգորդը, իբրեւ անբաժան միաւորներ՝ ռուսական բանակին, ՊԱՐՏԱԻՈՐ ԷՒՆ ԵՆԹԱՐԿՈՒԵԼՈՒ Ռուսական Զինուորական Վերին Հրամանատարութեան, հետեւարար նաեւ՝ անոր ցախանջի հրամանին :

Սիմոն Վրացեանի կողմէ՛ Անդրանիկի բերանը դրուած այն խօսքը թէ «Ինձ հրաման է եկել ցախանջելու եւ ես ՊԱՐՏԱԻՈՐ ԵՄ ՆԱՀԱՆՁԵԼՈՒ», ինչպէս նաեւ Կարօ Սասունիի՝ Անդրանիկին վերադրած վերոյիշեալ խօսքը թէ «Անդրանիկ ընդգիմացեր է՛ ըսելով որ իմք ՍՏԻՊՈՒԱԾ Է ԵՆԹԱՐԿՈՒԵԼՈՒ զիմաւորական կարգապահութեան», կը հաստատեն այդ պարագան :

Վարդգէս Ահարոնեան, իր «Անդրանիկ» երկասիրութեան մէջ, կը գրէ .—

«Յունիս 15 էր, երբ Արմէն Գարոյին՝ Կովկասից Վան ուղեկցող մի քանի ընկերների հետ Վան հասանք : Մեր Վան հասնելու յաջորդ օրն իսկ, նահանջի շրջակներ տարածուեցին քաղաքում :

«Այդ օրերում, Վան էին գտնուում Հայ Կամաւորական գնդերի սպայակոյտը եւ կամաւորական շարժումը ղեկավարող մի շարք ահանաւոր ընկերներ, — Վանի Արամը, Խանասորի Վարդանը, Նիկոլ Աղբալեանը, Բժիշկ Համօ Օհանջանեանը, Արմէն Գարօն, Սիրական Տիգրանեանը, Կոստիա Համբարձումեանը եւ Վանի զեկավար գործիչներէից մի քանիսը :

«Նահանջի պաշտօնական տեղեկութիւնն ստանալուց յետոյ, այս ղեկավարները ժողով գումարեցին՝ քննելու եւ լուծելու մի ծանրակշիռ խնդիր — արդեօք ցախանջել Ռուսների հետ, թէ մնալ Վանում եւ պաշտպանուել թրքական ուժերի դէմ, մինչեւ որ Ռուսները կրկին վերադառնային Վան :

«... Նահանջել Ռուսների հետ, թէ մնալ Վանում եւ պաշտպանուել մինչեւ Ռուսների վերադարձը :

«Ռուս հրամանատարութեան հրամանը, առանց այլեւայլի, գործադրելու եւ ցախանջելու ԿՈՂՄՆԱԿԻՑ ԷՒՆ Վարդանը, ԱՐՄԷՆ ԳԱՐՕՆ (կ'ընդգծենք այս անունը՝ մեր ընթերցողներու մասնաւոր

ուչադրութիւնը հրաւիրելով «նահանջին ԿՈՂՄՆԱԿԻՑ» այս ունայնամիտ անձին վրայ, Ծնթ. Ա. Տ.) եւ Բժիշկ Համօ Օհանջանեանը:

«Վանից քաշուելուն վճռական կերպով դէմ էր Արամը ... Արամին համաձայն էին Կոստիա Համբարձումեանը, Նիկոլ Աղբալեանը եւ Վանի ղեկավար ընկերները: Նիկոլ Աղբալեանը, իր սովորական պատկերալից ու կտրուկ ոճով, ձեւակերպեց իր ասելիքը. «Ռուսները գնո՞ւմ են, թո՞ղ գնան, մենք էստեղ ենք. Ռուսները կը գան ու կը գնան, մենք էլի էստեղ ենք»:

«Այդ ժողովի եզրակացութիւնը եղաւ այն որ որոշուեց Ռուս հրամանատարութեան ուղղել մի գրութիւն եւ խնդրել որ Ռուսները, նահանջի դէպքում, Վանի պաշտպանութեան համար, Վան քաշեն Հայ Կամաւորական չորս զնդերը. Վանի երիտասարդութիւնը զինելու համար՝ տրամադրեն Ռուս բանակի զինապահեստներում գըտնուած յաւելեալ զէնքն ու ռազմամթերքը, ինչպէս նաեւ պարէնի պահեստները: Բացի դրանից, եթէ կարելի է, տրամադրեն անթել հեռագրի մի կայան՝ հեռագրող մասնադէտներով...»:

«Ռուս հրամանատարութեան պատասխանը եղաւ ԿԱՐՃ ՌԻ ԿՏՐՈՒԿ.— «Ռուս բանակը եւ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԳՆԻԵՐԸ ՊԻՏԻ ՆԱՀԱՆՁԵՆ...»:

«... Այս հրամանը ստանալուց յետոյ, մինչեւ երեք օր, Վանի եւ շրջակայքի բնակչութիւնը կարող է նահանջել...», («Անդրանիկ», էջք 31-32) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Վարդգէս Ահարոնեանի՝ Ռուս Հրամանատարութեան վերագրած այս «կարմ ու կտրուկ» հրամանը ըստ երեւոյթին, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԶԷ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ եւ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ, յար եւ նման դաշնակցական միւս պարագլուխներու եւ յուշագիրներու վարկպարագի յայտարարութիւններուն, երբ նկատի կ'ունենանք Վանի Հերոսամարտի անզուգական ղեկավար Արմենակ Եկարեանի հակառակեայ ՇՇՄԵՑՈՒՑԻԶ ՅԱՅՏՆՈՒԹԻԻՆՆԵՐԸ՝ այս միեւնոյն Ռուսական Հրամանատարութեան վերագրուած ԲԱՐԵԱՑԱԿԱՄ «ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ» եւ «ՀԱՄԱՄՏՈՒԹԵԱՆ» մասին, զոր Ռուս Զինուորական Իշխանութիւնը ցոյց կու տար Հայ Կամաւորներու վան մնալու եւ ժողովուրդը պաշտպանելու խնդրոյն մէջ:

Արմենակ Եկարեան, — որու անունն իսկ չի՛ յիշեր Վարդգէս Ահարոնեան, ա՛յլ միայն՝ «Վանի ղեկավար գործիչներից մի քանիսը» (նոյն, էջ 31), — իր յուշերու մէջ, մանրամասնօրէն կը նկարագրէ այն խիստ յուսահատական եւ բարոյալքիչ կացութիւնը, որ կը տիրէր Վանի կառավարիչ (կուսակալ) Արամի հրաւերով գումար-

ուած խորհրդակցական ժողովի մէջ՝ նահանջի հարցը քննութեան առնուած պահուն:

Հո՛ւս, Եկարեան կը մատնանչէ այն պակուցիչ տագնապը, զոր նահանջի լուրը յառաջ բերած էր դաշնակցական պարագլուխներու մէջ եւ խուճապի մատնած զանոնք՝ ա՛յն աստիճան որ ՅԱՆԴԳՆՈՒԹԻԻՆՆ ու ՎԱՏՈԳԻՈՒԹԻԻՆՆ ունեցան, այդ նո՛յն ժողովին մէջ իսկ, բացայայտօրէն յայտարարելու թէ իրենք «ԶԵՆ ԿՐՆԱՐ» մնալ Վան եւ պաշտպանել տեղացի Հայութիւնը՝ թրքական ուժերու դէմ, մինչեւ Ռուսերու վերադարձը, որովհետեւ «չեմ կրնար այսչափ խոշոր ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻԻՆ ՄԸ ՎԵՐՑՆԵԼ»...:

Խիստ հետաքրքրական եւ միանգամայն յոյժ հրահանգիչ է այն հակաճառութիւնը, որ տեղի ունեցած է Արմենակ Եկարեանի եւ կամաւորական հրամանատար Վարդանի միջեւ, վերոյիշեալ խորհրդակցական ժողովի ընթացքին, եւ որ Դաշնակցութեան Վան գտնուող ղեկավարներուն կը վերագրէ Վանի աղէտալի նահանջի ճակատագրական որոշումը՝ վերոյիշեալ անիմաստ չփնդանքով, — «ՄԵՆՔ ԶԵՆՔ ԿՐՆԱՐ ԱՅՍՉԱՓ ԽՈՇՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻԻՆ ՄԸ ՎԵՐՑԸՆԵԼ» — որուն տակ թաքնուած կար իրենց սեփական կաշիին ապահովութեան եւ փրկութեան մտտուէքը միայն, յար եւ նման այն միեւնոյն մտմտուքին, որուն պատճառով ալ՝ Ռուբէն եւ Վահան Փափաղեան, զիտակցարար եւ կանխամտածօրէն, գործեցին ամէն տեսակ ԿԱՄԱՒՈՐ ՊԱՐՏԱԶԱՆՑՈՒԹԻԻՆՆԵՐԸ եւ յոյժ աղէտալի ԳԻՏԱԿՑԱԿԱՆ «ՍԽԱԼ»ՆԵՐ, որոնք յանգեցան Տարօնի եւ Սասնոյ անմեղ ու մարտական Հայութեան ամբողջական ու կատարեալ ԲՆԱԶՆՁՈՒՄԻՆ...:

Այժմ, մեր յարգելի ընթերցողներուն հետ միասին, ունկնդրենք Արմենակ Եկարեանի յայտնութիւններուն.—

«Յուլիսի վերջերը, — չեմ յիշեր այդ սեւ օրերու թուականը, — կը պատմէ Եկարեան, — կուսակալէն (այսինքն, Վանի կառավարիչ Արամ Մանուկեանէն, Ծնթ. Ա. Տ.) հրաւէր կ'ընդունիմ՝ կարեւոր խորհրդակցութեան մը համար. նշանակուած ժամանակին՝ որոշեալ տեղը կը հասնիմ: Հոն են վաճառականներէն մօտ 30-35 հոգի. հոն է Առաջնորդ Այվատեան Եպիսկոպոսը. հոն է կուսակալ Արամը՝ իր ռուսահայ չքախումբով: Բոլորն ալ լուռ ու արտուր. ամէն մարդ ինք իր մէջ ամփոփուած: Վերջապէս կուսակալը կ'ընդհատէ այս լռութիւնը, կը յայտնէ թէ Ռուսական հրամանատարութեան լուր տրուած է թէ քանի մը օրէն, Ռուս բանակը պիտի նահանջէ. ժողովուրդը միայն երեք օր ժամանակ ունի. այդ երեք օրերու մէջ պէտք է անցնի Պէնտի-Մահու գիծը. մնացեալը ձեզի կը մնայ մտածել, կը վերջացնէ Արամը:

«Բոլորիս վրայ սառ ջուր լեցուեցաւ. զանազաններու կողմէ

յուսահատական կարծիքներ յայտնուեցան, որոնք գործնական չէին: Որոշուեցաւ սպասել Հրամանատար Վարդանին, որ Զօրավարին գացած էր՝ լրիւ տեղեկութիւններ ստանալու համար: Վերջապէս եկաւ ան, նոյնչափ տխուր էր, լքուած: Հաղորդեց այն բոլորը, ինչ որ քիչ առաջ ըսած էր Արամը:

«Այլեւս խօսքը աւելորդ էր. որոշուեցաւ կազմել յանձնախումբ մը, որ ի մի հաւաքէ փոխադրական բոլոր միջոցները — սայլ, կառք, կենդանի, — տկարներն ու պղտիկները փոխադրելու համար:



ՎԱՐԴԱՆ

«Ես ոտքի եմ եւ յուզումէս կը դողամ:

«— Այսպէ՞ս պիտի վերջանար մեր գործը. ասիկա ինքնապանութիւն չէ՞ր միթէ:

«Յօսքս Վարդանին կ'ուղղեմ եւ կ'ըսեմ մօտաւորապէս հետեւեալը. —

«— Ես չմտած եմ ուղղակի՝ ի տես այս սարսափին. չեմ հասկընար ինչո՞ւ այս ամէնը: Ռուս բանակը կը նահանջէ, թո՛ղ նահանջէ. մենք մեզի բաւելու չափ ոյժ եւ զէնք ունինք. եթէ զօրավարը համաձայնի կամաւորական բաճակը հոս ձգելու, մենք ի վիճակի ենք ինքզինքնիս պաշտպանելու:

«= Այս մասին խօսեցանք Զօրավարի հետ, — պատասխանեց Վարդան, — ան ՀԱՄԱՄԻՏ է այդ տեսակէտին. ան ՏՐԱՄԱԴԻՐ է ԹՈՂՈՒԼ որ կամաւորները պաշտպանեն այս ժողովուրդը. ան ըսաւ նոյնիսկ թէ նահանջող բանակ մը յառաջապահէ աւելի՛ թիկունքի պաշտպանութեան պէտք ունի: ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿՐՆԱՅ ՄՆԱԼ:

«— Այ ինչո՞ւ, ուրեմն, այսքան իրարանցում, — դիտել տուի ես:

«= ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ԱՅՍՉԱՓ ԽՈՇՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ ՎԵՐՑՆԵԼ, — եղաւ պատասխանը:

«— Զէ՞ք կրնար վերցնել այդքան խոշոր պատասխանատուութիւն: Բայց ԱՏԻԿԱ ՊԵՏԻՐ ԷՐ ՄՏԱԾԷԻՔ կամաւորական գունդեր կ'ԱԶՄԵԼԷՆ ԱՌԱՋ: Ատոր պէտք էր անդրադառնալիք այն ատեն, երբ Փարիզի Պատուիրակութիւնը խնդրեց ու թխանձեց որ ձեռնարկէիք այդ վտանգաւոր գործին: Դուք մտիկ չըրիք այդ իմաստուն խորհուրդին եւ մասամբ պատասխանատուն եղաք այն բոլոր նախճիրներուն, որ գործադրուեցան թուրքիոյ մէջ: Իսկ հիմա որ ժամանակը յարմար է, երազուած ու չգտնուած ժամանակը, հիմա որ 8,000-է աւելի զինուած մարդ, թնդանութներ ու պաշար ունիք եւ հոս կը գտնուիք, ձեր հետ ունենալով Ռուսիոյ բարեացակամութիւնը, հիմա որ պատեհութիւն տրուած է մեզի՝ մեր ապագան կերտելու, — ա՛յն ապագան, որու մասին կը խօսէիք երեսուն տարիներէ ի վեր, — հիմա՛ կունակ դարձուցած թշնամիին, կ'ուզէք նահանջել, կ'ուզէք դէպի անստուգութիւն տանիլ այս ափ մը ժողովուրդը, որ հերոսական ճիգերով կրցաւ ազատիլ ստոյգ մահէն:

«Մտածեցէ՛ք, Վարդա՛ն, լա՛ւ մտածեցէ՛ք: Զեզի համար ալ որեւէ վտանգ չե՛մ տեսներ, եթէ վտանգէն է որ կը վախնաք. մտածեցէ՛ք թէ հիմա թուրքիոյ ամենէն ինկած ժամանակն է. եթէ անիկա ոյժ ունենար, մենք մեր քանի մը հրացաններով պիտի չկարողանայինք ամիսի մը չափ դիմադրել: Մտածեցէ՛ք որ թրքական կանոնաւոր ոյժ չունինք մեր դիմաց. այդ ոյժը խուժանն է, իսկ խուժանը արժէք չի՛ ներկայացներ: Մտածեցէ՛ք վերջապէս թէ մեզի համար ամէն յոյս չէ՛ կորած. Մուշի, Սասունի եւ ուրիշ վայրերու

ՌԲ



ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐԵԱՆ

Հայերը լեռներ ապաստանած՝ դեռ կը դիմադրեն: Անոնք դեռ կը դիմադրեն՝ սպասելով որ պիտի հասնինք ու ազատենք զիրենք: Եթէ յաջողեցանք մինչեւ այդ կողմերը տարածուիլ, մենք պիտի կարողանանք պատկարազդու ոյժ մը ստեղծել: Վերջապէս պէտք է նկատի ունենալ նաեւ թէ Ռուս բանակը մեզմէ շատ հեռու չի՛ կրնար գտնուիլ: Հակառակ պարագային, մենք պիտի կրնանք դարձեալ նահանջել ու միտնալ Ռուսերուն: Հիմա մենք մեր հողին վրայ ենք: Մենք պիտի չնեղուինք նոյնիսկ սնունդի տեսակէտէն. ամառ է, ցանքերը հասունցած:

«Պատմութեամ առջեւ պատասխանատու մի՛ մնաք, Վարդան. ի՞նչ պիտի պատասխանէք այս հարցումին.—

«— Ինչո՞ւ եկաք եւ ինչո՞ւ կ'երթաք:

«Պահ մը ենթադրեցէք որ Վանը ազատուած չէ՛ եւ դուք եկած էք, ձեր կեանքի զնով, ազատելու հոն ապաստանած Հայութիւնը:

Այսպէ՞ս պիտի ազատէիք զայն: Դէպի անստուգութի՞ւն առաջնորդելով այդ բազմութիւնը:

«Վարդանը ազնիւ տղայ էր, հայրենասէր եւ անձնագոհ. ան համբերութեամբ մտիկ ըրաւ իմ խօսքերը ու եզրակացուց թէ տակաւին վերջնական որոշում չենք առած մեր ընելիքի մասին:

«— Ես համաձայն եմ ձեզի, — ըսաւ ան: — Ես ալ կը հաւատամ որ Եթէ ՈՒՋԵՆՔ, կրնանք մնալ ու դիմադրել: Անձնական փորձառութիւնս ինծի ոյժ կու տայ այսպէս արտայայտուելու. ես կը ճանչնամ թուրք զինուորը. մենք շատ անգամ կռուած ենք անոր դէմ, հարիւրի դէմ մէկի համեմատութեամբ: Հիմա որ անոր բարոյական կորուզը բոլորովին կտրած է, շատ աւելի դիւրին է մեր գործը»:

«Մենք զինուորներ էինք եւ կը հասկնայինք զիրար:

«Մենք բաժնուեցանք իրարմէ՝ սպասելով առնուելիք որոշումին:

«Աւա՛ղ, սակայն, գիշերուան մէջ, կառավարութեան կողմէ երկու մունետիկներ թաղերուն մէջ հնչեցուցին սեւ լուրը.—

«— Ռուս բանակը պիտի քաշուի. աճապարեցէք երեք օրուան ընթացքին անցնիլ Պէնտի-Մահու գետը...:

«Ամէն յոյս կորած էր այլեւս: Մենք մեր ձեռքով փորեցինք մեր գերեզմանը» («Յուշեր Արմենակ Եկարեանի», խմբագրեց Լ. Աճէմեան, էջք 243-246) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:



Գ Լ ՈՒ Խ Ժ .

ԽՄԲԱՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

դ. — Դաշնակցական խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, որ եղած է Դրոյի կամաւորական զունդի վաշտապետներէն մին, իր յուշերուն մէջ կը բացատրէ թէ ինչո՞ւ համար կամաւորական զունդերը չեն կարողացած օղնութեան փութալ Հաւատորիկի եւ Քանայ լեռներու փախստականներուն եւ Սասունի Հայութեան:

Ան, բաղդատարար, շա՛տ աւելի լաւատեղեակ կ'երեւի Դատուանի մէջ տիրող իրական կացութեան եւ կամաւորական գործունէութեան, քան վերոյիշեալ երեք դաշնակցական անձնաւորութիւնները (Սիմոն Վրացեան, Դրօ եւ Կարօ Սասունի), եւ իր ներկայացուցած պատմութիւնն ալ բոլորովին կը տարբերի անոնց գրաբանութիւններէն:

Ահա՛ւասիկ խմբապետ Մարտիրոսի յուշերուն՝ Դատուանի վերաբերեալ մասը. —

«ՃԻՇՏ Վարդավառի օրը [Ա.], բոլորս էլ Դատուան էինք, երբ Սասունից ստացուեց մի նամակ՝ Ռուբէնի եւ Վ. Փափագեանի անունից (Ահա՛ թէ ի՛նչքան եմ յիշում այդ նամակից). —

«... Ինչո՞ւ էք դանդաղում, Մշոյ ժողովուրդը կոտորուեց. միայն մի մասին յաջողուեց փախչիլ մեզ մօտ, Սասուն. մի ուրիշ մասն էլ թաքնուել է զանազան տեղերում: Հայկական զիւղերը լըցուած են օտարականներով, մուհաջիրներով, որոնք Քրդեր են: Մշոյ դաշտում տաճկական զօրք չկայ. մի՛ ուշացէ՛ք. յարձակուեցէ՛ք Նեմութի կողմից. մենք էլ կ'աշխատենք մեր կողմից կռուելով միանալ ձեզ, որպէսզի կարողանանք այստեղի քառասուն հազար ժողովուրդը ազատել: Սրանք մեզ մօտ են ապաստանել Դիարբեքիւրից, Մուշից եւ միանգամայն անօթեան են: Շտապեցէ՛ք, արդէն մեր ուտելիքն ու փամփուշտը վերջանում են. ի սէր Աստուծոյ, շտապեցէ՛ք, եթէ չէք ուզում ժողովուրդը սովամահ լինի... եւայն, եւայն»:

«Անդրանիկը, Քեռին, Դրօն եւ Համազասպը շտապում են Գեներալ Տրուխինի մօտ, բացատրելու համար Սասունում ստեղծուած վիճակը եւ ցոյց տալու համար Ռուբէնի աղերսանքներով լեցուն նամակը:

«Անյապաղ յարձակում որոշուեց բարեբախտաբար:

«Անդրանիկի զունդը եւ մեր զումարտակը միասին ուղղուեցինք Սուղուրթ, որպէսզի զիշերով անցնելով Նեմրութի փեշերով՝ յարձակուէինք Մուշի վրայ եւ այնտեղից Սասուն, միանալու համար Ռուբէնին:

«Արդէն Սուղուրթում էինք:

«Տղաները թէ՛յ էին պատրաստում՝ խմելու համար, երբ Անդրանիկի հետախոյզները մեզ մօտ բերին մի թուրք զերուած ասկեարի: Ասկեարը նախ զարմանք յայտնեց թէ մենք ինչպէս է որ Սուղուրթ էինք եւ չէինք նահանջել. ապա ասաց որ Մանազկերտը զբրաւուած է Տաճիկների կողմից եւ Զօր. նազարբէգեանն էլ արդէն նահանջում է:

«Զարմանքն ու վայրոյթը համակեցին բոլորիս: Անդրանիկը այնքան էր զայրացել որ հրամայեց ասկեարի հաշիւը անմիջապէս մաքրել:

«Դժբախտաբար, իրականութիւն կար տարաբախտ ասկեարի ասածներում, որովհետեւ հազիւ կէս ժամ շանցած, հասաւ Զօր. նազարբէգեանի սուրհանդակը, հաստատելով կէտ առ կէտ, ինչ որ ասել էր Տաճիկ ասկեարը:

«Յիշում եմ մօտաւորապէս ինչ որ գրել էր Զօրավարը. —

«— Մեր զօրքերը թողին Մանազկերտը եւ նահանջեցին. ինձ նոյնպէս հրահանգուած է նոյնը. անձնական պատասխանատուութեամբ մինչեւ գիշերուայ տասնեւերկուքը ձեզ կարող եմ սպասել Ախլաթում. աւելին անկարող եմ. եթէ ուշացաք, զիտցէք որ գերի պիտի մնաք...»:

«Դրութիւնը փրկելու եւ մի ձեռով Սասունին օգնութեան գնալու ԲՈՂՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԶՈՒՐՆ ԻՆԿԱՆ: Ոչինչով կարելի էր փոխարինել ներկայացուած առիթը:

«Հասել էինք Սասունի զոնների առաջ ու մնում էր միայն մի քանի փոքրիկ ճիւղ եւ պիտի փրկուէր անմեղ ժողովուրդը անխուսափելի կոտորածից: Արդէն կարողացել էինք համոզել մենք մեզ որ հոգ չէ մի ինչ որ Տրուխինի պատճառով՝ չարս օր Ս. Յակոբում, հիմզ օր՝ Սորփում, եօթն օր՝ Դատուանում անտեղի ժամանակ կորցրինք, որովհետեւ մէկ-երկու օրից յետոյ ուղղուելու առիթ էր ներկայացում, չտկելու միջոց էր տրուում մեզ պարտադրուած սխալի՝ լաւով վերջացնելով... Սասունը մեզնից միայն երկու օրով էր բաժնուած, ժողովուրդը փրկուած էր արդէն ջարդից... յանկարծ նահանջ...

«Անդրանիկը այլեւս չսպասեց, նստեց իր ձին եւ ձիաւորներին ալ հետն առնելով՝ թողեց իր հետեւակին անգլուխ ու անտէր, հե-

ուացաւ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջք 1006-1007) [Բուր
րնդդժուժմները մերն են, Ա. Տ.] :

Ինչպէս ուշադիր ընթերցողը բացորոշ կերպով կը տեսնէ, իր-
բեւ հետեւանք «Սասնից ստացուած» նամակին, որոշուեր է շուտով
վերջ տալ իրենց տնտեսացոյ քայլերուն, «մի ինչ որ Տրուխինի պատ-
ճառով, չորս օր՝ Ս. Յակոբում, հինգ օր՝ Սորփում, եօթը օր՝ Դատ-
ուանում», այսինքն, ամբողջ տասնեւվեց օր «անտեղի ժամանակ»
ՎԱՏՆԵԼԷՆ ԵՏՔ, «անյապաղ յարձակում որոշուեց բարեբախտա-
բար» :

Անդրանիկի գունդը եւ վաշտապետ Մարտիրոսի գումարտակը
յառաջացեր են մինչեւ Սոխուրդ, Ազրիւր Սերոբի ծննդավայր գիւղը,
եւ հոն՝ դերի ինկած թուրք «ասկեար»է մը կ'իմանան թրջական հա-
կա-յարձակողականի եւ ուսական բանակներու նահանջի լուրը,
որուն կը յաջորդեն նաեւ Զօրավար Նաղարբէգեանի հրահանգն ու
հրամանը :

Ինչպէս որոշ կը տեսնուի, վաշտապետ Մարտիրոս քաջածա-
նօթ է Դատուանի անցուղարձերուն, բայց որեւէ ակնարկութիւն
ԶՈՒՆԻ կամաւորներու խմբապետական ժողովի եւ հոն տրուած ո-
րոշումներու մասին, ինչպէս նաեւ Անդրանիկի տուած խոստումին
եւ յաջորդ առաւօտեան ալ՝ իր խոստումը դրժելու մասին :

Շարունակենք դեռեւս մեր պրպտումները :

* * *

[Ա.] Ինչպէս բոլոր դաշնակցական յուշագիրներու եւ «պատ-
մագիր»ներու, նոյնպէս նաեւ խմբապետ Մարտիրոս Աբրահամեանի
ժամանակագրութիւնը ՍեԱԼ է, երբ կ'ընէ հետեւեալ յայտարարու-
թիւնը .—

«ՃԻՇՏ ՎԱՐԳԱՎԱՌԻ ՕՐԸ... երբ Սասունից ստացուեց մի
նամակ՝ Ռուբէնի եւ Վ. Փափագեանի ԱՆՈՒՆԻՑ», որոնք կ'իմացնեն
եղեր — «Մշոյ ժողովուրդը կոտորուեց... Հայկական գիւղերը լեց-
ուած են օտարականներով՝ մուհաջիրներով, որոնք քրդեր են...»
եւայլն :

Ռուբէն եւ Վահան Փափագեան ի՞նչպէս պիտի կարողանային
Մշոյ դաշտի կոտորածներու այս ճշգրիտ տեղեկութիւնները ՆԱԽ
ԳԻՏՆԱԿ եւ ԱՊԱ զանոնք հաղորդել Դատուանի կամաւորներուն, այդ
կոտորածները տեղի ունենալէն ԱՌԱՋ :

Եթէ վերոյիշեալ նամակը գրուած ըլլար Մշոյ դաշտի համա-
տարած կոտորածի օրուան, այսինքն, Յունիս 28, վարդավառի Կի-

րակի օրուան ԵՐԵՎԱՆԵԱՆ, այն ատեն՝ նամակագիր այդ երկու «պա-
րոն»ները ՆԱԽ իրենք պէտք էր որ նախապէս իմանային ու գիտնային
այդ կոտորածներու իրական պատմութիւնը եւ ԱՊԱ տեղեկագրէին
դայն :

Մենք՝ անոնց յուշերէն կը տեղեկանանք որ ՕՐԵՐ ՎԵՐՋ միայն՝
իրենք իմացած են այդ տխուր լուրերը՝ «Կիսա-խելագար գուժկան»-
ներու միջոցաւ (Վահան Փափագեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 365) :

Եթէ այս էր պարագան, այսինքն, եթէ իրապէս այդ նամակը
գրուած ու նամբայ հանուած էր Յունիս 28-ի Կիրակիի կոտորածի
օրուան երեկոյեան, այդ սուրհանդակը ԱՌՆՈՒԱՋՆ երկու օրուան
ժամանակամիջոցի մը ՊԵՏՔ ՊԵՏԻ ՈՒՆԵՆԱՐ՝ Դատուան հասնելու
համար, ինչ որ կը նշանակէ թէ վարդավառի Կիրակի օրէն առնուազն
ԵՐԿՈՒ ՕՐ ԵՏՔ, այդ նամակը հասեր է Դատուան եւ ո՛չ թէ «ճիշտ
վարդավառի օրը» :

Եթէ «Մշոյ ժողովուրդը կոտորուեց» բացատրութեան մէջ է
նաեւ քաղաքի կոտորածին լուրն ալ, այն ատեն՝ Սասունարնակ մեր
երկու «պարոն»ները, — Ռուբէն եւ Վահան Փափագեան, — պէտք էր
որ քաղաքի կռիւին պատմութեան մանրամասնութիւնը իմանային՝
ԱՄԵՆԷՆ ԿԱՆՈՒԽ, Յուլիս Մէկին, Զորեֆշաքթի : Այս պարագային
ալ, իրենց գրած նամակը՝ ամենէն կանուխ, ճամբայ դրուած կ'ըլլար
նոյն օրուան երեկոյեան, եւ Դատուան հասած պիտի ըլլար Յուլիս
Երեֆին կամ անկէ ետք, այսինքն, «վարդավառի օր»էն հինգ-վեց օր
անցնելէն ՅԵՏՈՅ :

Իսկ եթէ, հակառակ պարագային, ենթադրենք որ Դատուանի
կամաւորները, ԻՐԱՊԷՍ, այդ նամակը ստացած էին «ՃԻՇՏ ՎԱՐ-
ԴԱՎԱՌԻ ՕՐԸ», այդ կը նշանակէ որ յիշեալ նամակը գրուած եւ
նամբայ հանուած էր վարդավառի Կիրակի օրուան համատարած
կոտորածէն ԵՐԿՈՒ ՕՐ ԱՌԱՋ : Այդ պարագային ալ, մեր երկու «պա-
րոն»ները ի՞նչպէս պիտի կարողանային գիտնալ (կամ գուշակել)
թէ երկու օր վերջ, կոտորած տեղի պիտի ունենար եւ ի՞նչ ձեւով ու
ծաւալով տեղի պիտի ունենար... :

Կը տեսնէ՞ք, սիրելի՛ ընթերցողներ, ծիծաղելիութիւնը, ա՛լ
չըսենք՝ ոչ-պատմականութիւնը այս սխալ ժամանակագրութեան եւ
շինծու պատմութեան... :

Գ Լ ՈՒ Խ Ժ Ա .

**ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹԻԿՆԱՊԱՀ ՋԻՆՈՒՈՐԻ
«ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ»**

Ե. — Խմբապետ Մարտիրոս Աբրահամեանի վերոյիշեալ պատու-
մը հանդուժեալ քանի մը կէտեր ունի Անդրանիկի թիկնապահ
զինուորի պահած «օրագրութեան» հետ, որ կը կրէ հետեւեալ տիտ-
ղոսը. — «Զօրավար Անդրանիկի կովկասեան ձախաւթի Պատմական
Օրագրութիւնը»:

Հանդուժեալ եւ նմանութեան կէտերը մէկէ աւելի են, եւ
ուշագիր ընթերցողը շատ դիւրութեամբ պիտի կրնայ նշմարել զա-
նոնք, երբ մտադրութեամբ կարդայ այդ «Օրագրութեան» հետեւեալ
մասերը. —

«Յուլիս 11, — Ժամը չորսին, Դրոյի խումբին եւ 600 կողակ-
ներու հետ ճամբայ ելանք՝ մեզի հետ ունենալով երկու թնդանօթ-
ներ, եւ հասանք Ջրհոր եւ Շամիրամ գիւղերը, եւ հոն դիչերեցինք:

«Հրամանատար Անդրանիկ՝ Գեներալ Տրուխինին դրաւ որ
խնդրագիր մը մատոյց՝ հետեւեալ իմաստով. — «Այս վայրկեանիս,
իմ հայրենիքը կրակի, աւերի եւ ջարդի ենթարկուած է, քոյլ տուէք
իմծի որ երթամ Մուշ եւ Սասուն»:

«Այս խնդրագրի ընդօրինակութիւնը տուաւ Գեներալ Շար-
փանթիեվին ալ: Երկու գեներալներն ալ՝ հետեւեալ պատասխանը
տուին հրամանատար Անդրանիկի խնդրագրին. —

«— Առանց կորպուսի ընդհանուր հրամանատարի թոյլտու-
թեան, որեւէ բան չենք կրնար ընել»:

«Այս պատասխանէն յետոյ, Գեներալ Շարփանթիեվ իմա-
ցուց Հրամանատար Անդրանիկին թէ ինք անձամբ, անթել հեռագ-
րով՝ կորպուսի ընդհանուր հրամանատարին յայտնած է Անդրանիկի
այս փափաքը:

«Յուլիս 11-ին, լուր եկաւ Հրամանատար Անդրանիկին թէ
Չորրորդ կորպուսի ընդհանուր հրամանատար Օզանովսկին քոյլ
կու տայ Հրամանատար Անդրանիկին յառաջ երթալ եւ կը հրամայէր
Պոլկովնիկ Վասիլիեւին, որ իր 600 կողակներով, երկու թնդանօթ-
ներով եւ երկու արագահարուածներով՝ ենթարկուի Հրամանատար
Անդրանիկի հրամանին, ինչպէս նաեւ Դրոյի բաւալիոնը:



ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

«Հրամանատար Անդրանիկ, նկատելով որ Մորիս Քէսրէնի,
Զխուր - Նորչէն ճամբով երթալը վտանգաւոր է, որոշեց Սոխուրքի
վրայով երթալ վարդեմիս եւ Ազրեմիս (Մշոյ դաշտը):

«Յուլիս 13. — Հասանք Սոխուրք: Հոն ժամանելէ քիչ ետք,
երկու ձիաւոր կողակներ, քրտնած եւ ուժասպառ, մեր քով եկան՝

Գեներալ Տրուխինէն նամակ մը բերելով մեզի, հետեւեալ բովանդակութեամբ .—

«— Հիացայ մտածելակերպիդ վրայ, որ քարտէսին վրայ մեր ցոյց տուած ճամբայով չգացիր, այլ քու գիտցած ճամբան ընտրեցիր: Քեզի յանձնուած այդ երեք հազար հողիներու կեանքը քեզի կը պարտինք: Այս վայրկեանիս՝ մենք կը նահանջենք: Երկու ձիաւորներս ետ չղրկես, ա՛յլ հետդ տանիս: Նամակս ստանալուդ պէս, օգնութեան հասնիս. Կամուրջ, Ախլաթ, Գեներալ Նազարբէգովին եւ Պոլկովնիկ Ապրասովին»:

«Ռուս Պոլկովնիկ Վասիլիեւը կարգաց նամակը եւ բացատրեց Հրամանատար Անդրանիկին:

«— Ի՞նչ է պատահեր որ պիտի նահանջենք, երբ բանակի մէկ ծայրը եկեր հասեր է Մուշի դաշտը, Վարդենիս եւ Ղարս:

«Հրամանին համաձայն, Հրամանատար Անդրանիկ հաւաքեց զօրամասերը եւ ետ գացինք Կամուրջ եւ Ախլաթ: Երբ հոն հասանք, 8,000 ռուս զինուորներէն միմիայն ութ հեռաձայնի պաշտօնեաներ գտանք հոն: Չանոնք մեզի հետ առնելով՝ նահանջեցինք Ալջաւազ: Երբ Ալջաւազ հասանք, հոն գտանք 8,000 զինուորները, որոնց հետ միասին անցանք Արճէշ, եւ Յուլիս 17-ին առաւօտեան՝ հասանք Բերրի Գալէ» («Զօրավար Անդրանիկի Կովկասեան Ճակատի Պատմական Օրագրութիւնը», էջք 33-34) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Հիմա մատնանչենք հանդուժութեան այն մէկ քանի կէտերը, որոնք գոյութիւն ունին խմբապետ Մարտիրոս Աբրահամեանի եւ օրագիր պահող թիկնապահի պատումներուն միջեւ .—

1.— Անդրանիկի թիկնապահը կը յայտնէ որ Անդրանիկ դիմում կատարած է Գեներալ Տրուխինին եւ թոյլտուութիւն աւգած որ իրեն արտօնութիւն տրուի՝ շարունակելու իր յառաջխաղացքը դէպի Մուշ եւ Սասուն:

Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան ալ կը հաստատէ այս պարագան՝ այն միակ տարբերութեամբ որ Անդրանիկին կ'ընկերացնէ նաեւ Քեռին, Դրօն եւ Համազասպը, որոնք «չտապում են Գեներալ Տրուխինի մօտ՝ բացատրելու համար Սասունում ստեղծուած վիճակը»:

2.— Թէ՛ խմբապետ Մարտիրոս եւ թէ՛ օրագիր պահող թիկնապահը համաձայն են իրարու, երբ թիկնապահը կը յայտարարէ թէ «Հրամանատար Օգանովսկի թոյլ կու տայ Անդրանիկին որ շարունակէ իր յառաջխաղացքը»:

Նոյնը կը հաստատէ նաեւ խմբապետ Մարտիրոսը, երբ կը գրէ .—

«Անյապաղ յարձակում որոշուեց բարեբախտաբար»:

Եւ Անդրանիկի գունդը ու խմբապետ Մարտիրոսի գումարտակը կը յառաջանան մինչեւ Սոխուրթ պատմական դիւղը:

3.— Խմբապետ Մարտիրոս լուսթիւն կը պահէ Ռուսերու տըրամադրած ուժերու քանակի մասին, մինչդեռ թիկնապահը շատ բացորոշ կերպով կը յայտարարէ որ «Օգանովսկի կը հրամայէ Պոլկովնիկ Վասիլիեւին, որ 600 կռակներով, երկու թնդանօթներով եւ երկու արագահարուածներով, ենթարկուի Անդրանիկի հրամանին», մէջն ալլալով նաեւ «Դրոյի բատալիոնը»:

Ասիկա արդէն կարծես թէ կը նմանի Տրուխինի «աչք փակեմ»ի պատմութեան, որուն համաձայն, յիշեալ զօրավարը յօժարած է տրամադրելու «երկու ստանեակ կողակ եւ չորս լեռնային թնդանօթ... ձեր կամաւորներով միացէ՛ք կռակներին, իջէ՛ք (Մշոյ) դաշտը եւ ձեր ժողովուրդին հետերնիդ առած, շարժուեցէ՛ք դէպի Մանազկերտ, դէպի Իգդիր»:

4.— Յուլիս 13-ին, Անդրանիկ, իր ուժերով կը հասնի Սոխուրթ գիւղը: Հո՛ն հազիւ ժամանած, Տրուխինէն կը ստանայ նահանջելու հրամանը՝ զնահատական եւ դովասանական քանի մը բառերով շարունակ: Կը հրահանգուի Անդրանիկին որ օգնութեան փութայ Գեներալ Նազարբէգովին եւ Պոլկովնիկ Ապրասովին, որոնք Ախլաթ կը դանուէին:

Խմբապետ Մարտիրոսի պատումին համաձայն, նահանջի լուրը առաջին անգամ գուժողն է եղած «տարաբախտ ասկեարը», որուն կը յաջորդէ Զօրավար Նազարբէգեանի սուրհանդակին բերած նամակը՝ «հաստատելով կէտ առ կէտ ինչ որ ասել էր տաճիկ ասկեարը»:

5.— Նահանջի այս անակնկալ եւ տխուր լուրը ստանալուն պէս, Անդրանիկ, իրեն եկած հրամանին համաձայն, «հաւաքեց զօրամասերը» եւ վերադարձաւ Ախլաթ, կը հաւաստէ թիկնապահը:

Նոյն բանը կը հաստատէ նաեւ խմբապետ Մարտիրոսը, միանգամայն աւաղելով որ «մի ձեւով՝ Սասունին օգնութեան զնալու բոլոր որոշումները ջուր ինկան»:

Շատ զարմանալի կը թուի որ խմբապետ Մարտիրոս Աբրահամեանը, կա՛մ օրագիր պահող թիկնապահը որքեւ յիշատակութիւն ՉՈՒՆԻՆ Սիմոն Վրացեանի հաւաստած «խմբապետական ժողով»ի մասին, հո՛ն եղած խորհրդակցութեանց եւ հաւանաբար ալ՝ վիճաբանութեանց ու հակաճառութեանց մասին, տրուած որոշումներու մասին, Անդրանիկի տուած համաձայնութեան եւ յաջորդ առաւօտեան ալ՝ անոր խոստումի դրժումի մասին:

Խմբապետ Մարտիրոսի եւ Անդրանիկի թիկնապահ Օրագիրի վերոյիշեալ ներդաշնակ յայտնութիւնները՝ մէկ կողմէն, իսկ Սիմոն

Վրացեանի, Դրոյի եւ Կարօ Սասունիի պատմածներու մասին՝ այդ երկուքի պահած քար լուսիւնը՝ միւս կողմէն, բացայայտ կերպով յստակ կ'ընծայեն որ Անդրանիկի մասին՝ Սիմոն Վրացեանի, Դրոյի եւ Կարօ Սասունիի ըրած փոքրոզի վերադրումները՝ ամենաստորին տեսակէն չարամիտ գրպարտութիւններ են եղեր...

Զրպարտիչ եւ չարախօս Բիւրոյականներու, եւ նենգամիտ «պատմագիր»ներու այս բոլոր յերիւրածոյ հեքիաթները եւ պառաւական բամբասանքները Ինֆնիս ԿԸ ՀԵՐՔՈՒԻՆ՝ դաշնակցական լաւատեղեակ խմբապետի մը եւ Անդրանիկի թիկնապահ զինուորին լուս վկայութիւններով...:



Գ Լ Ո Ւ Մ Ժ Բ .

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ «ԴԱՌՆՈՒԹԻՒՆԸ» ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀԱՆԳԵՊ

Այս բոլոր վկայութիւններէն, բացատրութիւններէն եւ մեկնարանութիւններէն յետոյ, պատմական ի՞նչ արժէք կը ներկայացնէ Վահան Փափազեանի «ԴԱՌՆՈՒԹԻՒՆԸ», զոր «մինչեւ այսօր ալ» չէ մոռցեր որսակալ Բիւրոյական յուշագիրը («Իմ Յուշերը», Բ., էջ 381):

Վահան Փափազեանի այս «դառնութիւնը», — ինչպէս կը յիշեն մեր ընթերցողները, — ծաղում առած է իր այն յերիւրածոյն, ըստ որում՝ Անդրանիկ, ՈՐՊԷՍ ԹԷ, ստանալէն եւ կարդալէն յետոյ «չապիկի կտորին վրայ» իր գրած նամակը, եւ լսելէ յետոյ այդ նամակը տանող սուրհանդակին ալ (Վարդենիսցի Յարութիւն Վարժապետի) «բերանացի պատմութիւնը», անմիջապէս ԶԷ ՓՈՒԹԱՑԵՐ ԵՂԵՐ կատարելու մեծայարգ Բիւրոյական երեսփոխանի փափաքը, ա՛յլ «հարկ համարած է եղեր ենթարկուիլ» ռուսական սպայակոյտի հրամանին եւ անմիջապէս նահանջեր է, — ըստ իր պատմմին:

Կա՛մ, Անդրանիկ, որպէս թէ, նախապէս համաձայներ է եղեր՝ կամաւորներու 3,500-նոց բանակով, 200 կողակներով եւ չորս թընդանօթներով, «չարժուել դէպի Տարօն», սակայն յաջորդ՝ առաւօտեան ալ՝ «մերժել է ենթարկուել կամաւորական խմբապետների խառն ժողովի» որոշումին, դրժելով իր խոստումը՝ այն առարկութեամբ թէ «ինձ հրաման է եկել նահանջելու եւ ես պարտաւոր եմ նահանջելու», — ըստ Սիմոն Վրացեանի յայտարարութեան:

Եւ կա՛մ.

«— Շա՛ն որդի, դու քո միւսներով, ժամ առաջ կը հասնես Մուշ եւ կ'ասես որ ես փրկեցի Տարօնը, իսկ մենք կը մնանք աննշան»՝ փցուն, անիմաստ ու տղայական, եթէ չըսենք՝ փոքրոզի վերադրումներով, Անդրանիկ, իբրեւ թէ, չէ՛ փութացեր եղեր Տարօնի օգնութեան...:

Սակայն, մեզի կը թուի որ եթէ, ԻՐԱՊԷՍ, Անդրանիկ նախապէս (գիշեր ատեն) տուեր է իր «հաւանութիւնը», եւ առաւօտեան ալ՝ «մերժել է ենթարկուել» այդպիսի որոշումի մը, ՄԵՆՔ ԿԸ ՀԱԻԱՏԱՆՔ որ Անդրանիկ՝ այդպիսի ծանրակշիռ որոշումի մը յանգած է ամբողջ գիշերուամ յոյժ մտատանջ խնկումներէ յետոյ միայն,

ամենալուրջ խորհրդածութեան առարկայ դարձնելով այն ԽԻՍՏ ԱՆԲԱԼՁԱԼԻ եւ ԾԱՆՐԱԿՇԻՌ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ՝ իր առաջին իսկ հանդիպումին, զոր պիտի ունենար Տարօնի եւ Սասնոյ յաւէտ կըս- կծալի ողբերգութեան միակ ու իրական պատասխանատուներուն — Ռուբէնի եւ Վահան Փափազեանի հետ :

Եթէ, իրապէս, «դառնութիւն» մը գոյութիւն ունէր այս բո- լոր շարախօս զրպարտութեանց եւ վարկապարագի վերադրումներու լարելքին թոսին մէջ, ա՛ն ալ՝ ա՛յն տեսակ «դառնութիւն» մըն էր, — եւ «դառնութեանէն» աւելի՛ նՈՂԿԱՆՔ, ՊԺԳԱՆՔ, — զոր Բիւրոյա- կան յուշագիրը, ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ աւելի, ՊԵՏՔ ԷՐ ՈՒՆԵՆԱՐ եւ ԶԳԱՐ՝ հանդէպ ԻՐ ԻՍԿ ԱՆՁԻՆ, իր ոգոսմելի, իր յամառ եւ կամակար անձին, իր վնասակար ու եսամոլ անձին, մէկէ աւելի պատճառներով .—

ա.— Որ չկարողացաւ, կա՛մ՝ աւելի ճիշտը, ԶՈՒԶՅՑ ՕԳ- ՏՈՒԻԼ Հաւատորիկի եւ Քանայ լեռներու մէջ՝ իրեն ներկայացուած խիստ հազուագիւտ պատեհութեանէն, հակառակ իրեն եղած կրկնակ դիմումներուն եւ թելադրութեանց, ժողովրդական ներկայացուցիչ- ներու բաղձանքին, եւ մանաւանդ՝ Զինուորական Խորհուրդին ալ՝ համամտութեամբ եւ որոշումին, սակայն մեր «ազմագէտ» բիւրո- յական երեսփոխանը «յամառօրէն պնդեց իր ըսածներուն վրայ» (Մի- սակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 430), ան- հասկնալի թեթեւամտութեամբ մը՝ ՄԵՐԺԵԼՈՎ քսանեւհինգէն մին- չեւ երեսուն հազար թշուառ փախստականներու փրկութեան եւ ա- գատութեան համար՝ իրեն եղած բոլոր թելադրութիւններն ու ո- որոշումները :

բ.— Որ Հաւատորիկի եւ Քանայ լեռներու մէջ եւ անտառներու խորերը, կիսա-վայրենի (եթէ չըսենք՝ նախա-պատմական մարդու) կեանքին ու ապրելակերպին դատապարտուած այս տառապակոծ փա- խըստականներու հանդէպ, Վահան Փափազեանի վարմունքը, իբրեւ առաջնորդ եւ ղեկավար, եղած է ԽԻՍՏ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ՝ անվայել նոյնիսկ որեւէ անսիրտ, անգուք եւ դաժան բռնակալի մը, ա՛լ ո՛ւր մնաց Բիւրոյական երեսփոխանի մը . . . :

Վահան Փափազեան, այդ սովալլուկ փախստականներու հետ, Հաւատորիկի եւ Քանայ լեռներու մէջ՝ իր անցուցած աւելի քան երկու ամսուան ժամանակամիջոցը (Յուլիս եւ Օգոստոս) վերածած էր սպառնալիքներու, խաբէութիւններու եւ դաւերու ԱՆՀԱՏՆՈՒՄ եւ ԱՆՀԱՄԱՐ ԾԱՐՔԻ ՄԸ՝ հանդէպ այդ տառապակոծ եւ ախտա- վարակ բեկորներուն, որոնց «պաշտպանութեան» ու «պահպանու- թեան» ոսկեզօծուած կեղծ փետուրներով կը փորձէ պնասպարդել իր անփառունակ գլուխը . . . :

Այո՛, երկար է շարքը՝ այդ լեռներու մէջ, Վահան Փափազ- եանի գործած սխրագործութեանց, որոնց մասին արդէն գրած էինք իրեն՝ մեր թղթակցական յարաբերութեանց ընթացքին, եւ որոնց մէկ-քանի դրուագներու մանրամասն քննութեամբ պիտի գրադինք հոս, յաջորդ էջերուն մէջ (Տեսնել այս Մասն Երկրորդի ԺԳ., ԺԶ., ԺԷ., ԺԸ. եւ ԺԹ. Գլուխները) :

գ.— Որ ուրիշներէ օգնութիւն կանկալող անձը ՊԵՏՔ Է ՈՐ ՈՒՏՈՒԱԾ ԸԼԼԱՅ ՆԱԵԻ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ առաքինութեամբ ալ : Վահան Փափազեան եւ Բիւրոյի լիազօր-ներկայացուցիչ իր ըն- կերը, Ռուբէն, որոնք՝ Մուշի կռիւին առաջին օրուան ընթացքին, Ծիրնկատարի զղանցքներէն՝ անկարեկիր սառնասրտութեամբ մը կը դիտէին քաղաքին ոմբակոծուիլը՝ թրջական չորս թնդանօթներու կողմէ, ո՛չ միայն ՄԻՏՔԵՐՆԷՆ ԱՆԳԱՄ ԶԵՆ ԱՆՑՈՒՑԱԾ շուտա- փոյթ օգնութիւն հասցնել՝ իրենց գտնուած վայրէն քանի մը մղոն վար, չորս թնդանօթներու անընդհատ հարուածներէն քանդուող քաղաքին եւ կոտորուող հարազատներուն, ա՛յլ նաեւ ՍՊԱՌՆԱԼԻ- ՔՈՎ ԱՐԳԵԼՔ ՅԱՐՈՒՑԵՐ ԵՆ՝ զիրենք չըջապատող քաղաքացի եւ դաշտեցի հայուկներուն որ ԶՅԱՆԴԳՆԻՆ ԱՌՆԵԼՈՒ այդպիսի նուիրական քայլ մը, ՍՊԱՌՆԱԼԻՔՈՎ՝ անոնց աչքերուն առջեւ շո- դացնելով «ԴԱԻԱՃԱՆ» յոյժ զգուելի բառին ամօթանքը եւ նախա- տինքը, — դաւաճան համարելով զանոնք բոլորն ալ, եթէ փորձէին օգնութեան փութալ իրենց կոտորուող հարազատներուն՝ անտեսե- լով «պարոն»ներու հրամանն ու արգելքը :

Վահան Փափազեան ի՞նչ իրաւունքով՝ օգնութիւն կ'ակնկալէր Անդրանիկէն, որ մէկ-երկու օրուան խիստ վտանգալից ճամբոր- դութիւն կատարելով՝ պիտի գար մինչեւ Քանայ եւ Հաւատորիկի լեռները, կտրել-անցնելով թշնամի բանակի մը ռազմագիծը եւ հո- դամասը, այդ միեւնոյն թշնամիէն պաշարուելու եւ փճանալ-ոչըն- չանալու բացայայտ եւ ստոյգ վտանգը աչք առնելով՝ յանուն ի՞նչ բանի .— Բիւրոյական կամակոր, յամառ ու եսապաշտ երեսփոխանի մը, կա՛մ հովկուր ու ամբարտաւան «փաշայ»ի մը (Ռուբէն) անպէտ ու վնասակար կաշիքն՞ըր փրկելու համար . . . :

Մենք արդէն արտայայտած ենք մեր խոնարհ կարծիքը՝ այս օգնութեան խնդրոյն մասին եւ գրած իրեն, Վահան Փափազեանին ալ, մեր ամենավերջին խիստ ընդարձակ նամակով (1 Մարտ 1955 թուակիր, ԺԱ. կէտը) .— որ ահաւասիկ .—

«Հաւանաբար, երբ Անդրանիկ կը լսէ որ դուք — երկու «պա- րոն»ներդ, — Տարօնի Հայութիւնը անդուլիս ու անպաշտպան ձգե- լով, անոր մարտական ուժերը երկպառակելով եւ հեռաւոր Սասու- նի մէջ կեդրոնացնելով, քաղաքի եւ դաշտի Հայութիւնը՝ անղեկ,

անգէն ու անսպաշտական վիճակի մէջ դնելով՝ ՄԱՏՆԵՐ ԷՔ Քսաներորդ Դարու բարբարոսներուն ձեռքը, իբրև փրկանք՝ ձեր — երկու «սարոն»ներու — չորացած կաշիներու փրկութեան, այդ միեւնոյն Անդրանիկը ի՞նչ սրտով՝ պիտի ուզէր, գերագոյն զոհողութիւններու դիմով, դալ Քան կամ Սասուն:

«Եւ Եթէ ան յանձն առնէր այդպիսի գերագոյն գոհաբերութիւն մը եւ դա՛ր հոն, — Քանայ եւ Հաւատորիկի լեռները, — ԿԸ ՀԱԻԱՏԱՄ որ միայն մէկ բան ընելու պիտի գար... «Ի վարձատրութիւն ձեր բարեօք ծառայութեանց», զոր Տարօնցի պատուախնդիր ու վրէժավառ մարտիկները պէտք էր որ մինչեւ հիմա ըրած ըլլային եւ չեն ըրած... դժբախտաբար, զործադրած ըլլալու համար Մուշ քաղաքի դիւցազնական գոյամարտի անզուգական ղեկավար եւ քաջամարտիկ նահատակ Հաջի Յակոբ Կոտոյեանի ամենավերջին փափաքն ու բաղձանքը...» (Այս կէտի մանրամասն պատմութիւնը կարդալ «Տարօնապատում»ի այս Ուսումնասիրութեան Մասն Առաջինի մէջ, Գլուխ ԻԶ.):



Գ Լ Ո Ւ Մ Ժ Գ .

ՓԱՓԱՋԵԱՆ ԿԸ ԽԼԵ ԶԵՐՈՍ ԼԵՒՈՆԻ ԿՐԱՑԱՆԸ ԵՒ ԿԸ ՅԱՆՁՆԵ ՔՈՒՐԴԵՐՈՒՆ

Վահան Փափազեանին ուղղած մեր Երկրորդ Նամակով (10 Նոյեմբեր 1954 թուակիր), խոստացեր էինք իրեն զրկել երկու սիրասուն պատանիներու — Լեւոն Ղազիկեանի եւ Գալուստ Պրսէկանի մասին, որոնց հետ հայրական մտերմիկ բարեկամութիւն հաստատած էր ինք, Մուշ քաղաքի մէջ իր երկարատեւ հիւանդութեան ընթացքին՝ մանաւանդ:

Յուշադիր Վահան Փափազեան զովեստի հետեւեալ տողերը կը ձօնէ անմահ յիշատակին վերոյիշեալ երկու պատանիներուն, որոնք մայրական խնամք եւ հոգատարութիւն ցոյց տուած էին իրեն հանդէպ, թիֆլիսի հիւանդութեամբ՝ երկար ատեն անկողնոյ ծառայած միջոցին:

«Պատանի Լեւոնը եւ Գարեգինը (իրական անունը Գալուստ էր, սակայն Բիւրոյական յուշագիրը, սխալմամբ [Ա.], Գարեգին կը կոչէ զայն, Ծնթ. Ա. Տ.), ամէն օր տաք բազմիք կը պատրաստէին, մայրական գորովով կը վերցնէին զիս ու կը դնէին. Կուրտիկ լերան ստորոտէն (3-4 ժամ) աղբիւրի ջուրէն կը բերէին, լերան սուտեղ փունջերով... ա՛խ այդ օրերը» («Իմ Յուշերը», Բ., էջ 352):

Տեսնենք թէ հեղինակը այս զգայուն տողերուն, որոնք Երախտագէտ եւ երախտապարտ հոգիի մը սիրազեղ արտայայտութիւնը կը թուի ըլլալ, ի՞նչ դիրք բռնած է այդ երկու զոհաբերող հերոս պատանիներուն հանդէպ՝ անոնց դժուարութեանց եւ դժբախտութեանց բազմաբան...:

Սակայն, նախ անհրաժեշտ է դիտնալ թէ Վահան Փափազեան ի՞նչպէս կը ներկայացնէ այդ երկու տարաբախտ պատանիներու երթարկուած դժբախտութեանց սրտաճմլիկ պատմութիւնը:

Հետեւեալն է յուշագիր Վահան Փափազեանի տարբերակը — «Այդ օրերէն մէկուն՝ երկու պատանիներ երեւցան(1). շատ

(1) Քաղաքի կառուցման ետք, շատ մը ուրիշ փախստականներու հետ, Լեւոն եւ Գալուստ ալ ապաստանած էին նախ Հաւատորիկի

փնտռած էին մեզի, մատղաշ իմ սիրելիները՝ Լեւոն եւ Գալուստն էին: Բայց ի՞նչ էր մնացեր այն թարմ, աշխոյժ ու կորովով լի կորիւններէն — սեւ թափանցիկ մորթով պատած ոսկորներու զանգուածներ, որ հազիւ կը շարժուէին իրենց ցնցոտիներուն մէջ...: Հրացան մըն ալ ունէին հետերնին: «Կերակրեցինք» բոված պարիով եւ եռացած դաղձի տաք ջուրով: Շունչ առին սիրելի այդ պատանիները: Գալուստ կը պատմէր՝ հիւանդադին հեւքով մը թէ քաղաքէն կու դան: Ժանտարմի սպաներէն մէկը իր քով առած է եղեր Լեւոնը իբր քարտուղար՝ թրքացնելու յոյսով, եւ երբ օրին մէկը սրիկան փորձեր է բռնարարել, Լեւոնը կատղած՝ դանակը մխեր է սպայի փորը եւ հրացանը առնելով՝ Գալուստի հետ փախեր է» («Իմ Յուշերը», Բ., էջ 392):

Վահան Փափազեանի այս պատմւոյ, որ սխալ ներկայացումի եւ յերիւրանքի իբրեւ ԴԱՍԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ կարելի է ծառայեցնել, ՀԻՄՆԱԿԱՆԱՊԵՍ ԿԸ ՏԱՐԲԵՐԻ Տարօնցի յուշագիրներու տարբերակներէն, եւ երբ այս տարբերութիւնը կը մատնանշէինք յուշագիր Վահան Փափազեանին, իրեն կը գրէինք նաեւ հետեւեալ տողերը —

«Մենչդեռ միւս աղբիւրները կը պատմեն որ Լեւոն եւ Գալուստ (Սասունի անկումէն յետոյ, Քանայ լեռները փախած ատեն), երբ Դամբէլի եւ Պիրզիկի Զորէն կ'անցնին եղեր, հո՛ն Լեւոն մենամարտի կը բռնուի հսկայ քուրդի մը հետ եւ զգետնելով՝ կը սպաննէ զայն, ու անոր հրացանն ու դաշոյնը առած՝ կու գայ Քան՝ Գալուստի հետ:

«Կարեւորը այս զանազան պատմումներու այլազան նկարագրութիւնը Զէ՛, ա՛յլ այն թէ Ի՞նչ ՊԱՏԱՀԵՑԱԻ արիւնի եւ կեանքի գնով ձեռք բերուած այդ հրացանին:

«Դուք այդ մասին որեւէ յիշատակութիւն չունիք ձեր յուշերուն մէջ:

«Տէր Եղիշէն, իր յուշերու 121-րդ էջին վրայ, որոշապէս կ'ըսէ որ ինք կը հարցնէ Լեւոնին.

«— Հապա ո՞ւր է հրացանդ, ինչո՞ւ անգէն կը պտտիս:

«Լեւոն, գրեթէ լալով, կը պատասխանէ որ Փափազեան՝ Մառնիկ գիւղի Յակոբէն՝ իւղ եւ սեր կ'ուտէ, Յակոբի եղբայր Աբգարն ալ իրմէ հրացանը կ'ուզէ. Փափազեան ԲՈՒՆԻ՝ Լեւոնի ձեռքէն, իր արեան գնով ձեռք բերած հրացանը ԽԼԵԼՈՎ՝ կու տայ Աբգարին»

Լեւոնը, ապա անցած Սասուն, որու անփառուակ անկումէն յետոյ ալ, նորէն վերադարձած էին Հաւատարիկի եւ Քանայ լեռները: Հաս էր որ երկար փնտռումէ ետք, անոնք կը յաջողին գտնել Վահան Փափազեանի խումբը:

(«Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը», էջ 121) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

«Իսկ ուրիշ յուշագիր մը (պատանի Երուանդ Շարաֆեան, Ծնթ. Ա. Տ.), որ Գալուստի եւ Լեւոնի հետ, միշտ ձեր խումբին կ'ընկերանար, Քանայ լեռները գտնուած ատենիդ, այսպէս կը պատմէ —

«Այդ հսկայ քուրդը Մառնիկ գիւղի ազան է եղեր: Քուրդի եղբայրները, Մառնիկի ոչս Յակոբի միջոցաւ՝ դիմում կը կատարեն Փափազեանին, որ իրենց եղբոր հրացանն ու դաշոյնը վերադարձնէ իրենց, փոխարէն խոստանալով ուտելիքով օգնել Փափազեանին եւ իր զինուորներուն: Փափազեան՝ հրացանն ու դաշոյնը կ'առնէ Լեւոնի ձեռքէն ու ԿԸ ՅԱՆՁՆԷ՛ ԲՈՒՐԴԵՐՈՒՆ, փոխարէն ստանալով կտոր մը ԱՐՆՈՏ ՀԱՅ («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 47) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

«Հակառակ ձեր անձին հանդէպ՝ Լեւոնի եւ Գալուստի ցոյց տուած ամէն տեսակ հողատարութեան եւ խնամքին՝ ձեր երկարատեւ հիւանդութեան ատեն, որոնց մասին կը խօսիք ձեր յուշերու 352-րդ էջին վրայ, դուք չէք կրցած ձեր ազդեցութիւնը դործածել որ այդ երկու տղաքն ալ առնէիք՝ կովկաս մեկնելու պատրաստուող ձեր խումբին հետ, երբ անոնք վերջին անգամ կը ներկայանան ձեզի, ինչպէս կը պատմէք 397-րդ էջին վրայ, պատասխանատու ցոյց տալով Ռուբէնը եւ Մշեցիները: «Լեւոնը եւ Գալուստը նկատեցին այդ չկամութիւնը եւ անյայտացան ժայռերու մէջ...» («Իմ Յուշերը», Բ., էջ 397):

«Իսկ ատկէ առաջ ալ, ... Լեւոնին, Գալուստին եւ ձեզ ընկերացող մեր յուշագիրին, դուք անձամբ կ'ազդարարէք.

«— Դուք այս կողմերը մնացէ՛ք, մենք կ'երթանք:

«Մենք սկսանք լալ, աղաչել եւ ըսել.

«— Աստուծոյ սիրոյն, մեզ մի՛ լքէք այս կողմերը, հետերնիդ տարէք. եթէ չկրնանք ձեզ հետ քայլ պահել, սպաննեցէ՛ք ու անցէ՛ք:

«Բայց անկարելի եղաւ. անոնց որոշումը վճռական ու վերջնական կը թուէր:

«Երբ անոնք սկսան յառաջանալ, մենք ալ շարունակեցինք հետեւիլ իրենց:

«Այդ պահուն, Վահան Փափազեան, Տիգրան Լոլոյեան եւ Արշակ Պոլէեան քաշեցին իրենց ատրճանակները եւ սպառնացին մեզի.

«— Եթէ հետեւիք մեզի, — ըսին անոնք, — երեքդ ալ պիտի սպաննենք»:

«... Անոնք անցան դացին, իսկ մենք, երեքս, նստանք ժայռի մը վրայ եւ կուշտ մը լացինք մեր սեւ ճակատագիրին վրայ...» [Այս

տիրազրու դրուազի լիակատար եւ մանրամասն նկարագրութիւնը կարգալ «Տարօնապատում»-ի այս ուսումնասիրութեան Մասն Երկրորդի ԺԸ. Գլուխին մէջ] :

«Այս յայտնութիւններու մասին ի՞նչ է ձեր բացատրութիւնը» (Մեր Չորրորդ Նամակը, 22 Դեկտեմբեր 1954 թուակիր) :

Մեր այս նամակին մէջ շօշափուած հարցերուն՝ հետեւեալ կերպով կը պատասխանէ յուշագիր Վահան Փափազեան. —

«Դուք, դարձեալ հիմնուելով ձեր քով գտնուող ինչ որ յուշերու վրայ, Լեւոնի հետ պատահած դէպքը ուրիշ պարապմունտու կը վերադրէք: Ինչ որ պրած եմ իմ յուշերու մէջ, իր ատենին պատմած է ինծի Լեւոնը՝ Գալուստի ներկայութեան [Բ.] :

«Իսկ այդ հրացանի պատմութիւնը (իրբեւ թէ Լեւոնի ձեռքէն առնուած) զգուելի առասպել է: Այդ սքանչելի տղաք իմ ամենասիրելի պատանիներն էին: Հրացան առնելու խնդիր մը կար, բայց բացարձակապէս որեւէ կապ չուներ անոր հետ. ուրիշ տղայ մըն էր, որմէ առնուած էր, չեմ գիտեր ինչ պատճառով :

«Տէր Եղիշէն անծանօթ մը չէ ինծի. ԼԱԻ ՆԿԱՐԱԳԻՐ ԶՈՒՆԵՑՈՂ ՄԵԿՆ ԷՐ. անոր վկայութիւններով եւ կիրքերով լեցուն անստոյգ գրքոյկը կարգացած եմ ժամանակին: Մառնիկցի որեւէ ֆուրդ տեսած չեմ եւ ո՛չ ալ՝ իւզերով ու մածուններով ապրած... :

«Գժգալի բամբասանքներ են թէ իբր թէ գրաւուած հրացան մը յանձնեք եմ ֆուրդի մը՝ «կտոր մը արնոտ հաց» ձեռք բերելու համար: Փախստական եղածս ատեն՝ ո՛չ մէկ ֆուրդի երես տեսած չեմ :

«Լեւոնին եւ Գալուստին՝ մեզի ընկերացնելու իմ շատ յամատ ճիգերու մասին, յուշերուս մէջ բացատրուած է. Ռուբէնը շրջանի գլխաւոր զեկավարն էր. ՎԵՐՁԻՆ ԽՕՍԳԸ ԱՆՈՐՆ ԷՐ... :

«Ի՞նչ պժգալի յերիւրանքներ, իբր թէ ատրճանակներ քաշած եւ արգելած ենք անոնց՝ հետեւելու մեզի :

«Բաւ համարեցէք այս բացատրութիւնները :

«Կ'ուզէի գիտնալ «Հայրը իր լացող մանկիկը խեղդելու մասին» ձեր պատմութիւնը» (Վահան Փափազեանի Չորրորդ Նամակը, 19 Յունուար 1955 թուակիր) [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.] :

Անմիջապէս իրեն փութացուցինք մեր պատասխանը, ուր՝ ի միջի այլոց, կը գրէինք նաեւ հետեւեալ տողերը. —

«Ո՛չ ես եւ ո՛չ ալ իմ տրամադրութեան տակ գտնուող յուշերը ըսած ենք որ դուք տեսած էք Մառնիկցի ֆուրդը: Գրած էի. —

«Քուրդի եղբայրները, Մառնիկի գիւղապետ Յակոբի միջոցաւ կը դիմեն Փափազեանին որ իրենց եղբոր հրացանն ու դաշոյնը վերադարձնէ իրենց, խոստանալով՝ ուտելիքով օգնել Փափազեանին եւ իր զինուորներուն» :

«Ատիկա բնաւ չի՛ նշանակեր թէ դուք տեսած էք քուրդը :

«Ոնդիրը, ուրեմն, քուրդը տեսնելու վրայ ՉԵ՛, ա՛յլ հրացանը Լեւոնի ձեռքէն առնելով՝ ՔՈՒՐԴԻՆ ՅԱՆՁՆԵԼՆ Է, եւ այդ մասին ձեր բացատրութիւնը տարտամ ու անիմաստ է» («Մեր Հինգերորդ Նամակը, 28 Յունուար 1955 թուակիր) :

Յաջորդ գլուխին մէջ, մենք պիտի ջանանք սպառիչ կերպով տալ պատանի հերոս Լեւոնի եւ Գալուստի հետ կապուած այս ողբերգութեան պատմութեան լրիւ ու կատարեալ պատկերը, միայն հոս կը փափաքէինք մեր յարգելի ընթերցողներու ամենալուրջ ուշադրութեան յանձնել յուշագիր Վահան Փափազեանի այն տգեղ ու անարդար որակումները, զոր ինք, այնքան առատաձեռնօրէն կը շուայէ մեր յուշագիր Տէր Եղիշէ Բահանայ Տէր Պարսամեանի հասցէին՝ յայտարարելով. —

«Տէր Եղիշէն ԼԱԻ ՆԿԱՐԱԳԻՐ ԶՈՒՆԵՑՈՂ ՄԵԿՆ ԷՐ» :

Առանձին գլուխով մը, հանգամանօրէն եւ մանրակրկիտ կերպով պիտի քննենք «նկարագիրը» Տէր Եղիշէ Բահանայ Տէր Պարսամեանի, զոր ճակատագիրը մեզի կառավարիչ եւ ուսուցիչ կարգած էր՝ մեր առաջին իսկ նախաքայլերուն, դպրոցական սեմէն ներս, մեզի սորվեցնելու համար Տարօնի մեծագոյն Սուրբին, Մեսրոպ Մաշտոցի կերտած Հայկական ղեղակերտ ու զեղահանու Այր, Բեն, Գիւր... :

Տէր Եղիշէ Բահանայ Տէր Պարսամեանի «նկարագիր»-ին քնննութեամբ, միաժամանակ, պիտի ջանանք երեւան բերել անոր յուշերուն հրատարակութեան հետ շաղկապուած խիստ անպատիւ կեղծարարութիւն մը՝ գործուած Ֆրեզնոյի դաշնակցական «Ասպարէզ» թերթի տպարանի մէջ, 1920 թուականին... (Այս հետաքրքրական պատմութեան մանրամասնութիւնները կարգալ «Տարօնապատում»-ի ներկայ ուսումնասիրութեան Մասն Երկրորդի ԻԲ. Գլուխին մէջ) :

* * *

[Ա.] Յուշագիր Վահան Փափազեան սխալ անուանելով մկրտած է նաեւ հայ եւ թուրք շատ մը ակնհաւոր անձեր, որոնց ճիշտ անունները կը գտնենք Տարօնցի յուշագիրներու պատումներուն մէջ: Այսպէս.

Մուշի թուրք զինուորական հրամանատարը, որուն իսկական անունն է Վէյսի Բէյ, Վահան Փափազեանի յուշերուն մէջ կը կոչուի Վասֆի Բէյ («Իմ Յուշերը», Բ., էջ 324) կամ Վասըֆ Բէյ (նոյն, էջք 338, 348) :

Առաքելոց Վանքի դէպքին ատեն սպաննուած ժանտարմայի սպայ Մեհմէտ Էֆէնտիմ՝ Փափազեանի կողմէ մկրտուած է Անվէտ Բէյ անունով (նոյն, էջ 342) :

Ձիարէթ գիւղի միւտիրը՝ Փափազեանի կողմէ կը կոչուի Ալի Բէգ (նոյն, էջ 331), մինչդեռ մեր լաւատեղեակ յուշագիր Միսակ Բղէեան կու տայ անոր շիտակ անունը, որ էր Բայրամ էֆէնտի, Մուշ քաղաքացի հայտնեաց թուրք մը («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 338, 339):

Հաւատորիկ գիւղի հոգեւոր հովիւ, Պատուելի Միհրան Գ. Յակոբեան, որու տան մէջ՝ գրեթէ մէկ ամիս հիւրասիրուած էր ինք, երբ Հաւատորիկ գիւղը կը բնակէր, Բիւրոյական յուշագրի կողմէ կը կոչուի «Պատուելի Գրիգոր» («Իմ Յուշերը», Բ., էջք 368, 369 եւ 385):

Նոյնիսկ, իր պաշտօնակից, Մուշի թուրք երեսփոխանի անունն ալ բարեփոխեր է: Այդ անիծեալ կէս թուրք — կէս հայ վիժուկը, որ Հոջա Իլիաս անունը կը կրէր, Վահան Փափազեանի կողմէ՝ պատուոյ բարձրացում կ'ունենայ (հաւանաբար, Տարօնի Հայութեան կոտորածներու ատեն՝ անոր ցոյց տուած «բարւօք ծառայութեանց» ? համար), եւ կ'ըլլայ «Հաջի Իլիաս» (նոյն, էջք 322, 323, 326, 359, 360, եւայլն):

Ալ չխօսինք Մուշի թուրք խապիլէներու անուններուն՝ իր խառնիճաղանչ ներկայացումի մասին:

* * *

[Բ.] Յուշագիր Վահան Փափազեանի այս հաւաստիքը իմանալէ ետք, խաւարամած գիշեր մը, երկարատեւ ճամբորդութիւն մը կատարեցինք զէպի Լեւոնի եւ Գալուստի ալժմեան երանաւէտ հանգըստարանը՝ անոնց սրտածմլիկ պատմութիւնը իրենցմէ անձամբ իմանալու համար, եւ միանգամայն ստուգելու թէ այդ պատմութիւնը Լեւոնն է պատմեր Վահան Փափազեանին՝ Գալուստի ներկայութեան, ինչպէս որ նամակագիր Վահան Փափազեան կը գրէր մեզի՝ իր Չորրորդ Նամակով, թէ՞ Գալուստն է պատմեր իրեն՝ «հիւանդագին հեւըով մը», ինչպէս Վահան Փափազեան կը գրէ իր յուշերուն մէջ («Իմ Յուշերը», Բ., էջ 392):

Լեւոնի բարեմոյն զէմքը մոայլեցաւ ու խոժոռեցաւ՝ Վահան Փափազեանի անունը արտասանելուս պէս, եւ կատաղի զայրոյթէն՝ բերանը չբացաւ այլեւս: Գալուստն էր որ նորէն, իր մեղմանուշ ժպիտով եւ հեզնոտ քմծիծաղով, ականջնուս փսփոսաց.—

«— Սիրելի՛ Աղան, ի՛նչ որ Վահան Փափազեան ըսած կամ գրած է մեր մասին, ամբողջովին սուտ է: Լեւոն կամ ես, բնաւ երբեք, այդ տեսակ յերկրածոյ պատմութիւն կամ հէքիաթ չենք պատմած իրեն»:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ .

ՆԵՐՈՍ ԼԵՒՈՆ ՂԱԶԻԿԵԱՆԻ ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Մեր ամենաջերմ փափաքն է, հոս, աւելի մանրամասն եւ ճշգրիտ տեղեկութիւններ տալ պատանի հերոս Լեւոն Ղազիկեանի եւ Գալուստ Պրսէեանի մասին, որոնց հետ՝ այս տողերը գրողը կողք կողքի նստած է միեւնոյն դրասեղաններու առջեւ, միեւնոյն դասարանի մէջ, կրթական միեւնոյն նուիրական յարկին տակ, ու միասին անցուցած՝ մեր պատանեկութեան անոյշ ու երազկոտ տարիները, Հայոց Միացեալ Ընկերութեան Մուշի Ներսէսեան Կեդրոնական Բարձրագոյն Նախակրթարանին աշակերտած ատեննիս, 1908–1912-ի դպրոցական շորս տարեշրջաններուն...:

Թէ՛ Լեւոն (Բրտի Թաղեցի — Բրուտներու Թաղ) եւ թէ՛ Գալուստ (Վերին Թաղեցի) խիստ ուշիմ եւ յառաջադէմ աշակերտներ էին՝ մեր դասարանի մէջ: Լեւոն, մեզի հետ, Կեդրոնական վարժարանը աւարտելէն յետոյ, 1912-ին, իր ուսումը շարունակեց թրքական Իսաախիէ երկրորդական վարժարանի մէջ եւ քաջահմուտ էր թուրքերէն լեզուին, եւ այդ պատճառով ալ, ի վերջոյ, քարտուղար եղած էր Ռուբէնին եւ Վահան Փափազեանին (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 346):

Գալուստն ալ, մեր Կեդրոնը (այսպէս կը կոչուէր Կեդրոնական վարժարանը՝ Մուշի մէջ) աւարտելէն յետոյ, ուսուցչութեան պաշտօնին հրաւիրուեցաւ մեր (Վերին) թաղի ծխական վարժարանը:

Վահան Փափազեան դովեստի եւ սքանչացումի խօսքեր ունի այս երկու սիրասուն պատանիներու հասցէին, ինչպէս տեսանք:

Մուշ քաղաքի հերոսական դիմադրութեան օրերուն, Յունիս 29–30-ին (1915), այս երկու տիպար հայրենասէր պատանիներն ալ իրենց բաժին պարտականութիւնը կատարած են լիուրի, դիրքէ դիրք սուրհանդակի պաշտօնով:

Երբ քաղաքի քաջակորով մարտիկները կը հարկադրուին տեղի տալու, շատ մը ուրիշներու հետ, այս երկու պատանիներն ալ խոյս կու տան լեռները — նախ՝ Հաւատորիկի եւ Քանայ լեռները, ապա՝ Սասուն, եւ Սասունի աննախընթաց ու անփառունակ փլու-

դումէն յետոյ ալ, դարձեալ կը վերադառնան Հաւատորիկի եւ Քա- նայ լեռները:

Այս վերադարձի ճամբուն վրայ է որ անոնք կը հանդիպին զինեալ հսկայ քուրդի մը՝ Դամբէլի եւ Պիրզինի Չորին մէջ, ուր տեղի կ'ունենայ Դաւիթի եւ Գողիաթի անհաւասար գօտեմարտը, ինչպէս գոյն կ'որակէ մեր Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բոգեան («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 440):

Մեր տրամադրութեան տակ գտնուող բոլոր յուշերն ալ, (Մի- սակ Բոգեան, Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, Երուանդ Շա- րաֆեան եւ Յակոբ Տէր Զաքարեան), զանազան տարբերակներով՝ անշուշտ, սրտնք թէ՛ բնոյթով եւ թէ՛ բովանդակութեամբ՝ մեծապէս կը տարբերին Վահան Փափաղեանի ներկայացուցած պատմութենէն, կու տան նկարագրութիւնը Լեւոնի զիւցազնական մենամարտին՝ հսկայ քուրդի մը հետ, որ ոտից ցգլուխ զինուած էր, իսկ պատանի Լեւոն՝ բոլորովին անզէն ու անպաշտպան:

ա. — Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան կը գրէ. —

«Ղաղկայ Աւետիսի Լեւոնը, տասնեութ տարեկան պատանին, առանձին կը հանդիպի զինուած ու յաղթանդամ քուրդի մը, որ անձ- նատուութիւն կ'առաջարկէ Լեւոնին: Այս վերջինը կ'ընդունի պայ- մանը եւ քովը կ'երթայ: Քուրդը միամիտ կեցած, կը սպասէ որ իր որսը փողոտելու հաճոյքի վայրկեանը երկարցնէ: Լեւոն, յանկար- ծակի ոստումով մը գետին կը փռէ քուրդը, բայց չկարենալով Ֆի- դիքապէս ընկճել այդ հսկան, կը գրկէ հրացանը, եւ ինքն ու քուրդը բաւական կը պայքարին, բայց չի կրնար հրացանը առնել անոր վրա- լին որ սպաննէ գոյն:

«Այդ պայքարի ընթացքին, յանկարծ վրայ կը հասնին Ակնցի Ստեփանի պատանի երկու զաւակները՝ Ներսէս եւ Ղազար, Լեւոնի դասընկերները:

«Ղազար, իր քով գտնուած փոքր դաշոյնով, կը վիրաւորէ քուրդի ձեռքերը, եւ Լեւոն կը յաջողի հրացանը առնել ձեռքէն ու սպաննել քուրդը, ու այսպէս, հրացանով զինուած, կ'երթան Քան» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջ 90):

բ. — Նոյն հերոսական գօտեմարտի դրուագին մէկ ուրիշ տար- բերակը մեղի կը ներկայացնէ Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բոգեանը. —

«Քաղաքի Բրտի թաղեցի Ղաղիկեան Աւետիս՝ 16 տարեկան պատանի մը ունէր, Լեւոն անունով, որ Միացեալ Ընկերութեան Վարժարանի Չորրորդ դասարանի աշակերտներէն ամենէն ուշիմն ու աշխատասէրներէն էր: Քաղաքի կռիւի միջոցին, այդ պատանին, իր

սուրհանդակի զերին մէջ, անվահեր ընթացք մը ցոյց տալուն, բոլոր- րիս հրացաններն առարկան դարձած էր:

«Բարերախտաբար, ինքն ալ աղատած եւ մեղ հետ՝ լեռ եկած էր, բոլորէն ուշ: Իրեն հասակակից ընկերոջ մը հետ, այդ օր, Հա- տորիկի լեռնէն զէպի Քան լեռը անցած պահուն, Արաղ զիւղի գետածորին մէջ, Դամբէլ զիւղացի յաղթանդամ, հուժկու, զինեալ քուրդ մը՝ իր հրացանը տղայոց ուղղելով, կ'աղդարարէ որ տեղեր- նին կենան: Տղաք, ջուրէն դուրս ցատկելով, ուղղակի քուրդին կող- մը կ'երթան: Քուրդը կը կարծէ որ տղաք անձնատուր ըլլալու կու դան, եւ լաւ որս մը ձեռք ձգած ըլլալու գոհունակութեամբ, կը սկսի զուարճանալ:

«Նախ Լեւոնին կ'ըսէ. —

«— Քովդ ինչքան դրամ որ ունիս, յանձնէ՛:

«Լեւոն կը պատասխանէ որ դրամ չունին:

«Քուրդը իսկոյն հրացանը անոր ուղղելով՝ կ'ուզէ սպաննել, եւ հող է որ կը սկսի Դաւիթի եւ Գողիաթի մենամարտը:

«Լեւոն, առիծի նման, իր պղտիկ ու մատղաչ հասակով, կը յարձակի այդ Գողիաթի վրայ: Իր հետ եղող միւս ընկերը, անշարժ, իր տեղը կը սպասէ: Դաւիթ եւ Գողիաթ, կէս ժամու շափ, իրարու հետ գօտեմարտելով, վերջապէս Լեւոն գետին կը տապալէ քուրդը եւ անոր վրայի դաշոյնը քաշելով՝ մէկ քանի հարուածներ կ'իջեցնէ քուրդի կուրծքին եւ կը սպաննէ:

«Այդ պահուն միայն, միւս ընկերը մօտենալով անոնց, գետ- նէն կը վերցնէ քուրդի հրացանը: Լեւոն, քուրդի մէջքէն քակելով պատռոնդաշը, իր մէջքին կը կապէ եւ լեռնէն վեր բարձրանալով, դէպի մեղ կու գան:

«Հեռուէն կը դիտենք որ երկու պատանիներու մէջ վէճ մը սկսեր է եւ զիրար կը հարուածեն: Կը փութանք հոն եւ կը տեսնենք որ Լեւոնն է: Վէճի պատճառը կը հարցնենք: Լեւոն կը սկսի պատ- մել ու պնդել՝

«— Քանի որ ես եմ սատկեցուցեր քուրդը, օրէնքով՝ դէնքը ինձի կը պատկանի:

«Բայց ընկերը կը մերժէ յանձնել հրացանը: Վէճը ատոր հա- մար էր:

«Միւս ընկերն ալ՝ Լեւոնի նման պատմեց, միայն կը պնդէր որ դէնքը ինքն է վերցուցեր գետնէն, ինչո՞ւ պիտի տար անոր:

«Բոլոր ներկայ եղողները, զնահատելով Լեւոնի քաջութիւնը, դէնքը կ'առնեն ընկերոջ ձեռքէն եւ կը յանձնեն Լեւոնին» («Հարա- ղատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 440-441):

գ. — Այս զիւցազնական գօտեմարտի՝ հաւանաբար ամենէն

հաւաստի եւ լրիւ պատուժը կու տայ Լեւոնին եւ Գալուստին ընկերակցող եւ միշտ՝ Վահան Փափազեանի խումբին հետ եղող, ամենէն փոքրատի յուշագիրը, Երուանդ Շարաֆեան, 14 տարեկան, որ հետեւեալ կերպով կը ներկայացնէ այդ դիւցազնամարտի իր տարբերակը.—

«Անձրեւոտ օր մը, անտառներու խորքն էինք: Նշմարեցինք որ երկու տղաներ մեր կողմը կու գային: Երբ բաւական մօտեցան, ճանչցանք երկուքն ալ — Լեւոն Ղազիկեանը եւ Գալուստ Պրսէեանը: Լեւոն, արեան մէջ կորած, հրացան եւ դաշոյն մը կը կրէր, — Թրքական մաուզէր մըն էր հրացանը:

«Լեւոն Ղազիկեան եւ Գալուստ Պրսէեան, բնիկ քաղաքացի, Միացեալ Ընկերութեան Մուշի Բարձրագոյն Նախակրթարանի շրջանաւարտներէն էին: Լեւոն աւարտած էր նաեւ տաճկական Իստաթիէ Բարձրագոյն Վարժարանը, եւ Փափազեանի ու Ռուբէնի գրադիրն էր՝ Թուրքերէն լեզուի:

«Լեւոն եւ Գալուստ անբաժան ընկերներ էին: Դամբէլի եւ Պիրզիւի Զորին մէջ կ'ենթարկուին քուրդերու յարձակումին եւ տարբեր ուղղութեամբ փախուստ կու տան:

«Քանի մը ժամ ետք, երբ քուրդերը կը մեկնին, Լեւոն եւ Գալուստ՝ իրենց նախապէս որոշած վայրը կը վերադառնան՝ զիրար գտնելու համար:

«Լեւոն, որոշուած այդ վայրին մէջ մարդ մը կը նշմարէ հեռուէն եւ կարծելով թէ Գալուստն է, կը պոռայ բարձրաձայն.

«— Գալո՛ւստ, Գալո՛ւստ:

«Այդ շրջանի քուրդերը լաւ հայերէն կը խօսէին, եւ հոն կեցող քուրդը՝ հայերէն կը պատասխանէ.

«— Տղա՛յ Գալո՛ւստ, ե՛ս եմ, եկո՛ւր, եկո՛ւր:

«Ու Լեւոն կարծելով թէ Գալուստն է պատասխանողը, կը յառաջանայ, եւ բաւական մօտենալէն յետոյ միայն կը տեսնէ որ զինուած հսկայ քուրդ մըն է եղեր «Գալո՛ւստ, Գալո՛ւստ» պոռացողը: Եւ այնքան մօտեցած էր անոր որ այլեւս հնար չկար փախչելու:

«Լեւոն, փոքր մարմնով, սակայն զօրաւոր մկաններով եւ քաջայանդուզն տղայ մըն էր, եւ քաղաքին մէջ չկար իրեն տարեկից մը որ կարենար գօտեմարտիլ իրեն հետ:

«Սակայն, հո՛ս, Լեւոն անզէն էր, իսկ քուրդը՝ զինուած:

«Լեւոն թոյլ կու տայ որ քուրդը բաւական մը մօտենայ իրեն եւ յանկարծական ոստումով մը՝ յարձակում կը գործէ անոր վրայ եւ դետին կը տապալէ զայն, անոր դաշոյնով՝ գլուխը կը կտրէ, եւ հրացանն ու դաշոյնը կ'առնէ վրայէն:

«Այդ ատեն, Գալուստը վրան կը հասնի, եւ երկուքը միասին եկան մեր քով» («Երուանդ Շարաֆեան Կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 46):

* * *

Վահան Փափազեանի ոչ-պատմական եւ յերիւրածոյ պատու-մէն աւելի, մեր վերջին երեք յուշագիրներու տարբերակները — կարծենք թէ — աւելի մօտ են իրականութեան, եւ աւելի որոշ ու յստակ գաղափար մը կազմել կու տան այս արիւնոտ դրուագին ու ասոր հետ կապուած ուրիշ նոյնքան տխուր պատահարներու մասին (Լեւոնի ձեռքէն հրացանը խլել եւ քուրդերուն յանձնել, ինչպէս նաեւ՝ Փափազեանի, Լորոյի Տիգրանի եւ Արշակ Պոլէեանի ըրած սպառնալիքը), որոնց պատճառով ալ, մեր այս երեք պատանիները, — Լեւոն Ղազիկեան, Գալուստ Պրսէեան եւ Երուանդ Շարաֆեան, — հարկադրուեցան բաժնուելու Վահան Փափազեանի սպառազէն խումբէն, վերոյիշեալ երեք անձերու ատրճանակներու սպառնալիքին տակ...:



Գ Լ ՈՒ Ւ Ժ Ե .

ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍ ԼԵՒՈՆԻ ԵՒ ԳԱԼՈՒՍՏԻ ՍՐՏԱՃՄԼԻԿ ՎԱԽՃԱՆԸ

Խիստ հետաքրքրական եւ միանգամայն յոյժ սրտածմլիկ է տխուր պատմութիւնը այս երկու սիրասուն պատանիներու ողբերգական վախճանին: Սրտի անհուն թախիժով եւ հողեկան դալարումով է որ այս տխուր դրուազը կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

1915 Սեպտեմբեր ամսոյ սկիզբը, Ռուբէն, որ Սասունի ողբերգական դոյամարտի ամենատաղնապալի վայրկեանին, անակնկալօրէն, անյայտացեր էր կռիւի թատերարեմէն՝ իր 10-15 Սասունցի մանկլաւիկներու հետ եւ ապաստաներ Սուրբ Յովհաննէս Վանքի անտառները, գաղտնի բանակցելէ յետոյ Բիւրոյական իր ընկերոջ հետ, եկած էր Քանայ լեռները, ուր այդ դաւակից երկու «պարոն»ները միասնաբար կը ծրագրեն կովկաս խոյս տալու իրենց կարգադրութիւններն ու պատրաստութիւնները՝ գաղտագողի, եւ վերջապէս Սեպտեմբեր ամսոյ վեցին(1) կծիկնին կը դնեն դէպի ուս-թրքական ռազմագիծը, դէպի փրկութիւն, դէպի ազատութիւն, իրենց ետեւ՝ անտէր ու անգլուխ քողբելով Տարօնի եւ Սասնոյ Հայութեան տարաբախտ բեկորները, եւ ուրանալով իրենց հանդիսաւոր յանձնառութիւններն ու պարտականութիւնները՝ այս աղէտահար ժողովրդական զանգուածներու տառապակոծ մնացորդացին հանդէպ...:

«Պարոն»ներու այս դասալիք խումբին անփառունակ փախուստէն ետք, Լեւոն, Գալուստ եւ Երուանդ Շարաֆեան, դեռ ատեն մը եւս, կը շարունակեն թափառիլ Հաւատորիկի եւ Քանայ լեռներու մէջ, ուր կեանքը այլեւս սկսած էր անհանդուրժելի դառնալ՝ ուտելիքի բացարձակ չզոյւթեան, պատսպարումի օրըստօրէ աճող դրժուարութեանց (անտառներու ծառերն ու մացառները տերեւաթափ

ըլլալուն պատճառով), կծու ցուրտին եւ մանաւանդ՝ «պարոն»ներու սպառազէն խումբին դասալքումէն յետոյ, թուրք եւ քուրդ չեթէներու՝ ա'լ աւելի անվախ ու սանձարձակ ասպատակութիւններու եւ ի դործ դրած զանդուածային ահաբեկի նախճիրներու պատճառով...:

Հո'ս ալ, նորէն, մեր յուշագիրները կը նկարագրեն, — տարբերակներով անշուշտ, — խիզախ Լեւոնի եւ Գալուստի թարմատի, սակայն խիստ տխուր կեանքերուն սրտածմլիկ վերջալոյսը...:

Շատ շատերու հետ, Լեւոնը եւ Գալուստն ալ կը հարկադրուին վերադառնալու քաղաք, ուր Լեւոն կը յուսար ապաստան դտնել իր մանկութեան ընկեր ու բարեկամ Հաջի Ալոնց Օսմանի տան մէջ:

ա.— Յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան կը գրէ —

«Հայկակ եւ Լեւոն, Օսմանի տան մէջ երկու օր կը մնան, վերջը կը մատնուին Սէյարիներու հրամանատար Մուրադ Բէգին, որ մարդ կը զրկէ եւ այդ երկուքը իր վրանը տանիլ կու տայ:

«Հայկակի մասին հրաման կ'ընէ որ տարուի ոստիկանատուն, ուր փոխ նիազին կ'ազատէ ու կը տանէ իր տունը, յետոյ Միսիոնարուհի Շուէսթըր Բոտիլի եւ էլմայի միջոցաւ կ'ազատի սպաննուելէ: Իսկ Լեւոն, որ յանկուցիչ եւ առնացի զեղեցկութեան տէր պատանի մըն էր, կը թրթռացնէ Մուրադ Բէգի խենչը զղացումները, եւ այդ զաղիր սողունը կ'ուզէ բռնաբարել հայ պատանին, իր վրանին մէջ:

«Լեւոն, բոլորովին զուրկ ինքնապաշտպանութեան միջոցներէ, եւ հակառակ որ շրջապատուած է մէկ-երկու հազար արիւնարբու սէյարիներէ, իր քով գտնուած փոքրիկ զմելիով կը յարձակի Մուրադ Բէգի վրայ եւ քանի մը տեղերէ կը վիրաւորէ զայն: Ասոր վրայ, Մուրադ, սարսափահար, կը սկսի պոռալ եւ ոռնալ: Անմիջապէս սէյարիները վրան կը մտնեն եւ կը յարձակին դիւցազն Լեւոնի վրայ եւ կտոր կտոր կ'ընեն հէզ պատանին» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը», էջ 128):

բ.— Ուրիշ տարբերակ ունի պատանի յուշագիր Երուանդ Շարաֆեան, որ արդէն, Լեւոնէն ու Գալուստէն առաջ, միայնակ վերադարձեր էր քաղաք ու իր հօր բարեկամ թուրքի մը տան մէջ ապաստան դտեր:

«Օր մը լսեցինք որ Լեւոն եւ Գալուստ գաղտագողի քաղաքն են եկեր Քանայ լեռներէն եւ փլած տան մը աւերակներու մէջ պահուրտած: Հաջի Ալոնց Օսմանը միայն գիտէր անոնց թաքստոցի տեղը եւ գաղտնորէն ուտելիք կը տանէր անոնց:

«Օսման՝ Լեւոնի մտերիմ բարեկամն էր. հայոց դպրոցը կը յաճախէր եւ Հայերէնի դաս կ'առնէր Պարոն Պողոսէն, Սուրբ Մա-

(1) Կարօ Սասունիի քսածիմ համաձայն, «պարոն»ներու այս խումբը իր փախուստի մամբան բռնած է «Սեպտեմբեր 8-ին» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 997):

րինէ թաղի վարժարանին մէջ: Պատերազմէն առաջ, Լեւոն եւ Օսման միասին զացեր էին Կովկաս, եւ Թիֆլիս, Երեւան եւ այլ տեղեր պըտըտելէ յետոյ, վերադարձեր էին Մուշ:

«Քանի մը օր յետոյ, իմացանք որ Գալուստ հիւանդացեր ու մեռեր է, եւ նոյն տեղն ալ՝ թաղուեր:



ՏԵՐ ԵՂԻՇԷ ՔԷՆՅ. ՏԵՐ ՊԱՐՍԱՄԵԱՆ ԵՒ ԵՐՈՒԱՆԻ ՇԱՐԱՖԵԱՆ

«Օսման միջոցներ կը խորհի՝ Լեւոնը ազատելու համար. կը ջանայ զայն իբրեւ արհեստաւոր արձանագրել տալ: Ժանտարմանբու հրամանատարը, Հագարապետ Մուրադ Բէգ, մօտիկ եւ մտերմիկ ծանօթութիւն ունէր Օսմանի հետ, որ կը բարեխօսէ Լեւոնի համար:

«Մուրադ Բէգ կը խոստանայ Լեւոնը իբրեւ արհեստաւոր արձանագրել տալ եւ ազատել զայն ոստիկանական հետապնդումներէ:

«Օսման այս բոլորը կը պատմէ Լեւոնին, սակայն Լեւոն հաւատք չընծայելով Մուրադ Բէգի խոստումներուն, կ'ըսէ Օսմանին.

«— Մէկ պայմանով կու գամ քեզ հետ. դաշոյնդ տո՛ւր ինձի.

դիտեմ որ հրամանատարը շատ վաւաշտ եւ անբարոյական մարդ մըն է»:

«Օսման կը հաւանի եւ իր դաշոյնը կը յանձնէ Լեւոնին, եւ զլշեր ատեն՝ անոնք միասին կ'երթան Մուրադ Բէգի բնակարանը:

«Հրամանատարը ուրախութեամբ կ'ընդունի զանոնք: Օսմանի հետ կարճ խօսակցութենէ մը յետոյ, անոր կ'առաջարկէ որ մեկնի, Լեւոնն ալ վերջը պիտի զրկէ՝ ըսելով:

«Օսման անոր կը յիշեցնէ թէ ինք նախապէս խոստացած էր Լեւոնին որ երկուքը միասին պիտի վերադառնային: Մուրադ Բէգ կը հրամայէ իր սպասաւոր ժանտարմային որ Օսմանը դուրս հանէ տունէն, ու կը սկսի խօսակցիլ Լեւոնի հետ, եւ կամաց կամաց՝ իր ձեռքերը անոր այտերուն կը տանի, կը սկսի շոյել եւ կը փորձէ համբուրել:

«Լեւոն, բնականաբար, կռահելով վաւաշտ թուրքին մտադրութիւնը, դաշոյնը կը քաշէ եւ կը խրէ անոր կուրծքը: Մուրադ Բէգ դետին կը տապալի ոռնալով:

«Լեւոն կը շարունակէ քանի մը հարուածներ եւս իջեցնել անբարոյիկ թուրքին, որու ոռնոցի ձայներէն՝ պահակը ներս կը խուժէ: Լեւոն կը յարձակի անոր վրայ ալ եւ կը ջանայ հրացանը առնել անոր ձեռքէն: Այդ պահուն, ուրիշ ժանտարմա մը օգնութեան կը հասնի եւ մովղէրի երկու հարուածներով՝ վերջ կը դնէ պատուախնդիր Լեւոնի կեանքին:

«Մուրադ Բէգ ալ, երկու օր ետք, կը սատկի՝ իր ստացած վէրքերէն:

«Այսպիսի ողբալի վախճան ունեցան իմ խեղճ ընկերներս՝ Գալուստ եւ Լեւոն, որոնք այնքան հողեւին օպտակար եղան Վահան Փափագեանին՝ անոր երկարատեւ հիւանդութեան ընթացքին, Մուշ քաղաքի մէջ, ինչպէս նաեւ Քանայ յեռները, եւ սակայն, վերջին վայրկեանին ալ՝ անդթօրէն լքուեցան անկէ...» («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռներ», էջք 63-64):

դ.— Նոյնպիսի սքանչացումով, նոյն տեսակ գովեստի խօսքեր կը շռայլէ մեր աւագ յուշագիր Միսակ Բդէեան եւս՝ պատանի Լեւոնի պատուախնդիր այս արարքը ներփողելով նկարագրած ատեն.—

«Սքանչելի գեղեցկադէմ պատանի մըն էր (Լեւոն): Բերդակայ լեռներու բարձունքներու վրայ կառուցուած դիրքերու մէջ հսկողութիւն կ'ընէր միշտ, առաջարկելով որ ամենավտանգաւոր դիրքք իրեն յանձնեն: Տղան ցուրտէն հիւանդանալով, Թիֆլիսի կը բռնուի. ի վերջոյ կ'ապաքինի:

«Փափագեանի եւ Ռուբէնի՝ Ռուսաստան անցած պահուն, Լե-



ՍԱՐԳԻՍ ԵՒ ՄԻՍԱԿ ԲԴԵՆԱՆ ԵՂԱՅՐՆԵՐԸ
ԿԵԴՐՈՆ ՆՍՏՈՂԸ՝ ՄԻՍԱԿՆ Է, ԱԶ ԿՈՂՄԸ՝ ՍԱՐԳԻՍԸ

ւոն կը խնդրէ որ զինք ալ առնեն հետերնին: Անոր այս խնդրանքը կը մերժուի մեր «պարոն»ներու կողմէ՝ այն առարկութեամբ թէ՝

«— Դու պատանի ես, նայէ՛ որ մեզ հետ եղողները, բոլորն ալ, 22-35 տարեկան երիտասարդներ են»:

«Տղան թէեւ շատ կը թախանձէ, բայց ի վերջոյ՝ քանի մը ապտակ ալ կ'ուտէ: Ստիպուած՝ կը ձգէ կը հեռանայ»:

«Ժամանակ մըն ալ՝ լեռները ման գալէն՝ յետոյ, զիչեր մը քաղաք կ'երթայ. փոլիս Հաքիմ Էֆէնտին կը նշմարէ զայն եւ վրան դուրսդուրալով, կը տանի հայ դերձակներու քով կը տեղաւորէ, որպէսզի այդ ձեւով՝ իրրեւ արհեստաւոր, ազատի:

«Մեր Միացեալ Ընկերութեան վարժարանի մէջ բնակող սէ-

յարի հազարապետ Մուրադ Բէգը, անգամ մը, Լեւոնը տեսնելով շուկայի մէջ, անոր հայ ըլլալը իմանալով եւ անոր գեղեցկութենէն հրապուրուելով, այդ վաւաչոտ հրէշը կը փափաքի իր քով առնել տղան՝ հարցնելով թէ թուրքերէն զրեւ-կարգալ գիտե՞ր: «Այո՛», կը պատասխանէ: «Ուրեմն, քեզ իրրեւ զրադիր, քոյս առնեմ» ըսելով, Լեւոնը իր քով կ'առնէ:

«Մուրադ Բէգ՝ շնացող թուրքերէն ամենաստորին տեսակէն էր: Արդէն ջարդերու միջոցին, քանի՛ քանի՛ հայ հարսներ եւ աղջիկներ իր քով առած, օրն ի րուն՝ անոնց հետ դուարձանալով, իր անասնական կիրքին զոհացում տալէն ետք, իր ստորադաս ժանտարմաներուն կը յանձնէր այդ անպաշտպան կակները, եւ անոնք ալ, իրենց կարգին, իրենց վայրագ անասնական կիրքը զոհացնելէն յետոյ, կը դնուակահարէին այդ անմեղ հրեշտակները...»:

«Լեւոնը երկու-երեք օր լաւ անուցանելէն յետոյ, երեկոյ մը, Մուրադ Բէգ իր սենեակը կը կանչէ զայն եւ կը հրամայէ որ իր անկողնի մէջ միասին անցընեն: Տղան կը խնդրէ, կ'աղաչէ որ հեռու մնայ այդպիսի վարուելակերպէ: Այդ ատեն, զաղանը կը բարկանայ տղայի վրայ: Երբ Լեւոն կը տեսնէ որ այլևս անկարելի է ընդդիմանալ եւ իր անբիծ մարմինը պիտի սրբապղծուի այդ հրէշին կողմէ, իսկոյն սենեակի մէկ անկիւնը դրուած Մուրադ Բէգի դաշոյնը վերցնելով՝ կը խոյանայ անոր վրայ եւ մէկ քանի տեղերէ կը վիրաւորէ զաղանը, որու օգնութեան աղաղակներու վրայ, ոստիկան զինուորները վարէն օգնութեան կը փութան, եւ իրենց հրամանատարը արեան ճապաղիքներու մէջ տեսնելով, կը հասկնան իրողութիւնը, եւ Լեւոնը բռնելով՝ վար կը տանին, ուր իսկոյն հրացանի բռնելով՝ կը նահատակեն անբիծ պատանին, անշուշտ ի հիճուկս Փափաղեանին, որ կ'ընդդիմանայ եղբի գայն ալ իրենց հետ առնելով՝ Ռուսաստան անցնելուն:

«Հանգի՛ստ քու ոսկորներուն, ո՛վ քու ցեղիդ բարոյականութեան պարծանք, հայ պատանի» («Հարապատ Պատմութիւն Տարօնոյ», էջը 441-442) [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.]:

Յուշադիր Միսակ Բոգեանի այս վերջին յայտնութիւնը թէ Փափաղեան «կ'ընդդիմանայ եղբր» Լեւոնն ալ «իրենց հետ առնելով՝ Ռուսաստան անցնելուն», կը հաստատէ Լեւոնի՝ ընկեր յուշադիր Երուանդ Շարաֆեանի պատմածները, որոնց ծանօթացանք արդէն՝ նախորդ էջերուն մէջ, ինչպէս նաեւ կը հերքէ Վահան Փափաղեանի այն յայտարարութիւնը, զոր մեզի բրած էր իր Չորրորդ Նամակով (Յ Յունուար 1955 թուակիր), ուր կ'ըսէր.—

«Լեւոնի եւ Գալուստի՝ մեզի ընկերացնելու իմ շատ յամառ ճիղերու մասին, յուշերուս մէջ բացատրուած է»:

Հետեւեալն է իր յուշերու Բ. Հատորի 397-րդ էջի վրայ տուած բացատրութիւնը.—

«Երբ ամէն ինչ պատրաստ էր եւ կը սպասէինք որ արեւը (մար) մտնար, յայտնուեցան Լեւոնը եւ Գալուստը, կը խնդրէին որ զիրենք ալ առնենք (Հետերնին) :

«Մինչեւ այսօր ալ, անհասկնալի կը մնայ ինձի թէ ինչո՞ւ Մշեցիները եւ Ռուբէնը հակառակեցան այդ երկու թշուառ պատանիներուն մեզի ընկերակցելու : Հակառակ իմ պնդումիս եւ սպառնալիքներուս, անկարելի եղաւ համոզել : Լեւոնը եւ Գալուստը նկատեցին այդ չկամութիւնը եւ մահուան տիրութեամբ, աննկարագրելի դառնութեամբ ու գարշանքով, այդ երկու թանկագին կորիւնները թողուցին մեզի ու անհետացան ժայռերուն մէջ... : Մինչեւ այսօր, դեռ անոնք աչքիս առջեւն են՝ խայթոզ խղճի պէս, եւ ԵՍ ԱՆՆԵՐՈՂ...» [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.]:

Յուշագիր Վահան Փափազեանի այս վերջին պարբերութեան իւրաքանչիւր բառը կեղծիք կը բուրէ եւ տրամագծօրէն հակառակ է իրականութեան եւ ճշմարտութեան : Ցաւալի իրողութիւնը ա՛յն է եղած, դժբախտաբար, որ Ռուբէնի եւ Վահան Փափազեանի փոքրաթիւ խումբին շուրջն ու բոլորը դեզերող բազմաթիւ երիտասարդներ չկարողացան, աւելի ճիշտ կ'ըլլայ ըսել՝ ԶՅԱԶՈՂԵՑԱՆ իրենց համդէպ շարժիլ տալ «պարոն»ներու գուրթն ու կարեկցութիւնը՝ անոնց այնքան ԳԱՐԱՑԱԾ ՍՐՏԵՐՈՒՆ ՄԷՋ :

Այդ բարեմիտ, բայց միանգամայն շատ միամիտ երիտասարդները փորձեր կատարեր են գոնէ կաշառքով եւ շոգոմելով ՈՂՈՔԵՆՆԻ այդ անսիրտ, անգութ եւ անողորմ «պարոն»ները՝ զանոնք հաճոյացնելու եւ անոնց համակրութիւնը շահելու իրրեւ ամենավերջին միջոց :

Այդ մասին, հետեւեալ տողերը կը կարդանք Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեանի յուշերուն մէջ, առնուած՝ Ռուբէն — Փափազեան խումբին ընկերանալով Կովկաս անցնող, բնիկ Մուշի Զորու թաղեցի Աշոտ Փոթիկեանի պատմածներէն.—

«Ռուբէն, Մուրբ Յովհաննէս Վանքի անտառի իր թաքստոցէն, իր ընկերներով եկած էր Քան լեռը եւ միացած Վահան Փափազեանի խումբին, եւ Ռուսերու գալէն այլեւս յոյսերնին կտրած, կ'որոշէն անցնիլ Կովկաս : Եւ ըստ այնմ ալ, իրենց հետ մեկնիլ ուզող երիտասարդներու մէջ մրցում մը սկսած էր եւ յաճախ բողոքի ձայներ կը լսուէին : Շատ մը երիտասարդներ, զիչեր ատեն, այդիներ կ'երթային, թուրքերու հնձաններէն հաց կը գողնային եւ խաղող կը բերէին Փափազեանին եւ Ռուբէնին, այն յայտով որ անոնք՝ Կովկաս մեկնած ատեննին, զիրենք ալ առնէին հետերնին, քանի որ ատանկ խոստում տուած էին :

«... Լեւոն Ղազիկեան, հրացանը ձեռին, ինքզինք՝ գացողներու առաջինը կը հաշուէր. նաեւ Ալեքսան Մովսէսեան [Ա.], որ քաղաքին մէջ Փափազեանին քսան լիրա տալէն զկնի, լեռն ալ օրերով՝ իր քսակէն կ'ապրեցնէր Փափազեանը՝ ԱՅՆ ՅՈՅՍՈՎ որ մեկնած միջոցին, անոր պիտի ընկերանար՝ իրրեւ անկէ սիրուած դէմք, բայց վերջին պահուն, այդ յիշուած երիտասարդներէն եւ Ո՛ջ ՄԷԿԸ առին հետերնին :

«Երբ իրենց հոգեհատորները լքուելու մասին դիտողութիւն կ'ընեն տղաք, Փափազեան կը պատասխանէ.—

«— Ուզողը կրնայ մնալ եւ զանոնք պաշտպանել : Մենք փոքր թիւով կ'ուզենք անցնիլ որ քշնամիէն չնշմարտիմք» :

«Ըստ Աշոտի պատմածին, երբ իր (Աշոտի) մասին ալ դժկամակութիւն կը յայտնուի, այն ատեն Արօ Շահրիկեան, բարկանալով, հրացանը կ'ուղղէ Փափազեանին, ըսելով՝

«— Այլեւս չափը կ'անցնէք» :

«Ռուբէն կը միջամտէ եւ Աշոտն ալ կ'ընկերանայ իրենց» («Հարգատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 479—480) [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.]:

Այլեւս պէտք կա՞ որ եւէ բացատրութեան :

* * *

[Ա.] Ալեքսան Մովսէսեան՝ Մուշի վերին թաղեցի հարուստ Մովսէսեան ընտանիքի շառաւիղներէն էր, թոռը Արօ Մոսոյին, որու մասին Ռուբէն ունի չնաչխարհիկ չարախօսութիւններ՝ իր «Յիշատակներուն» մէջ, որպիսին է, օրինակ, հետեւեալ շնական արտայայտութիւնը.—

«Կառնենու Մկրտիչը, որ ամբողջ կեանքում Դաշնակցութեան շրջիկն էր եղած եւ կեանքը բանտերում մաշած, այժմ նստած էր Արօ Մոսոյի կողքին, որին կը հետաքրքրէին միայն արշիւր, չիթը, ոսկին» («Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Զ., էջ 47), այսինքն, ըսել կ'ուզէ թէ Տարօնցի ամբասիր յեղափոխական այս մաքրամաքուր անձնաւորութիւնը, Կառնենցի Մկրտիչը, ինքզինք անպատուած կը զգար՝ նստած ըլլալով Մուշ քաղաքացի մեծահարուստ վաճառական Արօ Մոսոյի կողքին, Ազգային Առաջնորդարանի ժողովներու ընթացքին :

Ալեքսան Մովսէսեան, որ Թեհերան (Պարսկաստան) կը բնակի հիմա, Մուշ քաղաքի մէջ, Վահան Փափազեանին քսան ոսկի տալէն դատ, Քանայ եւ Հաւատորկի լեռներու մէջ ալ, ամիսներով հայ-

բայքած է անոր ապրուստը՝ այն միամիտ ակնկալութեամբ եւ սին յոյսով որ իր բարերարեալը, Վահան Փափաղեան, ԱՆՊԱՏՃԱՌ գինեգետն ալիտի աննէր իր խումբին հետ՝ Կովկաս փախուստ տուած ժամանակ: Դժբախտաբար, սակայն, Բիրոյակեան Երեսփոխանը մինչեւ վերջին րոպէն՝ զայն նիւթապէս շահագործելէն ետք, մեկնումի պահուն կը լքէ իր բարերարն ալ՝ իր սեւ ճակատագրին, ինչպէս որ լքած էր իրեն այնքան օգտակար հանդիսացող հերոս Լեւոն եւ Գալուստ պատանիները...



ԱԼԵՔՍԱՆ ՄՈՎՍԵՍԵԱՆ

Ըստ երևոյթին, Վահան Փափաղեանի այս սպերախտ պարտագանցութիւնը պարտկելու փութաջանութեամբ, «պատմագիր» Կարո Սասունի, իր յօրինած «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» հաստատոր երկասիրութեան մէջ, «հաւասարակշիռ տրամաբանութեամբ»(?) մը («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 887), կը փորձէ հերոսացնել Ալեքսան Մովսէսեանը՝ զէպի Կովկաս ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ փախուստ վերագրելով անոր, մէկ ամիսէն աւելի պակաս ժամանակամիջոցի ընթացքին: Առաջին անգամ, Ռուբէն-Փափաղեան խումբին հետ՝ «Ալեքսան Մովսէսեան» անոր բուն անունով՝ Սեպտեմբեր 6-ին (թէեւ ինք՝ 8 կը զնէ այս թուականը), իսկ երկրորդ անգամ ալ, խելի չհասնելիք հնարագիտութեամբ մը, յուշագիր Տէր

Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի 15 հոգինոց խումբին հետ, Հոկտեմբեր 1-ին, «Արոյենց էլօ» անունին տակ (նոյն, անդ):

Ինչո՞ւ համար է, սակայն, որ այս «պատմագիրը», Կարո Սասունի կոչեցեալ, այս աստիճան ուշադրութեան եւ հոգածութեան առարկայ կը դարձնէ անձ մը, որ սոսկական վաճառական ազգային մըն էր Մուշի մէջ, միշտ զբաղած դեղին ոսկիները կշռելու եւ իրարու վրայ դիզելու հոգեպարար գործով միայն, ո՛չ աւելի, ո՛չ պակաս. «որին կը հետաքրքրէին միայն արշինը, չիթը, ոսկին», փոխ աննելով Ռուբէնի այս գունդեղ բացատրութիւնը, զոր այդ «պարոնը» գործածած է բնորոշելու համար Ալեքսանի մեծ-հայրը, Արօ Մասն:

Վահան Փափաղեան ալ, «Յիշատակի Տողեր» կը ձօնէ («Իմ Յուշերը», Բ., էջ 273) Մովսէսեան ընտանիքին, զոր երբեք տեսած ու ճանչցած չէր, եւ որու մասին, հաւանաբար, շատ աննպաստ զբանութիւններ լսած ըլլալու էր իր լուսադարիկ, շարախօս Ռուբէնէն:

Կարո Սասունի՝ Ալեքսան Մովսէսեանին կը վերագրէ գործեր եւ դերեր, որոնց մէջ այդ ազգայինը կը ներկայացուի իրբեւ Մուշ քաղաքի ականաւոր ազգայիններէն մին, եւ որոնցմէ, սակայն, մրդոններով հետու կը պահէր ինքզինք՝ Ալեքսան Մովսէսեան:

Ինչո՞ւ համար է, — նորէն կը կրկնենք մեր հարցումը, — որ այս Սասունցի «պատմագիրը», այնքան մեծ կարեւորութիւն կու տայ եւ դերեր կը վերագրէ Ալեքսան Մովսէսեանի մը, որ Դաշնակ իսկ ՁԷ՛Ր եւ ՁԷ՛՝ մինչեւ հիմա ալ:

Բացորոշ կերպով յայտարարենք որ Կարո Սասունիի այս չողորթական զրուատիքները, — ո՛րքան կեղծ, այնքան ալ՝ նենգաւոր, — արդիւնք են յետին միտքերու եւ նենգաժէտ շարժառիթներու:

Տարօնցի աւազ յուշագիր Միսակ Բղէեանի յուշերէն՝ մենք ծանօթ ենք այն խիստ կարեւոր դերին, զոր կատարած է Տարօնցի Արմաշական մտաւորական Յակոբ Տէր Զաքարեան, ատենապետը 1915-ի ահաւոր ժամանակաշրջանի Տարօնի Ազգային Առաջնորդարանի ամենավերջին Քաղաքական Ժողովին, Մուշ քաղաքի կոիւն ու դիմադրութեան կազմակերպութեան ու ղեկավարութեան գործին մէջ: Եւ այդ հանդուցեալ ազգայինը զրի առած էր իր տեսածներն ու դատումները՝ յուշերու ձեւով, որոնց ձեռագիրը, իր մահէն առաջ, իրբեւ նուիրական մասունք եւ աւանդ, ի պահ ձգած էր իր մտերիմ բարեկամ Ալեքսան Մովսէսեանի քով, «որին կը հետաքրքրէին միայն արշինը, չիթը, ոսկին», բայց ԲՆԱԻ ԵՐԲԵՔ այդ անգնահատելի եւ անփոխարինելի յուշերը:

Եւ այդ «մտերիմ բարեկամը», Ալեքսան Մովսէսեան, սակայն, անխորհուրդ քայլով մը, այդ ձեռագիր յուշերը տրամադրած (յանձ-

նած) է Տարօն-Տուրուբերան Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան, — կոյր, մոլի, աղանդաւոր Տարօնցի դաշնակներէ բաղկացեալ այդ կազմակերպութեան ղեկավար մարմինին:

Եւ Կարօ Սասունի «պատմագիրը», իբրեւ թէ «օղտուած է» այդ յոյժ կարեւոր պատմական գործէն՝ իր հաստատիւ «պատմագիրքը» պատրաստած ատեն, «ԱՆՏԵՍԵԼՈՎ յիշեալ յուշագիրի ենթակայական դատողութիւնները եւ ոչ-պատմական քննադատութիւնները» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 727) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] եւ ներկայացուցած անոր «փաստական երեւոյթներու նկարագրութիւնը» միայն (նոյն, անդ) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.], իբրեւ «ականատեսի վկայութիւններու մէջ ուշադրաւ» տեղ գրաւող մասը:

Ոնիր մը գործուած է. անասելի, անորակելի, անփառելի ոնիր մը՝ բացառապէս թանկարժէք յիշեալ յուշերու ձեռագիրը տրամադրելով կոյր ու մոլեռանդ դաշնակ խմբաւորումի մը, որ նուիրական ու սրբացեալ անունի մը հովանիին տակ՝ գործեց նախընթաց չունեցող, գլուխ-գործոց խեղաթիւրումի եւ նենդափոխութեան արարք մը՝ աղանդաւոր Սասունցիին յօրինել տալով «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» առասպելապատում «պատմագիրքը», խաթարելով եւ չարափոխելով իսկական, ճշմարիտ ու հարազատ պատմութիւնը նահատակեալ Տարօնի եւ նահատակեալ Սասունի...:

Ինչո՞ւ համար, Տարօն-Տուրուբերան Հայրենակցական Միութիւնը չի հրատարակեր իր տրամադրութեան տակ գտնուող բոլոր ձեռագիր յուշերը եւ ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՊԱՏԵՀՈՒԹԵԱՄԲ՝ Արմաշական Տարօնցիի գլուխ-գործոց պատմական յոյժ կարեւոր եւ անփոխարինելի այդ երկասիրութիւնը՝ անփոփոխ եւ անաղարտ ձեռով, առանց «սրբագրութեան», առանց յապաւումներու, առանց կրճատումներու, առանց հպելու ձեռագիրի «ենթակայական դատողութիւններուն»? եւ «ոչ-պատմական քննադատութիւններուն»? իրենց մեղապարտ ու յանցագործ մատնելով...:

* * *

«Պատմագիր» Կարօ Սասունի՝ Ալեքսան Մովսէսեանը, մէկ ամիսէն աւելի պակաս ժամանակամիջոցի մը ընթացքին (Սեպտեմբեր 6-էն մինչեւ Հոկտեմբեր 15), ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ Կովկաս գրկելու դիտումնաւոր եւ նենդամիտ «սխալը» պիտի չգործէր, եթէ ուշադրութեամբ եւ մեծ խնամքով ուսումնասիրած ու սերտած ըլլար իր մշակած ու ներկայացուցած նիւթը. այդ պարագային, պիտի զգուշա-

նար գոնէ՝ հակասական եւ ծիծաղելի դիրքին մէջ դնելէ ինքզինք, եւ եթէ կարեւար իր տեղատեղ աչքերու վրայէն վար առնել իր կուսակցազար գունաւոր ակնոցները, եւ անաչառ պատմաբանի յստակատեսութեամբ՝ պիտի տեսնէր ու կարգար, պիտի կարգար ու պիտնար որ Ռուբէն-Փափագեան դասալիք խումբին փախուստին ՅԱԶՈՐԴ ՕՐՆ ԻՍԿ, Սեպտեմբեր 7-ին, նոյն այդ Ալեքսան Մովսէսեանը (Արոյնց էլօն) եւ իր խնամին, հանրածանօթ յեղափոխական աղաչյունը, Լեւոն Ասլանեան, Քանայ լեռներու մէջ, իրենց գանգատն ու դժգոհութիւնը կը յայտնեն յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանին թէ «իրենք ալ իրենց բախտին ձգուած են» («Տարօնի Ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», էջ 125) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]. «պարոն»ներու կողմէն՝ ամենավերջին բոպէին...:

Սասունցի «պատմաբանը», Ռուբէն - Փափագեան դասալիք խումբին անուանացանկին մէջ նշմարելով «Ալեքսան» եւ «էլօ» երկու յատուկ անունները (նոյն, էջ 124), «պատմագիրտօրէն» կամեցեր է այդ անուններէն առաջինը վերագրել Ալեքսան Մովսէսեանին, մինչդեռ եթէ ուշադրութեամբ սերտած ըլլար իր գրելիք ու ներկայացնելիք նիւթը, — առանց նենդամտութիւն ներմուծելու անոր մէջ, պիտի դիտնար որ յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի յիշած այդ երկու յատուկ անունները («Ալեքսան» եւ «էլօ») կը ներկայացնէին Ալեքսան Մովսէսեանէն ԲՈՂՈՐՈՎԻՆ ՏԱՐԲԵՐ երկու անձնաւորութիւններ, — մէկը՝ վրացի Ալեքսանը (Վահան Փափագեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 396), իսկ միւսը՝ Ալեքսան Գուրոյեան (էլօ), Վերին Թաղի կոիւր զիւցազնօրէն ղեկավարող այդ անդուզական հերոսը, որու նահատակութեան պարագաները պիտի քննենք իր կարգին, երբ ներկայացնենք Ռուբէն-Փափագեան դասալիք խումբին փախուստի պատմութիւնը...:



Գ Լ ՈՒՒ Ժ Զ .

ՄԱՅՐԸ ԿԸ ԽԵՂԴԵ ԻՐ ԼԱՅՈՂ ՄԱՆԿԻԿԸ

Վահան Փափաղեան, հակառակ պաշտօնական յայտարարութեամբ իր ըրած այն հանդիսաւոր յանձնառութեան թէ ինք Սասունէն՝ Հաւատորիկի եւ Քանայ լեռները վերադարձած էր այն միակ նպատակով եւ գլխաւոր յառաջադրութեամբ որ «պաշտպանէր» ու «պահպանէր» այդ լեռները ապաստան դտած հազարաւոր «ազատուած բեկորները», չէ՛ յաջողած յայտնաբերելու անձնդիր առաջնորդութիւն, կարող ղեկավարութիւն եւ մանաւանդ՝ անձնագոհ նուիրում, այսինքն, մեծանուն նահատակ Գրիգոր Չոհրաբի բառերով, «կեանքը տալ ժողովուրդին», որովհետեւ Բիւրոյական երեսփոխանը աւելի շատ մտահոգուած եւ զեկավարուած էր ԻՐ ՄՈՐԹԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ եւ ՓՐԿՈՒԹԵԱՆ անձնասիրական շարժառիթներով, քան թէ իր «պաշտպանութեան» ապաւինած այս թշուառացած բազմութիւններուն օգտակար ըլլալու ազդասիրական եւ մարդասիրական գերագոյն դադափարականներով . . . :

Հետեւեալ ողբերգական դրուագը, շատ բացայայտ կերպով, կ'ապացուցանէ Վահան Փափաղեանի յառաջադրած վերոյիշեալ երկու նուիրական դադափարականներու բացարձակ սնանկութիւնը եւ իր անձնասէր ու եսամոլ «ես»ին՝ անփառունակ յաղթանակը :

Այդ դրուագն է «Հայրը կը խեղդէ իր լացող մանկիկը», սըրտակեղէք դրուագ մը, զոր Վահան Փափաղեան կը նկարագրէ իր յուշերու երկրորդ Հատորի մէջ, էջք 385-386, եւ որու տարբերակի մասին «կ'ուզէր գիտնալ» (19 Յունուար 1955 թուակիր իր նամակով) մեր մէկ յուշագրի նկարագրականը :

Բայց, նախ տեսնենք թէ Բիւրոյական յուշագիրը ի՞նչպէս կը ներկայացնէ այդ մեծագոյն ողբերգութիւնը կեանքի առեղծուածին . . . :

Ուշադրութեամբ կարգանք իր յուշերու վերոյիշեալ էջերը. — «Լեռնալանջի մը պուրակին մէջ գիշերեցինք այդ օրը . . . Մեզ հետ էին 15-20 հոգի՝ կիներ, այրեր եւ մանուկներ՝ 5-10 տարեկան. միայն մէկը հազիւ 5-6 ամսական էր եւ սաստի չէր ենթարկուեր. միւսները սարսափի տակ լուռ էին : Մեր պուրակէն վար, հազիւ քսան քայլի վրայ ձգուած էր լեռնային կածան մը, որուն մօտ փոքրիկ աղբիւր մը կը հոսէր : Իրիկուան մթնշաղ էր. մերինները կամաց ձայնով

կը խօսէին, երբ յանկարծ ճամբայի վերէն, դռուժ-գոչումով վար կու գային խումբ մը մարդիկ — քուրդեր էին, որոնք պիտի անցնէին մեր շատ մօտէն ձգուող արահետէն, կամ դադար առնէին հազիւ մեղմէ 40-50 քայլ վար՝ աղբիւրին քով : Սարսափահար ամէնքս՝ չունչերնիս պահեցինք եւ զսպեցինք Երեխաները. քուրդերը կը մօտենային :

«Այդ միջոցին, երեւի հօր կամ մօր սաստէն վախցած պզտիկ մանկիկը ճիշ մը արձակեց եւ սկսաւ աղիողորմ լալ . . . : Մենք քար կտրեցանք. վտանգը ակներեւ էր. քուրդերու խումբը, ըստ սովորութեան, բարեբախտարար իրար ընդհարելով՝ անտանելի դռուժ-գոչումով կը մօտենար աղբիւրին. երեխայի ձայնը չէին լսած : Յանկարծ, մեր փոքրիկ մանկիկի ձայնը կարծես սուրով կտրեցին. մեռելային լութիւն տիրեց : Քուրդերը հասան եւ հաւաքուեցան աղբիւրի շուրջը. իրար հրմշակելով եւ պոռայով՝ ջուր կը խմէին. այս վիճակը տեսց մօտ տասը բոպէ, ապա դանդաղօրէն հեռացան :

«Ազատ չունչ մը առինք : Հայրը խեղդած էր լացող իր մանկիկը : Այս գինով փրկուեցանք մենք . . . » :

Այս է, ահա՛, յուշագիր Փափաղեանի ներկայացուցած սրտակեղէք դրուագին ամբողջ պատմութեան իր տարբերակը :

Ո՞րքան ճիշտ կամ հարազատ է այս նկարագրութիւնը : Կըրնա՞նք ամբողջովին միշտ, մշմարիտ ու իրական համարել Փափաղեանի ներկայացուցած այս ողբերգական դրուագը : Չկա՞յ բան մը, զոր Փափաղեան ջանացած ըլլայ ֆօղարկել, կա՞մ պատճառ մը, աւելի՛ պարտադրիչ եւ աւելի՛ սարսափեցուցիչ, քան քուրդերու «գոռուժ-գոչում»ի աղմուկը, որուն իրր արդիւնք, մանկիկի հայրը կամ մայրը պարտադրուած ըլլային գործելու ոճիրներու ահռելին — զաւակասպանութիւնը . . . :

Բա՛յց, մոռնանք այս տխուր խորհրդածութիւնները եւ տեսնենք թէ Վահան Փափաղեանի խումբին հետ, այդ միեւնոյն պուրակին մէջ ծուարած մեր պատանի յուշագիրը, Երուանդ Շարաֆեան, ինչպէս կը ներկայացնէ այդ սրտաճմլիկ տեսարանը. —

«Ինչպէս յիշուեցաւ ասկէ առաջ ալ, ամէն օր տարբեր ուղղութեամբ կը թափառէինք : Ձորին մէջ հրացանաձգութեան ձայներ լսուեցան. իմացանք որ Հաւատորիկ գիւղի հայութիւնը գիւղէն փոխադրուեր է հո՛ն, իրենց գիւղին մէջ ձգելով միայն մի քանի ծերեր ու հիւանդներ :

«Առաքելոց Վանքի զինուորները եւ տեղական քուրդերը շորս կողմերէն կը պաշարեն ու անխնայ կը կոտորեն այդ բազմութիւնը, որու լացի եւ կոծի ձայնը մինչեւ երկինք կը հասնէր :

«Գիւղացի կին մը, իր երկու պղտիկ պաւակներով, հոն էր պահուրտած, այդ խիտ անտառին մէջ, երբ մեր խումբը հո՛ն հասաւ :

«Հրացաններու ձայնէն, կիներու եւ երեխաներու լացուկոծէն, երեխան սկսաւ բարձրաձայն լալ :

«Վահան Փափազեան հրամայեց Պոլէի Արչակին .—

«— Գնա՛ ըսէ որ այդ երեխայի ձայնը կտրեն, ապա թէ ո՛չ, ամբողջ ընտանիքը գնդակահարել կու տամ» :



ՊԱՏՈՒԵԼԻ ՄԻՀՐԱՆ Գ. ՅԱԿՈՒԵԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԱՆԿԱՐԸ

«Ու... երեխայի ձայնը... կտրեցաւ անմիջապէս: Այլեւս անոր լացի ձայնը չլսեցինք, որովհետեւ... մայրը... խեղդեր էր... իր լացող մանկիկը» («Նրուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեանը», էջ 47) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Մեր ընթերցողները շատ բացայայտ կերպով կը տեսնեն հակապատկեր նկարագրութիւնը միեւնոյն տխուր դրուագին՝ պատմուած երկու անձերու կողմէ, որոնք ներկայ գտնուած են հո՛ն, սիրտ կսկծեցնող այդ աղեխարչ տեսարանին, մէկը թէեւ ղեկավար եւ պատասխանատու անձնաւորութիւն մը, բայց միշտ հետամուտ՝ իր ան-


ձի ապահովութեան եւ իր մորթի փրկութեան միայն, իսկ միւսը՝ 14 տարեկան միամիտ պատանի մը, զերծ որեւէ յետին միտքերէ եւ չքմեղանքի հարկադրանքներէ . . . :

Ո՞ր մէկն է որ հարադատօրէն ներկայացուցած է այս յուզիչ դրուագին ճշմարիտ ու առարկայական նկարագրութիւնը :

Ո՞ր մէկն է որ կը ջանայ քողարկել ճշմարտութիւնը, արդեօք : Թերեւս, այս տխուր տեսարանի նկարագրութեան շարունակութիւնը՝ լոյսի շողաւիղ ծառայէ պրպտող եւ քննասէր միտքերու, աւելի՛ արդար եղբակացութեան մը յանգելու համար :

Յուշագիր Երուանդ Շարաֆեան կը շարունակէ .—

«Վահան Փափազեան եւ իր թիկնապահները, ոտքէն մինչեւ գլուխ գինուած էին տասը կրականոց մոսիներով եւ մաուզէրներով, եւ չնայած իրենց խիտ նպաստաւոր դիրքին եւ յարմարութեան, որով ԿՐՆԱՅԻՆ այդ ձորին մէջ հարիւրաւոր թուրք զինուորներ ստակեցնել եւ չքողուլ որ անոնք անարգել կտորէին այնտեղի անգէն ու անպաշտպան ժողովուրդը՝ իրենց շատ սիրուած ու յարգուած հոգեւոր հովիւ, Պատուելի Միհրան Գ. Յակոբեանի հետ միասին, առանց ձայն-ձուռնի համելու, ԿԾԿՈՒԵՑԱՆ ծառերու թաւուտքներուն մէջ, վախկոտ ու տմարդի արարածներու նման, առանց նոյնիսկ ԱՄՕԹ ԶԳԱԼՈՒ ԻՐԵՆՑ ՀՐԱՑԱՆՆԵՐԻՆ . . . » (նոյն, էջ 47-48) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :



ԳԼՈՒԽ ԺԷ.

ԶԻՆՈՒԱԾ ՈՒ ԱՆՁԷՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ
ԻՐԱՐՄԷ ԶԱՏԵԼ

Տարօնցի պատանի յուշագիր Երուանդ Շարաֆեան, որ Մուշ քաղաքի կռիւէն յետոյ, Մասուն ապաստանած էր եւ Մասունի դոյա- մարտի ատեն ալ՝ հոն կը գտնուէր, Անդոկ լեւոն գաղաթը, ուրկէ ան ականատես ու ականջալուր կ'ըլլար հոն պատահած աղետարչ տեսարաններուն, Մասունի աննախընթաց ձախողանքէն յետոյ ալ՝ տասնեւհինգ հոգինոց խումբի մը հետ խոյս տուած էր դէպի Հաւա- տորիկի եւ Քանայ լեռները, ուր, առաջին իսկ պատեհութեամբ, կը հանդիպի իր ազգական Ալեքսան Մովսէսեանին:

Ալեքսան Մովսէսեան, ինչպէս յիշեցինք ասկէ առաջ ալ, մօ- տիկ եւ մտերմիկ յարաբերութիւն կը պահէր Վահան Փափազեանի հետ եւ անոր բարեբարը կամ ապրուստը ապահովողը եղած էր՝ լեռ- նաբնակ այդ օրերուն: Նոյնիսկ քաղաք գտնուած ատեն, Վահան Փափազեան քսան ոսկի «փոխ» առած էր Ալեքսան Մովսէսեանէն, ինչպէս կը կարգանք Միսակ Բղէկեանի յուշերուն մէջ («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 479):

Փափազեանի եւ Մովսէսեանի այս մտերմիկ յարաբերութենէն մեծապէս օգտուողը կ'ըլլայ մեր պատանի յուշագիր Երուանդ Շա- րաֆեանը, որ կը միանայ Փափազեանի սպառազէն խումբին եւ անոր հետ կը մնայ, մինչեւ որ շար օր մը, Վահան Փափազեան, ատրճա- նակի սպառնալիքով, ճամբու կը դնէ թէ՛ Երուանդ Շարաֆեանը եւ թէ՛ իրենց խումբին ընկերացող հերոս Լեւոնն ու Գալուստը, ինչ- պէս տեսանք:

Երբ Ալեքսան Մովսէսեան, Հաւատորիկի լեռներու մէջ, առա- ջին անգամ կը հանդիպի Երուանդ Շարաֆեանին, կ'ըսէ անոր.—

«— Հոս սպասեմք, մինչեւ որ մթնէ, այն ատեն կ'երթանք Վե- րին Մառնիկ գիւղը: Վահան Փափազեան ալ հոն պիտի ըլլայ՝ իր գինեալ ընկերներով. անկէ ալ կ'անցնինք կ'երթանք Կովկաս»:

Եւ յուշագիր Շարաֆեան կը շարունակէ.—

«Ես շատ ուրախացայ, մանաւանդ գիտէի որ մեր Պատիկ Ա-

րամն ալ(1) Փափազեանի հետն էր, եւ վստահ էի որ զիս ալ անպատ- ճառ պիտի առնէին իրենց հետ:

«Երբ արեւը մար մտաւ, սկսանք վեր բարձրանալ թանձրա- խիտ թաւուտքներու մէջէն եւ հասանք Մառնիկ գիւղը, որ ձորի մը մէջ կը գտնուէր՝ չորս կողմերէ շրջապատուած անտառներով:

«Հոս տեսայ հազարաւոր երիտասարդներ՝ քաղաքէն, դաշտէն եւ Մասունէն: Բոլորն ալ կը փնտռէին իրենց հարազատները եւ ծա- նոթները հարց ու փորձ կ'ընէին: Ամերիկահայերու սարքած դաշ- տահանդէսներու կը նմանէր այս հաւաքոյթը: Բոլորն ալ կը խօսակ- ցէին, կը վիճաբանէին, կարծիք կը փոխանակէին, ծրագիրներ կը մշակէին, սակայն կրնայիր նշմարել որ ամենուն ալ դէմքերուն վրայ՝ անձկութիւն մը, սպասում մը կար, կարծես թէ մէկու մը գալուն կը սպասէին ակնդէտ, միշտ այս ու այն կողմ նայելով՝ լարուած ու- չադրութեամբ մը:

«Եւ ահա՛, անտառի մէջէն, ծակէ մը ղուրս ինկաւ Վահան Փափազեանը՝ իր գինեալ թիկնապահներով շրջապատուած:

«Ներկաներէն շատերը բնաւ տեսած չէին Փափազեանը նախա- պէս, եւ իրարու կը հարցնէին.

«— Ո՞ր մէկն է «պարոն» Փափազեանը:

«— Տօ՛, տղա՛յ, այն երկայն մարդը, որ այժի պէս մօրուք ունի, ան է «պարոն» Փափազեանը(2), — կը պատասխանէին:

«Լուռութիւն տիրեց: Ամէն մարդ, լուռ ու մունջ կեցած, կը սպասէր: «Պարոն» Փափազեան պիտի խօսէր. ի՞նչ պիտի ըսէր, ի՞նչ կարգադրութիւններ ըրած էր ան՝ այս հսկայ գանդուածի առօրեայ կարիքներու մասին, անոր ապահովութեան մասին, անոր ապադայի մասին:

«Քանայ եւ Հաւատորիկի լեռները ապաստան գտնող աւելի քան քսան-քսանեւհինգ հազար այս փախստական Հայերը՝ «պարոն»ի շրթունքներէն կ'ակնկալէին լսել յուսատու խօսքեր, որոնք տեսակ մը լուծում տային իրենց կեանքի ու մահուան առեղծուածին:

«Բայց, «պարոն»ի մտասեւեռումը ուրիշ բան էր եւ անոր մա- սին միայն պիտի խօսէր ան:

(1) Պատիկ Արամ Յակոբեանն ալ ազգական էր յուշագիր Եր- ուանդ Շարաֆեանին:

(2) Այս նախադասութիւնը՝ Տարօնական բարբառով, հետեւ- եալ տարագն ունի.— «Տօ՛, տղա՛յ, էմ յերկէմ մարդն է օր էծի պէս մօրուք ունի, էմ է «պարոն»ն:

«Եւ բացաւ իր օրհնած բերանը եւ առանց այլեւայլի՝ յայտարարեց որ ժողովուրդի մէջ գտնուող զինեալ ու անզէն երիտասարդները պիտի գտնուէ իրարմէ, եւ հրամայեց որ զինեալները մէկ կողմ, իսկ անզէններն ալ՝ միւս կողմը կանգնին:

«Մօտաւորապէս 400-500 զինեալ ու մարդուած երիտասարդներ կային հող, այդ ժամանակ: Ձինեալներէն անոնք որ ազդական կամ բարեկամ ունէին, անոնց ձեռքերէն բռնած՝ չէին ուզեր պատուիլ իրարմէ:

«Վահան Փափաղեան, կոկորդը պատուելու աստիճան պոռալով, հրամաններ կ'որոտար աջ ու ձախ, սակայն չյաջողեցաւ զինեալները դատել անզէններէն:

«Փափաղեան յայտարարեց.

«— Մենք թրքական ռազմաճակատը ձեղքելով՝ կովկաս պիտի անցնինք զազտազողի եւ ո՛չ թէ իրրեւ կուուող ոյժ, հետեւաբար, որքան հնարաւոր է, մեր թիւը պէտք է ըլլայ շատ փոքր, որպէսզի աննշմար ըլլանք՝ թրքական գիծը անցած ատեննիս:

«Պզտիկ Արամ Յակոբեան մէջտեղ եկաւ եւ պատասխանեց Փափաղեանին.—

«— Այստեղ մօտաւորապէս հինգ հարիւր զինեալ երիտասարդներ կան. հարիւր հողի՝ աջէն, հարիւր հողի՝ ձախէն, եւ ինչքան ժողովուրդ որ ունինք հոս, — ծեր, երիտասարդ, կին, երեխայ, — որոնք քայլելու կարողութիւն ունին, այս անտառէն մէկական փայտ կտրելով՝ զնեն իրենց ուսերուն վրայ, եւ ես ալ՝ «Ձէյթուն անկախ դու Հայաստան» երգեմ, անոնք ալ՝ «Հելէ՛, հելէ՛» պոռալով, կը ձեղքենք թրքական գիծը ու կը հասնինք ռուսերուն: Այս է իմ ծրարիւրը: Եթէ ինծի հետ դաք կամ ո՛չ, ես պիտի երթամ»:

«Եւ այդպէս ալ ըրաւ յետոյ: Իր ութսուն հոգինոց խումբով, առանց վտանգի եւ կորուստի, կտրեց անցաւ թրքական գիծը եւ հասաւ ռուսական բանակը:

«Փափաղեան, սակայն, միշտ կը պնդէր որ միմիայն ընտրովի դատուածները պիտի առնէր իրեն հետ:

«Լեւոն Ասլանեան, Մուշի Վերին թաղեցի, որ եղած է հին, դործօն յեղափոխական եւ քաղաքի լաւազոյն ուժերէն մին, հարուստի զաւակ եւ առաջնակարգ վաճառական՝ իր մեծ եղբայր Անուշաւանի հետ, իր ծերուկ հօր եւ երկու պզտիկ եղբայրներու ձեռքերը բռնած՝ կը սպասէր:

«Փափաղեան Լեւոնին առաջարկեց որ զինեալներու կողմն անցնի առանձինն: Լեւոն կտրուկ կերպով մերժեց այդ հրամանը՝ ըսելով.—

«— Ես կը մեռնիմ՝ հօրս եւ երկու եղբայրներուս հետ. ես անոնցմէ չեմ գատուիր»:

«Ու բարկացած, անոնց ձեռքերէն բռնելով, դնաց անտառին խորերը:

«Աւելի յետոյ, Լեւոնի հայրը, Ասատուր աղա Ասլանեան, իր կրտսեր զաւակ Ասլանը առնելով՝ քաղաք գացեր ու յանձնուեր էր թրքական իշխանութիւններուն եւ անմիջապէս ալ սպանուեր են: Իսկ Լեւոն Ասլանեան եւ իր միւս եղբայրը, Յովհաննէս, մնացին այդ անտառին մէջ: Լեւոն հիւանդանալով՝ քուրդի մը դոմը ապաստաներ եւ հո՛ն ալ մեռեր է, իսկ Յովհաննէս, Մուշ քաղաքը զրաւուելէն յետոյ, քաղաք վերադարձեր ու միացեր է ռուսական բանակին: Հիմա Երեւան կը բնակի, ամուսնացած եւ հինգ դուստրներու ալ հայր եղած է:

«... Վահան Փափաղեան վերջապէս չյաջողեցաւ իրարմէ գատել զինեալներն ու անզէնները:

«Վերջին փորձ մըն ալ ըրաւ Սասունցիի մը վրայ, Մխօ անունով, որ Մուշի Բերդի թաղեցի թուրք Իպոյին ծառայութիւն կ'ընէր նախապէս:

«Մխօն, իր փոքր եղբոր ձեռքէն բռնած՝ կը սպասէր:

«Փափաղեան, հրամայողական զօրաւոր շէշտով մը, ըսաւ Մխոյին.

«— Թո՛ղ անոր ձեռքը եւ անցի՛ր զինեալներու քով:

«— Տօ՛, ես զքու պապու կող... — հայհոյեց Մխօն, — դու մեր ամբողջ ժողովուրդը կոտորել տալէն յետոյ, մէկ հատիկ մնացած եղբա՞յրս ալ կ'ուզես կոտորել տալ հիմա, — ըսելով՝ հրացանը կրակեց Փափաղեանի վրայ:


«Ամէն մարդ իրար անցաւ եւ մեծ խառնաշփոթութիւն տիրեց:

«Արշալոյսը բացուելու վրայ էր:

«Փափաղեան, իր թիկնապահներով քաշուեցաւ մէջտեղէն եւ կորսնցուց իր հետքը. իսկ հոն խռնուած ռազմութիւնն ալ տարտըղնուեցաւ անտառներու խորերը՝ անդեկ ու անպաշտպան» (Շիրուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջը 40-44) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ինչպէս յստակ կը տեսնուի, Վահան Փափաղեանի միակ նպատակն եղած է այս մեծագանգուած փախստականներու մէջ գտնուող հինգ հարիւր զինեալ երիտասարդներէն գտնել ամենէն քաջ եւ զինավարժ մարտիկները միայն, որոնց միակ պարտականութիւնը պիտի ըլլար ընկերանալ իրեն, — Վահան Փափաղեանին, — իրրեւ թիկնապահներ՝ միշտ հոգածու ըլլալ անոր ապահովութեան եւ անվտանգութեան, մինչեւ որ պատեհ առիթը ներկայանար, օր մը, երբ յա-

Ջողի Ռուբէնի հետ մէկտեղ՝ միասնաբար խոյս տալ կովկաս՝ գաղտագողի, առանց երբեք դոյզն մտահոգութիւնն ունենալու այդ լեռներու մէջ իրենց տառապակոծ գոյութիւնը քաջքշող թշուառ բեկորներու «ապահովութեան» եւ «պաշտպանութեան», որոնց ոսկեզօծուած կեղծ փետուրներով կը փորձէ պճնազարդել իր անփառունակ գլուխը . . . :



Գ Լ Ո Ւ Ւ Ժ Ը .

Վ Ա Հ Ա Ն Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն ԱՏՐՃԱՆԱԿՈՎ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԵՒ ԿԸ ԿՐԱԿԷ ԱՆՈՐ ՎՐԱՅ

Վահան Փափազեան, որպէսզի կարողանար իր գինեալ խումբին թիւը պղտիկ պահել՝ թշնամիէն ղիւրաւ չնշմարուելու եւ պարենաւորումի դժուարութեանց կրկնակ պատճառներով, շատ յաճախ հարկադրուած էր ԲԻՐՏ ՈՒԺՈՎ կամ ԶԻՆՈՒ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ սպառնալու ո՛չ միայն իրեն ու իր գինեալ խումբին հետեւող ժողովրդական յուսահատ զանգուածներուն, որոնք «տեմդատ սպասման մէջ էին՝ հետեւելով մեր պատրաստութեան» (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 395) [Բոլոր ընդդժումները մերն են, Ա. Տ.], ա՛յլ եւ նոյնիսկ՝ առաւել կամ նուազ չափով, անուն եւ համբաւ ունեցող՝ գինեալ, բայց իրեն ո՛չ-հաճելի երիտասարդներու վրայ ալ ատրճանակ քաշելու եւ ստիպելու որ անոնք դադրին հետապնդելէ զինք ու իր խումբը, կա՛մ հետեւելէ իրենց քայլերուն :

Յուշապատում Երուանդ Շարաֆեան կը յիշէ այդպիսի սրտաճրմլիկ երկու օրինակներ, իսկ Միսակ Բղէեան ալ՝ մէկ օրինակ, զորս պիտի ջանանք մանրամասնօրէն ներկայացնել մեր յարգելի ընթերցողներուն :

ա. — Անշուշտ մեր ընթերցողները կը յիշեն այն դրուագը, զոր համառօտ ձևով տուած էինք մեր այս ուսումնասիրութեան Մասն Երկրորդի ԺԳ. Գլուխին մէջ, երբ Վահան Փափազեան, Լոլոյի Տիգրան եւ Արշակ Պոլէեան, իրենց ատրճանակներով կը սպառնային պատանի հերոս Լեւոնին, Գալուստին եւ Երուանդ Շարաֆեանին :

Հոս կը փափաքինք տալ այդ անդութ արարքին լրիւ ու ամբողջական նկարագրութիւնը, որ ահաւասիկ .—

«Քանի մը հարիւր քայլ յառաջացած էինք, երբ Փափազեանի խումբը պոռալով մեզի իմացուց որ սպասենք իրեն :

«Ես, Լեւոն եւ Գալուստ անմիջապէս կանգ առինք մեր զրտնուած տեղը, մինչեւ որ անոնք հասան :

«Այդ ատեն, Վահան Փափազեան, առաջ անցաւ եւ իր խօսքը երեքիս ուղղելով՝ ազդարարեց .

« Դուք այս կողմերը մնացէ՛ք, մենք կ'երթանք :

« Այս վճռական աղբարարութիւնը յանկարծակիի բերաւ մեզ . չձամա՞ծ մնացինք եւ սկսանք լալ ու աղաչել .

« Աստուծոյ սիրոյն, մեզ մի՛ լքէք այս կողմերը, հետեւնիդ տարէ՛ք, եթէ չկարողանանք քայլ պահել ձեզի հետ, սպաննեցէ՛ք ու անցէ՛ք :

« Բայց անկարելի եղաւ . անոնց որոշումը վճռական ու վերջնական կը թուէր : Անոնք սկսան յառաջանալ, մենք ալ շարունակեցինք հետեւիլ իրենց : Այդ պահուն, Վահան Փափազեան, Տիգրան Լուրյեան եւ Արշակ Պոլեան ՔԱՇԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐԸ եւ ՍՊԱՌՆԱՑԻՆ ՄԵԶԻ .

« Եթէ հետեւիք մեզի, — ըսին անոնք, — երեքդ ալ պիտի սպաննենք :

« Յետոյ աւելցուցին . —

« Դուք դաւաճաններ՝ էք, եթէ հետեւնիս գաք, կը դաւաճանէք ճամբան :

« Ձէինք պիտե՛ր թէ ի՞նչ դաւաճանութիւն ըրած էինք անոնց : Քանի մը շարաթներէ ի վեր՝ ցորենի, գարիի հասկեր հաւաքեր էինք արտերէն, հատիկները զատեր, երկանաքարով աղացեր, հաց թխեր եւ անոնց կերցուցեր էինք՝ այն միակ յոյսով որ իրենց հետ՝ մեզ ալ պիտի տանին Կովկաս, եւ հիմա՛, այս վերջին ըոպէին, դաւաճաններ ենք եղեր . . . :

« Անոնք անցան գացին . իսկ մենք, երեքս, նստանք ժայռի մը վրայ եւ կուշտ մը լացինք մեր սեւ ճակատագիրին վրայ . . . :

« Յետոյ Գալուստ ըսաւ . —

« Անոնք գացին, մենք ինչո՞ւ ենք նստեր, քիչ յետոյ պիտի լուսնայ . երթա՛նք :

« Լեւոնն ալ աւելցուց .

« Տղա՛ք, երթանք Հաւատորիկ գիւղը . կ'ըսեն թէ ծեր ու պառաւ անձեր դեռ մնացեր են հո՛ն . երթանք քանի մը օր ալ այդ կողմերը անցընենք » (« Երուանդ Շարաֆեան Կը Պատմէ Տարօնի Եղեռնը, » էջք 50-51) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

բ. — Երկրորդ դրուագ մը եւս կու տայ Երուանդ Շարաֆեան, երբ կը պատմէ թէ ի՞նչպէս Վահան Փափազեանի կուսակցական վաղեմի ընկերներէն երեք գինեալ երիտասարդներ կը մերժուին անոր կողմէ :

Տա՛նք յուշագիրին բնագիրը նոյնութեամբ . —

« Քանի մը օր ետք, երբ մեծ ժայռի մը տակէն բխող պաղորակ աղբիւրի մը քով նստած էինք, երեկոյեան կողմ, նայեցանք որ երեքչորս գինեալ մարդիկ մեր կողմը կու գային : Երբ բաւական մը մօ-

տեցան, ճանչցանք զանոնք — մեր քաղաքի տղաներն էին, — ԹԷՆԷ-ԲԷՆԻ Խուշօն, Խոսրով Էֆէնտիի եղբայրը Հայկ եւ Սուրբ Մարինէ թաղեցի Ասատուրը, որ այնքան չալըմլը ըլլալուն համար, « Խասրմ Բէգ » կը կոչուէր :

« Ասոնք դեռ մեզի չձօտեցած, Փափազեան ՀՐԱՄԱՑԵՑ Լուրյի Տիգրանին . —

« Ատոնց նամբու դի՛ր » :

« Անոնք երբ մեզ տեսան, շատ ուրախացան, եւ յայտնեցին որ երկար առեւէ ի վեր՝ մեզ կը փնտռէին : Տիգրան, սակայն, անոնց ուրախութիւնը կէս թողուց, երբ անոնց ազգարարեց . —

« Ի՛նչպէս որ եկեր էք, այնպէս ալ անցէ՛ք գացէ՛ք, ամէն մարդ իր գլխու ճարը թո՛ղ ինք նայի » :

« Ուրեմն, այսպէ՞ս, — ըսին անոնք յուսախարուած : Մենք, այսքան տարիներու հին ընկերներս, այսպիսի տմարդի վարմունքի՞ պիտի արժանանայինք : Լա՛ւ, կ'երթանք թուրքին կը յանձնուինք, քան թէ ձեզ նման կեղծ ազգասէրներու եւ իրական դաւաճաններու երեսը տեսնենք :

« Եւ յուսախար, մեկնեցան :

« Յետոյ իմացանք որ անոնք, Քանայ լեռներու մէջ, հանդիպեր են Մուսա Բէգի քուրդերուն, որոնց հետ կռուի են բռնուեր ու անհաւասար դօտեմարտի մը մէջ պայքարեր են մինչեւ իրենց վերջին փամփուլտը եւ նահատակուեր . . . » (« Երուանդ Շարաֆեան Կը Պատմէ Տարօնի Եղեռնը », էջ 48) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :



Գ Լ ՈՒ Խ Ժ Թ.

ՃԵՐՄԱԿ «ԵԱԶՄԱ»ՅՈՎ ՄՕՐՈՒՔԸ ԿԱՊԵԼՈՎ ԵՊԻՏՈՒԵԼՈՒ ԱՄՕԹԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Կ. — Այս երրորդ գրուագրը՝ «ճերմակ եագվայոյ մօրուքը կապելով ծպտուելու» պատմութիւնն է, որ ատեն Վահան Փափաղեան կ'ազդարարէ անպատում երկիւղով համակուած ժողովրդական գանդուածներուն որ շհետեւին իր եւ իր խումբի քայլերուն եւ հետքերուն: Ու երբ այս ազդարարութիւնը կը ձախողի տալու բազմացուած արդիւնքը, այդ պարագային, Վահան Փափաղեան՝ ԻՐ ԱՏՐՃԱՆԱԿԸ ՔԱՇԵԼՈՎ, քանի մը անգամ կը կրակէ իրեն հետեւող ժողովուրդին վրայ:

Այս տխուր դրուագի մասին արդէն գրած էինք իրեն, Վահան Փափաղեանին, որուն պատասխանը, բնականաբար, պիտի ըլլար բացարձակ ուրացում եւ անբաստանութիւն՝ ուղղուած մեր Տարօնցի յուշագիրներու հասցէներուն:

Այս ուրացումի եւ ամբաստանութեան պարագան մանրամասնօրէն քննելէ առաջ, նախ պատեհութիւն տանք մեր աւագ յուշագիր Միսակ Բղէեանին, որ ընդարձակօրէն եւ հանգամանօրէն մեկի տայ «ճերմակ եագվայ»-ով մօրուքը կապելով ծպտուելու խիստ սոմարդի արարքին յոյժ ամօթալի եւ նոյնքան զղուելի դաւին պատմութիւնը, որ ահաւասիկ. —

«Հող, Փափաղեանի քով, — կը դրէ յուշագիր Միսակ Բղէեան, — երկու հարիւրէ աւելի զինեալ ու անզէն երիտասարդներ կը տեսնեմ, որոնք, բոլորն ալ, լսած են որ Փափաղեան պիտի մեկնի: Ամէնքն ալ եկած, հող նստած են, որպէսզի ան՝ իր տեղէն շարժածին պէս, իրենք ալ հետեւին անոր խումբին:

«Ես այդ տեղը ձգելով՝ կը վերադառնամ՝ դաւելիս քով, որ մուշմուշ կը քնանայ՝ վստահ ըլլալով որ իր հայրը բնաւ պիտի չլքէ զինք՝ ուրիշներու նման, մինչ անոր քով գտնուողները կը հառաչէին՝ արտասուելից աչքերով:

«Միտ տուի անոնց եւ յորդորեցի որ չվախնան, որովհետեւ անոնք չուտով պիտի վերադառնան նորէն:

«Եւ յիրաւի, երբ Փափաղեան կը տեսնէ որ չսիրած ու չուզած անձերու թիւը երթալով կը մեծնայ իր շուրջն ու բոլորը, այլեւս,

առանց ձայն հանելու, գլուխը վար կը դնէ ու կը սկսի խոկալ: Իր հետեւորդներն ալ կը հետեւին իր օրինակին [Ա.]:

«Յաջորդ առաւօտեան, Յուլիս 29-ին, բոլորն ալ անորոշ դրութեան մատնուած են. յուսահատութիւն եւ բարոյալքում կը տիրեն ամէն կողմ, անանկ կը զգան որ մահը, դամոկլեան սուրի պէս, կախուած է բոլորի գլուխին վրայ, եւ վայրկեանէ վայրկեան կը սպասեն թշնամի խոժանին, որ դայ, իրենց հոգին առնէ եւ այս տառապանքներէն ազատին, թէեւ Փափաղեանի կեղծ հրամաններուն վրայ, զինեալ երիտասարդութիւնը դիրքերու մէջ պահակութիւն կ'ընէ եւ իր պարտականութիւնը կը կատարէ անթերի:

«... Այդ երեկոյեան, երիտասարդութիւնը նորէն Փափաղեանի շուրջն ու բոլորտիքը կը դառնայ(1) եւ չի ձգեր որ ան մեկնի՝ առանց իրենց:

«Փափաղեան, սակայն, դիւային ծրագիր մը յղանալով, տղոց կը յայտարարէ. —

«— Այլեւս ժամանակը հասած է որ այսօր իսկ՝ մեկնինք դէպի Ռուսական բանակը: Միմիայն երիտասարդներն ու պատանիները կրնանք առնել հետերնիս»:

«Անմիջապէս հող կը հաւաքուին մօտաւորապէս հինգ հարիւրի չափ երիտասարդներ: Դիրքերը գտնուած տղաներն ալ, լքելով իրենց դիրքերը, կու գան կը խոնուին: Մութը կոխած է արդէն: Փափաղեան հրաման կ'ընէ որ հետզհետէ սկսին իջնել վար, դէպի Ալվառին: Գիւղի դաշտը: Քաղաքացի զինեալ տղաքն ալ կը սկսին յառաջանալ: Կը տեսնեմ որ իրենց հետ երթալիք տղաներէն մէկ մասն ալ սկսաւ վար իջնել:

«Այդ ատեն, բնականաբար, ես ալ տղայիս հետ սկսայ հետեւիլ անոնց, եւ երկու ժամէն հազիւ կարողացանք հասնիլ որոշուած վայրը, ուր տեսայ որ մեզմէ առաջ մեկնողները, բոլորն ալ, կը սպասէին: Մենք ալ հող կը սպասենք որ Փափաղեան իր հետի քանի մը ընկերակիցներով գայ: Ժամերով կը սպասեմք. կէս գիշերը կ'անցնի: Պէտք է որ այդ ԳԻՇԵՐԸ առնուագն ութ ժամուան քամբայ կըտրեմք որ ապահով վայր մը հասնինք:

«Ահա՛ լուսնայուն հինգ ժամ մնացեք է, բայց Փափաղեան չերեցաւ դեռ: Բազմութեան մէջ կը սկսիմ փնտռել այն ընկերները, զոր Փափաղեան նախապէս որոշած էր իր հետ առնել, եւ որոնց մէկ

(1) Այն կասկածով եւ վախով թէ «պարոն»ը կրնայ յանկարծակի լքել զիրենք եւ գաղտագողի կորսնցնել իր հետքը՝ իր փոքրաթիւ խումբին հետ:

մասին՝ մեզմէ առաջ վար իջնելը տեսած էի: Կր նայիմ որ անոնք չկան: Իսկոյն կը համոզուիմ որ անոնք, քիչ մը վար իջնելէ յետոյ, նորէն վերադարձած ըլլալու են Փափազեանի քով:

«Այդ կասկածով, թովիններու դառնալով՝ կ'ըսեմ .

«— Մենք պարապ տեղ է որ հոս կը սպասենք. Փափազեան բոլորս խաբելով՝ հոս դրկած է: Հիմա յուսնալու վրայ է. ալ ինչի՞ կը սպասենք»:

«Բոլորն ալ համոզուելով, իսկոյն կը վերադառնանք մինչեւ լերան դագաթը: Արդէն արշալոյսը րացուած է. Փափազեան եւ իր ընկերները չենք գտներ հոն, ընդ որս նաեւ Տէր Զաքարեանը եւ Մովսէսեանը:

«Հոն գտնուող ժողովուրդը հետեւեալ կերպով կը պատմէ Փափազեանի փախուստը.—

«— Ձեր վար իջնելէն յետոյ, մենք՝ հոս գտնուողներս, շրջապատեցինք զինք եւ կ'առաջարկէինք որ մեզ ալ տանի իրեն հետ: Ան, նոյն ճամբան ցոյց տուաւ մեզի ալ, ըսելով թէ «գուք ալ, սակէ առաջ մեկնողներու նման, կրնաք վար իջնել եւ երթալ անոնց քով, մինչեւ որ մենք վերջացնենք մեր կարգադրութիւնները եւ դանք հասնինք ձեզի: Բայց անգամ մըն ալ տեսանք որ ներմակ եագմայով մը իր մօրուքը կապած, իր մի քանի ընկերներու հետ, դէպի Մառնիկ գիւղը դառնալով, արագօրէն սկսաւ յառաջանալ: Մենք ինկանք իր հետեւէն: Ան, ետ դառնալով, իր Ձեռնֆին Մէջ ԳՏՆՈՒՈՂ ՏԱՍՆՈՑ ԱՏՐՃԱՆԱԿՈՎ՝ ՄԻ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ ԿՐԱԿԵՑ ՄԵՐ ՎՐԱՅ: Ա՛լ համոզուեցանք որ պիտի սպաննուինք, ու այլևս իր հետեւէն չգացինք»:

«Երբ Փափազեանի այս ստորին արարքի մասին իմացանք, ապա հար մնացինք:

«Այլևս առաւօտ է: Ամբողջ ժողովուրդը իմացաւ որ Փափազեան, գլուխն առած՝ փախեր է: Ո՛չ դիրքեր դացող մնաց եւ ո՛չ ալ՝ պաշտպանող:

«Մնացած զինեալ տղաներն ալ վերջին ծայր յուսալքուեցան, երբ Փափազեանի փախուստը լսեցին: Կը կարծէին թէ այսօր իսկ, թշնամին յարձակում պիտի գործէ իրենց վրայ, որով բոլորն ալ՝ զէնքերնին առած, աւելի հեռու տեղեր գացին եւ անտառներու մէջ պահուստեցան:

«Իսկ հող մնացող ժողովուրդն ալ, — կին, աղջիկ, երեխայ, — սկսան լալ: Ալ ի՞նչ ճար մնաց իրենց. մինչեւ հիմա, երբ հայ երիտասարդի մը ձեռքին մէջ հրացան մը տեսնէին, մեծ յոյսով կը լեցուէին՝ կարծելով թէ այդ հրացանով՝ իրենց կեանքը պիտի փրկուէր, սակայն հիմա այդ հրացանակիրներն ալ մէջտեղէն հեռացան՝ լքելով իրենց մայրերն ու քոյրերը:

«Իրրեւ արդիւնք այս յուսալքումին, բոլորն ալ փոխադրուեցան Ալվառինչի լեռը եւ աւելի հեռուներ. ոմանք ալ՝ քաղաքի մօտակայ Մոկուեքի եւ Տէրգեվանքի լեռներու կողմերը փախան» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 448-451) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Այս տխրագոյն եւ յուզիչ դրուագի համառօտ նկարագրութիւնը զրկած էինք յուշագիր Վահան Փափազեանին, 28 Յունուար 1955 թուակիր մեր ընդարձակ նամակով (թիւ հինգերորդ), որուն ի պատասխան, յուշագիր «պարոն»ը մեզի ուղղեց՝ զայրոյթով, ամբաստանութիւններով եւ անարդար վերագրումներով ծանրաբեռնեալ՝ 9 Փետրուար 1955 թուակիր՝ իր Հինգերորդ եւ վերջին նամակը, ուր կը գրէր.—

«Ձեր քաղուածները ինձի անյայտ մարդկանց յուշերէն, անհեթեթ են եւ չարամիտ. ո՛չ մէկը արդար է եւ ստոյգ: Հետաքրքիր են միայն այն տեսակէտէն թէ մարդիկ ո՛րքան քեթեամտօրէն եւ խղճի հանդարտութեամբ ԿՐՆԱՆ ԱՂԱԻԱՂԵԼ ԵՒ ՅԵՐԻԻՐԵԼ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՊՊԵՐԸ:

«Կարծեմ այլևս բաւական է ո՛րքան համբերութեամբ լսեցի ձեր յուշագիրներու ծիծաղելի եւ ՎՐԻՈՎԵՑՈՒՑԻՉ վերագրումները՝ իմ «բարբարոս, անգութ եւ հարազատներու դէմ զէնքով կանգնելու» դէպքերու զոտելի եւ շինծու պատմութիւնները լսելով»:

Ապա՛ մեզի կու տար հետեւեալ վերջնագիրը.—

«Կը ներէք որ աւելորդ համարեմ այլեւս մեր քղթակցութիւնը» (Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.) :

Այսպիսով ալ, վերջ կը տրուէր մեր թղթակցական յարաբերութեանց:

* * *

Ինչպէս որոշ կը տեսնուի այս քանի մը տողերէն, յուշագիր Վահան Փափազեան ունեցած է «վրդովմունքի» իսիստ տագնապեցուցիչ պահեր՝ կարգալով մեր յուշագիրներու յայտնութիւնները, որոնք բնականաբար, նորութիւններ ԶԷԻՆ իրեն համար, բայց ՆՈՐՈՒԹԻՒՆ ԵՆ Քանայ եւ Հաւատորկի լեռներու մէջ տիրող այս յոյժ ողբալի կացութեան կատարելապէս անտեղեակ ու անծանօթ՝ իր յուշերու բարեմիտ ընթերցողներուն համար:

Վահան Փափազեան, փոխանակ վիրաւորիչ, վարկաբեկիչ եւ անվայել այսպիսի որակումներով «ՊԱՏՈՒՆԵԼՈՒ» մեր յուշագիրները, լաւ ըրած պիտի ըլլար, եթէ ինք քիչ մը ԱԻԵԼԻ ԲԱՐՅԵՆԻՂՃ ԸԼ-

ԼԱՐ՝ Տարօնի իր ժամանակաշրջանի պատմութիւնը գրի առած ատեն, եւ աճարարական ձեռնածուքեամբ մը՝ չփորձէր խեղաթիւրել ու խաթարել Տարօնի հարադատ ու ճշմարիտ, բայց սիրտ մորմոքեցնող պատմութիւնը, հեթաթուհի սուտեր թխմելով անոր մէջ:

Իրեն ուղղած մեր ալ՝ ամենավերջին խիստ ընդարձակ նամակին մէջ (1 Մարտ 1955 թուակիր), ի միջի այլոց, իրեն կը գրէինք նաեւ հետեւեալ տողերը:—

«Համաձայն եմ ձեզի, երբ իմ յուշագիրներու ըրած յայտնութիւնները կը կոչէք «վրդովեցուցիչ», բայց՝ ԵՐԲԵՔ «ԾԻԾԱՂԵԼԻ»:

«Յիշեալ որակումներէն զատ, չէիք տատամսած նաեւ այդ յայտնութիւնները կոչելու «ԱՆՆԵԹԵԹ» եւ ՉԱՐԱՄԻՏ. ո՛չ մէկը արդար եւ ստոյգ»:

«Ձեր այս կերպ որակումներով, դժբախտաբար, չե՛ն սրբազուրկ կամ հերքուի որ ո՛չ ձեր գործած աղէտալի ու անաւար սխալները, եւ ո՛չ ալ՝ մեր յուշագիրներու յայտնաբերած անառակելիորէն ֆիշտ փաստերը:

«Այդ պիտի ըլլար ա՛յն ատեն միայն, երբ մեր ներկայացուցած փաստացի տուեալները փորձէիք հերքել նոյնքան փաստացի պատմական իրողութիւններով՝ վկայուած եւ հաստատուած, ձեզմէ զատ, նաեւ ուրիշ ականատես եւ ականջալուր վկաներու կողմէ ալ:

«Մեր ամբողջ թղթակցութեանց ընթացքին, ձեզի ներկայացուցի բազմաթիւ իրողութիւններ ու փաստեր, որոնք ո՛չ միայն կը հերքէին դիտումնաւոր խեղաթիւրումներով ծանրաբռնեալ ձեր յերիւրած «պատմութեան» իւրաքանչիւր դրուագը, ա՛յլ եւ ուղղակիօրէն եւ շեշտակիօրէն կ'ամբաստանէին զձեզ՝ իբրեւ բուն պատասխանատուն գործուած ամէն մէկ սխալին, եւ կ'ակնկալէի որ դուք ալ, ձեր կարգին, փորձէիք նոր փաստերով եւ յանելուածակամ բացատրութիւններով՝ աւելի պարզել իւրաքանչիւր դէպքի ներքին ծալքերը եւ արդարացնել ինքզինքնիդ, ներկայացնելով անառակելի նկատած ձեր հակափաստերը:

«Դուք չըրիք այդ բանը, որովհետեւ այդ տեսակ հակափաստ ՉՈՒՆԵԻՔ, ա՛յլ, ընդհակառակը, պատժ պատ բացատրութիւններով եւ խուսափողական մեկնութիւններով՝ ՈՒՋԵՑԻՔ ՍՔՕՂԵԼ իրակաճութիւնը եւ չբմեղացնել ինքզինքնիդ, եւ նոյն իսկ, 19 Յունուար 1955 թուակիր՝ ձեր Չորրորդ նամակով ալ կը կշտամբէիք զիս, ըսելով:

«— Ինձմէ հնարելու կամ բանաստեղծելու կարիք չունիմ» (Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.) [Բ.]:

«Այսքանը բաւական չհամարելէն զատ, կը համարձակէիք ամբաստանելու մեր յուշագիրները՝ իրենց ՉԳՈՐԾԱԾ «յանցանք»ներուն

համար, երբ ձեր վերջին նամակով կ'ընէիք հետեւեալ անբարեխիղճ վերադրումը անոնց հասցէին:—

«Ձեր քաղուածները ինձի անյայտ մարդկանց յուշերէն... Հետաքրքիր են միայն այն տեսակէտէն թէ մարդիկ ո՛րքան թեթեւամտութեամբ եւ խղճի հանդարտութեամբ՝ կրնան աղաւաղել եւ յերիւրել պատմական դէպքերը», արարք մը եւ պատիւ չբերող արարք մը, որով ԼԵՓ-ԼԵՑՈՒՆ ԵՆ ձեր յուշերու գոնէ Տարօնի պատմութեան վերաբերեալ մասին գրեթէ բոլոր էջերը — ամբողջ 136 էջ»:

Եւ մեր այս վերջին նամակին «Երկրորդ Յետ-Գրոյս»ին մէջ, համառոտ կերպով, փորձած էինք պաշտպանել յուշագատում Տէր Եղիշէ ՔՏՆՅ. Տէր Պարսամեանի «նկարագիրը»՝ յուշագիր բիւրոյականի անուպայ յարձակումներու եւ ամենապիղծ ամբաստանութեանց դէմ:

Այս կէտի մանրամասն քննութեամբ պիտի զբաղինք այս Մասըն Երկրորդի ԻՖ. Գլուխին մէջ:

* * *

[Ա.] «Պարոն» Վահան Փափազեանի խաղցած այս աչքկապուկ լարախաղացութիւններն ու նենգամիտ դաւադրութիւնները դալթակղեցուցած էին զիւղական առաջնորդներէն ոմանք, մասնաւորապէս անկուսակցական եւ զօրաւոր անհատականութիւն ունեցող անհատ ազգայիններ, որոնցմէ ամենէն ականաւորներէն՝ Ալիջան դիւղի բազմավաստակ զիւղապետ Յարութիւն Սարուխանեանը կամացուկ մը կը մօտենայ «պարոն» Փափազեանին եւ կ'արտասանէ հետեւեալ խօսքերը:—

«— Պարո՛ն, մենք, դաշտի եւ քաղաքի Հայերս, երկար տարիներէ ի վեր, մեր կեանքը, հարստութիւնը եւ պատիւը ի սպաս դրած էինք ազգին եւ ձեզպէսիներու ազատութեան համար: Ի՞նչ է պատճառը որ այս թշուառացած ժողովուրդին տէր ու պաշտպան չէք կանգնիր: Մենք շատ մը պատասխանատու գործիչներ տեսեր ենք անցեալին, բայց քեզի նման տմարդի եւ ստորին արարածի մը բնաւ չէինք հանդիպած: Այս ի՞նչ խաղեր է որ կը խաղաս այս դժբախտ ու թշուառ ժողովուրդի զխուն: Թէեւ քու հաշիւդ կարգադրելը դժուար գործ մը չէ՛ մեզի համար, սակայն մենք կը փափաքինք որ դու ողջ մնաս եւ ապագային ով որ մեզմէ ողջ մնայ, ընդհանուր հայ ազգի առջեւ՝ անարգանքի սիւնին գամել տայ քեզ:

«Ահա՛, ես իմ համազիւղացիներով՝ դաշտ կը մեկնիմ, մեռնելու դիտաւորութեամբ, որպէսզի անգամ մըն ալ երեսդ չտեսնեմ»: Յարութիւն Սարուխանեան՝ արժանաւոր շառաւիղը եւ միան-

զամայն նահապետը՝ Սարուխանեան նահապետական մեծահարուստ ղերդաստանին, բազմաշնորհ ձիրքերով օժտուած անհատականութիւն մըն էր, որ՝ հակառակ իր սահմանափակ ուսումին, կեանքի դպրոցը եւ երկարատեւ բանտարկութիւնը մշակած էին իր բնատուր ձիրքերը: Քաջ խօսող մըն էր, լաւ տրամաբանող, զրաւիչ անհատականութեան տէր, պատկառազու, կարող վարչագէտ եւ ճարպիկ դիւանագէտի շնորհներով օժտուած:

Ինք բնաւ յեղափոխական (Դաշնակցական) չէր եղած, բայց յեղափոխութեան պատճառով՝ երկար տարիներ բանտարկուած մնաց, մինչեւ Օսմանեան կեղծ Սահմանադրութիւնը: Հակառակ այդ հանգամանքին, սակայն, գիւղի յեղափոխական (կուսակցական-դաշնակցական) ազգայինները — Ալիջնայ Տիգրանը, Միսակը, Բատիկը, Եւայն, — ներքին խուլ պայքարի մէջ էին այս ականաւոր հայուն հետ եւ ի զուր կը ջանային նուազեցնել անոր հմայքն ու ազդեցութիւնը:

1915 Յունիս 28-ին, դաշտի համատարած կոտորածին օրը, Վարդավառի Կիրակին, Յարութիւն Սարուխանեան կը կազմակերպէ ու կը ղեկավարէ Ալիջնայ գիւղի կռիւր՝ մինչեւ երեկոյ, եւ մութը կոխելէն ետք, իր կողող ուժերով կը մեկնի Քան լեռը, ուր կը մնայ մինչեւ Յունիս 29:


Քանայ եւ Հաւատորիկի լեռներուն մէջ, ան ականատես կ'ըլլայ Վահան Փափաղեանի սարքած բոլոր դաւերուն ու դաւադրութիւններուն:

Այս ողբալի կացութեան ականատես Յարութիւն Սարուխանեան կը կշտամբէ «պարոն»ը՝ վերոյիշեալ բառերով, եւ նոյն գիշերն իսկ, իր համազիւղացի երեսուն զինեալ երիտասարդներով կը մեկնի Քան լեռնէն, կը կտրէ կ'անցնի Մշոյ դաշտը՝ դէպի Քոստուրայ լեռները, անկէ ալ, Բուլանքի միջով՝ դէպի Ռուսական բանակը, սակայն, դժբախտաբար, քրտարնակ Խըճըխ գիւղին քով, իր խումբը կը նըշմարուի քուրդերէն, որոնց հետ կռիւի կը բռնուի եւ մինչեւ վերջին դնդակը պայքարելէ ետք, բոլորն ալ կը նահատակուին, ինչպէս կը պատմէ Տարօնցի արժանահաւատ յուշագիր Միսակ Բդէեան («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 449):

* * *

[Բ.] «Բանաստեղծելու» կա'մ յերկրածոյ պատմութիւններ թիմելու մէջ մեծ վարպետութիւն յայտնաբերող յուշագիր Բիւրոյականը, պէտք է խոստովանիլ որ շատ բան «բանաստեղծեր» կամ յե-

րիւրեր է՝ իր յուշերու երեք ծանրափոր հատորները պարարտացնելու համար: Եւ հիմա՛, որ բացատրութիւն կամ լուսարանութիւն կ'ուզուի՝ ինչ ինչ մութ ու անիմաստ մնացած կէտերը, կա'մ անորոշ ու տարտամ բացատրութիւնները աւելի պարզ ու յստակ ընծայելու համար, յուշագիր «պարոն»ի «սերմայէ»ն հատած կ'երեւի, եւ «ինձմէ հնարելու կա'մ բանաստեղծելու» կարիք չի զգար եղեր այլեւս . . . :



Գ Լ ՈՒ Խ Ի .

**ՊԶՏԻԿ ԱՐԱՄ ՅԱԿՈԲԵԱՆԻ
ՅԱՆԴՈՒԳՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ԷՈՒԹԻՒՆԸ**

Ինչպէս տեսան մեր ընթերցողները՝ նախորդ գլուխներու ընդարձակ մէջբերումներէն, բացատրութիւններէն եւ մեկնաբանութիւններէն, Մուշ քաղաքացի քաջամարտիկ երիտասարդ Հայդուկ Արամ Յակոբեան, Պղտիկ մականուանեալ, — Սասունի 1904-ի կռիւն ատեն, մէկէ աւելի Արամներու մէջ ամենէն երիտասարդն ըլլալուն պատճառով՝ այդ փաղաքջական որակումով մկրտուած, — «պարոն» Վահան Փափազեանին կը ներկայացնէր խիստ յանդուգն առաջարկ մը՝ իրբեւ միակ Հնարաւոր միջոց, Քանայ եւ Հաւատորիկի լեռներու եւ անտառներու մէջ՝ ՍՏՈՅԳ, բայց դանդաղ մահուան(1) դատապարտուած այս յուսահատ, սովահար եւ ախտավարակ բեկորներու փրկութեան:

Մեր գլխաւոր յուշագիր Միսակ Բոզեան եւս կը խօսի այդպիսի յանդուգն ծրագրի մը մասին, որուն էութիւնը եւ ներկայացուցած կարելիութիւնները ա՛յնքան դեղեցիկ կերպով կը բացատրէ՝ հետեւեալ տողերով. —

«Քանի որ հինգ հարիւր զինեալ երիտասարդութիւն մը ունինք կազմ ու պատրաստ, քաղաքացի եւ դաշտեցի, եւ գիտենք որ երբ թշնամին մեծ ուժերով եւ ահագին խուժանով՝ յարձակում գործէ մեր վրայ, պիտի չկարողանանք երկար դիմանալ թնդանօթներու ոռմբերուն, եւ ի վերջոյ, բոլորս ալ պիտի ջարդուինք, որով՝ իրբեւ երկու չարեաց փոքրագոյն, առնենք ամբողջ ժողովուրդը, — այր, կին, երեխայ, — ով որ քայլելու կարողութիւն ունի (հիւանդ-

ներէն զատ), փորձենք քանի մը խումբերու բաժնել եւ ամէն մէկ խումբին՝ յիսունական զինեալ յատկացնել, եւ երեկոյեան մութը կոխածին պէս, ամէն մէկ խումբը՝ որոշեալ ճամբաներով առաջնորդել դէպի հիւսիս, Քոստուրայ լեռներու կիրճերը, եւ շարունակ յառաջանալ, մինչեւ որ հասնինք Ռուսական բանակը:

«Կը զգայինք որ յանդուգն ծրագիր մըն էր այս. գիտէինք որ ամբողջ ժողովուրդը պիտի չկարողանար ազատիլ. անպատճառ քուրդերէն յարձակում պիտի կրէր. թրքական գիծը ճեղքելով անցած ատեն՝ մեծ զոհեր պիտի տար. բայց, այնու ամենայնիւ, թերեւս մեծ մասը ազատէր:

«Եւ որչափ որ թուրքերը տարածայնած էին թէ Ռուսերը մինչեւ հին սահմանը նահանջած են, սակայն այս վերջին օրերը, Սոխոզում գիւղացի երկու Հայ կիներ, որոնք ինքզինքնին քրդուհի ձեւացնելով՝ քաղաք կ'երթեւեկէին, հոն գտնուող մեր արհեստաւոր տղաներէն իմացած էին որ ըստ թուրքերու ըսածին, Ռուսերը Մանազկերտի Բերդն են եւ Վանն ալ նորէն գրաւեր են եւ մինչեւ Արճէշ — Ալճաւազ հասեր են, որով յոյս կար որ շատերս ազատէինք:

«Կը յուսայինք զոնէ երիտասարդներու եւ պատանիներու մեծամասնութիւնը փրկել(2):

«Եւ այս հիման վրայ, դիմեցինք Փափազեանին:

«Արօ Շահրիկեան, իրբեւ խմբապետ, մեր այս ծրագիրը մանրամասնութեամբ հաղորդեր է անոր, սակայն Փափազեան կը պատասխանէ հետեւեալ բառերով. —

«— Տեսաք որ երեք անգամ սուրհանդակներ զրկեցի. անոնցմէ եւ ո՛չ մէկը վերադարձաւ. այդ կը նշանակէ թէ անոնք, բոլորն ալ, նահատակուած են: Այդ դացողները, բոլորն ալ, մեր առաջնակարգ հրացանակիր, զինավարժ տղաներն էին, որոնք չեն կարողացած ճողոպրիլ թշնամիի գնդակներէն եւ ետ դալ, ո՛ւր կը մնայ որ այսքան մեծ բազմութիւն մը, յիսունական զինեալ տղոց առաջնորդութեամբ, կարենայ ազատիլ: Ասանկ յանդուգն գործի ձեռնարկելը վեր է իմ ուժերէն: Ուզողները կրնան՝ իրենց յարմար նկատած ձեւերով, եր-

(1) Դանդաղ՝ այն պարզ պատճառով որ թուրք զինուորական իշխանութիւնը այլեւս հարկ չէր տեսներ փախստական հայու մը կեանքին վերջ տալ գնդակով մը, գոր կրնար միւս աւելի վտանգաւոր թշնամիին դէմ գործածել՝ աւելի դրական արդիւնքով մը: Հայ փախստականներու հաշուեյարդարի հոգը այլեւս թողած էր քուրդ ընչաքաղց աւարտուներուն:

(2) Հաւատարիկ գիւղի հոգեւոր հովիւ Պատուելի Միհրան Գ. Յակոբեան ալ նոյն տեսակէտը ունեցեր է, ըստ վկայութեան նոյն ինքն Վահան Փափազեանին, որ կը գրէ. —

«Պատուելի Գրիգոր (Միհրան Յակոբեան ըսել կ'ուզէ, Մնթ. Ա. Տ.) կ'առաջարկէր ամբողջ այդ գանգուածը շարժել դէպի Բալաքերտ կամ Ախլաք, ուր երեւի, կը գտնուի Ռուս բանակը» (« Իմ Յուշերը », Բ., էջ 369):

թալ: Թո՛ղ որ Ռուբէն, իր խումբով, հոս չեկած, ես այստեղէն մեկ-
նելու մտադրութիւն չունիմ՝ բնաւ:

«— Հապա՛, ժողովուրդը հոս պահելով՝ չե՞ ջարդուիր, —
կ'առարկենք:

«— Այո՛, հո՛ս, ասանկ բացօթեայ մնալով՝ կը ջարդուիր. ար-
դէն թշնամին այս կողմերն ալ պիտի գայ շուտով: Փափաքողը կրնայ
անցնիլ-երթալ, չուղղները կրնան աւելի հեռունները երթալ ու
պահուրտիլ, եւ երբ զօրք ու խուժան գան ու ոչ ոք գտնեն այս ան-
տառներու մէջ, պիտի ձգեն հեռանան. անշուշտ այս անտառներու
վրայ հսկելու համար պիտի չկենան հոս, երբ մարդ չգտնեն:

«Այս ծրագիրն ալ, այսպիսով ջուրն ինկաւ» («Հարազատ
Պատմութիւն Տարօնոյ», էջք 446-447) [Բոլոր ընդգծումները մերն
են, Ա. Տ.]:

Յուշագիր Միսակ Բղէեանի այս տարբերակը աւելի մանրա-
մասնօրէն եւ ճշգրիտ կերպով կը բացատրէ Պատիկ Արամ Յակոբեա-
նի առաջարկին էութիւնը:

Վահան Փափաղեանի մերժողական կտրուկ պատասխանին վը-
րայ, Պատիկ Արամ կ'առնէ-կը քալէ՝ իրեն համամիտ ու համակիր
խումբ մը երիտասարդներու հետ եւ կ'երթայ Ծծմակայ Քիթը, Քա-
նայ լեռան դէպի Մշոյ դաշտը դուրս ցցուած ժայռապատ յառաջա-
մասը, հո՛ն լրացնելու համար իր խումբին ընկերացողներուն թիւը
եւ տեսնելու անհրաժեշտ պատրաստութիւնները, որմէ յետոյ, երկ-
րորդ եւ վերջին անգամ ըլլալով, «պարոն» Փափաղեանին կը տեղե-
կացնէ իր վերջնական կարգադրութեանց եւ մեկնումի անդառնալի
որոշումի մասին, եւ կրկին անգամ կ'առաջարկէ անոր որ իր ծրա-
գիրին ընդառաջ երթալով, գործադրութեան դնէ զայն՝ ի փրկու-
թիւն բոլորին:

«Այդ ատեն, — կը շարունակէ մեր պատանի յուշագիր Երուանդ
Շարաֆեան, — Պատիկ Արամէն պատգամարեր մը եկաւ եւ Փափաղ-
եանին իմացուց որ Արամ եւ իր ութսուն հոգինոց խումբը, կէս զին-
ուած եւ կէս անզէն, կը սպասեն Ծծմակայ Քիթը. եթէ ուղենք, կըր-
նանք միանալ այդ խումբին. հակառակ պարագային, իրենք ճամբայ
պիտի իյնան այդ զիչերն իսկ:

«Վահան Փափաղեան նորէն մերժեց այդ առաջարկը՝ յայտա-
րարելով.

«— Թո՛ղ երթան՝ «Ձէյթուն Անկախ» երգելով, եւ հեզնանքով
ալ աւելցուց.

«— Բոլորդ ալ պիտի կոտորուիք. մէկ հոգի իսկ պիտի չազա-
տի ձեզմէ:

«Պատիկ Արամի խումբը մեկներ է նոյն զիչերն իսկ, եւ Բուլա-



ՊԶՏԻԿ ԱՐԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ

նըքի մէջէն անվնաս անցնելով՝ հասեր է Ռուսական բանակը» («Եր-
ուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռները», էջ 44), (3):

Ըստ յուշագիր Միսակ Բղէեանի պատումին, Պատիկ Արամ Յա-
կոբեանի այս խումբը ճամբայ կ'իյնայ Օգոստոս 2-ի երեկոյեան,
կը կտրէ կ'անցնի Քոստուրայ լեռները եւ Բուլանըքի գաւառը եւ ան-
վնաս ու ապահով կը հասնի Ռուսական բանակը Մանազկերտի Բեր-
դի մօտերը:

(3) Մեր աւագ յուշագիր Միսակ Բղէեան, լեռներու մէջ իր
քափառումներու ընթացքին, պատահաբար հանդիպելով Պատիկ Արա-
մի խումբին, Ծծմակայ Քիթի մօտերը, իր 14 տարեկան տղայ Գուր-
գէնին հետ կը միանայ այդ խումբին, որ կը բաղկանար 35 զինեալ
եւ 45 ալ անզէն երիտասարդներէ:

Գ Լ ՈՒ Խ Ի Ա .

**Ք Ն Ն Ա Կ Ա Ն Վ Ե Ր Լ ՈՒ Ծ ՈՒ Մ
Պ Զ Տ Ի Կ Ա Ր Ա Մ Յ Ա Կ ՈՒ Բ Ե Ա Ն Ի Ա Ռ Ա Զ Ա Ր Կ Ի Ն**

Ասկէ առաջ, զանազան առիթներով, մենք պատեհութիւն ունեցանք, մեր յուշագիրներէն մէջը բերումներ ընելով՝ ցոյց տալու այն եպերելի ու պախարակելի վարմունքը եւ ձախաւեր զործելակերպը, — խուսափողական, խափանարարական եւ ջլատիչ, — որոնք գլխաւոր յատկանիշները կը կազմէին Վահան Փափազեանի գործունէութեան եւ ղեկավարութեան, Հաւատորիկի եւ Քանայ լեռներուն եւ անտառներուն մէջ :

Որեւէ շինարար թելադրութիւն, որեւէ օգտակար առաջարկ, որեւէ գործնական քայլ, որոնք կ'ըլլային կա'մ կ'առնուէին մեր բարեմիտ եւ սրտցաւ երիտասարդներու կողմէ եւ կը միտէին սփոփանք բերելու լեռներու ծերպերուն մէջ, մուրթ անտառներու խորերը, կա'մ ապառաժներու շուքերուն տակ, եւ կա'մ խոնաւ ու ձմայ քարանձաւներու մէջ ծուարած այս անիծարախտ ժողովուրդի փախըստական բեկորներուն, կա'մ փրկութեան միջոց ծառայելու այդ սովալլուկ տառապեալներուն, եւ որոնք, սակայն, ամենավստահ ապահովութիւն չէին ներշնչեր Վահան Փափազեանի անձին, իր իսկ կաշիին փրկութիւնը երաշխաւորելու ՀԱՐԻԻՐ ՏՈԿՈՍՈՎ, միշտ կը բախէին անոր ՅԱՄԱՌ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ, ԲՈՒՌՆ ԴԺԿԱՄԱԿՈՒԹԵԱՆ, եւ կը մատուցէին ձախողութեան :

Փափազեան՝ իր սեփական աչքերով կը տեսնէր որ այդ սովահար եւ ախտավարակ ժողովրդական զանգուածները կը ծիրէին, կը հիւծէին, մոմի պէս կը հալէին, կը հատնէին ու կը սպառէին ամէն տեսակ տարափոխիկ հիւանդութիւններէ, քաղցէն եւ անազորոյն թշնամիներու հանապազօրեայ ասպատակումներէն՝ շարթէ շարթ, օրէ օր, ժամէ ժամ :

Ինք անզամ կը վկայէ այս խիստ անմխիթար կացութեան մասին, երբ կը գրէ .—

ա.— «Օրէ օր, ամէնքը ցան ու ցրիւ եղան. ամէն ոք ապաստան մը կարծեց գտնել ամայի լեռներու զազաթին, ձորերու եւ պուրակներու մէջ : 8-10 հոգիով մնացի այլեւս : Ժողովուրդը կը հալուէր

ամենօրեայ մասնակի ջարդերէ եւ հիւանդութիւններէ» («Իմ Յուշերը», Բ., էջ 380) :

բ.— «Քանայ լեռան եւ իր շղթաներու վրայ ապաստանած ժողովրդի բեկորները հազուագիւտ էին դարձեր. ո՞ր էին. կայի՞ն թէ բոլորը ջարդուած էին — Աստուած դիտէր» (նոյն, էջ 393) :

գ.— «Հետզհետէ լեռներէն անհետացան մեր բեկորները. շատերը անոնցմէ ցրուեցան կոտորածներուն դործօն մասնակցութիւն չունեցող Սասունցի ջրդական աշիրէթներու մէջ («Շեկօ Տուն», Բագրանցիներ, եւայլն) (նոյն, էջ 395) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ժողովրդական զանգուածներու անխուսափելի փճացումի, ու շրջապատի եւ անէացումի այս բոլոր կերպերուն ակնատես եւ քաջածանօթ ըլլալով հանդերձ, Վահան Փափազեան ԴԵՌԵՒՍ ԿԸ ԴԵՒԵԻԻՐ առնելու գործնական եւ վնասակար քայլեր, որովհետեւ, — ինչպէս որ նախապէս ալ յիշած ու կրկնած ենք՝ զանազան առիթներով, — ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ աւելի, ան ի նկատի ունէր իՐ ԻՍԿ ԱՆՁԻՆ ԱՄԵՆԱՎՍԱՀ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆՆԻ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ, եւ միշտ դժկամակ ու ժխտական վերաբերմունք ցոյց կու տար իրեն եղած բոլոր թելադրութիւններուն եւ առաջարկներուն հանդէպ, երբ անոնց մէջ ՁԻՐ ՏԵՄՆԵՐ իր անձին ամենավստահ եւ երաշխաւորեալ ապահովութեան եւ փրկութեան գրաւականը [Ա.] :

Ահա՛, միշտ այս ծայրայեղ գգուշաւորութեան հետեւանք էին Վահան Փափազեանի այն բոլոր եպերելի ու պախարակելի արարքները, որոնք սպառնալիքներով, խաբէութիւններով եւ ամօթալի դաւերով կ'արտայայտուէին միշտ — ստապատիր խոստումներով խաբելով՝ իրմէ հեռու պահել կամ հեռու զրկել «պարոն» շուրջն ու բոլորը խոնուած այդ բարեմիտ ժողովուրդը, եւ իր ընտրեալ սպառազէն փոքրաթիւ խումբով միայն՝ փրկութեան հետամուտ ըլլալ ԳԱՂՏԱԳՈՂԻ : Ու եթէ իր շուրջը ղեկերող անճար ժողովուրդը անսաստէր իր հրամանին, կա'մ յամառէր հետեւելու իր քայլերուն կամ հետքերուն, ԱՏՐՃԱՆԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՈՎ կամ ՀԱՐՈՒԱԾՆԵՐՈՎ՝ անոնց կանգ առնել կու տար :

«ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ՀԱՒԱՏՈՎ, բոլորը կը կարծէին որ մեզ ընկերանալով՝ աւելի հաւանականութիւններ կ'ունենան ազատելու», կը բարբառէ Բիւրոյական յուշագիրը (նոյն, էջ 395) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ո՛չ թէ «անհասկանելի», այլ շատ բնականօրէն եւ տրամաբանօրէն ՀԱՍԿԱՆԱԼԻ էին այդ անպաշտպան ու սարսափահար փախըստականներու այն հաւատքն ու համոզումը թէ «պարոն»ներու ՍՊԱ-

ՌԱԶԷՆ խումբին ընկերանալը ինքնին ԵՐԱՇԽԻՔ և ԳՐԱՒԱԿԱՆ ԷՐ իրենց ապահովութեան եւ փրկութեան :

Եթէ այսպիսի բարեմիտ, և այս պարագային՝ խիստ միամիտ հաւատն ու համոզումը չունենային անոնք՝ իրենց այդ «պարոն»ներու ամենակարողութեան, ամենիմաստութեան, համայնագիտութեան և մանաւանդ՝ անոնց ԱՆՍԽԱԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ վրայ, մինչև ամենավերջին րոպէն իսկ՝ իրենք ԿԱՌԶԱԾ ՊԻՏԻ ԶՄՆԱՅԻՆ այդ խարխլած նաւակի ԱՄԵՆԷՆ ԱՆՎՍՏԱՀԵԼԻ և ԳԵՐԱԴՐՈՐԷՆ ԳԱԻԱԴԻՐ նաւավարներու ֆղանցքներուն :

Հակառակ դաւադիր Փափազեանի և իրեն դաւակից Տիգրան Գաւառեանի (Լուրջի Տիգրան) նախապէս տուած ԳԱՂՏՆԻ ՈՐՈՇՈՒՄԻՆ թէ փոքրիկ խումբով պէտք է որ մեկնին, և ըստ այնմ ալ՝ պէտք է որ ԳԱՂՏՆՕՐԷՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԵՍՆԵՆ այդ ուղղութեամբ, ՅԱՆԿԱՐԾ. լիասիրտ առատանոցութեամբ մը, երկու դաւակիցները, — Վահան Փափազեան և Տիգրան Գաւառեան, — ի դիտութիւն աշխարհի, բարձրագոյն կը յայտարարեն որ ԱՄԲՈՂԶ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԵՏԵՐՆԻՆ ԱՌԱԾ՝ պիտի մեկնին զէպի Ռուսական բանակը, կամ, Վահան Փափազեանի բառերով. «Իմ պնդումին որ բոլորս մէկանց ճամբայ ելնենք» (նոյն, անդ) :

Ի լուր այսպիսի անակնկալ, զարմացնող և ապշեցուցիչ յայտարարութեան մը, իրենց շուրջն ու բոլորտիքը կը խոնուի հսկայ բազմութիւն մը, զոր կը փորձեն զրկել վար, լեբան ստորոտը, նախապէս իրենց որոշած հեռաւոր վայր մը (Ալվառինչ գիւղի դաշտը, ըստ յուշագիր Միսակ Բոզեանի վկայութեան. «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 450), ուր աճապարանքով փութացող ժողովուրդը, սրտատրոփ անձկութեամբ և անհամբեր կը սպասէ Ղեկավարներին ԳԱԼՈՒՆ, և երբ ասոնք կ'ուշանան և որոշեալ ժամուն՝ հոն չեն երեւնար, հող, լեբան ստորոտի այդ սպասման վայրի մէջ, անհամբեր սպասող բազմութիւնը կը կռահէ դարբնուած սաղրամքը, սարճուած դաւը, և նորէն կը վերագառնայ իր մեկնած վայրը, ուր խոնուած ժողովուրդէն կը տեղեկանայ «ճերմակ եագմայով մօրուքը կապելով՝ ծպտուելու» ամօթալի և եպերելի դաւին խիստ զգուշի պատմութիւնը, զոր մենք ներկայացուցինք արդէն, ասկէ առաջ (տեսնել այս Մասն Երկրորդի ԺԹ. Գլուխը) :

Այս ընդարձակ բացատրութիւններու և մեկնարանութեանց լոյսին տակ, անհիմն, անհիշտ ու անիմաստ պատմութիւն կը թուի ըլլալ վերոյիշեալ պարբերութեան յայտնութիւնը, զոր մեզի կը ներկայացնէ Բիւրոյական յուշագիր Վահան Փափազեան. —

«Իմ պնդումին որ բոլորս մէկանց նամբայ ելնենք, քանի որ վստահելի առաջնորդ ունէինք, մեր ընկերները ՈՉ ՄԷԿ ԿԵՐՊ ԶԷԱ-

ՀԱՄԱԶԱՅՆԵՑԱՆ» («Իմ Յուշերը», Բ., էջ 395) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Բիւրոյական երեսփոխանը, դիւանագիտական խիստ նարպիկ, մանուածապատ և լարախաղաց դարձուածքով մը, ՇԱՏ ԱՆՈՐՈՇ կը թողու վերոյիշեալ ԵՐԿԻՄԱՍՏ և միանգամայն ԱՆԻՄԱՍՏ նախադասութեան հետեւեալ երկու յոյժ կարեւոր կէտերուն ԻՄԱՍՏԸ. —

ա. — Ո՞ր ԸՆԿԵՐՆԵՐՆ ԷՒՆ որ չհամաձայնեցան, և

բ. — Ի՞նչ բանի ԶՀԱՄԱԶԱՅՆԵՑԱՆ :

Եթէ այս ԿԵՂԾ ու ԽԱՐԴԱԻԱՆՈՂ «բոլորս մէկանց նամբայ ելնենք» առաջարկին («պնդումին»)՝ ի խորոց սրտի ընդդիմացող մը, հակառակող մը կար, — ըստ նոյն ինքն Բիւրոյական յուշագիրին խոստովանութեան և հաւաստումին, — ան ալ, ամենէն առաջ, ինքն էր, Քանայ և Հաւատորիկի լեռներուն մէջ ծուարած մօտ երեսուն հազար տառապակոծ Հայութեան «փրկութեան» և «ապահովութեան» ջայլամային կեղծ փետուրներով՝ իր դաւադիր գլուխը պըճնաղարդել ջանացող, Վասպուրականի պատուարժան երեսփոխանը և Դաշնակցութեան Բիւրոյի արժանընտիր անդամը, Վահան Փափազեան, «որպէսզի մեծ բազմութիւն չհաւաքուի և այդպիսով դժուարանայ մեկնումը» (նոյն, անդ), և այդ պատճառաւ ալ՝ Գաւառեան Տիգրանը և մէկ քանի ա՛յլ ընկերներ, — որոնց մէջ բնականաբար ԿԱՐՆԱՆԻ ԻՆՔԸ, մեր արժանընտիր Բիւրոյական երեսփոխանը, — «խիստ գաղտնի կ'ուզէին պահել մեր մեկնումի պատրաստութիւնները» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ամէն պարագայի տակ, այդպիսի փրկարար առաջարկի մը ԶԷԻՆ ԿՐՆԱՐ ԸՆԴԴԻՄԱՆԱԼ կամ ՀԱԿԱՌԱԿԻԼ ո՛չ Արօ Շահրիկեան կամ Միսակ Բոզեան ու իրենց համախոհները, և ո՛չ ալ, մանաւանդ և մասնաւորապէս, Պղտիկ Արամ Յակոբեան, — ըստ վկայութեան՝ ականատես և լաւատեղեակ յուշագիր Երուանդ Շարաֆեանի, — որ՝ ԻՆՔՆ ԷՐ ՅՂԱՑԵՐ ու ԱՌԱՋԱՐԿԵՐ այդ յանդուզն ու արկածալից ծրագիրը, իրբեւ փրկութեան ՄԻԱԿ ՄԻՋՈՑԸ՝ Քանայ և Հաւատորիկի լեռներու Հայութեան տառապակոծ բեկորներուն, ինչպէս որ շատ պարզ ու յստակ ընծայեցինք ասկէ առաջ :

Ի՞նչ է, հապա, այս «վերջապէս»ը, որով կը սկսի — վերոյիշեալ խարդաւանող նախադասութեան անմիջապէս յետոյ, — Պղտիկ Արամ Յակոբեանի խումբին մեկնումի լուրը տուող նախադասութիւնը. —

«ՎԵՐՋԱՊԷՍ, մեզմէ ԽԻՍՏ ԴԺԳՈՀ՝ բաժնուեցաւ փոքր Արամը, քանի մը տասնեակ խլեակներով և իր երկու առաջնորդներով» (նոյն, էջ 395-396) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Այս «վերջապէս»ը, սիրելի՛ ընթերցողներ, Վահան Փափազեան



Կանգնած՝ Պզտիկ Արամ, աջ կողմը նստած՝ Երուանդ Շարափեան, իր քայրը եւ փեսան՝ Անուշ:

նի նենգ, խարդաւանող եւ մոլորեցնող գրիչին տակ, պարզապէս կը նշանակէ հետեւեալը.—

Երբ ինք, — Վահան Փափազեան, — ի վերուստ իջեալ Աստուածային շնորհօք, եւ լիասիրտ ու լիարուխ առատաձեռնութեամբ մը, ՅԱՆԿԱՐԾ տրամադիր, փափաքող, նոյնիսկ եւ մանաւանդ «ՊԸՆԴՈՂ» ալ կը դառնայ որ «բոլորս մէկանց ճամբայ ելնենք» (Sic!!!), «Մեր ընկերները ո՛չ մէկ կերպ ՉՀԱՄԱՁԱՅՆԵՑԱՆ» Բիւրոյական փուրիսիրտ (Sic!!!) ղեկավարի այս անակնկալ առաջարկին, եւ այդ «չհամաձայնողներու» պարագլուխ Պզտիկ Արամ Յակոբեանը, «ՄԵՁՄԷ ԵՒՍՏ ԴԺԳՈՂ», իր գլուխն առաւ-քալեց՝ «Իր քանի մը տասնեակ խլեակներով եւ իր երկու առաջնորդներով» (նոյն, անդ):

Այսինքն, տարբեր բացատրութեամբ, — ըստ Բիւրոյական յուշագրի հաւաստումին եւ պնդումին, — Պզտիկ Արամ Յակոբեան ՉԷՐ ՈՒՋԵՐ որ «բոլորս մէկանց ճամբայ ելնենք», եւ երբ ինք, Վահան Փափազեան, իր այդ «բոլորս մէկանց ճամբայ ելնենք»ի անակրկալ, անսպասելի, անհաւատալի եւ մեծապէս զարմացնող առաջարկը կը ներկայացնէ, Պզտիկ Արամ... «ԵՒՍՏ ԴԺԳՈՂ» այդպիսի անհաճոյ (!) առաջարկէ մը, կ'առնէ կը քալէ...

Մինչդեռ, պատուարժան երեսփոխանի ցոյց տուածին ՏՐԱՄԱԳԾՕՐԷՆ ՀԱԿԱՌԱԿՆ ԵՆ բացարձակ իրականութիւնն ու ճշմարտութիւնը, ինչպէս որ խիստ բացայայտ ըրինք քիչ վեր:

Եւ Պզտիկ Արամ Յակոբեան, իրապէս ու նշմարտապէս՝ ՉԸՁՈՒԱԾ այս բոլոր գաղտնածածուկ դաւերէն ու նեղամիտ դաւադիրներէն, իր ութսուն հոգինոց խումբով՝ առաւ-քալեց, առանց անգամ մըն ալ ետեւ նայելու [Բ.]:

Ահա՛ թէ ի՛նչպէս պէտք է գրուի պատմութիւնը, զոր «ո՛չ ոք իրաւունք ունի եղծելու» (Վահան Փափազեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 274) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.], բացի այդ բոլոր դաւադրութիւններն ու սադրանքները յղացող եւ զործադրել տուող, Բիւրոյական երեսփոխան Վահան Փափազեանը, նոյն Բիւրոյի Տարօնի պատասխանատու-ներկայացուցիչը եւ իր «սիրակցորդ» ընկերը, «ընտրելիներու ընտրելագոյն» Ռուբէն «փաշա»ն, եւ ասոնց լորձնաշուրթն թութակաբանները — Սասունցի Մուշեղ եւ Կարօ Սասունի:

* * *

[Ա.] Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բզէեան, իր յուշերու «վերջաբան»ին մէջ կը գրէ.—

«Վահան Փափազեան, կռիւի մարդ չըլլալով հանդերձ, իրբեւ Օսմանեան երեսփոխան, իրբեւ Դաշնակցական մեծ եւ անուանի գործիչ, որչափ որ խորամանկ, խորազէտ էր իր անձնական գործերուն մէջ, այդ խորամանկութիւնը միշտ ի շահ իր անձին գործածեց՝ ջարդերու միջոցին ալ: Բնաւ նկատի չունեցաւ ժողովուրդի փրկութիւնը: ԻՐ ՄԻԱԿ ՄՏԱՍԵՒԵՌՈՒՄՆ ԷՐ իր ընկերը, Ռուբէնն ալ ազատել եւ ՄԻԱՍԻՆ ՓԱԽԶԻԼ:

«Այս դաղափարը իրագործելու համար, պատճառ դարձաւ որ իր շուրջը բոլորած երեսուն հազարի մօտ հայութիւնը բնաջնջուէր» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 546) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* * *

[Բ.] Տարօնէն դէպի Ռուսական բանակը փախուստ տուող չորս խումբերէն ամենաստուար թիւը ունեցողն եղած է Պղտիկ Արամ Յակոբեանի խումբը — ութսուն հոգի, զոր «քանի մը տասնեակ խլեակներ» կը կոչէ Վահան Փափազեան («Իմ Յուշերը», Բ., էջ 395-396):

Ռուբէն-Փափազեան խումբը կը բաղկանար 32 (կամ 36) անձերէ, իսկ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի խումբին թիւն էր 15:

Սուրբ Կարապետի վանքի անտառէն կովկաս անցնողներու թիւը՝ յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան կը դնէ եօթանասուն հոգի («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջ 68):



Գ Լ ՈՒՒ Ի Բ .

ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ ՏԷՐ ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ «ՆԿԱՐԱԳԻՐԸ»

Երբ, 22 Դեկտեմբեր 1954 թուակիր մեր Զորքորդ Նամակով, Վահան Փափազեանին կը գրէինք Տարօնցի յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի մէկ յայտնութեան մասին, որուն համաձայն, Վահան Փափազեան, յանդուզն պատանի հերոս Լեւոն Ղազիկեանի ձեռքէն հլեկով կեանքի գինով ձեռք բերած հրացանը, ԿԸ ՅԱՆՁՆԵՐ ԲՈՒՐԳԻ Մը, անկէ «իւղ ու մեղր» ստանալու ակնկալութեամբ, յուշագիր Վահան Փափազեան, այս յայտնութեանն սրդոզած, Տէր Եղիշէի հասցէին ԿԸ ՇՈՒՅԼԵՐ, կամ՝ աւելի ճիշտ, անոր երեսին կը շարտէր հետեւեալ «փաղաքշական» ամբաստանութիւնը. —

«— Տէր Եղիշէն ամծամօք մը չէ՛ ինձի, ԼԱԻ ՆԿԱՐԱԳԻՐ ԶՈՒՆԵՑՈՂ ՄԷԿՆ ԷՐ» (Վահան Փափազեանի Զորքորդ Նամակը, 19 Յունուար 1955 թուակիր) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Մեր պատասխանի (Հինգերորդ Նամակ, 28 Յունուար 1955 թուակիր) «Յետ Գրոյս»ին մէջ, կը գրէինք իրեն. —

«Տէր Եղիշէի նկարագրի մասին՝ ձեր ըրած անհաճոյ ակնարկութեան վերաբերեալ՝ պիտի գրեմ ուրիշ յարմար առիթով»:

Յուշագիր «պարոն»ին տուած մեր այս յոյժ գգուշաւոր պատասխանը ա՛յն պարզ պատճառով էր որ մեր ընելիք պաշտպանողականը հիՍՏ ԱՆՀԱՃՈՅ ՊԻՏԻ ԹՈՒԷՐ ԻՐԵՆ Եւ Հաւանարար՝ պատճառ դառնար մեր թղթակցութեանց ընդհատումին եւ մեր յարաբերութեանց հաջողութիւն, բան մը, որուն բնաւ երբեք չէինք փափաքեր՝ ՈՐԵԻԷ ԳԻՆՈՎ:

Սակայն, մեր ամենավերջին նամակի «Երկրորդ Յետ Գրոյս»ին մէջ, որ ատեն այլեւս մեր այդ վերապահութեան եւ գգուշաւորութեան վախը փարատած էր, իրեն համառօտակի գրեցինք հետեւեալ տողերը. —

«Բ. Յետ Գրոյս. — Տէր Եղիշէ Քահանայի նկարագրի մասին՝ ձեր անճառ եւ անարդար արտայայտութիւնը ո՛չ մէկ ատեն պատիւ չի բերեր ձեր վարկին եւ ո՛չ ալ քաւել կու տայ ձեր անասելի մեղքերն ու յանցանքները:

«Տէր Եղիշէն եղած է կիսա-գրագէտ քահանայ մը, ինչպէս որ

սովորաբար էին քահանաները՝ Թրքա-Հայաստանի այդ խուլ անկիւններուն մէջ, բայց, ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ աւելի, ան եղած է համարձակախօս եւ նշմարտախօս անձ մը, եւ չէ՛ քաշուած՝ ամենակարող(?) «չէՓ»երուն եւ «պարոն»ներուն ընդդիմախօսելէ եւ անոնց դէմ պայքարելէ, յանձն առնելով նոյն իսկ աստակուի «պարոն» Ռուբէնի կողմէն, երբ, իբրեւ Տարօնի Ազգային Առաջնորդական Փոխանորդ, ընդդիմախօսեր էր անոր՝ կանգնած իր պարտականութեան գլուխը:

«Ռուբէնի այս կոպիտ եւ վայրենի արարքին պատճառով ալ, Առաջնորդարանի դռները ամուր մը դոցուեցան իր առջեւ՝ իբրեւ պատիժ իր անվայել եւ անուղղայ ընթացքին»:

Հո՛ս կը փափաքինք մանրակրկիտ քննութեան առարկայ դարձընել Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի յուշերուն եւ իր «նկարագիր»ին հետ կապ ու առնչութիւն ունեցող բոլոր խնդիրները եւ ցցուն կերպով ի յայտ բերել յուշագիր Վահան Փափազեանի ըրած ծանրակշիռ ու վարկարեկիչ ամբաստանութեան իսկական արժէքը:

Ինչո՞ւ համար է, սակայն, Թրքական օրէնսդիր գերագոյն մարմինի անդամ, մեր պատուարժան երեսփոխան յուշագրի այս անուպայ ցեխարձակումը՝ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի երեսին եւ անոր «նկարագիր»ին դէմ:

Ի՞նչ ըսած կամ ըրած է Տարօնցի այս հոգեւորականը, որ թէ՛ Մուշ քաղաքի եռօրեայ անհաւասար դատեմարտի ընթացքին՝ հո՛ն ներկայ գտնուած եւ ակամատես եղած է քաղաքի գերմարդկային ոգորումներուն, թէ՛ Սասունի ամենավերջին գոյամարտին ներկայ գտնուած եւ ակամատես եղած է ամէն մէկ աղեղարչ տեսարանի, ամէն մէկ հերոսական դրուագի եւ պատահարի, եւ թէ՛, մանաւանդ եւ մասնաւորապէս, Հաւատորիկի եւ Քանայ լեռներու մէջ՝ ներկայ գտնուած եւ ակամատես եղած է «պարոն» Վահան Փափազեանի անփառունակ առաջնորդութեան, ապիկար ղեկավարութեան եւ անոր սարքած բոլոր դաւերուն ու դաւադրութիւններուն...:

Միակ «յանցանքը», զոր Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնեայ այս յուշապատում Տարօնցին «գործած է», այն պարզ ու բացայայտ իրողութիւնն է որ ան, Տարօնցի այս յանդուզն հոգեւորականը, անվախ ու անկաշկանդ կերպով, ԸՍԱԾ ՌԻ ՊԱՏՄԱԾ է՝ ինչ որ տեսած է իր իսկ սեփական աչքերով, եւ ինչ որ լսած է՝ իր իսկ սեփական ականջներով:



ՏԵՐ ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Եւ այս պարզ ու մէկին պատճառով ալ, այդ նշմարտախօս ու համարձակախօս հոգեւորականը «ԼԱԻ ՆԿԱՐԱԳԻՐ ԶՈՒՆԵՑՈՂ ՄԷԿՆ Է» եղեր:

Բայց, վերջապէս, ի՞նչ է եղեր այս սքեմաւոր Տարօնցի գործած ահռելի ու անբաւելի «յանցանքը», որուն համար՝ Վահան Փափազեան, առանց ամենադոյն խղճահարութեան, «լաւ նկարագիր չունեցող» կը կոչէ զայն:

Մեր Չորրորդ (22 Դեկտեմբեր 1954 թուակիր) նամակէն եւ անկէ յետոյ մեր տուած բացատրութիւններէն, մեր յարգելի ընթերցողները տեղեկացան որ պատանի հերոս Լեւոն Ղազիկեան ի՞նչ պէս — իր մատղաշ կեանքը զոհարեւելու գինով — տիրացաւ սպառազէն հսկայ ջուրդի մը հրացանին ու դաշոյնին՝ Դամբէլի եւ Պիրզինի Չորին մէջ, եւ այդ անհատական փառաւոր յաղթանակէն յետոյ, հերոս Լեւոն Ղազիկեան միշտ սպառազէն կը պտտէր Քանայ եւ Հաւատորիկի լեռներուն մէջ, եւ ամենավտանգաւոր դիրքերու պահակութիւնն ու պաշտպանութիւնը ինք կը ստանձնէր սիրայօժար, մինչեւ որ ԶԱՐ ՕՐ ՄԸ, Վահան Փափազեան անոր ձեռքէն «ԿԸ ԽԼԷ» սեփական արիւն-ջրտինքով եւ իր մատղաշ կեանքը զոհարեւելու գինով՝ ձեռք բերուած հրացանը (Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, «Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջ 121) եւ ԿԸ ՅԱՆՁՆԷ ՔՈՒՐԴԵՐՈՒՆ, փոխարէն ստանալով «ԿՏՈՐ ՄԸ ԱՐՆՈՏ ՀԱՑ» («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ

47) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :


Մեր յարգելի ընթերցողները արդէն ծանօթ են այս դառն ու տխուր պատմութեան ամենայնոք մանրամասնութիւններուն իսկ, եւ զիտեն նաեւ յուշագիր Վահան Փափազեանի տուած պատասխանը եւ «բացատրութիւնը», որոնք որեւէ կերպով՝ նոր լոյս մը ՉՍՓՌԵՑԻՆ յուշապատում Տէր Եղիշէ Քհնյ. Տէր Պարսամեանի ու Երուանդ Շարաֆեանի ներկայացուցած պատմութիւններուն վրայ՝ աւելի լուսաբանելով, պարզաբանելով կա՛մ հերքելով զանոնք :

Վահան Փափազեանի պատասխանն եղաւ պարզ ուրացում եւ հայեցողութիւն : Եւ ուրացումով կամ հայհոյութեամբ, զիտենք որ, պատմական իրողութիւնները ո՛չ կը հերքուին եւ ո՛չ ալ փոփոխութեան կ'ենթարկուին եւ կա՛մ կը սրբազրուին :

Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի յուշամատեան գրքերը, իր հիմնական բովանդակութեամբ եւ ներկայացուցած պատմութիւնով, ԳՐԵԹԷ ԱՆԱՐԺԷՔ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾ ՄԸՆ Է : Յիշեալ գրքերը՝ այդ անփառունակ վիճակին վերաբերեալ Ֆրեզնոյի «Ասպարէզ» դաշնակցական թերթի տպարանին մէջ, 1920 թուականին :

Շա՛տ լաւ կը յիշենք, երբ յուշապատում Տէր Հայրը, իր կենդանի բարբառով, եւ ձեռքի ու ոտքի ջղայնոտ շարժումներով, որ ատեն իր բառամթերքը անգոր կ'ըլլար, շատ անգամ, արտայայտելու իր խոհերը, յուզումները եւ մտածումները, ա՛յնքան պերճորէն եւ ա՛յնքան հարազատօրէն կը նկարագրէր որեւէ դէպք կամ դրուագ՝ իր յուշերը պատմած ատեն, զոր՝ այժմ հանդուցեալ հայրենակից Միսակ Նալբանդեան (հետագային՝ Ոորէն Քահանայ Մամիկոնեան) դրի կ'առնէր, որ իր ունկնդիրը կը կարծէր թէ ինք ալ հո՛ն կը զըտնուէր, յուշապատում քահանայի հետ եւ անոր կողքին, ու ականատես կ'ըլլար նկարագրուած իւրաքանչիւր դրուագի ամենայնոք մանրամասնութիւններուն :

Ա՛ն, շատ վառ եւ կենդանի գոյներով եւ բոցաշունչ բառերով կը նկարագրէր, օրինակի համար, Մուշ քաղաքի եւ Երեւանի անհաւասար գոտեմարտը եւ մեր քաջակորով բուռ մը երիտասարդներու հերոսական զինադրութիւնը՝ թրքական չորս թնդանօթներուն եւ քաղաքը պաշարող թուրք զինուորներուն եւ թրքօ-քուրդ վայրագ խուժանին : Սասունարնակ դիւցազն հայդուկներու գերմարդկային ոգորումները՝ թրքական թնդանօթներու, զինուորներու եւ թրքօ-քուրդ կատաղի խուժանին դէմ : Սասունի հայկական ուժերու հրամանատար, «ընտրելիներու ընտրելագոյն» Ռուբէնի ԴԱՍԱԼԻՔ ՓԱՅՈՒՍՏԸ եւ ԱՆԱԿՆԿԱԼ ԱՆՅԱՅՏԱՑՈՒՄԸ՝ Անդոկ լեռան գազաթի իր բանակատեղիէն, վատօրէն թՈՂԼՔԵԼՈՎ հայկական մարտնչող ուժերու հը-



Տէ՛ր ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ (Նախկին Սիսակ Նալբանդեան)

րամանատարի եւ ղեկավարի իր նուիրական պաշտօնն ու պարտականութիւնը՝ ի խնդիր իր ոգորմելի կաշիին փրկութեան : յետոյ ալ՝ Հաւատորիկի եւ Քանայ լեռներու մէջ, Վահան Փափազեանի սարքած, իր անունին, զիրքին եւ ստանձնած պարտականութեանց ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ ԱՆՎԱՅԵԼ՝ բոլոր դաւերն ու դաւադրութիւնները, եւայլն, եւայլն :

Այս բոլոր դրուագները՝ գլխաւոր եւ կարեւոր մասերը ԿԸ ԿԱԶՄԵՒՆ յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի այդ ՅՈՅԺ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ՝ անոր ձեռագիրը (եւ ՄԷԿ ՕՐԻՆԱԿ ՁԵՌԱԳԻՐԸ՝ դժբախտաբար) Ֆրեզնոյի «Ասպարէզ» թերթի տպարանին յանձնուելէն ԱՌԱՋ :

Եւ այդ յուշերը, Դաշնակցութեան Ֆրեզնոյի այդ հնոցէն ԴՈՒՐՍ ԳԱԼԷՆ ՅԵՏՈՅ, ստացան այն ձեւն ու բովանդակութիւնը, զոր մենք ունինք ՀԻՄԱ :

Այս անփառունակ, ապօրէն եւ անպատիւ զեղծարարութեան մասին, Ամերիկահայ յայտնի մտաւորական եւ հասարակական գործիչ, հանդուցեալ Սահակ Զթչեան, անձնական վկայութեամբ, ի միջի այլոց, կ'ընէ նաեւ հետեւեալ խիստ յատկանշական յայտնութիւնները :—

«Ֆրեզնո հասնելուց յետոյ, ներկայացայ ընկերներին (1920 Սեպտեմբերին), որոնք ինձ սիրով ընդունեցին եւ առաջնորդեցին «Ասպարէզ»ի խմբադրատունը, ուր հանդիպեցի ընկերներ Գապատայեանին եւ Չարչաֆլեանին: Սեղանի վրայ շարուած տեսայ մի դէպ զրքեր, որոնք տպարանից նոր էին դուրս բերուել: Երբ հարց տուի թէ սրանք ի՞նչ զրքեր են, ընկեր Գապատայեանը պատասխանեց որ դրանք Տէր Եղիշէ Քահանայի յուշերն են՝ Սասունի եւ Տարօնի դէպքերի մասին: Իսկ Չարչաֆլեանը (որ այժմ ողջ է) յայտնեց. —

«— Ընկեր Չթչեան, երեսուն-քառասուն էջ կտրատել եւ դուրս եմք ձգել: Տէրտէրը Դաշնակցութեան վերաբերմամբ ՇԱՏ ՎԱՐԿԱՐԵԿԻՉ ԽՕՄՔԵՆՐ ՈՒՆԻ: Նրա ասելով, Դաշնակցութիւնը՝ Տարօնի Հայ գիւղացիների գեմֆերը հաւաքել է — ԶԻՆԱԹԱՓ է ԱՐԵԼ Հայ ժողովուրդին, — եւ Ռուբէնի հետ ուղարկել է Սասուն [Ա.]:

«Սասունում, Ռուբէնը մի խումբ ընկերներով, մի երկու-երեք շաբաթ(1) կուրելուց յետոյ, ժողովրդին ԼՔԵԼ ու ՓԱԵԵԼ — ԹԱՔՆՈՒՆԵԼ է մացառներում, սպառնալով խփել բոլորին, եթէ իր ետեւից դային: Եւ գիտէ՞ք, — աւելացնում էր Չարչաֆլեանը, — ահագին դժուարութիւն ունեցանք, մինչեւ որ Տէր Եղիշէին ԸՆԴՈՒՆԵԼ ՏՈՒՆՔԻՄ մեր տեսակէտը: Եւ ճշմարտութիւնը պատմելուն համար, խեղճին անուանում էին ծուռ տէրտէր...» (Սահակ Չթչեան, «Տարօնական» երկու յոդուածներ, «Պայքար» օրաթերթ, 17-18 Դեկտեմբեր 1952) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Այս առիթով, աւելցնենք նաեւ որ երբ յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան Պոլիս վերադարձաւ Ամերիկայէն, 1920-ի վերջերը, ու իր հրատարակած յուշերէն օրինակ մը նուիրեց մեզի, արցունքոտ աչքերով, դառն կսկիծով եւ մեծ յուզումով կը պատմէր «այդ անպիտաններու» ըրած խարդախութիւններու, զեղծարարութիւններու եւ չարափոխութեանց մասին:

«— Նայէ՛, Աղա՛ն, տե՛ս թէ ի՞նչպէս աղաւաղեր ու չարափոխեր են իմ պատմածները», — կը զանդատէր դառնազին [Բ.]:

Այս անօրինակ, անպարկեշտ ու անպատիւ խարդախումներու եւ չարափոխութեանց մասին՝ դեռ ունիմք մեր ըսելիքները, երբ մանրակրկիտ կերպով քննութեան եւ քննադատութեան առարկայ դարձրենք Սասունի 1915-ի անփառունակ գոյամարտի խիստ յուզիչ եւ յոյժ սրտաճմլիկ ողբերգութեան դառն ու տխուր պատմութիւնը...:

(1) Ո՛չ թէ «Մի երկու-երեք շաբաթ», այլ միայն ու միմիայն «Մի ԵՐԵՔ ՕՐ»:

* * *

Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, — ինչպէս որ գրած էինք բերրոյական յուշագիր Վահան Փափազեանին (28 Յունուար 1955 թուակիր՝ մեր հինգերորդ նամակով), եւ ինչպէս որ յայտնեցինք նաեւ այս գլուխին սկիզբն ալ, — եղած է զաւատական կիսազրագէտ անձ մը՝ հազիւ թաղային ծխական պարզ նախակրթարանի մը երեսը տեսած, ինչպէս որ սովորաբար էին քահանաները եւ ուսուցիչները (վարժապետ), Թրքա-Հայաստանի այդ խուլ անկիւններուն մէջ:

Բայց, բոլոր անոնք որ Տէր Եղիշէ Քահանան կը ճանչնային դեռ իր երիտասարդ տարիքէն, այդ նոյն ծաղկոց-նախակրթարանին հրակիչ-ուսուցիչ (վարժապետ) եղած ատեն եւ անկէ յետոյ ալ, կրնան ձեռքերնին սրտերնուն վրայ դնելով, խղճի կատարեալ հանդարտութեամբ ու խաղաղութեամբ, ԵՐԴՈՒՆԵԼ ու ՎԿԱՅԵԼ որ ան ՄԻՇՏ ԵՂԱՄ է անվախ, քաջ, համարձակախօս եւ մանաւանդ ճՇՄԱՐ ՏԱԽՕՍ ԱՆՁ ՄԸ:

Անյողողող նկարագրի եւ բարոյական ազնուագոյն ըմբռնումի այս չորս ՏԻՐԱԿԱՆ ԳԻԾԵՐԸ՝ աւելի ցայտուն կերպով երեւան կու գան անոր մէջ, երբ զինք կը գտնենք ընդդիմադիրի եւ պայքարողի դիրքին մէջ՝ ԸՆԴՈՒՆԵԼ ամենակարող, ամենագէտ եւ անխալալկան «համալսարանական»ի բարեմասնութիւններով սոնքացող «պարոն» Ռուբէնին, յանձն առնելով նոյնիսկ ԱՊՏԱԿՈՒԻԼ ԱՆԿԷ, Տարօնի Ազգային Առաջնորդարանի մէջ, երբ ինք, իբրեւ Առաջնորդական Փոխանորդ, ընդդիմացեր է այդ հովկուլ «պարոն»ին, իբրեւ «հովիւ քաջ», կանգնած իր նուիրական պարտականութեան գլուխը...:

Ինչպէս որ յիշուեցաւ ասկէ առաջ ալ, Ռուբէնի այս կոպիտ եւ վայրենարարոյ արարքը մեծ յուզում եւ իրարանցում յառաջ բերած էր Տարօնի Ազգային Առաջնորդարանի շրջանակին մէջ, եւ օրուան վարչութիւնը ամենաթունդ կերպով բողոքած՝ Ռուբէնի այս սոմարդի եւ անվայել արարքին դէմ, եւ իբրեւ պատիժ՝ պահանջած որ «համալսարանական»ի տիտղոսով սոնքացող այդ ունայնամիտ եւ մեծամոլ «պարոն»ի մուտքը արգելուէր Ազգային Առաջնորդարանի շրջանակէն ներս...:

* * *

[Ա.] Եթէ այն ատեն այս Դաշնակցական պարոնները կը դրժկամակէին հաւատալու Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի այս մերկացումներուն՝ զանոնք նկատելով չարախօսութիւն կամ զրպարտութիւն, ՀԻՄԱ ի՞նչ կը խորհին, արդեօք, Բիւրոյական յուշագիր Վահան Փափազեանի խիստ բացայայտ մերկացումներու եւ մեղադրանք-

ներու մասին, որոնք, հարիւր տոկոսով, ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ ու ԿԸ ՎԱ-
ԻԵՐԱՑՆԵՆ Տէր Եղիշէ Քաճանայի յայտնութիւնները:

Վաճան Փափազեանի այս մերկացումներու եւ մեղադրանքնե-
րու մասին՝ կարգալ անոր յուշերու Երկրորդ Հատորը, էջը
321, 343, 344, 359, 360, 365 եւ 378, ինչպէս նաեւ մեր այս «Տա-
րօնապատում»ի Մասն Առաջինի Գ. եւ ԺԲ. Գլուխները:

* * *

[Բ.] Մենք ալ, աւելի ետք, պատեհութիւն ունեցանք, Ֆրեդ-
նոյի մէջ, քանի մը անգամ տեսնուելու այժմ հանդուցեալ Թովմաս
Չարչաֆջեանի հետ եւ խօսելու Տէր Եղիշէ Քաճանայի յուշերու խար-
դախումի եւ չարափոխութեանց մասին՝ իրեն հաղորդելով հանդուց-
եալ Տէր Հօր կսկիծն ու դայրոյթը, այդ անօրինակ կեղծարարութեան
մասին:

Չարչաֆջեան, ալեւոր ծերունիի մը վայել բարեմիտ նայուած-
քով մը, կը ջանար մեզ եւս համոզել որ վերջապէս պէտք է ընդունիլ
թէ այդ տեսակ աննպաստ եւ յոյժ վարկաբեկիչ յուշագրութիւն մը
ԶԷՐ ԿՐՆԱՐ նոյնուքեամբ լոյս տեսնել Դաշնակցական տպարանէ մը:

Եւ որովհետեւ, այդ յուշագրութիւնը ՄԻԱՑՆ ՈՒ ՄԻՄԻԱՑՆ՝
Դաշնակցական տպարանէ մը կրնար լոյս ընծայուիլ (Տարօն-Տու-
րուբերան Հայրենակցական Միութիւնը եւ Մշեցի Հայրենակիցները
ստանձնած էին անոր հրատարակութեան ծախքը), Դաշնակցական
խմբագիրները յաջողած են ձՆՇՈՒՄ ԲԱՆԵՑՆԵԼ Տէր Հօր վրայ եւ
ԱՆՈՐ ԸՆԴՈՒՆԻԼ ՏԱԼ իրենց առաջարկած «բարեփոխութիւնները»
(չարափոխութիւնները), «կրճատումները» (յապաւումները) եւ «յա-
ւելումները» (յերիւրանքները), օրինակ, Ռուբէնի «Խօսած հրաժեշտի
ֆառը», Անդոկ լերան գաղաթին վրայ, Սասունի ողբերգական դոյա-
մարտի հրամանատարութեան իր պաշտօնն ու պարտականութիւնը
ՈՒՐԱՆԱԼԷՆ, ԹՈՂԼՔԵԼԷՆ եւ ԴԱՍԱԼԻՔ ՓԱԽՈՒՍՏԻ ԴԻՄԵԼԷՆ Ա-
ՌԱԶ....:



Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

ՔԱՆԱՅ ԼԵՐԱՆ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ

Յունիս 28-ի Մշոյ Դաշտի հոծ Հայութեան համատարած կո-
տորածէն ճողոպրած էր առաւելապէս սարատակի դիւղերու բնակ-
չութեան մէկ կարեւոր տոկոսը, որ ապաստանած էր Ալվառինչ,
Սասգիւղ, Բերդակ եւ Հաւատորիկ գիւղերու անտառները եւ Քանայ
լեռները:

Այս փախստականներէն շատերը կարողացած էին իրենց հետ
տանիլ նաեւ իրենց անասուններու մեծազոյն մասը, մասնաւորապէս
ոչխարներու հօտերը:

Ինչպէս յիշուեցաւ նախապէս ալ, մեր բոլոր յուշագիրները՝
այս փախստական հայերու թիւը կը հաշուեն մօտաւորապէս 25-30
հազար անձեր, մեծ մասամբ կիներ ու երեխաներ:

Վաճան Փափազեան, Յուլիս Մէկին, Սասունէն վերադարձած
էր Հաւատորիկ գիւղը՝ այս փախստականներու իբրեւ թէ «ապահո-
վութեան», «փրկութեան» եւ «պարենաւորման» մտահոգութիւննե-
րով ծանրաբեռնեալ: Յուլիս 8-ին, ուրիշ շատերու հետ, Հաւատո-
րիկի լեռներէն անցած էր Քանայ լեռները, ուր կարգադրութիւններ
կ'ընէ այդ հոծ բազմութիւնը փոխադրել տալու Սասուն՝ այն ենթա-
դրութեամբ թէ թրքական եւ քրդական զինեալ ուժերն ու չեթէները
հաւանաբար փորձեն յարձակումներ դործել այդ անդէն, անպաշտ-
պան եւ սարսափահար փախստականներու վրայ եւ նոր զոհեր պատ-
ճառեն անոնց:

Եւ հրահանգ կը տրուի բոլորին որ պատրաստութիւններ տես-
նեն Սասուն մեկնելու:

Փախստականները, Սասունի անունը լսածին պէս, կ'ուրախա-
նան, կ'ողեւորուին, մեծ յոյսերով կը լեցուին, իբրեւ թէ հոն փո-
խադրուելով՝ այլեւս զերծ պիտի մնան թրքօ-քուրդ յարձակումներէն
եւ անոնց պատճառած մշտատեւ սարսափներէն:

Եւ առաջին յորձանքը փութկոտներու, որոնց մէջ մեծ թիւ կը
կազմէին կոյրեր, կաղեր, հաշմանդամներ, շարան շարան կը սկսին
յառաջանալ դէպի Հաւատորիկի անտառները, անկէ ալ՝ երկու հա-

րիւրական խումբերով, ճամբայ կ'իյնան դէպի Սասուն, զինեալ երիտասարդներու հսկողութեան տակ :

Ասիկա նախափորձ ձեռնարկ մըն էր՝ ստուգելու համար թէ այս նոր գաղթաշարժը ի՞նչ աստիճան ապահով եւ գործնական քայլ մը պիտի ըլլար : Եթէ ան ակնկալուած յաջողութեամբ պսակուէր, այն ատեն պիտի շարունակուէր այս նոր տեղափոխութիւնը մինչեւ վերջ :

Դժբախտաբար, սակայն, այս առաջին երկու խումբերը կը պաշարուին թրջական զօրքերէն՝ Սասունի Քոփ եւ Կեարմաւ գիւղերը դեռ չհասած, եւ անոնց մեծագոյն մասը կը կոտորուի անխնայ :

Այսպիսի տեղափոխուողներու ուրիշ խումբ մը, Տարօնցի յուշապատում Տէր Եղիշէ Քհնյ. Տէր Պարսամեանի ընկերակցութեամբ, կը փորձէ ուրիշ ճամբայ մը եւ Սասունի Շենիկ-Սեմալ գիւղերը կը հասնի անվտանգ ու անվնաս :

Այս ճամբորդութեան մասին հետեւեալ տողերը կը կարդանք Տէր Եղիշէ Քահանայի յուշերուն մէջ.—

«Մեկնող ժողովուրդը, Հաւատորիկի մէջ երեք օր մնալէն վերջ, որ ատեն տեղի կ'ունենան անվերջ բանակցութիւններ Հաւատորիկի եւ Սասունի միջեւ, վերջապէս ճամբայ կ'իյնայ, եւ քանի մը տասնեակ զինուորներու եւ Բերդակցի Ոսկեանի առաջնորդութեամբ, անցնելով կածաններէ եւ անդունդներէ, Միրնկատարի ետեւէն, Շէյխնիստի ձորով, Զայնըկցոց գետը անցնելով՝ կ'երթայ Սեմալ», անվնաս ու ապահով («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջ 72) :

Սակայն, առաջին երկու խումբերուն պատահած դժբախտութեան իբր հետեւանք, այլեւս ո'չ ոք յանձն կ'առնէ կրկնելու Սասուն երթալու փորձը, որով նախապատիւ կը համարուի որ ժողովուրդը մնայ իր դտնուած վայրերուն մէջ եւ հո'ն դիմակալէ անախորժ անակնկալներ եւ անստոյգ ապագայ :

Որքան ատեն որ այդ փախստականները դեռ տէր էին իրենց հետ բերած շարժական հարստութեան — իրենց անասուններուն, եւ մասնաւորապէս՝ իրենց ոչխարի հօտերուն, եւ որչափ ատեն որ Հաւատորիկ եւ Մառնիկ հայագիւղերը դեռ կը շարունակէին ապրիլ իրենց բնականոն նահապետական կեանքը, որովհետեւ թրջօքուրդ ամենաքանդ եւ մահասփիւռ ձեռքերը դեռ երկարած չէին մինչեւ իրենց չէն գիւղերը, աղէկ-գէշ՝ նիւթական տանելի պայմաններու մէջ կ'ապրէին այդ լեռնաբնակները, — տեղացի թէ փախստական :

Հաւատորիկցիները բողոքական ըլլալով, այն սին յոյսը կը անուցանէին թէ թրջական բանակի մէջ գտնուող գերմանացիները թոյլ պիտի չտային որ իրենք ալ զոհ երթան թրջական եաթաղանին : Այդ պատճառով ալ, անոնք շատ տրամադիր չէին երեւնար եղբայ-

րական օգնութեան ձեռք կարկառելու իրենց տարարախտ ազգակիցներուն :

Եւ որչափ որ ջանք կը թափուէր տարհամոզելու համար Հաւատորիկցիները որ յօժարէին իրենց ունեցածներէն բաժին հանելու անոնց, քանի դեռ թշնամիի մահասփիւռ ձեռքը չէր երկնցած մինչեւ իրենց գիւղն ու տուները, անոնք սակայն շատ յօժար չէին երեւնար այդպիսի ազգասիրական եւ մարդասիրական տրամադրութիւն ցոյց տալու, հակառակ նոյնիսկ իրենց հոգեւոր հովիւ Պատուելի Միհրան Գ. Յակոբեանի ալ թելադրութեանց եւ յորդորներուն, բացառութիւն համարելով զինեալ ուժերը, որոնց հանդէպ քիչ մը աւելի բարեացակամ վերաբերում ցոյց կու տային՝ քիչ-չատ ջանալով դոհացընել անոնց պահանջները :



ՀԱԻԱՏՈՐԻԿԻ ԳԻՒՂԱՑԻՆԵՐ

Քաղաքի կռիւէն զերծածները, որոնց թիւը գրեթէ չորս հարիւր կը հաշուէր, հագիւ հազ իրենց կեանքը փրկած ըլլալով քաղաքի գեհէնէն, կը հարկադրուէին ուրիշ միջոցներու դիմելու՝ իրենց օրապահիկը ապահովելու համար :

Պատերազմէն առաջ, քաղաքացի ունեւոր հայերէն շատերը,

ըստ տեղական սովորութեան, իրենց սեփական ոչխարներու հօտերը կը պահէին այս ու այն գիւղերու մէջ: Օրինակ, քաղաքի վերին Թաղեցի Աղաջան Պողիկեան եւ Ձորու թաղեցի Բողէի Յարթեն՝ ոչխարներ ունէին Հաւատորիկցիներու քով:

Հիմա, այս դժնդակ օրերուն, քաղաքացի լեռնաբնակ փախըստականները, իբրեւ համաքաղաքացիներ վերոյիշեալ ոչխարատէր աղջայիներուն, իրաւատէր կը ներկայանան եւ Հաւատորիկցիներէն կը պահանջեն որ յիշեալ աղջայիներուն պատկանող բոլոր ոչխարները, — թիւով հինգ հարիւրի չափ, — յանձնուին իրենց:

Հաւատորիկցիները տեղի կու տան այս պահանջին առջեւ ու այդ ոչխարները կը յանձնեն քաղաքացիներուն, որոնք օրական քառասուն ոչխար կը մորթեն եւ միւսը կը բաժնեն մէջերնին՝ չմոռնալով նաեւ ա՛յն ոչ-քաղաքացի փախստականներն եւս, որոնք զուրկ էին սպորուստի որեւէ միջոցէ:

Հաց ձեռք բերելու համար, այդ փախստականները, գիշերատեն, խումբերով կ'իջնէին սարատակի արտերը, եւ ցորենի, գարիի հասկեր կը հաւաքէին, խուրձերով լեռը կը բերէին, հացահատիկները կը դատէին, երկանաքարով ալիւր կը պատրաստէին եւ հաց կը թխէին քարէ սալերու վրայ:

Ապրուստի բաղադրարար դիւրակեաց այս պայմանները, սակայն, մեծ փոփոխութեանց կ'ենթարկուին Օգոստոս ամսուան ընթացքին, եւ ա՛լ աւելի կը վատթարանան անկէ ետք:

Այս մեծազանգուած ժողովուրդը տարտղնուած էր լեռ ու ձոր, անտառներու խորերը, ժայռերու ծերպերու եւ քարայրներու մէջ, միշտ ենթակայ ասպատակող Թրքո-Քուրդ չեթէներու, ընչաքաղց Քուրդ աւարառուներու, եւ նոյն իսկ՝ Ռուսական բանակներու առջեւէն խոյս տուող մուհաջիւրներու պարբերական, գրեթէ հանապազօրեայ յարձակումներուն, — լքուած, մոռացուած, ուրացուած...:

Յուշագիր վահան Փափագեան հետեւեալ տողերով կը նկարագրէ Քանայ լեռներու մէջ տիրող ողբալի կացութիւնը՝ Օգոստոսի ընթացքին մանաւանդ. —

«Օրէ օր, կեանքը լերան ծերպերու մէջ այլեւս անհանդուրժելի կը դառնար: Ժողովուրդը համախումբ չէր ապրեր. ցրուած էր սար ու ձոր: Ամէն օր կը փոխէինք տեղերնիս: Լեռը տեղ տեղ ծածկուած էր մարդահասակ թուփերով. անոնց եւ մեծ ժայռերու խոռոչներու մէջ կը պատսպարուէինք: Ամէն օր արշալոյսը բացուելուն հետ մեր լեռները կը պաշարուէին Մուսա Բէգի աշիրէթներէն, որոնք լայն շրջանակներով՝ շուրջկալ կը կազմակերպէին եւ անընդհատ համազարկներ կը տեղացնէին թփուտներու ուղղութեամբ: Աննպատակ չէր այդ խելակորոյս՝ ջարդէն ազատուած բեկորները, գիշերները անխոհեմա-

բար խարոյկները կը վառէին այս ու այն կողմ. Ի՞նչ ընէին — անտէր մնացած արտերէն հասկեր կը բերէին, բոցերու վրայ կը խարկէին, ոմանք՝ իրենց խնայած իւզով կ'եփէին կամ հատիկ կը շինէին: Քըրդական վոհմակները հեռուէն կը նշմարէին երեւոյզ խարոյկները, իսկ արշալոյսին՝ կու գային պաշարելու եւ ջարդելու ժողովուրդը: Երբ իրիկունները ուրուականներու պէս կ'անցնէինք այդ թուփերու եւ ծերպերու մէջէն, կը տեսնէինք իրենց օջախներու շուրջը տասնեակներով թափուած հայերու մերկ դիակներ, որոնց վրայէն ցընցոտիներն իսկ կողոպտեր էին քուրդերը» («Իմ Յուշերը, Բ., էջք 378-379):

«Մսեղէնի գոյութիւնը մոռցած էինք բոլորովին, ինչպէս նաեւ կաթնեղէնի կամ հացի: Այդ ամէնը դեռ հանդուրժելի էր, բայց վերջացած էր նաեւ աղը, եւ այդ էր սոսկալին: Գարշահոտած էինք եւ հիւանդ ամէնքս. մեր բերանը եւ աղանները այլեւս անոք էին չոր դարի փշրելու եւ ծամելու. այլ սնունդ չունէինք արդէն» (նոյն, անդ):

«Օրէ օր, ամէնքը ցան ու ցիր եղան. ամէն ոք ապաստան մը կարծեց դնալ ամայի լեռներու գագաթին, ձորերու եւ պուրակներու մէջ: Ութ-տասը հոգիով մնացի այլեւս: Ժողովուրդը կը հալուէր ամէնօրեայ մասնակի ջարդերէ եւ հիւանդութիւններէ:

«Այդ պայմաններու մէջ, ո՛վ կը մտածէր ուժերու ամփոփման կամ որեւէ նպատակի համար զանոնք կաղմակերպելու մասին: Բոլորը զարհուրելիօրէն յուսահատ՝ անձնական կեանքի պահպանման միջոցներ կը փնտոէին ամէն գնով» (նոյն, էջ 380):

«Այլեւս վայրենի կենդանիներու կերսպարանք էինք առած. մեր աղդրերէն եւ ուսերէն ցնցոտիներն էին կախուած. ոտքերնիս մաշած տրեխներու կտորներու մէջէն՝ քարերու, մացառներու զարնուելով՝ արիւնլուայ եւ կարծր վէրքերով լեցուած էին. դէմքերնիս կմախքացած՝ մութ հողի գոյն էին առած եւ ամբողջովին դերեղմանէն ելած ուրուականներու կը նմանէինք» (նոյն, 386):

«Քան լեռը այլեւս վտանգուած էր: Ռուսական բանակէն ալ յոյսերնիս կտրեցինք եւ որոշեցինք անցնիլ Մառնիկի լեռները [Ա.]: Սարսափելին այն էր որ պուրակներու տերեւները սկսեր էին թափիլ եւ այլեւս չէինք կրնար ծածկուիլ թշնամիներու աչքէն: Կեանքը այնուհետեւ ա՛լ աւելի անտանելի դարձաւ» (նոյն, 386-387):

«Սեպտեմբերը կը մօտենար եւ ցրտերը սկսած էին: Քանի մը հոգիով ապաստանած էինք քարայրի մը մէջ: Ծանր մալարիայով հիւանդ ընկեր մըն ալ ունէինք — Ալեքսան Մովսէսեան — եւ ճար չունէինք, ո՛չ մի դեղ. չեմ յիշեր ուրկէ, ժամանակ առ ժամանակ, մածուն ձեռք կը բերէր եւ յաճախ ինձի ալ բաժին կը հանէր: Մուհաջիւր քուրդերը, հոս ալ, մեզի հանգիստ չձգեցին եւ փորձեցին

բարձրանալ մինչեւ քարայրը: Օր մը, արշալոյսին, նկատեցինք մէկ-երկու քուրդեր, որոնք ժայռերու ետին պահուրտելով՝ կը մագլցէին լեռն ի վեր: Երեւի անպէն հայ փախստականներ որոնելով՝ թալլելու եւ սպաննելու դիտումով» (նոյն, էջ 387-388):

«Միւս կողմէ, դաշտերու մէջ այլեւս սպառած էր հացահատիկը. Ռուսական բանակի առջեւէն փախչող մուհալիները սրբեր տարեր էին ամէն ինչ — ինչո՞վ ապրիլ: Սովալլուկ մարդկանց կմախքացած խումբեր կը տեսնէինք երբեմն, որոնք ապուշ կամ կիսախենթ էին դարձած. դիշեր ու ցերեկ աննպատակ կը թափառէին այս ու այն կողմ» (նոյն, էջ 395):

Այս էր խիստ տխուր եւ սրտածմլիկ կացութիւնը, որուն մէջ կը տապալուէր եւ կը տառապէր Քանայ լեռներու փախստական Հայութիւնը՝ նկարագրուած եւ ներկայացուած յուշագիր Բիւրոյականի գրիչով:

Վահան Փափազեանի փոքրաթիւ խումբին հետ եղող մեր պատանի յուշագիր Երուանդ Շարաֆեան ալ հետեւեալ կերպով կը ներկայացնէ այդ փախստականներու տառապալից կեանքը.—

«Փափազեան միշտ կը խուսափէր ժողովուրդին մէջ երեւնալէ եւ չէր ուզեր որ ուրիշներ դիտնային իր ո՛ւր ըլլալը, որպէսզի չհետեւէին իրեն: Եւ իր այս զգուշաւոր ու վախկոտ վարմունքին պատճառով ալ, Քանայ լեռները ապաստան դտած քսան հազարէն աւելի փախստական Հայութիւնը մնաց անղէկ ու անպաշտպան, եւ մատուցաւ յուսալքուած վիճակի մը:

«Մուշ քաղաքացիներէն շատերը, մեծ մասամբ զինուած եւ մաս մըն ալ անղէն, դացին քաղաքի մօտակայ այգիները — Աստղբերդ, Մոկաց այգիները, Եեխենց Զորը եւ Նորտընկները: Ասոնց մէկ մասը յանձնուեցաւ Թրքական իշխանութիւններուն՝ խարուելով անոնց շողմիշ խոստումներէն. մնացեալներն ալ սպաննուեցան այգիներու մէջ՝ տեղուոյն Թուրքերէն:

«Թուրք կանոնաւոր բանակը այլեւս ռազմաճակատ զրկուեցաւ. իսկ քաղաքն ու շրջանը կը պաշտպանուէին ժանտարմաներու եւ տեղական չեթէներու կողմէ:

«Քանայ լեռներու մէջ մնացողները պարբերական յարձակումներու կ'ենթարկուէին՝ երբեմն Մուսա Բէգի ձիաւոր քուրդերու կողմէ, որոնք հարիւրներով կը սպաննէին ու կ'անցնէին—կ'երթային. երբեմն ալ թուրք եւ քուրդ գաղթականներու կողմէ՝ աւարի տիրանալու բաղձանքէն դրդուած, եւ շատ յաճախ ալ՝ Առաքելոց վանքի զինուորներէն:

«Այս պարբերական յարձակումներուն հետեւանքով, Քանայ լեռնաշղթան ծածկուած էր Հայոց դիակներով:

«Գիշերները կ'իջնէինք Քանայ լեռան ստորտը գտնուող ցորենի, զարիի արտերը, հասկեր կը հաւաքէինք եւ դեռ չլուսցած՝ կը քաշուէինք նորէն անտառներու խորերը:

«Միշտ տեղերնիս կը փոխէինք, որպէսզի ժողովուրդը չգիտնար մեր ո՛ւր գտնուիլը եւ չհետեւէր մեզի» («Երուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 45):

«Այլեւս խոր աշուն էր. ծառերու տերեւները սկսած էին թափիլ, եւ անտառներու մէջ պահուրտիլն ալ՝ խիստ դժուարացած:

«Լեռան մը լանջին վրայ գտնուող աղբիւր մը բոլորիս ժամադրավայրն էր: Արեւը մար մտածին պէս, դեռ ողջ մնացողները, մէկիկ մէկիկ, կու գային արդ աղբիւրին քով, եւ երբ երկու ծանօթները իրարու հանդիպէին, իրենց առաջին զարմացախառն հարցումը կ'ըլլար.—

«— Տղա՛յ, դեռ ո՞ղջ ես» (նոյն, էջ 52):

Նոյնպիսի նկարագրեղ ոճով կը նկարագրէ Քանայ լեռներու մէջ տիրող այդ ցաւատանջ կացութիւնը՝ մեր միւս պատանի յուշագիր Մուշեղ Դուռնեանը.—

«Քանայ Սարը մնացողներու վիճակն ալ վարդագոյն չէր: Ա՛հ ու սարսափը՝ մէկ կողմէն, անօթութիւնն ու ծարաւը, ցուրտն ու գետին բացօթեայ պառկելու տաժանքը՝ միւս կողմէն, արդէն ծայրագոյն յուսահատութեան մատներ էին մեզ, ամէնքս ալ:

«Կարգ մը հարեւան քուրդեր, տասնեակ խումբերով, լեռներու եւ անտառներու մէջ, ամէն ծակ ու ծուկ կը խուզարկէին, եւ ուր որ պահուրտած մարդ մը գտնէին, տեղն ու տեղը կը սպաննէին եւ ունեցածը կ'իւրացնէին: Այսպէս, Մուշ քաղաքի եւ Սասունի ջարդերէն ճողոպրած 27 վերին Թաղեցիներ կ'ապաստանին Աստղբերդի կողմերը, բայց փնտառուքի ելած Թուրքերէն նշմարուելով՝ յարձակումի կ'ենթարկուին, ու վեց ժամուան հերոսական դիմադրութենէ մը ետք, իրենց վերջին պատռոններով ալ՝ ինքնասպան կ'ըլլան:

«Մառնիկ գիւղի Հայութիւնը, որ ապաստանած էր շրջակայ անտառները, դեռ տէրն էր իր շարժական հարստութեան: Աւագ միայն ունէր երեք հարիւր ոչխարներու հօտ մը: Օգոստոս 18-ին, մեզի ծանօթ երկու քրդուհիներ մեր քով եկան եւ մեզի ազդարարեցին որ «վերջին յարձակումը պիտի գործուի Քանայ Սարի վրայ. ձեր ճարը նայեցէք»:

«Մենք ալ, ութ ոչխար տուինք քրդուհիներուն, եւ գիշերատեն, 65 հոգինոց խումբով մը, մեկնեցանք դէպի Սուրբ Աղբերիկ վանքի շրջանը, որ քրդական կեդրոն մը ըլլալով, կը յուսայինք ապահով ապրիլ քանի մը օր:

«Չորս ժամուան տաժանելի ճամբորդութենէ յետոյ, հասանք մեր փափաքած վայրը, հաստարուն կաղնիններու տակ, ուր ահ ու սարսափը պատած էր ամէնքիս ալ:

«Արեւածապին, տեսանք որ Պալաքցի Աշիրէթը, հրացաններով եւ կռուավարութեան կողմէ տրամադրուած ռազմամթերքով սպառազինուած, կը շտապէր Քանայ Սարը՝ թալանին մասնակցելու համար:

«Մենք երկու օր միայն ապրեցանք այդ անտառներուն մէջ: Պաշարնիս կը հատնէր. կարելի չեղաւ նոյն իսկ ջուր ճարել: Տարօն կը զլանար նոյն իսկ ջուր ջամբել մեզի՝ իր այնքան ջրառատ աղբիւրներէն...:

«Անօթութիւնն ալ, միւս կողմէն, ստիպեց մեզ որ կրկին վերադառնանք Մառնիկի շրջանը, ուր ամէն բան ծանօթ էր մեզի, եւ պիտի կրնայինք ուտելիք ու խմելիք դանել եւ տեղեկութիւններ ձեռք բերել դեռ ողջ մնացողներու մասին:

«Երրորդ երեկոյեան, մութը հաղիւ կոխած, հոգերով ծանրաբեռնուած, ճամբայ ինկանք եւ կէս գիշերին՝ շարուած էինք արդէն Բերդի կողերուն, որուն ստորտը տեսանք որ Մառնիկ գիւղը կը մխար բոցերու մէջ: Դիակներու գարշահոտութենէն կարելի չեղաւ քիչ մը քնանալ: Ատտուանց մօտեցանք դիւղին: Սպանդէն աղատուած քանի մը աղբակիցներ երբ մեզ տեսան, արիւն-արցունքով եւ լալահառաջ՝ մեզի ցոյց տուին ձորերը, որոնք լեցուած էին դիակներով:

«Մայրեր, փախուստի պահուն, օրօրոցներու մէջ լքած էին իրենց տասնեւչորսի չափ մանկիկները՝ մարազի մը մէջ, որուն առաստաղը անոնց վրայ փլցուցեր էին այդ անադորոյն թշնամիները. իսկ Յակոբի կին Նոյեմզար, նորածինը զրկած, անշունչ ինկած էր՝ տասնեւհինգ դնդակներու հարուածներուն տակ:

«Մառնիկցի այդ ափ մը հայերուն վրայ յարձակում գործեր էին Սլեման Օնրաչին՝ Պասգիւղի իր ոստիկան զինուորներով, Քոլոսիկի Հաջի Տերօն՝ իր քուրդերով, Պալաքցի Աշիրէթը, Մուսա Բէդ՝ իր ուժերով, Առաքելոց վանքի զինուորները, եւ Մառնիկ դիւղին դրացի Դամբէլ եւ Պիրդին քրդաբնակ դիւղերու բնակիչները, որոնք, բոլորն ալ, Մուշէն զրկուած Սէյարի ժանտարմա թաբուրի հրամանատար Մուրադ Բէգի(1) վերհսկողութեան տակ, յարձակում գոր-

(1) Այս միեւնոյն Մուրադ Բէգն էր որ շանսատակ ինկաւ պատանի հերոս Լեւոն Ղազիկեանի վրէժառու դաշոյնի հարուածներուն տակ (Տեսնել «Տարօնապատում»-ի այս Մասն Երկրորդի ԺԵ. Գլուխը):

ծած էին, կոտորած ու ջարդած» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 657-658):

Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան, հետեւեալ սրտայոյզ տողերով կը նկարագրէ կեանքը՝ Քանայ լեռներու մէջ, Օղոստոս ամիսէն սկսեալ.—

«Օղոստոս ամսու մէկէն սկսեալ, կեանքը բոլորովին տարբեր երեւոյթ ստացած էր. նախապատմական եւ արդի կեանքի տարօրինակ խառնուրդ մը դարձած էր: Ներքինով՝ նա արդի կեանքն էր. կը զղար, կը խորհէր, հաշիւներ կ'ընէր, կ'երազէր, կը վայելէր, կը յուսար, կը սպասէր: Արտաքինով, շրջապատուած պայմաններով, սակայն, նա նախապատմական կեանքն էր իսկութեամբ. առանձնակեցութեան ձգտում, նմանատեցութիւն, իրարմէ խորշանք, կենցաղադիտութեան ձեւը, կեղտոտութիւն, սնանկու միջոցները, անտառներու եւ քարայրներու մէջ օթեւանները, ատտուան ցողով թըրջուելը, շարաթներով անլուայ մնալը, վայրի պտուղներով եւ հասկաքաղով ապրելը, ո՛ղիւր, բոլը. ահա՛ միջոցներն ու պայմանները, որոնց մէջ կ'անցընէր կեանքը այս ամսուն:

«Առանձին առանձին, զոյգ զոյգ, ամենաշատը տասնական հոդիով՝ կը թափառէին այդ շէն երկրի մնացորդները, այդ ընդարձակ, անտառախիտ վայրերու մէջ: Ապականած էր եւ օդը՝ այդ մաքրաշունչ վայրերուն. իւրաքանչիւր քայլափոխիդ՝ ռնդունքներդ կը տանջուէին ծմակներու եւ ձորերու եւ թփուտներու մէջ, լեռներու բարձունքներն ու ստորոտները, իրարու վրայ թափուած հազարաւոր դիակներու արտահանած դարչ հոտովը: Ամէն ինչ նեխած էր. օդը, երկինքը, ծառը, ծմակը, ծործորը, հովիտը: Սեւացած, ուռած, կմախացած մարմիններ՝ չորս կողմը, աջը, ձախը, ոտքերուդ տակ եւ զլխուդ վերեւ:

«Ու երթալով, սովորական բնոյթ մը կը ստանային այդ ամէնքը: Նախ քաղցը եւ ապա զոյութեան պահպանումը յաղթահարելու էին ամէն բանի: Ո՛չ մի ուտելիք՝ այդ հազարաւոր բազմութեան, ցրուած Քանի առաջամասեայ կողմերէն մինչեւ Մառնիկի հսկայ բարձունքները, եւ ապա՝ փոքրիկ ընդմիջումով մը, մինչեւ Սասնոյ մութ խորշերը:

«Յերեկը կ'անցկացնէին հոս հոն, ըստ հայեցողութեան՝ յարմար սեպած տեղ մը, կծկուած, եւ դիշերները՝ դուրս կու գային քիչկ մըն ալ ուտելիք ջամբելու:

«Առաջին մէկ-երկու շաբթուան մէջ, քովերնին փող ունեցողները կը յաջողէին Մառնիկցիներէն բան մը ձեռք բերել, ուրկէ յետոյ կը սկսէր ահռելի, անպատմելի մղձաւանջը քաղցի ու սովամահութեան: Շատերու յոյսը սպառած, գիշերով կը դիմէին մերձաւոր

գիւղերը՝ ուտելիք որոնելու, հոս հոն նախապէս պահած կամ իրազեկ եղած ցորենի հորեր բանալու: Ասոնցմէ շատ շատերը զոհ կ'երթային այն տեղերը տեղաւորուած քուրդերուն: Քանի՛ քանի՛ քաղաքացի երիտասարդներ՝ ճարահատ կը դիմէին քաղաքը պեղումներ կատարելու, իրենց տուններուն մէջ թաղածներէն օգտուելու ենթադրութեամբ, եւ քանի քանիներ այլեւս չէին վերադառնար:

«Ամենէն ունեւոր, եկուոր մասը այդ բազմութեան՝ Մառնիկցիներն էին, որոնք իրենց կին ու երեխաներու հետ, միայն իրենց համար մատչելի կատարներու վրայ թառած, ունեցածնուն որոշ մէկ մասը հետերնին վերցուցած ու մէկ մասն ալ թաղած էին ծմակներու եւ խղիկներու մէջ»:

«Մխիթարական չէր եւ կեանքը Փափագեան-Տիգրան խումբին: Բոլորովին անյայտ մնալու համար, ամէն օր մի տեղ կը թաքչէին ցերեկները անխլիրդ բարձունքի մը կողքը կամ խորունկ անտառուտ ձորի մը մէջ կը կծկուէին. մութը կոխելուն՝ դուրս կու գային ջուրի մը եզերքը կամ Մառնիկ գիւղի շրջակայքը: Հանդիպածներէն լուրեր կ'ուզէին, հարց ու փորձ կ'ընէին. լոյսը մօտիկնալուն՝ կրկին կը քաշուէին տեղ մը՝ մթացնելու համար:

«Շնորհիւ խումբի մէջ գտնուող մէկ-երկու փողատէրերու, կը յաջողէին ձեռք բերել մի քիչ ժածիկ, որով կը քաշչէին գոյութիւննին:

«Օգոստոսի առաջին քառորդին, արդէն անոնց բոլորի ոտքերը, քաղցէն, դանդաշել սկսեց էին: Յերեկը անյազ կերպով լափելով ժածիկը, երեկոնները երեքալով՝ հազիւ կը կարողանային ինքզինքնին ձգել ջուրի մը եզերքը, անցնելու պասուքը, որ կը բղխէր սաստիկ քաղցածութենէն ու ժածիկի աղի անսնդութենէն» (Յակոբ Տէր Զաքարեանի Յուշերը, էջը 196-197):

Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեան՝ աւելի լաւատեղեակ եւ աւելի մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ լեռնաբնակ այս տարաբախտ փախստականներու անօրեայ ապրելակերպի մասին.—

«Ես, աղաս Գուրգէնի, Յակոբ Տէր Զաքարեանի, Ալեքսան Մովսէսեանի եւ ասոր հօրեղբոր որդւոց հետ, անտառի տերեւոտ ճիւղերէն (ճլօ) շինուած խղիկներու մէջ կը բնակէինք: Շատ անգամ, զօրաւոր քամին կը քչէր կը տանէր այդ փայտերն ու ճիւղերը: Տարուան ամենատաք ամսուան (Յուլիս) մէջ էինք. ցերեկները զով օդ ունէինք, իսկ գիշերները կը սառէինք ցուրտէն: Սոսկալի պաղ հով մը կը փչէր: Ստիպուած էինք նորէն անտառէն ճիւղեր կտրել եւ նոր խղիկ պատրաստել, եւ այդ պատճառով ալ, յաճախ վէճի կը բռնուէինք Հաւատորիկցիներու հետ, որոնք դիտողութիւն կ'ընէին

մեզի որ անտառի ճիւղերը կը կտրէինք միշտ» («Հարագատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 426):

Յուշագիր Միսակ Բղէեան, Գլտիկ Արամ Յակոբեանի ութսուն հոգինոց խումբին հետ, Օգոստոս երկուքին, Կովկաս անցնելէն յետոյ, ինչ որ պատահած է Քանայ եւ Հաւատորիկի լեռներուն մէջ, այդ մասին մանրամասն տեղեկութիւններ քաղած է Մուշ քաղաքացի հայդուկ Աշոտ Փոթիկեանէն, որ Ռուբէն-Փափագեան խումբին միացած՝ անցած էր Կովկաս, Սեպտեմբեր ամսոյ վեցին:

Աշոտ Փոթիկեան, Կովկասի մէջ, կը միանայ իր երկու եղբայրներուն — Արամ եւ Արրահամ Փոթիկեաններուն: Արամ՝ Հընչակեան կամաւորական գունդին մէջ՝ հարիւրապետի պաշտօն ունէր, իսկ Արրահամ Փոթիկեան ալ՝ Ֆրեզնոյէն կամաւոր եկած էր:

Միսակ Բղէեան՝ հետեւեալ մանրամասն տեղեկութիւնները ստացած է Աշոտ Փոթիկեանէն, Քանայ լեռներու փախստականներու ապրելակերպի եւ հոն տիրող խիստ յուսահատական կացութեան մասին.—

«Մեր խումբը՝ Քան լեռնէն մեկնած ատեն, Աշոտ արդէն վիրաւորուած էր(2) եւ Մառնիկ գիւղի անտառին մէջ կը խնամուէր: Մեր մեկնելէն յետոյ, այդ լեռներու մէջ պատահած անցքերը հետեւեալ պայմաններով կը նկարագրէ.—

«— Թուրքերէ եւ Քուրդերէ բաղկացած հետազօտիչ խումբեր միշտ Բերդակայ եւ Ալվառինչի լեռները կու գան, ուր որեւէ դիմադրական ուժի չեն հանդիպիր, ա՛յլ միայն հոս ու հոն թաքնուած տըղամարդիկ կամ կիներ կը տեսնեն եւ ըստ այնմ ալ՝ զեկուցում կուտան կառավարութեան, որ այլեւս հարկ չի տեսներ թնդանօթներ զրկել կամ կանոնաւոր զօրք բերել այդ լեռները, միայն թուրք եւ Քուրդ չեթէներուն կը յանձնարարէ որ ուզածնին ընեն: Ատկէ վերջ, ամէն օր, առտուընէ մինչեւ երեկոյ, կ'ասպատակեն այդ լեռները, անտառներու մէջ ձեռք անցուցած բոլոր տղամարդիկը, կիները, երեխաները կը խողխողեն անխնայ, եւ երեխաներու ոտքերէն բռնե-

(2) Սասունի գոյամարտը սկսելէն մէկ-երկու օր առաջ, Հաւատորիկ գիւղի կռակի բարձունքներուն վրայ՝ թուրք զօրքերու հետ ունեցած ընդհարումներու ընթացքին, վիրաւորուած էին քաղաքացի հերոսներէն Աշոտ Փոթիկեանը եւ Արսեմակ Մարտէեանը, իսկ մահատակուած էր Ալվառինչ գիւղացի Յշմաւոր Փեղայի Սահակը (Վահան Փափագեան, «Իմ Յուշերը», Բ., էջ 372, եւ Միսակ Բղէեան, «Հարագատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 438-440):

լով՝ կը նետեն ապառաժներէն, ձորերէն վար եւ կը մահացնեն: Այդպիսով, այդ անտառներու մէջ գտնուած 25,000 ժողովուրդէն 20,000ը՝ այդպիսի չարաչար տանջանքներով կը մեռնի:

«Այդ չեթէնքերը, մանրազնին խուզարկութեան կ'ենթարկեն եւ այդպէս կը շարունակեն իրենց խուզարկութիւնները կարգով, որով՝ մաս մը ժողովուրդ, ճարպիկ գտնուելով, հետեւեալ գիշերուան ընթացքին, իրենց ընտանիքներով կ'անցնին խուզարկուած վայրերը եւ կը պահուըտին: Այդ ձեւով, միշտ տեղէ տեղ կը փոխադրուէինք՝ մեր (Փափաղեանի) խումբով, ինչպէս նաեւ շատ մը ուրիշ խումբեր, եւ այդպիսով կը խուսափէինք ընդհարումներէ:

«Վերջերս, սակայն, այլեւս սկսած էին դաւադրական միջոցներու դիմել՝ իրենց որսերը երեւան հանելու կամ ձեռք ձգելու համար: Քանի որ թուրքերէն եւ քուրդերէն շատերը Հայերէն կրնային խօսիլ, խումբերու բաժնուած՝ ցերեկները կը շրջէին անտառներու մէջ, քաղաքի լեռներէն սկսեալ մինչեւ Բոնաչէն, Սուրբ Աղբերիկի անտառները, եւ Հայերէն կը պոռային:

«— Կիրակոս, Թորոս, Կարապետ, Յովհաննէս», եւայլն, հայկական անուններ տալով, — «Մենք փախստական հայեր ենք. այսինչ գիւղին կամ խումբին կը պատկանինք: Փափաղեանի եւ Ռուբէնի կողմէ զրկուած ենք. անոնք շուտով Ռուսաստան պիտի մեկնին. զձեզ ալ կ'ուզեն տանիլ հետերնին. շուտով դուրս եկէք եւ մեզի հետեւեցէք»:

«Շատ մը միամիտներ, խարուելով այս դաւերէն, դուրս կուգային եւ անոնց ճանկերուն մէջ կ'իյնային: Տղամարդիկը եւ երիտասարդները անմիջապէս կը նահատակէին, իսկ կիներն ու աղջիկները՝ իրենց անյաղ կիւրքին կ'ենթարկէին օրերով եւ ապա կը նահատակէին:

«Շատեր ալ, չկարողանալով տոկալ անօթութեան, — արդէն օրական հարիւրներով սովահար կը մահանային, — ստիպուած՝ քաղաք կ'երթային անձնատուր ըլլալու:

«Շատ շատեր ալ, անտառներու մէջ, մեռածներու կամ նահատակուածներու դիակները կ'ուտէին, իսկ ոմանք ալ, անտառի թաւ տերեւները (ճլօ) ուտելով, փորերնին կ'ուռէր ու կը պայթէր» (նոյն, էջք 478-479):

[Ա.] Ո՛չ թէ Մառնիկի լեռները, այլ Սուրբ Աղբերիկի (Խոյթ-Բոնաչէն) լեռները փախեր-գացեր էին Վահան Փափաղեան եւ իր

փոքրաթիւ սպառազէն խումբը՝ իրենց հետքը կորսնցնելու եւ գլուխնին ապահով տեղ մը հանգչեցնելու ակնկալութեամբ, սակայն հոն ալ չէն կրցած գտնել ակնկալուած ապահովութիւնը եւ քիչ-չատ տանելի ապրելակերպի պայմաններ, եւ յուսախաբ՝ նորէն վերագարձեր են Քանայ լեռները, ըստ վկայութեան յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը», էջ 115):

ՎԵՐՋ ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՏԱՐՕՆԱՊԱՏՈՒՄ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Սասունի Գոյամարտին

Ողբերգուլթիւնը



Ն Ա Ւ Ա Բ Ա Ն

Տարօն-Տուրուբերան Հայրենակցական Միութիւնը, 1953-ին, Տարօնի ժամանակակից պատմութիւնը գրի առնելու պարտականութիւնը յանձնած էր երեք հայրենակիցներէ բաղկացեալ հմբագրական Մարմինի մը, որ, իր կարգին, այդ եռապետութեան մէկ անդամը, Կարօ Սասունին, «պատասխանատու խմբագիր» նշանակած էր՝ անոր յանձնելով այդ նուիրական գործին շարահիւսութիւնը:

Երբ, այդ եռապետութեան մէկ ուրիշ անդամը, մեր վաղեմի բարեկամ Սմբատ Շահնագարեան, 1959-ի Մայիս ամսուն, այցելութեան եկաւ Սան Ֆրանսիսկօ, մտերմական խօսակցութեանց ընթացքին՝ իրեն ուղղեցինք հարցում մը, որուն պատասխանը կը փափաքէինք լսել իր իսկ շրթունքներէն:

Իրեն ուղղած մեր հարցումը հետեւեալն էր.

«— Սմբա՛տ, գիտե՞մ որ «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» պատմագիրքը պատրաստուած է հմբագրական Մարմինի մը կողմէն, որուն մէկ անդամը դու ես: Թէեւ Կարօ Սասունին «Պատասխանատու խմբագիր» ընտրած էք եւ Տարօնի պատմութիւնը գրելու պարտականութիւնը անոր յանձնած, սակայն, ատով հանդերձ, դուք, երբեք ալ՝ պատմութեան առջեւ հաւասարապէս պատասխանատու կը նկատուիք, այդ պատմագիրքին մէջ արտայայտուած բոլոր միտքերուն եւ գաղափարներուն համար: Ճի՞շտ է»:

Իր հաստատական պատասխանէն ետք, իրեն դիտել տուինք.—

«— Ձեռքդ խղճիդ վրայ դի՛ր եւ ինձի պատասխանէ քէ ի՛նչ որ գրած էք այդ գիրքին մէջ՝ Տարօնի վերջին եղեռնի մասին, նի՞շտ է»:

Իմ ազնիւ բարեկամս, գլուխը ինձի մօտեցնելով, գրեթէ փրսփրսալով՝ հետեւեալ պատասխանը տուաւ ինձի՝ բառ առ բառ.—

«— Է՛, Ազա՛ն, ելլէինք ի՞նչ գրէինք, օրինակ, Մշոյ Դաշտի համատարած կոտորածի մասին. գրէինք քէ Մշոյ Դաշտի քաղաքապետի եւ ազատասէր Հայութիւնը՝ ոչխարի հօտերու նման առաջնորդուեցաւ գիւղերու գոմերն ու մարագները, եւ գառնուկի պէս ածխացա՛ւ: Այդ պարագային, ի՞նչ պիտի ըսէին Կարենցի, Վանցի, Պոլսեցի եւ այլ երկիրներու Հայերը: Պիտի չըսէի՞նք որ այս Տարօնցիները ի՛նչքան ալ՛լախ ժողովուրդ են եղեր որ ոչխարի հօտերու պէս առաջնորդուեր են մարագներն ու գոմերը եւ ողջ-ողջ այրեր՝ առանց նոյնիսկ շշուկ մը հանելու...»:

«— Բա՛յց, սիրելի՛ս, — կ'առարկենք, — չէ՞ որ դուք պատմութիւն է որ կը գրէք. ի՞նչ ըսել է պատմութիւն, եթէ ոչ՝ կատարուած, տեղի ունեցած պատմական դէպքերու առարկայական ներկայացում եւ արձանագրութիւն, չէ՞»:

«Դուք պարտաւոր էիք գրելու եւ պատմելու որ Տարօնի այդ հեքուսական ժողովուրդը, 1915-ի եղեռնի օրերուն, ոչխարի հօտերու պէս՝ առաջնորդուեցաւ գիւղերու մարագներն ու գոմերը, եւ հո՛ն ալ՝ կրակներու ալիքներու մէջ ածխացաւ, մոխրացաւ»:

«Այդպէս պէտք էր գրէիք, որովհետեւ ատիկա կատարուած իրողութիւն էր. բայց, միանգամայն, պէտք էր գրէիք եւ բացատրէիք պատճառը թէ ինչո՞ւ համար Տարօնի այդ հեքուսական ու փայտարտիկ Հայութիւնը՝ ոչխարի հօտերու նման, առաջնորդուեցաւ գոմերն ու մարագները, եւ հո՛ն հրակէզ մոխրացաւ, 1915-ի Յունիսի վերջին Կիրակին»:

«Դո՛ւք խուսափեցաք այդ «ինչու»ին պատասխանը տալէ, որովհետեւ **ՉԻԻՔ ՈՒՉԵՐ** տալ *անունը* կամ *անունները* այն անձին կամ անձերուն, որոնք, իրենց ապիկար առաջնորդութեամբ, սխալ փառականութեամբ եւ եսամոլ գործելակերպով, **ՊԱՏՃԱՌ ԴԱՐՉԱՆ** որ դարաւոր պատմական յիշատակելի անցեալ ունեցող այդ ազատասէր եւ փայտարտիկ ժողովուրդը, հիմա, ոչխարի հօտերու նման առաջնորդուէր գոմերն ու մարագները եւ ածխանար...»:

Այս եպերելի ու դատապարտելի *վերապահութիւնն* է որ սօզուած ձեռով կը ցուցադրուի «պատմագիր» Կարօ Սասունիի սուփեստական նամարտակութիւններուն մէջ:

* * *

Տարօնի 1915-ի սարսուզողու եղեռնը երեք դրուագներով ծրագրած էինք ներկայացնել՝ մեր ներկայ գործով.—

ա.— Մշոյ Դաշտի հարիւրէ աւելի հայագիւղերու Հայութեան հրակէզ քննչնջումը՝ մէկ օրուան ընթացքին — 1915 Յունիս 28-ին, Վարդավառի Կիրակի օրը, ինչ որ մասամբ միայն կրցանք ընել, որովհետեւ գրիչնիս առաջ չէր շարժեր՝ թուղթին յանձնելու այդ սրբտամորմոք նախնիքի առարկայական նկարագրութիւնը. ա՛յնքան տխուր էր ան, ա՛յնքան սրտանմիկ, ա՛յնքան մորմոքեցուցիչ...:

բ.— Մուշ ֆազաֆի դիցագնական գոյամարտը՝ երկու օրուան ընթացքին — 1915 Յունիս 29 եւ 30-ին, Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերուն:

գ.— Սասունի հեքուսական մարտնչումները՝ երեք օրերու ընթացքին — 1915 Յունիս 20, 21 եւ 22-ին:

Այս եղեռնական ողբերգութեանց պատմութեան առարկայական ներկայացումը առաւելապէս կախում ունի այն բարեղէպ հանգամանքէն որ այդ տխուր պատմութիւնը մեզի աւանդող ազգայինները, — բոլորն ալ բնիկ Տարօնցիներ, — առհասարակ եղած են *ակահատես* ու *դերակատար*, եւ առաւել կամ նուազ չափով՝ տուած այդ յուզիչ պատմական անցքերու եւ դէպքերու առարկայական նկարագրութիւնը:

Այս տեսակետէն, բախտաւորութիւն մըն է որ Մշոյ դաշտի եւ Մուշ ֆազաֆի դիցագնամարտերու եւ ողբերգական վերջաւորութեանց համապարփակ նկարագրութիւնն ունինք, որուն համար յաւիտեանս երախտապարտ կը մնանք Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բդէեանին, Տարօնցի Արմաշական մտաւորական Յակոբ Տէր Զաւարեանին, Գասպար Բդէեան, Մուշեղ Դուռնեան եւ Երուանդ Շարաֆեան պատանիներուն, եւ մասամբ ալ՝ Տարօնի Ազգային Առաջնորդարանի նախկին Առաջնորդական Փոխանորդ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանին:

Մասամբ կ'ըսենք, որովհետեւ Տարօնցի յուշապատում այդ կրօնականի ձեռագիր յուշերը՝ իյնալով Ֆրեզոնյի «Ասպարէզ» թերթի անբարեխիղճ ազգայիններու նանկերուն մէջ, չարափոխեր ու այլանդակեր են յուշապատում փահանայի պատմածները, եւ այդ պատմական յոյժ կարեւոր երկասիրութիւնը վերածեր՝ անբովանդակ եւ անարժէք յուշագրութեան մը, որմէ դժուար թէ ուշագիր ընթերցողը պիտի կարենայ որոշ բան մը հասկնալ...:

Այս խեղաթիրումի եւ չարափոխութեանց մասին արդէն իսկ խօսած ենք ասկէ առաջ (Տեսնել «Տարօնապատում»ի Մասն Երկրորդի մէջ, Գլուխ ԻԲ.):

Այս անպատեհութիւնները ի նկատի ունենալով հանդերձ, մենք *ստիպուած ենք* նորէն կառչած մնալու այդ յուշամտեանին, եւ պիտի ջանանք փարմազով՝ ցորենը գատել զիւանէն եւ վերականգնել Սասունի Ողբերգութեան վերաբերող պատմական դէպքերու Տէր Եղիշէական կառուցուածքը, որքան որ հնարաւոր է, օժանդակութեամբ Տարօնցի միւս յուշագիրներու ստոյգ փաստերու տուեալներուն:

* * *

Մշոյ Դաշտի եւ Մուշ ֆազաֆի հետ շողկապուած բոլոր պատմական դրուագներուն եւ տեղական-աշխարհագրական տուեալներուն:

րուն անճնապէս լաւածանօթ ըլլալով, մենք մեծ դժուարութեանց չմատնուեցանք՝ մեր քննական վերլուծումներու եւ մեկնաբանութեանց ընթացքին :

Դժբախտաբար, սակայն, պարագան նոյնը չէ Սասունի համար :

Ճիշտ է որ երկու տարբեր առիթներով, մենք պատեհութիւն ունեցած ենք Սասուն երթալու, առաջին առթիւ՝ Յանքանիա, ուխտագնացութեան, 1909-ի Մայիսին. երկրորդ առթիւ ալ՝ Գելիեզուզան գիւղը, յաջորդ տարուան աշնան, սակայն, դժբախտաբար, այդ տարիներուն՝ ըստ բաւականի չափահաս եւ խելահաս չէինք որ մասնաւոր ուշադրութեան եւ ուսումնասիրութեան առարկայ դարձնէինք Սասունի տեղագրութիւնը, աշխարհագրական կազմը, եւ զանազան լեռներու, բլուրներու, բարձունքներու, ձորերու, գիւղերու՝ իրարու հանդէպ ունեցած առնչութիւնները տեսնել եւ ուսումնասիրել, ինչպէս որ դիտած եւ ուսումնասիրած էինք Հաւատամքի, Ատոգբերդի, Ծիրնկատարի, Կուրտիկի, Արջգորի, Բերդի Թաղի, Սաչքի Դուրանի եւ Մուշ քաղաքի Հայ եւ Թուրք թաղերու՝ իրարու հետ եւ իրարու հանդէպ ունեցած առնչութիւնները :

Այս իսկ պատճառով, պիտի գոուշանանք միեւնոյն մեթոտը գործածելէ Սասունի պարագային՝ անոր աշխարհագրական կազմի, հայկական ուժերու գրաւած բլուրներու եւ բարձունքներու, եւ թրքական բանակի ու քննաօթներու դիրքերու, ինչպէս նաեւ քաղաքական զանազան աշխրէներու գրաւած բլուրներու եւ բարձունքներու իրարու հանդէպ ունեցած փոխադարձ առնչութիւններու մասին :

Մեր այս գոուշաւոր վարմունքը ա՛լ աւելի կը դժուարանայ՝ ուրիշ կարեւոր պատճառով մըն ալ, որ վեր մատնանշուած բոլոր յուշագիրները ո՛չ միայն չեն համաձայնիր իրարու հետ, ա՛յլ եւ շատ յաճախ՝ իրարու գլխովին հակոտնեայ ու հակասական պատկերներ կը գծեն եւ մեզ կը դնեն իրապէս անլուծելի թննուկի մը դէմ-յանդիման :

Մուշ քաղաքի եւ Մշոյ Դաշտի հայաբնակ գիւղերու մէջ պատահած դէպքերու նկարագրութեանց նկատմամբ՝ ինչ դիրք որ բռնած է յուշագիր վահան Փափագեան, միջավայրին բոլորովին անծանօթ ըլլալու բերմամբ (այդ մասին կարդալ՝ վահան Փափագեանին գրած մեր երկրորդ Նամակը), նոյն երեւոյթը, աւելի շեշտուած ձեւով՝ ակնբախ կը դառնայ Սասունցի Մուշեղի պատումին մէջ :

Մեր յարգելի ընթերցողները լաւ պէտք է յիշեն որ ասկէ առաջ, մենք արդէն ապացուցած ենք բացայայտ կերպով՝ Սասունցի Մուշեղի պատմածներու պատմական արժէքը (Տեսնել Մասն Առաջին, Գլուխ ԺԲ.) :

Նոյնն է մեր վերաբերումը՝ Սասունցի Մուշեղի նկարագրած Սասունի կռիւներու եւ հոն տիրող անճկալից կացութեան իր տարբե-

րակին հանդէպ : Սասունցի Մուշեղի պատումը աւելի շատ՝ վէպ է քան պատմութիւն :

Նոյնպէս, նոյն առարկութիւնը, անվարան կերպով, կրնանք պատշանեցնել միւս Սասունցիի — Կարօ Սասունի — յօրինած հաստափոր երկասիրութեան եւս, որ կը կրէ «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» առինքնող տիտղոսը :

Եթէ Սասունցի Մուշեղի պատումին մէջ՝ պատմիչ խմբապետի տգիտութիւնը եւ իր «պարօն»ի հանդէպ՝ իր գետնամած վարմունքն են որ կը ցուցադրուին, Կարօ Սասունիի պատումին մէջ, սակայն, մեծապէս ակնբախ են անոր սովետական քաղաքականութիւնները, իր նեղմիտ կուսակցականի մոլեռանդ դատողութիւնները, իր ոչպատմական եւ շատ յաճախ՝ քննադէմ փաստարկութիւնները եւ երեւակայական, անհիմն ու անիրատու դատումները, կանխակալ գորաւոր ձգտում մը՝ «պարօն»ի կամ «պարօն»ներու գործած նակատագրական սխալներն ու պարտագանցութիւնները մեղմացնել, կա՛մ պըզտիկցնել, եւ կա՛մ այդ սխալներն ու պարտագանցութիւնները ընդհանրացնելով՝ անոնց պատասխանատուութեան բաժնեկից դարձնել նաեւ ոչ-դաշնակցական ազգային անհատներն ու հաստատութիւնները, այսինքն՝ Տարօնի Ազգային Առաջնորդարանը, անոր Առաջնորդը կամ Տեղապահը, անոր Քաղաքական Ժողովը, ինչպէս նաեւ անհատ ազգայինները, հակառակ այն խիստ բացայայտ իրողութեան որ այդ հաստատութիւններն ու անհատ ազգայինները շատ յաճախ քննադատի եւ ընդդիմադիրի դիրքաւորում ցայց տուած են՝ «պարօն»ներու որդեգրած եւ գործադրած վնասակար քաղաքականութեան եւ սխալ գործելակերպին հանդէպ :

Մենք պատեհութիւն պիտի ունենանք Կարօ Սասունիի սովետական քաղաքականութիւններէն նմոյշներ ներկայացնելու՝ զանոնք առնելով իր յօրինած «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» մատեանէն :

ԳԼՈՒԽ Ա.

ՍԱՍՈՒՆԻ ԳԻՐԲԸ ԵՒ ԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Սասուն ընդարձակ լեռնաբերդ մըն է, կղզիացեալ լեռնաշխարհ մը, որ կ'իյնայ Տարօնի Աշխարհի հարաւային կողմը եւ կը տարածուի արեւելքէն՝ մինչեւ Սղերդ, հարաւէն՝ Մուֆարդին (Տիգրան Մեծի կերտած մայրաքաղաքը, Տիգրանակերտ), եւ արեւմտեան կողմէն ալ՝ կ'եզերուի Գինջի գաւառակով:

Սասունի գաւառի հիւսիսային կողմը, արեւելքէն արեւմուտք, կ'երկարածուի Կուրտիկի լեռնաշղթան, որ Սասունի գաւառը կը բաժնէ Մշոյ դաշտէն, եւ որուն բարձրագոյն գագաթներէն մին է հանրածանօթ Միրնկատար ամպածրար լեռը՝ իր միշտ ձիւնապատ գաղաթով:

Վարչական տեսակէտով, Սասունի գաւառը բաժնուած էր եօթը շրջաններու կամ գաւառակներու [Ա.] - 1.— Խոյթ - Բոնաշէն. 2.— Մօտրկան (այս երկու գաւառակները կը գրաւէին Սասունի արեւելեան եւ հարաւային արեւելեան շրջանը). 3.— Փսանք. 4.— Խիանք, որոնք կ'եզերէին Սասունը՝ հարաւային կողմէն. 5.— Խուլփ, որ կը գրաւէր Սասունի արեւմտեան տարածութիւնը. 6.— Դալուորիկ, որ կը գտնուէր Սասունի կեդրոնական մասին մէջ, եւ 7.— Բուն Սասունը (Շատախ), որ կը տարածուէր Կուրտիկի լեռնաշղթային եւ Միրնկատարի լեռնալանջերու հարաւային փեշերէն մինչեւ Դալուորիկ:

Սասունի լեռնաշխարհի նշանաւոր լեռնագագաթներն էին Մովասար, Մարաթուկ, Ճրոֆրո Քարի Արծուերոյնը, Կապլոր եւ Կեփին, եւ ասոնց բոլորին մէջ ամենէն հանրածանօթն ու նուիրականը՝ Անդոկ պատմական լեռն էր, Հայոց պատմութեան մէջ սրբացած անուն մը, ներկուած հազարաւոր անմեղ Հայերու բոսորագոյն արիւնով:


Անդոկ լեռը Սասունի լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթն է, որուն ստորտը կը գտնուի նոյնքան հռչակաւոր Գելիեզուզան գիւղը: Անդոկի լեռնալանջերէն հոսող ջուրերը կը կազմեն Տիգրիս գետի վերին ճիւղը, որ կը հոսի Գելիեզուզան գիւղի մէջէն՝ զայն երկուքի բաժնելով:

Բուն Սասունի մէջ կը գտնուին նաեւ Շենիկ եւ Սեմալ նշանաւոր հայագիւղերը, որոնք՝ Գելիեզուզանի հետ կը կազմեն նուիրական երրորդութիւն մը՝ իրրեւ որրաններ Հայ Ազատագրական շարժումներուն:

Անդոկ եւ Կեփին լեռներէն դէպի արեւելք կը տարածուի Ծովասար լեռը՝ իր շղթաներով: Իսկ Կապուր եւ Կորչիկ լեռները կ'իյնան Դալուորիկի գաւառակին հիւսիսային կողմը՝ ընդմէջ Դալուորիկի եւ Սասունի գաւառակներուն:

Փսանաց եւ Խիանքի գաւառակները կը տարածուին Դալուորիկէն դէպի հարաւ-արեւմուտք, իսկ Խուլփի գաւառակը կ'ընդգրկէ Անդոկ եւ Կեփին լեռներու արեւմտեան փէշերը՝ մինչև Գինջ:

Ինչպէս յիշուեցաւ, Անդոկ լեռը կը բարձրանայ Գելիեզուզան



ՍԱՍՈՒՆԻ ԳԱՐՏԵՍ

գիւղի կոնակն ի վեր, իսկ Կեփին լեռը՝ անկէ երկու ժամու չափ հեռաւորութիւն ունի, դէպի հարաւ:

Առ հասարակ, Սասունի մէջ, գիւղ մը բաժնուած էր գիւղակներու՝ իրարմէ ո՛չ այնքան հեռու տարածութեան մը վրայ, բայց այս գիւղակները կապուած կը մնային մայր գիւղին հետ եւ միշտ անբաժան մաս նկատուած՝ անոր:

* * *

[Ա.] Բնիկ Սասունի Գելիեզուզան գիւղացի եւ մեր դասընկեր (Պոլսոյ Ազգային Կեդրոնական Վարժարանի մէջ) Վարդան Պետոյեան, իր «Սասնոյ Ազգագրութիւնը» ծաւալուն երկասիրութեան մէջ, յետ մահու հրատարակուած Հայկական ՍՍԽ Գիտութիւնների Ակադեմիա, Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտ եւ Հայաստանի Պետական Պատմական Թանգարանի կողմէ, 1965-ին, իր մահէն հազիւ քանի մը ամիս վերջ, — կը յայտարարէ որ Սասունը կը բաժնուէր տասը շրջանակներու, մինչդեռ երկու ուրիշ ազգիւրներ, — մէկը՝ կրկին բնիկ Սասունցի եղիազար Կարապետեան, իսկ միւսը՝ Արսէն Միքայէլեան, — կ'ըսեն թէ Սասուն բաժնուած էր եօթը շրջանակներու [Տեսնել Ե. Կարապետեանի «Սասուն» երկասիրութիւնը, էջ 3, հրատարակուած Երեւանի մէջ, 1962-ին, «Հայ Պետ-Հրատ»ի կողմէ, իսկ միւսը՝ Սասունի վիճակագրութիւն մըն է, զոր «Տպրոնի Արծիւ» ամսաթերթը (1941 Յունուար) արտատպած է «Դր-րօշակ»ի 1904-ի Ապրիլ-Մայիս ամիսներու միացեալ թիւէն:

Մենք նախապատուութիւն տուինք այս երկրորդ տեսակէտին՝ այն պարզ պատճառով որ 1910-1912 դպրոցական տարեշրջաններուն, Հայոց Միացեալ Ընկերութեան Մուշի Ներսէսեան Կեդրոնական վարժարանի մէջ՝ Հայրենագիտութիւն դասաւանդած առեւն, այս վերջին բաժանումը կը սորվեցնէին մեզի:



Գ Լ ՈՒ Մ Բ .

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐՈՒ ԶԳՈՒՇԱԻՈՐ ԸՆԹԱՑՔԸ
ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Իբրև արդիւնք Սասունցիներու դարաւոր դառն փորձառութիւններուն, անոնց մէջ զարգացած էր կասկածամիտ գգուշաւոր վերաբերում՝ զիրենք չըջապատող այլազգի ցեղերու հանդէպ :

Այս յատկանիշը ա՛լ աւելի ցայտուն կերպով ի յայտ եկաւ Համաշխարհային Առաջին Պատերազմի սկզբնական շրջանին մանաւանդ, երբ թուրք կառավարութիւնը ընդհանուր զօրաշարժ յայտարարած էր, եւ բնականաբար, Սասունցիներն ալ, ըստ օրէնքի տրամադրութեան, պարտաւոր էին իրենց երիտասարդութիւնը տրամադրել Օսմանեան հայրենիքի պաշտպանութեան գործին :

Սասունցիները, սակայն, բնա՛լ երբեք յօժար եւ տրամադիր չգտնուեցան ընդառաջելու այդպիսի պարտականութեան մը՝ ո՛չ իբրև զինուոր եւ ո՛չ ալ՝ իբրև շալակաւոր :

Անոնց պատճառաբանութիւնը երկծալ էր. առաջինը սա՛ էր որ Համիտական բռնակալութեան սարքած պարբերական կոտորածներու հետեւանքով՝ երիտասարդութիւն մնացած չէր Սասունի մէջ, իսկ նոր սերունդն ալ՝ զինուորական տարիքի մէջ չէր գտնուեր դեռ :

Սասունցիներու երկրորդ առարկութիւնն ալ սա՛ էր որ իրենց հարեւան Քուրդ աշիրէթներու զինուորական տարիքի մէջ գտնուող երիտասարդութիւնը ամբողջովին զերծ կը մնար այդ ծառայութենէն : Ատիկա շատ լուրջ եւ ծանրակշիռ հանգամանք ունեցող պարագայ մըն էր, զոր Սասունցիները պարտաւոր էին նկատի ունենալ եւ ի հարկին՝ մտահոգուէին այդ անպատեհութեան ծանրակշիռ հետեւանքներէն :

Մուշի կառավարիչ Սերվէթ Բէյի մասնաւոր ջանքերով, Տարօնի Ազգային Առաջնորդարանը եւ մասնաւորապէս Վարդան Վարդապետը ու Դաշնակցութեան Մուշի շրջանի ղեկավարները յաջողեցան համոզել Սասունցիները որ ընդառաջ երթան թուրք կառավարութեան այդ օրինական պահանջին, որուն իբրև հետեւանք, Սասունցի երիտասարդներ տրամադրուեցան ղէպի ռազմաճակատ պարէն փոխադրելու գործին :

Մենք ունինք ակնատես յուշագիրի մը առարկայական նկարագրութիւնը՝ շալակաւորներու այդպիսի կարաւանի մը քաշած անմարդկային զրկանքներուն, ենթարկուած տառապանքներուն եւ ի գործ դրուած անգթութեանց մասին : Յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան՝ պաշտօնեաներէն մին(1) եղած է այդպիսի ստուարաթիւ կարաւանի մը — ԺԱ. կարաւանը, որ Մուշէն ճամբայ ելած է 1915 Փետրուար 10-ին, հազարաւոր շալակաւորներու մէջ ունենալով 100-150 Սասունցի երիտասարդներ (Այս կարաւանի նկարագրութիւնը կարդալ կարօ Սասունիի «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» երկասիրութեան մէջ, էջք 731-742, եւ կա՛մ՝ «Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջք 34-49) :

Իր պաշտօնին բերումով, յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան ակնատես վկան կ'ըլլար այդ շալակաւորներու կրած հազարումէկ նեղութիւններուն, ենթարկուած բազմապիսի չարչարանքներուն եւ անմարդկային անգթութեանց, որոնց մասին՝ խիստ համառօտ կերպով խօսած ենք արդէն, մեր ներկայ Քննական Ուսումնասիրութեան մէջ (Տեսնել Մասն Առաջին, Գլուխ Առաջին) :

Շալակաւորներու այս խումբին մասնակցող 100-150 Սասունցի երիտասարդները, իբրև շալակաւոր, չկարողանալով տոկալ անմարդկային նեղութեանց եւ չարչարանքներուն, կէս ճամբայէն (Պընուսայ բերդէն) կը լքեն իրենց բեռներն ու կարաւանը, խոյս կուտան ղէպի Սասուն, իրենց հայրենի տուները :

Գոմսի Դէպքէն ետք, երբ Ռուբէն՝ Կորիւնի եւ սպառազէն խումբ մը երիտասարդներու հետ՝ Սասուն ապաստանեցաւ, որոշեց այդ լեռնաշխարհը դարձնել իր զլխաւոր գործունէութեան կեդրոնը եւ հոն կեդրոնացնել Մուշ քաղաքի, Մշոյ Դաշտի եւ շրջաններու բոլոր կոռուող ուժերը, ղէպերը, ռազմամթերքը եւ պարէնը, ինչ որ

(1) Կարօ Սասունի կ'ըսէ որ Յակոբ Տէր Զաքարեան «շալակաւոր եղած է» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 731) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] : Ասիկա ՍեԱԼ յայտարարութիւն է՝ հերքուած նոյնիսկ իր արտագրած՝ Յակոբ Տէր Զաքարեանին հետեւեալ բառերով. — «Որուն՝ իբր պաշտօնեայ՝ ընկերակցելու դժբախտութիւնն ունեցած է այս տողերը գրողը», իր իսկ «պատմագիրք»ի նոյն էջին վրայ, եօթը տող վար :

Ուրեմն, Արմաշական յուշագիրը «շալակաւոր» Զէ ԵՂԱՅ, այլ «կարաւանին ընկերացող հինգ պաշտօնեաներէն» Մին («Երեքը՝ Թուրք, երկուքը՝ Հայ») [Նոյն, էջ 732] :

յոյժ աղէտալի որոշում եւ վնասակար գործելակերպ մըն էր, ինչպէս որ ցոյց տուած էինք ասկէ առաջ ալ:

Մուշի թուրք կառավարիչը յոյժ ճարպիկօրէն օգտագործեց իրեն համար խիստ նպաստաւոր այս կացութիւնը՝ ի գլուխ հանելու համար թուրք կառավարութեան մշակած հայաջինջ ծրագիրը, որ էր ՆԱՍ հաշուեյարդարի ենթարկել Մշոյ դաշտի եւ Մուշ քաղաքի՝ անգլուխ, անգոր ու անպաշտպան վիճակի մէջ դրուած հոծ Հայութիւնը, ԱԳԱ իր հաշիւը մաքրել Սասունի հետ:

Մինչ այդ, Սերվէթ Բէյ խորամանկօրէն սկսաւ հրահրել ու քաջալերել Սասունաբնակ Քուրդ աշիրէթները, որ իրենց պարբերական յարձակումներով՝ զբաղած պահէն Սասունաբնակ «պարոն»ը եւ հայ մարտիկները, եւ անոնց ուշադրութիւնը տարբեր կողմ դարձնեն:

Այս պարբերական յարձակումները ծանօթ են «Եօթնամսեայ կռիւներ» անունով:

Մենք պիտի չզբաղինք Քրդական այս պարբերական կռիւներու նկարագրութեամբ: Փափաքողները կրնան անոնց ընդարձակ եւ յաճախ չափազանցեալ նկարագրութիւնները կարդալ երեք Սասունցի «պատմիչ»ներու պատումներուն մէջ:

ա.— Քրդական այս պարբերական յարձակումներու նկարագրութիւնը, առաջին անգամ ըլլալով, կարդացինք Պոլսոյ «Ճակատամարտ» օրաթերթի 1920-ի թիւերուն մէջ: Մեր դասընկեր՝ Սասունցի վարդան Պետոյեան, Հայաստանի տուած իր այցելութեան ատեն, զբի առած էր այդ պատմութիւնը՝ Հայաստան գտնուող Սասունցի վերապրողներու պատմածներէն օգտուելով:

Այս պատումը վերհրատարակուեցաւ Բէյրութի «Սփիւռք» շաբաթաթերթի մէջ, 1964 Փետրուար 8 եւ 15 թիւերով՝ «Սասունը եւ իր վերջին Հերոսամարտը» խորագրով:

բ.— «Սասունցի Մուշեղի Յուշերը», հրատարակուած Ռուբէնի «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները» յուշերու է. Հատորի մէջ, էջք 65-84:

գ.— Կարօ Սասունիի «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» հաստատիր «պատմագիրքը», էջք 948-984:

Գ Լ ՈՒ Խ Գ .

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒԻՒՆԵՐՈՒ ԿՐԿՆԱԿ ԲՆՈՅԹԸ



Սասունի գոյամարտի ողբերգութեան պատմութիւնը մեզի աւանդող պատմիչներէն երեք անձեր, — Սասունցի Մուշեղ, Կարօ Սասունի եւ վարդան Պետոյեան, — մեծ շփոթութեան մէջ են՝ այն պարզ եւ բացայայտ պատճառով որ անոնք չեն կարողացած կամ չեն կամեցած ԻՐԱՐՄԷ ԶԱՆԱԶԱՆԵԼ կամ ԶԱՏՈՐՈՇԵԼ Սասունի կռիւներու կրկնակ բնոյթը:—

Մէկը եւ երկարատեւը, թուրք կառավարութեան կողմէ յղացուած, թելադրուած ու փաջալերուած՝ Քրդական մասնակի եւ շարունակական յարձակումներն է՝ Սասունի զանազան շրջաններու, եւ մասնաւորապէս՝ Դալուորիկի գաւառակին մէջ, Սասուն գտնուող հայկական ուժերը միշտ զբաղած պահելու, անոնց ուշադրութիւնը՝ Մուշ քաղաքէն եւ Մշոյ Դաշտէն ուրիշ կողմ դարձնելու եւ անոնց ռազմամթերքը յուժպէտս սպառել տալու նպատակով՝ սարքուած Քրդական արուեստական յարձակումներ, որոնք քանի մը ամիսներու տեւողութիւն ունեցած են («Եօթը ամիս»), իսկ միւսը, Սասունի Հայկական ուժերուն դէմ՝ Թրքական բանակի ձեռնարկած պաշտօնական յարձակողականն է, որ սկսած է Յուլիս 20-ին, առաւօտեան շատ կանուխ եւ տեւած ԵՐԻՖ ՕՐ ՄԻԱՅՆ, այսինքն՝ Յուլիս 20, 21 եւ 22, Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի:

Երկու բնոյթ ունեցող այս կռիւները, թէեւ նոյն նպատակին ձգտող, բայց իրարմէ բոլորովին տարբեր ռազմական գործողութիւններ եղած են:

Մենք արդէն իսկ յիշած ենք Քրդական այս մասնակի յարձակումները եւ ներկայացուցած՝ մեր տեսակէտը անոնց մասին (Տեսնել ներկայ Քննական Ուսումնասիրութեան Մասն Առաջինի մէջ, Գլուխ Ժ.):

Սասունի այս աղէտաբեր ողբերգութեան պատմութիւնը մեզի աւանդող բնիկ Սասունցի պատմիչները ամբողջովին անտեսեր են Սասունի այս երկու տեսակ կռիւներու՝ իրարմէ բոլորովին տարբեր բնոյթները, կա՛մ, շփոթելով՝ զանոնք միաձուլած են իրարու հետ ու մեզի ներկայացուցած՝ իրբեւ մէկ բնոյթ ունեցող պատմութիւն:

Այս է պատճառը որ անոնց ներկայացուցած ու նկարագրած

«Սասունի կոնւեները» կ'ընդգրկեն զրեթէ Սասունի ամբողջ տարածութիւնը՝ իր զանազան գաւառակներով, եւ բաւական երկար ժամանակամիջոց մը, զոր կոչած են «Եօթնամսեայ կոնւեներ»:

Ինչպէս յայտարարեցինք քիչ առաջ, մենք պիտի չզբաղինք Քրդական այս պարբերական յարձակումներու նկարագրութեամբ ու քննութեամբ: Մեր միակ նպատակն է, հոս, իր զանազան տարբերակներով ներկայացնել, եւ քննութեան ու քննադատութեան ենթարկել այն պաշտօնական կոնուեն, որ սկսաւ թրքական բանակի կողմէ, Յուլիս 20-ին եւ վերջ գտաւ երեք օրէն, Սասունի Հայ մարտիկներու հրամանատար Ռուբէնի դասալիք եւ գաղտագողի փախուստով ու անյայտացումով, Հայկական ուժերու աննախընթաց պարտութեամբ, եւ բնիկ Սասունցի եւ Սասուն ապաստան գտած բազմաճակատ տարաբախտ Հայութեան արմատական բնաջնջումով...:



ԳԼՈՒԽ Դ.

ՌՈՒԲԵՆԻ «ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ» ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՆ ՍԱՍՈՒՆԻ ՄԷՋ

Գոմսի դէպքէն ետք, ինչպէս յիշուեցաւ, Գոմսի փախստականները, — Ռուբէն եւ Կորիւն, — իրենց ստուարաթիւ սպառազէն խումբով, փորձեցին ապաստան գտնել Սուրբ Կարապետ վանքին մէջ, սակայն Վանահայր Վարդան Վարդապետը չուտով զանոնք հեռացուց վանքի շրջանակէն, այդ դարաւոր ազգային հաստատութիւնը կասկածելի չդարձնելու համար՝ թուրք կառավարութեան աչքին:

Ասոր իբր հետեւանք, Ռուբէն որոշեց ապաստանիլ Սասուն, որ ամէն կերպով կրնար երաշխաւորել իր անձին ապահովութիւնը:

Ասիկա կը պատահէր Փետրուար ամսուան ընթացքին, Գոմսի դէպքէն անմիջապէս յետոյ: Կարօ Սասունի մեզի կու տայ այդ թուականը — 1915 Փետրուար 10 («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 712):

Այս օրէն վերջ, մինչեւ Յուլիս 22, ճիշտ ու ճիշտ՝ հինգ ամիս եւ 12 օր, Ռուբէն իր տեւական ու մնայուն բնակութիւնը հաստատած էր Սասունի մէջ:

Տեսնենք թէ այս երկար ժամանակամիջոցի ընթացքին, Ռուբէն ի՞նչ տեսակ գործունէութիւն ունեցած է եւ ի՞նչ պատրաստութիւններ տեսած է հոն՝ Սասունի այդ լեռնաշխարհը պաշտպանելու համար արտաքին յարձակումներու դէմ:

Այս ուղղութեամբ, երկու յուշագիրներ քիչ շատ մանրամասնութիւններ կու տան մեզի՝ Ռուբէնի «գործունէութեան» մասին:

Առաջինն է Սասունցի Մուշեղ, որու յուշերու մէկ քանի դրոուագները մենք արդէն բաւական մանրամասն քննութեան բովէն անցուցինք եւ ցոյց տուինք այդ յուշերու անվստահելի եւ ոչ-պատմական նկարագիրը (Տեսնել «Տարօնապատում»ի Մասն Առաջին, Գլուխ ԺԲ.):

Ատով հանդերձ, հոս նորէն կը փորձենք ներկայացնել Սասունցի Մուշեղի տարբերակի գլխաւոր մասերը.—

«Ռուբէն, Սասուն հասնելուն, անմիջապէս հրահանգեց հին Փեղայիններու եւ իշխաններու ժողով գումարել: Այս պատմական ժողովին ներկայ էին Կորիւն, Մջօն, Փեթարցի Մանուկը (Պետոյեան),

Սեմալցի Մանուկը (Շառոյեան), Գելլիեզուզանցի ոչս Կիրակոսը, Մօրուք Կարօն, Ղազար, Չոյօն, Գալուստ Սասունի, Սեմալի իշխան Մանուկը, Սասունցի Մուշեղ, եւայլն» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», է. Հատոր, «Սմբապետ Մուշեղի Յուշերը», էջ 65) :



ՄՕՐՈՒՔ ԿԱՐՕ

Այս ժողովին՝ Ռուբէն կը ներկայացնէ իր ծրագիրը : Մանր կացութիւնը պարզելէ ետք, Սասունցի Մուշեղ կը շարունակէ .—

«Երեք ճամբայ ունինք, — ըսաւ Ռուբէն, — առաջինը՝ ձեռնածալ նստիլ եւ սպասել որ Թուրքը դայ ու ոչխարներու նման կտրէ մեր վիզը . երկրորդը այն է որ մենք հաւաքենք մեր ուժերը եւ ըլլանք նախայարձակ . իսկ երրորդը՝ ինքնապաշտպանութիւնն է՝ ազատութիւն կամ մահ նշանաբանով . կա՛մ բախտը կ'ունենանք Կովկասէն եկած ուժերը դիմաւորելու, եւ կա՛մ կ'իյնանք պատուաւոր մահով» (նոյն, էջք 65-66) :

Ռուբէնի այս կարճ զեկոյցէն ետք, ներկաները կ'արտայայտեն իրենց տեսակէտները : «Թուրքին վիզ երկարելուն՝ ի հարկէ ո՛չ ոք համաձայն չէր . երկրորդ միջոցը վեր էր մեր կարողութենէն : Անհրաժեշտ զէնքի պաշար չունէինք՝ նախայարձակ ըլլալու համար : Մեզ կը մնար ընտրել երրորդ ճամբան, այսինքն՝ դիմել ինքնապաշտպա-

նութեան, ժամանակ չահիլ ու, հակառակ պարագային, իյնալ տղամարդու պէս» (նոյն, էջ 66) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

Եւ ըստ այնմ ալ, կը կատարուին դիրքային բաժանումները : Սասունի ընդարձակ ճակատները կը վերածուին եօթը գլխաւոր պաշտպանութեան գիծերու .—

- 1.— Դալուորիկի, Խուլփի, Խիանքի շրջանը կը յանձնուի Սասունցի Մուշեղին, որուն հետ են կարգ մը հին կռուողներ, — Թաթար, Համզէն, Բազէն եւ Ռըզիօն :
- 2.— Փսանաց դաւառի ճակատը կը յանձնուի Ստեփան Վարդապետին եւ Դաւիթ Երէցեանին :
- 3.— Գելլիեզուզանի շրջանը պիտի ղեկավարեն Կորիւն եւ Մջօն :
- 4.— Շենիկ-Սեմալի ուղղութիւնը պիտի բռնեն Իշխան Մանուկը, Քիաթիպ Մանուկը, Չոյօն եւ Ադամը :
- 5.— Աղբիի շրջանի ղեկավարութիւնը կը յանձնուի Աղբեցի Մարտէին :
- 6.— Կեփիի լեռնամասը կը տրուի իշխանձորցի Արթինին եւ իր եղբայր Մկրէին :

Եօթներորդ դիրքի մասին յիշատակութիւն չկայ, թէ եւ կարելի է ենթադրել որ այդ դիրքն ալ՝ Կարօ Սասունիի յիշած «Կեղերոն»ն է, ուր կը գտնուէր Ռուբէն՝ իրեն հետ ունենալով Փեթարցի Թոփալ Մանուկ Պետոյեանը :

Դիրքերու այս դասաւորումը տալէն յետոյ, ի զուր պիտի սպասէք լսել այդ դիրքերը պատրաստելու, ամբացնելու անհրաժեշտ աշխատանքներու մասին : Արդեօք պէտք չե՞ն տեսած խրամներ փորելու, ամրութիւններ շինելու, կա՛մ գոնէ, «քողքք»ներ կառուցանելու՝ Սասունի այս կեղրոնական լեռնալանջերու վրայ, ինչպէս որ այդ նոյն «քողքք»ները շինած էին Կուրտիկի լեռնալանջերուն վրայ, ըստ Ռուբէնի յայտարարութեան («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Զ., էջ 78) :

Դիրքերու այս դասաւորումէն ետք, խմբապետ Սասունցի Մուշեղը կը հաստատէ .—

«Այս բոլոր հոգերը, — զինական, պարենաւորման, ներքին անդորրութեան, — ամբողջութեամբ ծանրացած էին Ռուբէնի ուսերուն : Ամբողջ Խօքը ամիս, անիկա ո՛չ գիշեր ունէր, եւ ո՛չ ալ ցերեկ . շարունակ կը շրջէր դիրքերը, կռուողներուն խրախոյս կու տար, ճակատներու կացութիւնը կը քննէր, ռազմամթերքը քոնթրօլի կ'ենթարկէր : Ռուբէն գիտէր նոյնիսկ իւրաքանչիւր կռուողի փամփուշտին քանակը ու շարունակ հաշիւ կը պահանջէր» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է., էջ 75) :

* * *

Կարօ Սասունին եւս, մատնանշելէ ետք «Սասունը որպէս մեր ազատագրութեան միջնաբերդը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որպէս Տարօնի յեղափոխական միակ կազմակերպութիւնը, Անդոկի եւ Ծովասարի բարձունքներու վրայ, գերագոյն զոհարեցութեան կ'երթային՝ յանուն Հայ Ժողովուրդի ազատութեան» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 971), հարց կու տայ թէ «որո՞նք էին պատմական այս գերագոյն արարքի ղեկավարները եւ ի՞նչպէս դիմաւորեցին օրհասական այդ մարտը» (նոյն, անդ), եւ առաջին իսկ առիթով՝ կու տայ Ռուբէնի անունը եւ կը թուէ անոր «բարեմասնութիւնները»։

«Պատմութեան վերլուծման ընթացքին, մենք անվճռականութիւն տեսանք ղեկավարներու («ղեկավար» չ'ըսեր, Ծնթ. Ա. Տ.) մտայնութեան մէջ։ Ռուբէն, որպէս ԼԻԱԶՕՐ եւ գլխաւոր վարիչը Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութեան, ԶԿՐՑԱԻ ՂԱՐՏԱՆԵԼ ահռելի վտանգը այն ծաւալով, ինչ ծաւալով որ գործադրուեցաւ։ Եղաւ անվճռական եւ չիքահանգեց բոլորին եւ բոլոր շրջաններուն՝ կռուիլ եւ մեռնիլ իրենց շրջաններուն մէջ։

«Միայն ուղղակիութիւն մըն էր Սասուն կեդրոնացնել բոլոր ուժերը եւ հին ժամանակներու յեղափոխական ուղղութիւնը ընդգրկել։ Իրողութիւն էր որ Ռուսական բանակը Բուլանք-Մանազկերտ կը գտնուէր եւ կամաւորական դուռները կ'առաջանային դէպի Դատուան եւ Ախլաթ։ Այս իրողութիւնները իմեցին կը քելադրէին ծանրութեան կեդրոնը դարձնել Մշոյ դաշտը՝ դէպի Քոստուրի լեռնաշղթան, եւ դաշտին թիկունքը ամրացնել՝ Հաւատորիկի, Մառնիկի եւ Բերդակի բարձունքները գրաւելով» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]։

Ռուբէնի գործած այս դիտակցական անջաւելի սխալներն ու յանցանքները թուելէ ետք, Կարօ Սասունի կը սկսի իրարու ետեւէ գրուատանքներ հիւսելով՝ փառաբանել Ռուբէնի «դրական յատկանիշները», որ ահաւասիկ։

«Այս թերութիւնները անվերապահօրէն մատնանշելէն ետք, արդար է որ գնահատեմք այն դերը, զոր խաղցաւ Ռուբէն՝ Սասունի հերոսամարտին մէջ»։

Կ'արժէ որ մեր յարգելի ընթերցողներն եւս ծանօթանան Սասունի գոյամարտի «հերոս» հրամանատարի «դրական յատկանիշներուն» հետ։

Հետեւինք Կարօ Սասունի թուումին։

«Ռուբէն ո՛չ միայն կը յաջողի իր շուրջ համախմբել Սասունի իշխանները, այլեւ զանոնք իրարու կը միացնէ ընդհանուր ապստամ-

բութեան մը ծրագրով(1)։ Այս ամուր կռուանէն զատ, Ռուբէն իր շուրջ կը հաւաքէ Մուշի եւ Մշոյ դաշտի ֆետայիները՝ Մջոյի եւ Կորիւնի ղեկավարութեամբ, եւ կ'ունենայ կարգապահ եւ փորձուած բանակ մը իր ձեռքին տակ։

«Ռուբէն կըրցած է նոյն գործելակերպին բերել Կորիւնն ու Մջօն, ու անոնց հետ կը կազմէր զինուորական խորհուրդ մը, որ նոյն ժամանակ կը ներկայացնէր Դուրան-Բարձրաւանդակի Կեդրոնական Կոմիտէն։

«Ռուբէն կազմակերպած է պարենաւորման գործը եւ ռազմամթերքի բաշխումը՝ անշուշտ որքան որ միջոցները կը ներէին։ Դասաւորած էր դիրքերը եւ ուժերը բաշխած էր ըստ կարիքի։ Այս կարգադրութիւններու ընթացքին, Ռուբէն գիտցած է առնել իշխանութիւնը, Մջոյի, Կորիւնի եւ կարեւոր խմբապետներու համաձայնութիւնը։

«Անցած էրեք ամիսներու ընդհարումներու ընթացքին, ինչպէս նաեւ այն պահուն, երբ ճակատամարտերը պիտի սկսէին, Սասուն կը ներկայանայ կազմակերպուած ու կարգապահ բանակ մը։

«Այս կազմակերպութեան մեծագոյն դերակատարը Ռուբէնն էր» (նոյն, էջ 971-972)։

Կարօ Սասունի վերոյիշեալ լորձնաշուրթն փառաբանութիւնը եւ դրուատիքները Ռուբէնի հասցէին՝ ո՞րքան հիմնական են եւ պատմական ի՞նչ արժէք կը ներկայացնեն։ Մենք, անձնապէս, մեծ արժանիք չենք տեսներ յիշեալ դրուատական տողերուն մէջ։ Ռուբէն, Ի ՊԱՇՏՕՆԵ, իբրեւ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ Բիւրոյի լիազօր ներկայացուցիչ, նոյնքան եւ աւելի լիազօրութիւն եւ հեղինակութիւն կ'անձնաւորէր՝ իր անձին մէջ, եւ իր հետեւորդները ՊԱՐՏԱՆՈՐ Է՛ին ամենայն խոնարհութեամբ յարգել այդ հեղինակութիւնը եւ գլուխին ծռելով՝ հնազանդիլ եւ կատարել տրուած հրամաններն ու յանձնարարութիւնները՝ իբրեւ աստուածային պատգամ։

Բայց ձգենք այս խորհրդածութիւնները եւ մտիկ ընենք Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեանի կշռաւոր դատողութիւններուն ու դիտողութիւններուն՝ Սասունի մէջ տիրող իրական կացութեան մասին։

(1) Ասիկա սխալ հաւաստում մըն է եւ նոյնիսկ հակառակ՝ Սասունցի Մուշեղի այն յայտարարութեան, որուն համաձայն, առաջին խորհրդակցական ժողովին ներկայ գտնուող Սասունցի աւագանին հակառակ արտայայտուած է Ռուբէնի ներկայացուցած ծրագրի երկրորդ կէտին։ «Երկրորդ միջոցը (այսինքն, «Հաւաքեմք մեր ուժերը եւ ըլլանք նախադրական») վեր է մեր կարողութեան։ Անհրաժեշտ գէմքի պաշար չունինք՝ նախադրական ըլլալու համար» (Տեսնել այս Գլուխին սկիզբը դրուած Սասունցի Մուշեղի նկարագրութիւնը)։

«Սասուն ապաստանած եւ իր անձը ապահով կարծող Ռուբէնը կը շարունակէր գիշերային երթեւեկութիւններով՝ Սասունի մէջ քաշել դաշտի եւ շրջաններու ուժերն ու պահեստները՝ հսկելով միաժամանակ ոչխարի աւարառութեամբ վարուած կռիւներուն:

«Փաստն այն է որ Սասուն բարձրացողներէն շատերը տաղտկանալով այդ լճացած ու աննպատակ հաւաքումէն, կրկին իրենց տուները կը վերադառնային. ոմանք ալ՝ նոյն վիճակին չենթարկուելու համար, դէնքերնին կը զրկէին եւ տեղերնին կը մնային ձեռնունայն» (Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը, էջք 113-114):

«5-600-էն աւելի կռուողներու հաւաքոյթ մը՝ անկապ, անկազմակերպ, խճճուած Փսանքէն, Սլիվանէն, Ֆարդինի շրջանէն, Դաշտի ժողովուրդէն հոն թափուած բազմութեան մը մէջ՝ հազիւ զգալի կը դարձնէր իր գոյութիւնը: Կռուողները չէր որ կը պակսէին, եւ ո՛չ ալ՝ կռուելու տրամադրութիւնը, ա՛յլ ներքին կապը, լարուածութիւնը, ղեկը, որ պիտի տար հարկ եղած ուղղութիւնը:

«Կարելի՞ է երեւակայել որ վեց ամիսներէ ի վեր գոյութիւն ունեցող այս հաւաքոյթը փոյթը ունեցած չէր եւ պիտի չունենար ալ՝ դիրքեր սպտորաստել տալու, հարկ եղած տեղերը խրամներ բանալու, հակառակ որ հազարաւոր, տասը հազարաւոր ազատ ու աշխատունակ ձեռքեր գոյութիւն ունէին:

«Կարելի՞ է մտաբերել որ մինչ կառավարութիւնը անդին հարիւրէ աւելի գիւղեր ու քաղաքներ ամայութեան կը դատապարտէր, այդ հսկայ յեղափոխութիւնը ընդ չէր ընկած, քսան-երեսուն տունէ բաղկացեալ երկու Քուրդ գիւղեր — Տալա-Սեւին, որոնք ամենէն վերջ՝ ամենէն աղէտալի հարուածը պիտի տային մնացած Հայութեան, կամ գիշերային եւ ուղղակի գրոհով մը չփորձեց ձեռք բերել իր կողքին գտնուող Առաքելոց վանքը՝ կոտորածի եւ փախուստի մատնելով հոն գտնուած երկու հարիւրէ ո՛չ-աւելի Քուրդ զինուորները, որով թէ՛ զգալիօրէն պիտի լայնանար շրջանը եւ թէ՛ անհամեմատ անառիկ պիտի դառնար իրենց կացութիւնը...:

«Հացի բացառիկ սով կար, բայց նա մի անգամ գոնէ փորձը չկատարեց՝ յեղափոխական ճամբայով ձեռք բերելու զայն:

«Ռազմամթերքի սպառման մտահոգութիւնը կար, բայց ո՛չ մի ժամանակ մտադրութիւնը չունեցաւ առիթէն օգտուելու:

«Ուշ կամ կանուխ՝ ներխուժող ահարկու թշնամիի մը մղձաւանջը կար ու կը մնար, բայց բնաւ ի վիճակի չեղաւ կազմ ու պատրաստ ըլլալու՝ կարգով, կանոնով, հոգեբանութեամբ, համերաշխութեամբ ու մէկ բարբառով:

«Ռուսական բանակին կը սպասէր, բայց չուզեց բաժնուիլ Սասունէն եւ քայլ մը առաջ շարժուիլ՝ միայն մէկ օրով հեռու մնալու Ռուսական բանակէն» (նոյն, էջք 171-172):

ԳԼՈՒԽ Ե.

ՍԱՍՈՒՆԻ ԿՌԻՒՆԵՐՈՒ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՊԱՏՈՒՄԸ

Մուշ քաղաքի անկումէն ետք, Յուլիս Մէկէն սկսեալ, Թուրք կառավարութիւնը, քսան օրուան ժամանակամիջոցի մը ընթացքին, բնաւ երբեք չհետաքրքրուեցաւ Հաւատորիկի եւ Քանայ լեռները ապաստան գտած քաղաքացի եւ դաշտեցի Հայութեան փախստական բեկորներով, եւ ո՛չ ալ՝ Սասունի Հայութիւնով ու Սասունաբնակ ապաստամբներով, եւ բնաւ չհետապնդեց զանոնք, որովհետեւ ան զբաղած էր համաշխարհային պատմութեան մէջ դեռ երբեք չարձանագրուած ամենազաղրելի նախճիրը հաշուեյարդարի ենթարկելու անարգ գործով, այսինքն, իր արիւնաթաթաւ եւ գիշատիչ ճանկերուն մէջ ինկած Մուշ քաղաքի եւ Մշոյ Դաշտի անգէն ու անպաշտպան Հայութեան — ծեր, կին, երեխայ, — զանգուածային փճացումի եւ բնաջնջումի հրէշային գործով:

Քաղաքի անկումին յաջորդ օրն իսկ, Յուլիս 2-ին, մեր լեռնաբնակ փախստականները, Հաւատորիկի եւ Քանայ լեռնալանջերէն, հեռադիտակներով կը հետախուզէին եւ կը տեսնէին երկար կարաւանները անվերջ ու անհամար սայլերու, որոնք դուրս կու գային քաղաքէն եւ կ'ուղղուէին դէպի այս ու այն գիւղը, եւ քիչ ատեն ետք, սեւ ու իւղալից ծուխի ջուլները կը բարձրանային այդ գիւղերու մարագներէն, գոմերէն եւ ախոռներէն՝ ածխացնելով մեր միսէն միս եւ մեր ոսկորէն ոսկոր ունեցող մեր անմեղ հարազատները (Այդ մասին կարդալ յուշագիրներէն Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի «Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», էջք 59-60, Միսակ Բդէեանի «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 422-424, Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջք 148-149, 162):

Երբ Լենգթեմուրեան այս մարդախոշոչ գազանութիւնները իրենց ամբողջական լրումին հասան, Թուրք կառավարութիւնն ու զինուորական իշխանութիւնը արդէն իսկ անհրաժեշտ զինուորական օժանդակ ուժեր հայթայթած էին ուրիշ վայրերէ, եւ մանաւանդ, Ռուսական յոյժ կսկծալի ու աղէտարբեր Յուլիսեան Մեծ Նահանջին հետեւանքով կայունացած Ռուս-Թրքական ռազմաճակատէն:

Ահա՛, այդ ատենն էր որ Թրքական իշխանութիւնները իրենց հայեացքը ուղղեցին դէպի Սասուն եւ իրենց ուշադրութիւնը դարձուցին անոր վրայ :

Այս դադարի եւ նախապատրաստութեան շրջանը տեւեց քսան օր, Յուլիս 1-20, որու տեւողութեան, Թուրք կառավարութեան թելադրութեամբ ու հրահանգով, Քրդական աշիրէթները՝ Խոյթի, Մոտրկանի, Սլիվանի, Բոնաշէնի, Դալուորիկի, Փսանքի, Խուլփի եւ Խիանքի կողմերէն, շուրջանակի պաշարման օղակի մէջ առին Սասունը՝ արեւելքէն, հարաւէն եւ արեւմուտքէն. իսկ Թրքական զօրքերն ալ՝ իրենց լեռնային թնդանօթներով, մէկ կողմէն՝ Ծիրնկատարի կոնակի անցքով (Առաքելոց վանքի ճամբայով), երկրորդ կողմէ ալ՝ Մուշ քաղաքի հարաւային ձորահովիտներէն — Կուրտիկի լեռնալանջերէն, իսկ երրորդ կողմէ ալ՝ Փեթարայ ճամբայով, ամուր մը սեղմեցին իրենց պաշարման օղակը Սասունի շուրջ :

Եւ Յուլիս 19-ին, Սասունի այս շուրջանակի պաշարումը հասած էր արդէն իր ամբողջական լրումին :

Այս դինուորական շարժումներու, նախապատրաստութեանց եւ շուրջանակի պաշարումի գործողութեանց եւ ձեռնարկներու մասին՝ դո՛ւր տեղ պիտի փորձէք պզտիկ ակնարկութիւն մ'իսկ գտնել Ռուբէնի եօթը հատորնոց «Յիշատակներ»ու մէջ, ի բաց առեալ «Ճրտտոնայ»ի յերիւրածոյ պատմութիւնը, որուն ծանօթացած ենք արդէն :

Վահան Փափաղեան, Սասունի այս շուրջանակի պաշարումի եւ թնդանօթներու որոտի մասին ունի քանի մը հատ ու կոտոր եւ հարեւանցի ակնարկութիւններ միայն, որպիսիք են, օրինակ —

«Սասունէն եւս, օրէ օր, աւելի մտահոգիչ լուրեր սկսան հասնիլ :

«Աշիրէթներու կեդրոնացում կը կատարուէր հարաւէն եւ արեւմուտքէն, իբր թէ պատերազմի երթալու համար, բայց բոլոր իրենց շարժումներէն եւ սպառնալի կեցուածքէն՝ պարզ էր որ Սասունի գլխուն փորձանք մը կը պատրաստուէր» («Իմ Յուշերը», Բ., էջ 344) :

Կա՛մ. «Այդ միջոցին, արդէն իսկ սպառնական շարժումներ կը նկատուէին Սասնոյ դէմ : Գինջի, Հաղոյի, Մոտրկանի, Խարզանի, Իշխնձորի եւ ա՛յլ կողմերու աշիրէթները շարժման մէջ էին դրուած : Սասնոյ ժողովուրդը եւ յեղափոխական ղեկավարութիւնը կը զդային, անշուշտ, իմաստը այս շարժումներուն, եւ իրենց կողմէ, որքան հնարաւոր էր, պաշարի եւ ռազմանիւթի կեդրոնացման պատրաստութիւններ կը տեսնէին» (նոյն, էջք 362-363) :

Եւ կամ. «կառավարական ուժերը եւ Քրդական աշիրէթները հետզհետէ կը սեղմէին իրենց պաշարման օղակը Սասունի շուրջ :

Գրեթէ ամիսէ մը ի վեր մեր յարաբերութիւնը ընդհատուած էր հոն եղողներուն հետ : Մտահոգ էինք» (նոյն, էջ 371) :

Ուրիշ մը. «նոյն օրը, երբ մենք ցաք-ցրիւ կը նահանջէինք դէպի Քան լեռան գագաթը, Սասունի յարձակումը սկսած էր : Թնդանօթներու որոտը շատ որոշ կը հասնէր մեզի, որ շարունակուեցաւ երկար ատեն՝ մեր Քան եղած միջոցին» (նոյն, էջ 376) :

Նոյն էջին վրայ, աւելի վար.

«Երկար ատեն ո՛չ մէկ լուր ունէինք Սասունի կռիւներէն եւ անոնց հետեւանքներէն : Թնդանօթի ձայները դադրած էին : Այսպէս անորոշութեան եւ մտահոգութեան տխուր երկար օրերէն մէկուն մէջ, լուր հասաւ մեզի որ Աւրանցի մեր հին հայդուկ Արամը, հաւանարար Սասունի անկումէն վերջ, դէպի Քան գալու ատեն, զարնուած է լեռնաշղթայի մը լանջին բնակող Քուրդ գիւղացիներու կողմէ : Ենթադրեցինք որ ուրեմն մերիները պարտուած են, քանի որ Արամի պէս մէկը չէր կրնար լքել դիրքերը եւ միայնակ հեռանալ : Ուրեմն, պարտութիւնը կատարեալ էր» (նոյն, անդ) :

Եւ վերջապէս. «Իսկ Սասունը, ըստ երեւոյթին, դեռ ընկճուած չէր բոլորովին» (նոյն, էջ 378) :



Գ Լ ՈՒ Ն Զ .

ՍԱՍՈՒՆՑԻ ՄՈՒԾԵՂԻ ՏԱՐԲԵՐԱԿ

Սասունցի Մուշեղն ալ, Վահան Փափազեանի պէս, անորոշ եւ հասարակ տեղիք բացատրութիւններով եւ ընդհանրացումներով, ԻՐԻՆԻ ԹԷ կը ներկայացնէ Սասունի կոիւններու իր ակամատեսի նրկարագրութիւնը, ետ ու առաջ դասաւորումներով եւ յաճախ ալ՝ խառն ի խառն ընդհանրացումներով, որոնց պատճառով ալ՝ իր ներկայացուցած պատմութիւնը աւելի վէպի կը նմանի քան պատմութեան, այսինքն, գոյութիւն ունեցած, իրապէս ի գործ դրուած դէպքերու եւ պատահարներու հարազատ արձանագրութիւնն ըլլալէ շատ ու շատ հեռու:

Այդ յուշերէն կ'արտատպենք քանի մը հատուածներ, զորս, առաւել կամ նուազ չափով, կրնանք նկատել իբր հեռաւոր արձագանդներու արտացոլում՝ ճշմարիտ կամ ճշմարտանման պատմութեան, եթէ անոնց մէջէն հնարաւոր ըլլար զեղչել ժամանակագրական չափազանցութիւնները:

«Ռուսական նահանջէն վերջ, Թրքական բանակը կը քալէ Սասնոյ վրայ. այս կերպով, հիւսիսէն զօրքն էր, իսկ հարաւէն՝ Քրդական աշիրէթները, դարձեալ զօրքի ընկերակցութեամբ: Շուտով, արեւելեան եւ արեւմտեան շրջաններն ալ սկսան բուռն յարձակումներու՝ միշտ Թուրք զօրքերու եւ աշիրէթներու գործակցութեամբ» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է. 1, էջ 72):

«Յիշատակութեան արժանի ծանր կոիւններ տեղի ունեցան Հիւսիսէն Շենիկի եւ Սեմալի վրայ [Ա.]: Ամբողջ երկու շաբաթ, գիշեր ու ցերեկ, արիւն կը հոսի Ալիանի, Մըճեւների վրայ եւ Մխիթարայ Դուռը: Ալիանի հողամասը քանիցս ձեռքէ ձեռք կ'անցնի: Ռուբէն ի վերջոյ կը հրահանդէ լքել այդ շրջանը եւ ամբանալ Գլիբգուզանի դիրքերուն մէջ: Ռուբէն, Կորիւնի եւ Մընոյի հետ, ճակատն է շարունակ: Ի վերջոյ, Ռուբէն կուռուղ ուժերը կը վերցնէ Գլիբգուզանէն եւ այդ ճակատի վերջնական դիրքերը կ'որոշէ Անդոկ եւ Ամբըրնի լեռներուն վրայ:

«Այս կոիւններու ընթացքին, Շենիկ-Սեմալի վերագրուման անձամբ մասնակից է Ռուբէն. իր կողքին ունի Ալիանցի Մխակը, Վարդանը, Մրդէն, երկու Ղազարները, Մօրուք Կարապետը եւ Գլիբգուզանցի Կիրակոսը:

«Նոյն այդ օրերուն, աննախընթաց կոիւններ կը սկսին Դալու-

րիկի շրջանի մէջ, որուն պաշտպանութիւնը վստահուած էր ինծի...:

«Հետագային, կոիւնները աւելի սաստկացան մեր նակատին վրայ: Հարաւի Կապլորը պաշտպանելու համար, Ռուբէն ինձ մտափութացուցած էր Դաւիթ Երէցեանը, Ալիջուայ Քիզրանը, Գլիբգի Յովսէփը ... եւ այլն:

«Վերջին օրերուն, Կապլորի Չորին մէջ, տեղի ունեցաւ թշուա՛միւ մեծագոյն յարձակողականը: Հակառակ թշուա՛մի ունհամեմատ դերազանցութեան, եւ մեր ուժերու յոյսածուրեման ու անբարարար միջոցներուն, մեր տղաք ցոյց տուին արտակարգ հերոսութիւն...:

«Երեկոյեան դէմ, թշուա՛մին դիմադրարի ինչքանք ներկայացուց՝ վիրաւորեալներն ու մեռեալները հաւաքելու համար...:

«Ռուբէն, որ արդէն հասած էր մեզ ձեռք, խորհարար տուա՛ւ ինձ՝ ընդունիլ դիմադրարի առաջարկը» (նոյն, էջք 76-78):

«Յուլիս ամսուան կէսերուն, սուրհանդակներ ծանր յուրքը կը բերեն բոլոր շրջաններէն: Չօքքը, Թեղաթիւններու պաշտպանութեան տակ, կը յաջողէր նեղցնել մեր կոիւնի սահմանները [Բ.]:

«Այդ օրերուն էր որ յուր հասաւ Կորիւնի ժողովուրդի ժողովը»:

«Յաջող օր, անձամբ զացի Ռուբէնի ձեռք: Չինք գտայ Ամբըրնիի յատկացեալ դիրքերուն տղեւ. թէ՛ կը կուռէր եւ թէ՛ կը խօսէր ինծի հետ՝ ստանց իմ կողմս նայելու: Ռուբէնի քուն աչք էր որ երեկուան կոիւնի մէջ, Կորիւնը ո՛չ միայն սպաննուած էր, այլ նաեւ անոր դիակը մնացած էր Թրքական դիրքերէն ուղիւն: Այդ օրը յաջողած էր զրաւել շրջանը, սակայն, տփու՛ռ, Թուրքերը ժողովուրդի ունեցած էին Կորիւնի անշունչ ժարձիքը տանելու իրենց հետ: Հետագային իմացանք որ Կորիւնի ժարձիքը ցուցադրուած էր Մուշ քաղաքին մէջ, կառավարութեան շէնքին տղեւ(2):

(1) Կորիւնի նահատակութեան հշգրիտ թուականի մասին վերաբերուածներ ունիմք Տարօնցի երեք յուշագրիկներու թու: Միասակ Բղէեանի եւ Տէր Եղիշէ Բեհի: Տէր Պարտաւեան՝ Կորիւնի նահատակութեան օրը կու տան «Յուլիս 21» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 444. «Տարօնոյ ինքնադրամատմութիւնն Ու Չարդը», էջ 77): Իսկ Յակոբ Տէր Չափարեան՝ այդ թուականը կը գտնէ Յուլիս 22. «Յուշէն առաջ» («Յակոբ Տէր Չափարեանի Չեղագիր Յուշերը», էջք 180-181):

(2) Ստուտի կոիւններու մասին գրող բոլոր յուշագրիկներու մէջ, միայն Սասունցի Մուշեղն է որ կու տայ այս տեսակ յուր մը: Նկատի ունենալով ռազմավարի աշխարհագրական կարգը եւ Հայկական կառուց ուժերու վերաբերած գիրքերու գաղափարները, ՀԱՏ ՀԱՅԿԱՆԱԿԱՆ ՉԻ ԹՈՒՆԻՐ որ Յուլիս 21-ին կամ 22-ի տուտուտեան ժա-

«Ռուբէն շատ կապուած էր Կորիւնին(3) . գիտէր անոր ար-
ժէքը . այդ պատճառով ալ, կատաղութենէն կը մոնչէր զրեթէ»
(նոյն, էջք 78-79) :

«Ամպըրնիի ուժեղ յարձակումը, քանի մը օր վերջ(4), կը
կրկնուի նաեւ մեր ճակատին վրայ : Ծնշումը այնքան ուժեղ է որ
ստիպուած, Բայենցի Դաւիթ Երէցեանը կը զրկեմ Ռուբէնին՝ կացու-
թիւնը պարզելու եւ օգնական ուժ ստանալու համար : Դաւիթ կը յա-
ջողի հասնիլ Ռուբէնի մօտ, գլխաւոր հրահանգներ կը ստանայ ան-
կէ, սակայն վերադարձի ճամբուն վրայ կը սպաննուի :

«Մենք արդէն չէինք կրցած տոկալ թշնամիի ճնշումին, լքած
էինք կապուորը եւ ապաստանած՝ Կեփիին փեշերը :

«Այստեղ է որ զրաւոր հրահանգ կը ստանամ Ռուբէնէն, որ-
պէսզի անմիջապէս հաւաքեմ ուժերս եւ շտապեմ Անդոկ : Որոշ էր
այլեւս որ Սասնոյ բոլոր դիրքերն ալ, եօթը ամսուան կատաղի կռիւ-
նքէ վերջ, գերազանց ուժերու առջեւ սկսած էին տեղի տալ :

«Ռուբէն կը տեղեկացնէր նաեւ որ Ալեան, Միւթար Ախօն եւ
Մըճելներ, 15 օր տեւող կատաղի կռիւներէ վերջ, անցած էին թըշ-
նամիին ձեռքը . . . :

հատակուած Տարօնի պանծալի հերոսը, անշունչ իյնալէն ետք, անոր
մարմինը մնացած ըլլայ Թրքական գիծերէն ներս :

Յիրաւի, շատ գարմանալի պիտի թուէր լուսիւնը մասնաւո-
րապէս մեր երկու յուշագիրներուն (Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պար-
սամեանի եւ պատանի յուշագիր Երուանդ Շարաֆեանի), որոնք հո՛ն,
Անդոկ լեռան կողերուն վրայ, ներկայ եւ ականատես եղած են՝ այն-
տեղի բոլոր արիւնալի կռիւներուն :

(3) Այս ալ շատ սխալ հաւաստում մըն է : Ռուբէն աւելի մօտ
եղած է Մջոյին քան Կորիւնին՝ այն խիստ բացայայտ պատճառով որ
Մջօն՝ յամենայնի համակերպող եւ ենթարկուող եղած է Ռուբէնին,
իսկ Կորիւն, շատ կէտերու մէջ, հակակարծիք եւ ընդդիմադիր գրտ-
նուած է Ռուբէնի հանդէպ, եւ աւելի մօտ՝ Վահան Փափագեանին,
անակ որ կազմուած էր Ռուբէն-Մջօ եւ Փափագեան-Կորիւն axis
մը՝ միջին կապը ըլլալով Կողբեցի Վարդանը (Յ . Տ . Զ . էջ 155) :

(4) Մեր ընթերցողները, հարկաւ, շատ դիւրութեամբ կրնան
նշմարել թէ Սասունցի Մուշեղն ալ՝ ժամանակի անսպառ մթերք մը
ունի իր տրամադրութեան տակ, գոր այնքան առատաձեռն շայլու-
թեամբ մը կը գործածէ՝ յար եւ նման իր Սասունցի հայրենակից,
«պատմագիր» Կարօ Սասունիին (Այդ մասին կարդալ «Տարօնապա-
տում»ի այս քննական ուսումնասիրութեան Մասն Երկրորդի Գը-
լուի է .) :

«Ռուբէնի հրահանգը գործադրելու համար, կը սպասեմ զի-
շերուան : Կոռուողները եւ մեր կողմ գտնուող ժողովուրդը կը հաւա-
քեմ եւ շարք մը կռիւներէ վերջ, կը յաջողիմ հասնիլ Կեփիին դա-
պար . . . :

«Ռուբէնը կը գտնենք Ամպըրնիի եւ Անդոկի մէջտեղ ամրաց-
ուած դիրքերուն վրայ : Անոր նայուածքէն կը հասկնամ կացութիւնը :
Այդ նայուածքը միշտ լեզու ունէր կարծես : ՊԱՐՁ Է՛Ր որ այլեւս պիտի
մտածէիմ գառագեղէն դուրս գալու մասին :

«Եւ զիշերը, ուշ ատեն, նստանք խորհրդակցութեան» (նոյն,
էջք 79-80) : [Բոլոր ընդգծումները մերն են, Ա . Տ .] :

Հիմա՛ հոս ձգենք «ընտրելիներու ընտրելագոյնը» եւ իր «ըն-
տրեալները», որ շարունակեն իրենց այս «խորհրդակցութիւնը»,
իսկ մենք տեսնենք թէ միւս յուշագիրները ի՞նչպէս կը պատմեն Սա-
սունի այս վերջին վճռական օրերու ողբալի անցքերը :

* * *

[Ա .] Ըստ բնիկ Տարօնցի յուշագիրներու վկայութեանց, Ռու-
բէն ՆԱԽԱՊԷՍ պարպիլ տուած էր Ենիկ-Սեմալ գիւղերը եւ ժողո-
վուրդը փոխադրած՝ Գելիեզուզան գիւղը, անանկ որ երբ թրքական
բանակը, Յուլիս 20-ի առաւօտեան կանուխէն՝ յարձակողականի կը
սկսի, իր առջեւ բաց կը գտնէ եւ առանց կռիւի՝ կը վերցնէ այդ եր-
կու գիւղերը :

Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բոչեան կը գրէ .—

«Ռուբէն նախապէս պարպիլ տալով Ենիկ-Սեմալ գիւղերը
եւ այդ կողմի դիրքերը, Սասնոյ ամբողջ հայ գիւղերու բնակչու-
թիւնը եւ զուրսէն եկած փախստականները, բոլորն ալ, հաւաքել
կու տայ Գելիեզուզան, Անդոկ լեռան կողերուն վրայ : Թշնամին,
մինչեւ Գելիեզուզան, իր առաջ բաց տեսնելով, կը յառաջանայ եւ
իր թնդանօթները իր յարմար դատած դիրքերու մէջ կը դետեղէ՝
ուղղակի դէպի Անդոկ լեռան ստորոտը, մեր տղոց շինած դիրքերու
դէմ, եւ կը սկսի օրն ի բուն ոմբակոծել» («Հարազատ Պատմութիւն
Տարօնոյ», էջք 443-444) :

Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան կը
գրէ .—

«Յուլիս 20-ին, գրեթէ առանց դիմադրութեան՝ (Թուրք զօր-
քը) կը վերցնէր Ենիկ-Սեմալ գիւղերը եւ կրակի կու տար զանոնք»
(Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջ 179) :

Պատանի յուշագիր Երուանդ Շարաֆեան, որ հո՛ն, Անդոկ լե-
ռան վրայ կը գտնուէր այդ ատեն, կը գրէ .—

«(Ռուբէն) հրամայեց որ Սասունի բոլոր գիւղերու բնակիչ-

ները, իրենց ունեցածով-չունեցածով՝ բարձրանան Անդոկ եւ հոն ամբանան: Թուրք զօրքը, առանց մէկ հատիկ զոհ տալու, գրաւեց Սասունի այդ ամայի գիւղերը, քանդեց ու այրեց զանոնք» («Երուանդ Շարաֆեան Կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջ 77):

* * *

[Բ.] Սասունցի Մուշեղ կը պատմէ որ Թուրքերը, «իրենց առաջին բուռն յարձակումներու շփոթէն օգտուելով», լեռնային թընդանօթներ զետեղած են եղեր Ալիանցոց լեռնամասին վրայ, որ կ'իջխէր Գեղիեգուզան գիւղին եւ մեծ վտանգ մըն էր Անդոկի փէշերուն վրայ գտնուող դիրքերուն: Այդ պատճառով, կ'որոշեն «գիշերային յարձակումով մը» գրաւել այդ թնդանօթները եւ անգործածելի վիճակի մէջ դնել զանոնք:

Հետաքրքրութեան համար, հոս կը ներկայացնենք այդ վիպական դրուագը՝ իրրեւ նմոյշ Սասունցի Մուշեղի երեւակայական «յաղթանակներու».—

«Թուրքերը, իրենց առաջին բուռն յարձակումներու շփոթէն օգտուելով, յաջողած էին լեռնային թնդանօթներ տեղաւորել Ալիանցոց լեռնամասին վրայ: Ասիկա իրական վտանգ մըն էր Սասնոյ ինքնապաշտպանութեան համար: Ալիանը կ'իջխէր Գեղիեգուզանի վրայ: Առաջին ուժեղ զոհողութիւնը ցոյց կու տար որ վտանգուած էին նաեւ Անդոկի փէշերուն վրայ գտնուող դիրքերը:

«... Ռուբէն կը նկատէ որ ուժեղ զոհողութիւնը բարոյապէս կը ճնշէ ժողովուրդը, ուստի կ'որոշէ յարձակել թնդանօթներու վրայ եւ զբրաւել զանոնք: Այս յարձակումի ծրագիրը ի գլուխ բերելու համար, բացի շրջանի յիշուած խումբերէն, կը բերուին նաեւ Չորոյի եւ Մօրուք Կարապետի խումբերը: Ռուբէն կուտայ ուժերը կը բաժնէ երկու թեւի: Շենիկի Պօղոսը շրջանի ուժերու հետ պիտի յառաջանայ Մխիթարայ Դուռէն եւ պիտի մտնէ Մըճեւայ Աղբիւրը, իսկ ինքը՝ Չորոյի եւ Մօրուք Կարապետի հետ պիտի բռնէ Ալիանցոց Չորէն մինչեւ գագաթը:

«... Բոլոր խումբերն ալ ճամբայ կ'իյնան իրիկնադէմին: Գործողութիւնը գլուխ պիտի գար գիշերով: Լեռներու եւ ձորերու մէջ ցրուած Թուրքերու հաշիւը կարելի եղած չափով պիտի մաքրուէր լոկիտայն: Առաւելապէս դաշոյնն ու սուլինն էին որ գործ պիտի տեսնէին. ծայրայեղ պարագային միայն պիտի դիմուէր հրացանի: Ուժեղ բերը պէտք էր շարժուէին շատ արագ. նշանակուած վայրերու մէջ պէտք է իրար գտնէին անոնք ամէն գնով: Որոշուած էր գիշերուան յատուկ կարգախօս. այդ կերպով միայն հնարաւոր էր թշնամիէն զանազանուիլ: Մեր տղոց առաւելութիւնն այն էր որ հարագատ միջավայրի մէջ պիտի գործէին:

«Այս գործողութիւնը գլուխ եկաւ արտակարգ ճշգրտութեամբ: Երկու թեւի վրայ յառաջացող խումբերը, առանց մեծ դժուարութեան, կը յաջողին հասնիլ Ալիանցոց լեռը: Շուտով կը պարզուի որ զօրքը, ռազմագիտական դիրքերէ աւելի, նախընտրած էր քաշուիլ քարայրներու մէջ: Գիշերուան ցուրտին դէմ պաշտպանուելու համար վառուած խարոյկները իրենց լոյսը կը ցոլացնէին քարայրներէն դուրս: Մխիթարայ եւ Մըճեւայ փէշերուն, կարելի կ'ըլլայ գիշերային Թուրք պահակները յանկարծակիի բերել ու առանց ձայնի մաքրել: Նոյնը տեղի կ'ունենայ նաեւ Ալիանի վրայ: Թնդանօթներու մօտ պահակ կեցող տասնեակ մը զինուորները ժամանակ իսկ չեն ունենար իրարու ձայն տալու: Քանի մը քայլ հեռուութեան վրայ դրուած երեք լեռնային թնդանօթները կը մնան մեր տղոց ձեռքը: Լեռնալանջի քննութիւնը ցոյց կու տայ որ թնդանօթի ուժերէն քանի մը հատ միայն մնացած է: Ռուբէն կը կարգադրէ թնդանօթներու բանալիներն ու կարգ մը մասերը քակել եւ զանոնք դնել անգործածելի վիճակի մէջ, քանի որ անկարելի է ու նոյնպէս անիմաստ՝ անոնց փոխադրութիւնը:

«Հագիւ այս գործողութիւնը վերջացած, մութին մէջ կը յայտնուի Թրքական շրջուն պահակախումբ մը: Դժուար չ'ըլլար զանոնք զինաթափել եւ գրաւուած դէնքերն ու փամփուշտները անոնց կոնակին բռնցնելով՝ վերադառնալ Անդոկ:

«... Հետագային, կուսներու վախճանին, երբ Սասունը այլեւս սպառած է, Թուրքերը կրկին կը յաջողին թնդանօթները տեղաւորել Մխիթարայ եւ Ալիանի վրայ: Ռազմապետութիւնը կեդրոնացած էր Անդոկի հիւսիսային փէշերուն: Վերջին այս ծանր կուսներու ընթացքին, կը նահատակուին Շենիկի Պօղոսը, Սեմալայ տէրտէրը, Գրգէի Վարդանը եւ Շենիկու Ղազարը եւ խմբապետուհի Ռուբէն: Ռուբէն, քանի մը կուտայ զինուորով, հրաշքով կ'ազատի եւ կը բարձրանայ Անդոկ» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է., էջք 67-69) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Եթէ այս երեք լեռնային թնդանօթները գրաւելու աւանդավէպը ընդունինք իրրեւ իրական պատմութիւն, անհասկնալի կը մնայ թէ ինչո՞ւ համար այդ երեք թնդանօթները գրաւելէն ետք, անոնց բանալիները վերցնելով եւ կարգ մը մասերը քակելով միայն գոհացեր են: Աւելի դրական եւ օգտակար գործ մը կատարած պիտի չըլլային արդեօք, եթէ թնդանօթներու բանալիները եւ կարգ մը ուրիշ մասերը քակելէն ետք, զանոնք այդ լեռնալանջէն վար գլորցնէին՝ դէպի անդնդախոր ձորը, որ ատեն՝ այդ թնդանօթները վերջնականապէս ԱՆԳՈՐԾԱԾԵԼԻ պիտի դառնային, եւ իրենք ալ գերծ՝ անոնց պատճառելիք մտահոգութեանն...:

ԳԼՈՒԽ Է.

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունի գրեթէ քայլ առ քայլ կը հետեւի Սասունցի Մուշեղի պատումին եւ կը կրկնէ անոր ոչ-պատմական դրուագներն ու անհիմն ընդհանրացումները՝ անոնց վերայ աւելցնելով իր նոյնքան սխալ եւ ոչ-պատմական խորհրդածութիւններն ու ճամբարակութիւնները, այսպէս. —

ա. — «Մուշի հերոսամարտէն եւ հրկիզումէն անմիջապէս ետք, Թրքական ուժերը կը բարձրանան դէպի Ծիրնկատար, Կուրտիկ եւ Առաքելոց վանքի վերին ձորերը» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 969) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

Անմիջապէս դիտել տանք որ Կարօ Սասունի վերոյիշեալ «անմիջապէս» բառը գործածած է քսան օրուան ժամանակամիջոց մը ընդգրկող իմաստով, ինչ որ, բնականաբար, «անմիջապէս» Զի ՆՇԱՆԱԿԵՐ, այլ՝ քսան օր :

բ. — «Կուրտիկի երկօրեայ մեծամարտէն ետք, Սասունի մարտական ուժերը կը ստիպուին տեղի տալ եւ իջնել Շենիկ-Սեմալ: Երեք ամիս կրցած էին պաշտպանել Կուրտիկի բարձունքները՝ Թրքական վաշտերու դէմ, բայց երբ բանակ մըն է որ կը շարժէր դէպի Սասուն, Կուրտիկը պաշտպանող քանի մը տասնեակները չէին կրնար դիմանալ այս հոսանքին» (նոյն, էջ 970) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Ասիկա արդէն Ռուբէնի «Փրոտոնայ»ի առասպելն է, զոր համագամանօրէն հերքած ենք արդէն սակէ առաջ, հետեւաբար, ո՛չ «երեք ամիս» եւ ո՛չ ալ՝ նոյնիսկ «երկու օր» վատնած են՝ Թրքական արշաւող ուժերու յառաջխաղացումը կասեցնելու համար: Կարօ Սասունին է միայն որ կը խօսի այս «երկօրեայ մեծամարտ»ի մասին. միւս յուշագիրներէն եւ ո՛չ մէկը, մէջն ըլլալով նաեւ Սասունցի Մուշեղը, որեւէ յիշատակութիւն չունի անոր մասին: Ան Կարօ Սասունի խելապատակի ծնունդն է պարզապէս... :

դ. — Կարօ Սասունի, Սասունի կռիւներու նկարագրութիւնը եւ մարտական ուժերու դասաւորումն ըրած է Սասունցի Մուշեղի հետեւողութեամբ՝ այն տարբերութեամբ որ Դալուորիկի եւ Խիանքի ճակատի վարիչ Սասունցի Մուշեղին օգնական տուած է Ալիջան գեղացի քաջայանդուզն Փեղայի Տիգրանը, իսկ «Աղբիի ճակատը կը

յանձնուի Աղբկայ Մարտէին եւ Մշեցի Արոյի» կ'ըսէ (նոյն, անդ), իսկ կեդրոնի դիրքին մէջ, Ռուբէնի հետ եղած են Մուշ քաղաքացի երկու ուրիշ հայդուկներ եւս. — «Մշեցի Մուխի Ֆարհատի ԱՐՕՆ՝ իր խումբով» եւ «ՊՁՏԻԿ ԱՐԱՄ (Մշեցի)՝ իր խումբով» (նոյն, էջ 971) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] , ինչ որ, առաջին պարագային՝ սխալ անուանակոչում մըն է, իսկ երկրորդ պարագային՝ ոչ-պատմական, հետեւաբար նորէն սխալ յայտարարութիւն [Ա.] :

դ. — «Թուրք կառավարութիւնը կը յուսար առաջին հարուածով խորտակել (Սասունի) դիմադրութիւնը եւ անցնիլ դիւրին կոտորածներուն: Սակայն, ճակատամարտի ելքը անորոշ մնաց՝ առաջին օրուան արիւնալի բախումներէն ետք» (նոյն, էջ 974) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

Պատմական բացայայտ իրողութեանց բացարձակ խեղաթիւրում մըն է այս յայտարարութիւնը: Հանրածանօթ իրողութիւն էր որ Թուրք կառավարութիւնը, Թուրք զինուորական իշխանութիւնը եւ մանաւանդ Տարօնի Թրքութիւնը մեծ ակնածամբ կը սնուցանէին Սասունի պատկառագող անունին եւ անոր վերագրուած ամենի ուժին հանդէպ՝ սկսեալ Սուլթան Համիտի ժամանակներէն:

Պատերազմի տազնապալից չըջանին իսկ, Թրքական բանակը՝ Սասունի դէմ իր յարձակողականը սկսելէն առաջ, մղձաւանջի ծանր տազնապի մէջ կ'ապրէր եւ կը մտածէր որ Սասուն այնքան ալ դիւրին կ'ըլլէր պատառ մը պիտի չըլլար, ինչպէս որ եղան Մշոյ դաշտը եւ Մուշ քաղաքը (Այս կէտը մանրամասն քննութեան ենթարկած ենք արդէն՝ «Տարօնապատում»ի այս քննական ուսումնասիրութեան Մասն Առաջինի մէջ, Գլուխ ԺԷ.) :

Եւ ահով ու դողով էր որ ան կը մօտենար Սասունի սահմաններուն. սակայն, մեծ կ'ըլլայ զարմանքը՝ «մանաւանդ տեսնելով որ իր առջեւ ո՛չ մի զինուորական պատրաստութիւն կը նշմարէր՝ դիրքի, խրամի եւ այլ տեսակէտներով» (Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը, էջ 179), եւ առանց դժուարութեան՝ կը գրաւէ Շենիկ-Սեմալ ամայի գիւղերը եւ կ'այրէ:

ե. — Յիշելէ եւ կրկնելէ ետք Սասունցի Մուշեղի նկարագրած երեք թնդանօթներու գրաւումը եւ անոնց բանալիներու եւ կարգ մը մասերու ոչնչացումը, փոխանակ Սասունցի Մուշեղի նման՝ յայտնելու որ «Թրքական շրջուն պահակախումբի գէնքերն ու փամփուշտները՝ անոնց կռնակը բեռցնելով» վերադարձեր են Անդուկ («Սասունցի Մուշեղի Յուշերը», է., էջ 68), Կարօ Սասունի կը խօսի «կայծակնային յարձակողականի մը» մասին, եւ «Զինուորական Խորհուրդը կ'որոշէ հակա-յարձակումի անցնիլ թնդանօթներու դէմ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 976), եւ «երկու թեւերէն յարձա-

կողները, առանց մեծ դժուարութեան, կը հասնէին թնդանօթներու գիրքերուն: Կայծակնային յարձակումով՝ ջոկատները կ'ոչնչացնէին եւ կը դրակէին թնդանօթները: ... Խուճապ մըն էր որ կ'իջնար այս ցիրուցան բանակին մէջ» (նոյն, էջ 977) ... «Շենիկը վերադարձուած էր: Թրքական յարձակողականին կը յաջորդէր ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ...»

«Ամբողջ Սասունը ցնծութեան եւ խանդավառութեան մէջ է...» (նոյն, անդ), եւ «պատմադիր» Կարօ Սասունի կը սկսի երգել՝

«Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին Ագատուքեան դրօշակ»... Իրենց հանրածանօթ երգը՝ Դոն-Քիչոթեան խանդավառութեամբ...:

Խանասորեան այս պանծալի «յաղթանակ»ին աւետիսը տալէն անմիջապէս ետք, երեւակայական «յաղթանակ»ներով զինովցած «պատմադիրը» կը շարունակէ.—

«Թնդանօթները օր մը լռելէն յետոյ, կրկին սկսան գոռալ, եւ հետզհետէ անոնց թիւր աւելցաւ», որուն իբրեւ հետեւանք, «Շենիկը պահելն անկարելի կը դառնար: Այնտեղը պահակները ետ առնուեցան եւ ամբարցան Անդոկի բազմաթիւ գիրքերու վրայ» (նոյն, անդ):

Մարդ, Կարօ Սասունիի նման, հրաշակերտ հանճար ունենալու է՝ այս առեղծուածը լուծել կարենալու համար...:

դ.— Այս «կայծակնային յարձակում»ին կը յաջորդէ «վնասկան Տասնօրեակը» — Յուլիս 23-էն սկսեալ մինչեւ Օգոստոս 2, որ անրնդհատ յարձակողականներու եւ հակա-յարձակողականներու շարք մը կ'ըլլայ: Անոր ընթացքին, Թրքական թնդանօթները «աւելի մօտիկ բարձունքներու վրայ կը դեռնուէին՝ ուսմբերը Անդոկի դաթար հասցնելու համար» (նոյն, էջ 979):

«Թուրքերը, մէկ շարթուան կռիւներու ընթացքին, յաւապէս ճշտորոշեցին Հայերու ամբարցած գիրքերը եւ աւելի շեշտակի հարուածներու տակ առին Շենիկցիներու եւ Սեմալցիներու գիրքերը:

«Օգոստոս Մէկին (Յուլիս 20) [1], ահաւոր կրակ մը կը բացուի Շենիկցիներու եւ Սեմալցիներու գիրքերու դէմ: Անոնք իրենց

(1) Մինչեւ հիմա կը կարծէիմք որ Սասունցի «պատմագիրը» Հին Տումար էր որ կը գործածէր, սակայն էջ 980-ի վրայ, մեծ գարմանքով նշարեցիմք որ «Օգոստոս 1-ին» առջեւ, փակագիծի մէջ՝ նշանակած է «Յուլիս 20», որ բնականաբար Հին Տումարով բուական է: Եթէ Տումարագիտութեան մասնագետ մը գտնուի ամբողջ աշխարհիս մէջ որ կարենայ լուծել այս անլուծելի թննուկը, մեծապէս երախտապարտ պիտի թողու մեզ (Այս «Օգոստոս 1-ը, Հին Տումարով՝ «Յուլիս 20» Զէ, այլ՝ Յուլիս 19):

գիրքերը կը լքեն եւ աւելի բարձր գիրքի մը մէջ կ'ամբանան» (նոյն, էջ 980):

«Վճռական Տասնօրեակ»ի վերջին օրը, «Օգոստոս 2-ին, ճակատամարտը կը հասնի իր գագաթնակէտին: Թնդանօթի ուսմբերը կը պայթին Կորիւնի պաշտպանած գիրքերուն վրայ եւ առաջին դոհը կ'ըլլայ Կորիւնը...»(2):

«Զինուորական Մարմինի աջ բաղուկը ջախջախուած էր: Անդոկի անկումը օրուան մը, նոյնիսկ ժամերու խնդիր էր» (նոյն, էջ 981):

Իսկ յաջորդ օրը, Օգոստոս 3-ին, «կատաղի յարձակումները շարունակուեցան բոլոր գիրքերու դէմ: Թնդանօթի ուսմբերը կ'իջնային ժողովուրդի շինած հիւղակներու վրայ եւ ամբողջ ընտանիք մը կ'ոչնչացնէին: Ժողովուրդը, այս համադարկերուն շղիմանալով, հիւղակները լքեց եւ շարժուեցաւ դէպի վարերը՝ ձորերու եւ անտառներու մէջ ապաստան գտնելու համար» (նոյն, անդ):

«Այդ օրը, ժողովուրդը ամէն ինչ թողլով Անդոկի գագաթին վրայ, կ'ուղղուի դէպի Կըռչիկի Ձորը, Կապլորը, Կեփին եւ Գևալիէսան՝ իբր ամենէն ապահով վայր» (նոյն, անդ):

Յետոյ, Կարօ Սասունի կը սկսի մատնանշել Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի եւ Սասունցի Մուշեղի յուշերու մէջ գրտնուած «բազմապիսի աննշտութիւնները», «գորոնք այստեղ մանրամասն քննութեան չենք ենթարկեր, սակայն այս կարճ մատնանշումով՝ կ'ուղենք ՄՈԼՈՐԱՆՔԷ ԶԳՈՒՇԱՑՆՆԵԼ պատմութեամբ հետաքրքրուող ընթերցողները» (նոյն, էջ 982) [Բոլոր ընդդժումները մերն են Ա. Տ.]:

Մենք, սակայն, մեծապէս նախանձախնդիր եւ անկեղծօրէն

(2) Այս «Օգոստոս 2»ը՝ Հին Տումարով կ'ըլլայ «Յուլիս 20», բայց Կորիւն նահատակուած է Յուլիս 21-ին, ըստ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի («Տարօնոյ ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», էջ 77) եւ յուշագիր Միսակ Բդէեանի («Հարագատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 444), իսկ Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան կ'ըսէ Յուլիս 22-ին, «ճաշէն առաջ» (Յակոբ Տէր Զաքարեանի Ձեռագիր Յուշերը», էջ 180-181):

Այստեղ կ'արժէ շեշտել որ Կարօ Սասունին անգամ որեւէ յիշատակութիւն չունի Կորիւնի անշունչ մարմինին՝ թրքական գիծէն ներս մնացած ըլլալու մասին, ինչ որ բացայայտ կերպով յայտարար նշան է Սասունցի Մուշեղի պատմածին յերիւրածոյ նկարագիրին:

փափաքող ենք «մանրամասն ֆննութեան» ենթարկելու վերոյիշեալ երկու յուշագիրներու յուշերուն մէջ գտնուած «բազմապիսի աննշտութիւնները», որպէսզի «ՄՈԼՈՐԱՆՔԷ ԶԳՈՒՇԱՑՆԵՆՔ» պատմութեամբ հետաքրքրուող որեւէ անհատ, որ իրական ու ճշմարիտ պատմութիւնը գիտնալու բուն տրամադրութիւն եւ անկեղծ փափաք ունի...

Այդ նուիրական պարտականութիւնը սիրայօժար պիտի կատարենք իր կարգին, քիչ ետք...

* * *

[Ա.] Այս յայտարարութեան մէջ, մէկէ աւելի պատմական սխալներ եւ անուններու շփոթութիւններ կան, զորս կը փափաքինք յստակ ընծայել եւ անուններու շփոթը լուսարանել:

Բացայայտ կը տեսնուի որ Կարօ Սասունի իրարու հետ կը շփաթէ Մուշ քաղաքացի երկու հայդուկներու անունները՝ այն պարզ պատճառով որ այդ երկու անունները համարեա թէ նոյն տեսակ հընչում ունին — մէկը՝ Արօ եւ միւսը՝ Յարօ, որոնք կը ճատումներ են Արիստակէս (Արօ) եւ Յարութիւն (Յարօ) անուններուն:

Արօ-ն՝ Արօ Շահրիկեանն է, կամ՝ «Շահկայ Արօ» (Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, «Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն Ու Զարդը», էջ 50), կամ՝ «Թէրզի Արօ» եւ կամ՝ «Դերձակ Արօ» (Միսակ Բղէեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 393, 400, եւ այլն), որ քաջայանդուզն երիտասարդ մըն էր եւ Հաջի Յակոբի աջ բազուկը՝ քաղաքի գոյամարտի ընթացքին, եւ քաղաքի միւս մարտիկներու հետ՝ քաղաքէն խոյս տալէն ետք, ապաստանած էր Հաւատորիկի եւ Քանայ լեռները եւ հոն մնացեր է մինչեւ որ Ռուբէն-Փափազեան խումբին հետ, Սեպտեմբեր 6-ին՝ անցած Կովկաս, եւ Խոյի ճակատամարտին մէջ նահատակուած: Անանկ որ Արօն ԲՆԱԻ ԵՐԲԵՔ Սասուն չէ՛ գացած: Հետեւաբար, Կարօ Սասունիի այն յայտարարութիւնը թէ «Աղբի ճակատը կը յանձնուի Աղբկայ Մարտէին եւ «Մշեցի Արոյին», բացարձակապէս ՍիԱԼ է:

Իսկ միւս հայդուկը — Յարօ, կամ Մուխսի Ֆարխատի Յարօն, Յունիս 27-ի Շարաթ գիշերը կտրած-անցած է քաղաքը պաշարող Թրքական զինուորական շղթան եւ Սասուն դացած՝ ուրիշ մարտիկի մը հետ — Հրանտ Հլղաթեան (Ասոնց Սասուն երթալու մանրամասն պատմութիւնը կարդալ «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ» յուշամատեանի մէջ, էջք 382-386):

Հետեւաբար, ճիշտ կարելի է համարել Կարօ Սասունիի տուած տեղեկութիւնը թէ կեղրոնի դիրքին մէջ, Ռուբէնի հետն է եղեր նաեւ «Մշեցի Մուխսի Ֆարհատի ՅԱՐՕՆ» եւ ոչ թէ «Արօն», ինչ որ կը

հաստատէ նաեւ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան ալ («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն Ու Զարդը», էջ 75):

Ուրիշ սխալ մըն է Կարօ Սասունիի այն յայտարարութիւնը թէ նոյն կեղրոնի դիրքին մէջ կը գտնուի եղեր «Պատիկ Արամ (Մշեցի) իր խուկրով» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 971):

Ճիշտ է որ Գոմսի դէպքի ատեն, Ռուբէնի եւ Կորիւնի սպառազէն խումբին մէջ կը գտնուէր նաեւ Մուշ քաղաքացի Պատիկ Արամ Յակոբեանը եւ անոր հետ ալ՝ Սասուն դացած եւ հոն մնացած՝ մինչեւ Յուլիս Մէկ, որ ատեն՝ երբ Վահան Փափազեան, որ այդ շարքուն կը գտնուէր Սասուն, լսելով Մշոյ դաշտէն եւ Մուշ քաղաքէն բաղմաթիւ փախստականներու ապաստանիլը Հաւատորիկի եւ Քանայ լեռները, կ'որոշէ վերադառնալ հոն՝ «պաշտպանելու եւ պահպանելու համար մահէն ազատուած բեկորները» («Իմ Յուշերը», Բ., էջ 366), իրեն հետ առնելով 15-20 զինեալ երիտասարդներ, որոնցմէ մէկն էր նաեւ Պատիկ Արամ Յակոբեանը:

Հաւատորիկի եւ Քանի լեռները գալէն ետք, Պատիկ Արամ՝ հոն մնաց մինչեւ Օգոստոս 2, որ ատեն՝ 80 հոգինոց խումբով մը անցաւ դնաց Կովկաս: Այս խումբին միացած էր նաեւ Տարօնցի աւաղ յուշագիր Միսակ Բղէեան՝ իր 15 տարեկան զաւակ Գուրգէնի հետ:

Հետեւաբար, Պատիկ Արամ, Սասունի գոյամարտի օրերուն, հոն չէր եւ բնականաբար՝ չէր ալ կրնար գտնուիլ կեղրոնի դիրքին մէջ, Ռուբէնի քով:



Գ Լ ՈՒՒ Ը .

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՈՅԵԱՆԻ ՊԱՏՈՒՄԸ

Ինչպէս յիշուեցաւ, Վարդան Պետոյեան, 1920-ի ամբան, Պոլիսէն գնաց Հայաստան՝ այցելութիւն տալու իր Սասունցի հայրենակիցներուն, որոնք 1915-ի կոտորածներէն զերծած՝ ապաստաններ էին Հայաստան եւ իրենց բնակութիւն հաստատած Արագածի լեռնալանջերուն վրայ: Պոլիս վերադարձին, ան Պոլսոյ «Ճակատամարտ» օրաթերթին մէջ հրատարակեց ինչ որ լսած էր իր Սասունցի հայրենակիցներէն:



ՎԱՐԴԱՆ ՊԵՏՈՅԵԱՆ

Կարելի չէ ըսել թէ ինչ որ վերապրող Սասունցիները պատմած են Վարդան Պետոյեանին, բոլորն ալ պէտք է նկատուին եւ ընդունուին ճշմարիտ նկարագրութիւն՝ Սասունի հերոսական պայքարին եւ անօրինակ բնաջնջումին:

Ահաւասիկ Վ. Պետոյեանի պատումին գլխաւոր մասերը.—

ա.— «1914-ի աշնան, հազիւ Ռուս եւ Թուրք պատերազմը պայթած, Թուրք կառավարութիւնը իր ատելավառ նայուածքը դարձուցած էր դէպի Սասուն եւ կ'ուզէր ոչնչացնել զայն, որպէսզի երկու կրակներու մէջ չգտնէ ինքզինք: Ատիժը պատրաստ էր. — ընդհանուր զորաշարժ հրատարակուած էր եւ կառավարական ոստիկաններ եւ զինուորներ Սասուն բարձրացեր էին՝ զօրք հաւաքելու:

«Սասունցիները գործը անուշի կապեցին եւ քանի մը օրէն՝ հարիւրաւոր զինուորներ Մուշ կ'երթային: Հազիւ հոն հասած, գըրաստական կեանք մը կը վիճակուէր անոնց: Կառավարութիւնը, քրիստոնեայ զինուորներու եւ մասնաւորապէս Սասունցիներու կըռնակը 60 օխանոց շալակներ տալով (ալիւր, ցորեն, գարի, եւայլն), Ռուսական ճակատը կը զրկէր: Զիւնն ու բուքը՝ մէկ կողմէն, ոստիկաններու շառաչուն մտրակները՝ միւս կողմէն, կը սպառնային հլու հպատակ Հայ զինուորներուն:

«Արդի՞նքը: Ոմանք ճամբաները կը մնային, ոմանք սուեխահար կ'ըլլային, իսկ սահմանադուրի հասնողները, իրրեւ անպէտք բաներ, չարաչար կը կոտորուէին:

«Սասունցիները, լսելով իրենց զաւակներու աղետարար մահը, զգացին ինքնապաշտպանութեան պահանջը, խզեցին իրենց յարաբերութիւնները Մուշի կառավարութեան հետ եւ սանձ դրին արշաւող Քուրդ վոհմակներուն» («Սասունը եւ իր Վերջին Գոյամարտը», «Սփիւռք» շաբաթաթերթ, Բէյրութ, 8 Փետրուար 1964):

բ.— «1915-ի գարնան, Մուշի, Բաղէշի, Փարդիսի եւ Գինջի կառավարական շրջանակներու մէջ դաւեր կը սարքուէին: Կեդրոնական կառավարութեան հրամանները՝ իրենց շրջանակներու մէջ դիւրաւ կը զործադրուէին, բայց ի՞նչպէս սկսիլ նոյն բանը՝ այն լեռնականներու հետ, որոնք սարսափ կ'ազդէին իրենց: Արդէն Սասունը շրջապատող բոլոր աշիրէթներուն՝ զէնք եւ ուղղամթերք բաժնուած էր, բայց որպէսզի գործը չձախողի, հրաման տրուած էր որեւէ ձեռնարկ չընել, մինչեւ որ Սասունի շրջակայքի Հայութեան հետ գործը վերջանար» (նոյն, անդ):

գ.— «Առաջին յարձակումը կը սկսի արեւելքէն: Տափքը գիւղի դայմագամ Թալիւր էֆ.ի հրամանով, Քուրդերը կը յարձակին Քոփ, Կեարմաւ, Շուշնամերկ եւ Գեղաչէն գիւղերու վրայ: Տեղացիներու փոքր ուժերը զօրաւոր դիմադրութիւն ցոյց կու տան, մին-

չեւ որ Շենիկ—Սեմալ եւ Գեղիեզուզան գիւղերէն օգնութիւն կը հասնի: Երեքօրեայ կռիւէ ետք, Թուրք եւ Քուրդ աւարառուները փախուստի կը դիմեն՝ երեսուն սպանեալ տալէ ետք:

«Երկրորդ յարձակումը տեղի կ'ունենայ Մոսիսարի ստորոտը գտնուող Աղբի գիւղի վրայ, որ նոյնպէս օգնութիւն ստացած էր Շենիկ—Սեմալ—Գեղիեզուզան գիւղերէն: Թոյլ կու տան որ թշնամին լաւ մը մօտենայ, եւ յանկարծակի յարձակումով մը՝ լաւ ջարդ մը կու տան եւ խուճապահար փախուստի կը մատնեն դայն:

«Այս երկու յաղթանակներով, Սասունցիք 10—15 օր՝ լայն չունչ մը քաշեցին: Բայց մօտակայ հարաւային շրջաններէն՝ յարձակումները կը սաստկանան: Կոուուոյ երիտասարդ ուժերը, Դաւիթ Երէցեանի եւ Մուշեղ Ասատուրեանի(1) ղեկավարութեամբ, ինքնապաշտպանութեան կը դիմեն: Անհաւասար կռիւի մէջ, սակայն, Թուրքերն ու Քուրդերը յաղթական դուրս կու դան: Հազիւ 50—60 երիտասարդներ, քանի մը հարիւր կին ու երեխաներու հետ, կոուելով ու նահանջելով՝ Անդոկի ճամբան կը բռնեն» (նոյն, անդ):

Այս լուրերը տալէն յետոյ, Վարդան Պետոյեան կը շարունակէ.—

«Մինչ կառավարութիւնը (Թրքական բանակը ըսել կ'ուզէ, Ծնթ. Ա. Տ.) կը յառաջանար, անդին Գեղիեզուզան գիւղին մէջ՝ ինքնապաշտպանութեան կարգադրութիւններ կ'ըլլային: Հոն էր Կորիւնը՝ իր խրախուսիչ ժպիտով, Ռուբէն Տէր Մինասեանը՝ «փորձառու յեղափոխականը», Կոմսը (Վահան Փափազեան)՝ «ժողովրդասէր մարդը»(2): Ուժերը երեք մասի կը բաժնուին.— Հիւսիսային, Կեդրոնական եւ Հարաւային խումբեր:

«Թուրքերը, իրենց լեռնային թնդանօթներով, կը սկսին ուժրակոծել Հայոց գիւղերը... կատաղի կռիւր կը տեւէ երեք օր: Հայերու փամփոռանքները կը սպառին, հարիւրնոց խումբը նահատակ կ'իյնայ, միայն Չոլօն՝ քանի մը ղինուորներով կ'ապաստի եւ Անդոկի ճամբան կը բռնէ: Թշնամիի կորուստը հազարը կ'անցնի, բայց յաղթանակը Թուրքերուն կը մնայ, որոնք կը սկսին դէպի Շենիկ յառաջանալ: Սասունցիներու այս պարտութենէն յետոյ, Թուրք զօրքերը կը սկսին յառաջանալ Կուրտիկի եւ Ծիրնկատարի ուղղութեամբ ալ: Այս երկու տեղերու Հայ պահակախումբերը, երկու կրակի մէջ չի-

(1) Ասիկա Սասունցի Մուշեղն է, որուն մականունը՝ Ասատուրեան ԶԻՐ, այլ՝ Աւետիսեան:

(2) Այս յայտարարութիւնը սխալ է: Սասունի կռիւներու ատեն, «ժողովրդասէր» Վահան Փափազեան հոն չէր, այլ Յուլիս Մէկիմ, մեկնած էր Հաւատարիկի եւ Քանայ լեռները:

նայու համար, կը նահանջեն դէպի Անդոկ: Երեք ուղղութեամբ յառաջացող Թուրք եւ աշիրէթական զօրքերը խուժելով կը գրաւեն Շենիկ, Սեմալ եւ Շուշնամերկ գիւղերը, եւ առանց ժամանակ կորսնցնելու՝ կը բարձրանան Կապրէ Շարաֆկան, Կրեքու եւ Կազրքէ Քերան ըսուած գաղաթները, որոնց կոնակի վրայ, մէկ ժամ հետու, 25—30 հազար Սասունցի կիներ, այրեր ու մանուկներ՝ իրենց անողոք ճակատագիրին կը սպասէին:

«Սասնոյ կեդրոնական խումբը, որ դիրք բռնած էր Կրեքուի եւ Կապրէ Շարաֆկանի վրայ՝ ղեկավարութեամբ Կորիւնի, Թորոս քահանայի եւ Գեղիեզուզանցի քանի մը տասնապետներու, բուն դիմադրութիւն ցոյց տուաւ:

«Իրիքը նպաստաւոր էր. բարձրութիւնները մեր ձեռքն էին, իսկ Թուրքերը Շենիկ—Սեմալ դաշտահովիտէն կու գային: Կռիւր բուն էր եւ Հայ մարտիկները երգելով կը կուէին: Մահը ստոյգ էր. կը մնար սուղի ծախել իրենց կեանքը» (նոյն, անդ):

դ.— «Նոյն ատեն, հարաւային խումբն ալ, Դալուորիկի լեռնալանջերու վրայ, կատաղի կռիւներ կը մղէր Կապուրի, Արծուի Բոյնի եւ Յրոֆրո Քարի ամրութեանց մէջ, ուր դիմադրութիւնը երկար չի տեւեր: Դալուորիկը նուաճուեցաւ. կիներն ու երեխաները ողջ—ողջ այրուեցան, իսկ ազատուողները բռնեցին Անդոկի ճամբան:

«Ամէն ճամբայ Հոռմ կը տանի»․ իսկ այդ օրերու մէջ, «ամէն ճամբայ Անդոկ կը տանէր Սասնոյ հերոսները»:

ե.— ԴԵՊԻ ԱՆԴՈՎ.— Սասնոյ 150 գիւղերը իրենց բնակչութեամբ՝ ճգմուեր, այրուեր, փոքրացեր եւ մէկ գիւղի վերածուեր էին, որ էր Գեղիեզուզան: Այժմ, երբ պաշտպանութեան հարաւային թեւն ալ կը խորտակուէր, այդ գիւղն ալ ամայացաւ, եւ միայն Անդոկ լեռն էր որ իր թեւերուն մէջ հաւաքեց իր ձագուկները:

«Կրեքուի եւ Կապրէ Շարաֆկանի կեդրոնական խումբն ալ այժմ ստիպուած էր լքել իր դիրքերը: Անոնք ալ սլացան դէպի Անդոկ:

«Դալուորիկի ամրութեանց եւ Կրեքուի ու Կապրէ Շարաֆկանի դիրքերու գրաւումով, Սասունի սիրտը դեռ ճգմուած չէր: Այդ բանը դիտէր նաեւ կառավարութիւնը, ուստի հրաման քրաւ որ բոլոր աշիրէթները օգնութեան հասնէին՝ Անդոկի վրայ յարձակելու: ... Քուրդ աշիրէթները՝ խառնիճաղանջ բազմութեամբ եւ ամէն ուղղութեամբ յարձակելով եւ մէկ կողմէ ալ՝ կառավարական զօրքը շարժուելով, Անդոկը առնուեցաւ երկաթէ օղակի մէջ» (նոյն, անդ):

դ.— «Ռուբէն Տէր Մինասեան եւ Կոմսը(?) Անդոկի գաղաթն էին, իրենց հետ ունենալով Դաւիթ Երէցեանը, Միսակ Մովսէսեանը, Ներսէս Առաքելեանը եւ Տէր Թորոս քահանան՝ իրենց տասնեակներով:

«Կորիւնը կը գրաւէր Անդոկի մէկ փեշը, Ամպլընին՝ իր հետ ունենալով ... Մուշեղ Ասատուրեանը եւ ուրիշներ: Իսկ Շենիկի քա-

Ջարի Հերոս Չոլօն ևւ քանի մը տասնեակ Սեմալցիներ և Շենիկցիներ՝ միացած Դալուորիկի և Շատախի (Սասուն) քաջարի մարտիկներուն, Անդոկի Ո՞ոս ըսուած կողմերը, ձախ թևեր կը սրաչտպանէին... Թրքական շեփորները յարձակում կը հրամայեն: Կը սկսի կռիւր... Այժմ իրենց ձեռքն է Անդոկի բանալին. Կրեքոյր գրաւելը՝ Անդոկին տիրել ըսել է: Իրենց լեռնային թնդանօթները Կրեքոյր վըրայ գետեղելով, թրքական զօրքերը սկսան ոմբակոծել Անդոկը» (նոյն, անդ):



ՉՈԼՕ

է. — «1915 Յուլիս 15-էն Յուլիս 22-ի ընթացքին, սարսափելի կռիւներ տեղի ունեցան: ... Կորիւն ևւ Տէր Թորոս, երբ դիրքէ դիրք վազելով՝ կը խրախուսէին զինուորները, գնդակահար եղան ևւ ինկան հերոսարար: Ուռւճապը սկսած էր. ևւ եօթնամսեայ կատաղի կռիւէ մը յետոյ, Անդոկն ալ զրաւուեցաւ:

«Միայն քանի մը տասնեակ կտրիճներ, ԳԱՂՏՆԻ ՃԱՄԲԱՆԸ-ՐՈՎ, Ռուբէնի ևւ Վահանի ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԵԱՄԲ. Քան կոչուած լեռը գացին, ուրկէ յաջողեցան անցնիլ Կովկաս» (նոյն, 15 Փետրըրուար 1964) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Վարդան Պետոյեան, այս վերջին նախադասութեամբ բրած յայտնութեամբ կը լուսարանէ ևւ կը լուծէ յոյժ կարեւոր խնդիր մը, որու մասին մենք դեռ ունինք մեր բանլիքները...:

ԳԼՈՒԽ Թ.

«ԳԻԾԵՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ»



Հիմա տեսնենք թէ — ըստ Սասունցի Մուշեղի պատումին, — «գիշերը, ուշ առեւ», տեղի ունեցած «խորհրդակցութիւնը» ի՞նչ խնդիրներ քննած ու լուծած է, ևւ ի՞նչ որոշումներու յանգած. ա՛յն «խորհրդակցութիւնը», ուր Սասունցի մեր խմբապետ պատմիչը «Անոր (Ռուբէնի) նայուածքէն կը հասկնար կացութիւնը», որովհետեւ «Այդ նայուածքը միշտ լեզու ունէր կարծես, ու կը զուշակէինք թէ ի՞նչ փոթորիկ կայ անոր մտքին ևւ հոգիին մէջ»: Եւ «պարզ էր որ այլեւս պիտի մտածէիմք ԳԱՌԱԳԵՂԷՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է., էջ 80) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

«Ու ահա՛, Անդոկի ծերպերուն մէջ, խորհրդակցութեան էին նստած ժողովուրդի ներկայացուցիչները ևւ Հայ Ֆեղայիները: Բոլորն ալ հիւժուած երեւոյթ ունէին. շատերս գիրար չէինք ճանչնար այլեւս, այնքան որ փոխուած էինք: Յոգնութիւնը, տառապանքը մեզ դուրս էին հանած մարդկային կերպարանքէ: Պատմական այս վերջին հանդիպումին ներկայ էին բաղձաթիւ հին ու նոր հայդուկներ. կային վիրաւորներ, որոնք հազիւ կարողացած էին հասնիլ Անդոկ: ... Բացակայ էին բաղձաթիւ հին ընկերներ, որոնք դեռ չեն հասած...: Կան որ ամբացած են լեռան մը խոռոչին մէջ ու պիտի կուրին մինչեւ իրենց վերջին շունչը...:

«Լուռ ենք բոլորս ալ ու զլխահակ. ոմանք կը մրափեն իրենց նստած տեղը:

«Ռուբէնն է դարձեալ որ կը խզէ լուրթիւնը —

«— Քնանալու ժամանակ կ'ունենաք, — կ'ըսէ դառն հեղանքով, — ո՛վ որ ըսելիք մը ունի, թո՛ղ ըսէ:

«Բոլորն ալ տեղեակ են կացութեան ևւ Ռուբէն պէտք չի զգար տեղեկութիւններ տալու: Միակ իրողութիւնը որ կը պարզէ, Ռուսական նահանջի փաստն է...:

«Ռուբէն մտիկ կ'ընէ յայտնուած կարծիքներուն: Կան որ կ'առջարկեն մինչեւ վերջին փամփուշտը սպառել ևւ ապա մեծով պղտիկով նստուիլ ժայռերէն վար: Ախօն յարմար կը գտնէ մեծ խորոյ մը պատրաստել ևւ անոր ճարակ դառնալ:

«Սակայն, դառնութեան այս խօսքերուն ետին նշմարելի է

ընդհանուր հոգեբանութիւնը, — քանի որ, — կ'ըսէին շատեր, — հաւաքական ինքնապաշտպանութեամբ անկարելի եղաւ փրկութիւնը ապահովել, ... այլեւս ազատ ձգենք կոռուողներն ու ժողովուրդը: Մէկ խօսքով, ամէն մարդ պէտք է որ իր գլխուն նարը նայի: Անոնք կ'ըսէին որ մեր պարտքը կատարեցինք անելով: ... Յետ այսու, Հայոց բարձրաբերձ լեռներն ու ծերպերը թո՛ղ ըլլան ժողովուրդին ապաստանարան...:

«Գիշերը կը յառաջանար ու խօսակցութիւնները կը շարունակուէին: Մջօն կ'ըսէր որ ինչ ալ որոշէք, ես իմ ժողովուրդը առած՝ պիտի փորձեմ հասնիլ Կովկաս(1), ով որ կրցաւ կ'ազատուի:

«Ասիկա պառակտում չէր: Եթէ փրկութեան ուրիշ ելք մը ըլլար, առաջին հպատակողը ինքը՝ Մջօն կ'ըլլար:

«Բոլորի նայուածքը ուղղուած էր Ռուբէնին. կ'ուզէին որ հաւանութիւն տար ընդհանուր տրամադրութեան: Գիտէինք որ անոր կարծիքը մնալ էր ու նահատակուիլ Սասնոյ լեռներուն վրայ: Եթէ, կ'ըսէր, առանց ժողովուրդի՝ դուրս պիտի գայինք երկրէն, աւելի կանուխ կրնայինք շարժուիլ: Մեր նպատակը ժողովուրդն էր, հետեւաբար պէտք է մեռնինք անոր կողքին:

«Այս առարկութեան՝ ընկերները կը պատասխանէին որ մեր մնալը այլեւս օգուտ մը չի բերեր: ... Ասկից վերջ մեզ կը մնայ ժողովուրդին, Ֆեդայիներուն ըսել որ ամէն մարդ ապաւինի իր անհատական նախաձեռնութեան ու բախտին: Այլեւս հաւաքական կռիւր չէ որ կրնայ գործ մը տեսնել. պարտիզանական ձեւով կռուիլը լաւագոյն միջոցն է...:

«Ռուբէն, վերջապէս ՀԱՄԱԿԵՐՊԵՑԱԻ ընդհանուր տրամադրութեան... , ուստի կարգադրեց որ իւրաքանչիւրը իր գէնքն ու փամփուշտը միասին առնէ եւ տէր կանգնի իր ընտանիքին: Որքան կարելի էր, ժողովուրդը պէտք էր ցրուած պահել, իրարմէ միշտ հեռու, լեռներու, ձորերու եւ անտառներու խորերը...:

«Ասոնք եղան Ռուբէնի վերջին խօսքերը» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է. 5, էջը 84-87) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Այս որոշումը տրուելէն ետք, կը մնար հոն հաւաքուած հինգ հազարի մօտ ժողովուրդը, մեծ մասամբ դուրսէն եկած փախստականներ, Անդոկի վրայէն հեռացնելու խնդիրը:

(1) Եթէ իրապէս այսպիսի «խորհրդակցական ժողով» մը տեղի ունեցած է, Մջօն ներկայ չէր եղած հոն, ա՛յլ իր դիրքին մէջ մընացած՝ միայնակ կը շարունակէր կռուիլ: Այս մասին պիտի խօսինք քիչ ետք:

«Գիշերուան մութէն օգտուելով, ժողովուրդը ցրուեցինք Կորչիկի խորերը, անմատչելի անտառներու եւ ծերպերու մէջ, իսկ մեմք ՔԱՇՈՒԵՑԱՆՔ Ֆրոֆրո Քարի ֆարայրները: Մեր նպատակն էր ՀԵՏՔԵՐՆԻՍ ԿՈՐՍՆՑՆԵԼ ու այն տպաւորութիւնը տալ կառավարութեան թէ սպաննուած ենք:

«Քարայրներու մէջ, մօտ քսան հոգիով մնացինք տասը օր, անօթի ու ծարաւ» (նոյն, էջ 88) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ու այսպէս, Սասունի հայկական ուժերու գերագոյն հրամանատարը, Ռուբէն Փաշան, կը լուայ իր մեղապարտ ձեռքերը, եւ «ՔԱՇՈՒԵՑԱՆՔ Ֆրոֆրո Քարի քարայրները», դասալիք կերպով ԹՈՂԻՔԵԼՈՎ սարսափահար եւ անճրկած այդ ահաբեկ ժողովրդական բազմութիւնները եւ իրենց միւս զինակից կոռուողները, որոնք «տէր կանգնած էին իրենց ընտանիքներուն», եւ կծիկը դրաւ՝ իրեն դաւակից քսան հոգինոց խումբի մը հետ, ըստ վկայութեան՝ կծիկ ղնողներուն դաւակից Սասունցի խմբապետ «պատմիչ»ին:



Գ Լ ՈՒ Խ Ժ .

ԵՐՈՒԱՆԴ ԶԱՐԱՓԵԱՆԻ ԵՒ ՏԵՐ ԵՂԻՉԷ ՔԱՀԱՆԱՅ
ՏԵՐ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Սասունի կոիւններու կրկնակ բնոյթը նկատի չունեցող Սասունցի այս երեք պատմիչներէն զատ, մնացեալ բոլոր յուշագիրները, — Երուանդ Շարաֆեան, Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, Մուշեղ Դուռնեան, Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բդէեան եւ Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեան, — Սասունի կոիւններու իրենց պատումները գրած ժամանակ, նկատի ունեցած են միայն ու միայն թրքական բանակի յարձակումով սկսած՝ Սասունի եռօրեայ կռիւները եւ այդ ողբերգական դոյամարտի առարկայական նկարագրութեամբ միայն գրադած :

Վերոյիշեալ յուշագիրներէն առաջին երկուքը, — պատանի Երուանդ Շարաֆեան եւ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, — հո՛ն, Սասուն կը գտնուէին, Անդոկ լեռան վրայ, եւ ականատես ու ականջալուր՝ իրենց պատմած բոլոր անցքերուն :

Հետեւեալն է Երուանդ Շարաֆեանի պատումը .—

«Երկու երեք շաբաթ, Սասուն շատ խաղաղ էր. բնաւ չէիր խորհեր որ Տարօնի տարաբախտ Հայութեան դոյամարտն էր որ կը մղուէր, եւ քիչ մը վար, Սասունի այս երկնամերձ լեռնագագաթներէն անդին, Մուշ քաղաքի եւ Մշոյ դաշտի մէջ, պատմութեան մեծագոյն ողբերգութիւնն էր որ կ'ապրէր Տարօնի պատմական Հայութիւնը . . . :

«Ամէն ինչ խաղաղ էր հոս, Սասունի մէջ, որովհետեւ թուրք կառավարութիւնը գրադած էր քաղաքի եւ դաշտի Հայութեան «մաքրագործումով» . . .

«Սակայն, կամաց կամաց, Տիգրանակերտի կողմէն, Քրդական աշիրէթները սկսան շարժիլ դէպի Սասուն, իսկ Մուշի կողմէն ալ՝ թուրք կանոնաւոր բանակը, իր լեռնային թնդանօթներով, ամբողջովին պաշարեց Սասունի շրջակայ բարձունքները :

«Ռուբէն կը պնդէր որ Սասունի ինքնապաշտպանութիւնը պէտք է կեդրոնանայ Անդոկ լեռան լանջերուն վրայ, ուրկէ պիտի կրնային կուրծք տալ թշնամիի կանոնաւոր զօրքին եւ Քրդական աշիրէթներու

յարձակումներուն, մինչեւ որ Ռուսական բանակը հասնէր :

«Եւ այդպէս ալ ընել տուաւ : Հրամայեց որ Սասունի բոլոր դիւղերու բնակիչները, իրենց ունեցածով—չունեցածով, — կին, երեխայ, տղամարդ, ուտելիք, ստացուածք, ոչխար, տաւար, եւայլն, — բարձրանան Անդոկ եւ հոն ամրանան :

«Թուրք զօրքը, առանց մէկ հատիկ զոհ տալու, գրաւեց Սասունի այդ ամայի դիւղերը, քանդեց ու այրեց զանոնք, եւ չորս կողմերէն պաշարեց Անդոկ լեռը՝ թէ՛ Մուշէն եւ թէ՛ Տիգրանակերտի կողմերէն եկած ուժերով :

«Անդոկ լեռը ռազմագիտական շատ յարմար դիրք ունէր. Գեղեգուզան գիւղի կողմէն միայն կարելի էր, նոյնիսկ ձիով, վեր բարձրանալ՝ մինչեւ անոր գագաթը. իսկ միւս կողմերէն, մասնաւորապէս Կեփիինի կողմէն, շատ անառիկ էր :

«Թուրք բանակը սկսաւ յարձակողականի : Թնդանօթները կը գոռային, եւ բարձրագագաթ լեռներու եւ անդնդախոր ձորերու մէջ՝ անոնց ահազանդողորդ արձագանգը սոսկումով կը համակէր ամէնքս : Այդ թնդանօթներու որոտումներէն՝ սարսափահար ոչխարներու հօտերը եւ միւս չորքոտանի կենդանիներու նախիրները դէպի թրքական բանակը կը վազէին քառասմբակ, եւ անոնցմէ հարիւրաւորներ կը սատկէին՝ տեղացող գնդակներու եւ ռումբերու տարափէն :

«Գեղեգուզանի ճակատին վրայ կը կռուէին Սասունցի մարտիկները՝ զեկավարութեամբ քաջակորով Կորիւնի, իսկ Տիգրանակերտի ճակատը բռնած էին Պոլէի Մջօն, իր երկու եղբայրները՝ Արշակ եւ Պօղոս, ինչպէս նաեւ դաշտեցի զինուորներ :

«Թուրք բանակը գրոհով մը գրաւեց Անդոկի ստորոտը գտնուող Հրմոյի Գոմերը, ուր հարիւրաւոր Սասունցի կիներ ու երեխաներ կրակի մատնուեցան :

«Մենք, լեռան գագաթէն, կը դիտէինք այդ ողբերգութիւնը :

«Յաջորդ օրը, Կորիւն նահատակուեցաւ եւ Սասունցիները սկսան նահանջել : Ռուբէն, երբ տեսաւ այդ նահանջը, առանց իր զէնքի ընկերներուն եւ իր շուրջը խոնուած ժողովրդական տազնապակոծ բազմութեան որբէ՛ք բան ըսելու, տասն եւ հինգ Սասունցի լաւ կռուող զինուորներ առաւ եւ յանկարծ անյայտացաւ մէջտեղէն :

«Ռուբէնի այս անակնկալ ու տմարդի փախուստն ու անյայտացումը շատ վատ տպաւորութիւն թողուց թէ՛ կռուողներուն եւ թէ՛ սարսափահար ժողովուրդին վրայ : Բոլոր մարտիկները լքեցին իրենց դիրքերը եւ ամէն ոք կը ջանար գտնել իր ընտանիքի անդամները, եւ անոնց ապահովութեան ու փրկութեան մասին միայն մտահոգուիլ : Եւ այդ պատճառով ալ, բոլոր դիրքերը անպաշտպան մնացին :

«Մութը կոխելուն պէս, թուրք զինուորներու յառաջխաղա-

ցումը կանգ առաւ : Ատիկա պատեհութիւն տուաւ սարսափահար ժողովուրդին որ մտածէր իր գլուխը փրկելու միջոցներու մասին : Ասոնց մեծ մասը, Ծովասարի կողմէն՝ դէպի արեւելք սկսաւ փախչել : Այդ դիժը, սակայն, առտուն կանուխ, Քրդական աշիրէթներու կողմէ բռնուած ըլլալով, անխնայ կոտորուեցան այդ դժով փախուստ տուողները : Հող էին Մշեցի յայտնի յեղափոխական եւ քաջամարտիկ եղբայրները — Մջօն, Արշակ եւ Պօղոս, — որոնք կը շարունակէին անազորոյն այդ գոյամարտը, եւ հո՛ն էր որ նահատակուեցաւ անոնց կրտսեր եղբայրը՝ Պօղոս :

«Մջօն երբ իմացաւ որ Սասունի Հայկական ուժերու գերագոյն հրամանատարը, Ռուբէն, փախուստ տուած է գիշերով, եւ օրհասական պայքար մղող մարտիկները եւ տագնապահար ժողովուրդը առանց ղեկավարի ձգած, բարկացաւ եւ հայհոյեց անոր .

«— Մենք եւ մեզի պէս այս բազմաշարշար ժողովուրդի հազարաւոր զաւակներս, պէտք է մնանք մեր դիրքերու մէջ եւ շարունակենք կռուիլ ու մեռնիլ՝ մեր ժողովուրդին համար եւ անոր հետ, քան թէ Ռուբէնի նման՝ լքենք զայն իր սեւ ճակատագրին, ու մեր ողորմելի կաշիին փրկութեան մասին միայն մտահոգուինք :

«Եւ հող ալ, Ծովասարի լանջերուն վրայ, հերոսաբար ինկաւ ան՝ թշնամիի դէմ շարունակելով կռիւր մինչեւ վերջ, կանգնած իր նուիրական պարտականութեան գլուխը» («Երուանդ Շարաֆեան Կը Պատմէ Տարօնի Եղեռնը», էջը 36-38) :

* * *

Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի անունով՝ մեր ձեռքը գտնուող յուշամատենը, որ կը կոչուի «Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», ունեցած է իր ողբերգական պատմութիւնը եւ անբարեխիղճ անձերու ձեռամբ՝ վերածուած է ներկայիս գրեթէ անփառուցակ ու անարժէք պատմական երկասիրութեան մը :

Տէր Եղիշէ Քահանան կու տայ հետեւեալ խառնաշփոթ տեղեկութիւնները իր տեսած եւ դիտցած պատմական պատահարներու մասին, որոնց պրպտումը եւ ուսումնասիրութիւնը ա՛լ աւելի շփոթութեան կը մատնեն հետաքրքիր ընթերցողը :

Մենք պիտի փորձենք դասաւորել յուշապատում քահանայի ներկայացուցած ու նկարագրած պատմական դէպքերը, դիրքերը եւ դէմքերը՝ ըստ կարելւոյն :

Սասունի դիրքերը դասաւորուած էին հետեւեալ կերպով .—

ա.— Ս. Յովհաննէս վանքի (դէպի Պուլիփ, արեւմուտք) կող-

մի դիրքը յանձնուած էր Պուլէի Մշոյին, որուն հետ էին իր երկու եղբայրները Արշակ եւ Պօղոս՝ 50 Սասունցի զինուորներով, Փեթարայ Մանուկը՝ իր տասնեակով եւ Մշեցի Ֆարհատի Յարօն :

բ.— Աղբիի դիրքը, Ամպըրնին, յանձնուած էր Կորիւնին՝ 40 զինուորներով :

գ.— Կապլորի եւ Կուրչիկի դիրքերը՝ Սասունցի Մուշեղին, 40-50 զինուորներով, իր հետ ունենալով նաեւ Աւրանցի Արամը եւ Սուլուխցի Քաթարը :

դ.— Կապրէ Շարաֆկանի թնդանօթներու դէմի դիրքերը բռնած էին Շենեկցիները՝ Չուլոյի ղեկավարութեամբ :

ե.— Սեմալցիները, Տէր Կարապետի, Քիաթիպ Մանուկ Շառոյեանի եւ Բլրուլի Մարտիրոսի ղեկավարութեամբ, բռնած էին Կրեթուլի դէմի դիրքերը :

զ.— Ղարիբշանայ եւ Մխիթարայ դիրքերու մէկ մասը բռնած էին Գեղիեզուզանցիները՝ Մօրուք Կարապետի եւ իր ընկերակիցներու ղեկավարութեամբ, 7-800 զինուորներով, իսկ նոյն դիրքերու մնացեալ մասը բռնած էին Ռըզիօ, Տէր Յովհաննէս եւ ընկերները՝ մինչեւ Կորիւնի դիրքերու քովի տարածութիւնները :

է.— Անդուկի մէջ, Կողբեցի Վարդան, Եղեսիացի Հաջի Կարապետ Քեմալեան, Հաջի Եանօն եւ Մոկաց Քեռի Ղազար՝ ռազմամթերքի պահապանն ու մատակարարն էին :

ը.— Ռուբէն, քանի մը ընկերներով, բռնած էր Գէորգ Զավուլի Պուլլուղ կոչուած վայրը, որ Անդուկի կեդրոնն էր, եւ անկէ կը ղեկավարէր դիրքերը՝ իբրեւ գլխաւոր հրամանատար :

Կեդրոնի այս դիրքին մէջ, Որզըլաղալցիներն ու Գոմերցիները կը կռուէին՝ Հրայրի եղբայր Մանոյի առաջնորդութեամբ :

Հետեւեալ Քուրդ աշիրէթները կը մասնակցէին Սասունի կռիւին .—

Բատըկցի, Բազրանցի, Պուլիփեցի, Պիանցի, Պոչկանցի, Ռըշկոտանցի, Բալակցի, Պողզկցի եւ Սասունցի աշիրէթները, Դըմիկ Քուրդերը, Մուշ քաղաքի Թուրքերը, Ռուսական ճակատէն բերուած զինուորները եւ այդ շրջանակի մէջ գտնուող բոլոր իսլամները, աւելի քան 30,000 հոգի, որոնք կը ճակատէին Սասունի ուժերուն դէմ, թիւով մօտաւորապէս հազար հոգի :

Յուլիս 19-ին, կատաղի կռիւներ մղուեցան բոլոր ճակատներու վրայ : Յուլիս 20-ին, Սեմալցիներն ու Շենեկցիները, թնդանօթի տարափին տակ, կը հարկադրուին լքել իրենց դիրքերը եւ բարձրանալ աւելի վերեր :

Յուլիս 21-ին, կը նահատակուին Կորիւն եւ Ալիջնայ Տիգրանը՝ իրենց Ամբըրնի դիրքին մէջ :

Վերջապէս կը լուսնայ Յուլիս 22-ի Երկուշաբթին(1), որ ատեն զարհուրանքը հասած էր իր գագաթնակէտին, — յարձակում եւ հակա-յարձակում, մակընթացութիւն եւ տեղատուութիւն. դիրքերը հետզհետէ կը կծկին, տարածութիւնները կը նեղնան՝ ճամբուն վրայ թողելով անմասն հերոսներու դիակները՝ ցան ու ցիր:

Վայնասունը՝ խառնուած պայթող ուռմբերու որոտին եւ հրացաններու ձայնին, կը սարսափեցնէր ահաբեկած ժողովրդական զանգուածները: Հրացաններու պայթիւնին եւ թնդանօթներու որոտին կը խառնուէին ահաբեկած ժողովուրդին ողբն ու կոծը, եւ երբ այդ սարսափահար բաղմութիւնը կը տեսնէ որ ամէն ինչ կորսուած է, իր դուռն առած՝ կը փախչի դէպի Կեփին, Կապլոր, Կելիեսան եւ Կորչիկի Ձոր, իբրեւ ապահով վայր, ճամբու երկու կողմերը թողլքելով իրենց մանկատի զաւակները:



ՍԱՍՈՒՆՅԻՆԵՐ

«Ո՛րչափները նետեցին իրենց զաւակները ճամբաներէն դուրս ու անցան. ո՛րչափներու ոտքերը կոխոտեցին իրենց փոքրիկները. քանի՛ կաթնկեր մանուկներ մեռան իրենց մայրերու ոտքի ծանրութեան տակ: Ո՛հ, ահաւոր է այդ: Թո՛ղ չիմանան այդ եղկելի մայրերը որ իրենք են մեռուցներ իրենց հարազատ մանկատի զաւակնե-

(1) Յուլիս 22-ը՝ Երկուշաբթի չէ, այլ՝ Չորեքշաբթի:


րը՝ այն տեսակ սարսափելի վայրկեանի մը մէջ, երբ ամէն զգացում դադրած՝ մահ միայն կը տեսնէին...:

«Անդուկ ապաստանած այս մեծազանգուած բաղմութեան հետ կային նաեւ 20,000-է աւելի ոչխար եւ այլ անասուններ: Երբ այս կենդանիները նայեցան իրենց չորս կողմը եւ ո՛չ ոք տեսան անոնցմէ, զոր սովոր էին տեսնել ամէն օր, եւ զգացին իրենց չորս կողմը տիրող ամայութիւնը, աղիողորմ վայնասուն մը փրցուցին. կովն ու եզը կը բառաջեն, շուները կ'ոռնան, ոչխարները կը մայնեն, եւ յետոյ, կարծես թէ զսպանակէ մը մղուած, բոլորը մէկէն՝ զիրար հըրմըշտկելով, զիրար կոխոտելով՝ կը սկսին վազել այն ճամբաներով, ուրկէ իրենց տէրերը փախուստի էին դիմած: Եւ հասան ալ այդ փախըստականներու կարաւաններուն ու շարունակեցին իրենց վայնասունները, որոնք միաժամանակ նախերգանքն ու վերջաբանը եղան իրենց տէրերու հէզ դիակներուն եւ ահաւոր սուգին, քանի որ իրենցմէ, այդ անասուններէն զատ, ո՛չ մէկը ողջ մնաց, որպէսզի կարենար իր աչքերը թրջել կաթիլ մը արցունքով՝ յիշատակին առջեւ անոնց, որ ինկան անթաղ...» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», էջք 75-81):

Այս խիստ զգայուն եւ տխրազու նկարագրութենէն ետք, ահանատես յուշագիրը կը շարունակէ. —

«Երբ երեկոյ եղաւ, բոլոր ողջ մնացող զինուորները դիրքերէն եկան հաւաքուեցան Ռուբէնի քով: Իր դիրքին մէջ մնացած էր միայն Պոլէի Մջօն ու կը կուռէր» (նոյն, էջ 81):

Հոս, հիմա հանգիստ ձգենք Սասունի հայկական ուժերու հրամանատարը եւ իր մարտիկները որ իրարու հետ խորհրդակցին, մենք ջանանք ներկայացնել Տարօնցի այն յուշագիրները, որոնք Սասունի գոյամարտի օրերուն՝ կը գտնուէին Հաւատորիկի եւ Քանայ լեռները:



Գ Լ ՈՒ Խ Ժ Ա.

ՄՈՒՇԵՂ ԴՈՒՌՆԵԱՆԻ ԵՒ ՄԻՍԱԿ ԲԴԵՆԱՆԻ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Սասունի եռօրեայ գոյամարտի օրերուն, Հաւատորիկի եւ Քանայ լեռները կը գտնուէին Տարօնցի երեք յուշագիրներ եւս, որոնք իրենց տարբերակներով՝ բաւականաչափ նոր լոյս կը սփռեն Սասունի կռիւներու պատմութեան վրայ եւ բոլորովին կը կերպարանափոխեն Սասունցի «պատմիչ»ի (Սասունցի Մուշեղ) եւ Տարօնի «պատմագիր»ի (Կարօ Սասունի) ներկայացուցած պատմութեանց դիմագիծը, զոր այս վերջին երկուքը կը ջանան մեզի կլլեցնել իրբեւնշմարիտ ու անխարդախ պատմութիւն:

Տարօնցի այդ յուշագիրներն են պատանի Մուշեղ Դուռնեան, աւագ յուշագիր Միսակ Բդէեան եւ Արմաշական մտաւորական Յակոբ Տէր Զաքարեան:

ա. — Քաղաքի Ս. Մարինէ թաղեցի է պատանի Մուշեղ Դուռնեան, որ նոյնպէս շատ շատերու հետ ապաստանած էր Հաւատորիկի եւ Քանայ լեռները, եւ յաջողած էր ճողոպրել Տարօնի մահասփիւռ գեհնէն ու Պոլիս գալ՝ Ձինաղաղարէն ետք, անկէ ալ՝ Հայաստան, եւ հիմա կը բնակի Երեւան:

Մուշեղ Դուռնեան հետեւեալ կարճատու տեղեկութիւնը կուտայ Սասունի կռիւներու մասին.—

«Յուլիս 24-ին, նոր փախստականներ կը հասնէին Սասնոյ լեռներէն՝ 20,000 Սասունցիներու մահազոյժը բերելով: Թուրք կառավարութիւնը, կանխորոշ ծրագրով, կազմակերպած էր Սասունի ջարդը, ինչպէս որ ըրած էր Մշոյ դաշտի Հայ գիւղերու ջարդը, այնպիսի ձեւով մը որ մէկ գիւղը իրեն դրացի միւս գիւղէն տեղեկութիւն չունէր բնաւ...»:

«Եկող Սասունցիները կը պատմէին Սասունի մէջ պատահածներու մասին: Մուշէն բաւականաչափ զինուորներ եւ խուժան բարձրացած էին՝ Սասունը պաշարող Քուրդ վոհմակներուն օգնելու համար:

«Յուլիս 20-ի առաւօտեան, Հայերը ինքզինքնին պաշարուած կը գտնեն եւ կը սկսին յուսահատ դիմադրութեան: Իրենց վրայ կեդրոնացած թնդանօթներու, արագահարուածներու եւ հրացաններու

կրակին տակ, հազիւ չորս օր կրնան դիմադրել: Չորրորդ օրը, տեսնելով որ ամէն յոյս կորած է այլեւս, Հայ մարտիկները կը յաջողին թշնամիի մէկ թեւը ճեղքել եւ Քանայ սարը փախչել, իսկ հոն մնացողները, մեծ մասամբ կիներ ու երեխաներ, կը մատնուին Թուրք եւ Քուրդ խուժանի վայրագութեանց: Սայար ժանտարմա քոմանտան Մուրատ Բէյի(1), Սիւլէյման Րիզա եւ Իսմայիլ էֆէնդիներու հրամանով, ամէն տեսակ խուժուժ չարչարաններու ենթարկուելով՝ կը ջարդուին հոն մնացողները: Տասնեակ կիներ ու երեխաներ իրարու կապուած, Սասնոյ բարձրաբերձ լեռներէն, սեպ ժայռերու գազաթներէն վար կը գլորուէին՝ կտոր կտոր ըլլալով:

«Երբ, երեք ամիս վերջ, Մուշ կը գտնուէի՝ Թուրքերու քով, պարծանքով եւ հպարտութեամբ իրարու կը պատմէին իրենց ըրածները եւ Ղազի ըլլալին կը յայտարարէին» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», Մուշեղ Դուռնեանի Յուշերը, «Դիակներու Մէջէն՝ Մուշէն Մարտին», էջք 656-657):

* * *

բ. — Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բդէեան ալ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ Սասունի կռիւներու մասին.—

«Սասնոյ լեռներէն, Մովսսարի միւս կողմէն, սկսաւ լսուիլ թնդանօթի որոտումը: Բոլորս ալ հասկցանք որ Թուրք եւ Հայ վերջին մենամարտը սկսած է: Այլեւս ուրիշ մտածմունք չունէինք: Ոմանք յուսալից էին մեր տղոց յաղթութեան, ոմանք ալ՝ յոռետես. իսկ ես՝ ալ աւելի յոռետես էի՝ գիտնալով այնտեղի պաշարի պակասութիւնը՝ այդքան փախստական ժողովուրդի համար, ու անկարելի կը համարէի մերիններուն երկար դիմանալը, թէեւ մերինները ունէին երեք հազարէ աւելի կանոնաւոր զէնք եւ այդքան ալ՝ անկանոն զէնքեր: Փամփուշտն ալ նմանապէս առատ:

«Երեք օր վերջ, թնդանօթներու որոտը դադարեցաւ: «Այդ դադարը թէ՛ լաւ եւ թէ՛ դէշ նշան էր: Երկուքէն ո՞ր մէկն էր, այսինքն, մերո՞նք ջարդեցին, փախցուցին թշնամին, թէ ոչ՝ թշնամին յաջողեց է քանդել Հայ կտրիճ մարտիկներու արծուերոյնը:

(1) Այս հրէշը այն Մուրադ Բէգն է, զոր Մուշ ֆազաֆացի պատանի հերոս Լեւոն Ղազիկեան սատկեցուց՝ դաշոյնի մէկ ֆանի հարուածներով, Մուշ ֆազաֆի մէջ (Տեսնել «Տարօնապատում»ի Մասն Երկրորդի Գլուխ ԺԴ):

«Ձէինք կրնար զիտնալ եւ մեծ տարակուսանքի մէջ էինք, երբ չորրորդ օրը, Սասունէն երեք Սասունցի սուրհանդակներ եկան՝ Ռուբէնէն նամակ բերելով Փափազեանին, որով կը յիշեցնէ անմոռանալի Կորիւնի, Մջոյի, Վարդանի, Քիաթիս Մանուկի նման քաջամարտիկ խմբապետներու նահատակութիւնը եւ ծանրօրէն վիրաւորուիլը: Թշնամին ճեղքելով բոլոր ճակատները եւ դիմադրութեան դիժերը, թափանցեր է անմատչելի Անդոկ լեռան մեր դիրքերը եւ անոնցմէ մի քանի կարեւորները գրաւած:

«Այս տեղեկութիւնները տալէն ետք, մեր քով գտնուող զինեալ երիտասարդութեան մեծ մասին օգնութեան փութալու առաջարկը կ'ընէր: Թէեւ Խմբապետ Արօ Շահրիկեան ի սրտէ կը փափաքի օգնութեան փութալ՝ մի քանի քաղաքացի զինեալ տղաներով, սակայն զինուորական ընդհանուր խորհրդակցական ժողովը անյարմար կը նկատէ այդպիսի քայլ մը, որովհետեւ գացողներն ալ իրենց կեանքը վրայ տալէն դատ, ուրիշ օգուտ մը պիտի չունենանք, քանի որ բերդն արդէն դրաւուած է եւ մինչեւ հոն հասնիլը, ամէն բան լմնցած պիտի ըլլայ, թո՛ղ որ այստեղ 25,000 հոգինոց անպատուար հոծ բազմութիւն մը կայ, որ պաշտպանուելու պէտք ունի:

«Եւ ըստ այնմ ալ, Փափազեան կը պատասխանէ Ռուբէնին, եւ Սասունէն եկող սուրհանդակներուն կ'ընկերացնէ նաեւ Հաւատորիկցի զինուոր Գալէն, որպէսզի Ռուբէնէն պատասխան մը բերէ:

«Սուրհանդակները կը մեկնին: Յաջորդ օրը, երեկոյեան, Գալէն կը վերադառնայ՝ Փափազեանին բերելով նամակ մը, որուն բովանդակութիւնը անծանօթ մնաց բոլորիս:

«Գալէն հետեւեալ կերպով կը պատմէր Սասունի կռիւներու մասին՝ մեղի եւ ընկերներուս —

«— Ռուբէն, նախապէս պարպել տալով Շենիկ—Սեմալ գիւղերը եւ այդ կողմի դիրքերը, Սասնոյ ամբողջ Հայ գիւղերու բնակչութիւնը եւ դուրսէն եկած փախտականները, բոլորն ալ հաւաքել կու տայ Գեղիեղուզան, Անդոկ լեռան կողերուն վրայ: Թշնամին, մինչեւ Գեղիեղուզան, իր առջեւ բաց տեսնելով՝ կը յառաջանայ եւ իր թնդանօթները իր յարմար դատած դիրքերու մէջ կը զետեղէ՝ ուղղակի Անդոկ լեռան ստորոտը, մեր տղոց շինած դիրքերու դէմ, ու կը սկսի օրն ի բուն ուժակոծել՝ քանդելով դիրքերը մեր տղոց, որոնցմէ ողջ մնացողները ուրիշ դիրքերու մէջ մտնելով կը կուռին:

«Լքուած դիրքերը անմիջապէս կը գրաւուին թշնամիի հետեւակ զօրքերու կողմէ, որոնք՝ թնդանօթներու պաշտպանութեան ներքեւ, կը սկսին նոր դիրքեր պատրաստել եւ անկէ կուռիլ թէ՛ զինեալ տղոց եւ թէ՛ վարը, ձորերու մէջ լեցուած անզէն ժողովուրդին

դէմ — կիներու եւ երեխաներու վրայ դնդակ տեղացնելով եւ հազարաւորներ կոտորելով:

«Անկարելի կ'ըլլայ հանդարտեցնել խուճապի մատնուած այս ժողովուրդը:

«Կռիւի երկրորդ օրը, երբ Կորիւն, Վարդան, Մջօն, Պօղոս, Քիաթիս Մանուկը եւ կարգ մը խմբապետներ կը նահատակուին, այլեւ թշնամին շահած կ'ըլլայ պատերազմը, եւ ամէն ոք, իր զբլուխն առած՝ կը սկսի հոս ու հոն, հեռուոր տեղեր փախչիլ:

«Ռուբէն, բնաւ կուռին չմասնակցելով, իր նստած տեղէն հըրամաններ կ'արձակէր միայն:

«Հետեւեալ օրը, արդէն Սասունէն սկսան մեր քով վերադառնալ քաղաքացի եւ զաշտեցի զինեալ ու անզէն երիտասարդներ ու պատանիներ, որոնց մէջ էին հօրեզօրս Բենիամինի տղան Արտաշէսը եւ քոյրս Սրբուհիի տղան Սամուէլը, երկուքն ալ 15 տարեկան:

«Բոլորն ալ Գալէի նման կը նկարագրէին Սասունի դէպքը:

«Այդ ազատուած տղաները հետեւեալ կերպով կը նկարագրէին Սասունի ջարդը:

«— Երբ թշնամին՝ Սասունի շուրջ հաւաքած ամբողջ Սասունցի Քուրդերով կռիւի սկսաւ, երրորդ օրը դեռ չլմնցած, մեր դիրքերը արդէն գրաւուած էին եւ մեր ուժերը ցիրուցան դարձած, եւ ամէն ոք՝ իր եւ իր ընտանիքի կեանքը փրկելու կը ջանար: Գազան թշնամի զօրքը եւ վայրենի Քուրդերը սկսան խուժել հոս ու հոն համախմբուած մարդոց, կիներու եւ երեխաներու վրայ: շատերը լեռներէն վար, դէպի խոր ձորերը կը գլորեցնէին եւ կը դնդակահարէին: Լեռ ու ձոր՝ լաց ու կոծէն կը թնդար: Անխնայ կը ջարդէին բոլորը: Լեռան գագաթներու վրայ գտնուող Սասունցի կիներ ահագին ժայռեր վար կը գլորեցնէին՝ իրենց վրայ յարձակում գործող զօրքերու եւ Քուրդերու վրայ, որոնք՝ գլորուած քարերու հետ միասին, դէպի անդունդը կ'անհետանային:

«Կիներու այս հերոսական արարքէն, թշնամիները ա՛լ աւելի մոլեգնած, չորս կողմերէն աւելի կատաղի յարձակումներ կը գործէին եւ անոնց մօտենալով՝ բազմաթիւ երեխաներու թեւերէն կը բռնէին եւ անդնդախոր ձորերու մէջ կը նետէին:

«Մենք, այս կողմերը փախչողներս, 4-5 հազար անձերէ կը բազկանայինք, բայց հազիւ 300 հոգի կրցանք ազատիլ եւ հոս գալ:


«Բոլոր լեռնանցքները, կիրճերը, ճամբաները լեցուած էին Քուրդերով եւ զինուորներով:

«Սասունի լեռներու անմատչելի ճամբաներէն անցնելը միմիայն Սասունցի ժողովուրդին յատուկ է: Մեզմէ հարեւաւորներ գլորուելով, սահելով կ'իյնային անդնդախոր ձորերուն յատակը եւ

վայրկեանապէս կը մահանային: Հազարաւորներ զոհ գացին թշնամիի արձակած զնդակներուն, մեր չորս կողմերը ծածկուած էին դիակներով, եւ մենք հազիւ թէ հրաշքով ազատած՝ յաջողեցանք հասնիլ այս կողմերը:

«Եկողները ասանկ կը պատմէին մեզի եւ մեր քով գտնուող խեղճ ժողովուրդին:

«Փափաղեան նամակ մը կը ստանայ Ռուբէնէն թէ ինք ողջ է եւ մի քանի զինեալ ընկերներով՝ դացած է Ս. Յովհաննէս վանքին անտառը եւ հոն ապաստանած՝ կը սպասէ յարմար բոլակին, իր ընկերներով միասին անոր քով գալու: Թէ ուրիշ ի՛նչ գաղտնի հրահանգներ տուած է Փափաղեանին, եւ ան ալ, փոխադարձաբար, ինչե՛ր գրած է անոր, մեզի անծանօթ կը մնան» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջք 442-445):



ԳԼՈՒԽ ԺԲ.

ՌՈՒԲԵՆԻ «ՀՐԱԺԵԾՏԻ ՔԱՌԸ»

Ինչպէս տեսան մեր ընթերցողները՝ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի նկարագրութենէն (Գլուխ Ժ.), Յուլիս 22-ին, Անդոկ լեռան կեդրոնի դիրքին մէջ, «զարհուրանքը հասած էր իր դագաթնակէտին. յարձակում եւ հակա-յարձակում, մակընթացութիւն եւ տեղատուութիւն. դիրքերը հետզհետէ կը նեղնան՝ ճամբուն վրայ թողելով աննման հերոսներու դիակները՝ ցան ու ցիր...:

«Այդ օրը, երեկոյեան կողմ, բազմութիւնը տեսնելով որ ամէն յոյս կորած է, թողած ամէն բան, իւրաքանչիւրն առած իր գլուխը՝ կը փախչի դէպի Կեփին, Կապլոր, Կեալեսան ու Կորչիկի Ջորը՝ իրբեւ էն ապահով վայր» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն Ու Ջարդը», էջ 80):

Եւ ողջ մնացող մարտիկները, իրենց դիրքերէն գալով, կը հաւաքուին Ռուբէնի շուրջն ու բոլորը, միայն Պոլէի Մջօն մնացած էր իր դիրքին մէջ ու կը շարունակէր կռուիլ միայնակ:

Այժմ, սիրելի՛ ընթերցողներ, պիտի ներկայացնենք շարունակութիւնը նկարագրութեան՝ յուշապատում քահանային, որ, — ինչպէս գիտենք, — ներկայ եղած է հոն, Սասունի այս գոյամարտի ոգորումներուն, Անդոկի դագաթը, Ռուբէնի կեդրոնի դիրքին մէջ, եւ իբրեւ թէ պատմած ու գրի առնել տուած է իր տեսածներն ու լրսածները՝ ԱՅՆ ՁԵՒՈՎ, ինչ ձեւի տակ որ հիմա մենք կը կարդանք իր յուշամատեան գրքոյկի 81-րդ էջին վրայ:

Մի՛ գայթակղիք, սիրելի ընթերցողներ, կարդալով հետեւեալ «սրտառու» բառերով պճնազարգուած Ռուբէնի «եքաժեշտի մտքը», ուղղուած «բոլոր ողջ մնացած զինուորներուն» (նոյն, էջ 81):

«Երբ երեկոյ եղաւ, բոլոր ողջ մնացած զինուորները դիրքերէն եկան եւ հաւաքուեցան Ռուբէնի քով: Իր դիրքին մէջ մնացած էր միայն Պոլէի Մջօն ու կը կռուէր:

«Ռուբէն, հաւաքելով բոլոր զինուորները, կը խօսի մօտաւորապէս հետեւեալը.—

«Սիրելի՛ ընկերներ,


«Հ. Յ. Դաշնակցութիւնը, իր հայրենիքի դատը վերցուցած իր ուսերուն վրայ, տարիներէ հետէ կը վազէր հեւ ի հեւ դէպի իր նրպատակը՝ մղելով թշնամիին դէմ շատ կռիւներ:

«Այսօր որ հոս հաւաքուած ենք, ըսեմ որ մենք տարինք կռիւր որչափ որ մարդկօրէն կարելի էր. ըրինք նոյնիսկ անկարելին, բայց այժմ ո՛չ ուտելիք ունինք եւ ո՛չ ռազմամթերք:

«Կացութիւնը յուսահատական է:

«Զեզի կու տամ կատարեալ ազատութիւն՝ ընելու ի՛նչ որ կ'ուզէք:

«Կա՛յ կովկաս մեկնելու հաւանական յաջողութիւնը. կա՛յ պահուելու պարագան, եւ կա՛յ նորէն դիրքերը մտնել եւ կռուիլ՝ մինչեւ մնացած հինգ-տասը փամփուշտը հատնի, եւ սպաննուիլ տեղն ու տեղը:



ՎԱՐԴԱՆ ԿՈՂՐԵՑԻ

«Ուրեմն, ազատ է ամէն ոք ընտրել որն որ կ'ուզէ: Յրուեցէ՛ք ուր որ հաճելի է ձեզ» (նոյն, էջք 81-82):

Տեսա՞ք, սիրելի ընթերցողներ. ի՛նչ հրաշալի «հրաժեշտի ֆառ» է խօսեր Սասունի Հայկական ուժերու ընդհանուր հրամանատարը, Ռուբէն, 1915 թուականի Յուլիս 22-ի գիշերը, Ֆրեզնոյի «Ասպարէզ» դաշնակցական թերթի խմբագրատան բեմէն, խմբագիր Յովհաննէս Գաբատայեանի եւ Թովմաս Չարչաֆջեանի խորհուրդով եւ օժանդակութեամբ, ու ասոնց ձեռքով ալ զրի առնուած եւ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի յուշերու մէջ ալ ներմուծուած՝ իբրեւ «հարազատ» բնագիրը եւ պատճէնը Անդոկ լերան վրայ՝ Ռուբէնի խօսած «ճառ»ին [Ա.]:

Ռուբէնէն ետք, խօսք կ'առնէ Կողբեցի Վարդանը (Տիգրան), որ Ռուսերէն խօսելով՝ կը քննադատէ Ռուբէնի արտայայտած միտքերը եւ ըրած թելադրութիւնները:

Ահաւասիկ Վարդանի խօսքերը.—

«— Եթէ մենք հայրենիքը եւ ժողովուրդը սիրողներ ենք, ՊէՏԲ է որ մնամք իրենց հետ՝ ՄԻՆՉԵԻ ՎԵՐՋԻՆ ՇՈՒՆՉԵՐԻՆԻՍ, մեռնիմք կամ ապրիմք, բայց ՄԻՇՏ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՀԵՏ, ամոր ՃԱԿԱՏԱԳՐՈՎ: Պարոն Ռուբէն ՊէՏԲ ԶԻՐ որ այդ—

պէս խօսէր» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունի՝ «աւելորդ ժողովրդասիրութիւն» կը համարէ Վարդան Կողբեցիի վերոյիշեալ արտայայտութիւնը («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 983), բայց «աւելորդ ժողովրդասիրութիւն» ԶԻՐ, բնականաբար, այս գերագոյն տաղնապի միջոցին արտայայտուած, եւ անկեղծ շունչով ու խոր զգացումով արտասանուած այդ զոհարեալական խօսքը, ա՛յլ՝ իրապէս ու նշմարտապէս ՀԱՐԱԶԱՏ, ԱՆԿԵՂԾ ու ՃՇՄԱՐԻՏ «ժողովրդասիրութիւն», զոր՝ իր կեանքը ՍԻՐԱՅՕԺԱՐ գոհաբերելու գիտով իսկ ցոյց տուաւ ու ապացուցուց՝ այդ նուիրական գաղափարի արտայայտիչ անձնազոհ հերոսը...:

Կարօ Սասունի, իր «վերապահումը արձանագրելէն ետք» (նոյն, էջ 982), Սասունցի Մուշեղի եւ Տէր Եղիշէ Քահնյ. Տէր Պարսամեանի յուշերուն մէջ եղած «բազմաթիւ աննշտութիւններու» մասին, այդ «մատնանշումով» ան կ'ուզէ «ՄՈՒՈՐԱՆՔԻ ԶԳՈՒՇԱՑՆԵԼ պատմութեամբ հետաքրքրուող ընթերցողները» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Այս «զգուշացնող» յայտարարութենէն ետք, կը ճամարտակէ որ Ռուբէնի վերոյիշեալ թելադրութիւնները «կը բխէին դաժամ իրականութենէն» (նոյն, անդ) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ռուբէնը պաշտպանող այս ճամարտակութենէն ետք, Կարօ Սասունի համարձակութիւնն ու յանդգնութիւնը կ'ունենայ հետեւեալ չքնաղ նախադասութիւնը սպրդեցնելու իր «պատմագիրք»ին մէջ եւ զայն հրամցնելու՝ իր միամիտ ընթերցողներուն ալ.—

«Ռուբէն չարքի կը դնէ հոն գտնուած զինեալ ուժերը եւ գիշերուան խաւարի մէջէն կ'ուզողուի դէպի Կոլըշիկ, Կապլոր եւ Կեփին: ԻնՉՊԷՍ ՏԵՍԱՆՔ, ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՅԴ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ ՄԵԿՆԱԾ ԷՐ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.], այն տրպաւորութիւնը ստեղծելու փութաշանութեամբ թէ Ռուբէն, իր զինեալ խումբով, ԿԸ ՀԵՏՏԻԻ Անդոկէն լեղապատառ խոյս տուող այդ սարսափահար ժողովուրդին, եւ ամոր երբալիք վայրը կ'երբար ինՔՆ ԱԼ [Բ.]:

Կարօ Սասունի, այս անհիմն ու մոլորեցուցիչ յայտարարութիւնը կ'ընէ՝ հաւանաբար, «մոլորանքէ գգուշացնելու» համար՝ «պատմութեամբ հետաքրքրուող ընթերցողները» (նոյն, էջ 982), որպէսզի չըլլայ թէ անոնք միամտութիւնն ունենան միաբերէն իսկ

անցընելու թէ Ռուբէն՝ ժողովուրդի դացած վայրէն ՏԱՐԲԵՐ ՏԵՂ գացած ըլլայ՝ իր խումբով, առանց դոյզն ուշադրութիւն դարձնելու նոյն այդ պատմութիւնը մեզի աւանդող Սասունցի Մուշեղի այն բացայայտ յայտարարութեան վրայ, որ հետեւեալ բառերով կ'արտայայտուի. —

«ԳԻՇՇԵՐՈՒԱՆ ՄՈՒԹԷՆ ՕԳՏՈՒՆԵԼՈՎ, ժողովուրդը ցրուեցինք Կոբզիկի խորերը, անմատչելի անտառներու եւ ծերպերու մէջ, իսկ մեմք ՔԱՇՈՒՆԵՑԱՆՔ (ն՞ով չի կրնար ըմբռնել բուն իմաստը այս «քաշուեցանք» բառին, այս նախադասութեան մէջ, Ծնթ. Ա. Տ.) ՖԸՌՖԸՌՖ ԱՐԻ ՔԱՐԱՅՐՆԵՐԸ», ուր «մօտ քսան հոգիով ՄՆԱՑԻՆՔ տասը օր, անօթի ու ծարաւ» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է. էջ 88) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Եւ այս «իսկ մեմք քաշուեցանք» բացատրութիւնը, իր իմաստով եւ բովանդակութեամբ, մեծապէս յար եւ նման է Վարդան Պետրոսեանի բարացուցական յայտարարութեան, որ հետեւեալ տարազով կը ներկայանայ մեզի. —

«Միայն քանի մը տասնեակ կտրիճներ, ԳԱՂՏՆԻ ՃԱՄԲԱՆԵՐՈՎ, Ռուբէնի եւ Վահանի (Փափազեան) ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ, Քան կոչուած լեռը գացին» («Սասունը եւ իր Վիրջին Գոյամարտը», «Սփիւռք» շաբաթաթերթ, 15 Փետրուար 1964) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Հիմա՛, հարցում մը ուղղենք Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունիին. —

«— Ո՞վ է սիստեմատիկ կերպով, ամէն ջանք ի դործ դնողը, ՌԻՐԻՇՆԵՐՈՒ «մոլորանքէն գգուշացնելու» համար իր ընթերցողները եւ իր իսկ ՀՆԱՐԱԾ կամ ՅԵՐԻԻՐԱԾ «մոլորանքին» մէջ գլտորելու կանխամտածումով եւ դիտաւորութեամբ՝ տքնաջան աշխատանք թափողը, Սասունցի Մուշեղը, կա՛մ՝ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեա՞նը, թէ՛ ո՛չ, նոյն ինքն՝ իմք, Կարօ Սասունի կոչեցեալ «պատմագիրը» :

Այս յոյժ շահեկան խնդրոյն մասին, քիչ յետոյ, պիտի լսենք Տարօնցի Արմաշական յուշագրի խիստ յատկանշական խորհրդակցութիւնները :

Սակայն, հոս, մատնանիչ ընենք պարագայ մը, որ Ռուբէնի «հրատեչտի ճառ»ի հարազատութիւնը մեծապէս ԿԱՍԿԱԾՆԵԼԻ եւ անոր մասին մեր սնուցած տարակուսանքը Ա՛Ղ ԱԻՆԵԼԻ ՀԻՄՆԱԻՈՐ կը դարձնէ :

Խիստ հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ Ռուբէնի «պատմիչ» Սասունցի Մուշեղը, որ ընդարձակ պըճնազարդումով մը կը նկարագրէ ու կը ներկայացնէ Ռուբէնի եւ իր խմբապետներու «խորհրդակցական ժողովը», եւ հո՛ն արտայայտուած բոլոր կարծիքներն ու թելադրութիւնները, ինչպէս նաեւ Ռուբէնի «վերջապէս համակերպութիւնը ընդհանուր տրամադրութեան» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է. էջ 86), ո՛չ միայն ՉԷ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ այդ պատմական «հրատեչտի ճառը», այլ եւ պարզ յիշատակութիւն, կա՛մ, նոյնիսկ, հասարակ ակնարկ մ'անգամ չունի անոր մասին :

Մոռացո՞ւմ արդեօք... :

[Ա.] Թուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի յուշերը գրի առնող հանգուցեալ Տէր Խորէն Քահանայ Մամիկոնեան (նախկին Սիսակ Նալբանդեան), մեզի ուղղած մէկէ աւելի նամակներով՝ կը բացատրէ եւ կը լուսարանէ այս կէտը :

Հարկ կը համարենք այդ լուսարանութիւնները ներկայացնել մեր ընթերցողներուն :

ա. — 1953 Թուլիս 2 Թուակիր նամակով, ան կը գրէր հետեւեալ տողերը. —

«Տէր Եղիշէի անունով գիրքը ամբողջութեամբ իրեն չի պատկանիր, իմ հաւաքածներն ալ միացուցի իր պատմածին : Դժբախտաբար, կէտը միայն հրատարակած էին. ո՛ւր որ Տէր Եղիշէ անունը չէ՛ տեսած, ինքն է ջնջեր, եւ ո՛ւր որ Հ.Թ.Դ. —ին համար խիստ անկապտու մասեր կային, զանոնք ալ չեմ գիտեր թէ ո՛վ էր ջնջեր : Ես իմ գրածին ընդօրինակութիւնը չունէի, որովհետեւ ինք Պոլսէն մեկնեցաւ դէպի Ամերիկա՝ շատ հապճեպով, անանկ որ ժամանակ չունեցայ արտագրելու զայն :

Սիրով եւ օրհնութեամբ՝ Խորէն Քահանայ Մամիկոնեան :

բ. — 1958 Փետրուար 25 Թուակիր ուրիշ նամակով մը աւելի մանրամասն տեղեկութիւններ կու տար այդ խեղաթիւրումի ցաւալի խնդրի մասին. —

«Իմ գրած գիրքի խմբագրութիւնը իմս չէ. անունս պահած են եւ այդ անունն տակ իրենք ինչ որ ուզած են գրած են : Տէր Եղիշէն երբեք չէ ըսած որ Ռուբէն ճառ է խօսեր. սուտ է գրուածքը : Ես հոն չէի, Պոլիս կը գտնուէի եւ չէի կրնար ֆոնօրդի եմօնարկի գրութիւնները : Տէր Եղիշէն ալ իր անունով միայն հետաքրքրուեր է, թո՛ղ իր անունը միայն երեւի, եւ ո՛վ ինչ կը գրէ, թո՛ղ գրէ : Այդ գրքին Յառաջաբանը իմս չէ եւ ո՛չ ալ՝ պատմութեան շատ մասերը. գիրքը շա-

րադրած ու ծառայեցուցած են Ռուբէնի, Վահանի (Փափազեան) եւ Դաշնակցութեան արդարացման եւ փառքին...:

«Մէկ բան որոշ է. Տէր Եղիշէն իր արտայայտութեանց ատեն կը փսխէր Դաշնակցութեան ալ, Ռուբէն — Բժիշկին ալ եւ դեռ շատ դաշնակ ղեկավարներու ալ վրայ. մէկ համակրական բառ իսկ չուներ անոնց մասին:

Սիրով եւ օրհնութեամբ՝ Խորէն Քհնյ. Մամիկոնեան»: Գ.— Հետաքրքրութեան համար, հոս կ'արտագրենք՝ 1957 Օգոստոս 6 թուակիր ուրիշ նամակ մ'եւս, գոր գրած է Մշեցնակ բարբառով.—

«Սիրելի՛ Ազան, «Փաշա» ծաղրանունով էդ մարդու մասին իսկի աղէկ բան չըմ լսերի. եղեր է վախկոտ. էդ ցառն օր գրեր ին, յուսու սուտ է. գաթի գէղ գիրք ես չըմ գրերի. զիմ գրածներ քապլեր ին ու իմ անունով ուրանք ին գրի ու տալի: Ջյառաջարան լէ ուրանք ին գրի. ես գարկեր էմք փշում Դաշնակցութեանին, օր գմբր տուն արեցին, գմբր Տարօնի խորտիկ անուն անքկեցին ու քապլեցին գետին ու էրէցին հմալ օր մըկա միմակ Տարօնցին գիմա օր վախտին—գամանին՝ Տարօն՝ըմ էղեր է: Յմէն տարի գպտուղ կ'ուտին — Վարդան—Սահակ—Մեսրոպ —, աւա ծառուց (Տարօնից) պէ խապար ին: Ես իսկի չլսեցի իմ ումբի մէջ օր մէկի՛մ — ո՛ր կ'եղնի քըզ էղնի, — յելնէր ասէր. «հալա հաղըմ լէ ծառու վրէն խօսանք», ու կէնա մեմք էմք օր գմբր սազ գլուխ դրինք ուրանց առաջ, ու ուրանք ուրանց ձեռք բռնած գուլ դանկով ու արծլիով գմբր խեղն ու կրակ գըլխըներ քրաշեցին, ուրանց գիրցած խայտով...»

«Տարօնյ մէջ Վարդան, Վահան, Մուշեղ, Գրիգոր էլ չմա՞նցեր էր օր սապուկաւորներ էկեր ին գուրանց պարպուրթեմ մըր գլխնեբու վրէն սքովին...»

Սիրով եւ օրհնութեամբ՝ Խորէն Քհնյ. Մամիկոնեան:»

* * *

Վերոյ արտագրեալ Մշեցնակ նամակը գրական լեզուով.— «Փաշա» ծաղրանունով այդ մարդու մասին բնաւ ազէկ բան չեմ լսած. եղած է վախկոտ. այդ ճառը որ գրած են, բողբոջին սուտ է. արդէն այդ գիրքը ես չեմ գրած. իմ գրածները նետեր են ու իմ անունով՝ իրենք են գրեր ու տպեր: Յառաջարանն ալ իրենք են գրած. ես քիչ մը զարկած էի Դաշնակցութեան, որ մեր տուներ աւրեցին, մեր Տարօնի գեղեցիկ անունը ճմռթկեցին ու նետեցին գե-

տին ու անանկ մը ըրին որ հիմա մինակ Տարօնցին գիտէ որ ժամանակին՝ Տարօն մը եղեր է: Ամէն տարի պտուղը կ'ուտեն, — Վարդան, Սահակ, Մեսրոպ, — բայց ծառէն — Տարօնէն — տեղեկութիւն չունին: Ես բնաւ չլսեցի՛ իմ կեանքիս մէջ որ մէկ մը, — ո՛վ կ'ըլլայ, թո՛ղ ըլլայ, — ելլէր ըսէր. «Անգամ մըն ալ ծառի մասին խօսինք», եւ նորէն մենք էինք որ մեր առողջ գլուխը անոնց առաջ դըրինք, ու անոնք՝ իրենց ձեռքը բռնած գուլ դանակով ու անձիւով՝ մեր խեղճ ու կրակ գլուխները անձիւցին՝ իրենց գիտցած ձեւով...»

«Տարօնի մէջ Վարդան, Վահան, Մուշեղ, Գրիգոր ալ չէ՞ր մնացեր որ սապուկաւորներ եկեր էին որ իրենց սափրիչութիւնը մեր գլուխի վրայ սորվէին...»:

* * *

[Բ.] կ'արժէ որ քիչ մը ուշադրութիւն եւս դարձնենք Սասունցի «պատմագիր»ի այն նախադասութեան վրայ եւ ստուգենք թէ որո՞նք էին որ առաջին անգամ, այդ ուղղութեամբ մեկնեցին հարաւ, դէպի Կոբըշիկ, Կապլոր եւ Կեփին, դէպի Դալուորիկ. Ռուբէնի գինեալ խո՞ւմբը, թէ՞ սարսափահար ժողովուրդը:

Կարօ Սասունի, վերոյիշեալ նախադասութեամբ, կը հաւաստէ որ «Ռուբէն շարքի կը դնէ հոն գտնուած գինեալ ուժերը եւ գիշերուան խաւարի մէջէն կ'ուղղուի դէպի Կոբըշիկ, Կապլոր եւ Կեփին: Ինչպէս տեսանք, ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՅՎ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ՄԵԿՆԱԾ ԷՐ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 983) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.], այսինքն, Ռուբէնի այս քայլէն առաջ, ժողովուրդը արդէն իսկ այդ ցամաքով խոյս տուած էր դէպի հարաւ, Դալուորիկի կողմը, եւ Ռուբէնի գինեալ խումբն ալ պարզապէս կը հետեւէր այդ փախստական ժողովուրդի քայլերուն:

Տարօնցի Արմաշական յուշագիրը, Յակոբ Տէր Չաքարեան, սակայն, Կարօ Սասունիի այս յայտարարութեան տրամագծօրէն հակառակ յայտնութիւն մը կ'ընէ, երբ կը գրէ հետեւեալ տողերը.—

«(Ժողովուրդական) բազմութեան մէկ մասը՝ դէպի հարաւ թեքուելով, Անդոկի ջուրի ընթացքով, ինքզինք ձգած էր Դալուորիկի անառիկ ու պատմական քարատաններու, ամեհի ձորերու, անմատչելի քարանձաւներու եւ վիթխարի բարձունքներու մէջ: Այդ կողմը ՉՈՒԱԾ ԷՐ ամբողջ յոյսը, ակնկալութիւնը, կորովը, հոգեկան թափը եւ սեւեռամտածումը Անդոկի վրայ կեդրոնացուցած մեծ հերոսը՝ իր 5-7 ընկերներով, առանձինն ու գաղտագողի» («Յակոբ Տէր Չաքարեանի Չեռագիր Յուշերը», էջ 184) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Գ Լ ՈՒՄ Ժ Գ .


ՅԱԿՈՒ ՏԵՐ ԶԱՔԱՐԵԱՆԻ ՊԱՏՈՒՄԸ

Հիմա, մեր յարգելի ընթերցողներու մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք Տարօնցի յուշադիր Յակոբ Տէր Զաքարեանի հետեւեալ տողերուն վրայ, որոնցմով հանդուցեալ Արմաշականը խիստ հարադատօրէն կը նկարագրէ ու կը ներկայացնէ Սասունի գոյամարտի վերջին օրուան (Յուլիս 22) ընթացքին, Անդոկ լեռան վրայ պարզուած խիստ յուսահատական կացութիւնը, ժողովրդական ահաբեկ զանգուածներու յոյժ ողբալի վիճակը, ինկող հերոսներու վերջին յուսահատական ճիգերը, «պարոն»ի եւ իր քանի մը մանկաւարիկներու դասալիք փախուստը եւ անյայտացումը, եւ Տարօնի ազատագրական շարժումներու խորհրդանիշ՝ սիգապանծ Անդոկ լեռան ամայացումը...

«Այժմ ընդունելով մեր թակարդ ինկածներու կեդրոնը՝ Անդոկը, նկատի ունենանք անոր վերջին ժամը, նկատի ունենանք թէ անոր հերոս դեկավարը, որ քսան օր առաջ, դաշտի եւ քաղաքի կոտորածներու ժամանակ, միակ յարմար միջոցը համարած էր Սասունի մէջ ամրանալ, դիմադրել ու սպասել. ի՞նչպէս նկրտած էր իրագործելու իր այդ ծրագիրը:

«... Մենք կը տեսնենք ընդհանուր հրամանատարը Անդոկի վրայ, որու լանջերուն վրայ խոնուած՝ ինքը եւ ժողովուրդը, ամէն սեռէ եւ հասակէ, հեռագրիտակը ձեռքը, շրջապատուած ոչ-ստուար ընկերներով, իբր հրամանատար եւ տեղեկութիւններ հաւաքող, դէպի հարաւ արեւելք՝ Կապլոր ըսուած տեղը, Ալիջնայ Տիգրանը՝ 25-30 ընկերներով. հարաւ, Ամպլըրներու Գլուխը, Աւրանցի Արամ՝ նոյնքան ընկերներով, արեւելք՝ Կուրչիկ ըսուած վայրը, Փեթարցի Մանուկ՝ նոյնքան տղաներով. ճակատը՝ Հիւսիս, Մկրտիչ Պոլէեան՝ 30-35 տղաներով, յետոյ Կորիւնը՝ նոյնքան տղաներով, որ մերթ այս դիրքը կը վազէր՝ օգնելու եւ մերթ՝ այն:

«Դժուար, չափազանց դժուար է պատկերացնել Սասունի վերջին զինուորական շարժումները: Մի՞թէ կարելի է չորս կողմերէն հրկիզուած, ծուխով ու մուխով լեցուած տան մը մէջ գտնուող մարդոց շարժումները որոշել ու պատկերացնել: Այդպիսիներու համար, շատ շատ, հնարաւոր է ըսել, յուսահատ՝ դուռը կը վազեն, բոցը



արդէն բռնած էր, պատուհանը՝ նոյնպէս, մառանը ծուխով լեցուած էր. երդիքը ելլել կ'ուզէին, շանթ կը տեղար. ու այսպէս, յուսահատ եւ այլայլուած՝ կը վազվզէին, մինչ բոցը ճարճատելով՝ կը հրահարուէր...» («Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջը 178-179) :

«Կառավարական զօրքի մէկ թեւը՝ Առաքելոց վանքի կոնակով, Ծիրնկատարի քղանցքներով, ուրիշ մը՝ Մուշի հարաւային ձորով, Կուրտիկով, երրորդ մը՝ Փեթարի ճամբով կը շարժուէին դէպի հարաւ, որոնց մասնակի միացումը յաջորդ օրը, այն է Յուլիս 20-ին, դրեթէ առանց դիմադրութեան՝ կը վերցնէր Շենիկ-Սեմալ գիւղերը եւ կրակի կու տար զանոնք: Անշուշտ, կառավարութիւնը, իր հեշտագին յաջողութեան համար՝ անակնկալի եկած ըլլալու էր, մանաւանդ տեսնելով որ իր առջեւ ո՛չ մի զինուորական պատրաստութիւն կը նշմարէր՝ դիրքի, խրամի եւ այլ տեսակէտով:

«Երկրորդ օրը, Յուլիս 21-ին, կը վերցնէր Գելիեզուզանը՝ փոքրիկ դիմադրութեան մը հանդիպելէ յետոյ, եւ կը ցցուէր Անդոկի դէմն ու դէմը, որու մշտաստոյց դադաթը, պահ մը թերեւ, մտատանջութիւն տուած ըլլար իրենց:

«Ամենակատաղի կռիւներ կը մղուէին այդ միջոցին՝ արեւմտեան թեւին վրայ, Կապլորի եւ Ամպարներու կողմը: Ամսուր 19-ին եւ 20-ին, Կորիւն՝ իր խումբով կը գտնուէր Կապլոր, ուր օգնութեան փութացած էր Ալիջնայ Տիգրանին: 21-ին, նա կը ստիպուէր անցնիլ Ամբարներու Գլուխը՝ Աւրանցի Արամի օգնութեան...:

... Յետոյ կը սկսի կատակներ ընել, խօսուրուտիլ մինչեւ լուսարաց: Առտուն շատ կանուխ, յարձակումը կը սկսէր չորս կողմերէն՝ աւելի սեղմուած: Գելիեզուզանի առջեւ, թնդանօթները կը սկսին ուժակոծել Անդոկի դիրքերը, հոն խոնուած հազարաւոր ամբոխը, որ շուարած՝ ինչ ընելիքը չէր գիտեր:

«Կատաղի, մարդկային տարողութենէն իսկ վեր եղած է այդ օր, Պոլէեան Մկրտիչի, իր Պօղոս եղբօր եւ ընդհանրապէս՝ խումբի դիմադրութիւնը: Անտեղիտալիօրէն կուրծք տուած են անոր կատարած գրոհներուն: Կատաղի եւ ամէն դրուատիքի արժանի եղած են Կապլորներու կողմը՝ Ալիջնայ Տիգրանի հերոսամարտը, եւ Ամպարներու Գլուխը՝ Կորիւնի շարժումները, որոնք, առանց դիրք մտնելու, այժմամի պէս՝ դիրքէ դիրք թռեր, հրահարեր, ոգեւորեր, ու ապա՝ անակնկալը ընդունելով, կողքին ինկած է՝ մեծ մարդու պէս, առանց ա՛խ մ'իսկ քաշելու:

«Ճաշէն առաջ, արդէն չկար այլեւս արեւմտեան թեւի ոգին, որու ազդեցութիւնը կը սաւառնէր ամբողջութեան վրայ:

«Աւրանցի Արամ, առանց Կորիւնի զարնուելը իմացնելու կը-

ուողներուն, գործը կը ստանձնէ առժամապէս, եւ երկտողով մը կը յայտնէ անակնկալը՝ Անդոկի պորտին վրայ գտնուող ընդհանուր խմբապետին՝ Ռուբէնին, եւ կը սպասէ կարգադրութեան, եւ կը շարունակէ ոգեւորութեամբ դիմադրութիւնը:

«Ինչպէս կ'երեւի, Կորիւն հոգին եղած է «ԲԱԶԱԶՆ» Ռուբէնին, որ լսելով անոր սպանութիւնը եւ տեսնելով գրոհներու սաստկութիւնը, տեղ-տեղ տղաներու պարտութիւնը, Անդոկի վրայ դառնուող ժողովուրդի իրարանցումը, խուճապը՝ թնդանօթներու ոռոմբերու ազդեցութեան տակ, ռազմամթերքի եւ օգնութեան պահանջները, փոխանակ ինքնամփոփուելու, իրենց դիրքերուն մէջ՝ անտեղիտալիօրէն պայքարողներուն — Մկրտիչին, Արամին, Տիգրանին, Վարդանին եւ այլոց լուր դրկելու, ամփոփելու, տեղէ մը շղթան պատռելով՝ գիշերով դուրս գալու, գոնէ դէպ ֆան՝ ծրագիր մը մտածելու, դադտագողի՝ երկտողով մը իր քով կը կանչէ Փեթարցի Մանուկը, Ախօն, Սասունցի Մուշեղը եւ ուրիշ երկու-երեք եւս, մութը կոխած-չկոխած, զանոնք հետը վերցուցած, առանց «մնաս բարով» ըսելու իրար անցած կին ու երեխաներուն, ընկերներուն, զինուորներուն, եւ նոյնիսկ Անդոկին, կ'անհետի...

«Կը հաւաստիացուի որ նախ քան անհետիլը, լուր տուած ըլլայ Վարդանին, որ վեհանձնորէն մերժելով փախուստը, յայտնած կ'ըլլայ որ ինք ուխտեր է ժողովուրդի հետ մեռնիլ:

«Բաւական ուշ, դիրքերը կ'իմանան որ ընդհանուր խմբապետը համբարձած էր, Կորիւնը՝ զարնուած, եւ Անդոկը՝ խուճապի մատնուած:

«Մի՞թէ հեշտ էր այլեւս՝ գիշերուան մութին, ծովածաւալ, շմորած ու խուճապի մատնուած ռազմութեան մէջ գիրար գտնել, ամփոփուիլ եւ վերջին յղացում մը ունենալ. եւ թո՛ղ ընթերցողը ներողամիտ ըլլայ, եթէ մենք ալ, մեր կարգին, չկարողանանք ըսել թէ ո՛ւր կ'երթայ մեծ հերոսը՝ իր մի քանի (ինչպէս կ'երեւի կանխամտածուած) հետեւորդներով. ի՞նչ եղած է Ալիջնայ Տիգրան՝ իր դիրքին մէջ. եթէ չկրնանք ճշգրտօրէն յայտնել թէ ո՛ւր ինկած են ժողովուրդի սիրահար Բերդակցի Ոսկանը, Տիգրանակերտցի Նշանը, Ալբեցի Մատօն, Պոլէեան Պօղոս, որ ցերեկին վիրաւորուած էր, եւ հազարաւոր դաշտեցի ու քաղաքացի առնացի կուողներ, որոնք՝ նախ քան հերոսի անհետիլը, եղած են ողջ, կռիւի ու դիմադրութեան մէջ:

«Ուրեմն, ե՛ւ ժողովուրդը, ե՛ւ կուողները մնացած էին անկապ. ո՛ւր պիտի հաւաքուէին՝ ստանալու համար վերջին հրահանգը, ուրկի՞ց պէտք էր անցնէին, ո՛ր ուղղութեամբ:

«Ստոյգ էր որ ողջ էին դեռ Մկրտիչ եւ Վարդան. անոնք չէին

անհետացած. Հո՛ն, բազմութեան լաց ու կոծին մէջն էին, բայց ո՞ր կէտի վրայ, բիւրաւոր կին ու երեխաներու ո՞ր ողբին ականջալուր:

«Վե՛ր առ սենեակիդ փոշիով լի թաղարը, ե՛լ կտուրը, սիրելի՛ ընթերցող, տո՛ւր զայն հովին ու զիտէ թէ ուր կ'երթան անոր հատիկները...»

«Զարհուրելի զղրղումի եւ ցնցումի մէջ ինկած էր Անդոկը, որու լանջերուն վրայէն սարսափահար խոյս կու տային, կը թռչէին, ինչպէս հրարուխի մը բերանէն ժայթքող լաւաները, մարդկային յուսահատ զանգուածները. ո՛րը ետ՝ Դալուորիկի կողմը, ո՛րը առաջ՝ թշնամիին դիրկը, ո՛րը՝ ձախ, ո՛րը՝ աջ: Ու բնագոյն տուած վերջին գրգիռով, ասոնց մեծ մասը, հետեւելով մէջտեղ գտնուող երկու խմբապետներուն — Վարդանին եւ Մկրտիչին, — եւ անոնց գծին հետեւող ընկերներուն, կը բռնէին դէպի արեւելք, Մովսսար տանող ճամբան, անկէ ալ՝ ձորէ ձոր երկնալով, դէպի Մառնիկի սարերն ու Քանայ բարձունքները նետուելու յոյսով» (նոյն, էջը 179-182):

«... Միթէ որեւէ գրիչ կարո՞ղ է նկարագրել պատկերը, զոր՝ Անդոկի փլուզումէն յետոյ՝ կը ստանային Սասունի լեռներն ու ձորերը: Նա աղետարչ է, քստմանի ու պակուցիչ:



ՍԱՍՈՒՆԻ ԳԻԻՂԱՑԻՆՆԵՐԷՆ ԽՈՒՄԲ ՄԸ
Սասունի Գեղաշէն գիւղի աշակերտները՝ շրջապատուած իրենց ծնողներէն (1910):

«Տարբեր եղած էր, Մուշի եւ դաշտի անկումէն վերջ, անմեղ ու անպաշտպան ժողովուրդի ճակատագիրը. տարբեր էր, սակայն, Անդոկի անկումէն վերջ, կառավարութեան ցոյց տուած վերաբերմունքը:

«Մուշի անկումէն վերջ, զինուորներն ու ոստիկանները, հանդարտ ու գրեթէ անտարբեր, կը հաւաքէին անպաշտպան մնացած անձնատուները, ոչխարի հօտերու պէս՝ առաջ կը վարէին զանոնք, նախ կառավարութեան շէնքը, ապա նոյն օրը, կամ երկրորդ, երրորդ օրը, առջեւին ձգած՝ տեղ մը տանելու պէս, ճամբայ կը հանէին, կը հասցնէին որոշեալ կայանը, ուր՝ կա՛մ շէնքի մը մէջ լեցնելով, յանկարծ կրակը կու տային, կա՛մ կամուրջէ մը վար կը թափէին, կա՛մ փորած փոսի մը առջեւ հանելով՝ յանկարծ կը գնդակահարէին, այնպէս որ մէկ խումբը միւսի բախտին անտեղեակ կը մնար:

«... Մուշի եւ Դաշտի կոտորածներու միջոցին, կառավարութեան վերաբերմունքը շատ կորեկտ էր ու քաղաքավարի. առանց զգացնելու, առանց գիտցնելու, կը տանէր, կը քշէր խումբ խումբ եւ յանկարծ տեղ մը վերջացնել կու տար՝ կէս կամ մէկ ժամու տանջանքներով. երբեմն ալ բարի կ'ըլլար հողով ծածկելու:

«Բայց, Սասունի անկումէն վերջ, վերաբերմունքը փոխուած էր: Յունիս 28 — Յուլիս 2-ի՝ կառավարութեան վերաբերմունքին երանի պիտի տար այս անգամի ականատեսը: Այս անգամ, սխտեմ գոյութիւն չունէր. վայրագութիւն, գաղանուծիւն, մոլեգին անխնայութիւն մը, երեւակայուած ամէն կերպ նախճիրներէ վեր, որու առջեւ Լենգթիմուրն անգամ շրթունքները պիտի կծէր շիկնելով (նոյն, էջ 183):

«... Յարգելի՛ ընթերցող, մի՛ սպասեր ինձմէ նկարագրել նախճիրը, որ այդ չարաշուք լուսարացին՝ տեղի կ'ունենար Անդոկի փեշերէն սկսեալ մինչեւ Կոըշիկներու ձորամէջերը, Մովսսարի ստորոտները, աւելի հիւսիս՝ Տալա-Սեիինի եւ Հաւատորիկի լեռնամասերը անջատող փոսերու եւ խորխորատներու մէջ: Մի՛ սպասեր ինձմէ նկարագրել սուրինահար երեխաներու, սրախողխող կիներու եւ պարմանիներու, գնդակահար երիտասարդներու վերջին հոնդիւններն ու գալարումները, եւ ո՛չ ալ, ի հարկէն բռնադատեալ խումբ խումբ դիմադրողներու վերջին պայքարներն ու ոգորումները:

«Ամենադաժան գործը պիտի ըլլար այդ ե՛ւ ինձ ե՛ւ քեզ համար: Պիտի ուզէի՞ր միթէ տեսնել Վարդանը՝ կէս մարմնով, ձորի տիղմին մէջ խրուած, երեսն ի վար գետնին փակած, գնդակահար. պիտի ուզէի՞ր անգամ մը եւս տեսնել Պոլէեան. Մկրտիչը, յոգնած ու վաստակաբեկ, երկու-երեք ընկերներու հետ, Կոըշիկներու ձորէն

քիչ մը բարձր թաւուտներու կամ ժայռերու արանքը, իր վերջին պայ-
ջարի եւ դօտեմարտի մէջ:

«Կսկիծէ, մորմոքումէ, դառն սրտաբեկումէ զատ, ի՞նչ օգուտ
նկարագրութենէն, որ պիտի պարզէր գլխիվար, գլխիվեր, քովնտի,
թեւատ, ջախջախուած գանկով, անսրունք, որովայնափեռիկ կիներ-
րու, այրերու, երեխաներու, պատանիներու՝ իրարու վրայ թափ-
ուած կամ առանձինն, անշունչ եւ կիսաշունչ, բաց, խոռոչ ինկած,
պաղած աչքերով մարդերու տարածութիւն մը, անհունութիւն մը՝
Անդոկի արեւելեան լեռնալանջերէն սկսեալ մինչեւ ո՛ւր որ կ'ուզես:

«Թողո՛ւնք որ անոնք՝ իրենց ինկած տեղերու վրայ, Յուլիս-
եան կիզիչ արեւուն ներքեւ՝ ուռին, փքին, դիշանան. թողո՛ւնք որ
վայրի անասուններն ու գիշատիչ թռչունները անոնց բոլորտիքը
կատարեն իրենց շուրջ-պարը, եւ մենք դառնանք շարունակելու ողջ
մնացողներու պատմութեան թելը, ուր կատարուելիքները արդէն
խակ բաւական են խլելու, կորզելու համբերութիւնդ, թքելու համար
մեղապարտներու ճակատին եւ ողբալու անմեղներու անողոք բախտը:

«Միայն սաչափը ըսեմ որ այն օրը՝ միայն Կոըչիկներու Ձո-
րին մէջ, 15,000-է աւելի հողի կոտորուած էին, որոնց հետ եւ Մկըր-
տիչ ու Վարդան» (նոյն, էջ 185):

Աղբխարչ են այս խիստ տխուր տեսարանները եւ սիրտ բզբտող,
չէ՞, սիրելի՛ ընթերցող, եւ տրամագծօրէն հակոտնեայ՝ այն տեսա-
րաններուն, զոր Սասունցի Մուշեղ եւ Կարօ Սասունի կը նկարագ-
րեն՝ իրենց յիշած «խորհրդակցական ժողով»էն վերջ:



ԳԼՈՒԽ ԺԴ.

«ՊԱՐՈՆ»ՆԵՐՈՒ ԴԱՍԱԼԻՔ ՓԱԽՈՒՍԸ ՏԱՐՕՆԸ ՎԱՀԱՆ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՊԱՏՈՒՍԸ

Հոս հարկ կը տեսնենք նախ յստակ ընծայել իմաստները եւ
ընոյթը երեք խիստ յատկանշական բառերու. սուրհանդակ, փա-
խուստ եւ դասալիք:

ա. — Սուրհանդակ կը նկատուին անոնք, որոնք իրենց վստահ-
ուած գործ մը կատարելու պարտականութիւնը սիրայօժար ստանձ-
նելով՝ ճամբայ կ'իյնան դէպի որոշ նպատակակէտը:

բ. — Փախուստ կ'ենթադրէ ոչ-բաղձալի վայրէ մը ուրիշ ցան-
կալի վայր մը տեղափոխուելի՝ դադտնի, գաղտագողի:

գ. — Դասալիք կ'ենթադրէ նախապէս ստանձնած պաշտօնի մը
կամ պարտականութեան մը լքումը, ուրացումը, պարզ բառով՝ դը-
րուծամ:

Այս երեք յատկանշական բառերուն մեր ըմբռնած սահմանու-
մը տալէն ետք, այժմ շարունակենք մեր պատմութեան թելը:

Ինչպէս տեսան մեր ընթերցողները (տեսնել «Տարօնապատու-
մ»ի ներկայ ուսումնասիրութեան Մասն Բ., Գլուխ Զ.), Վահան Փա-
փազեան երեք տարբեր սուրհանդակներու խումբեր զրկեց Քանայ եւ
Հաւատորիկի լեռներէն՝ դէպի Ռուսական բանակը, առանց որեւէ
դրական արդիւնքի: Այդ խումբերը, առաջնորդութեամբ Կովկասա-
հայ Աւետիսի, Վարդենիսցի Յարութիւն Վարժապետի եւ Բուլանըք-
ցի Մարտիրոս Վարժապետի, — անալով ժողովրդական միահամուռ
բաղձանքին, Չինուորական Խորհուրդի որոշումին եւ Վահան Փա-
փազեանի ալ հաւանութեան, — հանրօգուտ ծառայութիւն մը մա-
տուցանելու գիտակցութեամբ էր որ ճամբայ ինկան դէպի Ռուսական
բանակը:

Այս ապարդիւն փորձերէն ետք, Մուշ քաղաքացի հայդուկ
Գզտիկ Արամ Յակոբեան յանդուզն առաջարկ մը կը ներկայացնէր
Վահան Փափազեանին, — այդ լեռները ապաստանած՝ քալելու կա-
րողութիւն ունեցող բոլոր փախստականները առնել ու անցնիլ-երթալ
դէպի Ռուսական բանակը:

Վահան Փափազեանի մերժողական կտրուկ պատասխանի վը-

րայ, Պղտիկ Արամ կազմակերպեց ութսուն հոգինոց խումբ մը եւ Օգոստոս 2-ին՝ ճամբայ ինկաւ դէպի Ռուսական բանակը, ուր հասաւ առանց վտանգի եւ կորուստի:

Պղտիկ Արամի այս անկախ ձեռնարկը՝ դժգոհութեան եւ բողոքի ցոյց մըն էր Վահան Փափազեանի վարանոտ եւ անվճռական ընթացքին դէմ:

Տարբեր բնոյթ ունէր, սակայն, Ռուբէն-Փափազեան խումբին մեկնումը:

Այս երկու անձերը՝ պատասխանատու պաշտօն եւ յանձնառութիւն ունեցող անհատներ էին, մէկը՝ Բիւրոյի լիազօր ներկայացուցիչը Տարօնի մէջ, իսկ միւսը՝ նոյն Բիւրոյի պատուակալ անդամը, որոնք՝ ի պաշտօնէ եւ պարտականութենէ, պէտք էր որ մնային Մուշի եւ Սասունի լեռները Մինջեի Վերջ, պաշտպանէին ու հոգատարէին հոն գտնուող փախստական մնացորդները, եւ մասնակից դառնային անոնց բոլորի դառն ճակատագրին, առանց երբեք կովկաս խոյս տալու մտածումն իսկ ունենալու՝ անձնագորհ եւ պարտաճանաչ Վարդան Կողբեցիի օրինակին հետեւելով:

Այս շիտակ ուղիէն որեւէ տեսակ շեղում պիտի ըլլար պարտագնացութիւն եւ նկատուէր ԴԱՍԱԼՔՈՒՄ:

Վահան Փափազեան, իր յուշերու մէջ, կը փորձէ շեղեցնել իրերու այս տրամաբանական ընթացքը եւ այնպէս մը ցոյց տալ որ Բուլանըքի Մարտիրոս Վարժապետի սուրհանդակներու խումբին առաջումը եւ իրենց (երկու «պարոն»ներու) 36 հոգինոց խումբին փախուստը՝ համազօր, նոյնիմաստ, կա՛մ աւելի ճիշտ, նոյն բնոյթ ունեցող ձեռնարկներ եղած են, ինչ որ, բնականաբար, չարափոխութիւն է պատմական իրողութեան:

Հետեւեալն է Վահան Փափազեանի այդ մոլորեցուցիչ նախադասութիւնը.—

«Ռուսական բանակին հասնելու համար առաջին մեկնողը՝ Բուլանըքի Մարտիրոսն եղաւ («Վարժապետ»), որ փոքրաթիւ ընկերներով թողուց մեզ» («Իմ Յուշերը», Բ., էջ 395):

Բնաւ պէտք չէ մտահան ընել այս խիստ կարեւոր պարագան որ Մարտիրոս Վարժապետի այս խումբը՝ սուրհանդակներու երրորդ եւ վերջին փորձն էր՝ ճամբու դրուած Յուլիս 11-18-ի շաբթուան ընթացքին, որմէ վերջն էր որ մեկնած էր Պղտիկ Արամի խումբը՝ Օգոստոս 2-ին. մինչդեռ «պարոն»ներու խումբը ճամբայ ինկած էր Սեպտեմբեր 6-ին, այսինքն, Մարտիրոս Վարժապետի խումբին մեկնելէն մօտաւորապէս երկու ամիս ետք:

«Պատմագիր» Կարօ Սասունին ալ՝ նոյնպիսի խեղաթիւրուած ձեւով կը փորձէ ներկայացնել եւ միեւնոյն մակարդակի վրայ դնել

այս բոլոր փախուստի ձեռնարկները, երբ իրարու ետեւէ կը շարժուինք նոյնատեսակ վերնագիրներ.— «Արամ Յակոբեանի խումբին Մեկնումը», «Մարտիրոսի խումբին Մեկնումը», եւ «Ռուբէնի եւ Վ. Փափազեանի խումբի Մեկնումը» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 944-995) [Ռուբէն եւ Վահան Փափազեան միասնաբար, միեւնոյն խումբով փախան, հետեւաբար պէտք է ըլլայ «Ռուբէնի եւ Վ. Փափազեանի խումբին մեկնումը եւ ո՛չ թէ «խումբերուն»], առանց երբեք մատնանշելու այս վերջին երկու անձերու «ՊԱՐՈՆ»ութեան, այսինքն՝ ղեկավար եւ պատասխանատու անձնաւորութիւններ ըլլալու հանդամանքը, անձեր՝ որոնք ի պաշտօնէ եւ յանձնառութենէ՝ ՊԱՐՏԱԻՈՐ էին մնալու Քանայ եւ Սասունի լեռները եւ հոն տառապող փախստական մնացորդներու դառն ճակատագրին՝ բախտակից դառնալու մինչեւ վերջ, կա՛մ «զոնէ ազնուութիւնն ունենալու էին վերջին րոպէին՝ անոր հետ արտասուելու», ըստ Արմաշական Յուշագրիի խիստ յատկանշական բացատրութեան («Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջ 199):

Եւ եթէ այդ «պարոն»ները յանդգներ կամ փորձեր են վատաբար դասալիք փախուստի դիմել, զոնէ այդ արարքը պարզ կերպով պատմութեան յանձնուէր իր իսկութեամբ՝ ցոյց տալու համար որ անոնք իրենց ստանձնած կոչումին, պարտականութեանց եւ պատասխանատուութեանց ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԵՑՈՂ ղեկավարներ եղած են...:

Այս բնորոշ բացատրութիւններէն ետք, տեսնենք թէ մեր յուշագիրները ի՞նչպէս կը ներկայացնեն այս դասալիք փախուստի իրենց տարբերակները:

Նորէն սկսինք յուշագիր Վահան Փափազեանի պատումով.—

«Երբ սարալանջերէն կ'իջնէինք դէպի մթին ձորերը, յանկարծ նկատեցինք մեզի մօտեցող երկու ստուերներ: Կարծելով թէ Քուրդեր են, կրակելու վրայ էինք, երբ Հայերէն մեր անունը տուին...: Սասունցի երեք երիտասարդներ էին. անոնցմէ մէկը Սասունցի Մուշեղն էր՝ կայտառ, կրակ ու բոց տղայ մը, սիրուն հասակով եւ թաւշային ձայնով:

«— Հոգինիս ելաւ ձեզի փնտռելէն, — ողջագուրուելէ վերջ ըսին անոնք: — Այս երկրորդ անգամն է որ կու գանք. լեռները եւ ձորերը տակն ու վրայ ըրած ենք՝ ձեզի գտնելու...: Մեզի Ռուբէնն է զրկեր: Մենք Դալուորիկ էինք կոխներու ատեն, անոնք Անդոկ. Կորիւնի, Մջոյի սպանութենէն վերջ, երբ «կոտորուեցանք» (պարտուել), մենք միացանք Ռուբէնին եւ Փեթարայ Մանուկին, Զոլոյին, Ախոյին հետ ապաստանեցանք քարայր մը. ուտելիք ունէինք, բայց մինչեւ ե՞րբ... Ռուբէնը կը հարցնէ թէ կրնա՞յ ձեր քով գալը:

«Երկտող մը գրեցի Ռուբէնին՝ յայտնելով դէպի Ռուսական բանակը յառաջանալու մեր մտադրութիւնը, եւ ըսի որ իսկոյն մեր թով իջնան:

«Եկան քանի մը օրէն: Հաւատորբիկի լերան գագաթը իրար գլուխները: Անոնք ալ մեզի պէս էին — պատառոտուն, մաղ-մօրուքնին բուսած, գոյներնին դալուկ-հողագոյն...» («Իմ Յուշերը», Բ., էջ 390-391):

«Սասունէն ազատուած խումբին գալը քիչ մը աշխոյժ տուաւ մեզի եւ գիտակցութիւն... ապրելու բաղձանքին հետ:

«Լեռնէն իջած խումբը 8-10 հոգի էր, որոնցմէ կը յիշեմ Ռուբէնը, Սասունցի Մուշեղը, Փեթարայ Մանուկը, Ախօն, Թաթէն: Անոնք արտաքնապէս աւելի առողջ եւ կենսունակ կ'երեւային: Կռիւներէն պարտուած այս խումբը պահուրտած է եղբիւր ալրերու մէջ. քիչ-չատ սնունդ ունեցեր են, բայց վերջապէս անհնար եղած է հոն մնալ, եկած էին արտասահման անցնելու:

«Ոչինչ հարցուցի. իրենք ալ ոչինչ ըսին. ի՞նչ էր մնացեր պատմելու, պարզ չէ՞ր ամէն բան: Համբ էին՝ ահաւոր անցքերը չքննելու համար, թէ՛ մենք եւ թէ՛ անոնք. խուսափողակամ պատասխաններ կու տային մեր բազմաթիւ ընկերներու կորուստի համագամանքներու նկատմամբ...: Բայց ի՞նչպէս հաշտուիլ Կորիւնի, Տիգրանի, Մջոյի, Կիրակոսի, Մանուկի եւ բազմաթիւ հերոս ընկերներու մահերուն հետ — տառապանք մը լուռ ու քարացած:

«Պարտուած էինք չարաչար — ո՛վ սիրտ ունէր վերջիջելու մեր սարսափելի պարտութիւնը: Մոլորած ու աննպատակ թափառող մեր խումբը մեծցաւ այլեւս» (նոյն, էջ 393) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

«Մերինները գտան Բաղէշցի Յարէթը, որ գիտէր Ախլաթ-Մանազկերտ ճամբան: Պէտք էր օր առաջ մեկնել. այլեւս անհնար էր այդ պայմաններու մէջ մնալ, նոյնիսկ ժամանակ չունէինք սպասելու որ լուսինը վերջանայ, գիշերները կէս-ցերեկ էին՝ շնորհիւ պարզ լուսնակայ լոյսին: Վճռեցինք եւ իրիկուն մը, երբ դեռ նոր արեւը անհետացաւ լեռնաշղթային ետեւ, կարգի ձգուած մեր 36 հոգինոց խումբը արագ սկսաւ իջնել լեռնի վար...» (նոյն, էջ 396):

«ՓԱՆՈՒՍՏԸ. — Խոր հովիտի մը մէջն էր որ կը պատրաստուէինք մեկնելու: Ինձ հետ եղող ընկերները Մշեցիներ էին — Տիգրան, կօշակար Արմենակ (Մարտէեան), երկու Յարօնները (մէկը՝ Արօ Շահրիկեան, միւրը՝ Յարօ Մուխի Չարհատեան), Կոռնչոյեան Յովհաննէս, Տէր Զաքարեան Յակոբ, Ալեքսան (որ տարիներ առաջ ինկած էր Մուշ եւ հոն ամուսնացած), Սպայ Միսակը, Բիթլիսցի

պատանի մը՝ Ոստանիկ եւ մեր Վալատ Յարէթը: Ռուբէնի հետ կային 8-10 հոգի:

«Քիչ մը գարի էր աւելցած, որ քարի վրայ ծեծեր էինք եւ «հաց» էինք եփեր քարի վրայ: Ռուբէն ալ դեռ Սասունէն բերած կաշիէ պարկ մը ունէր երկյարկանի. վարի յարկը լեցուած էր հելվալայ, որ անձեռնմխելի կը պահէր մեր ազահ աչքերէն եւ քիմքերէն: Գարիի հացը բաժնեցինք...:



ՌՈՒԲԷՆ-ՓԱՓԱԶԵԱՆ ԴԱՍԱԼԻԲ ԽՈՒՄԲԸ

Նտեւի կարգը, ոտքի կանգնած (Ձախէն աջ). — Առաջինը չի մանչցուիր. երկրորդը (թիւ 3) Փեթարայ Մանուկ Պետոյեանը, երրորդը՝ (թիւ 1) Ռուբէն, չորրորդը (թիւ 4) Տիգրան Գաւառեան (Լոյսի Տիգրան), հինգերորդը՝ (թիւ 2) Վահան Փափագեան, վեցերորդը՝ (թիւ 5) Ակուսի ծառան Պօղոս, եօթներորդը՝ (թիւ 10) Արշակ Պուլէեան, ութերորդը՝ (թիւ 6) Ախօ, իններորդը՝ (թիւ 8) Սպայ Միսակ:

Առջեւի կարգը (ծնկաչոք), ձախէն աջ. — Առաջին երեքը չեն մանչցուիր, չորրորդը (թիւ 9) Սասունցի Մուշեղը, հինգերորդը, վեցերորդը եւ եօթներորդը չեն մանչցուիր, ութերորդը՝ (թիւ 11) Արմենակ Մարտէեան, իններորդը (թիւ 7) Յակոբ Տէր Զաքարեան, եւ տասներորդը՝ չի մանչցուիր:

«Մթնշաղ էր, երբ մօտեցանք Մեղրագետին եւ նուազած ջուրի հունով մը անցանք միւս կողմը: Կարծեմ 17-18 հոգիներս միայն գինուած էինք՝ անգէնները մեր մէջ առած... կը յառաջանայինք զգուշութեամբ, բայց շատ արագ... Մահմետական մուհաջիւրներու անցնող փոքրիկ կարաւաններու ձայները կը լսէինք հեռուէն» (նոյն, էջ 396-397):

«Ծարաւը եւ յոգնութիւնը ուժաթափ ըրած էին շատերը: Պատանի Ոստանիկը բոլորովին ուժէ ինկած էր. ոտքերը այլեւս կը հրաժարէին տանել զինք. ինկաւ գետին. քաղց, յոգնութիւն եւ կիսամեռ՝ պառկեցաւ... «Չեմ կրնար, գացէ՛ք, ես կը մեռնիմ» ըսաւ եւ աչքերը փակեց: Ի՞նչ ընել, շալկելու վիճակ ո՛չ մէկերնիս ունէինք. այդ տառապալի վերելքին մէջ — թողուցինք ձորակի մէջ մեռնելու եւ մագլցեցանք լեռն ի վեր...» (նոյն, էջ 404):

«Մութին մէջէն կը տեսնէինք անցքը՝ գազաթին վրայէն. մեր ձախ կողմն էր գազաթը: Յարէթը ըսած էր թէ ճամբան այնուհետեւ նորէն անջրդի է. մեր ընկերներէն մէկը տիկ մը ունէր, որ հանեց՝ ջրով լեցնելու համար: Ենթադրելով որ շուտով կը հասնի մեր ետեւէն, քոզիմֆ գիմֆ ջրով լեցնելու, յառաջացանք դանդաղօրէն դէպի գազաթը: Այդ վայրկեանին էր որ գազաթին ծայրը ցցուած սեւ ստուեր մը նշմարեցինք եւ անմիջապէս չարագուշակ կանչ մը վերէն՝ «հուն քինա» (ո՞վ է հոն): ... Թրքական բանակի յառաջապահ գունդն էր...»

«Տասը բոպէ միայն տեւեց այս բոլորը: Մենք արդէն ձորի յատակն էինք հասած: Հետապնդող չկար այլեւս: Զուրի պաշար առնող մեր ընկերը սակայն մնաց միւս կողմը (հետագային ան կրցած էր Սիփանի կողմէ մինակը ազատիլ ու գալ)» (նոյն, էջ 404-406) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] [Ա.]:

Եւ այսպէս, ճամբան երկու (ըստ միւս յուշագիրներու՝ երեք) զոհ տալով, դասալիքներու խումբը հասեր է Մանազկերտի Բերդը, ուր կը գտնուէր Ռուսական բանակը:

* * *

[Ա.] Դասական դասալիք «պարոն»ներու այս փախստական խումբի կորուստներու մասին տեղեկութիւն տուող միւս յուշագիրները այս պատմութիւնը կու տան զանազան տարբերակներով:

Այս կորուստներէն մէկը միայն հետեւանք էր յոգնածութեան կամ հիւանդութեան, իսկ միւսները՝ իբր հետեւանք «պարոն»ներու պարտագանցութեան:

Առաջին զոհը՝ Բաղէչցի Ոստանիկ Քենտէրեան անունով երիտասարդ մըն էր, որու մասին բաւական մանրամասն տեղեկութիւններ կու տան յուշագիրներ Միսակ Բղէեան եւ Վահան Փափազեան:

Վահան Փափազեանի պատումին ծանօթացանք արդէն: Իսկ Տարօնցի աւագ յուշագիրը կը գրէ. —

«Հետեւեալ երեկոյեան կը յառաջանան դէպի Նեմրութ լեռան քարայրները ու կը բարձրանան լեռն ի վեր:

«Բաղէչցի Ոստանիկ անունով քաջ երիտասարդը յանկարծակի հիւանդանալով, կը ստիպուի նստիլ, եւ որչափ որ տղաք՝ անոր ձեռքէն բռնելով, քիչ մը կը քալեցնեն, անհնար կ'ըլլայ աւելի յառաջանալ: Այդ ատեն, տասնոց ասրճանակը վրայէն առնելով, տեղն ու տեղը կը ձգեն զայն ու կ'անցնին» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 480):

Ինչպէս կը տեսնուի, էական տարբերութիւն մը չկայ երկու գլխաւոր յուշագիրներու պատմումներուն միջեւ:

Երկրորդ զոհի մասին, սակայն, մեր յուշագիրները բաւական կը տարբերին իրարմէ:

Վահան Փափազեանի տարբերակը տուինք արդէն. անոր մէջ ամենէն ուշագրաւ կէտը՝ «Ենթադրութիւն» է. — «Ենթադրելով որ շուտով կը հասնի մեր ետեւէն, քոզիմֆ գիմֆ որ ջրով լեցնէ (տիկը), մենք դամազաօրէն(?) յառաջացանք դէպի գազաթը՝ կարծելով թէ ապահով է գննէ գազաթը» («Իմ Յուշերը», Բ., էջ 404) [Բոլոր ընդգծումները եւ հարցական նշանը մերն են, Ա. Տ.]:

Հիմա տեսնենք թէ Տարօնցի աւագ յուշագիրը ի՞նչպէս կը ներկայացնէ այս տխուր դրուագը. —

«Երեկոյեան մութին, զառիվայրէ մը իջած ատեննին, կը հանդիպին աղբուրի մը: Ալվառինչ գիւղացի Խաչիկ անունով երիտասարդի մը կ'առաջարկուի որ տիկը ջուրով լեցնէ եւ Աշոտն ալ՝ անոր քով սպասէ: «Մենք կամաց կամաց կը քալենք, եկէ՛ք մեզի հասէք» կ'ըսեն եւ խումբը կը շարունակէ քալել: 15 վայրկեանէն հազիւ կը լեցուի տիկը եւ կը շտապեն հասնիլ խումբին: Բաւական յառաջանալով՝ խումբին չհասնելէն զատ, քիչ մը հեռուէն՝ Թուրքերէն լեզուով խօսակցութիւններ կը լսեն: Կանգ առնելով՝ մտիկ կ'ընեն. Թուրքերը իրարու կ'ըսեն. «Յեղափոխականները ասկէ անցան. մէկը բռնեցինք, իսկ միւսները փախան»: Այդ խօսքերէն վերջ, ուրիշ Թուրք մը կ'ըսէ. — «Ահա՛, տեսէ՛ք, երկու մարդ ալ դէպի մեզ կու գան»:

«Այս խօսքերը լսելուն պէս, Աշոտ իսկոյն կ'ըսէ իր ընկերոջ. —

«— Ծալակիդ տիկը վա՛ր նետէ եւ ինծի հետեւիր»:

«Եւ հակառակ ուղղութեամբ փախչելով, կ'իջնեն ձորակը եւ

հոն կը պահուըտին՝ մեծ ժայռի մը տակ: Զօրքերը իրենց փախչիլը տեսնելով, ետեւնէն կրակ կը բանան ու կը հետապնդեն: Տղաք, մութէն օգտուելով, կը ճողոպրին ու կ'անյայտանան:

«Յաջորդ ցերեկը հոն կ'անցընեն: Չորրորդ երեկոյեան, անկէ դուրս գալով, առանց առաջնորդի եւ անծանօթ վայրի մը մէջ, չեն գիտեր թէ ո՞ւր պէտք է երթան: Եւ կը թափառին մինչեւ առաւօտ՝ առանց պատահարի, եւ գիւղէ մը հեռու, ժայռերու մէջ կ'ապաստանին: Ցերեկ ատեն կը նային որ գիւղին մէջ երթեւեկութիւն չկայ. հոն, գիւղը կ'իջնեն, տունները կը պտտին եւ հորթ մը ու ալիւր գըտնելով՝ իսկոյն ուտելիք ու պաշար կը պատրաստեն: Հո՛ղ, Պաշիկ կը տկարանայ, երեւի թէ չափէն աւելի ուտելուն՝ փորի խիթեր կ'ունենայ: Ընկերոջ հիւանդութեան պատճառով, Աշոտ ստիպուած՝ կը սպասէ երկու օր, եւ երբ կը տեսնէ որ ապաքինելու յոյս չկայ, հետեւեալ երեկոյեան՝ ճամբայ կ'իյնայ առանձին, իրեն հետ առնելով ցորենի թեռ մը, զոր կուլապ կը շինէ եւ ուտելուն կ'անցնէ» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 480-481):

Ինչպէս կը տեսնուի, Վահան Փափազեանի պատումին համաձայն, «մեր ընկերներէն մէկը տիկ մը ունէր, որ հանցեց՝ ջրով լեցնելու համար», եւ որ «մնաց միւս կողմը» («Իմ Յուշերը», Բ., էջ 404 եւ 406), այսինքն, Թրքական գիծէն ներս, եւ որ, սակայն, «հետագային կրցած էր Սիփանի կողմէն մինակը ազատիլ ու գալ» (նոյն, էջ 406):

Ըստ Միսակ Բղէեանի պատումին, տիկով ջուր բերողի անունն էր Պաշիկ, Ալվառինչ գիւղացի (ըստ Տէր Եղիշէ Քահանայի պատումին՝ Պրսօ էր այդ ազգայինի անունը), իսկ անոր ընկերացող ընկերոջ անունը՝ Աշոտ, քաղաքի Փոթիկեան մեծ գերդաստանի մէկ արժանաւոր շառաւիղը:

Աշոտին ընկերացող Ալվառինչցի Պաշիկը կամ Պրսօն էր որ ստամոքսի խիթերու պատճառով՝ հիւանդացի եւ ունեցիչ է տարաբախտ Ոստանիկի դառն ճակատագիրը:

Այս ալ երկրորդ զոհն էր:

Կայ նաեւ երրորդ զոհ մը, որ Վերին Թաղի միօրեայ դիւցազնամարտի քաջամարտիկ ղեկավար Ալեքսան Գուրոյեանն էր, եւ որու անունը ականէ յանուանէ կը յիշէ յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան, երբ կը պատմէ.—

«Ասոնցմէ Քենտերեան Ոստանիկը, Աշոտը (Փոթիկեան), Ալեքսանը (Գուրոյեան) եւ Ալվառինչցի Պրսօն՝ ճամբան կը ղրկուին ջուրի, եւ բացի Աշոտէն, միւս երեքը կը նահատակուին, որովհետեւ իրենց ընկերները փոքր շշուկ մը լսելով, կը ձգեն կը փախչին, եւ

չեն սպասեր իրենց ընկերներուն» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջ 124) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Մենք արդէն ծանօթացանք տարաբախտ Ոստանիկի եւ Պաշիկի (կամ Պրսոյի) դառն ճակատագիրներուն եւ տեղեկացանք Աշոտ Փոթիկեանի ազատութեան պարագաներուն. ի՞նչ պատահած է, սակայն, երրորդ զոհին — Ալեքսան Գուրոյեանին:

Եթէ Աշոտին եւ Ալվառինչցի Պաշիկին (կամ Պրսոյին) ընկերացած էր (ըստ Տէր Եղիշէ Քահանայի պատումին), ինչո՞ւ համար յուշագիրներ Միսակ Բղէեան եւ Վահան Փափազեան լուծութիւն կը պահեն անոր մասին, եւ միայն Տէր Եղիշէն է որ կու տայ շատ հակիրճ այդ լուրը.— «Բացի Աշոտէն, միւս երեքը կը սպաննուին» (նոյն, անդ):

Սասունցի Մուշեղ, կարծէք թէ կը լուծէ այդ հանելուկը, երբ կը գրէ.—

«Որոշ էր որ այլեւս կը մօտենայինք Ռուս-Թրքական ճակատի յառաջապահ գիծերուն: Այնքան յոգնած ենք եւ սպառած որ վայրկեան մը կը նստինք հանգստանալու: Սակայն, մեր չար բախտէն, չենք նկատած որ Թրքական յառաջապահ զօր մը ճիշտ կեդրոնը կը գտնուինք: Թուրքերը կը սկսին կրակել. ստիպուած կ'ըլլանք փոխադարձել: Այդտեղ գոհ կու տանք՝ Մշեցի Ալեքսանը» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է., էջ 95) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Կարօ Սասունին ալ հետեւեալ յիշատակութիւնն ունի այդ նահատակներու մասին՝ հետեւողութեամբ Տէր Եղիշէ Քահանայի պատումին.—

«Այս խումբէն երեք հոգի ճանապարհին կը սպաննուին (Նեմրութ), խումբին համար ջուր բերած ժամանակ: Նահատակուածները հետեւեալներն են.— Քենտերեան Ոստանիկ, Ալեքսան եւ Ալվառինչցի Պրսօն» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 987):

Գ Լ ՈՒ Ն Ժ Ե .

ՍԱՍՈՒՆՑԻ ՄՈՒՁԵՂԻ ԵՒ ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆԻԻ Տ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ն Ե Ր Ը

Սասունցի Մուշեղ, յիշելէ ետք Ռուբէնի վերջին խօսքերը, զոր ան արտասանած էր «Սորհրդակցական ժողովին» մէջ, այլեւս կը մնար Անդոկ հաւաքուած հինգ հազարի մօտ ժողովուրդը, — մեծ մասամբ՝ դուրսէն եկած, — այդ տեղէն հեռացնելու խնդիրը: Ռուբէնի հաւանութեամբ, այդ ժողովուրդը կ'առաջնորդուի Կոլըշիկի լեռը, դէպի արեւելք, ուր աւելի դիւրին պիտի ըլլար զայն տեղաւորել այնտեղի անտառներու եւ քարայրներու մէջ:

Առաւօտեան կանուխ, թշնամին լուր ունեցած էր այդ տեղափոխութեան մասին: Կուր սկսաւ եւ շարունակուեցաւ մինչեւ երեկոյ:

Գիշերուան մութէն օգտուելով, ժողովուրդը ցրուեցինք Կոլըշիկի խորերը, անմատչելի անտառներու եւ ծերպերու մէջ, իսկ մեմֆ ՔԱՇՈՒԵՑԱՆՔ Ֆրոֆրո Քարի քարայրները: Մեր նպատակն էր հետքերնիս կորսնցնել եւ այն տպաւորութիւնը տալ կառավարութեան թէ սպաննուած ենք» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է. 52 88) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ռուբէնի քսան հոգինոց այս փախստական խումբը, «Ֆրոֆրո Քարի» քարայրներու մէջ, տասը օր «անօթի ու ծարաւ» մնալէն ետք, Ռուբէն կը յայտնէ որ «եթէ հոս փակուած մնանք, անօթի պիտի կոտորուինք» (նոյն, անդ.), ուստի փափաք կը յայտնէ ջանալ գտնել Կոմսը: «Իմացած էիմֆ որ անիկա կը գտնուի Քան» (նոյն, անդ.) [ընդգծումները մերն են, Ա. Տ.]: Եւ վերջապէս Ռուբէն այն համոզումին կու գայ որ «այլեւս իմաստ չունի այս շրջանները մնալ. պէտք է անկարելին փորձենք, ճեղքենք պաշարման շղթան ու հասնինք Կուրտիկ, Փեքարայ անտառը» (նոյն, էջ 91), անկէ ալ՝ Միրանկատար (Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.) [Ա.]:

Յաջորդ օր, լուր կը ղրկեն Քան՝ Կոմսին, «մեր ժամանուժը տեղեկացնելու համար» (նոյն, էջ 92): Նոյն գիշերն իսկ, Կոմսը, «տասնէ աւելի զինակիցներով՝ եկաւ մեր քով» (նոյն, անդ.):

Թշնամին հետ ունեցած ընդհարումէ մը ետք, «այդ կարճ դադարը օգտագործելով, իրարու քով կու գանք: Բոլորս ալ կը գլանք

որ այլեւս երթալիք տեղ մը չունինք, պատսպարուելիք ո՛չ մէկ անկիւն չէ մնացած: Մէկ ելք կայ միայն — նետուիլ կրակներու մէջ, վերջին փորձ մը կատարել ու հասնիլ Ռուսական յառաջապահ գիծերուն: Ռուբէն եւ Կոմս իրենք ալ գիտէին որ ստոյգ մահուան է որ կը դիմենք, յաջողութեան հաւանականութիւնները քիչ են, սակայն պէտք է փորձել» (նոյն, էջ 93):

«Այժմ, Կոմսի մօտ գտնուող ուժերով, մեր թիւը բարձրացած է մօտաւորապէս 35-ի» (նոյն, անդ.):

Եւ անհրաժեշտ զգուշութիւնները ձեռք առնելէ ետք, գիշերուան մութին, Ռուբէն-Փափազեան խումբը ճամբայ կ'իյնայ՝ Զխուրի դաշտի կողմով, դէպի արեւելք: Արշալոյսը չբացուած՝ կը հասնին Զխուրի անտառը: «Սակայն, հեւ ի հեւ մեր վազըը բոլորովին սպառած է մեզ: Անօթութիւնն ու ծարաւը մեզ կմախք են դարձուցեր: Ռուբէն դարձեալ կը բանայ իր օրհնուած պայուսակը եւ մէկ-մէկ բուռ կորեկի ալիւր կը նետէ մեր ակուններուն տակ» (նոյն, անդ.):

Չարմանալի է որ Սասունցի այս խմբապետ պատմիչը որեւէ ակնարկութիւն չ'ըներ հեյվայի համար, որու մասին կը խօսի Վահան Փափազեան, պահուած «կաշիէ երկյարկանի պարկի մը վարի յարկին մէջ», զոր «անձեռնմխելի կը պահէր մեր ագահ աչքերէն ու ֆիւմբերէն» («Իմ Յուշերը», Բ., էջ 397) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ռուբէնի այս պայուսակը «երեք աչք ունէր. — կը շարունակէ Սասունցի Մուշեղ, — մէկուն մէջ՝ կորեկի ալիւր, միւսին մէջ՝ գարիի, իսկ երրորդինը՝ կըլկըլ: — «Վերջին հաղորդութիւնն է որ կու տամ ձեզ», ըսաւ Ռուբէն, եւ բաժնեց բոլորին՝ ինչ որ խնայած էր շարաթներէ ի վեր» («Սասունցի Մուշեղի Յուշերը», է. 52 94):

Եւ այսպէս շարունակելով իրենց ճամբան, կը հասնին Նագիկ Լիճին եզերքը, որու միւս ափը բռնած են Մանազկերտի եւ Բուլանըքի աշիւրէթներն ու քոչուորները: «Որոշ էր որ այլեւս կը մօտենայինք Ռուս-Թրքական ճակատի յառաջապահ գիծերուն: Այնքան յոգնած ենք եւ սպառած որ վայրկեան մը կը նստինք հանգստանալու, սակայն, մեր չար բախտէն, չենք նկատած որ Թրքական յառաջապահ գծի մը ճիշտ կեդրոնը կը գտնուինք: Թուրքերը կը սկսին կրակել. ստիպուած կ'ըլլանք փոխադարձել: Այդտեղ գոհ կու տամք Մշեցի Ալեքսանը» (նոյն, էջ 95) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Յաջորդ առաւօտեան ալ, հեռադիտակով կը նշմարեն որ շերջակայ աւերակ գիւղերէն մէկուն մէջ շարժում կը նկատուի: Ու կ'ի-

մանան որ Ռուսերը արդէն իսկ Մանազկերտ կը գտնուին եւ խումբը ապահով կը հասնի փրկութեան կայանը:

* * *

Կարօ Սասունի կէտ առ կէտ կը հետեւի Սասունցի Մուշեղի պատումին՝ քիչ մը աւելի ընդարձակ նկարագրականներով, անոնց միացնելով իր սովորական սովետական խորհրդածութիւնները, այսպէս .—

«Անդոկի պարպումը, Օգոստոս 3-ի կէս դիշերին, կատարուած իրողութիւն էր: Առաջին քայլը դիւրին էր, պաշտպանուած 25 քիւրմեթր շրջագծի մէջ շարժուելը արագութեամբ կատարուեցաւ: Սակայն, այդ քծէն անդին, ամէն քայլափոխին՝ ընդհարումներով պիկատի յառաջանային: Կռիւ՝ անհատական, կռիւ՝ խմբական, կռիւ՝ ժողովրդային զանգուածով: Դիւրք չկար. ամէն կողմէ ներխուժող թըշնամին ինքն ալ յանկարծակիի կու գար: Աջէն-ձախէն, վերէն-վարէն գնդակ կը տեղար:

«Այդ խառնիճաղանջի մէջէն՝ Սասունցիները, վայրերուն աւելի ծանօթ, դիւրին որսը չէին ըլլար այս վոհմակներուն: Սակայն Անդոկ հաւաքուածներուն մէջ հինգ հազարէ աւելի ժողովուրդ կար Մշոյ Դաշտէն, Մուշէն, Փսանքէն, Խիանքէն եւ Խուլփէն, բոլորովին անծանօթ Անդոկի եւ Մովսարի միջեւ ինկած տարածութեան, եւ անդիտակ՝ հիւսիսին եւ հարաւին, որով աւելի դիւրաւ ենթակայ էր բնաջնջման» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 985):

Խուլփեցիներ, Խիանքիներ եւ Դալուորիկցիներ, թշնամիներու մէջէն ճամբայ բանալով, կ'երթային իրենց գիւղական շրջանները, դէպի Կապուր եւ Խուլփի խորխորատները:

Մշեցիները եւ Դաշտեցիները միայն Կուրըկի ճամբան գիտէին՝ դէպի Մովսար անցնելու համար: Նոյն ճամբայով կ'երթային նաեւ Շենիկցիները եւ Սեմալցիները:

Ռուբէն, Փեթարայ Մանուկի եւ Իշխնճորցի Արթինի խումբերը առած՝ Կեփինէն կ'ուղղուի դէպի Կուրըկի Ձորը:

Ընդհարումները կը դառնան պատահական կռիւներ: Դէպի հարաւ շարժուող զանգուածը պիտի ընդհարէր Խուլփէն, Խիանքէն, Խարզանէն ներխուժող թշնամիներու հետ: Դէպի հիւսիս-արեւելք (Միւրնկատար-Մովսար) շարժուողները պիտի բախէին թրքական բանակներու եւ Մշոյ Դաշտէն Սասուն բարձրացող աշիրէթներուն:

Օգոստոս 4-ի ցերեկը, զանազան ուղղութեամբ փախչող ժողովուրդը կա՛մ ընդհարած էր թշնամիին հետ եւ մեծ կորուստներով

կրցած էր ապաստանիլ լեռ մը, կա՛մ անտառ մը եւ կա՛մ՝ առանց ընդհարումի, անցած էր թշնամիին թիկունքը:

Կելիէսանի Ձորին մէջ նահատակուած էին Կողբեցի Վարդանը, Պողոս Պուլէան, եւ յաջորդ օրն ալ՝ Պուլէի Մջօն:

«Պատիկ Արամը, ստուար խումբով մը, կ'անցնի Հաւատորիկի լեռները՝ քանի մը կռիւներ մղելէ ետք» (1):

Աւրանցի Արամ՝ Մովսարէն դէպի Հաւատորիկ անցնելու ընթացքին, յարձակումի կ'ենթարկուի եւ ծանրօրէն վիրաւորուելով՝ կը հասնի Հաւատորիկի ձորը:

Ռուբէն, Փեթարայ Մանուկի, Մուշեղի եւ Արթինի խումբերով կ'անցնի Կուրըկի լեռը, երբ օր մը առաջ արդէն Մջօն նահատակուած էր: Ռուբէնի խումբը կռիւի կը բռնուի թշնամիին հետ մինչեւ երեկոյ, որով ժողովուրդը ժամանակ կ'ունենայ ցրուելու Կուրըկի խոր անտառները եւ անմատչելի քարանձաւները:

«Գիշերը, երբ ընդհարումները կը դադրին, Ռուբէն իր խումբը առնելով՝ կ'անցնի Դալուորիկի Ձորը, Յըռֆըռ Քարի թաքստոցը ապաւինելու համար» (նոյն, էջ 987):

Այստեղ, «պատմագիր» Սասունցին կ'ընէ հետեւեալ չնաչխարհիկ խորհրդածութիւնը.—

«Այս քայլէն դատելով, կարելի է պնդել թէ Ռուբէն դէպի Կովկաս անցնելու դիտաւորութիւն չունէր, որովհետեւ Դալուորիկի Ձորը աւելի կը հեռանար Միւրնկատարէն եւ Քանէն, որոնց վրայէն կարելի պիտի ըլլար իրականացնել փախուստ մը դէպի Ռուսական բա—

(1) Այս ամբողջ նախադասութիւնը ընդգծեցիմք՝ մեր ընթերցողներու յորջ ուշադրութիւնը հրաւիրելու համար այդ յերիւրածոյ նախադասութեան վրայ, ցոյց տալու համար թէ «պատմագիր» Կարօ Սասունի ինչպիսի դիրութեամբ եւ ինչ Մեծ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԵՆԴԱԹԻՒՐԻ ԿԱՄՈՒԿԱՆ իրողութիւնը:

Այդպիսի խեղաթիւրումի եւ յերիւրանքի իբր դասական օրինակ կրնայ ծառայել վերի նախադասութիւնը, զոր մեղի կը ներկայացնէ իբր հարազատ պատմական իրողութիւն:

Բացարձակ իրականութիւնը, սակայն, ա՛յ է որ Պատիկ Արամ Յակոբեան Սասուն ԶԷՐ ԳՏՆՈՒՆԵՐ՝ Սասունի գոյամարտի օրերուն, այլ՝ անիկա, Յուլիս Մէկին, Սասունէն մեկնած էր Հաւատորիկի եւ Քանայ լեռները՝ Վահան Փափազեանի խումբին հետ, եւ մինչեւ վերջ ալ, մինչեւ իր Կովկաս մեկնումը, Օգոստոս 2-ին, հո՛ն, Քանայ լեռը մնացած:

նակը: Միայն ուղարկուած քան վերջին ցուցադրութիւնն է որ կը տեսնենք: Սասունի լեռներու վրայ կուրիլ եւ սպասել կամաւորական բանակներու ժամանման» (նոյն, անդ) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Սասունի Հայկական ուժերու հրամանատար Ռուբէնի դասալիք փախուստէն եւ անյայտացումէն ետք, անոր վերագրուած վերոյիշեալ կռիւները՝ «պատմիչ» եւ «պատմագիր» երկու Սասունցիներու գերագրգիռ երեսակայութեան ծնունդ պիտի է համարել պարզապէս...

Եթէ նոյնիսկ միշտ ընդունիմք իրենց բոլոր պատմածները, երբ Ռուբէն իր խումբը առնելով՝ Կուրչիկի Ձորէն անցած է Գալուրիկի Ձորի Ֆրոֆրո Գարի թաքստոցը, Ռուբէն այդ քայլը առած է ո՛չ թէ որովհետեւ «դէպի Կովկաս անցնելու դիտաւորութիւն չունէր», ա՛յլ այն պարզ ու բացայայտ պատճառով որ այդ նոր թաքստոցը աւելի ապահով վայր մը նկատուած էր՝ ժամանակ մը հոն ապաւինելու համար: Անկէ վերջ ալ, անցած-գացած է Սուրբ Յովհաննէս վանքի անտառը, Սասունի կուսակալին հետաւոր մէկ անկիւնի մէջ՝ ժամանակ մըն ալ հոն պատսպարուելու, մինչեւ որ աւելի նպաստաւոր առիթով մը, Սուրբ Յովհաննէս վանքի անտառէն անցած է Փեթարայ անտառը, Կուրտիկ լեռը, եւ անկէ ալ՝ Քանայ լեռը:

«Մինչեւ Օգոստոս տասը, քարանձաւին մէջ փակուած մնալէն ետք, Ռուբէն վերջակէտը կը դնէ իր սխալ ուղարկութեան, բայց արդէն ուշ էր: Մանուկին եւ Մուշեղին կը յայտնէ որ «եթէ այս թաքստոցին մէջ մնանք, անօթի պիտի մեռնինք. դուրս ելլենք, երթանք դէպի Փեթար եւ անկէ ալ անցնիմք Քանայ Սարը»: Այդպէս ալ կ'ընեն, եւ Սեպտեմբեր 3-ին՝ կը հասնին Հաւատորիկի եւ Մառնիկի լեռները» (նոյն, էջը 987-988) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Եթէ Ռուբէն եւ իր խումբը, Օգոստոս 10-ին՝ ձգած են Ֆրոֆրո Գարի իրենց թաքստոցը եւ Սեպտեմբեր 3-ին միայն հասած են Հաւատորիկի եւ Մառնիկի լեռները, ո՛ւր եւ ի՞նչպէս անցուցած են այդ մնացած 25 օրերը: Եթէ հինգ օր ալ յատկացնենք իրենց այդ զգուշաւոր փախուածութեան, ո՛ւր անցուցած են մնացած քսան օրերը: [Բ.] :

Դասալիքներու փախուստի պատրաստութիւնները.— Ինչպէս ասկէ առաջ ալ յիշած ենք, «պատմագիր» Կարո Սասունի կը շարա-

փոխէ Քանայ լեռներէն դէպի Ռուսական բանակը շարժուած երեք սուրհանդակներու խումբերուն բնոյթը, ինչպէս նաեւ Պատիկ Արամ Յակոբեանի խումբին՝ դէպի Կովկաս մեկնումին եւ երկու «պարոն»ներու դասալիք փախուստին պատմութիւնները:

Մենք ընդարձակօրէն խօսած ենք արդէն երեք սուրհանդակներու խումբերու առաջումին եւ Պատիկ Արամ Յակոբեանի խումբին մեկնումի մասին (Տեսնել «Տարօնապատում»ի Մասն Բ., Գլուխներ 2., է. ինչպէս նաեւ Մասն Գ.ի Գլուխ ԺԳ.):

Կարո Սասունի եւս կը նկարագրէ որ Ռուբէնի եւ Վահան Փափազեանի խումբերը՝ Բուժէլ կոչուած բարձունքի մը վրայ կը հաւաքուին եւ կ'որոշեն իրենց խումբին ընկերացողներուն թիւը: «Շատեր կը յուսային միանալ այդ խումբին, ինչ որ կարելի չէր, եւ այդ բանը դժգոհ կը թողու ոմանք: Անշուշտ, այդպիսի պարագաներուն մէջ, ամէն մէկը պիտի բաղձար ազատիլ՝ իր ազգականին հետ, ու հետեւաբար պիտի դժգոհէր, եթէ խումբը ընդառաջ չերթար իր ցանկութեան» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 996):

Հոս, Կարո Սասունի կ'ընէ սխալ յայտարարութիւն մը: «Լեւոն Ասլանեան տեսնելով որ մեկնող խումբը չ'ընդունիր իր հորեղբայրը միասին առնելու, կը հրաժարի մեկնելու զազափարէն եւ ի վերջոյ՝ զոհ կ'երթայ Քիւրդերու դաւազրութեան» (նոյն, անդ) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] : Ո՛չ թէ Լեւոն Ասլանեանի հորեղբայրը, այլ իր իսկ հայրը, Ասատուր Ասլանեանը, որ ի վերջոյ, իր կրտսեր տղայ Ասլանի հետ՝ քաղաք կ'երթայ յանձնուելու, եւ անմիջապէս երկուքն ալ կը սպաննուին («Ներուանդ Շարաֆեան կը Պատմէ Տարօնի Եղեռները», էջ 42. Տէր Եղիշէ Քհնյ. Տէր Պարսամեան, «Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջ 125):

«Վերջապէս, — կը շարունակէ Կարո Սասունի, — երկար վիճարանութիւններէ ետք, մեկնողներու լրիւ ցանկը կը պատրաստուի, եւ Սեպտեմբեր 8-ին՝ ճամբայ կ'ելլեն դէպի Նեմրութ, անկէ ալ Մանազկերտ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջը 996-997):

Այս մեկնող խումբին մասնակցողներու անուանացանկին մէջ, մեր ուշադրութիւնը կը գրաւէ «Արեքսան Մովսէսեան» անունը, որ ուրիշ մէկը չէր, եթէ ո՛չ՝ այդ նոյն էջին վարի կողմ, Տէր Եղիշէի խումբին մասնակցողներէն «Արոյեան Էլօն», զոր Կարո Սասունի, «պատմագիր»օրէն, մէկ ամուսան մէջ երկու անգամ Կովկաս կը շարժէ. առաջին անգամ՝ Ռուբէն-Փափազեան խումբին հետ՝ իր բուն անունով (Արեքսան Մովսէսեան), իսկ երկրորդ անգամ ալ՝ Տէր Եղիշէի խումբին հետ՝ «Արոյեան Էլօն» անունով:

Կարո Սասունի, առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, կը

յիշէ խումբին տուած կորուստներու անունները՝ այսպէս. — «Այս խումբէն երեք հոգի ճանապարհին կը սպաննուին (Նեմրութ), խումբին համար ջուր բերած ժամանակ: Նահատակուածները հետեւեալներն են. — Քենտէրեան Ոստանիկ, Ալեքսան եւ Ալվառիչու Պրսօն» (նոյն, էջ 997):

Ռուբէն-Փափազեան խումբը, վերջին օրը, պզտիկ ընդհարում մը կ'ունենայ Մանազկերտի մօտերը եւ առանց վնասի կը հասնի Մանազկերտ:

* * *

[Ա.] Սասունցի Մուշեղի՝ Ռուբէնին վերագրած այն խօսքը թէ «Հոս փակուած՝ անօթի պիտի կոտորուինք» («Սասունցի Մուշեղի Յուշերը», էջ 88), եւ «Կոմսը գտնելու» փափաքը (նոյն, էջ 90), ինչպէս նաեւ պնդումը թէ «Այլեւս իմաստ չունի այս շրջանները մընալ, պէտք է անկարելին փորձենք, ճեղքենք պաշարման շղթան ու հասնինք ԿՈՒՐՏԻԿ՝ ՓԵԹԱՐԱՅ ԱՆՏԱՌԸ» (նոյն, էջ 91) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.], եւ անկէ ալ Քան լեռը, մեզի կը թելադրեն ընդունիլ բացարձակ մշմարտութիւնը Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեանի այն յայտնութեան, զոր կ'ընէ այս առթիւ:

Ռուբէնի այս փափաքները արտայայտուած ատեն, եթէ ինք եւ իր խումբը ԴԵՌ ԿԸ ԳՏՆՈՒԷԻՆ Փրոֆըն Քարի քարայրներու մէջ, եւ եթէ իրենք կը փափաքէին Քան լեռը անցնել, այդ պարագային՝ ինչո՞ւ համար Փրոֆըն Քարի քարայրներէն ուզողակի չէին անցնիր-երթար Քանայ լեռը՝ Ծովասարի քղանցքներու արահետներով, որ աւելի կարճ ցամաքայ էր, եւ ինչո՞ւ պիտի երթային ՆԱՏ Փեթարայ անտառը, Կուրտիկ լեռը, եւ անկէ ալ՝ Քան, ճամբորդութիւն մը որ զիրենք կրկնապատիկ կերպով աւելի կը հեռացնէր Քանայ եւ Հաւատորիկի լեռներէն, ուր կը գտնուէր Վահան Փափազեան:

Փեթարայ անտառի եւ Կուրտիկի այս ակնարկութիւնը մեզի կը թելադրէ տրամաբանական եւ մշմարիտ ընդունիլ Միսակ Բղէեանի այն յայտնութիւնը, որ կ'ըսէ. —

«Վ. Փափազեան նամակ մը կը ստանայ Ռուբէնէն թէ ինք ողջ է եւ քանի մը ընկերներով՝ ԳԱՅԱՄ Սուրբ Յովհաննէս վանքի ԱՆՏԱՌԸ եւ ՀՈՆ ԱՊԱՍՏԱՆԱՄ՝ կը սպասէ յարմար բողբոջին, իր ընկերներով միասին՝ անոր քով գալու» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 445) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Խիստ տրամաբանական եւ ճիշտ կը թուի որ Ռուբէն, իր գաղ-

տագողի փախուստէն եւ անյայտացումէն ետք, առաջին իսկ առթիւ՝ Փրոֆըն Քարի քարայրներու մէջ, ժամանակաւոր կերպով ապաստանելէն ետք, անցեր-գացեր է Սուրբ Յովհաննէս վանքի անտառը եւ հո՛ն անյայտ մնացեր՝ ատեն մը, ուր ինք աւելի հեռու կը գտնուէր Սասունի կռուավայրին անմիջապէս ՄՕՏԻԿ միջավայրէն (Փրոֆըն Քարի քարայրները), եւ հետեւաբար՝ շատ աւելի ապահով, որով եւ գերծ՝ նաեւ թշնամիի աշալուրջ հսկողութենէն ու սպառնացող անպատեհութիւններէն ու վտանգներէն:

Եւ Սուրբ Յովհաննէս վանքի անտառներէն դէպի Քան գացողը, Փեթարի անտառի ու Կուրտիկի ճամբով՝ աւելի ապահով պատեհութիւն ունի, առանց մեծ զժուարութեան կամ վերահաս վտանգի, հասնելու Հաւատորիկի լեռները, անկէ ալ՝ Քանայ լեռը:

* * *

[Բ.] Կարօ Սասունիի «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» պատմագիրքի 996 էջին վրայ, մեծ զարմանքով կը կարդանք հետեւեալ շարժեցնող տողերը. —

«Ռուբէն, դէպի Քանայ Սար մեկնած միջոցին, Մօրուք Կարոյին, Չոլոյին եւ Ղազար Պետոյեանին լուր կը դրկէ եւ կը յանձնարարէ որ ողջ մնացող մարտական ուժերը մինչեւ Սեպտեմբեր 12-ը Քան հասնին, որ միասին մեկնին դէպի Ռուսական բանակը», իսկ յաջորդ էջին վրայ ալ, կը շարունակէ. —

«Սեպտեմբեր 12-ին, Սասունցի մարտիկները կը հասնին Քան եւ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանէն կ'իմանան որ խումբը արդէն մեկնած է: Սասունցիները կրկին կը վերադառնան Սասուն եւ ամբողջ ձմեռը կ'անցնեն մեծ տառապանքներով եւ արկածներով, մինչեւ որ 1916-ի Փետրուարին Մուշ կը հասնին Հայ կամաւորները» (նոյն, էջ 997):

Կարօ Սասունիի այս տեղեկատուութիւնը թէ՛ զարմանալի եւ թէ՛ անհաւատալի կը թուի մեզի՝ մէկէ աւելի պատճառներով. —

ա. — Եթէ իրապէս, Ռուբէն այդպիսի յանձնարարութիւն մը ըրած է Սասունցի այդ քաջամարտիկ հերոսներուն, անպատճառ եւ անպայման՝ ինք պիտի սպասէր անոնց ժամանումին, մինչեւ իր սահմանած ժամանակամիջոցի վերջին օրը եւ ժամը (Սեպտեմբեր 12):

բ. — Ռուբէն կամ որեւէ պատասխանատու կամ հասարակ անհատ պիտի չգիջանէր այդ աստիճան խոստմնադրուած ըլլալու՝ չյարգելով իր իսկ կողմէ որոշուած եւ անոնց հաղորդուած ժամանակա-

միջոցի թուականը եւ այդ որոշուած թուականէն չորս օր կամ վեց օր ԱՌԱՋ (Սեպտեմբեր 6-ին՝ ըստ Կարօ Սասունիի, եւ Սեպտեմբեր 6-ին՝ ըստ Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի) ճամբայ իյնար:

Գ.— Ճիշտ է որ Տէր Եղիշէի յուշերու մէջ կը կարդանք որ Ռուբէն-Փափաղեան խումբին մեկնելէն ետք, Սասունցի քանի մը ազգայիններ կու գան Քան լեռը՝ «պարոն»ները փնտռելու, սակայն այդ Սասունցիները՝ Կարօ Սասունիի անուանած անձերը Ձէին, այլ բոլորովին ՏԱՐԲԵՐ ՄԱՐԳԻԿ:

Հետեւեալն է Տէր Եղիշէի տուած պատմութիւնը, զոր հոս կ'ուզենք ընդօրինակել՝ իր բառերով եւ ոճով.—

«Սասունցի երեք տղայ՝ Գեալեցի Պօղոս, Մկրօն եւ Կեալախուլեցի Յարդեն եկած զինք կը փնտռեն եւ կը հարցնեն թէ ո՞ւր են Փափաղեանն ու Ռուբէնը, ու երբ կը հասկնան թէ անոնք վնասած են Կովկաս, կը բարկանան Սասունցիներն ու կը սկսին սարսափելի կերպով հայհոյել, եւ վերջը կ'ըսեն որ այդպէս չարաչար կերպով գործածելով իրենց վատահութիւնը, կը ձգեն ու կը հեռանան» («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջք 133-134):

Ասոնց մեկնելէն մէկ-երկու օր վերջ, նորէն կարգ մը ուրիշ Սասունցիներ, «Գիալեցի Մրգէ Պետրոս, Յարօն եւ եղբայրը Պօղոս, Աղբեցի Ուադէի Մկրօն եւ Գիալախուլեցի Մկրօն, հինգ հոգի կու գան Տէր Եղիշէն փնտռելու, որմէ կը պահանջեն որ Ռուբէնն ու Փափաղեանը ցոյց տայ: Քահանան անոնց ալ կը յայտնէ որ «պարոն»ները մեկնած են Կովկաս, Սեպտեմբեր 6-ին: Սակայն ասոնք չեն ուզեր հաւատալ. «Ի՞նչպէս կարելի է դրժել յեղափոխական ազնիւ խօսքին ու զաղափարին դէմ, լքել ընկերներն ու իր անձը մտածել, երբ ամենամեծ ուխտը ուխտած են: Ձէ՞ որ ամէնքը մէկի եւ մէկն ամէնքի համար են, չէ՞ որ այդ զաղափարը իրենք էին որ կը քարոզէին. հիմա ի՞նչպէս կ'ըլլայ որ վատութիւնը եւ խայտառակութիւնը առնելով՝ թողուն երթան»:


«Տէր Եղիշէն երբ կը տեսնէ որ չեն հաւատար իր խօսքին թէ մեկնած են, խիստ կը ցաւի, կու լայ, կը զարնէ իր գլխին եւ իր այրած չորս որդիներու դիակներուն վրայ երգում կ'ընէ որ պարոնները մեկնած են: Սասունցիները քահանայի լացին ու երգումին հանդէպ կը զղացուին ու կը սկսին իրենք ալ լալ, եւ վերջը կ'որոշեն, քանի որ պարոնները, մեր յեղափոխութեան ռահվիրաները լքեցին մեզի եւ ժողովրդեան, ահա՛ մենք ալ կ'երթանք ողջ մնացողներու հետ անձնատուր ըլլալու:

«Քահանան նորէն կը խնդրէ, կը համոզէ, բայց ո՛չ մի օգուտ չ'ըներ իր խօսքը, եւ երբ կը հասնին իրենց տեղերը, բոլոր ողջ մնա-

ցողներու եւ իրենց երկու քահանաներու հետ կ'երթան Մուշ՝ անձնատուր ըլլալու» (նոյն, էջք 134-135):

Այս ընդարձակ արտագրումն ըրինք՝ ցոյց տալու համար որ երկու տարբեր առիթներով, Ռուբէնը եւ իր խումբը փնտռող եւ անոնց մասին՝ Տէր Եղիշէ Քահանայէն տեղեկութիւններ ուզող Սասունցիներու անուններուն մէջ չհանդիպեցանք Սասունցի քաջամարտիկ հերոսներ Չոլոյի, Մօրուք Կարոյի եւ Ղազար Պետոյեանի անուններուն:

Ո՞վ պիտի բարեհաճէր մեզի համար լուծել այս հանելուկը: «Պատմագիր» Կարօ Սասունին պիտի բարեհաճէ՞ր գոհացնել մեր այս փափաքը:



ԳԼՈՒԽ ԺԶ.

ՄԻՍԱԿ ԲԴԵՆՆԻ ԵՒ ՏԵՐ ԵՂԻԹԷ
ՔԱՂԱՆԱՅԻ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բդէեան ալ հետեւեալ մանրամասն տեղեկութիւնները կու տայ Ռուբէնի եւ Վահան Փափազեանի պատրաստութեանց մասին, Քանայ լեռներու մէջ, զանոնք առնելով Աշոտ Փոթիկեանի պատմածներէն.—

«Ռուբէն, Սուրբ Յովհաննէս վանքի անտառի իր թաքստոցէն եկած էր Քանայ լեռը՝ իր ընկերներով եւ միացած Վահան Փափազեանի խումբին: Ռուսերու գալէն ալլեւս յոյսերնին կտրած, կ'որոշեն անցնիլ Կովկաս, եւ ըստ այնմ ալ՝ իրենց հետ մեկնիլ ուղող երիտասարդներու մէջ մրցում մը սկսած էր եւ յաճախ ալ՝ բողոքի ձայներ կը լսուէին: Շատ մը երիտասարդներ, գիշեր ատեն, այգիներ կ'երթային, Թուրքերու հնձաններէն հաց կը գողնային եւ խաղող կը բերէին Փափազեանին եւ Ռուբէնին, այն յոյսով որ անոնք, Կովկաս մեկնած ատեննին, զիրենք ալ կ'առնեն հետերնին, քանի որ ատանկ խոստում տուած էին:

«Հրանտ Հլղաթեան կը փափաքէր իր 18 տարեկան կայտառ եղբայրը, Հայկակը, հետը առնել. Մարտէեան Արմենակն ալ՝ իր հօրեղբոր որդիք Սաչմանուկն ու Պարսանդը, իսկ Լեւոն Ղազիկեան, հրացանը ձեռին, ինքզինք գացողներու առաջինը կը հաշուէր, նաեւ Ալեքսան Մովսէսեան, որ քաղաքի մէջ՝ Փափազեանին քսան լիրա տալէն զկնի, լեռն ալ՝ օրերով, իր քսակէն կ'ապրեցնէր Փափազեանը՝ այն յոյսով որ մեկնած միջոցին, անոր պիտի ընկերանար՝ իբրեւ անկէ սիրուած դէմք, բայց վերջին պահուն, այդ յիշուած երիտասարդներէն եւ ո'չ մէկը առին հետերնին: Երբ իրենց հոգեհատորները լքուելու մասին դիտողութիւն կ'ընեն տղաք, Փափազեան կը պատասխանէ.—

«— Ուղողը կրնայ մնալ եւ զանոնք պաշտպանել: Մենք փոքր թիւով կ'ուզենք անցնիլ որ թշնամիէն չնշմարուինք:

«Ըստ Աշոտի պատմածին, երբ իր (Աշոտի) մասին ալ դժկամակութիւն կը յայտնուի, այն ատեն՝ Արօ Շահրիկեան, բարկանալով, հրացանը կ'ուղղէ Փափազեանին, ըսելով՝

«— Այլեւս չափը կ'անցընէք:

«Ռուբէն կը միջամտէ եւ Աշոտն ալ կ'ընկերանայ անոնց:

«Սումբը ճամբայ կ'իյնայ երեկոյեան եւ մինչեւ արշալոյս քալելով՝ կը հասնին Վարդենիս դիւղի մօտ աւերակ ջրաղաց մը, ուր կ'անցընեն ցերեկը, եւ հետեւեալ երեկոյեան կը յառաջանան դէպի Նեմրութ լեռան քարայրները ու կը բարձրանան լեռն ի վեր» (Հաւաքատ Պատմութիւն Տարօնոյ, էջք 479-480):

Տարաբախտ Ոստանիկ Քենտէրեանի հիւանդութեան ու լքումի պատմութիւնը տալէն ետք, կը շարունակէ.—

«Եւ այդ օրը, առանց պատահարի, կը հասնին Նեմրութ լեռան դագաթը:

«Անկէ անդին կ'երեւի Թրքական բանակներու շրթան, զոր ճեղքել-անցնելու համար, Փափազեան երկու օր հող կը սպասցնէ խումբը, մինչեւ որ հեռադիտակով զննելով՝ կ'որոշուի ո'ր գիծով անցնիլ: Սումբին առաջնորդն էր Բաղէշցի Յարէթ անուամբ ճարպիկ, հմուտ երիտասարդ մը, որ կ'առաջարկէ ամէն կարշաղրութիւն իր կամքին թողուլ: Երեկոյեան մութին՝ զառիվարէ մը իջած ատեննին, կը հանդիպին աղբիւրի մը» (նոյն, էջ 480):

Այս տիկը լեցնելու եւ լեցնողներու լքումի պատմութիւնը արդէն տուած ենք սակէ առաջ (Տեսնել «Տարօնապատում»ի այս ուսումնասիրութեան Մասն Գ., Գլուխ ԺԴ.):

• • •

Տարօնցի միւս ականատես յուշագիր Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան ալ հետեւեալ կերպով կը ներկայացնէ երկու «պարօն»ներու զասալիք փախուստի պատմութիւնը.—

«Նոյն օրը (այսինքն, Սեպտեմբեր 4-ին, Ծնթ. Ա. Տ.), Ռուբէն, Սասունցի Մուշեղը, Փեթարայ Մանուկը, Ախօն ու եղբայրը, Իսրօն, Կիրակոս, նախապէս բանակցելով Փափազեանի հետ, եկած են Քան, ուր զաղտնի ժողովներ կը գումարեն՝ Ռուսական բանակը երթալու համար:

«Սեպտեմբեր 5-ին, Ուրբաթ օր (Սեպտեմբեր 5-ը՝ Ուրբաթ չէ, այլ Շաբաթ օր, Ծնթ. Ա. Տ.), Տէր Եղիշէն կը բարձրանայ Բութլի դագաթը, ուր կը տեսնէ որ ժողով է սարքուած» (Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը, էջ 120):

«Այդ օրը կ'անցնի մեծ մտատանջութեամբ, որովհետեւ հասկըցուած էր որ Փափազեան եւ Ռուբէն պիտի մեկնին: ... Ու կը լուսնայ Սեպտեմբեր 6-ը: Յանկարծ, լացած եւ ուռած աչքերով՝ Տէր

Եղիշէի քով կու գայ Յովհաննէս Կորնչոյեան, որ երկար ատեն Փափազեանի հետ կ'ապրէր, եւ կը յայտնէ որ այս վերջինը զինք պիտի չտանէ իրեն հետ, ու կը խնդրէ քահանայէն որ երթայ Փափազեանէն խնդրէ որ զինք (քահանան), Յովհաննէսը, անոր եղբայր Մկրտիչը, նաեւ Կորնչոյեան Նազարը տանեն հետերնին:

«Տէր Եղիշէն ծանօթ ըլլալով անոր (Փափազեանին ըսել կ'ուզէ, Ծնթ. Ա. Տ.) նկարագիրին, նախ կը մերժէ դիմում կատարել, սակայն Յովհաննէսի եւ Նազարի թախանձանքներուն տեղի տալով, կը բարձրանայ Բութէլ, ուր Ալվառինչի Արմենակը պահակ կը սպասէ: Տէր Եղիշէն անոր կը յայտնէ որ ինք կը փափաքի տեսակցիլ Փափազեանի հետ:

«Պահակը կը վերադառնայ եւ կը յայտնէ որ Փափազեան խիստ կարեւոր գործով զբաղած ըլլալով, այդ ատեն չի' կրնար տեսնել զինք, այլ ուրիշ ատեն մը թո'ղ գայ:

«Տէր Եղիշէն սաստիկ նեղացած այս տմարդի վարմունքէն, ետ կու գայ եւ կը բարկանայ Նազարի եւ Յովհաննէսի վրայ թէ ինչո՞ւ ստիպելով՝ զինք զրկեցին այդ կեղծ ազգասէրներու քով:

«Տէր հայրը թէեւ Փափազեանէն եւ Ռուբէնէն նեղացած է, սակայն չի' կրնար ինքզինք զրկել միւս մեկնողները տեսնելու հաճոյքէն, ուստի քիչ մը աւելի վար կը քալէ, Ալվառինչ գիւղի կողմ, ուր՝ անտառի փոսի մը մէջ կը գտնէ Փեթարայ Մանուկը եւ միւս տղաները, որոնք երեկոյ ըլլալու կը սպասեն:

«Սովորական բարեւէն ետք, քահանան իր խօսքը Մանուկին ուղղելով կը հարցնէ.—

«— Մանուկ, իրա՞ւ է որ այսօր կը մեկնիք. հնարաւորութիւն չկա՞յ որ...», եւ տղաները, բոլորն ալ, անմիջապէս կը սկսին լալ, ինչպէս նաեւ ինքն ալ, ու այլեւս խօսակցութիւնը կը դադարի պահ մը:

«Յետոյ, Մանուկ կը պատասխանէ.—

«— Տէ'ր Հայր, ճիշտ է որ կ'երթանք, թէեւ մեր պատիւն ու էրիկմարդութիւնը չեն թայլատրեր որ լքեմք գնաց, որուն համար՝ ամօթէն գետին կ'անցնինք. սակայն, հաւատացէ՛ք որ որեւէ տարբեր բան ընել Ձի ԳԱՐ ՁԵՌՔԵՐՆԵՍ: Պարոններու (Փափազեան-Ռուբէն) ՀՐԱՄԱՆԸ ԱՅԴՊԵՍ է: Կը մնայ միայն որ դուք՝ մեր եւ մենք ալ՝ ձեր փրկութեան համար աղօթենք»:

«Քահանան, անոնցմէ բաժնուելով, իր ընկերներու քով կու գայ նորէն՝ յուսահատ ու թախծալից:

«Երբ կը մթնէ, Արօ Շահրիկեան, Հրանտ Հլղաթեան, Արմենակ Մարտեան կու գան, Տէր Եղիշէն առանձին կը կանչեն մէկ կողմ եւ աջը կը համբուրեն:

«Քահանան կ'ըսէ Արոյին.

«— Արդէն 5-6 Մշեցիներ միայն մնացեր ենք հոս, ի՞նչպէս կ'ըլլայ որ դուք այդպէս առանձին կ'երթաք:

«Արօն ո'չ մի բառ չ'արտասաներ, միայն ատամները կը կճրտեցնէ, իսկ Հրանտ եւ Արմենակ կ'ըսեն որ երեք օր է որ Արօն կռիւ կ'ընէ պարոններու հետ՝ ձեզ համար, եւ անգամ մը քիչ էր մնացեր որ մարդասպանութիւն ալ ըլլար: Արօն պահանջեր է որ բոլոր Մշեցիները տանեն հետերնին, Ռուբէն կը հակառակի. եւ երբ Ալեքսան Մովսէսեան (Արոյնց էլօն) ինքզինք կը նետէ անոնց ոտքերուն եւ կը խնդրէ որ զինք ալ առնեն հետերնին, Ռուբէն կը բարկանայ եւ ատրճանակը քաշելով՝ կ'ուզէ սպաննել Մովսէսեանը: Ասոր վրայ, Արօն հայհոյելով Ռուբէնին, ինքն ալ իր ատրճանակը կը քաշէ որ զարնէ Ռուբէնին, բայց միւսները կը միջամտեն եւ մեծ դժուարութեամբ՝ հազիւ կը յաջողին հանդարտեցնել Արօն» (նոյն, էջը 121-123):

«Այդ օրը, Սեպտեմբեր 6-ի երեկոյեան, ժամը 1-ին (Ը. Թ.), 33 հոգի ճամբայ կ'իյնան — Փափազեան, Ռուբէն, Արօ (Շահրիկեան), Հրանտ (Հլղաթեան), Տիգրան (Գաւասեան), Ալեքսան (Գուրոյեան), Աշոտ (Փոթիկեան), Արշակ (Պոլէեան), Արմենակ (Մարտեան), էլօ (վրացի Ալեքսան ?), Յովհաննէս (Կորնչոյեան), Տէր Զաքարեան (Յակոբ):

«Ասոնք Մուշ քաղաքացի էին:
«Փեթարցի Մանուկը, Ախօն, եւ եղբայրը, Կիրակոս, Իսրօն, Սասունցի Մուշեղը, Բաղէչցի Քենտէրեան Ոստանիկ, Բաղէչցի Յարէթ՝ իրրեւ առաջնորդ, Ալվառինչցի Պրսօն, Պետրոս եւ Արմենակ, լարախաղաց Իգորցի Վաչագանը, Սպայ Միսակ, եւայլն» (նոյն, էջ 124):

«Յետոյ կը նկարագրէ կորուստի պարագաները երեք անձներու՝ հիւանդութեան եւ «պարոն»ներու պարտադանցութեան հետեւանքով, որոնց մասին արդէն ընդարձակօրէն խօսած ենք նախապէս:

Ատկէ վերջ կու տայ հետեւեալ լուրը.—
«Սեպտեմբեր 7-ին, Կիրակի (Սեպտեմբեր 7-ը Կիրակի չէ՛, այլ Երկուշաբթի, Ծնթ. Ա. Տ.), Տէր Եղիշէի քով կու գան Արոյնց էլօն (Ալեքսան Մովսէսեան) եւ Աւլանի Լեւոն (Լեւոն Աւլանեան): էլօն կը պատմէ որ իրեմք ալ իրեմք քախտիմ ձգուած են» (նոյն, էջ 125) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ՏԵՐ ԵՂԻՇԷԻ ԽՈՒՄԲԻՆ ՓԱՆՈՒՍՏԸ ԿՈՎԱՍՍ

Տարօնի եւ Սասնոյ տարաբախտ Հայութեան ճակատագիրը այսքան ողբալի վերջաւորութեան յանգեցնել տուող՝ մեր երկու ան-

պարտաճանաչ «պարոն»ներու այս դասալիք փախուստը մեծ յուսախարութեան եւ մանաւանդ՝ մեծ յուսահատութեան մատնած էր Սասունի, Հաւատորիկի եւ Քանայ լեռներու քարանձաւներու մէջ իրենց տառապակոծ գոյութիւնը քաջքոզ Հայկական մնացորդացը՝ անոնց մէջ մեռցնելով այլեւս ապրելու եւ գոյութեան պայքարը շարունակելու կամքն ու հաւատքը, որով անոնցմէ շատ շատեր կ'որոշեն երթալ յանձնուիլ կա'մ իրենց վաղածանօթ Քուրդ բարեկամներուն, եւ կա'մ՝ Թրքական իշխանութիւններուն:

Այսպէս, օրինակի համար, Սեմալ Գիւղացի հանրածանօթ իշխաններէն Քիաթիբ Մանուկ Շառոյեան, որ Անդուկի կռիւներու ընթացքին՝ ծանրապէս վիրաւորուած էր, կ'երթայ կը յանձնուի իր վաղեմի բարեկամ Քոմիսէր Ռասիմին ու անոր ձեռքով ալ կը նահատակուի . . . :

Քանի՛ քանի՛ ազգայիններ՝ Սասունէն եկած են Քանայ լեռը եւ Տէր Եղիշէ քահանայէն ուզած են իմանալ «պարոն» Ռուբէնի եւ «պարոն» Փափագեանի ո՛ւր ըլլալը, եւ երբ անկէ կ'իմանան դառն իրականութիւնը, նախ տարակուսանքով կ'ունկնդրեն Տէր Եղիշէի յայտնութիւններուն՝ «պարոն»ներու դասալիք փախուստի մասին, եւ երբ վերջնականապէս կը համոզուին այդ դառն իրողութեան ճշտութեան ու ճշմարտութեան, յուսախար եւ յուսահատ՝ կը դիմեն վերոյիշեալ այդ ոչ-յանձնարարելի միջոցին . . . :

Այսպիսի քայլեր առնելէ կը զգուշանան Չոլօն, Մօրուք Կարօն եւ կարգ մը ուրիշ Սասունցիներ եւ կը քաշուին իրենց ծանօթ դժուարամատչելի քարանձաւները, ուր յանձնառու կ'ըլլան ամէն տեսակ զրկանքներու եւ տանջալից ապրելակերպի, մինչեւ յաջորդ տարուան Փետրուար ամսուան սկիզբը, որ ատեն՝ Ռուսական բանակի յառաջապահ Հայ Կամաւորական գունդերը կը գրաւեն Մուշ քաղաքն ու դաշտը, եւ իրենք ալ՝ Սասունի իրենց որջերէն վար կ'իջնեն՝ դէպի քաղաքը, մօտաւորապէս 400 անձեր . . . :

Ռուբէն-Փափագեան գինեալ խումբի փախուստէն ետք, Տէր Եղիշէն կը խորհի ինքն ալ խումբ մը կազմակերպել եւ ճամբայ իյնալ դէպի Կովկաս:

Առաջին խիստ առիթով, կը յաջողի իրարու քով բերել 12 անձեր եւ Սեպտեմբեր 8-9-ի գիշերը՝ ճամբայ կ'իյնան, դէմքերնին դարձուցած դէպի հիւսիս, բռնելով Քրտագոմ-Իրիզակ ճամբան՝ նպատակ ունենալով այդ առաջին գիշերը հասնիլ Հացիկ գիւղի կռնակը գլու-

նուող լեռը՝ կտրելու անցնելով Մուշի դաշտը Հացիկի լեռան մէջ անցընել առաջին ցերեկը:

Մեղրագետի հունը անցնելէն ետք, ճամբան կը հանդիպին Թուրք եւ Քուրդ զաղթականներուն, եւ իրարու վրայ կրակ բանալէն ետք, խումբը դէպի ետ կը փախչի, դէպի իր մեկնակէտը, Քանայ լեռները:

Այս առաջին անյաջող փորձէն ետք, Տէր Եղիշէն՝ բաւական մեծ դժուարութեամբ կը յաջողի կազմել 15 հոգիէ բաղկացեալ երկրորդ խումբ մը, եւ Հոկտեմբեր Մէկի երեկոյեան՝ ճամբայ կ'իյնայ նորէն, երբ ձիւնը արդէն ծածկած էր Միրնկատարի եւ միւս լեռներու զագաթները:

Բացի Տէր Եղիշէէն, նոյն խումբին մաս կը կազմէին երկու քաղաքացիներ եւս, — Ալեքսան Մովսէսեան (Արոյենց էլօն) եւ իր հօրեղբոր որդին՝ Արոյենց Նուրօն:

Ճամբորդութիւնը կը տեւէ վեց օր, եւ Հոկտեմբեր 6-7-ի գիշերը, խումբը կը հասնի Ռուսական բանակը՝ անմիաս ու ապահով («Տարօնոյ Ինքնապաշտպանութիւնն ու Զարդը», էջը 138-152):



«Անկասկած, խորամխտ մարդ մըն էր՝ արտակերպոն փիլիսոփայութեամբ» («Իմ Յուշերը», Հատոր Բ., էջ 313):

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՌՈՒԲԷՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

(Ի ԲԵՐԱՆՈՅ ՔՈՒՄՄԵ)

Ռուբէն, առհասարակ, ճանչցուած է լուսկեաց, սակաւախօս, իր մտածումներն ու գաղափարները ուղղակի եւ որոշակի արտայայտել չսիրող, եւ իր ընելիքներն ու ըսելիքները քողարկեալ ձեւով կամ ուրիշներու միջոցով ընել ու ըսել սուտող նկարագիր մը:

Ասոր կը վկայեն նոյնիսկ իր կուսակցութեան ականաւոր դէմքերն ու գրիչները:

Այսպէս. Դաշնակցական յայտնի գրիչ մը, Մալխաս, կը գրէ. —

«Որքան կը յիշեմ, որպէս պարլամէնտի անդամ, Ռուբէնը բերանը չբացաւ, եւ ի՛նչ կարիք կար ստոր, երբ յարդի տակէն՝ իր ուզած ջուրը կը փախցնէր...» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Հատոր Է., էջ 408) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Յուշագիր Վահան Փափազեան կը գծէ Ռուբէնի իւրայատուկ նկարագիրը՝ հետեւեալ կերպով. —

«Ռուբէնը, ինքն իր մէջ, իր աշխարհով ապրող մարդ մըն էր. մարդ մը՝ միտքի խոշոր ոստիւններով. կ'ապրէր անկապակից միտքերով. ամէն բանի մասին կ'ուզէր իր սեփական եւ ուրիշներէ տարբեր կարծիքներ ունենալ, վերլուծումներ կատարել. մարդ մը, որ կը տեսնէր կեանքի ընթացքին եւ ապագային մէջ՝ երեւոյթներ, — իր կարծիքով՝ տրամաբանական, — որ ուրիշները չէին տեսներ:

«Չանագան ձեւերով եւ յամառօրէն, իր տեսակէտներու վրայ կանգնած կը մնար: Իր բնաւորութեամբ ծայրայեղ կասկածամիտ էր. դիմացինէն պաշտպանուելու վիճակին մէջ էր կարծես: Պօսեցնել կու տար, խճճուած հարցումներով կը մօտենար ընկերոջ եւ քիչ պարագաներու մէջ կը յաջողէր հասկնալ իր միտքը. արտայայտած կարծիքը միշտ երկուութիւն ունէր իր մէջ, միշտ հարցական, միշտ սատանուող շեշտ մը:

Դաշնակցական ուրիշ յուշագիր մը, Ա. Աստուածատրեան, հետեւեալ կերպով կը պատկերացնէ Ռուբէնի նկարագիրը. —

«Չափազանցութիւն չլինի, եթէ ասեմ որ Ռուբէնը մարդկանց մօտեմալու եւ նրանց հետ մտեմօրէն գործակցելու արուեստին անտեղեակ էր...»

«Ընդունակ չէր զիջումների, կոմպրոմիսների: Եթէ իր ասածը չլինէր, նա ընդունակ էր գործից քաշուելու, չէզոքանալու:

«Սակայն, դիւրութեամբ տեղի տուող չէր. յամառօրէն պայքարում էր իր նպատակին հասնելու համար: Այդ են վկայում նրա կատարած գործերը մեծ մասամբ՝ թէ՛ երկրում եւ թէ՛ Հայաստանի անկախութեան շրջանում: Տարակոյս չունեմ որ Ռուբէնը այդ գործերը չէր յաջողի գլուխ հանել, եթէ ղեկավարի ձիրք չունենար, եթէ իր կամքը չընկալատին պարտադրելու հնարաւորութիւն չունենար...»

«Չարացած վիճակում, երբեմն անգուսպ էր՝ ԳՈՒՆԿՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ» («Հայրենիք» օրաթերթ, 2 Նոյեմբեր 1961) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Նոյն Դաշնակցական յուշագիր Ա. Աստուածատրեան կը պատմէ հետեւեալ յոյժ հետաքրքրական դրուագը՝ իբրեւ բարացուցական գիծ Ռուբէնի նկարագրի մէկ ուրիշ տարբերակին. —

«Փետրուարեան ապստամբութիւնից յետոյ (1921), Հայրենիքի Փրկութեան կոմիտէի ուժերը եւ հազարաւոր մարդիկ թողին Երեւանը եւ Միլլի Զորի վրայով անցան Վայոց Ձոր, ապա Զանգեզուր: Վայոց Ձորի կենտրոնական գիւղ՝ Բեշիչքեանդումն էր Ռուբէնը:

«Ժպտալով ու յանդիմանական եղանակով հարց տուեց. — Ի՞նչպէս էիք անելու, եթէ Միլլի Զորը ժամանակին մաքրագործուած չլինէր Ռուբէրից:

«— Ուրեմն, Միլլի Զորը մաքրագործուել էր Հայաստանը ձրգողների համար ճանապարհ բաց անելու նպատակով, — կատակելով պատասխանեցի ես:

«— Նպատակը ուրիշ էր, — լրջացաւ Ռուբէնը, — բայց լաւ եղաւ. եղաւ եւ ձեզ համար, ասել է բոլորիս համար:

«Այնուհետեւ Ռուբէնին չտեսայ մինչեւ 1921 թուի Զատիկի

օրը: Նա հաստատուել էր Արեւիկ՝ Մեղրի գիւղում, իսկ ես՝ Ղափանի հանքերումն էի:

«Այդ շրջանում ինձ յանձնուած գործը (պարենաւորում) վերջացնելուց յետոյ, տեղական գործիչներէց մէկի հետ իջանք Մեղրի: Մեծ եղաւ զարմանքս, երբ դեռ ձիուց չիջած, իմացայ որ դեռ եւս այդ տեղ են մեր մի շարք աչքի ընկնող մտաւորականներն ու հանրային գործիչները, որոնք, ինչպէս ենթադրուում էր, անցած պիտի լինէին Պարսկաստան, Թաւրիզ: Հանդիպելով Նիկոլին (Աղբալեան), զարմանքս յայտնեցի որ մինչեւ օրս մնացել են այդտեղ եւ չեն անցել Թաւրիզ:

«— Ի՞նչպէս գնայինք: Գետն (Արաքս) անցնելու համար, իւրաքանչիւրիցս պահանջուում են մի հնչիւն ոսկի: Ո՞րտեղից տանք: Ունեցողները տուել անցել են, իսկ չունեցողներս մնացել ենք՝ իրար երես նայելով, — պատասխանեց Նիկոլը՝ տխուր շեշտով:

«— Ինչո՞ւ չէք դիմում Ռուբէնին, — էլ աւելի զարմացայ ես, — գիտէք որ պետական դրամը ՆՐԱ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ է:

«— Այո՛, գիտենք, բայց ինչո՞ւ դիմենք եւ ի՞նչպէս դիմենք, քանի որ ինք տեղեակ է մեր վիճակին:

«Զիմացայ ի՛նչ պատասխանել, բայց ազդուեցի:

«Տեղական գրասենեակում վերջացնելով գործս, առի Ռուբէնի հասցէն եւ շտապեցի նրա մօտ: Երբ ներս մտայ, սենեակում թախտի վրայ ծալապատիկ նստած՝ ծխում էր եւ խօսում մէկի հետ: Ինձ ընդունեց ժպիտը դէմքին, ապա ճամբեց զրուցակցին:

«Տրամադրութիւնս վատ էր: Եկել էի բացատրութիւն լսելու նրանից, որի համար ո՛չ լիազօրութիւն ունէի, ո՛չ էլ իրաւունք: Բայց ունէի խօսելու վճռական կամք, թէեւ ծանօթ էի իր տարօրինակութիւններին եւ դիտակ որ այդ խօսակցութիւնը անախորժ կարող էր լինել: Հենց այդ տեղից էլ սկսեցի, յետոյ անցնելով բուն նիւթին: Տուի մի շարք անուանի ընկերների անուններ, որոնք վաղուց անցած պիտի լինէին Պարսկաստան, բայց մնացել են Մեղրի, որովհետեւ դետն անցնելու դրամ չունեն, մինչդեռ գիտեն որ դրամ կայ եւ այդ դրամը Ռուբէնի տրամադրութեան տակ է: Պատմեցի Նիկոլ Աղբալեանի հետ ունեցածս խօսակցութեան մասին:

«Լսելով Աղբալեանի կարծիքը, Ռուբէնը ազդուեց:

«— Իրա՞ւ այդպէս ըսաւ Նիկոլը:

«— Կարող ես ստուգել, — անտրամադիր պատասխանեցի ես:

«Քմմմմա՞ղ տուեց:

«— Ստուգելու պէտք չունեմ:

«Ապա քիչ յետոյ՝

«— Ուրեմն ըսելիքդ ի՞նչ է:

«— Կարծում եմ, պէտք է հնարաւորութիւն տալ մեր այդ ընկերներին որ անցնեն Պարսկաստան: Կառավարութեան ներկայացուցիչը դու ես, դրամը քո տրամադրութեան տակ է, եւ այդ բանը քո պարտականութիւնն է: Դու լսեցիր Աղբալեանի կարծիքը: Կասկած չունեմ որ նոյն կարծիքէն են նաեւ միւսները եւ իրաւունք էլ ունեն... Վերջապէս ո՞ր օրուայ համար է պահուում այդ դրամը եւ ո՞ւմ համար...»

«— Տղայամիտ դատողութիւններ կ'անես: Այդ դրամը, ճիշտ է, իմ մօտ է, բայց պետական դրամ է եւ այդ ձեւով ծախսելու իրաւունք չունեմ ես:

«Ես պատասխանեցի որ ձեւականօրէն նա իրաւացի է, բայց իր ասածը էական եւ բարոյական հիմքից զուրկ է:

«— Այդ դէպքում, ես համաձայն եմ իմ տրամադրութեան տակ եղած դրամը յանձնել քեզ: Գիտեմ Վրացեանի վերաբերմունքը դէպի քեզ: Տո՛ւր միայն ստացական եւ վարուէր դրամի հետ ինչպէս որ նպատակադրամար տեսնես: Միայն պիտի զգուշացնեմ որ դրամը ք... է, ո՛չ սովորական մտքով. մի անգամ որ ձեռքդ ազտտեց, այնուհետեւ մինչեւ կեանքիդ վերջը չես ազատուել նրա հոտից, որքան էլ լուսս ձեռքդ: Այդ պիտի գիտենաս: Համաձայն ես ընդունելու դրամը:

«Լռեցի: Ռուբէնը ժպտաց: Ո՞րքան էր անկեղծ նա՝ դրամը ինձ յանձնելու առաջարկով, ես չգիտեմ: Գուցէ անկեղծ էր, գուցէ գիտէր որ Վրացեանը կարգադրել էր որ Ղափանի հանքերում թողած պետական թղթադրամը (Ռուբէնի մօտ վալիւտա էր) առանց իր հաւանութեան չծախսուի, բայց ինձ հետաքրքրողն այդ չէր: Ես հասկացայ Ռուբէնի յամառութեան պատճառը եւ ելք էի որոնում: Այդ ելքը ինքը՝ Ռուբէնը գտաւ:

«— Մի բան կ'անենք: Կը գրեմ Սիմոնին (Վրացեանին), թո՛ղ խօսի միւսների հետ: Կրնայ պատահել որ այսօր-վաղը Սիմոնը գայ այստեղ: Հարցի լուծումը այդ դէպքում կը դիւրանայ» (նոյն, 19 Նոյեմբեր 1961) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :



Հետեւեալը, կրկին անգամ, արտագրում մըն է յիշեալ յօդուածագիրի նոյն յօդուածաշարքէն, Ռուբէնի նկարագիրի մէկ ուրիշ երանգ յայտնաբերող —

«Զեմ յիշում ո՞ր ամիսն էր: Լսեցի որ Ռուբէնը պատրաստուում է Թաւրիզը թողնել եւ անցնել Եւրոպա: Գնացի մօտը:

«— Լսել եմ որ թողնում ես Թաւրիզը: Եկել եմ մնաս բարեւասելու եւ բարի ճանապարհ մաղթելու:

«— Դեռ հոս եմ, բայց շուտով մեկնելու եմ: Լաւ եղաւ որ եկար: Ես կ'ողջէի մէկ երկու հոգի Թաւրիզից առնել հետս: Մէկը Չորտն է (երկրի իր զինուոր Փետախներէց) . կենդանի պատմութիւն է. թո՛ղ գնայ ու պատմի իր տեսածն ու արածը, գիտցածը: Մտածում եմ նաեւ Նիկոլի (Աղբալեան) մասին: Պօսի՛ր հետը. եթէ համաձայն է, թո՛ղ պատրաստուի:

«Երբ այդ մասին խօսեցի Նիկոլի հետ, նա ինձ զարմացրեց իր վարմունքով դէպի Ռուբէնի առաջարկը: Չոր ու ցամաք մերժեց:

«— Պատճառը:

«— Վստա՞հ ես որ ճանապարհի կէսին՝ ինձ չի թողնի ու ինքը շարունակի ճանապարհը...

«Սիրտս ցաւեց:

«— Ի՞նչ ես ասում, Նիկոլ, ի՞նչպէս կարելի է...

«— Ես այդ վստահութիւնը չունեմ: Ռուբէնին ձԱՆԱԶՈՒՄ ԵՄ: Նրանից նման բան կԱՐԵԼԻ է ՍՊԱՍԵԼ, — նորից չոր ու անառարկելի եղանակով պատասխանեց Նիկոլը:

«Աւելորդ համարեցի այլեւս այդ մասին խօսել: Նիկոլին լաւ էի ճանաչում. նման պարագաներում՝ կամակոր էր, իսկ ընդհանրապէս իր խօսքերի արժէքը գիտցող բացառիկ մէկն էր եւ վերին աստիճանի արդարամիտ: Ապրել եմ հետը, վայելել եմ ո՛չ միայն իր համակրանքը, ա՛յլ եւ մտերմութիւնը: Անվերապահ վստահութիւն եմ ունեցել նրա հանդէպ: Այսուհանդերձ, նրա հետ այս դէպքում անկարող էի համաձայնել. այո՛, անկարող էի: Բայց նոյնպէս անկարող էի նրան տարհամոզել: Այս էր պատճառը որ այնուհետեւ թէեւ ամէն օր տեսնում էի Նիկոլին, ո՛չ մի անգամ փորձ չարեցի իմանալու համար իր աւելի քան տարօրինակ վերաբերմունքի պատճառը:

«Բայց Ռուբէնը խնդրել էր լուր տալ իրեն՝ համաձայն է Նիկոլը իր հետ գնալու թէ ո՛չ: Եթէ Ռուբէնը Թաւրիզ ապաստանած բազմաթիւ մտաւորականներից կանգ էր առել միայն Նիկոլի վրայ՝ նրան այդ փոսից փրկելու մտահոգութեամբ, ապա պարզ էր որ նա գնահատում, թերեւս սիրում էր Նիկոլին: Ինձ համար պարզ էր որ Նիկոլի այդ պատասխանը անարդար վիրաւորանք էր, մի տեսակ բարոյական մի ապտակ:

«Ի՞նչպէս այդ յայտնել Ռուբէնին:

«Եւ երբ մի երկու օր անց՝ գնացի իր մօտ, ոչինչ չէր որոշել: «Բանը բան ցոյց կը տայ», մտածեցի ես: Մօտը այցելուներ կային:

Եկել էին, երեւի, բարի ճանապարհ մաղթելու: Ուշ էր, երբ մնացինք միայնակ: Տրամադրութիւնը լաւ էր:

«— Ի՞նչ ըսաւ Նիկոլը, դալո՞ւ է հետս:

«— Վախենում է որ ճանապարհին միայնակ կարող ես ձգել իրեն...

«Ռուբէնը լայն շնչով ներս քաշեց ծուխը (անընդհատ ծխելու սովորութիւն ունէր), ապա նոյն թափով արտաշնչեց քուլա-քուլա եւ թեք նայեց ինձ.

«— Այդպէս էլ ասա՞ց:

«Գլխի շարժումով պատասխանեցի:

«Ու երկար ժամանակ լուռ մնացինք. նա իր մտքերի հետ էր, ես՝ իմ:

«Ի՞նչ էր մտածում Ռուբէնը այդ ժամին, չիմացայ...» (նոյն, 22 Նոյեմբեր 1961) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Նախկին Դաշնակցական մտաւորական Պոստով Թիւթիւնջեան ալ հետեւեալ կերպով կը ներկայացնէ Ռուբէնի նկարագրի տարբեր բրանդները.—

«Ռուբէն, մեր ճանչցած Դաշնակցական ականաւոր գործիչներու մէջ եզակի ըսուելու աստիճան՝ բնաւորութեամբ եւ խառնուածքով՝ մարդ մըն էր: Բարդ էր իր հոգեկան կառոյցը եւ անքափանցելի:

«Չունէր ո՛չ Ռոստոմի հանդուրժողական վեհանձնութիւնը, ո՛չ ալ բացարժեթ Սրամի, որուն յաջորդը կը յաւակնէր ըլլալ կազմակերպութեան մէջ՝ լրացնելու համար Հ. Հ.ի իսկական հիմնադիրի պատմական առաքելութիւնը:

«Ո՛չ միայն արտաքին աշխարհի, այլ եւ մտերիմ շրջանակներու առջեւ գոց հոգի մըն էր. Ռուբէն: ՄՏՏԻԻՄ ԸՆԿԵՐ ՁԻՐ ՁԱՆՁՆԱՐ: Գաղտնի կը պահէր ամենասերտ գործակիցներէն անգամ՝ իր իսկական մտածումները, թէեւ գիտէր շատ դերբահագորդ ըլլալ՝ ժողովրդական խաւերու համակրանքը վաստկելու համար, որուն մեծապէս կը նպաստէր իր պարզ կենցաղը:

«Ինչքան սակաւախօս էր, ուրիշները խօսեցնելու վարպետ, նոյնքան ալ սակաւ պահանջներով մարդ մըն էր, համեստ արտաքինով եւ ապրելակերպով: Չէր թաքցներ որ մտերիմ ընկեր չունէր՝ Գէորգ Չափուշի եւ Արամի մահէն ետք, ուրիշներուն բանալու համար իր սիրտը եւ վստահելու իր հոգին:

«Թէ ո՞րչափ անկեղծ էր Ռուբէնի այս հաւաստիքը Գէորգ Չա-

վուչի եւ Արամի հետ ունեցած կարծեցեալ մտերմութեան մասին, խիստ թէական է :

«Հանդուցեալ Նիկոլ Աղբալեան, որ մարդ ճանչնալու բացառիկ շնորհքը ունէր, եւ Ռուբէնի մտերիմ գործակիցներէն եղած էր, Բիւրոյի անդամ եւ անոր սենեկակից՝ Երեւանի մէջ, յաճախ կ'ըսէր. «Նա մի անտաշ միտք է եւ խոպան սիրտ», բնորոշելու համար, բացառիկ՝ թէեւ ոչ-յղկուած մտաւոր կարողութիւնը եւ այլասիրական զգացումի պակասը Հայ գործիչի մէջ :

«Մարդասիրութիւնն ու ընկերասիրութիւնը ԽՈՐԹ ԷԻՆ ԻՐԵՆ: Ուրիշներու անձնական հոգիներուն հանդէպ անտարբեր էր, ճիշտ հակապատկերը Արամին: Ու առանց նուազագոյն խղճահարութեան, կրակ նետելու ԸՆԴՈՒՆԱԿ ԷՐ ուրիշները, եթէ նոյնիսկ համոզուած չըլլար կատարուած զոհողութեան բերելիք հանրային ծառայութեան, որուն նախանձախնդիր էր՝ իբր կազմակերպութեան վարիչ» («Նախիրի» Շաբաթաթերթ, 9 Օգոստոս 1964) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

«Քիմախնդիր էր Ռուբէն եւ անհանդուրժող, բայց ունէր համբերելու կամք, մինչեւ որ առիթ ներկայանար մաքրագործելու իրեն մրցակից եւ զինք խանդարող տարրերը» (նոյն, 16 Օգոստոս 1964) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

«Եթէ անկարող գտնուած էր բնաջնջումէ ազատել Տարօնի Հայութիւնը՝ 1915 թուին, Ռուբէն մխիթարանքն ունեցաւ անոր մազապուրծ բեկորներու օգնութեամբ մաքրագործել Հայաստանի Թուրք-Թաթար տարրերը 1919-1920 թուին եւ Արագածը դարձնել Նոր Սասուն մը» (նոյն, անդ) :

«Զկրցաւ յաջողութեամբ վարել Տարօնի գոյամարտը, որու պատասխանատու ղեկավարն էր, եւ իբրեւ մազապուրծ փախստական՝ ապաստան փնտռեց մէկ քանի տասնեակ հետեւորդներու հետ՝ Ռուսական բանակի մէջ, երբ կ'ակնկալուէր որ իբրեւ Տարօնի ազատարար, ողջունէր Ռուսական դրօշակը եւ երկրի Հայութեան օգնութեան փութացող Հայ կամաւորական գունդերը, ինչպէս Արամը ըրած էր նոյն թիւին՝ Վասպուրականի մէջ, դառնալով Ռուսական բանակի կողմէ նշանակուած Վանի Հայ կառավարութեան պետը» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

«Ռուբէն չկրցաւ մակատագրի մարդը դառնալ Հայաստանի բախտորոշ օրերուն: Իրեն պակսեցաւ գերագոյն գոհողութիւնը նաեւ անմահանալու՝ կարսի պատերուն տակ փնտռելով ռազմիկի վախճան, որմէ ԽՈՒՍԱՓԱՄ ԷՐ նաեւ Տարօնի ժողովրդի բնաջնջումի միջոցին [Ա.], ԳԵՐԱԶԱՆՑ ՀԱՄԱՐԵԼՈՎ ապրիլ իբր հասարակ մահ-

կանացու, քան իյնալ հերոսի մահով» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] [Բ.] :

Իր կուսակցական ընկերներու կողմանէ, Ռուբէնի նկարագրի այլազան երանգներու այս ճանաչողական խիստ յաջող վերլուծումները՝ մեր յարգելի ընթերցողներու լուրջ ուշադրութեան յանձնելէն ետք, հարկ կը համարենք հոս ներկայացնել նաեւ Տարօնցի Արմաշական մտաւորական Յակոբ Տէր Զաքարեանի ուշագրաւ պատկերացումն ալ, որով հանդուցեալ յուշագիրը կը նկարէ 1913-ի աշնան Տարօն նոր ժամանած Ռուբէնի նկարագիրը, զոր ինք այնքան խորաթափանց կերպով յաջողած է ճանչնալ ու կարգալ՝ 1914-1915-ի տարեշրջանին իսկ :

«Ինքնահաւան, խորհրդասէր, պիտակ ռազմագէտի եւ իմաստակ դիւանագէտի իր իւրայատուկ ինքնահամոզումով, որոշ չափով կ'ամփոփէ իր կուսակցութիւնը եւ կը ջանայ զայն դնել հասարակաց աչքէն հեռու, թաքուն խորհրդաւորութեան մը մէջ :

«Մշտաժպիտ, քաղցրահայեաց, նա յաջողեցաւ խորհրդաւոր մշուշի մէջէն երբեմն երբեմն երեւան դալ, արտայայտութիւններ ընել, պայմաններ առաջադրել, հերքել, գործել, սպառնալ, պոռոտարանել՝ միշտ յեցած ցոյց տալով ինքզինք ուժեղ կազմաւորուած ու համապարփակ կուսակցութեան մը վրայ» («Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջ 71) :

Նոյնպէս . . .

«Այսպէս է կուսակցութեան որոշումը», «Առանց ընկերներու որոշման՝ չեմ կարող պատասխանել», «զա կուսակցական զաղտնիք է, չեմ կարող ըսել . . .» Դաշնակցութեան նոր ներկայացուցիչ սիրած նախազատութիւններն էին, երբ ինքզինքը անել կացութեան մը մէջ կը զգար» (նոյն, անդ) :

Նմանապէս . . .

«Մշտաժպիտ աչքերով՝ դուրեկան արտայայտութիւն մը, որ ամենէն առաջ աչքի կը զարնէր իր սեղմ ու խիստ հակիրճ խօսելակերպով — տեսակ մը արուեստական սակաւախօսութիւն, որ կը թուէր արդիւնք ըլլալ յղացումի պակասին եւ կամ ներքին իւրայատուկ թաքուն մտադրութիւնները մատնելու մտաւախութեան, քան սովորութիւն եղած հոգեբանութեան մը :

«Ճարպիկ եւ խորամանկ, որ իր ատաղձը կը ստանայ իր լուռ ունկնդրութեամբ՝ ընկերներէն լսած տուեալներէն ու արտայայտու-

թիւններէն, եւ երեւան կու գար զանոնք ու անոնց հետեւողները իրար քով բերելով՝ իրար դէմ հանելէն վերջ, շնորհքը ունենալով բոլորը միասին ծառայեցնելու իր հարուստ եսամոլութեան ու գողունի փառասիրութեան՝ պատուանդան շինելով իր աղքատիկ համայնասիրութիւնը:

«Յանդուզն եւ ընտիր պոռոտաբան, երբ անոնց նիւթը հեռու է, երկչոտ ու փոքրոզի, երբ անոնց առջեւն է արդէն, նման մութէն վախցող երեխաներուն, որոնք երգելով ու աղմկելով տունէն դուրս կ'իյնան՝ իր չվախցողներ, եւ որոնց ձայնը կը սկսի դողալ ու մարմինը փլուզիլ, երբ արդէն հեռացած են մեկնատեղիէն եւ մութի մէջ են:

«Վա՛յ անոր որ կը կծկուի, երբ նա կը ծառանայ. վա՛յ իրեն, երբ ցատումին կը պատասխանուի ծառայումով. այդ պարագային՝ կը գալարուի, խոյս կու տայ, Ժպտիլ կը փորձէ [Գ.], կը ծպտուի՝ զբաղելով դաւադիր ոստայններու հիւսուածքներով՝ անգութ ու անողորմ» (նոյն, էջ 85):

Եւ վերջապէս.

«Ամպերու փեռիկներու նշանաւոր կարկատող մը, որ կ'անտեսէ իր չալվարի ծակոտիկները:

«Փոքրոզի եւ երկչոտ, բայց ընտիր պոռոտաբան, նման մութէն վախցող երեխաներու, որոնք՝ իրենց կրած սոսկումէն, քալած ատեննին՝ կ'երգեն ու կ'աղմկեն: Առիժ՝ երբ մուկերու մէջ է, կա՛մ առանձինն: Կը բաւէ որ իրմէ կախեալ գործ մը չսիրէ կատարել, իսկոյն միջոցներ կը խորհի, ուրիշներ կը տրամադրէ՝ զայն խանգարելու» (նոյն, անդ):

* * *

Ռուբէնի նկարագրի իրական ու հարագատ կերպարը, իր բազմապիսի երեսներով, ներկայացնելէ ետք, մենք աւելորդ կը համարենք այլեւս որեւէ խորհրդածութիւն:

* * *

[Ա.] «Իրեն (Ռուբէնին) պակսեցաւ գերագոյն գոհազուրիւնը նաեւ անմահանալու՝ Կարսի պատերուն տակ փնտռելով ռազմիկի վախճանը, որմէ խուսափած էր նաեւ Տարօնի ժողովրդի բնաջնջումի միջոցին», ղիտել կու տայ Սոսրով Թիւթիւնջեան, այսպիսի յայտարարութեամբ կարծես ընդդիմախօսելով Տարօնի «պատմագիր» Կարօ Սասունիի «պատմագիտական» հեղինակութեամբ արտասանած վճի-

ւին, զոր Սասունցի «պատմագիրը» կ'արձակէր՝ «հերքելու համար» Տարօնցի յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեանի այն ակնարկութիւնը, որ, ո՛վ զարմանք, ի՛նչպիսի հրաշքով մը՝ վրէպած էր «Ասպարէզ» թերթի խմբագրի սուր «գրաքննութենէն», եւ որով՝ Տարօնցի այդ «ծուռ տէրտէրը» խիստ բացայայտ կ'ընէր Ռուբէնի ամենավերջին պարտազանց արարքը՝ Անդոկի լանջերուն վրայ.—

«Եւ այսպէս, Ռուբէն եղաւ առաջին անգամ ժողովուրդը լըքողը եւ իր գլուխը միայն մտածողը...» («Տարօնոյ ինքնապաշտպանութիւնն ու Ջարդը», էջ 83) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Ահա՛ւասիկ, Կարօ Սասունիի «պատմագիտական» հեղինակութեամբ արտասանած սոփեստական վճիռը.—

«Այս դատողութիւնը նոյնպէս ԱՆՀԻՄՆ եւ ԱՆԻՐԱԻ արտայայտութիւն մըն է», եւ կու տայ իր բացատրութիւնը.—

«Իրական կացութիւնը ըմբռնել, մնացած զինական ուժերը ստոյգ կորուստէ ազատելու առաջարկութիւնը, զինուորական պարտադիր կապանքէ ազատ կացուցանելը առողջամիտ զեկավարի մը յատկանիշն է: Տարբեր բան, եթէ մենք, տեսականօրէն պահանջէինք որ Ռուբէն հո՛ն, Անդոկի գազաթին վրայ, նահատակուէր, որպէսզի... քննադատութեան չենթարկուէր:

«Պատմութիւնը այսպիսի անարամաբանական արտայայտութիւններով դատումներ եւ դատապարտութիւններ Զի ԿԻՆԱՐ արձանագրել» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 984) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Եթէ Ռուբէն, իրապէս ու ճշմարտապէս, օժտուած ըլլար «առողջամիտ ղեկավարի յատկանիշներով», եւ եթէ վերոյիշեալ պարբերութեամբ՝ Կարօ Սասունիի արտայայտած գաղափարները իրականութիւն ըլլային, այն ատեն, Ռուբէն, «մնացած զինական ուժերը... զինուորական պարտադիր կապանքէն» ազատ կացուցանելէն ՅԵՏՈՅ, ինք հո՛ն կը մնար, Անդոկ լեռան գազաթը եւ կողերուն վըրայ, այդ սարսափահար եւ խելակորոյս ամբոխին մէջ, անոր դառն ճակատագրին՝ բաժնեկից, անոր աղիողորմ լաց ու կոծին՝ ականջալուր, եւ անոր տխուր վերջաւորութեան ալ՝ բախտակից ու մասնակից, յար եւ նման անփոխարինելի Կորիւնին, պարտաճանաչ Մջոյին եւ իրապէս ժողովրդասէր Կողբեցի Վարդանին, եւ ո՛չ թէ գաղտագողի ու դասալիք փախուստով մը՝ կորսնցնէր իր հետքը...:

* * *

[Բ.] Ռուբէն ի՞նչպէս պիտի կրնար «նակատագրի մարդը» դառնալ՝ Տարօնի Մեծ Եղեռնի օրերուն, կա՛մ Սասունի գոյամարտի

ամենէն ճգնաժամային վայրկեանին, որ ատեն, երբ միւս հայդուկները սիրալոյս տար իրենց կուրծքն էին պատնէջ դարձուցած անազորոյն թշնամիի ուռմբերուն, Ռուբէն իր մոքքի փրկութեան եւ գաղտագողի փախուստի մասին միայն կը ՄՏԱՀՈՒՌՈՒՄ, եւ կա՛մ, Հայաստանի «բախտորոշ օրերուն», որ ատեն, երբ ղէնք բռնելու ատակ ամէն Հայ Թրքական ճակատը կ'աճապարէր եւ կը մարտնչէր Կարսի պարիսպներուն տակ, Ձինուորական Նախարար Ռուբէն Փաշան, Հայաստանի պետական գանձը գրպանած, խոյս կու տար ՀԱԿԱՌԱԿ ՌԻՂՂՈՒԹԵԱՄԲ, ղէպի Ձանգեզուր եւ Պարսկաստան...:

Ռուբէն ի՞նչպէս կրնար «ճակատագիրի մարդը» դառնալ, երբ անոր կեանքի փիլիսոփայութեան ըմբռնումը ղինք կ'առաջնորդէր տրամագծօրէն հակասեայ փայլերու եւ արարքներու:

Ռուբէն թէ՛ իր խօսքով, թէ՛ իր գրիչով եւ թէ՛ մանաւանդ՝ իր ԳՈՐԾՔՈՎ ԱՐԴԷՆ ԻՍԿ յայտնի ըրած էր իր կեանքի փիլիսոփայութիւնը՝ ղինք լորձնաշուրթն փառաբանողներուն, երկու տարբեր առիթներով:—

ա. — Երբ 1927-ի Յունուար ամսուն, Սիմոն Վրացեանի նախագահութեամբ գումարուած Դաշնակցութեան խորհրդակցական ժողովին մէջ, Փարիզի Փլաս տ'Իթալի Քաֆէ «Օ Քլէո տը Լիւն»ի վերնաշարկը, Ռուբէն՝ հանդիսաւոր կերպով եւ անսեթեւեթ՝ յայտարարած է:—

«Աւելի կը նախընտրեմ ԱՆՊԱՏԻԻ ԿԵԱՆՔԸ քան պատուաւոր մահը...» (Շահան Նաթալի, «Ալեքսանդրապոլի Դաշնագիրը», Հատոր Բ., էջ 228) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

բ. — Երբ ան հետեւեալ բարացուցական տողերը կը գրէր իր «Յիշատակներ»ու մէջ:—

«Քաջութիւնը ի՞նչ է, եթէ ո՛չ՝ մարդու բնատուր վախիմ յազքահարումը» («Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Ե., էջ 20) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Քանի որ իր երկարատեւ կեանքի ընթացքին (1882–1951), Ռուբէն ԶԿԱՐՈՂԱՅԱԻ փառաբան յայտնաբերել, հակառակ մէկէ աւելի խիստ հագուազիւտ պատեհութեանց, — օրինակ, Սուլուխի կոնքը՝ 1907-ի Մայիսին, որ ատեն, իր եղբայրասպան դաւադիր գնդակով՝ կռնակէն վերջ դրաւ իր «ՄՏԵՐԻՄ ԸՆԿԵՐՈՋ» («Տեսնել Խորով Թիւթիւնջեանի յօդուածը, «Նայիրի» շաբաթաթերթ, 9 Օգոստոս 1964) կեանքին, կա՛մ Սասունի հերոսական գոյամարտը, 1915 Յուլիս 20–22-ին, որ ատեն, դասալիք փախուստի դիմեց գաղտագողի՝ Անդոկ լեռան վրայ թռչելով դեռ օրհասական պայքար մղող քաջամարտիկ հերոսները եւ սարսափահար ժողովուրդը, եւ կա՛մ, 1920-ի Նոյեմբերին, որ ատեն՝ «իրեն պակսեցաւ գերագոյն գոհողութիւնը՝... Կարսի պատերուն տակ փնտուելու ռազմիկի վախճանը» (նոյն, անդ) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.], ուրեմն, «քնատուր վախի» զգացումը շատ զօրաւոր էր իր մէջ եւ ամբողջովին տիրապետած իր համակ էութեան վրայ, եւ այդ իսկ պատճառով ալ՝ եղած է երկշատ, ՎԱԽԿՈՏ, Անգլիերէն բնորոշիչ բառով՝ Coward:

Հետեւաբար, Ռուբէն ո՛չ միայն հերոս ՉԷՐ, այլ նոյն իսկ՝ ՔԱՋ ԱԼ ՉԷՐ:

Հակառակ այս բացայայտ ճշմարտութեան, Ռուբէն ներկայացուած է իբրեւ փառաբան տիպար, «ԸՆՏՐԵԼԱԳՈՅՆ», բայց մանաւանդ՝ «ԸՆՏՐԵԼԻՆԵՐՈՒ ԸՆՏՐԵԼԱԳՈՅՆ»:

Ուրեմն, պարզ զրարանութիւններ եւ շողքորթութիւններ են Ռուբէնի անունին ու անձին շուրջ՝ այնքան շոյլօրէն հիւսուած բոլոր գովասանքները, փառաբանութիւններն ու պանծացումները, որոնցմէ մէկէ աւելի նմոյշներուն պիտի ծանօթանան մեր ընթերցողները՝ յաջորդ գլուխին մէջ:

* * *

[Գ.] Դաշնակցական յայտնի գրող Մալխաս կը նկարագրէ խիստ յատկանշական զրուադ մը, որուն կ'արժէ որ ծանօթանան մեր յարգելի ընթերցողները՝ իբրեւ խիստ ցայտուն օրինակ այդ «ծառացում»ին եւ «ժպիտ»ին: Հո՛ն մենք կը տեսնենք Ռուբէնի կեղծ բարկութեան եւ ծիծաղի «հալիւր», Մալխասի բարկութեան դէմ-յանդիման:

Մտիկ ընենք իրեն:—

«Ատեն մը եկաւ որ պարագաներու հարկադրանքով, Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն ձեռք առնէ կառավարութեան ղեկը: Ատու մը, Դաշնակցութեան Բիւրօնի կողմէն նամակ մը կը ստանամ: Տարօրինակ նամակ մըն էր: Ատով Բիւրօն կը յայտնէր թէ ի նկատի առնելով Բիւրօնի կառավարութիւն կազմելը, ժամանակաւոր Բիւրօնի անդամ նշանակուած եմ, եւ այդ օրը, ժամը 1-ին, տեղի պիտի ունենայ առաջին ժողովը: Տրուած էին նոր Բիւրօնի անդամներու անունները, որքան կը յիշեմ՝ հետեւեալները:— Լ. Շանթ, Կ. Սասունի, Խ. Բարայեան, Հ. Մանուկեան, Ա. Շալջեան եւ ես:

«Նամակը կարդացի եւ շունչս առի Ռուբէնի մօտ:

«— Տօ՛, այս ի՞նչ նոր օյին է. ի՞նչ ժամանակաւոր Բիւրօ, շա՛ն որդի, որո՞ւ կ'ուզես կլլեցնել...»

«Ռուբէնը, նախ ուզեց որպէս թէ լրջօրէն բացատրել նոր Բիւրօնի անհրաժեշտութիւնը, երբ իրենք ամբողջովին կլանուած պիտի

ըլլային պետական հոգերով եւ անհրաժեշտութիւն մըն էր կուսակցական գործերը վարելու մարմին մը ունենալ:

«— Ինձի նայէ, Ռուբէն,— ըսի անոր.— այդ Քրդական լօլօները ուրիշին հրամցուր. մենք զիրար լաւ կը ճանչնանք. էս մարիֆէթը քու եւ Սիմոնի (Վրացեան) օյինն է: Ես մէջ չկամ: Հասկըցա՞ր:

«— Մալխա՛ս,— բարկացաւ Ռուբէնը,— քեզմէ չենք խնդրեր. եղածը Բիւրոյի որոշումն է. քեզի կը մնայ հպատակիլ. ուրիշ ոչինչ:

«Առաջին անգամն էր որ Ռուբէնը այդ թօնով կը խօսէր հետս: Սաստիկ վիրաւորուեցայ:

«— Տօ՛, ես քու Քրդի փոլիթիքան գիտեմ. կ'ուղես զիս ալ ջամբազի նման խաղցնել չուանիդ վրայ...»

«Ռուբէնի կեղծ բարկութիւնը հալեցաւ, սկսաւ ժպտիլ ու բացատրեց որ ես՝ որպէս հին ընկեր, պէտք է մասնակցիմ այդ կազմին, որպէսզի Դաշնակցական Տաճկահայ սեկցիայի անդամներու տուրք-ռոցները վերջ գտնեն... Երբ երկիրը այնքան ճգնաժամային օրեր կ'անցընէր, Բիւրօ կառավարութիւնը ներքին մտահոգութիւններէ ազատ պէտք է լինի:

«Ա՛լ ինձի ուրիշ բան չէր մնար ընելիք, բացի ենթարկուելէ, թէեւ գիտցած ու չգիտցած հայհոյանքներս, համրիչի հատիկներու նման, իրարու ետեւէ շարեցի Ռուբէնին ալ, Սիմոնին ալ, Բիւրօ կառավարութեան ալ, օխտը պորտը իրար անցուցի, մինչ շատ տղան, դիմացս կանգնած, կը խնդար: Կատաղութենէս ինքզինքս կ'ուտէի» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», է. 52ք 409-411) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* * *

Մալխաս, տալէ յետոյ վերոյիշեալ պատմութիւնը, զոր իբր «Ծառացում»ի, «Ժպիտ»ի եւ այդ ժպիտի «հալեցում»ի բարացուցական օրինակ ներկայացուցինք մեր ընթերցողներուն, կը յիշէ Ռուբէնի մէկ ուրիշ «առաքինութիւնն» եւս.—

«Զարմանալիօրէն ԲԱԶՄԱՇՆՈՐՀ մէկն էր Ռուբէնը. ՀԱՄԵՍՏ էր՝ աննկատելի մնալու աստիճան. սակաւախօս՝ իր անհին մկտմամբ, բայց գերազանց երգիչ մը՝ ՇԵՓՈՐԵԼՈՒ ընկերներու գործերն ու փառքը» (Նոյն, է. 52 416) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Այո՛, անպատճառ պէտք էր որ «Զարմանալիօրէն բազմաշնորհ» անձ մը եղած ըլլար Ռուբէն Փաշան, որպէսզի կարենար Մալխասն

ալ, «Ջամբազի նման» խաղցնել իր չուանի վրայ՝ ճիշտ այնպէս, ինչպէս որ «Ջամբազի նման», իր չուանի վրայ խաղցուց համայն Տարօնի եւ համայն Սասունի անհամար հերոսները, հի՛ն թէ նոր, նահատակուած թէ՛ կենդանի...»

Իր եօթը հատորնոց «Յիշատակներ»ու «լեզենդական հսկանները» «Ջամբազի նման» խաղցուցեր է չուանի վրայ՝ «ԱՆՆԿԱՏԵԼԻ մնալու աստիճան «Խամեստ» այդ «բազմաշնորհ» փաշան, որ, իր անձին նկատմամբ «սակաւախօս» ըլլալով հանդերձ, իբրեւ «գերազանց երգիչ», «ՇԵՓՈՐԵԼ է» իր ընկերներու «գործերն ու փառքը», որպէսզի անոնցմով կարենար հիւսել իր անփառունակ գլուխին վրայ դրուելիք դափնեպսակը...:

Տարօնի եւ Սասնոյ փառապանծ բոլոր հերոսներու եւ համայն նահատակներու հասցէին՝ Ռուբէնի հիւսած եւ շուրջած բոլոր կեղծ ու պատիր փառաբանութեանց եւ գովասանքներու ետին՝ քողածածուկ կը պահուրտի լուխեայն փառաբանութիւնը իր «ԵՍ»ին, իր փքուն, սնամէջ եւ անհունօրէն փառասէր «ԵՍ»ին, որ բնաւ-բերքք յազենալ չգիտցաւ՝ ո՛չ Տարօնի եւ Սասնոյ 200,000 պատուական եւ անմեղ Հայութեան բոսորագոյն արեան զոհաբերութեամբ, եւ ո՛չ ալ՝ տարաբախտ Հայաստանի Հանրապետութեան մարդկային եւ հողային անհամար ու անդարմանելի կորուստներով...:



* * *

Գ Լ ՈՒՄ Ժ Ը .

Ծ Ո Ղ Ո Ք Ո Ր Թ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«Տարօնապատում»ի ներկայ քննական ուսումնասիրութեամբ յայտնաբերուած պատմական անհերքելի իրողութիւններու, անոնց սխալ ներկայացումներու, յերիւրանքներու եւ խեղաթիւրումներու պարզարանութիւններէն, եւ պատմական բացարձակ ճշմարտութիւններու վերականգնումէն ետք, մեր յարգելի ընթերցողները ի վիճակի պիտի ըլլան՝ շատ բացորոշ կերպով եւ յստակօրէն տեսնելու եւ ըմբռնելու հետեւեալ շողոքորթական փառաբանութեանց եւ վարկաբարձի պանծացումներու իրական ու իսկական արժէքը :

* * *

1.— Ռուբէնի «Յիշատակներ»ու Հրատարակիչները կը գրեն .—

* «Մէկ անգամ, Հայոց Աստուածը արդար եղաւ դէպի մեզ . Ան փրկեց ընտրելիներու ընտրելագոյնին՝ Ռուբէնի կեանքը, ինքն ալ մեծ Ֆետայի մը եւ անոնց հրամանատարը, որ հակառակ իր կամքին, ԶՎՐՑԱԻ ԶՈՂՈՒԻԼ ազատութեան մեհեանին : Կրակէն եւ սուրէն հրաշքով ազատեցաւ, որպէսզի կարենար մեզի տալ լեզբնդական հըսկաներու կեանքը, որոնք իրենց մահուան գնով կերտեցին Հայ Վեհադոյն Ազատամարտը՝ յանուն հայրենիքի անկախութեան» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Հատոր Ա., էջ 13) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Ռուբէն, որ եղած է միշտ ալ կեդրոնական եւ ղեկավար դէմքը, ամէն կերպով կ'աշխատի իր անձն ու կատարած դործը պահել մութի մէջ, իսկ հակառակը, մեծ սիրով ու անկեղծութեամբ վեր կը հանէ խոնարհ հերոսներու կատարած դերը» (նոյն, էջ 14) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Այս հրատարակութեամբ, մենք, միեւնոյն ժամանակ, մեր երախտագիտութեան եւ սիրոյ տուրքը կու տանք մեծ հայուն, մեծ հայրենասէրին եւ մեծ յեղափոխականի յիշատակին» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

2.— Ռուբէն Դարբինեանի յօդուածէն .—

* «Լեւոն Շանթ, ըլլալով մեծ գրականագէտ մը եւ մանաւանդ թատերագիր մը . . . բաւականին լաւ ծանօթ էր արդէն Հայ հասարակութեան լայն խաւերուն : Այդպէս չէր, սակայն, Ռուբէն Տէր Մինասեանը, որ համեմատաբար քիչ յայտնի էր հանրութեան :

«Ռուբիշ կերպ չէր կրնար ըլլալ, որովհետեւ Ռուբէնը արհեստով գրականագէտ չէր եղած եւ մինչեւ իր կեանքի վերջին շրջանը շատ քիչ գործ ունեցած՝ գրչի հետ, այլ եղած էր գերազանցապէս գէնֆի մարդ» (նոյն, էջ 15) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

* «Բնական է որ Ռուբէն չուզեց անցնիլ կովկաս, առաւել եւս միանալ հոն սկսուելիք կամաւորական շարժման՝ ի նպաստ Ռուսաստանի : Ան մնաց Տարօնի մէջ եւ ժողովուրդի զինեալ մասին հետ կռուեցաւ թուրքերու դէմ, որոնք ձեռնարկած էին բովանդակ Հայ Եղովուրդի բնաջնջման : Կասկած չկայ որ ան ՊԻՏԻ ՅԱԶՈՂԷՐ ՓԼՐԿԵԼ Տարօնի Հայութիւնը, եթէ ժամանակին իրեն օգնութեան հասնէին Ռուս զօրքերը եւ Հայ կամաւորական խումբերը՝ այնպէս, ինչպէս որ օգնութեան հասան Վանի մէջ» (նոյն, էջ 19) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Դժբախտաբար, Տարօնի ժողովուրդը, թէեւ Վանի Հայութենէն աւելի երկար դիմադրեց թուրքերուն, բայց չկրցաւ ազատիլ բնաջնջումէ, որովհետեւ Ռուս զօրքերը եւ Հայ կամաւորական խումբերը չյաջողեցան ժամանակին օգնութեան հասնիլ անոր ալ : Այդ պատճառով էր որ Ռուբէն, խումբ մը կռուողներով միայն ի վիճակի եղաւ կտրելու թշնամիին շղթան եւ ապաստան գտնել կովկասի մէջ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Պէտք կ'այ խօսելու այն հոգեկան ոգրերգութեան մասին, զոր ան ապրեցաւ, երբ կովկաս ինկաւ իր սակաւաթիւ քաջերով միայն՝ իր սիրեցեալ Տարօնի ժողովուրդի եղբրական մահէն յետոյ :

«Բարեբախտաբար, հոգեկան ծանր տագնապը շատ երկար չըտեւեց : Ռուբէն վերագտաւ ինքզինք եւ նորէն գործի լծուեցաւ» (նոյն, էջ 20) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Գլխաւորապէս անոր ղեկավարած ձեռնարկներուն շնորհիւ էր որ Հայաստանի մէկ կարեւոր մասը մաքրուեցաւ Հայկական անկախութեան անհաշտ թշնամի տարրերէն : Անոր առաջնորդութեամբ էր որ նշուեցաւ Բոլշեիկներու սարքած Մայիսեան ապստամբութիւնը՝ մեր մանուկ հանրապետութեան դէմ : Եւ եթէ Ռուս

բէն ՉԿՐՑԱԻ յաղթական դուրս գալ նաեւ Հայ-Թրքական պատերազմէն, ատոր պատճառը ո՛չ թէ իր զինուորական առաջնորդութեան տկարութիւնն էր, ա՛յլ թէ՛ հարաւէն եւ թէ՛ հիւսիսէն միաժամանակ արշաւող Թուրք եւ Ռուսական միացեալ ուժերու ջախջախիչ գերազանցութիւնը» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Սովետական իշխանութեան էութիւնը ըմբռնելէն յետոյ, Ռուբէն, բնականաբար, Զէր ԿՐՆԱՐ, վերջին պատերազմի ատեն, ԶԸՆԴԻՒՄԱՆԱԼ Սովետական Հայաստանի սահմաններու ընդարձակման ծրագրին, ինչպէս եւ ՆԵՐԳԱՂԹԻՆ, որովհետեւ թէ՛ այդ ծրագիրը եւ թէ՛ ներգաղթը, ի՛ր եւ՛ր ՌՈՒՆԿ ՀԱՄՈԶՈՒՄՈՎ, չէին կրնար որեւէ կերպով նպաստել Հայ Դատին, այլ կրնային ծառայել միայն Սովետական աշխարհակալութեան» (նոյն, էջ 21) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Իր միտքը գիտնականի միտք էր: Անկասկած, մեծ գիտնական մը եւ փիլիսոփայ մը պիտի ըլլար, եթէ Հայ յեղափոխական չղառնար» (նոյն, էջ 23) :

* «Ռուբէնի խառնուածքին մէջ կար նաեւ զօրաւոր արկածախնդրական գիծ մը(?), առանց որուն՝ ան դժուար թէ ընդունակ ըլլար Ռուբէնի Փաշա դառնալ Մուշի մէջ» (նոյն, անդ) [Ընդգծումը եւ հարցական նշանը մերն են, Ա. Տ.] :

* «Երբ մեր յամառ պնդումին վրայ, Ռուբէն վերջապէս սկսաւ զրկել իր յուշերը՝ «Հ» ամսագրի մէջ տպուելու համար, պէտք կ'ըլլար ամէն անգամ մղել գայն փաջալերական նամակներով որ փութացնէ շարունակութիւնը: Ոչ թէ կը ծուլանար գրել, այլ կը վախնար որ իր գրածը հետաքրքրական չէ, ձանձրալի է, եւ աւելի լաւ է որ դադրեցնէ իր յուշերու հրատարակութիւնը: Շարունակ ԿԱՍԿԱՄՆԵՐ ԿԸ ՅԱՅՏՆԵՐ անոնց արժէքի մասին» (նոյն, էջ 26) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Ուրիշ մէկ նամակի մէջ, գրուած նոյն տարուան ընթացքին (1923), Ռուբէն, բաւականին քաջալերուած իր ստացած գնահատական նամակներէն, կը գրէր... «Երեւում է որ բաւական լաւ ես սարքում նամքած գրութիւններս... ինձ շնորհակալութիւն կը յայտնեն՝ չգիտնալով որ սարքողը դու ես: Ինչ էլ որ լինի, եթէ այդ հին կապիտալի վեր հանելը կարող է բարոյական հիմք հայթայթել մեր շարքերի համար, ես բաւարարուած եմ» (նոյն, էջ 26-27) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Գալով մասնաւորապէս Ռուբէնի յիշատակներուն, կարե-

լի է համարձակօրէն ըսել թէ մեր յուշագիրներէն եւ ո՛չ ոք կրցաւ անոր չափ հարագատ, կեցնամի եւ ամբողջական կերպով ներկայացնել մեր վերջին 60-ամեակի յեղափոխական սերունդը, անոր հոգեբանութիւնը, նկարագիրը, ոգորումները, անոր գաղափարաբանութիւնը, անձնութիւնը, անոր մոլեռանդութիւնը, խստակեցութիւնը, անոր հերոսական խոյանքները, անոր ամբողջ աչքառու դէմքերն ու դէպքերը» (նոյն, էջ 28) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* «Մեր մտաւորականներէն եւ ո՛չ մէկը Ռուբէնի նման կըրցած է խորօրէն թափանցել մեր վերջին 60-ամեակի դիւցազնական սերունդի հոգիին եւ անոր չափ հարազատօրէն ներկայացնել զայն հանրութեան» (նոյն, էջ 29) :

* * *

3.— Ռուբէնի զաւակ Վրոյր Տէր Մինասեան կը գրէ որդեկան խանդաղատանքով լեցուն հետեւեալ տողերը.—

* «Ժընեւէն վերջ՝ ընդհատուած է յուշերու թելը: Սասունցի խմբապետ Մուշեղն է որ պիտի պատմէ 1913-1919 տարիներու փութորիկը, Մուշեղը՝ ձօրս գէնքի եղբայրը՝ ցաւի, տառապանքի եւ յոյսերու օրերին:

«Մուշեղ ջա՛ն, լաւ է որ մնացել ես՝ ըսելու թէ ի՞նչ տեսաք դուք, ձեր պաղ աչքերով: Ո՞վ պիտի պատմէր, ո՞վ պիտի յիշէր, եթէ դու լռէիր» (նոյն, Հատոր Է., էջ 4, «Փոխան Յառաջարանի») [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* Այդ միեւնոյն «Փոխան Յառաջարանի» վերջաւորութեան, Վրոյր Տէր Մինասեան կ'ընէ հետեւեալ սրտագին կոչը՝ խիստ տպաւորիչ յուզականութեամբ մը.—

«Այս հատորով վերջանում են «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները»: Հօրս սիրոյն, թո՛ղ անոնք որ կրնան, ԼՐԱՑՆԵՆ ՊԱԿԱՍՆԵՐԸ, ՇՏԿԵՆ ՍԵԱԼՆԵՐԸ, ՊԱՏՄԵՆ ԻՆՁ ՈՐ ԳԻՏԵՆ: Միւսները թո՛ղ յիշեն յիշատակը մէկու մը որ ՈՒԶՅՑ ԿՐԵԼ ԻՐ ԱԶԳԻ ԱՄԲՈՂՋ ՅԱԻԸ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* * *

4.— Ռուբէնի «Յիշատակներ»ու հրատարակիչները գրած են «Խմբապետ Մուշեղի (Սասունցի) Աւետիսեանի Յուշեր»ու «Յառա-

ջարանի Փոխարէն»ը, ուր անոնք կ'ընեն հետեւեալ յատկանշական խորհրդածութիւնները.—

«Ռուբէնի անժամանակ մահը՝ ամբողջ ծրագիրը խանդարեց. ո՞վ պիտի գրէր Տարօնի Աշխարհի այդ հեքիաթային կոխներու մասին, երբ բոլոր մասնակցողները գրեթէ հեռացած են այս աշխարհէն: Ապագայ պատմաբաններու համար ԱՆՀԱՍԿՆԱԼԻ ՊԻՏԻ ԹՈՒԷԼԻ [Ա.] որ Վանը, Շարին Գարահիսարը, Ուրֆան եւ Սուէտեան ունեցեր են իրենց հերոսամարտերը, իսկ Տարօնը՝ ՈԶ... Տարօնը իսկապէս 1915-ի Մեծ Եղեռնին, ունեցաւ իրեն արժանի հերոսամարտ մը, որու առջեւ կը նսեմանան բոլոր միւսները:

«Ռուբէնի յուշերուն մէջ՝ իր մահուամբ ստեղծուած ԱՅԴ ԲԱՅՐ [Բ.] կերպով մը (խիստ յատկանշական է այս «կերպով մը» բացատրութիւնը, Ծնթ. Ա. Տ.) լեցնելու համար, հրատարակիչները միտքն յղացան դիմելու Ֆեդայի Սասունցի Մուշեղ Աւետիսեանին... գրելու այդ ժամանակաշրջանի իր յուշերը» (նոյն, էջ 49) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Եւ Սասունցի Մուշեղ գրի առնել տուած է «Մահուան Մարտ»ը (նոյն, էջ 51), ուր պատմական ճշմարտութիւնը եւ դրուազներու առարկայական ներկայացումը դադար կ'առնեն, ու Սասունցի խմբապետի երեւակայութիւնն է միայն որ կը ստեղծագործէ «հերոսական դրուազներ» եւ կեղծ հերոսի ոսկեճամուկ փետուրներով կը պճնադարդէ իր վախկոտ ու անարի կուռքը, Ռուբէն «Փաշան»...:

* * *

5.— «Յուսարբեր»ի «Հայ Յեղափոխականը» խմբագրականէն.

* «Բայց անուն մը չէր ասիկա. պատմութիւն մըն էր. շատերուն համար նոյնիսկ՝ դիւցազներգութիւն մը, գրեթէ առասպել մը:

«Այս «առասպելը» բարեկեցիկ ընտանիքի զաւակ էր, ծնած մեզմէ եօթանասուն տարի առաջ, 1882-ին: Ուսած էր Գէորգեան ձեմարանը, ապա՝ Ժընեւ: Կրնար պատկառելի պրոֆեսոր մը ըլլալ, կա՛մ դիտուն մը, հաւանաբար՝ պատմաբան մը:

«Ի՞նչպէս է եղեր որ տիտղոսաւոր ակադեմական մը ըլլալու սահմանուած այս Հայը պարզապէս լեռ բարձրացեր է, գրեթէ պատանի՝ կոռելու եւ, ի ՀԱՐԿԻՆ մեռնելու համար՝ «վասն հայրենեաց» (նոյն, էջ 358) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* «Սակայն, Մաիք չմտեցաւ իրեն (ինչո՞ւ չէք ըսեր որ իմք

ԽՈՅՍ ՏՈՒԱԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌՋԵԻԷՆ, Ծնթ. Ա. Տ.), որովհետեւ կեանքը դեր մը վերապահած էր այս բազմաշնորհ մարդուն, որ ձախտագրի թեւերուն վրայէն քայլեց, կեանքի համար կռուելով, բայց ՄԱՀՈՒԱՆ ԱՌՋԵԻԷՆ ԶՓԱԽԶԵԼՈՎ ԵՐԲԵՔ» (նոյն, էջ 360) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* «Սակաւախօս էր: Աւելի կը լսէր, քան կը խօսէր: «Քիչ մտածող մարդը շատ կը խօսի, շատ խօսող մարդը քիչ կը մտածէ», կ'ըսէ Հայկական առած մը: Այս առածը ճշտիւ կը պատշաճէր Ռուբէնի բնաւորութեան ու նկարագրին: Չէր խօսեր, կը մտածէր: Չէր մտածեր, կ'ապրէր:

«Ինքնագով չէր, ինչ որ փոքր առաքինութիւն մը չէ, մանաւանդ մեր օրերուն: Կը խօսէր ամէն բանի եւ ամէն մարդու մասին, բայց ԵՐԲԵՔ՝ իր անմիջ ու գործերուն մասին» (նոյն, էջ 361) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* * *

6.— Մայիսի ընդարձակ յօդուածէն.—

* «Դեռ վաղաժամ է, իր ամբողջութեան մէջ, իր բազմազան արժէքներով (արժանիք ըսել կ'ուզէ, Ծնթ. Ա. Տ.) ներկայացնել Ռուբէնը: Այդ աշխատանքը դալիք օրերուն կը պատկանի, երբ անաչառ պատմաբանը պիտի կրնայ անոր տեղը դնել, անոր արժէքը ճշտորոշել՝ որպէս Հայ մարդ, որպէս յեղափոխական, որպէս դործիչ, որպէս ղեկավար, որպէս պետական դէմք, որպէս քաղաքական տեսանող, որպէս Հայաստանը դարձնող վարպետ, որպէս խորթափանց մտածող, որպէս յուշագրող, որպէս դիւցազներգակ, որպէս Հայաստան Աշխարհը խորքով ուսումնասիրող, որպէս Հայ ժողովուրդի սիրտն ու հոգին Աւետարանի պարզութեամբ կարդացող» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», է. չէջ 414-415) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.]:

* «Հազիւ թէ չորս հինգ հոգի կը մնան նոյն սերունդի ընկերներէն, որոնք մօտէն կը ճանչնան Ռուբէնը: Անոնք պարտական են Հայ պատմութեան. անոնք պիտի է տան իրենց գիտցածը, իրենց յուշերը, որպէսզի հնարաւոր լինի ամբողջացնել Ռուբէնի դէմքը, որ՝ վերջին կէս դարու շրջանին, Հայ ժողովուրդի ամենամեծ դէմքերէն մէկը եղաւ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* «Դաշնակցութեան պատմութեան մէջ, ո՛չ ոք այնքան երիտասարդ տարիքին՝ այնքան բարձրերը չէր սաւառնած, ո՛չ ոք 27 տարեկանին՝ Բիւրոյի անդամ չէր եղած, ինչպէս Ռուբէնը, որ ԵՐԲԵՔ ԶԱՍԶԵՍ անունի, փառքի, դիրքի ետեւէն. մարդկային հասկնալի ՏԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԱԶԱՏ, ան ո՛չ թէ անտեսեց, ա՛յլ նոյնիսկ անոնց քովէն անցաւ՝ առանց տեսնելու զանոնք: Բնաւորութեամբ քաշուող, ծայր աստիճան ՀԱՄԵՍՏ, ջանաց միշտ ՍՏՈՒԵՐԻ ՄԷՋ ՄՆԱԼ, իր անձնականը չէզոքացնել, եսը մեռցնել՝ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՓԱՌՔԸ ԵՐԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* «Քանի կը մնան Հայ ժողովուրդն ու Հայաստանը, Ռուբէնը կ'ապրի եւ ո՛չ մէկ ըէժիմ կարող է այդ կոթոնակալան բարձունքէն վար բերել անոր մեծագործութեան յիշատակը» (նոյն, էջ 416) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

* «Ինքնատիպ էր ո՛չ միայն իր մտածողութեամբ, այլեւ իր գործերով: Բանուկ ճամբաներէ չէր քալեր, իր ուղին միշտ վերելք մը ունէր. անկոխ կածաններէ կը բարձրանար իր միտքը. իր տեսողութիւնը խորք ունէր. մակերեսը մէկդի թողած, երկրի ընդերքներուն մէջ կը թափառէր: Ան, բառին լայն իմաստով, իսկական մարդ մըն էր, այնքան հազուադէպ՝ մեր իրականութեան մէջ, եւ որ աւելին է, Ռուբէնը ամբողջ էութեամբ ՀԱՅ էր» (նոյն, անդ):

* * *

7.— Տիկին Աննա Տէր Մինասեան, Ռուբէնի այրին, իր խօսքը ուղղելով «Հայրենակիցներու եւ Հայ երիտասարդութեան», Հետեւեալ խորհուրդը կը թելադրէ անոնց.—

«Եթէ կ'ուզէք ՅԱՐԳԵԼ Ռուբէնի յիշատակը ու ԾԱՌԱՅԵԼ Հայ ազգին, ջանացէ՛ք թափանցել անոր մտքի աշխարհէն ներս: Ան երեւնալ, խօսիլ չէր սիրեր ու իր մտքի աշխարհը խտացած է իր գրուածքներուն մէջ: Խորհրդածեցէ՛ք այդ էջերուն վրայ» (նոյն, էջ 422-423) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

Մենք ալ, իբրեւ «Հայրենակից», բայց մանաւանդ՝ իբրեւ Տարօնցի «Հայրենակից», մեր պաշտեցեալ ծննդավայր Տարօնի փառապանծ անունին, պատմութեան եւ մասնաւորապէս՝ պատիւին յոյժ նախանձախնդիր, տարիներով ըրած ենք ճիշտ ու ճիշտ նոյն բանը, ինչ որ կը թելադրէ Ռուբէնի վշտահար այրին, այսինքն, Ռուբէնի «Յիշատակները» հրատարակուելէն առաջ եւ յետոյ ալ, ուսումնա-

սիրած ենք մեր տարաբախտ ծննդավայրի սրտածմլիկ պատմութիւնը՝ ամենայնոք մանրամասնութիւններով, մասնաւորապէս 1914-1915 թուի Մեծ Եղեռնի ողբերգութիւնը, եւ «խորհրդածեք» Ռուբէնի «Յիշատակներու իւրաքանչիւր էջին վրայ, սակայն, դժբախտաբար, չկարողացանք հաշտուիլ այրի տիկնոջ թելադրած այն գաղափարին հետ թէ որեւէ Հայ կրնայ «ԾԱՌԱՅԵԼ իր ազգին» եւ միանգամայն «ՅԱՐԳԵԼ Ռուբէնի յիշատակը», երբ ան կը ծանօթանայ Ռուբէնի գործունէութեան ներքին ծալքերուն, եւ մասնաւորապէս՝ Հետեւեալ երեք խիստ բարացուցական պարբերութիւններով յայտնաբերուած գաղափարներուն:

ԱՌԱՋԻՆՆ Է Ռուբէն Դարբինեանի հայրեմադրութիւնը եւ Հայավնաս, բայց ՅՈՅԺ ՊԵՐՃԱՆՕՍ այս պարբերութիւնը.—

«Սովետական իշխանութեան էութիւնը ըմբռնելէն յետոյ, Ռուբէն, բնականաբար, չէր կրնար, վերջին պատերազմի ատեն, ԶԸՆԴԴԻՄԱՆԱԼ Սովետական Հայաստանի ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ, ինչպէս եւ ՆԵՐԳԱՂԹԻՆ, որովհետեւ թէ՛ այդ ծրագիրը եւ թէ՛ ներգաղթը, ի՞նչ կ'ուզէր համոզումով, ԶԷԻՆ ԿՐՆԱՐ որեւէ կերպով ՆՊԱՍՏԵԼ Հայ Դատին, այլ կրնային ծառայել միայն Սովետական աշխարհակալութեան» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Ա., էջ 21) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ԵՐԿՐՈՐԴԻՆ Է Այրի Տիկին Աննա Տէր Մինասեանի այն հանդիսաւոր յայտարարութիւնը, զոր, իր հանդուցեալ ամուսնոյն յիշատակը ոգեկոչելու առթիւ, ըրած է յօդուածի մը մէջ:

Ահա՛ւասիկ այդ ոգեկոչումը՝ բառ առ բառ.—

«Կը յիշե՞ս, Ռուբէն, Քեսարի մէջ երբ ներգաղթը տեղի կ'ուներ, գիւղացիները երգելով կը մեկնէին, դու ԶՈՒՋԵՑԻՐ ԼՍԵԼ այդ երգերը, օր-ցերեկով ԲԱՆՏԱՐԿՈՒԵՑԱՐ տունիդ մէջ, որովհետեւ ԳԻՏԷԻՐ Թէ այդ ուրախ երգերը ՏԵՐՈՒԹԵԱՆ պիտի փոխուէին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ» («Ասպարէզ» [Ճրէզնօ, Կալիֆորնիա], 17 Փետրուար 1953) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ԻՍԿ ԵՐԿՐՈՐԴԻՆ ԱԼ՝ նոյնիսկ որեւէ հասարակ անհատի անունին եւ արժանապատուութեան խիստ անվայել այն յայտարարութիւնն է, զոր Ռուբէն ըրած է 1927 թուի Յունուար 27-ին, Դաշնակցական ժողովի մը մէջ՝ գումարուած Փարիզի Փլաս ատիթալի Բաֆէ «Օ Քլէտտը Լիւն» ճաշարանի վերնայարկը, նախագահութեամբ Սիմոն Վրացեանի:

Այդ ժողովի մէջ, «սակաւախօս» Ռուբէն, մէկ ժամ տեւող իր ճառը կը վերջացնէ Հետեւեալ վարկարեկիչ եւ նուաստացուցիչ բառերով.—

«Աւելի կը նախընտրեմ ԱՆՊԱՏԻԻ ԿԵԱՆՔԸ քան պատուաւոր մահը...» (Շահան, «Ալեքսանդրապոլի Դաշնագիրը», Հատոր Երկրորդ, էջ 228) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Մեր դաղափարով եւ ըմբռնումով, յարգելի Այրի Տիկին Աննա Տէր Մինասեանի վերոյիշեալ երկու թելադրութիւնները («ՅԱՐԳԵԼ Ռուբէնի յիշատակը» եւ «ԾԱՌԱՅԵԼ Հայ Ազգին») իրարու տրամագծօրէն ՀԱԿԸՆՊԻՄ եւ ԻՐԵՐԱՄԱՐՏ գաղափարներ են եւ բուն կերպով՝ ԶԻՐԱՐ ՀԱԿԱՍՈՂ... :

Կա՛մ մէկը, կա՛մ միւսը : Միջին ճամբայ գոյութիւն չունի :

* * *

[Ա.] Ապագայ պատմարաններու համար քնաւ երբեք «ԱՆ-ՀԱՍԿՆԱԼԻ» պիտի չքուէր որ Վան, Շապին Գարահիսար, Ուրֆա եւ Սուէտիա ունեցեր են իրենց հերոսամարտերը, իսկ Տարօն՝ ՈԶ, քանի որ պատմարանները շատ հաւաստիօրէն ՊԻՏԻ ԳԻՏՆԱՅԻՆ թէ Ռուբէնի «անժամանակ մահը» ԶԻՐ բուն պատմաբան, որ «խանգարեց»? անոր ամբողջ ծրագիրը, այլ ատկէ շատ աւելի ԼՈՒՐԶ եւ շատ աւելի ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ կային այդ «բաց»ին համար :

Նախ՝ Ռուբէնի վախկնտ եւ անարի նկարագիրը, յետոյ՝ «անպատիւ կեանք» ապրելու նախընտրութիւնը, որոնք իրեն թոյլատրեցին որ անվարան կերպով դիմէր գաղտագողի եւ դասալիք փախուստի եւ անյայտացումի՝ Անդոկ լեռան կատաղի կռիւններու ամենատազնապալի մէկ ըոպէին, եւ զորս՝ բնականաբար պիտի չուզէր յայտնաբերել, իր իսկ գրիչով...

* * *

[Բ.] Եթէ Ռուբէն հարիւր տարի ալ ապրէր, այդ «բացը» նորէն ԲԱՅ ՊԻՏԻ ՄՆԱՐ, ինչ որ Ռուբէնը լորձնաշուրթն փառաբանող Մալխասի համոզումն ալ էր, երբ կը գրէ. — «Պարզ էր որ Ռուբէնը դժուարութեամբ կը խօսէր, կարծես անցեալի պատկերները կը խրոնուէին ուղեղին մէջ... Այդ դէպքէն վերջ, ես համոզուած էի որ Ռուբէնը պիտի չկրնայ գրել Սասունի վերջին օրերու պատմութիւնը» (Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», է., էջ 405, Մալխասի «Յուշերը» յղուածէն) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

Իսկ եթէ, հակառակ պարագային, Ռուբէն տրամադիր ըլլար լեցնելու «այդ բացը», ամենամեծ վստահութեամբ կրնանք յայտարարել որ ինքն ալ պիտի յօրինէր նոյն կամ նոյնանման առասպելներ կամ առասպելապատում պատմութիւններ, զորս՝ այնքան մեծ յաջողութեամբ ՅԵՐԻԻՐԵՅ «պատմիչ» Սասունցի Մուշեղը, — «Ռուբէնի յուշերուն մէջ, իր մահուամբ ստեղծուած այդ բացը ԿԵՐՊՈՎ ՄԸ (խիստ յատկանշական է այս «կերպով մը» բացատրութիւնը՝ այստեղ) լեցնելու համար; — իրեն հաւատարիմ հետեւորդ ունենալով նաեւ միւս Սասունցի «պատմագիրը», Կարօ Սասունի կոչեցեալ :



ԳԼՈՒԽ ԺԹ.

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻԻ
ՍՈՓԵՍՏԱԿԱՆ ՃԱՄԱՐՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եթէ Կարօ Սասունի զօրը տար իր երեւակայութեան, եւ գոյութիւն ունեցող ու չունեցող ամէն տեսակ «առաքինութիւններ» վերադրէր իր կուռքին (Ռուբէնին), ինչպէս որ ըրած են միւս շոգոքորթները, որոնց «փառաբանութիւններէն» մէկէ աւելի նմոյշներ մենք ներկայացուցինք նախորդ վլուխին մէջ, այն ատեն՝ զինք եւս պիտի դասէինք անոնց կարգը եւ միականջեայ ունկնդրութեամբ ալ գոհանայինք. սակայն, Կարօ Սասունիի «պատմագիտօրէն» հիւսած սոփեստական ճամարտակութիւնները ո՛չ միայն կը գլեն-կ'անցնին ողջախոհ տրամաբանութեան բանաւոր սահմանները, այլ նաեւ բացայտօրէն եւ բացարձակօրէն կը խեղաթիւրեն պատմական անհրաժեշտ ճշմարտութիւնները, որոնցմէ բազմաթիւ եւ բազմազան նմոյշներ ներկայացուցինք մեր այս Քննական Ուսումնասիրութեանց ընթացքին:

Հիմա պիտի ջանանք համառօտ կերպով ներկայացնել Սասունցի ճամարտակախօսի «պատմագիտական» սոփեստութիւնները, որոնցմէ ոմանք բացորոշ կերպով ինքնայայտ արտայայտութիւններ են եւ դիւրամատչելի ընթերցողին, իսկ ոմանք ալ, — մասնաւորապէս Տարօնի մասին ըսուածները, — կը կարօտին լուսաբանութեան եւ մեկնաբանութեան:

Մենք սիրայօժար կերպով կը կատարենք այդ նուիրական պարտականութիւնը՝ տալով հարկ եղած լրացուցիչ բացատրութիւններ, եւ անհրաժեշտ պարագային ալ՝ մատնանշելով աղբիւրները:

* * *

1.— «Վտանգի դիմաց, Հայութիւնը որդեգրեց խոհեմութեան եւ հնազանդութեան քաղաքականութիւնը...: Թրքահայոց Պատրիարքարանը եւ անոր կապուած Առաջնորդարանները, Կաթողիկ եւ Բողոքական Համայնքները, Հայ Հարուստ եւ պահպանողական դասակարգը, Հայ մտաւորականներու խոհեմ տարրերը միաբերան կը կրկնէին:

«— Ի սէր Աստուծոյ, խոհեմ շարժիմք:

«Ու այդ խօսքը ուղղուած կ'ըլլար յեղափոխական պատասխանատու մարմիններուն եւ ղեկավարներուն՝ ազդարարութեան մը պէս, որպէսզի որեւէ ըմբոստական քայլ չառնուի: Ընդհանուր համոզում գոյացած էր այն մասին թէ Թուրքը պատրուակ կը փնտռէ՝ Հայ Ժողովուրդը հարուածելու, եւ թէ յեղափոխականները պէտք է զգուշանային որեւէ քայլ առնելէ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջք 711-712) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Եթէ իրենց կ'ազդարարուէր «ըմբոստական որեւէ քայլ» չառնել՝ Թուրքիոյ սահմաններուն մէջ, պէտք չէ՞ր որ նոյն զգուշաւորութիւնը ի գործ դնէին նաեւ սահմանի միւս կողմն ալ, ուր իրենց աւագ ընկեր, Թրքական խորհրդարանի նախկին անդամ Արմէն Գարօն «զէնք կը վերցնէր... եւ իբրեւ կամաւորական խումբի հրամանատար՝ կը կոուէր Թուրք բանակին դէմ» (Ռուբէն Դարբինեան, «Կեանքիս Գրքէն», «Հ» ամսագիր, Յունուար, 1962):

Ասիկա, հաւանաբար, «զգուշաւոր քայլ» եւ «բարձր քաղաքականութիւն» էր, որուն միայն իրենց խելքը կը հասնէր...:

* * *

2.— «Ի մեծ պատիւ Հայ մտաւորականներուն եւ յեղափոխական ղեկավարներուն, պէտք է յայտնենք թէ անոնք գիտէին իրենց կորուստը, եւ ազնուական հերոսութեամբ մը կը մնային իրենց պատասխանատու դիրքերուն վրայ՝ առանց դասալքութեան եւ գիտակցօրէն կ'երթային դէպի Գոզգոթան» (նոյն, էջ 713) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Շատ անհիմն ու տղայական հաւատում մըն է աս: Ո՛չ ոք գիտէր իր կորուստը՝ Ապրիլ 24-ի անակնկալ եւ համատարած ձերբակալութիւններէն ԱՌԱՋ: Եթէ «յեղափոխական ղեկավարները գիտէին իրենց կորուստը», հապա ինչո՞ւ համար էր Ակնունիի այն միամիտ իրարանցումը, զոր այդ տարաբախտ ազգայինը ցոյց կու տար ձերբակալութեանց զիշերը, բանտին մէջ, ուր ան, մեծ զարմանքով, կ'ուզէր իմանալ իր ձերբակալութեան պատճառը, եւ շատ կը ստիպէր որ իրեն թոյլ տրուէր հեռախօսելու «Ընկեր Թալէաթին» եւ անոր բացատրելու այդ «թիւրիմացութիւնը»: Ա՞յս է փաստը, արդեօք, «գիտակից կորուստին»:

* * *

3.— «Տարօրինակ հակապատկերով մը, այն դաւառներն ու քաղաքները, որոնք բնաւ մասնակից եղած չէին յեղափոխական շար-

ժողովին, Սահմանադրութեան ընթացքին կը զինուէին եւ ազատ պայմաններու մէջ գէնք ունենալու փափաքը յազեցնել կ'ուզէին, մինչդեռ Տարօնի գաւառները գէնքը վար դրին եւ պահ մը կ'ուզէին հանդրատանալ գէնքի շաշումէն» (նոյն, էջ 714) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ .— Տարօնի մէջ՝ ձեր քարոզութեան պատճառով էր որ ստեղծուած էին այդ մտայնութիւնն ու հողեվիճակը : Ձեր շէֆերն էին որ կը քարոզէին թէ «սուրի դարն անցաւ . աշխատեցէք կրթութիւն տալ ժողովուրդին» («Հարազատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 263), թէ «Այլեւս Սահմանադրութիւն է, հաւասարութիւն է . այլեւս գէնքի ուժով չէ որ մենք ձեռք պիտի բերենք մեր ինքնօրէնութիւնը, ա՛յլ ժողովրդական բոլոր խաւերուն մէջ, նոյն իսկ Քուրդերու մէջ, ուսում տարածելով է որ մենք կը հասնինք մեր բուն նպատակին» (նոյն, էջ 294) :

Եւ կամ, Հայ Գիրերու Գիւտի 1,500-ամեակի յորհելանին առթիւ, 1913-ի ամբան, Ս. Կարապետ Վանքին մէջ սարքուած տօնահանդէսին, ի ներկայութեան Ռոստոմին եւ ծովածաւալ բազմութեան, այսպէս կը խօսէր Ա. Վոսմեան .

«Հասած է այլեւս ժամանակը, ժողովուրդ, որ մէկդի դնես ամէն ինչ եւ ամբողջովին նուիրուիս գրիչին, միակ ապաւէնիդ, փրկիչիդ . . .», որուն ի պատասխան, Դոկտ. Խ. Բոնափարթ՝ գովասանքը կը հիւսէր սուրին, պնդելով որ «դեռ գրիչի ժամը չէ՛ հնչեր, ժողովուրդի գլխին փոքորիկներ կան պայթելիք» («Յակոր Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը», էջ 80) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

* * *

4.— «Ականատեսներու վկայութիւններուն մէջ ուշագրաւ տեղ մը ունի Յակոր Տէր Զաքարեանի յուշերու փաստական երեւոյթներու նկարագրութիւնը : Յիշեալ յուշագիրի ենթակայական դատադուրբիւնները եւ ոչ-պատմական քննադատութիւնները ԱՆՏԵՍԵԼՈՎ, անոր նկարագրած իրական դրուագները կը ներկայացնենք հոս» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 727) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ .— Ինչո՞ւ համար եւ ի՞նչ իրաւունքով, «պատմագիր» Կարօ Սասունի կ'անտեսէ Արմաշական յուշագիրի «ոչ-պատմական քննադատութիւնները» եւ «ենթակայական դատադու-

թիւնները, եւ միայն կ'օգտուի հեղինակի «փաստական երեւոյթներու նկարագրութենէն» . անո՞ր համար, արդեօք, որ Տարօնցի լատեղեակ յուշագիրը, իր «ոչ-պատմական քննադատութիւններով» եւ «ենթակայական դատադուրբիւններով» ԿԸ ՄԵՐԿԱՑՆԷ «պարօն»ներու դործած անբաւելի սխալներն ու յանցանքները՝ Տարօնի Մեծ Եղեռնի օրերուն :

Ինչո՞ւ համար Սասունցի «պատմագիրը» կ'անտեսէ ականատես յուշագիրի «ենթակայական դատադուրբիւններն» ու «ոչ-պատմական քննադատութիւնները», իսկ իր հաստատիր «պատմագիրը» ծայրէ ի ծայր լեցուցեր է «ենթակայական» կանխակալ, սխալ, անհիմն ու յերիւրածոյ «դատադուրբիւններով», «ոչ-պատմական» եւ յոյժ «ենթակայական» խորհրդածութիւններով եւ բռնագրօսիկ մեկնաբանութիւններով, աւելի շատ՝ կուսակցական քարոզութեան համար, եւ այդ նպատակով ալ, հասարակ-տեղիք դարձած՝ հատուածական ՆԵՂՄԻՏ քարոզութիւններով՝ իր միամիտ ընթերցողները մոլորեցնել ջանալու բացայայտ նպատակով . . . :

* * *

5.— «Ազգային եւ յեղափոխական այս երկու կազմակերպութիւններն էին (այսինքն, Տարօնի Ազգային Առաջնորդարանը եւ Յեղափոխութիւնը, ՄԵՐ Ա. Տ.) վարիչ եւ պատասխանատու ուժերը, որոնց կը լսէր ու կը հաւատար Տարօնի ժողովուրդը՝ միշտ ազգային կեդրոնաձիղ ըմբռնումով : Տարօնցին, տասնեակ տարիներու ընթացքին, վարժուած էր այս երկու հաստատութեանց ղեկավարութեան, ղեկավարութիւն մը, որ միակամ էր ընդհանրապէս» (նոյն, էջ 754) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ .— Բացարձակապէս անհիմն յերիւրանք է այս յայտարարութիւնը՝ չարանենդ դիտաւորութեամբ մը այսպէս արտայայտուած «պատմագիր»ի խորհաւանող գրիչով, որպէսզի իր պատկանած կուսակցութեան դործած ահռելի սխալներու պատասխանատուութեան բաժնեկից դարձնէ այդ ազգային հաստատութիւնն ալ :

Այս մասին դեռ պատահութիւն պիտի ունենանք արտայայտուելու :

* * *

6.— «Տարօնի ժողովուրդի ազգային եւ քաղաքական գործունէութիւնը համազգային բնոյթ ունէր : ԱԶԳԻՆ ԿԱՄՔԸ ՊԱՐՏԱԿԻՐ

ԷՐ ԲՈՂՈՐԻՆ: Իսկ ազգն ու յեղափոխական կազմակերպութիւնը միաձուլուած էին իրարու: Ազգ ըսելով՝ Յեղափոխութիւն եւ Յեղափոխութիւն ըսելով՝ ազգը կը հասկնային» (նոյն, անդ) [Բոլոր ընդդժոճումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Ո՛չ մէկ ատեն, Յեղափոխութիւնը չենթարկուեցաւ «Ազգի կամքին»: Հակառակ Առաջնորդ Սարախանեան Սրբազանի յորդորներուն եւ խնդրանքներուն, Յեղափոխութիւնը, այսինքն, Ռուբէն, ինքնազլուխ դիրք բռնեց եւ կամակոր յամառութեամբ մը՝ պարտադրեց իր կամքը եւ իր սխալ որոշումները — անզէն ու անպաշտպան ձգելով քաղաքն ու դաշտը՝ ամէն ինչ — զէնք, ռազմամթերք, կոռուող ուժեր եւ պարէն — փոխադրել տալով Սասուն (կարգալ այս Ուսումնասիրութեան Մասն Ա. Գլուխ Գ., էջ 63):

* * *

7.— «Յեղափոխական կազմակերպութեան եւ Ազգային Առաջնորդարանի կամքը ՏԻՐԱՊԵՏՈՂ ԷՐ, ԳԵՐԻՎԵՐ ԷՐ եւ վերջնական խօսքը, հրահանգը, ծրագիրը անոնց կը պատկանէր եւ բոլորի կողմէն կը գործադրուէր՝ վնասկան վայրկեանին» (նոյն, անդ) [Բոլոր ընդդժոճումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այսպիսի ցնորական դադափարներ «պատմագիր»ի խելապատակին մէջ միայն գոյութիւն ունէին:

* * *

8.— «Թուրք պետութիւնը ծրագրած էր ջարդը. ատոր համար պատրաստուած էր, իր ուժերը դասաւորած էր Տարօնի ինքնապաշտպանութեան դասաւորութեան համեմատ» (նոյն, էջ 763) [Բոլոր ընդդժոճումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Անիմաստ եւ յիմար խօսք. նախ՝ Թուրք կառավարութիւնը ուրկէ՞ պիտի կրնար գիտնալ Տարօնի «ինքնապաշտպանութեան» ծրագրի եւ ուժերու մասին, որպէսզի իր ուժերը դասաւորէր անոնց համեմատ. երկրորդ, Թուրք կառավարութիւնը ՌԻՓ ԶՈՒՆԷՐ Տարօնի մէջ որ դասաւորէր:

* * *

9.— «Նախաձեռնութիւնը կառավարութեան կը մնար: Այդ նգնաժամի օրերուն, ով որ նախաձեռնողն ըլլար, ան պիտի շահէր նակատամարտը» (նոյն, անդ) [Բոլոր ընդդժոճումները կարօ Սասունիին են, Մնթ. Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Ամէն անգամ, բարեդէպ առիթներ ներկայացած պարագային, Հաջի Յակոբ «պարոն»ներուն կ'առաջարկէր, կը քախտանէր, կը պնդէր որ այդ նախաձեռնութիւնը առնուի կառավարութեան ձեռքէն, որ բնաւ ուժ չունէր Տարօնի մէջ այդ ատենները, ըստ վկայութեան նոյնիսկ Վահան Փափազեանի. իսկ մերինները ի վիճակի էին այդպիսի դրական եւ վճռական քայլեր առնելու՝ առանց մեծ ուժի եւ մեծ զոհողութիւններու: Դեղեկոտ Վահան Փափազեան եւ Սասունի մէջ ինքզինք ապահով զգացող Ռուբէն, սակայն, ամէն անգամ ալ՝ կտրականապէս մերժեցր են Հաջի Յակոբի այդ թելադրութիւններն ու առաջարկները, ամէն բան ձգելով պատահականութեան (Մանրամասն տեղեկութիւնները կարդալ «Տարօնապատում»ի այս Ուսումնասիրութեան Մասն Առաջինի ԺԹ. եւ Ի. Գլուխներու մէջ, էջ 150-165):

* * *

10.— «Ինքնապաշտպանութեան այս մտահոգութիւններուն հաղորդակից էր նաեւ Ազգ. Առաջնորդարանը, ուր խորհրդակցութիւններ տեղի ունեցան: Դաշնակցութեան մարմինը պարզեց դրութիւնը եւ այն մեծ կարիքները, որ ինքնապաշտպանութիւնը կը պահանջէր: Զէնքի, փամփուշտի եւ պարէնի անհրաժեշտութիւնը բացայայտ էր» (նոյն, անդ):

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Երբ Ռուբէն եւ Վահան Փափազեան կը ներկայանան Քաղաքական Ժողովի եւ Բարեգործականի վարչութեան խառն նիստին, ԲՆԱԻ ԵՐԲԵՔ «չեն պարզած դրութիւնը» ա՛յլ միայն իրենց այն կարիքը, որ դրամական օժանդակութեան հետ կապուած էր: Ատոր մեծագոյն ապացոյցը սա՛ էր որ երբ Քաղաքական Ժողովին անդամ եւ Բարեգործականի Մուշի Մասնաճիւղի վարչութեան ատենապետ Նազարէթ Քեչիչեան փափաք կը յայտնէ որ քիչ մը աւելի տեղեկութիւններ տրուին իրենց ծրագրած զործունէութեան եւ ինքնապաշտպանութեան մասին, սոնքացող Ռուբէն կտրականապէս կը մերժէ զոհացում տալ անոր յոյժ տրամաբանական հետաքրքրութեան՝ պատասխանելով թէ «այդ կուսակցական գաղտնիք է, չեմք կարող ասել»:

* * *

11.— «Առաջնորդարանը խիստ բողոքներ տալու քաջութիւնը ունէր, բայց զգուշութեան եւ խոհեմութեան քարոզն ալ անպակաս էր» (նոյն, էջ 764) [Բոլոր ընդդժոճումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Ի՞նչ կ'ակնկալէր Սասունցի «պատմագիրը» որ Առաջնորդարանն ընէր. բմբոստութեան հրաւէ՞ր կարգար: Ատիկա իրենց արհեստն էր, չէ՞:

* * *

12.— «Պատմութեան ճղնաժամային անցքերուն հետեւողը հոգեկան թեթեւացում կը զգայ՝ ի լուր յարձակողականի անցնելու առաջարկին: ... Սակայն, յարձակողական ուղին տեղի կու տայ Կոմսի եւ իրեն պէս խորհողներու կողմէ: ... Հին մարտիկներէն եւ վերապրողներէն ոմանք՝ Կորիւնին եւ Հաջի Յակոբ Կոտոյեանին կը վերադրեն նոյնպիսի յարձակողական առաջարկ մը, ըստ որում՝ զազանի հրահանգով մը, բոլոր շրջաններու եւ վիւղերու մէջ եղած ոստիկանական պահանջները պէտք է դրաւուէին յանկարծակի զրոհով մը, անոնց ղէնքերով զինուէին եւ ապստամբական վիճակ ստեղծէին ամէն անկիւն» (նոյն, էջք 768-769):

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Հաջի Յակոբ ո՛չ թէ մէկ անգամ, ա՛յլ մէկէ աւելի անգամներ, «պարոն»ներուն ներկայացուցեր է նոյնպիսի առաջարկներ, օրինակ, թնդանօթները ղէպի Գոսուրայ լեռները փոխադրելու առթիւ, կա՛մ՝ Հնձանի խորհրդակցական ժողովներու միջոցին, ինչպէս նաեւ նամակներով իր կատարած դիմումը Վահան Փափաղեանին: Դժբախտարար, «պարոն»ները միշտ ալ կտրականապէս մերժած են Հաջի Յակոբի այդ փրկարար առաջարկները՝ «ցնորական» նկատելով զանոնք:

* * *

13.— «Սասունը խորտակելու գործը յետաձգուած էր՝ մեծ դժուարութիւններէ խուսափելու համար, մանաւանդ որ ձմեռուան այդ ամիսներուն՝ կարելի ալ չէր:

«Այս ծանր պայմաններուն մէջ, Ռուբէն եւ Կորիւն շրջաններ կ'ելլէին՝ զոնէ մասնակի ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու համար: ... Կառավարութիւնը շատ աւելի աչալուրջ կը հսկէր, եւ հետեւաբար, առաջին իսկ վայրկեանին, հետաւումուտ եղաւ Ռուբէնի եւ Կորիւնի քայլերուն: Փետրուար 6-ին, Ռուբէն եւ Կորիւն կը հասնին Գոմս գիւղը» (նոյն, էջ 770) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Փետրուար 6-էն առաջ, Ռուբէն արդէն փախստական էր՝ երկու պատճառներով. մէկը՝ օտարահաւատակութեան պատճառով, իսկ միւսը՝ Դաշնակցութեան Ակումբի խուզարկութեան ատեն՝ ետեւի դուռնէն փախուստ տուած ըլլալով: Հետեւ

ւարար, Ռուբէն, այս փախստական վիճակով՝ ԶԻՐ ԿՐՆԱՐ Կորիւնի հետ ելլել շրջանները՝ «զոնէ մասնակի ինքնապաշտպանութիւնը» կազմակերպելու օր-ցերեկով:

Գոմսի ղէպքին օրը, Ռուբէնի եւ իր զինեալ խումբին՝ հո՛ն, Գոմս գիւղին մէջ գտնուիլը բոլորովին ՊԱՏԱՀԱԿԱՆ ԷՐ, հետեւաբար, սխալ է յայտարարել որ Շէյխ Մեհմէդ Էմին արդէն հրահանգ ունէր Մուշի Իթթիհատի Ակումբէն եւ նոյնիսկ կառավարչէն՝ «նշքնազնել Կորիւնը եւ Ռուբէնը, անոնց ՄԻԱՄԻՏ Մէկ ՎԱՅՐԿԵԱՆԷՆ ՕԳՏՈՒԵԼՈՎ» (նոյն, էջք 770-771):

* * *

14.— «Այս փաստերը շատ մեծ ապացոյցներ էին թէ համատարած կոտորածի մը առջեւ կը գտնուի Տարօնի շրջանը եւ ո՛չ թէ մասնակի սպանութիւններու... Գոմսի ղէպքը միայն բաւական էր որ ամբողջ Տարօն այլևս բմբոստութեան դրօշակը պարզէր՝ առանց ժողովի եւ առանց հրահանգի...:

«Հակահարուածը տուող ղեկավարներն էին Ռուբէնը եւ Կորիւնը, իրենց հետ ունենալով երեսունէ աւելի հին Փեղայիներ, որոնք Կ. Կոմիտէի եւ Կոմիտէներու անգամ էին, կամ ազգային իշխանութեան մաս կը կազմէին: ... Կորիւնի եւ Ռուբէնի վճռական քայլը ինքնին վճռական հրահանգ մըն էր՝ բոլորին լսելի որ ղէնք բարձրացնէին եւ իրենք ալ, իրենց կարգին, հարուածէին, երբ առիթը ներկայանար: Այս վճռական քայլին կը յաջորդէր Պոլէեան Մըոյի Առաքելոց վանքի դրաւումը՝ բմբոստութեան յայտարարութեամբ...:

«Այս բացայայտ երեւոյթները ինքնին բաւական էին ամէն անորոշութիւն փարատելու: Եւ սակայն, դրութիւնը կը մնար անորոշ, անվճռականութիւնը կրկին կը նստէր հոգիներուն մէջ. հակառակ տեղի ունեցած պոռթկումին, սպասման քաղաքականութիւնը նորէն կը տկարացնէր կամքերը...:

«Ինչո՞վ կարելի է պատճառաբանել այս անվճռականութիւնը. ի՞նչ տուեալներ ունէին Տարօնի այդ օրերու ղեկավարները՝ սպասողական քաղաքականութիւն մը որդեգրելու համար, երբ ամէնօրեայ դործնական կեանքի երեւոյթները պէտք էր որ Հայ ժողովուրդը մղէին ընդհանուր բմբոստանքին» (նոյն, էջք 779-781):

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այս բոլոր հարցումներուն միակ ու ճշմարիտ պատասխանն է «Դաշնակցութեան Բիւրոյի պաշտօնական ներկայացուցիչ եւ պատասխանատու հանգամանք ունեցող» Ռուբէնի

դեղեկոտութիւնը, անվճռականութիւնը եւ իր կաշիին ապահովութիւնը...:

* * *

15.— Վերի հարցումներուն՝ հետեւեալ բացատրական պատասխանը կու տայ «պատմագիր» Սասունի.—

«Այս հարցումներուն մօտաւոր պատասխանը եթէ փորձենք գտնել, կանգ պիտի առնենք կառավարիչի խորամանկ քաղաքականութեան վրայ: Սերվէթը գիտէր ինքզինք զսպել եւ դէպքերը չգահավիժել: ... Այն ատեն, երբ ամէն ոք կը կարծէր թէ Սերվէթ իրար պիտի անցնէր շրջանը՝ Գոմսի դէպքի հետեւանքով, ան խորամանկութեամբ կ'ընդունէր թէ Կորիւնը յանցաւոր չէ: Երբ Մջօն, բացայայտ ըմբոստութեամբ մը, Առաքելոց Վանքին առջեւ գետին կը փռէր Սերվէթի ամենէն մտերիմ գործակիցը՝ Մեհմէդ հարիւրապետը, Սերվէթ բանակներ չէր դրկեր անոր դէմ, կամ վնասկան գործողութեան չէր ձեռնարկեր Սասունի դէմ եւ միայն կը զոհանար Կուրտիկի դիրքային կռիւներով» (նոյն, էջ 781) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այո՛, կառավարիչ Սերվէթ Բէյ շատ ճարպիկ, խորամանկ եւ շողմիչ քաղաքականութեան մը կը հետեւէր, եւ այդ ընթացքը ան ընդգրկած էր այն պարզ ու բացայայտ պատճառով որ Թուրք կառավարութիւնը Ութ ՉՈՒՆԷՐ Տարօնի մէջ, բանակ չունէր որ շրջէր Գոմս կամ Առաքելոց վանքը: Իսկ Կուրտիկի կռիւներու առասպելով այլեւս չենք ուզեր զբաղեցնել մեր ընթերցողները...:

* * *

16.— «Թուրք կառավարութիւնը գիտէր թէ ինչո՛ւ կը սպասէ իսկ Հայ ղեկավարութիւնը կը սպասէր... Թուսական եւ Հայ կամաւորական բանակներուն: Թուսական բանակներու յառաջացման յոյսերով եղած սպասումը կրնանք գլխաւոր պատճառը նկատել Հայութեան անվճռական կամքին» (նոյն, անդ) :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այո՛, Թուրք կառավարութիւնը գիտէր որ բացարձակապէս անզօր էր այդ օրերուն, բանակ չունէր եւ անհամբերութեամբ կը սպասէր յարմարագոյն պատեհութեան: Իսկ Հայ «ղեկավարութեան» (կարծես թէ «պատմագիրը» կ'ամչնայ տալու Բիւրոյի լիազօր ներկայացուցիչ Թուրքի անունը) սպասումի իրական ու մշմարիտ պատճառը գոնէ անգամ մը զիջաւ ըսելու եւ խոս-

տովանելու, որ էր... ՍՊԱՍՈՒՄ Թուսական բանակին եւ Հայ կամաւորներու շուտափոյթ ժամանումին...:

* * *

17.— «Մարտ-Ապրիլ ամիսներուն պատահած այս դէպքերուն դիմաց միայն բողոքելով կը բաւականանար Հայոց Առաջնորդ Խարխանեանը, որ աւելի ըմբոստ հոգի մը ունէր քան Վարդան Վարդապետը, որ դիւանադիտութեան եւ խորամանկութեան ճանապարհով կ'ուզէր տեղ մը հասնիլ: Վարդան Վարդապետ, Ներսէս Եպս. Խարխանեան, Վահան Փափազեան եւ Ազգային Իշխանութեան զբաղմանը կեցող քանի մը անուանի եւ ազդեցիկ մարդիկ՝ խոհեմութեան, զգուշութեան եւ համբերութեան կողմնակից էին: Իսկ Թուրքին, Կորիւն, Մջօն, շարք մը հին Ֆեղայիներ եւ Սասնոյ իշխանները արդէն ըմբոստացած էին եւ լեռը բարձրանալով՝ կռիւի դրօշը պարզած էին: Սակայն այս ըմբոստ թեւը, որ մեծամասնութիւնն էր եւ ամբողջովին Տարօնի հողերանութեան կը համապատասխանէր, նոյնպէս սպասողական էր եւ ո՛չ յարձակողական» (նոյն, էջ 783) :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Ազգային իշխանութիւնը կ'ընէր ինչ որ իր իրաւասութեան սահմանի մէջ կ'իյնար, անկէ դուրս՝ «ըմբոստ թեւ»ին կը մնար վճռական եւ զործնական քայլեր առնել: Գործնական քայլեր պէտք էր առնէին անոնք որ զինական ուժը կը կազմէին եւ ո՛չ թէ Առաջնորդարանի ողբերգուները:

* * *

18.— «Մայիսի վերջերը, Մշոյ մէջ յայտնի էր թէ Վանը կըրուած եւ ազատուած էր, թէ Պոլսոյ ամբողջ ղեկավարութիւնը ձերբակալուած եւ քշուած էր...: Այս բոլորը գիտնալէն ետք, գիտէին նաեւ Թուրքերու վերաբերումը Տարօնի ժողովուրդին հանդէպ, գիտէին նաեւ Սերվէթի եւ միւս Թուրք երեւելիներու դաւադիր խորհրդակցութիւնները: Սակայն, Մայիս եւ Յունիս ամիսներուն, փափախութիւն մը չի յառաջանար ղեկավար տարրերու մտածողութեան մէջ: Սասուն հաւաքուած ուժերը՝ Թուրքի ղեկավարութեամբ, Մուշի մէջ եղողները՝ Վահան Փափազեանի եւ Կեդր. Կոմիտէի քանի մը անդամներու ղեկավարութեամբ, եւ Ազգ. Առաջնորդարանը՝ Վարդան Վ. Ի եւ Քաղաքական Ժողովի ղեկավարութեամբ, կը մնան սպասողական դիրքի վրայ՝ ժամանակ չահելու մինչեւ որ Թուս բանակը Մուշ հասնի» (նոյն, էջ 827-828) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Ռուբէն՝ Տարօնի շրջանի լիազօր անձնաւորութիւնն էր, որուն կամքէն կախուած էին ամէն տեսակ որոշում կամ գործ: Ո՞վ կը յանդիմանէր անոր յիշեցնել իր պարտականութիւնը կամ քննադատական խօսք ըսել անոր հասցէին:

Խիստ յատկանշական է այն հակիրճ հակաճառութիւնը, որ տեղի ունեցած է Ռուբէնի եւ Վահան Փափազեանի միջեւ՝ այս վերջինի հրաւերով գումարուած կուսակցական դադանի ժողովի մը ընթացքին, Մայիսի վերջերը, Տիգրան Գաւառեանի տան մէջ: Հոն, Վահան Փափազեան կը քննադատէ Ռուբէնի գործելակերպը թէ ի՞նչ հիմունքներով՝ Ռուբէն Սասունի մէջ կը հաւաքէ բոլոր կռուող ուժերը եւ պահեստները:

Այդ ատեն, Ռուբէն կը հարցնէ բարկաճայթ.

«— Ո՞վ ես դու:

«= Ձե՞ս ճանչնար, — կը պատասխանէ Փափազեան, — ես Բիւրոյի անդամ եմ եւ Բիւրոյի անդամը ո՛ւր որ ալ ըլլայ, ձայնի իրաւունք ունի:

«— Ի՛նչ, — կ'ըլլայ Ռուբէնի քամահրանքը, — հիմա զինուորական դրութիւն է եւ ես եմ պատասխանատուն: Ո՛չ ոք իրաւունք ունի միջամտելու իմ գործերուն» (Յակոբ Տէր Զաքարեանի Զեռաբի Յուշերը», էջ 120):

Ահա՛ այսպիսի ամբարտաւան եւ այլամերժ անձի մը վստահուած էր Տարօնի տարաբախտ Հայութեան ճակատագիրը:

* * *

19.— «Մէկ անգամ միայն թուրք կառավարութիւնը կը կանչէ Հաջի Յակոբ Կոտոյեանը եւ քանի մը քննադատներ կու տայ անոր որ 200 մարդով եւ եզի կառքերով հասցնէ Լիզ (Վարի Բուլանքը): Հաջի Յակոբ մինչեւ Յրօնք կը տանի թնդանօթները, մարդիկը կը ցրուէ, թնդանօթները հոն կը թողու եւ կը վերադառնայ Մուշ՝ բողոքազիր մը տալու համար Սերվէթին՝ փախստականներու վրայ: Հաջին, ԻՐ ՕԶԻՔԸ ԱԶԱՏԵԼԷՆ ՆՏՔ, Մուշի ղեկավարներուն կ'առջարկէ գրաւել թնդանօթները, գիւղերը լուր ղրկել որ իրենց քով գտնուած կառավարական պաշտօնեաները ոչնչացնեն, անոնց զէնքերը առնեն եւ գիւղը դարձնեն դիմադրութեան կեդրոն մը: Միեւնոյն ժամանակ լուր ղրկել Սասուն որ Մուշի վրայ արշաւեն. դուրսէն եւ ներսէն կռուելով՝ կարելի պիտի ըլլար Մուշը գրաւել եւ ժողովուրդը զինել:

«Այդ առաջարկին ալ ընդառաջ գացող չ'ըլլար» (նոյն, էջ 828) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այս կէտը խիստ մանրամասնութեամբ քննարկուած է մեր այս «Տարօնապատում»ի Մասն Առաջինի մէջ (Գլուխներ ԺԹ. եւ Ի., էջք 150-165):

Կառավարիչ Սերվէթ Բէյ երկու քննադատներ կը յանձնէ Հաջի Յակոբին եւ ո՛չ թէ քանի մը: Փոխադրութեան «նախորդ երեկոյեան», եւ ո՛չ թէ «ԻՐ ՕԶԻՔԸ ԱԶԱՏԵԼԷՆ ՆՏՔ», Հաջի Յակոբ՝ քաղաքը գտնուող երկու «պարոն»ներուն կ'ընէ իր փրկարար թելադրութիւնը, որ էր քաղաքը գրաւել եւ իշխանութիւնը ձեռք անցընել:

Որոշ կը տեսնուի որ այս պատմութեան մէջ «օձիք ագատելու» խօսք չկայ, ա՛յլ ձեռնտու պայմաններէն օգտուելու փրկարար թելադրութիւն, զոր «պարոն»ները կը մերժեն:

«Պատմագիր» Կարօ Սասունիի վերի պարբերութեան ամենավերջին նախադասութեան բուն իմաստը այս է.— «Պարոն»ներու ՄԵՐԺՈՒՄ:

* * *

20.— «Թէ՛ Առաջնորդարանը եւ թէ՛ յեղափոխական ղեկավարները նոյնանման տեսակէտներ չունէին, թէ՛ իրողութիւնները տարբեր կ'ըմբռնէին եւ թէ՛ գործնական քայլեր առնելու առաջարկները կը մերժէին: ...Մինչդեռ, այդպիսի տագնապալի ժամանակ, միակամութիւնը եւ համամտութիւնը կրնային հրաշքեր գործել» (նոյն, էջք 830-831):

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Սասունցի «պատմագիրը» շատ յստակ չ'ընծայեր հետեւեալ խիստ կարեւոր պարագան թէ որո՞նք էին որ «գործնական քայլեր առնելու առաջարկը» կը ներկայացնէին եւ որո՞նք էին որ «կը մերժէին»: Այս երկիմաստ եւ միանգամայն անիմաստ նախադասութեանէն՝ ընթերցողը այն տպաւորութիւնը կ'ունենայ որ «գործնական քայլեր առնելու առաջարկները» ընողները «յեղափոխական ղեկավարներն» էին, իսկ մերժողները, բնականաբար, միւս կողմը, — Առաջնորդարանը (Այս կէտի մանրամասն քննութիւնն ու լուսարանութիւնը կարդալ «Տարօնապատում»ի Մասն Առաջին Գլուխ ԻԱ., էջք 166-175):

* * *

21.— «Անցած դէպքերու պատմութիւնը մէկտեղելով, յետին թուականով, եթէ ուզենք ելք մը գտնել, այդ ելքը այն օրերուն պիտի ըլլար յուսահատական կռիւ մը (ընդգծումը իրն է, Մնթ. Ա. Տ.), աւստի կողմէ բռնկած, պայմանաւ որ Տարօնի կռուողներու դէմքը դար-

ձած ըլլար ԴէՊի Բուլանը—Մանազկերտ եւ ո՛չ թէ Սասուն, ուր ստոյգ մահը կը սպասէր բոլորին» (նոյն, էջ 831) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— «Հնձանի Խորհրդակցական Ժողովներու» ընթացքին, Հաջի Յակոբի ներկայացուցած առաջարկները միշտ ու միշտ՝ այդ «յուսահատական կռիւ»ի բնոյթն ունէին, զոր Ռուբէն եւ Վահան Փափազեան մերժած են կտրականապէս (կարգալ «Տարօնապատում»ի Մասն Առաջինի Գլուխ Ի., էջք 158-165) :

* * *

22.— «Ինչո՞ւ կռիւները չծաւալեցան, ինչո՞ւ դաշտի որոշուած կէտերը ինքնապաշտպանութեան դրօշակը չպարզեցին: Այս հարցումներուն պատասխանը կը գտնենք այն իրողութեան մէջ որ ռազմավարական ծանր սխալ մըն էր: Բոլոր փորձառու ուժերը, Մուշէն եւ Դաշտէն, կը բարձրանային Սասուն... , ուրեմն, կռուի վայրը որոշուած էր Սասուն, կա՛մ, առանց որոշում տալու, որպէս կատարուած իրողութիւն, ինքնին Սասունը կը դառնար ինքնապաշտպանութեան գլխաւոր վայրը: Այս ուղղութիւնը հին Ֆեղայական օրերու փորձառութեան կը բխէր: Հին օրերը՝ պատերազմի այդ օրերուն համանման չէին: Այս հիմնական կէտը չկրցան ըմբռնել, եւ որդեգրեցին ռազմական այնպիսի խարխիս մը, որ Մուշ քաղաքը եւ դաշտը ջլատեց» (նոյն, էջք 831-832) :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ շատ յաճախ միատեսակ է եւ հաւանաբար՝ ձանձրացուցիչ. սակայն, դժբախտաբար, այդ է միակ ու բացարձակ իրողութիւնը, զոր հարկադրուած կ'ըլլանք կրկնելու եւ կրկնելու.— Ռուբէնի սխալ որոշումը եւ կամակոր յամառութիւնը, զորս կը պարտադրէր բոլորին, բոլորին... :

* * *

23.— «Մշոյ դաշտը կաշկանդուած էր 100,000-աւոր ցեղախումբերով: Վանէն, Արաշկերտէն, Մանազկերտէն եւ Բուլանըքէն զաղթող Քուրդ զինուած բոլոր ուժերը խոնուած էին Մշոյ Դաշտը... : Այս պարագան շեշտել հարկ է՝ արդար դատաստան մը ընելու համար» (նոյն, էջք 832-833) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այս մուհաջիր թուրքերն ու Քուրդերը Մշոյ Դաշտը թափեցան Յուլիս 11-էն սկսեալ, այսինքն՝ Դաշտի համատարած կոտորածէն՝ 13, իսկ քաղաքի կոտորածէն ալ՝ 10 օր ետք, իբրեւ հետեւանք Ռուսական բանակի յաղթական յառաջխաղացքին

(կարգալ «Տարօնապատում»ի Մասն Երկրորդ, Գլուխ Զ., էջք 251-261) :

* * *

24.— «Այս անհամեմատ մեծ ուժերուն դէմ ստոյգ մահուան (Ընդգծումը կարօ Սասունիին է, Մնթ. Ա. Տ.) կռիւ մը պիտի սկսէին, յուսահատ կռիւ մը, որ ելք մը չունէր: Մեր թուած բոլոր պարագաները ցոյց տուին թէ այդպիսի յուսահատական պայքարի մը ժամը հասած չէին նկատեր, որովհետեւ չէին հաւատար թէ ամբողջ Հայ Ժողովուրդը բնաջնջման դատապարտուած էր» (նոյն, էջ 833) [Ընդգծումը մերն է, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Եթէ իրապէս «չէին հաւատար» որ ամբողջ Հայ Ժողովուրդը բնաջնջումի դատապարտուած էր, բայց շատ լաւ գիտէին որ Տարօնի շրջակայ վայրերու Հայութիւնը բնաջնջուած էր:

Հաջի Յակոբ այս կէտը մէկէ աւելի անգամներ շեշտած եւ յիշեցուցած էր՝ թէ՛ «Հնձանի Խորհրդակցական Ժողովներ»ու (տեսնել Մասն Առաջին, Գլուխ Ի., էջ 163) եւ թէ՛ «Առաջնորդարանի Խորհրդակցական Ժողովի» ընթացքին (Մասն Առաջին, Գլուխ ԻԱ., էջ 168) :

* * *

25.— «Այսպիսի մտածումի մը, այսպիսի միամտութեան մը համար, չենք կրնար դատապարտել այն օրերու ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ու մեծ ու փոքր ղեկավարները» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Մենք չենք դատապարտեր «մեծ ու փոքր ղեկավարները», ա՛յլ անոնց գերագոյն հրամանատարը, պատասխանատու ղեկավարը միայն. ուրիշ ո՛չ ոք:

* * *

26.— «Արդար դատողութեամբ եւ պատմական ամաչառութեամբ եթէ ուզենք քննել ընկիւղը այդ օրերու ղեկավարներուն, նախ պիտի ըսենք թէ որո՞նք էին ղեկավարները» (նոյն, անդ) [Ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այս ամբարիշտ ու անպարկեշտ յայտարարութեանէն ետք, Սասունցի այս «պատմագիրը» կը սկսի իրարու հետեւէն շարել անունները հետեւեալ կարգով — Տարօնի Առաջնորդ

ներսէս Եպօս. Խարախանեանին, Առաջնորդական Տեղապահ Վարդան Վարդապետին, Քաղաքական Ժողովի անդամներուն, ապա «կուսակցական կեանքի ղեկավար» Ռուբէնին՝ իր հետ ունենալով կորիւնը եւ Մջօն, եւ շարք մը երկրորդական ղեկավարներ, բոլորը մէկ հասարակաց յայտարարի վերածելով...

«Արդարութեան» եւ «անաչառութեան» անունէն ճառող այս «պատմագիրը» ի՞նչպիսի յանդուզն համարձակութեամբ՝ կը փորձէ գործել ՄԵԾԱԳՈՅՆ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՆ ու պատմական ԱԶԱՌՈՒԹԻՒՆԸ՝ միեւնոյն մակարդակի վրայ դնելով կրօնական հաստատութեան մը վարիչներու գործունէութիւնը՝ յեղափոխական (Գաշակցական) կազմակերպութեան քաղաքական գործունէութեան հետ, եւ այդ արարքը՝ «պատմական անաչառութիւն» է եղեր...

* * *

27.— «Խարախանեան Սրբազանի ղէնքը բուն բողոքն էր: Ատկէ անդին չանցաւ Տարօնի Առաջնորդը, երբ Ռուբէն, կորիւն եւ Մջօն, արիւնալի կռիւներ մղելով՝ Սասուն բարձրացան: Առաջնորդը յուսահատ ըմբոստութեան մը ԹԵԼԱԴՐԱՆՔԸ ԶԸՐԱԻ» (նոյն, անդ) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Նախ պատմական բացայայտ իրողութեանց բացարձակ խեղաթիւրում մըն է յայտարարել թէ Ռուբէն եւ կորիւն, «արիւնալի կռիւներ մղելով»՝ Սասուն բարձրացեր են, այլ՝ անոնք, Գոմսի դէպքէն ետք, սուսիկ-փուսիկ փախեր են Սասուն:

Յետոյ, Խարախանեան Սրբազան ի՞նչ իրաւասութեամբ պիտի ընէր այդ տեսակ «թելադրանք» մը, երբ Փետրուարի այդ օրերուն՝ Հայ մտաւորական եւ քաղաքական պարագլուխներու ձերբակալութիւնները տեղի ունեցած չէին դեռ:

* * *

28.— «Վահան Փափազեան, երեսփոխանի իր հանգամանքով, միայն յարաբերական գործին կրնար օգտակար ըլլալ: Զինուորական ղեկավար մը չէր եւ մահ-պատերազմի խնդիրներու մէջ՝ վճռական դեր մը չէր կրնար ունենալ» (նոյն, էջ 834):

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Եթէ Վահան Փափազեան, ամենակարող Բիւրոյի անդամ եւ երեսփոխական ըլլալու իր կրկնակ հանգամանքներով, «մահ-պատերազմի» խնդիրներու մէջ վճռական դեր մը չէր կրնար ունենալ, — ինչ որ սխալ յայտարարութիւն է, — ի՞նչ հիմունքներով, ուրեմն, Սասունցի «պատմագիրը» կ'ակնկալէր որ Ա-

ռաջնորդ Խարախանեանը կ'ամ Քաղաքական Ժողովի անդամները միջամուխ ըլլային իրենց «մահ-պատերազմ»ի խնդիրներուն:

* * *

29.— «Ուրեմն, Տարօնի շրջանի ազգային եւ կուսակցական ղեկավարները կատարեցին իրենց պարտականութիւնը՝ իրենց ըմբռնողութեան եւ կարողութեան սահմաններուն մէջ (ընդգծումները կարօ Սասունիէն, Ծնթ. Ա. Տ.), ա'յնքան, որքան մարդկօրէն հնարաւոր էր: ԱՆՈՒՔ ԳԵՐՄԱՐԴԻԿ ԶԷԻՆ» (նոյն, էջ 835) [Վերջին ընդգծումները մերն են, Ա. Տ.]:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Եթէ Ռուբէն «գերմարդ» Զէյր, հապա ի՞նչպէս կ'ըլլայ որ «ըմբռնողութեան» եղած է, մանաւանդ՝ «ԸՆՏՐԵԼԻՆԵՐՈՒ ԸՆՏՐԵԼԱԳՈՅՆ»:

* * *

30.— «Ռուբէն, թէ՛ իրաւասութեամբ եւ թէ՛ մարտական եւ կազմակերպական փորձառութեամբ, ամենէն աչքառու ղէմքն էր: Ռուբէն մեծ ուժ մըն էր՝ որպէս ըմբռնող եւ նախատեսող: ... Սակայն, Ռուբէն երբեք յախուռն եւ խիզախ մարտական վարիչ մը եղած չէ: ... Խիզախ եւ անհաշիւ նախաձեռնութիւններու մարդը չէր Ռուբէն: Քաղաքական եւ զինուորական գործիչ մըն էր՝ աւելի պետական ըմբռնումով: Ճգնաժամի այդ օրերուն, Ռուբէն յուսահատ եւ ելքն անորոշ կռիւի մը վարիչը չէր կրնար ըլլալ: ... Ինքզինքը գերազանցող մարտական ղեկավարը չէր» (նոյն, էջ 834):

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Եթէ Ռուբէն յախուռն եւ խիզախ մարտական վարիչի մը յատկանիշներէն զուրկ էր, ուրեմն, նախ ՊԷՏՔ Զէյր որ այդ տեսակ պարտականութիւն եւ պատասխանատուութիւն պահանջող պաշտօն մը ստանձնէր. երկրորդ, գոնէ ազնուութիւնն ունենար՝ այդ յատկանիշներով իր ստատութեամբ օժտուած Հաջի Յակոբի խորհուրդներուն ու թելադրութեանց անսալու եւ ըստ այնմ ալ՝ գործէր: «Ելքն անորոշ կռիւի մը վարիչը» չըլլալուն համար էր, արդեօք, որ փոխանակ «կարսի պատերուն տակ» հերոսի դասինեպսակը շահելու (1920-ի աշնան), դասալիք փախուստի անփառունակ ճամբան կը բռնէր դէպի Զանգեզուր, ինչպէս որ ըրած էր Անդոկի գազաթին վրայ ալ, 1915-ին...:

* * *

31.— «Աւելի խիզախ նկարագիր ունէին Կորիւն, Մջօն եւ Կոստյեան Հաջի Յակոբը: Այս երեք մեծ մարտական ուժերը կոռուեցան մինչեւ վերջին շունչ եւ նահատակուեցան հերոսաբար: Անոնք թէ՛ ազդեցութեամբ, թէ՛ փորձառութեամբ եւ թէ՛ կուսակցական իրաւասութեամբ՝ տէրն էին Տարօնի եւ ԿՐՆԱՅԻՆ ՇԱՏ ԱԻՆԵԼԻՆ ԸՆՆԵԼ՝ իրենց խիզախ ելոյթներէն ետք: Բայց այս աննման հերոսներն ալ՝ սպասողական ընթացքի մը մէջ գտնուեցան: Իրենց տունն ու տեղը կործանելէն... ետք, չջարունակեցին նոյն բուռն ընթացքը՝ ամբողջ շրջանը ոտքի հանելու համար» (նոյն, էջք 834—835) [Բոլոր ընդդրծուները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Մենք կը կարծէինք որ շնականութիւնն անգամ չափ մը ունէր, բայց, դժբախտաբար, այդպէս չէ եղեր Սասունցի «պատմագիր»ի պարագային: Ո՞վ կրնար կամ կը յանդգնէր ամենազօր Ռուբէնի կամքին եւ որոշումներուն հակառակ շարժիլ, ո՛չ իսկ Բիւրոյի անգամ Վահան Փափաղեան:

Հաջի Յակոբի ո՞ր մէկ բաղձանքին կամ առաջարկին գոհացում տուաւ Ռուբէն:

Մեր կողմանէ ընդդուած վերի նախադասութեամբ, Կարօ Սասունի, շնական համարձակութեամբ մը, կը փորձէ Տարօնի եւ Սասնոյ Եղեռնի պատասխանատուութիւնը վար առնել Ռուբէնի ուսերէն եւ բառնալ վերոյիշեալ երեք սրբացած դիւցազուններու ուսերուն վրայ:

Ամօ՞թ իրեն...

* * *

32.— «Տարօնի Հայրենակցական Միութեան մասնահիւղերը, անցած երեսուն եւ հինգ տարիներու ընթացքին, հերոսամարտերու մասին չխօսեցան, եւ սգատօներու կրկնութիւններով՝ կարծես այն ըմբռնումը տարածեցին թէ Տարօնի ընդարձակ շրջանի եօթնամսեայ կռիւները աննշան դէպքեր էին:...

«Ինչո՞ւ համար, Տարօնցին, հոգեկան խռովքով մը, սզակիր մնաց եւ չհաշտուեցաւ Տարօնի Աշխարհի անմարդկային կոտորածին հետ» (նոյն, էջ 886) :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այս խիստ տրամաբանական հարցումին ձեռն ՊԱՏԱՍԽԱՆԸ արդէն իմքն իսկ, Կարօ Սասունին կու տայ, երբ ուրիշ տող վար, կը գրէ.— «Յեղափոխական... ապրումներով անած Տարօնցին երբեք չհաշտուեցաւ Տարօնի պարտութեան հետ, ... ու ԲԱՆ ՄԸ ՊԱՎԱՍ ԳՏԱԻ 1915-ի դէպքերու եւ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԸՆ-

ԹԱՅՔԻՆ ՄԷՋ» (նոյն, էջ 887) [Բոլոր ընդդրծուները մերն են, Ա. Տ.] :

Այդ հարցումին ԱՄԵՆԷՆ ձԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ տուած պիտի ըլլար Սասունցի «պատմագիրը», եթէ վերոյիշեալ «գեկավարներ» բառը գործածէր եզակի եւ իրեն յարակից որակումներով — «Բիւրոյի Լիազօր ներկայացուցիչ եւ Տարօնի մարտական ուժերու գեկավար»... :

* * *

33.— «Տարօնի արիւնալի կռիւները, որ մղուեցան 1915-ի եօթը ամիսներուն, անտեսուած են եւ իրենց տեղը չեն գտած մեր պատմութեան մէջ եւ չեն արժեւորուած՝ ըստ արժանոյն: ... Թուրքիոյ ամբողջ տարածքին վրայ, այդ անմարդկային կոտորածին դէմ ամենէն ծաւալուն եւ ամենէն երկարատեւ կռիւները մղեց Տարօնի Աշխարհը...: Անտեսել այս հերոսամարտերը, անդիտանալ բազմաթիւ արիւնալի գոյամարտերը, պիտի նշանակէր պատմութիւնը խեղաթիւրել» (նոյն, անդ) [Ընդդրծումը մերն է, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Այն ձեռով եւ բովանդակութեամբ, որ Կուսակցական «պատմիչ»ները (Ռուբէն, Վահան Փափաղեան, Սասունցի Մուշեղ եւ Կարօ Սասունի) փորձեր են ներկայացնել Տարօնի եւ Սասնոյ 1915-ի ողբերգութեան իրական, հարազատ ու ճշմարիտ պատմութիւնը, այդ ձեռով եւ բովանդակութեամբ ներկայացուած ձկտումնաւոր «պատմութեան» փորձն է ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄ-ը:

* * *

34.— «Հրաշք սպասել հերոսներէն՝ հերոսապաշտ ժողովուրդի մը իրաւունքն է, բայց հերոսութիւնները ուրանալը ո՛չ ոքի իրաւունքն է» (նոյն, անդ) :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.— Ո՛չ ոք կ'ուրանայ իրական ու վաւերական հերոսներու հերոսական գործերը. պուրբիկաձեւ կեղծ ու պաճուճապատանք «հերոսներու ստապատում գործերն են որ դատապարտուած են այդ տխուր ճակատագրին:

* * *

35.— «Հող (Ս. Կարապետ վանքի) խոր անտառին մէջ, կ'որոշեն... զինուած ստուար խումբ մը գրկել Սասուն՝ օգնութիւն խնդրելու համար: ... Նոյն միամտութիւնը կը տիրէ այս ճակատին

վրայ ալ, ինչպէս տեսանք Մուշի հերոսամարտի ընթացքին: Աչքերը յառած են դէպի Սասուն՝ կարծես քէ այնտեղ պահեստի Հայ բանակները պատրաստ են ամէն տեղ հասնելու» (նոյն, էջ 935) [Բոլոր ընդգծումները նոյն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ .— Շատ բնական եւ տրամաբանական էր որ Տարօնի բոլոր շրջանները այդպիսի «միամտութիւն» մը սնուցանէին Սասունի ընծայելիք օգնութեան մասին: Զէ՞ որ այդ շրջաններու մարտական ուժերը, ղէնքերը, ռազմամթերքը եւ պարէնը Սասունի մէջ կեդրոնացուցած ատեն, Ռուբէն՝ այդպիսի խոստում մը տուած էր բոլորին, եւ նոյն իսկ, «Հնձանի Խորհրդակցական ժողովներու» ընթացքին, Հաջի Յակոբի ներկայացուցած երեք առաջարկներուն՝ Ռուբէն եւ Վահան Փափազեան հակադրած եւ ժողովականներուն ալ ընդունիլ տուած են իրենց հակա-առաջարկը, որ էր .

«— Որքան ատեն որ Սասուն կանգուն է եւ Անդուկ լեռը չէ գրաւուած, մենք՝ իբրեւ ամուր բերդ, ԿԱՆԳՆԱԾ ԵՆՔ ԴԱՇՏԻ եւ ՔԱՂԱՔԻ ԿՈՂՔԻՆ: Մինչեւ որ մեր ուժերը չլլատեն, ձեզի ոչինչ չեն ըներ... ամէն վտանգ աւելի՛ Սասնոյ է որ կը սպառնայ. պէտք է բոլոր ուժերը հո՛ն հաւաքենք եւ զօրեղ դիմադրութիւն կազմակերպենք» («Հարապատ Պատմութիւն Տարօնոյ», էջ 352: Նաեւ այս «Տարօնապատում»ի Մասն Առաջին, Գլուխ Ի., էջ 162) :

Իբր բնական հետեւանք այս հաւաստումին ու խոստումին, շատ տրամաբանական էր որ թէ՛ քաղաքը եւ թէ՛ դաշտի շրջանները, իրենց գերագոյն պայքարի բոպէներուն, հայեացքնին յառէին դէպի Սասուն եւ... «միամտօրէն» օգնութիւն սպասէին անկէ... :

* * *

36.— «Երբ Ռուբէն, Կորիւն եւ Մջօ, մարտական ստուար խումբերով, Մարտի վերջերը (սխալ թուական է, եւ պէտք է ըլլայ «Փետրուարի վերջերը», Ծնթ. Ա. Տ.) կը կեդրոնանան Սասուն, կրնանք ենթադրել թէ այդպիսի որոշում մը կամ նախատեսութիւն մը ունեցած պիտի ըլլային նախօրօք: Ուրիշ կերպ դատողութիւն մը իրականութեան ժխտումը պիտի ըլլար: Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. Կոմիտէի ամենէն ազդեցիկ երեք անդամները, դէպքերու բերումով, ժամադրութեան մը պէս, Մարտի վերջերուն, կը քաշուին Սասուն եւ իրենց հետ կը տանին Մուշի եւ Դաշտի ամենէն փորձառու հին Ֆեդայիները: Պատմական իրողութեան համապատասխան պիտի ըլլայ, եթէ ըսենք որ Տարօնի կուսակցական վարիչ մարմինը իր մարտական գործունէութիւնը կը փոխադրէր Սասուն» (նոյն, էջ 956) [Բոլոր ընդգծումները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ .— Ռուբէն-Կորիւնի եւ Մջոյի մարտական խումբերու Սասուն խոյս տալը՝ որեւէ «նախօրօք» որոշումի հետ կապ չէ ունեցած բնաւ, այլ, պարզապէս, «դէպքերու բերումով» եւ պատահականօրէն է որ այդ խումբերը, իրարմէ անկախ կերպով, Սասուն փախչեր են՝ իբրեւ ապահով վայր:

* * *

37.— «Կառավարութիւնը քանի մը հիմնական քայլեր առաւ՝ Սասունի վտանգը չէզոքացնելու համար: Վաշտ մը զինուորներ զըրկեց Ս. Կարապետի վանքը, մէկ վաշտ՝ Ս: Յովհաննու վանքը եւ երրորդ վաշտը՝ Առաքելոց վանքին մէջ» (նոյն, էջ 957-958) :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ .— Սասունի վտանգը ի՞նչպէս պիտի չէզոքանար՝ վերոյիշեալ երեք վանքերու մէջ մէկական վաշտ զօրք տեղաւորելով: Թուրք կառավարութիւնը կը վախնար որ Ս. Կարապետ եւ Ս. Յովհաննէս վանքերն ալ կրնային Առաքելոց վանք մը դառնալ եւ անհարկի մտատանջութիւններ ու մարդկային կորուստներ պատճառել իրեն՝ մանաւանդ այդ խիստ նեղ օրերուն: Այդ իսկ պատճառով էր որ զօրք լեցուցած էր երեք վանքերու մէջ ալ՝ նոյնպիսի վճռանդաւոր քայլեր արգիլելու կանխամտածումով:

* * *

38.— «Յուլիս 13-ին, երբ կամաւորական գունդերը եւ Սորփի վրայով յառաջացող Ռուս զօրամասերը Դատուանի շրջանը կը գրաւեն, Թուրքերը կը դատարկեն Նեմրութի, Գրգուռի եւ Մշոյ Դաշտի արեւելեան մասերը: Գուրգերը խուճապահար կը հեռանան Վարդենիսի, Ղարսի եւ Խազդիւղի շրջաններէն:

«Մտանիկի լեռնագագաթներուն վրայ նստած ժողովուրդը կը տեսնէ այդ երեւոյթը եւ չի շարժիր իր տեղէն: Վահան Փափազեան կը յայտնէ թէ ցերեկները կը նշմարէին անհաշիւ բազմութիւնը, որ իր անասուններով կը տեղափոխուէր Ս. Կարապետի շրջանը: Գիշերները աւելի բացայայտ նշաններ կը նշմարեն. Մշոյ Դաշտի արեւելեան մասը կատարեալ խաւար է, մինչդեռ Սուլուխէն անդին, դէպի Ս. Կարապետ, բազմահազար խարոյկներ կը վառին: Կը գիտակցին թէ Թրքական նահանջ մըն է, բայց որեւէ նախաձեռնութեան չեն դիմեր: Յուլիս 16-ին, ցերեկով, Վահան Փափազեան դիտակով կը նշմարէ Ռուս կողակներու ձիաւոր հետախոյզ ջոկատը, որ կը յառաջանայ մինչեւ Մկրագոմ եւ նորէն ետ կը դառնայ: Երեք օր, Թուրքերն ու Գուրգերը քաշուած են Մշոյ Դաշտէն, երեք օր ալ՝

Դաշտի արևելեան մասերը դատարկ մնացած են, սակայն ո՛չ մարտիկները, ո՛չ դեկավարները եւ ո՛չ ալ բնագոյն կառչած ժողովուրդը տեղէն չէ շարժած եւ օդտուած այդ պատեհութենէն...

«Շչմածութիւն մը, անյուսութիւն մը, որ կամազրկութեան հաւասար էր, տիրած էր բոլորին» (նոյն, էջ 991-992) [Բոլոր ընդդէմները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ. — Կարդալ այս ուսումնասիրութեան Մասն Երկրորդի մէջ, Գլուխ Զ. էջ 259-261) :

* * *

39. — «Վերապրող ազգային եւ յեղափոխական գործիչներն ու մարտիկները, որպէս մարդ, ըրին այն ինչ որ իրենց կարողութիւնը կը ներէր. մահուան դացին եւ օրերով ու ամիսներով՝ մահուան վըտանգը ապրեցան: Որպէս մարդ՝ մեղադրելի չեն: Բայց որպէս զեկավար կամ մարտական բազուկ, անոնք, ըլլան դրսեցի թէ Տարօնցի, մեղադրելի են, որ վտանգը իր ծաւալով չըմբռնեցին եւ ԶԵՂԱՆ ԱՅՆ ՂԵԿԱՎԱՐԸ, որ այդպիսի փոթորիկի մը մէջէն պիտի կրնային վարել Տարօնի քաջակորով ժողովուրդը» (նոյն, էջ 997-998) [Բոլոր ընդդէմները մերն են, Ա. Տ.] :

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ. — Ո՞վ է որ կը մեղադրէ այդ ղեկավարները՝ որպէս մարդ: Մեր բոլոր մեղադրանքները, քննադատութիւններն ու դատապարտութիւնները կ'ըլլան անոնց (Ռուբէնի եւ Վահան Փափազեանի) հասցէին՝ պարզապէս այն միակ ու բացարձակ պատճառով որ այդ երկու «պարօն»ները ԶԵՂԱՆ այն ղեկավարները, որոնք, այդպիսի գերագոյն ճգնաժամերուն՝ ՄՈՌՆԱՅԻՆ իրենց անձերը եւ ԱՄԲՈՂՁՈՎԻՆ անխրուէիմ այդ քաջակորով եւ քաջամարտիկ ժողովուրդի փրկութեան եւ ազատութեան նուիրական գործին՝ աննման Կորիւնի, Մջոյի, Վարդան Կողբեցիի եւ Հաջի Յակոբի օրինակով... :

* * *

40. — Հոս, իբրեւ Վերջարան, կը փափաքինք մեր յարգելի ընթերցողներուն ներկայացնել խիստ շահեկան խօսակցութիւն մը, որ տեղի ունեցած է Մուշ քաղաքի հերոսամարտի անդուզական ղեկավար եւ քաջամարտիկ նահատակ Հաջի Յակոբի եւ Տարօնցի Արմաշական յուշագիր Յակոբ Տէր Զաքարեանի միջեւ, 1915 Յունիս 30-ին, Երեքշաբթի, քաղաքի գոյամարտի երկրորդ օրուան երեկոյեան:

«Պատմագիր» Կարօ Սասունի կը ներկայացնէ այդ խօսակցու-

թեան առաջին մասը միայն եւ «հաւասարակշիռ տրամաբանութեամբ» մը («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 887), խուսափած է տալու այդ նոյն խօսակցութեան վերջին եւ ամենէն կարեւոր մասը, կարծես թէ իր այդ կողմնակալ ընթացքով՝ ապացուցանելու համար իր «անկողմնակալութիւնը»? (նոյն, անդ) :

Հետեւեալն է Կարօ Սասունիի ներկայացուցածը. —

«Հաջի Յակոբ Կոտոյեան, վերաւոր եւ յոգնած, կեզրոնը կը վերադառնար՝ զինուորական խորհրդակցութիւն մը(1) ունենալու համար: Կեզրոնը հասնելէն յետոյ, կը շրջապատուէր հոն գտնուած մարտիկներէն եւ ղեկավար անձերէն, որոնք կ'ուզէին գիտնալ կացութիւնը:

«— Ի՞նչպէս ես, Հաջի...

«= Շատ լաւ եմ, միայն ջիջ մը յոգնած եւ քնատ եմ:

«— Տղաները ի՞նչպէս են, կը կուռի՞ն:

«= Շատ լաւ կուռեցան. այդպէս կ'ըլլար. մէկը մէկէն լաւ, մէկը մէկէն հրաշալի. բոլորն ալ կուռեցան ե՛ւ Տիրան, ե՛ւ Զաքարէն, ե՛ւ Ալեքսան, ե՛ւ Սամօն, ե՛ւ Արմենակ (Մարտէեան), բոլորն ալ... :

«— Արօն ի՞նչպէս է, անվնաս է. լսեցինք որ դիրքէն դուրս ելած էր:

«= Արօն այսօր հրաշալի կուռեցաւ, հրաշք գործեց: Ժամը 9-ին պիտի յանձնուէինք, եթէ ան, նշանիս վրայ, դիրքէն դուրս չնետուէր եւ Փոթիկեաններու պարտէզի կողմէն դէպի Թաղ խուժող վաշտ մը զօրքի դէմ չծառանար՝ երկու-երեք ընկերներով: Արօն կուռեցաւ, մինչեւ մութը վրայ բերաւ... :

«Հակառակ այս պաղարիւնութեան, Հաջին մուսլ էր: Իրմադրութեան վերջին պահերն էին: Ժողովուրդը արդէն Հաջիի դէմքէն կռահած էր վտանգը եւ կը սեղմուէր անոր շուրջ: Շուկ տարածուած էր արդէն թէ Սասունէն օգնութիւն պիտի չկրնար դալ եւ թէ զինուորական խորհրդակցութիւնը կրնար այն եզրակացութեան դալ որ կուռողներէն անոնք որ ողջ մնացած էին, մեկնին դէպի լեռները:

«Իրմադրութիւնը հնարաւոր չէր:

«Ու ժողովուրդը, վտանգի այս վերջին պահուն, կը կուտակ-

(1) Զինուորական հորիդակցութեան լրիւ ու ամբողջական կեդրացութիւնը կարդալ «Հարագատ Պատմութիւն Տարօնայ» Յուշամատեանի մէջ, էջ 405-410. ինչպէս նաեւ այս ֆնակամ ուսումնասիրութեան մէջ, Մասն Առաջին, Գլուխ ԻԶ. (էջ 189-195) :

ուէր կեդրոնի եւ Հաջիի շուրջ» («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 903-904) :

Ասիկա կարօ Սասունի «անկողմնակալ»? դասաւորումն է «իրողութիւններու եւ ճշմարտութիւններու», զանոնք դատելով «Հասարակչի տրամաբանութեամբ»? մը («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 887) :

Հիմա ներկայացնենք վերի խօսակցութեան լրիւ բնագիրը նոյնութեամբ՝ բացայայտ ընելու համար այն պատճառը, որ պարտադրած է Տարօնի կողմնակալ եւ կուսակցամով «պատմագիրը»՝ խուսափելու տալէ նոյն խօսակցութեան ամբողջական նկարագրութիւնը, ուր կրակէ բառերով կ'արտացոլան Տարօնի ժամանակակից պատմութեան մեծագոյն հերոս Հաջի Յակոբի արդար զայրոյթը, կշտամբանքը եւ քամահրանքը՝ հանդէպ Սասունաբնակ պարտագանց եւ խոստմնադրուծ «պարոն»ներուն... :

Ահաւասիկ յուշագիր Յակոբ Տէր Զաքարեանի բնագիրը.—

«Հաջի Յակոբ եղբրքի դիրքերէն կեդրոն կը վերադառնար : Ուշագրութեամբ դիտողին ա'լ յայտնի կ'երեւար մոռյլ քօղը, որ կը սպառնար գունաւորելու անոր հպարտ ճակատը : Բայց նա ամէն հրնարաւոր ճիգ ի գործ կը դնէր՝ ծածկելու իր հոգիին սպառնացող մշուշը բաղմութենէն, իր կորովին եւ խրախուսանքին ակնկառոյց ընկերներէն, հուժկու ինքնամփոփումով մը՝ մէկդի վանել կ'ուզէր իրմէն թախիծն ու սրտաբեկութիւնը :

«Դառնալից նայուածքով մը կը դիտէր հանդիպակաց լեռներու վրայ շողարձակուած հրդեհի բոսորագոյն փայլը, որ աւելի չարաշուք կը դարձնէր գիշերը :

«Վսեմ ու հետաքրքրաշարժ է խօսակցութիւնը, զոր կ'ունենար նա՝ կեդրոնական դիրքի սանդուխի գլուխը իրեն դիմաւորող ընկերոջ, Յ.ին հետ(2) :

«— Բարեւ, Յ., ի՞նչպէս ես :

«= Լա'ւ, Հաջի' ջան, իսկ դո՞ւք :

«— Շատ լա'ւ եմ, միայն քիչ մը յոգնած ու քնատ եմ :

«= Տղաները ի՞նչպէս են, կը կռուի՞ն :

«— Շատ լաւ կուսեցան : Այդչափ կ'ըլլար. մէկը միւսէն լա'ւ, մէկը միւսէն հրաշալի. բոլորն ալ կուսեցան, ե'ւ Տիրան, ե'ւ Զաքարիան, ե'ւ Ալեքսան, ե'ւ Սամօն, ե'ւ Արմենակ, բոլորն ալ... :

«= Արօն ի՞նչպէս է, անվնա՞օ է, հասկցայ որ դիրքէն դուրս ելած էր :

«— Արօն այսօր հրաշալի կուսեցաւ, հրաշք գործեց. ժամը 9-ին՝ պիտի յանձնուէինք, եթէ նա, նշանիս վրայ, դիրքէն դուրս չնետուէր եւ Փոթիկեաններու պարտէզի կողմէն դէպի Թաղը խուժող վաշտ մը զօրքին դէմ չճառանար՝ 2-3 ընկերներով : Կուսեցաւ նա՝ մինչեւ մութը վրայ հասաւ :

«Վսեմ էր պաղարիւնութիւնը այդ մեծ մարդուն, որ խորապէս համոզուած՝ պործի տխուր վերջաւորութեան, դեռ կորովի էր եւ ժպտադէմ :

«Լուեց, բոպէ մը ինքնասուզուեցաւ, ապա հրացանը պատի մը կռթնցնելով, ձեռքերը ետին միացուցած, խոհուն քայլերով, դէպի լուսամուտը զնաց, դիտեց հրդեհէն լուսաւորուած հանդիպակաց լեռնամասին վրայ՝ դէպի Սասուն երկարող ճամբաներն ու գագաթները, ունկնդրեց պահակներու պարբերական հրացանաձգութիւններուն, ընկրկեցաւ, դառն ժպիտով մը շարունակեց նայիլ լուսամուտէն դուրս՝ քաղաքի վրայ, թանձրացած մթութեան մէջ եւ անկէ վեր, լեռնալանջերուն վրայ տարածուող հրդեհի շառայլները :

«Եւ այս ամէնքի մէջ կարծես նշմարեց նա՝ մահուան քմծիծաղը : Ետ ետ քաշուեցաւ, ալ ձեռքը ճակտին տարաւ, պինդ մը սեղմեց եւ ապա թոյլ ճօճումով մը թող տուաւ որ կողն ի վար իննայ : Հապիւ կարելի եղաւ նշմարել շանթը, որ կ'անցնէր անոր աչքերու առջեւէն. դիտեց քովի բաղմութիւնը, անզօրացաւ ա'լ զսպելու ինքրինք, հառաչեց լիաթօք, եւ՝

«— Թո՛ւհ... , այսպէ՞ս պիտի ընէիք, — մոռնեց փոթորկոտ :

«= Ի՞նչ կայ, Հա'ջի, — մրմնջեց Յ... :

«Հեզնախառն զարմանքով՝ խօսակցի երեսին կը նայի, որ չէր կարողացած ըմբռնել թէ ի՞նչ կը խորհէր, եւ ապա, ձեռքը դէպի լեռը երկնցնելով՝ կը դռչէ :

«— Հո՛ն, վե'րը, սա՛ լեռներուն ետեւ գտնուող մեր շէֆերուն հետն եմ : Այս երեք օր է, ի՞նչ կ'ըսեմ, հինգ օր է որ պաշարուած ենք. իմաց ալ տուեր ենք, եւ սակայն անոնք իրենց հանգիստը չխառն գարեցին :

«= Կու գան, կու գան, — վրայ կը բերէ խօսակիցը :

«— Ե՞րբ պիտի գան. վա՞ղը. ո՛ւշ է : Ինչպէս ըսի, սիրելի՛ս, եթէ Արօն չըլլար, այսօր ժամը 9-ին, մեզ կը բռնէին : Երջանակը նեղցած է արդէն : Թնդանթները չտեսա՞ր, այնքա՛ն սեղմուեր են որ կը խեղդէին տղայոց... :

«= Ուրե՞մն... :

«— Ուրե՛մն, — կը պատասխանէ քիչ մը հանդարտած կարծես, — լուր զրկելու է որ տղաները հոս գան խորհրդակցելու, բայց պահակները տեղերնին թողուին :

(2) Նոյնիման յուշագիր Յակոբ Տէր Զաքարեանն է այդ «Յ»ն :


«Ա՛հ, ապրողը միայն կարող է զգալ ընդհանուր վսեմութիւնը եւ Հաջիի խորունկ դառնութիւնը: Ապրիր եւ ղեկավարիր աղէտի, պայքարի եւ արհաւիրքի ամբողջ երեք օրեր, հովանիիդ ապաստանած հարիւրաւոր կին, մարդ, երեսայի՝ փրկութիւն աղերսող նայուածքներուն տակ, կոտորակուած ուժի վրայ յենուած՝ մարտնչի՛ր, խրախուսի՛ր՝ այն յոյսով որ հեռու չէ՛ օգնութեան վայրը, որ քիչ մը անդին՝ աւելի ուժեղ ընկերներ ունիս, որոնք պէ՛տք է վան, պարտաւոր են գալու. կուրծք տուր անողոք թշնամիի մը անազորոյն գրոհներուն, որու մէն մի ընդմիջումին ու յառաջացումին՝ աչքիդ առջեւ կը ցցուի մոռյլ ուրուականը մահուան. այո՛, ապրի՛ր այս ամէնքը եւ յուսա՛ որ ունիս լոյսի շող մը անդին, որուն նուիրած ես զգացումներուդ եւ մտածումներուդ պատուականագոյնը, որ պէ՛տք էր դար, եւ ո՛ր, աւա՛ղ, կը մերժէ ժամանել:

«Դա՛ռն է, դա՛ռն, քան Գողգոթայի քաջախով գինին...»

«Ամէն ի՛նչ վերջացած էր:

«Հաջի Յակոբի զայրոյթը, փայլակի արագութեամբ, չըջան ըրած էր բազմութեան մէջ, որ երթալով կը խտանար, կը ստուարանար անոր շուրջ:

«Սասունէն օգնութեան չէին եկած եւ դիմադրելը ա՛լ հնարաւոր չէ՛ր» («Յակոբ Տէր Զաքարեանի Ձեռագիր Յուշերը», էջ 142-144):



ԳԼՈՒԽ Ի.

ՎԵՐՋԱԲԱՆ

Յաւալի թիրիմացութեամբ մը, սոյն «Վերջաբան»ը, իբրեւ առանձին գլուխ (Գլուխ ԻԹ), գետեղած էինք Մասն Առաջինի վերջը:

Այս թիրիմացութիւնը փարատելու եւ ակամայ եղած սխալը շտկելու համար, այստեղ կ'արտագրենք այդ գլուխը՝ իբրեւ «Վերջաբան» սոյն Քննական Ուսումնասիրութիւն գործոյս, միանգամայն ներդրութիւն խնդրելով մեր յարգելի ընթերցողներէն՝ այս ակամայ վրիպանքին համար:

ԱՂԱՆ ՏԱՐՕՆԵՑԻ

Ի՛ՆՉ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ԱՐԴԻՒՆՔԸ

Ի՛նչ պիտի ըլլար արդիւնքը, արդեօք, Մուշ քաղաքի մէջ, քանի մը օր եւս երկարաձգուած դիմադրութեան:

Ի՛նչ պիտի պատահէր, եթէ Սասունէն ակնկալուած օգնութիւնը ԳԱՐ, եւ գար՝ ձԻՇՏ ԱՏԵՆԻՆ — քաղաքի կռիւին առաջին ցերեկուան կամ գոնէ գիշերուան ընթացքին, որ ատեն՝ քաղաքի համայն Հայութիւնը եւ քաջամարտիկ կոռուդները, ակնդէտ ու անձկալից, հայեացքնին յառած էին Կուրտիկի լեռնալանջերուն եւ Սասուն երկնցող ճամբաներուն, վայրկեանէ վայրկեան՝ անոր ժամանումը երազելով. փրկարեր օգնութիւն, որուն խոստումը տուած էին անոնք, Սասունարնակ «պարոն»ները, դաշտի եւ քաղաքի մարտական ուժերը, զէնքերը, ռազմամթերքը եւ պարէնը Սասուն փոխադրել տուած ատեննին:

Ի՛նչ պիտի ըլլար արդիւնքը, եթէ փոխանակ «Կիսա-կամարածեւ Պաշարում»ի եւ «Յրոտոնայ»ի նման սուտ ու փուտ պատմութիւններ յերիւրելու, այդ երկու «պարոն»ները փորձէին ԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ, ԴՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՍՑՆԵԼ քաղաքի մէջ մեռնելու վճռականութեամբ, օրհասական կռիւ մղող բուռ մը քաջերուն:

Ի՛նչ պիտի ըլլար արդիւնքը, եթէ ԳՈ՛ՆԷ ԹՈՅԼ ՏԱՅԻՆ Սա-

սուն գտնուող քաղաքացի եւ դաշտեցի մեր վրէժավառ հայդուկներուն, որ Միրնկատարի եւ Կուրտիկի բարձունքներէն եւ լեռնալանջերէն վար սուրայիմ, դէպի քաղաք, եւ կոնակէն հարուածէին Թրքական թնդանօթները, լեղապատառ փախցնէին արդէն իսկ անպատում սարսափով համակուած թնդանօթաձիւղները, եւ շուարանքի մատնէին քաղաքը պաշարող, բարոյալքուած Թրքօ-Քուրդ զինուորները:

Այդ պարագային, քաղաքի դոյամարտը այնքան յաջող կերպով մղող բուռ մը քաջերը, օգնութեան փութացողներու նիւթական, բայց մանաւանդ՝ բարոյական օժանդակութեամբ, ԿԱՐՈՂ եւ Ի ՎիձԱԿԻ պիտի ըլլային փախուստի մատնելու քաղաքի խուճապահար Թրքութիւնը, — կառավարութիւն, զօրք, ժողովուրդ, — որ լեղապատառ անձկութեամբ, հեռադիտակներով կը հետախուզէր Սասունի ճամբաներն ու Կուրտիկի լեռնալանջերը, վայրկեանէ վայրկեան՝ այդ կողմերէն ակնկալելով ընդունիլ ԱՆԲԱՂՁԱԼԻ ԱՅՑԵ-ԼՈՒԹԻՒՆԸ՝ իրենց յուսահատ եւ դողահար սիրտերը անպատում սարսուռով ու սարսափով լեցնող Սասունարնակ Փեղայիներուն, երբ մանաւանդ, իրենց կռնակէն ալ, «Քիաֆիր Մոսկոֆ»ի յառաջապահները արդէն իսկ մօտեցած էին Մշոյ Դաշտին սահմաններուն...:

Եթէ այդ խոստացուած եւ անձկօրէն ակնկալուած օգնութիւնն ու օժանդակութիւնը դային քաղաքի կռիւին առաջին կամ առնուազն, դոնէ ԵՐԿՐՈՐԴ ՅԵՐԵԿՈՒԱՆ կամ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ, «Արդէն փրկուած կ'ըլլամք, յաղթանակնիս կատարեալ կ'ըլլայ», կը մարդարէանար Տարօնի պանծալի հերոս Հաջի Յակոբը, որովհետեւ ՀՆԱՐԱՒՈՐ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՐ երկու-երեք օրուան դիմադրութիւնը ԵՐԿԱՐԱԶԳԵԼ առնուազն ՄԷԿ-ԵՐԿՈՒ ՇԱՐԱԹ ԵՒՍ, այսինքն, գոնէ մինչեւ Յուլիս 10-15, որ ատեն Ռուսական յառաջապահները ԱՐԴԵՆ ՀԱՍԱԾ ԷԻՆ Մշոյ դաշտը, Մեղրազետի ափին վրայ գտնուող Մկրագոմ դիւղը(1), քաղաքէն հաղիւ երկու ժամ հեռու:

Այս բախտաւոր եւ բարեբաստիկ պարագային,

1. — Թրքական բարոյալքուած ու քայքայուած բանակը, եւ

(1) Հստ Կարօ Սասունիի, Ռուսական յառաջապահները Մկրագոմ գիւղը կը հասնին Յուլիս 16-ին («Պատմութիւն Տարօնի Աշխարհի», էջ 992):

Թրքօ-Քուրդ խուճապահար ազդարնակչութիւնը, լեղապատառ, խոյս պիտի տային քաղաքէն ու դաշտէն.

2. — Բնաջնջումէ, բայց մանաւանդ՝ ՈՂՋԱԿԻԶՈՒՄԷ ԶԵՐԾ ՊԻՏԻ ՄՆԱՑԻՆ ո՛չ միայն քաղաքի քամ հազար Հայութիւնը, եւ Քանայ ու Հաւատորիկի լեռները ապաստան գտած քամնեւիինգ-երեսուն հազար փախստակաները, ա՛յլ նաեւ՝ Սասուն գտնուող բնիկ եւ եկուոր, ամբողջ երեսուն-երեսունեւիինգ հազարնոց Հայութիւնը:

Այս բոլորն ալ ՀՆԱՐԱՒՈՐ ԷՐ, բայց ԶԷ ԻՐԱԿԱՆԱՑԱԾ, դժբախտաբար, որովհետեւ Սասունարնակ մեր երկու «պարոնները»

ա. — ԶՈՒՆԵՑԱՆ իրենց ստանձնած պաշտօնին, պարտականութեան, բայց մանաւանդ՝ պատասխանատուութեան ԽՈՐ ԳԻՏԱԿ-ՑՈՒԹԻՒՆԸ, որ զիրենք մղէր վճռական յանդուգն քայլերու եւ գերագոյն զոհարարութեան, Հաջի Յակոբի օրինակով.

բ. — Քաղաքական եւ զինուորական կացութիւնը ԸՄԲՈՒՆԵՑԻՆ եւ ԿՇՈՒՅՑԻՆ միայն ու միմիայն՝ իրենց ԱՆՁՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ եւ իրենց մօրթի փրկութեան չափանիշով.

գ. — Բնա՛ւ երբեք ԶՈՒԶԵՑԻՆ ՀԱՍԿԱԼ եւ ԸՄԲՈՒՆԵԼ որ Սասունի մարտունակութեան ամենազլխաւոր յենարանն եղող Մշոյ Դաշտի Հայութեան բնաջնջումէն յետոյ, եթէ կորսնցնէին Մուշ քաղաքի յենարանն ալ, ա՛յն ատեն՝ Սասունի բարձրաբերձ լեռնալանջերու եւ անդնդախոր ձորահովիտներու մէջ ծուարած մարտական ուժերու եւ խճողուած բազմահազար ժողովուրդի փրկութիւնն ալ, աւելի քան երբեք, ԽՆԴՐԱԿԱՆ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ, ինչպէս որ եղաւ ալ...:

Եւ այսպէս, Տարօնի ու Սասնոյ պատմական եւ մարտական, բայց խիստ տարաբախտ Հայութեան դժխեմ ճակատագիրը իրենց ապիկար ձեռքերուն մէջ առնող մեր Խամալ ու պարտազանց երկու «պարոնները», Տարօնի եւ Սասնոյ զարհուրելի եղեռնէն երեսուն եւ հինգ տարի յետոյ, անասելի անպարարութեամբ մը, եւ անորակելի սառնասրտութեամբ ալ, ԶԱՆԱՑԻՆ ԼՈՒԱԼ իրենց կայէնական արիւնքաքախ անեքերը՝ Տարօնի եւ Սասնոյ անմեղ Հայութեան բոսորագոյն արիւնով...:

ՑԱՆԿ ԳԼՈՒԽՆԵՐՈՒ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԵՐԳՈՒՄ՝ ՍԱՍՈՒՆԷՆ ՄՈՒՇ ԲԱՂԱՔԻՆ
«ՕԳՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԹԱՑՈՂՆԵՐՈՒ» ՀԵՔԻԱԹԻՆ

	Էջ
Ներածութիւն	13
Թղթակցութիւն վահան Փափագեանի Հետ	18
Երկու հօսք	51
ԳԼՈՒԽ Ա. Նախաբան	55
ԳԼՈՒԽ Բ. Դէպքերը Կը Ջարգանան	58
ԳԼՈՒԽ Գ. Սխալ Տեսակէտ, Վնասակար Գործելակերպ	63
ԳԼՈՒԽ Դ. Տեղագրութիւն	67
ԳԼՈՒԽ Ե. «Կիսա-Կամարածել Պաշարում»	70
ԳԼՈՒԽ Զ. «Փըռտոնայ»ի Ռուբէնը	74
ԳԼՈՒԽ Է. Ռուբէնի «Փըռտոնան»	81
ԳԼՈՒԽ Ը. Բնութիւն «Փըռտոնայ»ի Պատմութեան	87
ԳԼՈՒԽ Թ. Սասունի եւ Մուշ Բաղաքի Յարաբերութիւնը հզուած Ձեր	90
ԳԼՈՒԽ Ժ. «Եօթը Ամսուան» Առասպելը	101
ԳԼՈՒԽ ԺԱ. «Արշաւանքը Կը Ջախողի	104
ԳԼՈՒԽ ԺԲ. Սասունցի Մուշեղի Պատմածներու Պատմական Արժէքը	109
ԳԼՈՒԽ ԺԳ. Սասունցի Մուշեղ՝ Ռուբէնը Կը Ղրկէ Մուշ Բաղաքի «Օգնութեան»	118
ԳԼՈՒԽ ԺԴ. Կարօ Սասունիի Պատումը	121
ԳԼՈՒԽ ԺԵ. Բնութիւն Կարօ Սասունիի Պատումին	124
ԳԼՈՒԽ ԺԶ. Կուրտիկի Բարձունքներէն Կը Հսկեն Եղբր Բաղաքին Վրայ	127
ԳԼՈՒԽ ԺԷ. Սասունէն Օգնութեան Փութալ Ուզողներու Ապահով Ճամբան	138
ԳԼՈՒԽ ԺԸ. «Թերեւս Հաջի Յակոբ Ձեր Հաւատար...»	144

էջք

ԳԼՈՒԽ ԺԹ. Հաջի Յակոբ Կը Թելադրէ Գրաւել Մուշ Քաղաքը	150
ԳԼՈՒԽ Ի. Հնձանի հորհրդակցական ժողովները	158
ԳԼՈՒԽ ԻԱ. հորհրդակցական ժողով Տարօնի Ազգային Առաջնորդարանի Մէջ	166
ԳԼՈՒԽ ԻԲ. Քաղաքէն Դուրս Գալու Փորձը Կը Զախոզի	176
ԳԼՈՒԽ ԻԳ. Այլ Դրուագներ	179
ԳԼՈՒԽ ԻԴ. Թուրք Զինուորի Որակը Իբրեւ Կռուող Ուժ	181
ԳԼՈՒԽ ԻԵ. Մեր Բացատրութիւնը	187
ԳԼՈՒԽ ԻԶ. Մուշ Քաղաքի Զինուորական հորհուրդին Որոշումը	189
ԳԼՈՒԽ ԻԷ. Երուանդ Շարափեանի Վկայութիւնը	198
ԳԼՈՒԽ ԻԸ. Օգնութեան Փութալը «Դաւանանութիւն» Է Եզեր	201
ԳԼՈՒԽ ԻԹ. Ի՞նչ Պիտի Ըլլար Արդիւնքը	208

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՍԵՐԱԿՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՍԱՍՈՒՆԻ ՄԷՋ

Երկու հօսք	213
ԳԼՈՒԽ Ա. Անհիմն Հաւաստումներ	217
ԳԼՈՒԽ Բ. Ժամանակագրութիւն	226
ԳԼՈՒԽ Գ. Քննութիւն Ժամանակագրական Մէկ Քանի Ուրիշ Կէտերու Եւս	234
ԳԼՈՒԽ Դ. Քանայ Լերան Փախստականներու Փրկութեան Հարցը	242
ԳԼՈՒԽ Ե. Քննութիւն Վահան Փափագեանի Պատումին	247
ԳԼՈՒԽ Զ. Սուրհանդակներու Առաժուտը Եւ Մուհաջիրներու Գաղթաշարժը	249
ԳԼՈՒԽ Է. Յարութիւն Վարժապետի Պատմածները	262
ԳԼՈՒԽ Ը. Անդրանիկ Զէ՛ Ստացեր Եւ Զէ՛ Կարդացեր Վահան Փափագեանի Նամակը	268
ԳԼՈՒԽ Թ. Սիւնն Վրացեանի, Դրոյի, Կարօ Սասունիի, Վարդգէս Ահարոնեանի Եւ Արմենակ Եկարեանի Հակասական Յայտարարութիւնները	273

էջք

ԳԼՈՒԽ Ժ. Խմբապետ Մարտիրոսի Յայտարարութիւնները	286
ԳԼՈՒԽ ԺԱ. Անդրանիկի Թիկնապահ Զինուորի «Օրագրութիւնը»	290
ԳԼՈՒԽ ԺԲ. Վահան Փափագեանի «Դաւանութիւնը» Անդրանիկի Հանդէպ	295
ԳԼՈՒԽ ԺԳ. Փափագեան Կը Խլէ Հերոս Լեւոնի Հրացանը Եւ Կը Յանձնէ Քուրդերուն	299
ԳԼՈՒԽ ԺԴ. Հերոս Լեւոն Ղազիկեանի Քաջագործութիւնը	305
ԳԼՈՒԽ ԺԵ. Պատանի Հերոս Լեւոնի Եւ Գալուստի Սրտանմիկ Վախճանը	310
ԳԼՈՒԽ ԺԶ. Մայրը Կը Խեղդէ Իր Լացող Մանկիկը	322
ԳԼՈՒԽ ԺԷ. Զինուած Եւ Անզէն Երիտասարդները Իրարմէ Զատել	326
ԳԼՈՒԽ ԺԸ. Վահան Փափագեան Ատրճանակով Կը Սպառնայ Ժողովուրդին Եւ Կը Կրակէ Անոր Վրայ	331
ԳԼՈՒԽ ԺԹ. Ճերմակ «Նագմայ»ով Մօրուքը Կապելով Ծպտուելու Ամօթալի Պատմութիւնը	334
ԳԼՈՒԽ Ի. Պզտիկ Արամ Յակոբեանի Յանդուգն Առաջարկին Էութիւնը	342
ԳԼՈՒԽ ԻԱ. Քննական Վերլուծում Պզտիկ Արամ Յակոբեանի Առաջարկին	346
ԳԼՈՒԽ ԻԲ. Յուշապատում Տէր Եղիշէ Քահանայ Տ. Պարսամեանի «Նկարագիրը»	353
ԳԼՈՒԽ ԻԳ. Քանայ Լերան Փախստականներու Այբեղակերպը	361

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՍԱՍՈՒՆԻ ԳՈՅԱՄԱՐՏԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Նախարան	377
ԳԼՈՒԽ Ա. Սասունի Դիրքը Եւ Աշխարհագրական Կազմը	383
ԳԼՈՒԽ Բ. Սասունցիներու Զգուշուոր Ընթացքը Եւ Անոր Հետեւանմանները	386
ԳԼՈՒԽ Գ. Սասունի Կոնիներու Կրկնակ Բնոյթը	389
ԳԼՈՒԽ Դ. Ռուբէնի «Գործունէութեան» Իրական Պատկերը Սասունի Մէջ	391

	էջք
ԳԼՈՒԽ Ե. Սասունի Կոիւներու վահան Փափագեանի Պատումը	397
ԳԼՈՒԽ Զ. Սասունցի Մուշեղի Տարբերակը	400
ԳԼՈՒԽ Է. Կարօ Սասունիի Տարբերակը	406
ԳԼՈՒԽ Ը. վարդան Պետոյեանի Տարբերակը	412
ԳԼՈՒԽ Թ. «Գիշերային հորհրդակցութիւն»	417
ԳԼՈՒԽ Ժ. Երուանդ Շարաֆեանի եւ Տ. Եղիշէ Քենյ. Տէր Պարսամեանի Պատումները	420
ԳԼՈՒԽ ԺԱ. Մուշեղ Դուռնեանի եւ Միսակ Բղէեանի Պատումները	426
ԳԼՈՒԽ ԺԲ. Ռուբէնի «Հրածեշտի շառը»	431
ԳԼՈՒԽ ԺԳ. Յակոբ Տէր Զաֆարեանի Պատումը	438
ԳԼՈՒԽ ԺԴ. «Պարոն»ներու Դասակի՛ք Փախուստը Տարօնէն. վահան Փափագեանի Պատումը	445
ԳԼՈՒԽ ԺԵ. Սասունցի Մուշեղի եւ Կարօ Սասունիի Տարբերակները	454
ԳԼՈՒԽ ԺԶ. Միսակ Բղէեանի եւ Տէր Եղիշէ Քահանայի Պատումները	464
ԳԼՈՒԽ ԺԷ. Ռուբէնի Նկարագիրը (ի Բերանոյ Գումմէ)	470
ԳԼՈՒԽ ԺԸ. Շոգոփոքութիւններ	484
ԳԼՈՒԽ ԺԹ. Կարօ Սասունիի Սոփեստական Ճամարտակութիւնները	494
ԳԼՈՒԽ Ի. վերջարան	519

ՆԿԱՐՆԵՐՈՒ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Թիւ	Էջք
1. Ուխտ Մամիկոնէից	3
2. Ալեքսան Պետրոս Ենկոյեան	4
3. Հաջի Յակոբ Կոտոյեան	5
4. Հաջի Յակոբ Կոտոյեան	61
5. Ներսէս Եպիս. հարախանեան	65
6. Մուշ ֆաղաֆը եւ Կուրտիկ լեռը	68
7. վահան Փափագեան	72
8. Ռուբէն	75
9. Ռոստոմ — Ստեփան Զօրեան	77
10. Տարօնցի աւագ յուշագիր Միսակ Բղէեան եւ իր ընտանիքը	93
11. Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամեան	95
12. հալիլ Փաշա (Էնվէրի հօրեղբայրը)	96
13. Քեազիմ Փաշա (Էօզալի)	96
14. Գասպար Բղէեան	98
15. Առաքելոց վանքը	113
16. Աւրանցի Հերոս Արամ	115
17. Ծիրնկատար եւ Կուրտիկ լեռները	126
18. Կառնեցի Մկրտիչ	159
19. վարդան վարդապետ Յակոբեան	167
20. 1915, Յունիս Ամսուան Օրացոյցը	182
21. Յակոբ Տէր Զաֆարեան	190
22. Տէր Եղիշէ Քենյ. Տէր Պարսամեան եւ Երուանդ Շարաֆեան	196
23. Կորիւն	202
24. Մջօ (Մկրտիչ Պոլէեան)	203

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

25. վահան Փափագեան (1953-ին)	221
26. Ստեփան Կուրտիկեան (1927-ին)	222
27. Գրիգոր Զոհրաբ	223
28. Գեղամ Տէր Կարապետեան	224

Թիւ	էջ
29. Պատմահայր Մովսէս Խորենացի	226
30. Պրն. Աւետիս՝ Ռոստոմի հետ միասին	252
31. Մուշ քաղաքացի ընտանիք մը	254
32. Տարօնի Ծխավու գիւղացի ընտանիք մը	255
33. Սահակ Զբչեան	273
34. Սիմոն Վրացեան եւ Կարօ Սասունի	274
35. Դրօ	276
36. Վարդան	282
37. Արմենակ Եկարեան	284
38. Զօրավար Անդրանիկ	291
39. Տէր Եղիշէ Քհնյ. Տէր Պարսամբան եւ Երուանդ Շարափեան	312
40. Սարգիս եւ Միսակ Բղէեան եղբայրները	314
41. Ալեքսան Մովսէսեան	318
42. Պատուելի Միհրան Գ. Յակոբեանի ընտանեկան խմբանկարը	324
43. Պոտիկ Արամ Յակոբեան	345
44. Պոտիկ Արամ, Երուանդ Շարափեան, իր բոլոր եւ փեսան	350
45. Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամբան	355
46. Տ. Խորէն Քհնյ. Մամիկոնեան (նախկին Միսակ Նալբանդեան)	357
47. Հաւատորիկի գիւղացիներ	363

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

48. Սասունի Քարտէսը	384
49. Մօրուք Կարօ	392
50. Վարդան Պետոյեան	412
51. Զոյօ	416
52. Սասունցիներ	424
53. Վարդան Կողբեցի	432
54. Մուշ-Սասունի շրջանի քարտէսը	439
55. Սասունի գիւղացիներէն խումբ մը	442
56. Ռուբէն-Փափագեան դասալիք խումբը	449

ԱՂԲԻՒՐՆԵՐ

«Տարօնապատում»ի այս Քննական Ուսումնասիրութեան աղբիւր ծառայած են հետեւեալ երկասիրութիւնները. —

1.— Միսակ Բղէեան, «Հարագատ Պատմութիւն Տարօնոյ», 1962, Կահիրէ:

2.— Յակոբ Տէր Զաքարեանի Զեռագիր Յուշերը:

3.— Տէր Եղիշէ Քահանայ Տէր Պարսամբան, «Տարօնոյ ինքնապաշտպանութիւնն Ու Զարդը», 1920, Ֆրեզնօ:

4.— Մուշեղ Դուռնեան, «Հարագատ Պատմութիւն Տարօնոյ» («Դիակներու Մէջէն — Մուշէն Մարտին», 1962, Կահիրէ):

5.— Գասպար Բղէեան, «Հարագատ Պատմութիւն Տարօնոյ» («Դիակներու Մէջէն — Մուշէն Հալէր», 1962, Կահիրէ):

6.— «Երուանդ Շարափեան Կը Պատմէ Տարօնի Եղեռները», 1965, Բէյրութ:

7.— Վահան Փափագեան, «Իմ Յուշերը», Հատոր Բ., 1952, Բէյրութ:

8.— Ռուբէն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Խօքը հատոր, 1951-1952, Լոս Անջելլոս:

9.— «Սասունցի Մուշեղի Յուշերը», Ռուբէնի «Յիշատակներ»-ու Է. հատորը, 1952, Լոս Անջելլոս:

10.— «Զօրավար Սմբատի Յուշերը», գրեց Մկրտիչ Երիցանց, 1936, Փարիզ:

11.— Կարօ Սասունի, «Տանկա-Հայաստանը Ռուսական Տիրապետութեան Տակ», 1927, Բոստոն:

12.— Կարօ Սասունի, «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», 1957, Բէյրութ:

13.— Տեղակալ Մանուկ Աւետեան, «Հայ Ազատագրական Ազգային Յուշամատեան եւ Զօրավար Անդրանիկ», 1954, Փարիզ:

14.— Վարդգէս Ահարոնեան, «Անդրանիկ», 1958, Բոստոն:

15.— «Յուշեր Արմենակ Եկարեանի», խմբագրեց Լ. Աջէմեան, 1947, Կահիրէ:

16.— Եղիազար Կարապետեան, «Սասուն», ՀայՊետհրատ. 1962, Երևան:

17.— Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց»:

18.— Շահան, «Ալեքսանդրապոլի Դաշնագիրը», Հատոր Բ., Մարտէյլ:

19.— «Զօրավար Անդրանիկի Կովկասեան Ճակատի Պատմական Օրագրութիւնը», 1924, Բոստոն:

20.— Վարդան Պետոյեան, «Սասնոյ Ազգագրութիւնը», 1965, Երևան:

21.— Վարդան Պետոյեան, «Սասունը Եւ Իր Վերջին Հերոսամարտը», «Սփիւոֆ» Շաբաթաթերթ, 8 հւ 15 Փետրուար 1964, Բէյրութ:

22.— Արսէն Միֆայէլեան, «Սասուն» վիճակագրական յօդուածը, «Տարօնի Արծիւ», քիւ 15, Յունուար 1941:

23.— Սահակ Զքչեան, «Տարօնական» Յօդուածը, «Պայքար» օրաթերթ, 17 հւ 18 Դեկտեմբեր 1952, Բոստոն:

24.— «Խմբապետ Մարտիրոս Արրահամեանի Յուշերը», «Պատմութիւն Տարօնի Աշխարհի», 1957, Բէյրութ:

25.— Ա. Աստուածատրեան, «Ռուբէն» Յօդուածաշարքը, «Հայրենիք» Օրաթերթ, 2-19-22 Նոյեմբեր 1961:

26.— Խոսրով Թիւրինջեան, «Ռուբէն Իր Նամակներուն Մէջ» Յօդուածաշարքը, «Նայիրի» Շաբաթաթերթ, 9 հւ 16 Օգոստոս 1964, Բէյրութ:

27.— Մալխաս, «Յուշեր» Յօդուածը, Ռուբէնի «Յիշատակներ»ու է. Հատորը:

28.— Մեր քղբակցութիւնը Վահան Փափագեանի հետ, 1954-1955-ին:

ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	ՍեԱԼ	ՇԻՏԱԿ
144	17	Կը տեսնէք	Կը տեսնէ՞ք
145	15	սխալը	սլաֆը
145	27	չորթեց	կորզեց
151	11	յուսալքումի	բարոյալուսի
152	38	աչքառու	աչառու
156	22	այսպէս ալ	այսպէս ուշ
156	33	Եւ նախընտրեցի	Եւ նախընտրեցի
172	8	Փոթիկեան Աշոտ,	Փոթիկեան Արամ,
178	17	Յունիս 30-ին,	Յունիս 28-ին,
180	13	նոյն, անդ)	նոյն, էջ 399)
180	26	նոյն, անդ)	նոյն, էջ 389)
200	4	Կարելի կամ հնարաւոր է,	Կարելի՞ կամ հնարաւոր՞ է,
233	3	Մասն երկրորդը	Մասն երրորդը
233	14	շարաթը երթալու	շարաթը ետ երթալու
238	5	ըսինք,	ըսե՛մք,
377	24	եղեռնի մասին,	եղեռնի մասին մանաւանդ,
393	31	կը հաստատէ.—	կը հուստտէ.—
405	16	նոյնպէս	նոյն իսկ
433	20	(նոյն, անդ)	(նոյն, էջ 983)
434	32	Խորհրդակցութիւնները:	Խորհրդածութիւնները:
436	24	զիրցած	զիցած
437	13	այն	այս
447	5	էջ 944-995)	էջ 994-995)
476	10	հոգիներուն	հոգերուն
524	14	Վահանի Փափագեան	Վահան Փափագեան